

ISSN 1829-054X

ԲԱՆԲԵՐ
ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆԻ



27

Matenadaran
Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts
and “Friends of the Matenadaran” Benevolent Fund express their
gratitude to “JTI ARMENIA” CJSC
for sponsoring the publication of this volume

Մատենադարան

**Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը և
«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը
երախտագիտություն են հայտնում «ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին
սույն հատորի հրատարակությանն աջակցելու համար**



MATENADARAN
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

BULLETIN OF MATENADARAN

27

Yerevan – 2019

МАТЕНАДАРАН
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА

27

Ереван – 2019

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ԶԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ԲԱՆԲԵՐ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ**

27

*Տպագրվում է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի
գիտական խորհրդի որոշմամբ*

Խմբագրական խորհուրդ՝ Վ. Տեր-Ղևոնդյան (գլխ. խմբագիր), Գ. Տեր-Վարդանյան. Գ. Մուրադյան (պատասխանատու քարտուղար), Կ. Մաթևոսյան, Վ. Թորոսյան, Թ. Վ. Լինտ, Ա. Մուլթաֆյան, Ա. Շահնազարյան, Հ. Մարգարյան, Գ. Գասպարյան, Ս. Վարդազարյան:

«Բանբեր Մատենադարանի», Հ. 27, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ին-տ. եր.: 2019:

Հ 27/խմբ. Վ. Տեր-Ղևոնդյան, 2019:

«Բանբեր Մատենադարանի» հանդեսի սույն համարում ընդգրկված են պատմությանն ու աղբյուրագիտությանը, բանասիրությանը և միջնադարյան բնագիտությանն առնչվող հոդվածներ, երիտասարդական 4-րդ գիտաժողովի (28-30 նոյեմբերի, 2018) նյութերի ընտրանի, մինչ այժմ անտիպ մի բնագրի հրատարակում և երկու հայագիտական աշխատության գրախոսություն:

ISSN 1829-054X

Հողվածներ

ԳԵՌԳ ՏԵՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ

ՍՏԵՓԱՆՈՍ ՄԱԼԽԱՍԵԱՆՅԸ,
«ՊԱՏՄԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ» ՄԱՏԵՆԱԾԱՐԸ ԵՒ ՆՈՐԱՅՐ
ԲԻԷՂԱՆԳԱՑԻՆ

Բանալի բառեր՝ Մարտիրոս Մինասեան, գրաբար բնագրերի քննութիւն, գիտական ժառանգութեան հրապարակման հարցեր:

Լեզուաբան, բառարանագիր եւ ընդհանրապէս դասական իմաստով բանասէր Ստեփանոս Մալխասեանցը (25 հոկտ./7 նոյ. 1857 թ., Ախալցխա – 21 յուլիսի 1947 թ., Երեւան) ԺԹ-Ի. դարերի մեր գիտութեան երեւելի եւ արդիւնաշատ գործիչներից է: Նա առաւել յայտնի է իր քառահատոր «Հայերէն բացատրական բառարան»ով, որը հեղինակի կեանքի օրօք (Երեւան, 1944-1945 թթ.) տպուելուց եւ Խորհրդային Միութեան պետական մրցանակի արժանանալուց (1946 թ.) յետոյ, հակառակ իր մեծ ծաւալի (2404 մեծագիր եռասիւն էջ), երեք անգամ վերահրատարակուել է (Բէյրութ, 1955-1956 թթ., Թեհրան, 1982 թ. եւ Երեւան, 2010 թ.), որ ինքնին մեր իրականութեան համար եզակի երեւոյթ է: Բնականաբար, սա պայմանաւորուած է բառարանի մեծ արժէքով եւ դեռեւս գերազանցուած չլինելու հանգամանքով. առաջին հրատարակութիւնից երեք քառորդ դար է անցել, սակայն Մալխասեանցի բառարանին համարժէք՝ նրա տեղը բռնող կամ նրանից աւելի լաւ նորը չունենք:

Այսուհանդերձ, բառարանը Մալխասեանցի գիտական հսկայ վաստակի սոսկ մէկ միաւորն է. Հայաստանի Գիտութիւնների ակադեմիայի հիմնադիր անդամ լինելու շնորհիւ այսօր ունենք նրա ո՛չ ամբողջական¹ կենսամատենագիտութիւնը², որի մէջ թուարկուած են Մալխասեանցի գիտական, երբեմն էլ՝ հրապարակախօսական բնոյթի 278 տպագիր գործ եւ նրան վերաբերող 76 հրապարակում: Հասկանալի է, որ այս 278 թուի մեծ մասը սակաւամատչելի հին ամսագրերում եւ դժուար օգտագործելի օրաթերթերում ցրուած յօդուածներ են: Այս ամէնի պատշաճ գործածութիւնն ապահովելու, գիտական հարցերի դէպքում նաեւ հնարաւոր նոր «գիւտեր»ը կանխելու լաւագոյն միջոցը մեր այս երախտաւոր մտաւորականի երկերի հատորաշար հրատարակելն է³, ինչպէս վերջերս արուեց Յակոբ Մանանդեանի (8 հատոր) եւ Նիկողայոս Ադոնցի (7 հատոր) երկերի հետ, ինչպէս աւելի առաջ տպագրուել է Մանուկ Աբեղեանի գործերի ութհատորեակը, նոյնպէս եւ Հրաչեայ Աճառեանի՝ Հայերէնի համեմատական բազմահատոր քերականութիւնը⁴. եւ այլն:

Քերեք Մալխասեանցի վաստակի հատորաշարային հրատարակման անհրաժեշտութիւնը հաստատող սոսկ մի փաստարկ. մեր գիտական բնագրագիտութիւնն սկսուել է փաստորէն Ի. դարի սկզբին՝ Ստեփանոս Մալխասեանցի նախաձեռնած «Պատմագիրք Հայոց» մատենաշարով, որի մէջ կիրառուած հնարքներով ու եղանակներով նոյն դարի ընթացքում եւ մինչեւ օրս հրատարակուած են միջնադարեան հայկական տարատեսակ սկզբնաղբիւրները: Սրանով իսկ մեր գիտութեան պատմութեան համար շատ կարեւոր են թէ՛ այս մատենաշարը եւ թէ՛ նրա սկզբնաւորմանը վերաբերող մանրամասները:

Վերջերս առիթ ենք ունեցել անդրադառնալու նոյն մատենաշարին վե-

¹ Մատենագիտութիւնների մեծ մասը տպագրուելու պահից իսկ հնանում են, որովհետեւ, բնականաբար, այդուհետ հրապարակուած նիւթերը ներառնել չեն կարող:

² Տե՛ս <http://bit.ly/2nHz9L7> (12 փետ. 2018 թ.):

³ Զափագանց ֆիլ եւ մեր պատկերացրածի համար խիստ անբաւարար են հետեւեալները. 1. **Ստ. Մալխասեանց**, *Բանասիրական հետազոտութիւններ*, կազմեց եւ ծանօթագրեց Ա. Գ. Մարդեան, Երեւան, ԵՊՀ հրատ., 1982, 320 էջ: 2. **Ստեփանոս Մալխասեանց**, *Մատենագիտական դիտողութիւններ*, ՀՍՍՌ ԳԱ Մ. Աբեղեանի անուան գրականութեան ինստիտուտ, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1961, 256 էջ (հետաւրբիւր է, որ այս գրքի ռուսերէն տիտղոսաբերում խորագիրը տարբեր է՝ «Филологические замечания». սա՛ Մ. Աբեղեանի «Հայ հին գրականութեան պատմութիւն» գործի լրացում եւ որոշ տեսակետների ճշգրտում է):

⁴ Այսուհանդերձ, այս հեղինակի մանր գործերը, փոքրածաւալ գրքերը եւ առանձնապէս մասնուում ցրուած յօդուածները նոյնպէս արժանի են մէկտեղուելու եւ հատորաշարով հրատարակուելու:

րաբերող՝ Մալխասեանցի ծրագրային յօդուածին, այդ առիթով գրաբարագէտ-բնագրագէտ Նորայր Ն. Բիւզանդացու հետ նրա ունեցած գրագրութեանը, վերջինիս հետագայ վարմունքին⁵, ապա եւ՝ Մանուկ Աբեղեանի արձագանգին⁶: Իսկ ներկայ հրատարակման հիմնական նպատակը համարում ենք «Մշակ» օրաթերթում հատուածաբար (3 կտորով) տպագրուած այդ յօդուածի միակտուր վերահրատարակութիւնը, կցելով Մալխասեանցի՝ նոյն խնդրին վերաբերող մի այլ յօդուած, որի ծաւալի հիմնական մասը երկու նամակ է՝ մէկը Նորայրի, միւրը՝ Մալխասեանցի, նաեւ խնդրին վերաբերող Մալխասեանցի եւս երեք նամակ⁷, անհրաժեշտ մեկնաբանութիւններով: Սրանով, վստահ ենք, ապահովում ենք մեր բնագրագիրութեան համար շատ կարեւոր այդ նւթերի առաւել դիւրին եւ մատչելի գործածականութիւնը:

Սակայն, այդ անելուց առաջ հարկ ենք համարում համառօտ ներկայացնել նաեւ Նորայր Ն. Բիւզանդացուն, առաջնորդուելով հիմնականում լեզուաբան Մարտիրոս Մինասեանի (1926-2016 թթ.) արժէքաւոր մի հրատարակումով⁸: Իսկական անունը՝ Ստեփանոս Գազէզեան-Ճիզմէճեան-Թերզեան. ծնունդ է 1845 թ. մարտի 16ին, Կ. Պոլսում, 1854 թ. աշնանը մեկնել է Վենետիկ՝ Ս. Ղազար, 1866 թ. ապրիլի ծին Հ. Յարութիւն Թերզոնց անունով անդամակցել է Մխիթարեան միաբանութեանը, որից անջատուել է 1873 թ. յուլիսի 30ին, 1876 թ. աշնանից ի վեր իր նամակները ստորագրել է նոր՝ «Նորայր Ն. Բիւզանդացի», ֆրանսերէն՝ «Néandre de Byzance Noray» անունով, 1881 թ. յունիսի

⁵ Տե՛ս **Նորայր Ն. Բիւզանդացի**, «Քննութիւն Մալխասեան հրատարակութեանց Ազարանգեղոսի եւ Ղազարայ Փարպեցոյ», Յուշարձան. Գրական ժողովածոյ առթիւ 100 ամեայ յոբելինի հաստատման Մխիթարեան միաբանութեան ի Վիեննա (1811-1911) եւ 25 ամեայ տարեշրջանի «Հանդէս ամսօրեայ» ուսումնաթերթի (1887-1911), հրատարակեալ ի Մխիթարեան միաբանութեանէ..., Վիեննա, Մխիթարեան տպ., 1911, էջ 161-174:

⁶ Տե՛ս **Գեորգ Տէր-Վարդանեան**, ««Պատմագիրք Հայոց» մատենաշարը եւ մեր բնագրագիրութեան խնդիրները», էջմիածին, 2016, Զ., էջ 74-98:

⁷ Այսինքն՝ Մալխասեանցի երկու յօդուածի հետ միասին այստեղ հրատարակում ենք ընդամենը հինգ նամակ, մէկը Նորայրի՝ ձեռագիր բնագրի եւ տպագրի համեմատութեամբ, չորսը՝ Մալխասեանցի, որոնցից մէկը եւս ձեռագիր բնագրի եւ տպագրի համեմատութեամբ: Մալխասեանցի առաջին, երրորդ եւ չորրորդ նամակները աղաւաղ ուղղագրութեամբ եւ մեր առաջադրած խնդրից անշատ, տպուած են՝ **Աւետիք Աղամեան**, «Հայագիտութեան հարցերը Ստեփանոս Մալխասեանցի նամակներում», *Բանբեր Հայաստանի արխիւների*, 1969/1, էջ 71-77 (ամբողջ հրատարակումը՝ էջ 61-80):

⁸ Մանրամասն տե՛ս **Մարտիրոս Մինասեան**, «Նորայր Ն. Բիւզանդացու կեանքը, հրատարակութիւնների եւ դիւանի ցանկը», *Բագմալէպ*, 1983/Ա-Գ., էջ 39-97 (այսուհետեւ՝ **Մինասեան**, Նորայր):

18ին Պոլսում ամուսնացել է Շուեդիայի արքունի լուսանկարիչ Սելմա Եակոբսոնի հետ, ժամանակ անց նրա հետ տեղափոխուել է Ստոկհոլմ, կնոջ մահից (1899 թ. մարտի 30) ժամանակ անց՝ 1903 թ. վերջին հաստատուել է Վենետիկում, ուր եւ մահացել է 1915 թ. դեկտեմբերի 25ին: Ըստ իր կտակի՝ 1924ի դեկտեմբերին նրա աճիւնը տեղափոխուել է Ստոկհոլմ եւ դրուել իր իսկ կառուցած դամբարանում՝ կնոջ շիրմի մօտ:

Նորայրը յայտնի էր առաւելապէս իր կեանքի օրօք տպուած երեք արժէքաւոր գրքով. «Հայկական բառաքննութիւն» (Պոլիս, 1880), «Բառգիրք ի գաղղիերէն լեզուէ ի հայ» (Պոլիս, 1884), «Կորին վարդապետ եւ թարգմանութիւնք նորին» (Տիփլիս, 1900): Իրենից յետոյ տպագրուել է եւս մի գիրք՝ «Քննադատութիւն Հայ բուսակի» (Վիեննա, 1925). բնականաբար, ունի նաեւ իր ժամանակի գիտական եւ առօրեայ մամուլում տպագրուած յօդուածներ:

Այնուհետեւ տարբեր հեղինակների գանազան հրապարակումներով յայտնի դարձաւ, որ Նորայրն իր ամբողջ ունեցուածքը՝ կնոջից ժառանգութիւն մնացած 125.000 շուէդական կրոնը, գրադարանը, ձեռագիր աշխատութիւնները եւ ֆրանսերէն-հայերէն բառարանի չվաճառուած 1000 օրինակը կտակել է Ստոկհոլմում գործող՝ շուէդական կանանց «Frederika-Bremer-Förbundet» ընկերութեանը⁹, վերջինս էլ 1922 թ. Նորայրի արխիւը եւ գրադարանը վաճառել է Գէոտեբորգի քաղաքային գրադարանին, որտեղից եւ այդ ամէնը 1960 թ. անցել է նոյն քաղաքի համալսարանի կենտրոնական գրադարանին¹⁰, ուր եւ պահպանուում է մինչեւ օրս: Նորայրի արխիւը տեսնելու առիթ են ունեցել. առաջինը՝ 1946-7ին Սուրէն Երզնկեանը (Ս. Լօրելիի), 1963ին՝ Հայկ Պէրպէրեանը, 1982ին՝ Մ. Մինասեանը: Առաջինը նամակներով եւ թուուցիկ հրապարակումներով մեր հասարակութեանը տեղեկացրեց մոռացուած արխիւի մասին, երկրորդը Գէոտեբորգ էր գնացել Նորայրի որոշ գործերի ժապաւինային պատճէններ¹¹ պատրաստելու առաքելութեամբ:

Իսկ Մարտիրոս Մինասեանը 1982 թ. դեկտեմբերի 6-9 չորս օրուայ ընթացքում իր կնոջ օգնութեամբ կարգաւորել եւ թուուցիկ նկարագրել է Նորայրի դիւանը¹², որը, նրա գրադարանի հետ միասին, Վենետիկից Ստոկհոլմ, այնտեղից էլ՝ Գէոտեբորգ տեղափոխուելու ճանապարհներին բաւական տուժել է՝

⁹ Նոյն տեղում, էջ 48:

¹⁰ Նոյն տեղում, էջ 55:

¹¹ Այժմ պահպանում են Մաշտոցեան Մատենադարանում եւ Հայաստանի Գիտութիւնների ակադեմիայի գրադարանում:

¹² Տե՛ս Մինասեան, Նորայր:

զգալապէս այն պատճառով, որ տեղափոխողներն ու նիւթերը պահպանողները հայերէն տառ անգամ չեն ճանաչել: Ըստ Մարտիրոս Մինասեանի՝ «Կան թղթեր, էջակալուած կամ ոչ, տետրեր, որոնք խոստումնալից վերնագրեր ունեն, բայց միայն մի քանի գրուած էջեր են պարունակում. նշումներ եւ ուրուագծեր աւելի շատ են, քան աւարտուած աշխատանքներ... Նորայրը շատ բանի է ձեռնարկել, բայց քիչ բան է աւարտել, այն էլ միշտ վերանայել է ու լրացրել: Երկար ամիսներ է անհրաժեշտ բոլոր թղթերն ուսումնասիրելու եւ վերագասաւորելու, նոյն նիւթին վերաբերողները ի մի բերելու եւ միանգամայն աւելորդ դարձածները որոշելու համար»¹³:

Այսուհանդերձ, Մինասեանի համար Նորայրի արխիւը տեսնելը եւ նրա ցանկը կազմելը բառի լաւագոյն իմաստով ճակատագրական եղաւ թէ՛ իր եւ թէ՛ յատկապէս Նորայր Բիւզանդացու անտիպ մնացած վաստակի համար. Գէոտեբորգի համալսարանի գրադարանի հետ հետագայ բանակցութիւններով պատճէններ ստացաւ եւ գիտական մամուլում հրատարակեց Նորայրի շատ թէ քիչ աւարտուն մանր գործեր, եւ աւելին՝ փոքր (50 կամ 25 օրինակ) տպաքանակներով, մեծադիր՝ ՅՕX21 սմ չափսով հրատարակեց նրա որոշ կարեւոր աշխատութիւնների պահպանուած մասերը. այդպիսիք են՝ «Նախնիք» (Ժնեւ, 1996, 575 էջ), «Բառգիրք ստորին հայերէնի» (Ժնեւ, 2000, 767 էջ), «Ուսումնասիրութիւններ, բնագրեր, բառարանագրութիւն» (Ժնեւ, 2003, 543 էջ) եւ այլն: Շատ կարեւոր է նաեւ Մինասեանի հետեւեալ հրատարակումը՝ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հտ. Ա.-Բ., Վենետիկ, 1836-1837. սրբագրուած եւ ճոխացուած Նորայր Ն. Բիւզանդացու ձեռքով» (Ժնեւ, 1990, հտ. Ա.-Ե.): Նոր հայկազեանի 2227 մեծադիր (գրադաշտը 25,2X17 սմ) էջ¹⁴ ունեցող երկհատորեակի բոլոր թերթերի միջեւ մէկական թերթ մուծելով, Նորայրն արել է իր սրբագրումները եւ յաւելումները, որոնք մեր լեզուի գրաբար շրջանի՝ մինչեւ ԺԱ. դարի, նաեւ միջին շրջանի (մինչեւ ԺԷ. դ.) բառագանձի հետազօտման համար չափազանց մեծ արժէք ունեն:

Մինասեանի նորայրեան բոլոր հրատարակութիւնների թուարկումը մեր ներկայ խնդրից դուրս է, ուստի յիշելով, որ նա իր տպագրութիւնների վերջում սովորաբար զետեղել է սեփական գործերի եւ Նորայրի երկերի իր հրատարա-

¹³ **Մինասեան**, *Նորայր*, էջ 59. Ընդգծումը մերն է - Գ. Տ-Վ.:

¹⁴ Հտ. Ա. Ա.-Կ, Վենետիկ, 1836. 20, 1140 էջ, հտ. Բ. Հ-Ֆ, Վենետիկ, Ս. Ղազար, 1837. 1067 էջ:

կուսիներին ցանկերը, բաւարարուենք յիշատակելով այդպիսի երկուսը¹⁵: Ապա նկատի ունենալով այն հանգամանքը, որ Նորայրն իր ամբողջ կեանքում եւ գրեթէ բոլոր տեսակի գործերի մէջ զբաղուել է մեր աղբիւրների բնագրական խնդիրներով, որպէս Մինասեանի աշխատանքների կարեւորագոյն մի արդիւնք արձանագրենք, որ նրա շնորհիւ, թէկուզ հնարաւոր նուազագոյն տպաքանակներով, գիտական շրջանառութեան մէջ մտան Նորայրի բնագրագիտական եւ բառարանագրական կարեւորագոյն աշխատութիւնների պահպանուած մասերը: Իսկ սա նշանակում է, որ դրանք կարող են, աւելին՝ պէտք է անպայման գործածուեն մեր միջնադարեան բնագրերի բոլոր արծարծումների, առաւել եւս՝ նոր հրատարակութիւնների մէջ¹⁶:

Կայ նաեւ աւելին. Նորայրը աշխոյժ նամակագրութիւն է ունեցել իր ժամանակի տասնեակ մտաւորականների հետ. պահպանուած՝ հրատարակուած կամ դեռեւս հրատարակելի նամակները մօտ երկու հազար¹⁷ են. ահա նրա՝ Մատենադարանեան արխիւում¹⁸ առկայ նամակագրութեան գնահատականը. «Ն. Բիւզանդացին թողել է աւելի քան 1977 նամակներ՝ ուղղված հայ, ռուս, անգլիացի, ֆրանսիացի, գերմանացի, իտալացի, շուեդացի եւ այլ գիտնականների: Արխիւում պահուում են նաեւ Ն. Բիւզանդացուն հասցէագրած՝ Ա. Բագրատունու, Ա. Ղազիկեանի, Ն. Ակինեանի, Մ. Օրմանեանի, Ն. Մառի, Ա. Չոպանեա-

¹⁵ Տե՛ս, օրինակ՝ **Մարտիրոս Մինասեան**, *Աստուածանշի արեւելահայերէն էջմիածնական թարգմանութեան որակը*, Ժնև, 2006, երկրորդ էջակալման էջ [155-7], նոյնը տես նաև՝ **Մարտիրոս Մինասեան**, *Արեւելահայերէն նոր կտակարանի էջմիածնական թարգմանութեան որակը*, Ժնև, 2006, էջ [154-6]:

¹⁶ Մեր բոլոր բնագրական հրատարակութիւնների մէջ այդպէս էլ վարուել ենք. օրինակ՝ Լ. դարի պատմագիր Ղետնդի երկի մեր հրատարակութեան մէջ Նորայրի «Նախնիք» գործի վերաբերեալ գրել ենք. «այստեղից արձանագրել ենք 50 առաջարկ՝ մեծ մասը ձեռագրական ընթերցումներով հաստատող, հիմնաւոր եւ ընդունելի» (տես ՄՀ, Զ. հտ., Լ. դար, Անթիլիաս-Լիբանան, 2007, էջ 732): Հպանցիկ նկատենք, որ, ցաւօք, միշտ չէ այդպէս արւում. օրինակ Մինասեանը, Նորայրի գործը լրացնելով հրատարակել է բնագրագիտական կարեւոր արժէք ունեցող մի գիրք (**Մարտիրոս Մինասեան**, *Մովսիս Խորենացու Պատմութիւն Հայոց (Նորայր Ն. Բիւզանդացու հետ)*, Ժնև, 1991, 337 էջ), որը, սակայն, նկատի չի առնուել Խորենացու Պատմութեան վերահրատարակութեան մէջ. հմմտ. ՄՀ, Բ. հտ., Ե. դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, [Ժ.], էջ 1737-2121:

¹⁷ Համեմատութեան համար նկատենք, որ Ն. Ադոնցի երկերի շարքի վերջերս հրատարակուած «Նամականիք» հատորում կայ ընդամենը 135 նամակ. տես Ն **Իկողայոս Ադոնց**, *Երկեր*, հտ. Է. *Նամականիք*, խմբ. Պ. Յ. Յովհաննիսեան, Եր., ԵՊՀ հրատ., 2014 (288 էջ, 5 ներդիր):

¹⁸ Նորայրի արխիւի մի փոքր մասը Հայկ Պէրպլեւեանի ջանքերով բերուել է Հայաստան եւ 1965 թ. ի վեր պահպանուել է Երեւանում՝ Մաշտոցեան Մատենադարանում. մասնամասները տես Ա **Լետիք Հ. Աղամեան**, «Նորայր Բիւզանդացու արխիւր», ԼՀԳ, 1972/10, էջ 120-121:

նի, Կ. Եգեանի, Ս. Մալխասեանի, Ք. Պատկանեանի, Խրիմեան Հայրիկի, Մ. Պոտորեանի, Ա. Արփարեանի, Թէոդիկի, Բ. Սարգիսեանի, Վ. Շիշմանեանի, Ի. Կիրեղեանի, Օ. Կարիէրի, Է. Տէգայի, Ֆ. Միւլլէրի, Եսայի Տայեցու, Թ. Կէտիկեանի, Գ. Ճէլալեանի, Յ. Թորոսեանի, Հ. Պալեանի, Արիստակէս վարդապետ [Վարդանեան]ի, Ա. Աբէլեանի եւ այլոց նամակները: Արխիւում գրութիւններ եւ նամակներ կան հայկական թերթերի խմբագրութիւններից, միաբանութիւններից, դպրոցներից, ընկերութիւններից»¹⁹: Գրեթէ բոլոր նամակների մէջ Նորայրն արծարծել է գիտական խնդիրներ, բանասիրական եւ բնագրագիտական նրբին հարցեր, առաջարկել է մեր ամենատարբեր մատենագրական երկերի տարատեսակ տեղիների եւ ընդհանրապէս բառերի ու դարձուածների սրամիտ սրբագրումներ: Դժուարանում ենք յիշել որեւէ մտաւորականի նամականի, որի մէջ Նորայրի թղթակցութեան շափ առատօրէն արծարծուած լինեն մեր միջնագարեան գրականութեան տարատեսակ հարցեր: Ներկայումս կազմում եւ հրատարակում են նրա քննած աղբիւրների նոր բնագրեր, որոնց պատրաստողները ցրիւ տպագրուած նամակների այդպիսի նիւթը՝ սրամիտ կռահումներն ու սրբագրութիւնները նկատի ունենալու կամ արձանագրելու համար չեն կարող հսկել եւ օգտագործել տարբեր պարբերականներում ցրուած առաջարկները, որովհետեւ, նախ՝ իրաւունք ունեն չիմանալու, թէ Նորայրից որտե՞ղ եւ ի՛նչ նամակներ են հրատարակուած, ապա՝ ուղենիշներ (անուանացանկեր) չունեցող այդ հրապարակումների մէջ կարող են երկար փնտրել եւ չգտնել իրենց հարկաւոր նիւթը:

Միով բանիւ, Նորայրի նամականին իր արժէքի առումով մօտ է նրա «Նախնիք» գործին, ըստ այսմ՝ լիովին համոզուած ենք, որ այս հեղինակի այլ գործերին հաւասար կարեւորութիւն պէտք է տալ նաեւ նրա նամականուն եւ պահպանուած ամբողջը հրատարակել, ձգտելով անել աւելին. նրա թղթակիցների արխիւներում արժէ փնտրել Նորայրին գրուած նամակները եւ հրատարակել հնարաւոր չափով նամակ-պատասխան յաջորդականութեամբ կամ երկխօսութեան ձեւով. ասենք՝ Ստեփանոս Մալխասեանցի նամակները եւ Նորայրի՝ նոյն նամակներին տուած պատասխան(ներ)ը: Ըստ որում, նամականիի հատոր(ներ)ը պէտք է օժտուած լինեն ճշգրիտ ցանկերով՝ անձնանունների (արծարծած բնագրերի հեղինակների), տեղանունների, սրբագրուած բառերի եւ դարձուածների: Լիովին հաւատացած ենք, որ Նորայրի եւ իր թղթակիցների

¹⁹ Նոյն տեղում, էջ 121:

նամականիի այսպիսի հրատարակութիւնը կարելոր է լինելու ո՛չ միայն գիտութեան պատմութեան համար, այլեւ՝ մեծապէս նպաստելու է նոյն գիտութեան առաջընթացին: Ի վերջոյ, շեշտենք, որ Նորայրի նամակների լաւագոյնս ծանօթագրուած մի հրատարակութեան համար կրկին պարտական ենք նոյն Մարտիրոս Մինասեանին²⁰, ուստի եւ նամականիի մեր պատկերացրած ապագայ հրատարակութիւնը ցանկալի է անել առնուազն նրա տպագրածի մակարդակով:

Ուստի յիշելով, որ դեռեւս 2005 թ. շարուածքային եղանակով վերահրատարակել ենք 1887ին Ստոկհոլմում խմորատիպ ձեւով Նորայրի տպած «Քննասէր» ձեռագիր պարբերականի երկու պրակը (միատեղ)²¹, որի մէջ եւս բաւական շատ են բնագրերի սրբագրութիւնները, նաեւ՝ որ Մ. Մինասեանը կազմել է «Նորայր Ն. Բիւզանդացու կեանքին ու գործին վերաբերող գրականութեան ցանկ»²², վերջինիս որեւէ միաւոր չկրկնելով²³, Նորայրի նամականու մեր պատկերացրած ապագայ ցանկալի հրատարակութեանը նպաստելու համար՝ հրատարակողների ազգանունների այբբենական կարգով այստեղ տալիս ենք նրա նամակների մեզ յայտնի հրատարակութիւնների մի այլ ցանկ.

Աղամեան Աւետիք Հ., «Նորայր Բիւզանդացու արխիւր», ԼՀԳ, 1972/10, էջ 120-121 (ներկայացնում է Նորայրի արխիւի՝ Մաշտոցեան Մատենադարանում գտնուող մասը):

Աղամեան Աւետիք Հ., «Նորայր Բիւզանդացու նամակները Կարապետ Եզեանին», ԼՀԳ, 1974/8, էջ 85-101:

Բախչիմեան Արծուի Հ., «Նիւթեր Նորայր Բիւզանդացու արխիւի վերաբերեալ», ԲԵՀ, 2003/2 (110), էջ 104-109 (նամակագրութիւն Նորայրի արխիւի մասին):

²⁰ Նորայր Ն. Բիւզանդացի, *Նամակներ Վիեննայի Միսիթարեանների[ն]*, հրատ. Մինասեան Մարտիրոս, Ժնև, Ղուկասեանց եղբայրների հաստատութեան հրատ., 1992, 62 էջ: Այս գրքում տպուած է 40 նամակ, կայ նաեւ «Բառացանկ» (էջ 57-62). նոյնի մի այլ տարբերակն է հետեւեալը՝ «Նորայր Ն. Բիւզանդացի, *Նամակներ Վիեննայի Միսիթարեանների*, պատրաստեց Մարտիրոս Մինասեան, Պէրուք, 1992, 109 էջ», որի մէջ նամակների քանակը 41 է եւ որը Մինասեանն իր հրատարակութիւնների ցանկում զարմանալիօրէն չի նշում:

²¹ Տե՛ս **Գէորգ Տէր-Վարդանեան**, «Նորայր Բիւզանդացու «Քննասէր»-ը», *ՊԲՀ*, 2005/Բ., էջ 101-143:

²² Տե՛ս **Մինասեան**, Նորայր, էջ 40, ծ. 1. այդ փոքր ցանկում կան նաեւ նամակների հրապարակումների խորագրեր:

²³ Նորայրի գիտական վաստակին է վերաբերում Մինասեանին անձանօք մնացած հետեւեալը՝ **Ներսէս Շահագիզ**, «Նորայր Բիւզանդացին եւ նրա գրական ժառանգութիւնը», *էջմիածին*, 1950/է. (3-4), էջ 26-31:

Ղազարեան Գոհար, «Նորայր Բյուզանդացու անտիպ նամակները», *Էջմիածին*, 1998/2., էջ 123-132:

Ղազարեան Գոհար, «Նորայր Բիւզանդացու անտիպ նամակները ուղղուած Կարապետ Եզեանին՝ գրուած 1890-1893 թթ.», *Էջմիածին*, 2009/Ա, էջ 69-88:

Ղազարեան Գոհար, «Նորայր Բիւզանդացու անտիպ նամակները (1896-1897 թթ.)», *ՐՄ*, 25, 2018, էջ 398-424:

Ղազարեան Ռուբէն Ա., «Լեզուաբանական ուսումնասիրութիւններ», Երեւան, ԵՊՀ հրատ., 2010, էջ 323-357:

Ղազարեան Ռուբէն Ա., «Նորայր Բիւզանդացու նամակներից՝ ուղղուած Գիւտ Բահանայ Աղանեանին», *ԲԵՀ*, 1992/1 (76), էջ 148-157:

Ղազարեան Ռուբէն Ա., Տէր-Ստեփանեան Ա. Գ., «Նորայր Բիւզանդացու նամակագրութիւնից», *ԲԵՀ*, 1972/1, էջ 172-177:

Վարդանեան Ա. Վ., «Անտուան Կարիէրի եւ Նորայր Բիւզանդացու նամակագրութիւնից», *ՊԲՀ*, 1977/2, էջ 232-250:

Վարդանեան Ա. Վ., Վարդանեան Վ. Գ., «Նորայր Բիւզանդացու նամակներից էմիլիո Տեզային», *ԲԵՀ*, 1993/2 (80), էջ 123-133:

Վարդանեան Արծուի, Վարդանեան Վարազդատ, «Նորայր Բիւզանդացու անտիպ նամակներից», *ԼՀԳ*, 1979/5, էջ 92-104:

Վարդանեան Վարազդատ, «Նորայր Բիւզանդացու նամականուց», *ԼՀԳ*, 1980/3, էջ 92-108:

Վարդանեան Վարազդատ, «Նորայր Բիւզանդացու նամակները Սուբիաս Պարոնեանին», *ԼՀԳ*, 1976/11, էջ 84-103²⁴:

* * *

Այժմ, ըստ մեր խոստման, ներկայացնում ենք Ստ. Մալխասեանցի

²⁴ Պէտք է նաեւ նկատի ունենալ, որ Նորայրի նամակների հայաստանեան առկայ հրատարակութիւնների մէջ բազմաթիւ սխալներ կան՝ արժարժուած նիւթին անտեղեակ լինելու, վատ կտրուելու, նաեւ՝ գրեթէ գրաբար շարադրանքի ուղղագրութիւնը փոխելու «սովետական» դարձնելու պատճառով: Տե՛ս, օրինակ՝ **Վարազդատ Վարդանեան**, «Նորայր Բիւզանդացու նամակները Սուբիաս Պարոնեանին», *ԼՀԳ*, 1976/11, էջ 84-103 (յատկապէս՝ էջ 92. «հատուցի»-ի փոխարէն գրուած է «հատուցի»), «Ժամանակ եւ ինչ թող մնայ առ իս մատեանդ»-ի փոխարէն՝ «Ժամանակ եւ ինչ թող մնայ առ իս մատայանդ» (անճոռնի սխալներ կան նաեւ սրա յաջորդ՝ 93րդ էջում. եւ այլն): Ուստի սրանք վերահրատարակելիս պէտք է հիմնուել միայն նամակների բուն բնագրերի վրայ:

«Պատմագիրք Հայոց» մատենաշարի ազդարարութիւն-ծրագրային յօդուածը՝ «Հին դարերից», որին կցում ենք հեղինակի՝ նոյն խնդրին վերաբերող մի այլ յօդուած՝ «Մոռացուած թէ ոչ», եւ սրանով դիւրացնում ենք հին եւ դժուարամատչելի «Մշակ» օրաթերթում տպագրուած այդ յօդուածների (առաջինը հատուածաբար՝ Յ կտորով) գիտական շրջանառութիւն-գործածութիւնը:

– Առաջին յօդուածի մասերը «Մշակ»ում համարակալուած են I, II, III ձեւով, փոխել եւ դարձրել ենք՝ Ա., Բ., Գ.: Տեղ խնայելու նպատակով լրագիրը յօդուածները սեղմ եւ հոծ է տպել. պարբերութիւնների տրոհումը երբեմն փոխել ենք ըստ շարադրանքի իմաստի: Արել ենք նաեւ կէտադրական եւ ուղղագրական որոշ սրբագրումներ՝ «վրա, զարկվի... դատապարտվի», դարձրել ենք՝ «վրայ, զարկուի, դատապարտուի». եւ այլն: Որպէս տրոհիչ նշան գործածուած է նաեւ գծիկ՝ -, որ մեր ներկայ կէտադրական համակարգին խորթ է, սա փոխարինել ենք հիմնականում բուլթով, երբեմն՝ յաջորդող շարադրանքը սկսել ենք նոր պարբերութեամբ:

Տողատակի բոլոր ծանօթագրութիւնները մերն են:

* * *

25 ԱՏԵՓԱՆՈՍ ՄԱԼԽԱՍԵԱՆՑ

ՀԻՆ ԴԱՐԵՐԻՑ

Ա.

Մենք հայերս կանգնած ենք մի մեծ, հազուադէպ յոբելեանի շեմքին: 1904 թուին լրանում է 1,500 տարի այն օրից, երբ հայոց մեծ ուսուցանող ս. Մեսրոպ-Մաշթոց վարդապետը հնարեց մեր այբուբենը. ուրեմն շուտով կը հասնէ հայոց գրերի գիւտի տասնեւհինգդարեան յոբելեանը:

Ամէն մի ազգի համար նրա այբուբենի գիւտը նշանակում է նրա լուսաւորութեան, քաղաքակրթութեան սկիզբը, նրա գրականութեան նախադուռը. ուրեմն եւ ամէն ազգի համար նուիրական պէտք է լինի իր գրերի գիւտի դարադարձը. բայց մեր մէջ նա ունեցել է նաեւ առանձին նշանակութիւն, շնորհիւ այն բացառիկ դրութեան, որի մէջ գտնուում էր մեր ազգը հինգերորդ դարի սկզբին:

²⁵ «Ֆանասիրական» վերնախորագրի ներքոյ տպագրուած է՝ «Մշակ», 1902, 27 հոկտ., Հ^մ 238, էջ 1-2. 31 հոկտ., Հ^մ 241, էջ 1-2. 1 նոյ., Հ^մ 242, էջ 1-2. ամէն կտորի վերջում ստորագրութիւն՝ «Ստ. Մալխասեանց», որ այստեղ անուան լրացուած ձեւով դրել ենք յօդուածի սկզբում:

Երկու հզոր հարեւանների, յոյների եւ պարսիկների մէջ խեղդուած՝ փոքրիկ եւ թոյլ Հայաստանը քաղաքականապէս եւ կուլտուրապէս մօտ էր իր օրհասին: Արշակունի թագաւորները, ներքին քաղաքականութեան մէջ թոյլ, արտաքինի մէջ անհեռատես, խաղալիք էին մի կողմից ներքին հակառակ հոսանքների եւ միւս կողմից հզոր հարեւանների քմահաճոյքին: Ուժեղացած քրիստոնեայ հոգեւորականութիւնը ձգտում էր իր գերիշխանութեան ենթարկել թագաւորին եւ նրան դէպի Յունաստան ձգել. նախարարական տոհմերը, ամէն մէկը ինքնուրոյն եւ ուժեղ՝ ամէն մէկն հետեւում էր իր տեղական եւ անձնական շահերին. ընդհանուր ազգային շահեր, ազգային գիտակցութիւն պակասում էր նրանց մէջ. նրանց կախումը թագաւորից լոկ ձեւական էր. նրանք կօզնէին թագաւորին լոկ այն ժամանակ, երբ սրա նպատակները համապատասխան լինէին իրանց շահերին ու հակումներին. հակառակ դէպքում՝ հայ նախարարը զինւում էր եւ թշնամու շարքերի մէջ կուռում էր բնիկ թագաւորի դէմ: Հեղինակութիւնից եւ ոյժից զուրկ այսպիսի թագաւորները հասկանալի է, թէ ինչ նշանակութիւն պէտք է ունենային այնպիսի հզոր դրացի պետութիւնների աչքում, ինչպիսին էին Բիւզանդական կայսրութիւնը արեւմուտքում եւ Սասանեան պետութիւնը արեւելքում: Արշակունի թագաւորները այս պետութիւնների հպատակներն էին (վասսալ). թագաւորում էին՝ նրանց հաւանութեամբ, զրկւում էին թագից՝ նրանց հրամանով, եւ քանի անգամ որ այս հզոր պետութիւնները իրար հետ կռիւ էին ունենում՝ տուժողը վերջ ի վերջոյ լինում էր Հայաստանը: Սրա սահմանամերձ նահանգները արեւելքից եւ արեւմուտքից հետզհետէ կրժոււմ, մաշոււմ էին, եւ սահմանները հետզհետէ նեղանում. եւ այս նեղ սահմաններում էլ Արշակունի թագաւորները միշտ ենթարկուած էին իրանց գերիշխան պետերի քմահաճոյքին: Բաւական էր մի անզգոյշ վարմունք, մի քսութիւն՝ եւ ահա այդ թագաւորները, պետերի մի հրամանով, ենթարկւում էին ամենախիստ եւ նախատական պատիժների: Յիշենք իբրեւ օրինակ, որ մի պարսիկ իշխան մտնում է Հայաստան եւ Հայոց թագաւորին սեփական բանակի մէջ բռնում է, աչքերը դաղելով կուրացնում եւ հետը Պարսկաստան գերի տանում, եւ մնում է անպատիժ: Որ Պարսից թագաւորը մի ուրիշ Արշակունի թագաւորի հրամայում է գնալ Պարսկաստան, եւ սա հարկադրուած է լինում գնալ, որպէսզի այնտեղ իբրեւ մի զգուելի ոճրագործ շղթայի զարկուի եւ ցմահ բանտարկութեան դատապարտուի մութ բանտի մէջ, ուր եւ անձնասպանութիւն է գործում: Որ մի ուրիշ թագաւորի յոյն զօրապետը Հայաստանի ծոցում իր մօտ ճա-

շի է հրաւիրում եւ քստմնելի դաւաճանութեամբ իր սեղանի վրայ նրան սպանել է տալիս. եւ անպատիժ մնում:

Ահա համառօտ, բայց ճշգրիտ պատկեր Արշակունի հայ թագաւորների գորութեան եւ քաղաքական դրութեան:

Կար մի ուրիշ գործօն, որ ազգերի պատմութեան մէջ նշանաւոր դեր է կատարել. դա քրիստոնէութիւնն էր, որ հինգերորդ դարի սկզբին Հայաստանում բռնորել էր արդէն իր գոյութեան հարիւրամեակը: Բայց ի՞նչ դրական արդիւնք ունեցաւ այս նոր կրօնը իր հարիւր տարուայ գոյութեան ընթացքում:

Ոչնչացնելով նախկին հեթանոսական զուարթ ու գեղածիծաղ պաշտամունքը, ազգային կամ ազգայնացած աստուածութիւնները, նրանց պաշտամունքին նուիրուած հայ-ժողովրդական տօներով ու հանդէսներով նոր կրօնը տուեց մռայլ, երկրային հրապոյրներն ու բարիքներն արհամարհող, երկար ծոմերի ու պահեցողութեան, չը հասկացուած աղօթքների, օտար ու օտարահնչիւն աստուածապաշտութեան մի պաշտամունք: Եկեղեցիներում ժամերգութիւնը կատարուում էր, Աւետարանը կարդացւում էր յունարէն կամ ասորերէն լեզուներով, եւ հայ ժողովուրդը, որ ամենեւին չէր հասկանում այդ լեզուները, նոր կրօնի պաշտամունքը տեսնելով, ժամակարգութիւնը լսելով՝ ուրիշ ոչ մի զգացում չէր կարող դուրս բերել եկեղեցուց, բացի այս մտքից, թէ ինչո՞վ է Քրիստոս բարձր իր նախկին հզօր, աստուածների հայր, հայ աշխարհի պահապան Արամազդից, ի՞նչ առաւելութիւն ունի իր առաջ դրուած խաչը՝ իր նախկին Անահիտ տիկնոջ ոսկեղէն սիրուն արձանից, որին տարեկան հանդէսների ժամանակ այնպիսի հրճուանքով զարդարում էին վարդի պսակներով եւ զոհեր էին մատուցանում. ինչո՞վ լաւ է այդ օտարաձայն քրթմնջոցը, որ այնքան ձանձրալի կերպով ղօղանջում է իրանց ականջներում, քան այն գեղեցիկ հայերէն երգերը, որոնցով գովում էին քաջ Վահագնին, ոսկեծղի Անահիտին եւ նրանց շնորհքները հայցում:

Նոր կրօնը, չը կրթելով ժողովրդի հոգին, օտար մնալով նրա սրտին՝ այնու ամենայնիւ ստեղծեց մի նոր՝ հոգեւորական դասակարգ, որ բարեպաշտ թագաւորների առատ նուէրներով ահագին հողային կալուածների ու հարստութիւնների տէր դարձաւ եւ մեծամեծ արտօնութիւններ ստացաւ: Այս դասակարգի գլխաւորները ձգտեցան նաեւ քաղաքական իշխանութիւն ձեռք բերելու, թագաւորներին իրանց հպատակեցնելու: Կինելով աւելի կրթուած ու բարեպաշտ՝ նրանք յիրաւի մեծ ազդեցութիւն ձեռք բերին. թագաւորների մօտ

խորհրդատուի, մենտորի դեր էին կատարում. նրանց ու նախարարների յարաբերութեան մէջ՝ միջնորդ էին դառնում. նրանց եւ օտար պետերի մէջ՝ դեսպան ու միջնորդ հանդիսանում: Թոյլ թագաւորներն ուղղակի ենթարկուած էին նրանց ազդեցութեան եւ նրանց կամքովն էին շարժում, իսկ եռանդուն թագաւորներն աշխատում էին թօթափել իրանց վրայից նրանց ազդեցութիւնը, եւ սկսում էր երբեմն խուլ պայքար, երբեմն յայտնի թշնամութիւն այս երկու իշխանութիւնների մէջ: Ամբողջ հարիւր տարուայ ընթացքում չէ եղել ոչ մի կաթողիկոս, որ ենթարկուած չլինի բռնութիւնների (սկսելով հալածանքից մինչեւ սպանութիւն) ժողովրդի, իշխանների կամ թագաւորների կողմից, բացի վերջին մի քանի աննշան եւ սակաւակեաց կաթողիկոսները, որոնք եղել են «ստրուկ ի ստրկաց արքունի»:

Սրա հետ միասին քրիստոնէութիւնը Հայաստանում այս ժամանակամիջոցում առաջ բերեց մի նոր, քաղաքական եւ կուլտուրական տեսակէտից վտանգաւոր դրութիւն: Քրիստոնէութեան շնորհիւ հայերը կրօնապէս հեռացան պարսիկներից եւ մօտեցան յոյներին: Սասանեան պարսիկ թագաւորները, առանց այն էլ կրօնամոլ, այս փոփոխութիւնը նկատեցին իբրեւ մի շատ վտանգաւոր իրողութիւն Պարսկաստանի շահերի համար, որովհետեւ կրօնական միութեան շնորհիւ հայերը քաղաքականապէս էլ մօտենում էին Յունաստանին, իսկ հայերի միանալը յոյների հետ՝ շատ կարեւոր, գուցէ եւ վճռական նշանակութիւն ունենար այս երկու մեծ պետութիւնների դարաւոր մրցութեան լուծման համար: Ուստի Սասանեան թագաւորները թշնամաբար սկսեցին նայել ո՛չ միայն քրիստոնէութեան, այլ եւ այդ կրօնը դաւանող ազգի ու թագաւորի վրայ: Քրիստոնէութեան շնորհիւ Հայաստանը վաստակեց մի անհաշտ ու հզօր թշնամի, որ շատ շուտով վերջ դրեց նրա քաղաքական ինքնուրոյնութեան արտաքին մնացորդին (Արշակունիների թագաւորութեան) եւ վճռաբար ձեռնարկեց քրիստոնէութիւնը բնաջինջ անելու Հայաստանից: Իսկ յոյները, իրանց կողմից, ամենեւին հոգ չը տարան օգտուելու իրանց համար նպաստաւոր դրութիւնից՝ օգնութեան ձեռք չմեկնեցին հայերին (քաղաքական շահերը այսպէս էին հասկանում նրանք). եւ միեւնոյն ժամանակ աշխատում էին յունացնել իրանց բաժին ընկած Հայաստանը, որի համար, ի միջի այլոց, շատ յարմար միջոցներ էին յունարէն լեզուով հայոց եկեղեցիներում պաշտամունք կատարելը եւ հայոց կաթողիկոսների՝ յոյն մետրապոլիտներից եպիսկոպոսական ձեռնադրութիւն ստանալը:

Քաղաքակրթութեամբ էլ Հայաստանը այն ժամանակ, ինչպէս եւ միշտ, ենթարկուած էր դրացի աւելի քաղաքակիրթ եւ հզօր ազգերի ազդեցութեանը: Մանաւանդ մեծ էր Պարսկաստանի, մեր դարաւոր եւ արիւնակից հարեւանի ազդեցութիւնը, որի մէջ ընկղմուած էր հայութիւնը խորապէս:

Պաշտօնական գրագրութիւնները, կալուածական, տոհմական դոկումենտները եւ առհասարակ որեւէ գրագրութիւն՝ գրուած էին պարսկերէն: Պալատի խօսակցութեան լեզուն պարսկերէնն էր, քաղաքների, թագաւորների անունները՝ պարսկերէն, պետական կազմը, զինուորական, դատաստանական կարգերն ու կազմակերպութիւնը՝ պարսկական, զէնքերը, զգեստները, կերակուրները, կահկարասիքը, արհեստները, հաւատալիքները, ծէսերը... բոլորը պարսկական: Սրան անհերքելի ապացոյց է մեր հինգերորդ դարի լեզուի բառարանը, որի մէջ հազարաւոր ամենագործածական բառեր, կեանքի բոլոր երեւոյթներին վերաբերեալ, պարսկերէն են եւ ցոյց են տալիս, թէ ո՛րտեղից են մտել մեր մէջ այդ բառերով նշանակուող առարկաներն ու հասկացողութիւնները:

Այս հետաքրքրական, դեռ չը մշակուած հարցը արժանի է առանձին ուսումնասիրութեան:

Այսպէս ուրեմն, հինգերորդ դարի սկզբին Հայաստանը թէ՛ քաղաքակա՜նապէս եւ թէ՛ կուլտուրապէս կանգնած էր կորստեան վիճի ափին. քրիստոնէութիւնը չէր պաշտպանում ազգայնութիւնը, չէր կրթում հոգին, այլ աւելի օտարացնում էր նրան, աւելի մօտեցնում օրհասական անկումը: Առանց չափազանցութեան կարելի է ասել, որ եթէ այս դրութիւնը երկու դար էլ շարունակուէր՝ Արաբիայի անապատներից փոթորկուած մահմեդական նոր կրօնը ամենից առաջ կը տապալէր հայութիւնը, եւ այսօր ոչ հայ եւ ոչ հայի յիշատակ կը մնար աշխարհիս երեսին, այլ մահմեդական պարսիկներ եւ մասամբ քրիստոնեայ յոյներ, որոնք իրենց ծագումն էլ վաղուց մոռացած կը լինէին:

26 Բ.

Ինքնապաշտպանութեան բնագոյրը յատուկ է ոչ միայն անհատներին, այլ եւ հաւաքական մարմիններին՝ տոհմերին, համայնքներին եւ ազգերին: Հայ ժողովրդին սպառնացող կուլտուրական վտանգը զգացին այն ժամանակուայ ամենից լուսաւոր մտքերն ու զգայուն սրտերը, եւ իրանց բոլոր ոյժերը լարեցին՝ այդ վտանգի առաջն առնելու համար: Քաղաքական վերածնութիւնը այլ

²⁶ Մշակ, 1902, 31 հոկտ., Հ^մ 241, էջ 1-2:

եւս անկարելի էր, քանի որ քաղաքական քայքայման պատճառները ոչ այնքան ներքին էին՝ որքան արտաքին, որոնց վրայ շէին կարող նրանք ազդել: Ուրեմն պէտք էր վերածնել ազգը կրօնապէս եւ կուլտուրապէս. պէտք էր ամրապնդել նրա կրօնա-բարոյական եւ ազգայնական հիմքերը, որպէս զի նա դիմանալ կարողանայ դարերի փոթորիկներին եւ ահեղ սասանումներին:

Եւ մենք տեսնում ենք հինգերորդ դարում մի եռանդուն, անձնանուէր գործունէութիւն, որի նմանը այլ եւս չը կայ մեր երկար պատմական կեանքի մէջ եւ շատ քիչ կայ ուրիշ ազգերի պատմութեան մէջ:

Ամբողջ հինգերորդ դարը ազգաշինութեան դար է մեր պատմութեան մէջ, եւ այս շինարարութեան երեք գլխաւոր սիւներն են. դարի սկզբում՝ հայոց գրերի գիւտը, դարի միջավայրում՝ Վարդանանց պատերազմը, եւ դարի վերջում՝ Գրւնայ եկեղեցական ժողովը: Այս երեք հաստատուն սիւների վրայ հիմնուեց մեր ազգի կրօնական եւ կուլտուրական շէնքը եւ շարունակում է մնալ մինչեւ այսօր, տասնեփններորդ դարում միայն վերանորոգութիւն եւ ճարտարապետական ոճի բարեփոխութիւն կրելով:

Այս հսկայական դարաւոր շէնքի ճարտարապետը, նրա առաջին հիմքը դնողը, նրա գլխաւոր սիւնը կանգնեցնողն եղաւ մի հայ գիւղացի, Մեսրոպ-Մաշթոց անունով, որ Տարօն գաւառի (այժմեան Մուշ եւ գաւառը) Հացեկաց գիւղից էր, Վարդան անունով մէկի որդին: Նա սկզբում արքունական ծառայութեան մէջ էր գտնուում, քարտուղարի պաշտօն էր վարում թագաւորի դիւանատանը. նշանակում էր որ նա գիտէր պարսկերէն, յունարէն եւ ասորերէն եւ իր ժամանակի զարգացած մարդկանցից էր: Բայց շուտով նա թողնում է այս պաշտօնը. ինչպէս Խորենացին սուր է նկատել՝ նա «տեսնելով որ Արշակունեաց թագաւորութիւնը վերջանալու վրայ է», թողնում է աշխարհային կեանքը եւ մտնում է հոգեւոր կեանքի մէջ: Գուցէ հէնց այս ժամանակ նրա մէջ աղօտ միտք է ծագում՝ որեւէ միջոց գտնել այդ քայքայուած, կործանուելու մօտ տէրութեանը նեցուկ տալու համար. բայց ի՞նչ կերպով՝ նա ինքն էլ դեռ չը գիտէր: Բայց հոգեւորական կեանքի մէջ նա սկսում է մի անձնուրաց, ժողովրդի օգտին նուիրուած գործունէութիւն, որի ժամանակ հետզհետէ հասունանում է նրա գիտակցութեան մէջ ընկած առաջին սաղմը: Նա ժողովում է աշակերտներ, նրանց սովորեցնում է (ի հարկէ՝ ասորերէն ընթերցանութիւն եւ այս լեզուով ժամակարգութիւն), նրանց հետ միասին ճանապարհորդում է Հայաստանի գանազան գաւառները՝ քարոզելու ժողովրդին, հեթանոսութեան հետքերը ջնջե-

լու: Քարոզութեան միջոցին, կրօնական գրքերը օտար լեզուներով կարդացուելուց յետոյ, նա հայերէն, ժողովրդին հասկանալի կենդանի լեզուով բացատրում է Ս. Գիրքը, թարգմանում է Աւետարանը, եւ այս ժամանակ նկատում է այն զմայլեցնող երեւոյթը, որ ժողովուրդը հայերէն, մատչելի խօսքը լսում է ուշադրութեամբ, ոգեւորում է, ուղղում է, այնինչ նա անտարբեր էր մնում երբ օտար, անհասկանալի լեզուով ժամերգութիւն ու պատարագ էր կատարւում: Ծագում է նրա մէջ լուսաւոր միտք՝ այնպէս անել, որ հայոց բոլոր եկեղեցիներում հայերէն լեզուով կատարուի ժամերգութիւնը: Բայց ի՞նչպէս. պէտք էր սրա համար հայերէն լեզուով թարգմանել ժամերգութիւնը եւ Ս. Գիրքը, իսկ սրա համար հարկաւոր էր հայերէն լեզուի գրեր ունենալ...

Այս բնական, մէկը միւսից բխող մտքերը այլ եւս հանգիստ չեն տալիս ժողովրդի օգտին նուիրուած Մեսրոպին: Այնքան սրանք լցնում [են] նրա հոգին, այնքան գրաւում նրան, որ նա գալիս է Վաղարշապատ, հայոց թագաւորանիստ եւ կաթողիկոսանիստ քաղաքը, դիմում է լուսամիտ եւ զարգացած Սահակ կաթողիկոսին, բաց է անում սիրտը նրա առաջ եւ նրա հովանաւորութիւնը խնդրում...

Մի քանի տարի տեւող յոգնեցնող, տոկուն աշխատանքից յետոյ Մեսրոպ-Մաշթոցին յաջողում է վերջապէս հնարել յարմար այբուբեն հայերէն լեզուի համար՝ այն այբուբենը, որ մինչեւ այսօր էլ գործ ենք անում. եւ նա օտարութեան մէջ երկար թափառելուց յետոյ՝ իր պանծալի գիւտն առած՝ դիմում է Հայաստան եւ դիմաւորում է խուռն բազմութեան ցնծալից աղաղակներով: Նրա այս դարձը՝ նրա աշակերտներից մէկը, Կորիւնը, համեմատում է Մովսէս մարգարէի Սինայ լեռնից իջնելուն՝ աստուածատուր տասնաբանեայ պատուիրանների տախտակները ձեռքին: Աւելի աջող նմանութիւն չէր կարելի գտնել: Քրիստոսի 404 թուին պատահեց յիշատակելի եւ նշանաւոր այս դէպքը:

Այս թուականից սկսում է Հայաստանում մտաւոր կեանք, գրական գործունէութիւն: Երկու հաւասարապատիւ գործակիցները, Սահակ կաթողիկոսը եւ Մեսրոպ-Մաշթոցը, հոգի եւ ղեկավար են հանդիսանում այս գործունէութեան: Բացում են հարիւրաւոր դպրոցներ Հայաստանի զանազան կողմերում. հաւաքում են հազարաւոր ընտիր մանուկներ՝ հայերէն գրագիտութիւն սովորելու, որպէս զի ապագայում հոգեւոր հովիւներ դառնան հայոց եկեղեցուն: Հայերէն են թարգմանում Ս. Գիրքը, ժամագիրքը, եւ առաջին անգամ մայրենի լեզուով լսում է ժամասացութիւն հայոց եկեղեցում: Թարգմանում են ասորե-

րէնից եւ յունարէնից ամենակարեւոր, հոշակուած գրքերը՝ կրօնական, բարոյական եւ պատմական բովանդակութեամբ, որպէս զի հայերէն կարգալ սովորած սերունդը ունենայ մտաւոր սնունդ: Նորաբաց դպրոցներում ուսած աշակերտներից շատերը, որոնք առանձին ընդունակութիւններ էին ցոյց տալիս, ուղարկում են արտասահմանի ուսման կենտրոնավայրերը՝ Բիւզանդիոն, Ալեքսանդրիա, Աթէնք, որպէս զի բարձրագոյն ուսում ստանան եւ թարգմանութիւններ անեն: Այս անդրանիկ հայ ուսանողներից ոմանք, դեռ իրանց երկու մեծ ուսուցիչների կենդանութեան ժամանակ, վերադառնում են հայրենիք, մտաւոր պաշարով լցուած, եւ թեւ ու թիկունք են դառնում իրանց հայրերին՝ թարգմանելու, ուսուցանելու, քարոզելու գործում: Ոմանք էլ վերադառնում են աւելի ուշ, երբ Սահակն ու Մեսրոպը վախճանած էին, բայց դարձեալ նուիրում են նոյնպիսի արդիւնաւոր գործունէութեան: Բարձր կրթութիւն ստացած աշակերտները արդէն նեղն են զգում լոկ թարգմանչական աշխատանքը, անբաւարար են համարում ուրիշների մտքի բերքերով հայ ժողովրդին կերակրելը. պահանջ է զգացում արդէն ազգային ինքնուրոյն գրականութեան, որ երկշոտ քայլերով սկսուելով հինգերորդ դարի քառասնական թուականներին՝ կարճ ժամանակում զմայլելի աշողութեան է հասնում՝ Ագաթանգեղոսի, Փաւստոսի անունը կրող պատմութիւնները, Եղիշէի, Փարպեցու, Խորենացու պատմութիւնները, Եզնիկի կրօնա-փիլիսոփայական գրուածքը եւ ուրիշ շատ գործեր այս դարում գրուեցին, Մեսրոպի ձեռնաստիւն աշակերտների կամ սրանց աշակերտների ձեռքով:

Դժուար է ամփոփ կերպով արտայայտել այս մտաւոր մեծ գործունէութեան բոլոր հետեւանքները, որ մի ամբողջական վերածնութիւն եղաւ բոլոր ազգի համար: Այսքան ասենք, որ քրիստոնէութիւնը շարժառիթ դառնալով գրերի գիւտին՝ ինքն էլ հասկանալի եւ սիրելի դարձաւ հայ ժողովրդին. հայը, որ շորորդ դարում ընդունել է մկրտութիւն չրով՝ այս դարում մկրտուեց նաեւ հոգով, եւ Վարդանանց պատերազմի ժամանակ հազաւ նաեւ նահատակի արիւնաներկ ծիրանին: Եկեղեցին ազատուեց օտար ազդեցութիւններից եւ դարձաւ զուտ ազգային սեփական անկախ նուիրապետութեամբ, պաշտամունքներով, ծէսերով ու կազմակերպութեամբ: Գրագիտութիւն տարածուեց ժողովրդի մէջ. ստեղծուեց ազգային մատենագրութիւն, հարուստ պատմագրութեամբ, որ ոչ միայն մեզ մատուցել է անգնահատելի ծառայութիւններ, այլ թանկագին ստացուածք է կազմում նաեւ ընդհանուր գրականութեան շտեմարանում: Արդար է ասել հայոց գրի համար, թէ «Նովաւ կեամք, եւ շարժիմք, եւ եմք»:

Վերածնութեան այս շարժման մէջ մօտ քառասուն տարի միասին եւ համերաշխ գործում էին մեր երկու լուսաւորիչները, Սահակ կաթողիկոսը եւ Մեսրոպ-Մաշթոցը, որոնց երախտագէտ սերունդը սրբերի կարգն է դասել եւ ամէն տարի նրանց յիշատակը կատարում է եկեղեցում: Սակայն, կարծես երկուստեք համաձայնութեամբ, նրանք աշխատանքը բաժանել էին իրար մէջ: Հայրապետը զբաղուած էր յատկապէս Ս. Գրքի եւ եկեղեցական այլ գրքերի թարգմանութեամբ եւ եկեղեցու ներքին բարեկարգութեամբ, այն-ինչ Մեսրոպ-Մաշթոցը, գրերը հնարելու վրայ երեք տարի աշխատելուց յետոյ՝ անընդհատ ճանապարհորդում է Հայաստանի զանազան կողմերը, դպրոցներ է բաց անում, ուսուցիչներ հասցնում, նոր գրագիտութեան դժուարութիւնները հարթում, ինքն անձամբ սովորեցնում: Նրա շատ աշակերտների մէջ յատկապէս յիշելու է Եգնիկին, Կորիւնին, Ղեւոնդ երէցին, Յովսէփ կաթողիկոսին եւ Վարդան Մամիկոնեանին, որ առանձին առարկայ է եղել նրա հոգացողութեան: Նա գնում է Աղուանք եւ Վրաստան՝ այս ազգերի համար էլ, ինչպէս վկայում են նրա կենսագիրները, այբուբեն հնարում, գնում է Բիւզանդիոն, որպէս զի թոյլտուութիւն ձեռք բերէ Հայաստանի յունական մասում էլ հայերէն գրագիտութիւն տարածելու եւ հայ լեզուով եկեղեցիներում պաշտամունքը կատարելու, որ եւ աջողում է նրան: Նա կրթական գործի հիմնադիրը, տարածողն ու հոգին է եղել Հայաստանում մօտ քառասուն տարի տեւող անընդհատ, անդադրում աշխատանքով, եւ խորենացին, նրան ամենից լաւ ճանաչողն ու գնահատողը, նրան տուել է արժանաւոր եւ պատուաւոր մակդիր՝ «Ուսուցանող աշխարհիս Հայոց»:

Շուտով ուրեմն կը բոլորուի տասն եւ հինգ դար հայոց լուսաւորութեան սկզբնաւորութիւնից, եւ ներկայումս ապրող հայ ժողովուրդը պարտաւոր է որեւէ արժանաւոր բան անել Մեսրոպ-Մաշթոցի յիշատակին: Եթէ մեր նախնիքը այնքան հասկացել են հայոց գրի նշանակութիւնը եւ այնքան երախտապարտ են եղել, որ նրա հնարողին անմահացրել են ամենից պատուաւոր միջոցով՝ տօնելի սրբերի կարգը դասելով, մենք չենք կարող անզգայ եւ ապերախտ գտնուել այդ նշանաւոր գիւտի եւ գտիչի առաջ:

Մեր կողմից՝ մենք մտադիր ենք, ի յիշատակ հայոց գրերի գիւտի հազարհինգհարիւրամեակին, իբրեւ երախտագիտական նուէր ս. Մեսրոպ-Մաշթոցի անուան, հրատարակել հայոց հին եւ նոր պատմագիրների լիակատար ժողովածուն, «Պատմագիրք Հայոց» անունով:

Այս Պատմագիրքը բովանդակելու է իր մէջ յիսուն հայ հեղինակների

պատմական աշխատութիւնները, ժամանակագրական կարգով: Այս հեղինակներն են՝ Կորիւն, Ագաթանգեղոս, Փաւստոս, Եղիշէ, Ղազար Փարպեցի, Մովսէս Խորենացի, Սեբէոս, Զենոբ (Յովհան Մամիկոնեան), Ղեւոնդ երէց, Թովմայ Արժրունի, Յովհաննէս կաթողիկոս, Ուխտանէս, Մեսրոպ երէց, Ստեփանոս Ասողիկ, Արիստակէս Լաստիվերտցի, Ներսէս Շնորհալի (Ողբ եղեսիոյ), Կիրակոս Գանձակեցի, Մովսէս Կաղանկատուացի, Սամուէլ Անեցի, Վարդան Բարձրբերդցի, Մատթէոս Ուռույցեցի, Մխիթար Անեցի, Մաղաքիա արեղայ, Սմբատ Գունդստաբլ, Մխիթար Այրիվանեցի, Ստեփանոս Օրբէլեան, Հեթում Պատմիչ, Աբուսահլ Պատմիչ, Գրիգոր Խլաթեցի, Թովմայ Մեծոփեցի, Մինաս վարդապետ Համդեցի, Յովհաննէս աւագ երէց Կամենիցոյ, Առաքել Դաւրիթեցի, Զաքարիա Սարկաւագ, Ազոստինոս Բաջեցի, Եսայի Հասան-Ջալալեան, Պետրոս դի Գիլանենց, Դաւիթ Բէգ (Ստ. Վ. Շահումեան), Աբրահամ Կրետացի, Սիմէոն կաթողիկոս (Զամբո), Զաքարիա Ազուլեցի, Թովմաս Խոջամալեան, ժամանակագրութիւն (Անձանօթի, Մանանայից), Յովհաննիսիկ վարդապետ, Վահրամ Բաբունի, Մարտիրոս Երզնկացի, Սիմէոն Ապարանցի, Երեմիա Զէլէպի, Մաղաքիա Ծէվահիրճեան, Աւետիք երէց Ղափանցի (վերջին վեցը այն դէպքում, եթէ կարողացանք ձեռք բերել գրչագիրներին ընդօրինակութիւններ): Այս ձեռնարկութիւնը յաջողութեամբ գլուխ գալուց յետոյ՝ կարելի կը լինի հրատարակել երկու լրացուցիչ հատոր էլ, որոնցից առաջինի մէջ կը մտնեն՝ հայերէն թարգմանուած հին օտարազգի պատմագիրներ՝ Եւսեբիոս (ժամանակագրութիւն), Լաբուբնայ, Սոկրատ, Միխայէլ Ասորի եւ Զուանշիր (պատմութիւն վրաց). իսկ երկրորդի մէջ՝ ընտիր հայ հեղինակներ ոչ-պատմական բովանդակութեամբ, ինչպէս՝ Եգնիկ, Անանիա Շիրակացի, Գրիգոր Մագիստրոս (Թղթերը), Մխիթար Գօշ եւ այլն²⁷:

28 Գ.

Ամեն ջանք պէտք է գործ դրուի, որ այս հրատարակութիւնը հնար եղածին չափ կատարեալ լինի արտաքին եւ ներքին յատկութիւններով:

Արտաքին յատկութիւնները կայանալու են հետեւեալում. պէտք է թուղթը

²⁷ Հետաւրբիւր է, որ, ի տարբերութիւն սրա, Ղ. Ալիշանի «Հայապատում»-ի՝ «Բնիկ պատմիչ հայոց» շարքն սկսում է «Ագաթանգեղոս» եւ աւարտում «Հ. Միխայէլ վ. Զամբեան» անուններով եւ ունի 1-158 համարներ. տե՛ս Հ. Ղեւոնդ վ. Ալիշան, Հայապատում. Պատմիչք եւ պատմութիւնք Հայոց. Ա. Պատմիչք Հայոց, Բ. Պատմութիւնք Հայոց, Վեներտիկ, ի վանս Ս. Ղազարու, ՌՅՄԱ. - 1901, էջ 35-139:

²⁸ Մշակ, 1902, 1 նոյ., չ^մ 242, էջ 1-25:

ազնիւ լինի, տպագրութիւնը խիստ մաքուր, տպագրական սխալներից ազատ, շքեղ կազմով յատուկ պատուիրուած կլիշէով: Մէկ խօսքով՝ արտաքինի կողմից հրատարակութիւնը պէտք է յիշեցնէ եւրոպական կամ Վենետիկի Մխիթարեանների վերջին տպագրութիւնները:

Ներքին յատկութեան տարրերը կազմելու են սրանք²⁹.

1. Իւրաքանչիւր հեղինակի սկզբից դրուելու է սեղմուած առաջաբան, որի մէջ հաղորդուելու են հակիրճ, ստոյգ տեղեկութիւններ հեղինակի անձի եւ պատմութեան գրուելու ժամանակի մասին, այդ պատմութեան նախկին տպագրութիւնները, նոր տպագրութեան բնագիրը, համեմատուած ձեռագիրները, համեմատողների անունները:

2. Իւրաքանչիւր հեղինակից յետոյ դրուելու է մանրամասն ճիշտ ցանկ նրա մէջ գործ ածուած յատուկ անունների:

3. Ի նկատ կառնուեն այն ուղղագրութիւնները, որոնք առաջարկուած են զանազան բանասէրների կողմից՝ որ եւ է հեղինակի այս կամ այն աղաւաղուած տեղը ուղղելու համար:

4. Ամենայն զգուշութիւն գործ կը դրուի՝ հարազատ եւ լիակատար կերպով հրատարակելու հեղինակի գործը, որ եւ է ուղղագրական փոփոխութեան մասին, որ կը մտցուի բնագրում՝ հաշիւ կը տրուի ծանօթութեան մէջ:

5. Հեղինակները, մանաւանդ հնագոյնները, նորից կը համեմատուեն ձեռագիրների հետ եւ աւելի կատարեալ ու հարազատ կերպով լոյս կընծայուեն՝ քան մինչեւ այժմ եղած հրատարակութիւնները: Այս հեղինակների շարքումն են ի միջի ալոյց՝ Փաւստոս, Ղազար Փարպեցի, Սեբէոս, Ուխտանէս, Մովսէս Կաղանկատուացի, մանաւանդ Մովսէս Խորենացի, որ կը տպագրուի ընդարձակ ընթերցուածքներով՝ էջմիածնի ձեռագիրների բաղդատութեամբ:

6. Այս ծրագիրը կարող է ենթարկուել մանր փոփոխութիւնների, օրինակ՝ հեղինակները ճիշտ ժամանակագրական կարգով դասաւորելով, երկրորդական, մանր հեղինակներ աւելցնելով եւ այլն. բայց հիմնական կէտերում փոփոխութիւն չի կրի:

Հայ պատմագիրների մի լիակատար ժողովածու հրատարակելու միտքը յղացուած էր դեռ մի քանի տարի առաջ, եւ յատկապէս Ալ. Քալանթարի կողմից, առանց սակայն գրերի գիւտի յիշատակի հետ կապելու: Նախկին Հրատա-

²⁹ Յաջորդող՝ ըստ պարբերութիւնների տրոհումը եւ 1-6 համարակալումը մերն է, «Մշակ»-ում շարադրանքը միայաւ է, թուերի փոխարէն էլ գծիկներ են:

րակչական ընկերութիւնը պէտք է ձեռնամուխ լինէր այս գործին, բայց երբ տպուէց յայտարարութիւն Գ. Ալիշանի «Հայապատում»ի հրատարակութեան մասին, այդ մտադրութիւնը առ կախ մնաց, որովհետեւ կարծում էինք, թէ «Հայապատում»ը ոչ այլ ինչ կլինի՝ եթէ ոչ մեր մտածած հրատարակութեան նման մի բան: Այնուհետեւ դուրս եկաւ «Հայապատում»ը՝ բոլորովին տարբեր գործ եւ տարբեր նպատակի ծառայող: Մօտենում էր գրերի գիւտի դարադարձը, եւ մենք՝ այդ հրատարակութիւնը կապելով նուիրական տօնի հետ՝ ստիպուած եղանք, արդէն իբրեւ մի մասնաւոր մարդ, նախաձեռնող հանդիսանալ այս ծանր գործին:

Այս միտքը արծարծուել է մի քանի շրջանակներում: Եղել են առաջարկողներ, որ հրատարակութիւնը լինի աշխարհաբար թարգմանութեամբ, ասելով, որ այս կերպով աւելի կարելի է յուսալ նիւթական օժանդակութեան, որ հրատարակութիւնը աւելի կը տարածուի ժողովրդի մէջ, ուրեմն եւ աւելի օգտակար կը լինի: Մենք, մի ըոպէ տատանուելուց յետոյ, համաձայնեցինք այս առաջարկութեան. բայց յետոյ երկու բարեկամ եւ բանիբուն անձ (կարիք չենք զգում ծածկելու այս անունները՝ Ալ. Քալանթար ու Լէօ) սաստիկ հակառակեցին աշխարհաբար հրատարակութեան մտքին եւ անպայման առաւելութիւն տուին գրաբար հրատարակութեան:

Քանի որ այս հարցը հասարակական նշանակութիւն ունի եւ մեր ընթերցողներից շատերին էլ կը հետաքրքրէ՝ մէջ բերենք գլխաւոր առարկութիւնները աշխարհաբար հրատարակութեան դէմ:

1. Մեր պատմական հեղինակներից ամենամեծ մասը չէ կարող ծառայել իբրեւ ընթերցանութեան նիւթ. նրանք պատմական աղբիւրներ են՝ ուսումնասիրութեան նիւթեր, որոնց հիման վրայ պէտք է գրուեն իսկական՝ ընթերցանելի եւ մատչելի պատմութիւններ: Այսպիսի հեղինակների աշխարհաբար հրատարակութիւնը, ուրեմն, դարձեալ չի կարգացուի, բայց մի եւ նոյն ժամանակ եւ չի ծառայի գիտնականի համար իբրեւ աղբիւր ուսումնասիրութեան եւ նիւթեր հաւաքելու:

2. Վերջին պատմագիրների մեծ մասը գրուած է այնպիսի լեզուով, որ կարիք չունի թարգմանուելու. աշխարհաբար լեզուով կարգացողը նրանց էլ կը հասկանայ առանց դժուարութեան:

3. Գեղարուեստական լեզուով գրող, ընթերցանելի պատմագիրներից մի մասը արդէն թարգմանուած է աշխարհաբար, այնպէս որ ընթերցանութեան

պահանջին կարող է տալ բաւարարութիւն (օրինակ՝ հորենացի, Եղիշէ, Փարպեցի, Ար. Լաստիվերտցի. Թարգմանուած, բայց դեռ չէ տպագրուած նաեւ Փաւստոս). հազիւ 4-5 հեղինակ են մնում Թարգմանելու արժանի, որոնք վաղ թէ ուշ, մասնաւոր ձեռնարկողների ձեռքով, կարող են Թարգմանուել:

4. Աշխարհաբար հրատարակութիւնը, պահանջելով բազմաթիւ աշխատողներ, տարբեր ճաշակներով ու հայեացքներով, զանազան պայմաններով չէ կարող գլուխ գալ ներկայ հանգամանքներում, եւ անշուշտ, կիսակատար կը մնայ:

Այս եւ սրա նման լուրջ առարկութիւնները միանգամայն համոզիչ էին, եւ մենք նորից, անդառնալի կերպով, փարեցանք մեր սիրած ու գուրգուրած գաղափարին՝ գրաբար բնագիրների հրատարակութեան, որի օգուտները անուրանալի են:

Այս օգուտները հասկանալու համար պէտք է թէկուզ մի հարեւանցի հայեացք ձգել մեր պատմագիրների հրատարակութեան դրութեան վրայ մինչեւ այժմ:

Այս հրատարակութիւնները եղել են զանազան տեղերում ու ժամանակներում՝ տարբեր պատրաստութեամբ մարդկանց ձեռքերով եւ տարբեր ուղղութեամբ ու նպատակներով: Այս պատճառով շատ զանազանում են նրանք միմեանցից ներքինով եւ արտաքինով: Ոմանք ունեն ձեռագիրների տարբեր ընթերցուածքներ (որոնց մէջ մի քանիսը լիակատար, միւսները սահմանափակ թուով), միւսները՝ ոչ: Մի քանիսը տպագրուած են մի քանի ձեռագիրների բաղդատութեամբ, միւսները՝ առաջին պատահած, գուցէ սխալաշատ ձեռագրից: Ոմանք ունեն յատուկ անունների ցանկեր, միւսները չունեն: Ոմանք բաւական արտաքին վայելչութիւն ունեն, համեմատաբար քիչ սխալներով, իսկ միւսները՝ սաստիկ վատ տպագրութիւն, անպիտան թուղթ, տառասխալներով լիքը: Վերջապէս՝ հրատարակութիւններից ոմանք ենթարկուած են կամաւոր կամ ակամայ աղաւաղումների: Կան եւ այնպիսի հեղինակներ, որոնք կիսատ են տպագրուած՝ միակ ծանօթ թերի ձեռագրից, այն-ինչ յետոյ գտնուել են անթերի ձեռագիրներ, որոնցից դեռ հրատարակութիւն չէ եղած:

Այս բազմատեսակ պակասութիւններով հանդերձ՝ եղած հրատարակութիւններից շատերը մատչելի չեն ոչ միայն ժողովրդին, այլ նոյն իսկ մասնագէտ պատմաբաններին ու բանասէրներին: Չը խօսելով այն հեղինակների մասին, որոնք մինչեւ այժմ էլ դեռ տպագրուած չեն, ուրեմն եւ մատչելի չեն ընդհան-

րութեան՝ տպագրուածներից շատերն էլ կամ սպառուած են, կամ տպագրուած են որ եւ է՝ այժմ անգիւտ պարբերական հրատարակութեան կամ գրքի էջերում, կամ վերջապէս փթում են որ եւ է անծանօթ անկիւնում: Մեր վերը յիշած յիսուն պատմագիրներից հազիւ թէ կէսը կարելի լինի գտնել եւ գնել. միւս կէսը հրատարակում չը կայ, եւ միայն բախտի բերմամբ կարելի է մի օրինակի հանդիպել մի հնավաճառի մօտ կամ որ եւ է ընտանիքում: Այս պատմագիրների լիակատար ժողովածուն չը կայ ոչ միայն մասնաւոր՝ թէկուզ մասնագէտ անձերի մօտ, այլ մինչեւ անգամ յայտնի հաստատութիւնների մէջ: Բացառութիւն կարող են կազմել 3-4 անձ կամ հաստատութիւն, որոնք գուցէ ունենան լիակատար ժողովածու:

Սրանց վրայ պէտք է աւելացնել եւ մի ուրիշ աննպաստ հանգամանք, այն է՝ հայ պատմագիրների գնի թանգութիւնը: Հաշուելով վաճառուող 20 պատմագիրների ընթացիկ գները (Վենետիկի հրատարակութիւնները՝ հէնց միաբանութեան ցուցակով, ֆր. = 40 կ. հաշուելով), տեսնում ենք, որ նրանք, առանց կազմի, արժէն մօտ 24 բուբլի: Այս հաշուով բոլոր հայ պատմագիրները, եթէ կարելի լինէր գտնել եւ գնել՝ պէտք է արժենային, առանց կազմի, աւելի քան յիսուն բուբլի: Այս հանգամանքը, հարկաւ, չէ կարող նպաստել նրանց շուտ եւ շատ ծախուելուն եւ ընթերցողների աւելի ընդարձակ շրջանի մէջ տարածուելուն:

Այս բոլորից յետոյ պարզ է, որ հայ պատմագիրների լիակատար ժողովածուի լաւ հրատարակութիւնը հերթական անհրաժեշտ պահանջ է: Այս անհրաժեշտութիւնը զգացել եւ զգում են մեր հին գրականութեամբ պարապողները, խօսքով ու գրով, նոյն-իսկ յատուկ բրոշիւրներով ցանկութիւն [են] յայտնել, որ օր առաջ լոյս տեսնէ այսպիսի հրատարակութիւն՝ աղաւաղութիւններից մաքրուած եւ հնարաւոր եղածին չափ կատարեալ: Եւ ի՞նչ աւելի նպատակաշարմար ու գեղեցիկ բան կարելի էր անել հայոց գրերի գիւտի տասնեհինգերորդ դարադարձի յիշատակին՝ եթէ ոչ հրատարակելով մեր հին մատենագրութեան ամենից հետաքրքրական ու կարեւոր մի մասը՝ հին հայ պատմագիրները, ներքին եւ արտաքին առաւելութիւններով ճոխացած եւ գնով մատչելի: Այսպիսի հրատարակութիւնը մի կողմից զարկ կը տար մեր հին գրականութեան պատմութեան ուսումնասիրութեանը եւ միւս կողմից կը տարածուէր ժողովրդի աւելի ընդարձակ շրջանում: Ի՞նչ աւելի հաճոյական նուէր կարելի կը լինէր մատուցանել ս. Մեսրոպ-Մաշթոցին նրա նշանաւոր գիւտի յիշատակին,

եթէ ոչ նրա մատների գործը, նրա աշխատանքի պտուղը՝ հայոց գրի ամենալաւ փունջը՝ Հայոց Պատմագիրքը: Ինենք այս թանգագին նուէրը ս. Մեսրոպի գերեզմանի վրայ եւ ասենք. «Զքոյս ի քոյոց քեզ մատուցանեմք»:

«Պատմագիրք Հայոց» հրատարակութիւնը, բովանդակելով յիսուն պատմագիր, կը բաղկանայ աւելի քան 300 տպագրական թերթից, մօտ 5000 մեծագիր երկսիւնակ երեսներից, եւ բաժանուած կը լինի հինգ մեծ հատորի, իւրաքանչիւրը մօտ 1000 երես:

Հրատարակութիւնը կարժեհայ, հաշուելով միայն թուղթը, տիպը, սրբագրութիւնը եւ կազմը, ոչ պակաս քան տասներկու հազար ռուբլի (մի հազար օրինակ տպելու համար):

Մենք հոգով ցանկանում ենք, որ այս հրատարակութեան մէջ մասնակցութիւն ունենան որչափ կարելի է շատ հայ անհատներ, թէ՛ մտաւոր աշխատակցութեամբ եւ թէ՛ նիւթական օժանդակութեամբ: Յանկանում ենք դարձեալ, որ հրատարակութիւնը այնքան էժանագին լինի եւ այնքան շատ տպագրուի, որ ինքն իրան տարածուի հայ ժողովրդի բոլոր խաւերում, տարածուի այնպէս, ինչպէս տարածուած է Ամերիկեան ընկերութեան հրատարակած Աստուածաշունչը:

Այս ցանկութիւններն իրագործելը այնքան մեզանից չէ կախուած, որքան բանասէր եւ բարեսէր ազգայիններից, որոնց ամէն մի աշակցութիւնը, մտաւոր թէ՛ նիւթական, աննախանձաբար եւ շնորհակալութեամբ կը յիշուի հրատարակութեան վերջում: Մեր բանասէր եղբայրակիցներին, մանաւանդ որոնք մօտ են գտնուում գրչագիրների պահեստներին, մենք առանձին դիմում կանենք անձամբ եւ նամակներով, եւ լիայոյս ենք, որ նրանք եռանդուն մասնակցութիւն յանձն կառնեն այս հասարակօգուտ աշխատութեան մէջ:

Առաջին հատորի տպագրութիւնը մտադիր ենք սկսել առաջիկայ յունուարին եւ վերջացնել 1904 թուին, մինչեւ ս. Մեսրոպի տօնի օրը (ամառը): Յաջորդ շորս հատորները լոյս կը տեսնեն այնուհետեւ՝ 3-4 տարուայ ընթացքում, մօտաւորապէս տարեկան մի հատոր:

* * *

30 ՍՏԵՓԱՆՈՍ ՄԱԼԽԱՍԵԱՆՑ

ՄՈՌԱՅՈՒԱՐԹ ԹԷ ՈՉ

Վեներտիկ, 26³¹ նոյեմբեր 1903

Մեծապատի Տէր Ստ. Մալխասեանց,

«Ընդունած եմ զձեր³² 17/30 նոյեմբեր 1902 նամակն, եւ 23 դեկտեմբեր 1902/5 յունուար 1903 յանձնարարեալ նամակն: Երէկ ընկալայ զյանձնարարեալ թուղթդ 4/17 նոյեմբերի, եւ ահա միովս կը պատասխանեմ ձեր երեք գրութեանց:

Վերջին նամակիդ մէջ կը հաճիք կոչել զիս «հայոց մատենագրութեան այնպիսի սիրահար, նախնեաց քննական հրատարակութեան ջերմ քարոզող, մեր հեղինակների ուսումնասիրութեան վրայ մի ամբողջ կեանք մաշող, եւ հմտութիւնների մեծ համբար³³ ունեցող»: Շնորհակալ եմ ազնիւ վկայութեանդ: Արդարեւ գրեթէ 45 տարի է, որ պարապած եմ եւ կը պարապիմ հայերէն մատենագրութեան եւ լեզուի, «ամբողջ կեանքս մաշեցուցած եմ» (ձեր իսկ խօսքերով) զմեր հին հեղինակաց աղաւաղեալ բնագիրներն յարդարելու եւ լուսաբանելու: Անընդհատ եւ անխոնջ աշխատութեանս պտուղն եղած է՝ ընդ ամենայն երկու հազար երկու հարիւր (2,200) փրանկ. ստացած եմ 500 փրանկ Հայկական Բառաքննութեանս համար (Իզմիրեան մրցանակ), 500 փրանկ Հ. Ղեւոնդ Ալիշանի Հայբուսակի Քննադատութեանս համար (ձեռագիր), 1,000 փրանկ Կորին վարդապետիս համար, 200 ֆրանկ ալ ստացայ յետ Սիրելւոյս³⁴ մահուան ի Բանասիրի հրատարակչէն՝ երկու յօդուածոց համար. միահամուռ

³⁰ Մշակ, 1904, 19 նոյեմբերի, Հ^մ 254, էջ 1-2: Հեղինակի «Ստ. Մալխասեանց» ստորագրութիւնը վերջից բերել եմք առաջ: Նորայրի այս նամակի բնագիրը տե՛ս Մաշտոցեան Մատենադարան, Նորայր Բիզանդագու թողօն, Հ^մ 14⁴⁰ (հիմն Հ^մ 235². 252⁴¹), 3 թերթ (թ. 21-23): «Մշակ»ի տպագրի որոշ շեղումներ «Մ» պայմանանիշով գրել եմք տողատակով, շարադրանքի մէջ դնելով բնագրի ուղիղ ձեւերը: Բացի դրանից, երկու բառ, որ Մալխասեանցը տպագրել է «ոսրլի» եւ «ֆրանկ» ձեւերով, նորայրը գրել է՝ «ոսրլի» եւ «փրանկ»: շարադրանքի մէջ դրել եմք նորայրի գրածի նման, առանց միւսները որպէս ընթերցում նշելու: Նորայրի թողօնում գտնուող Մալխասեանցի թուարկուած նամակների բնագրերը տե՛ս ստորեւ՝ նամակ 1-3, իսկ նորայրի այս նամակի՝ Մալխասեանցի 30 դեկտ. 1903 թ. պատասխանը, որը եւս նորայրի թողօնում է, կրկին տե՛ս ստորեւ, նամակ 4:

³¹ Մ 16] 26

³² Մ գգէն] զձեր

³³ Մ համբար] համբար

³⁴ Մ Սիրելւոյս

2,200 փրանկ վարձատրութիւն իմ գրեթէ 45-ամեայ անդուլ աշխատանաց: 1882ի դեկտեմբերէն՝ յորում փոխադրուեցայ ի Ստոքհոլմ, մինչեւ յ30 մարտի 1899 (օր մահուան կնոջս), որ է ըսել՝ յընթացս 17 ամաց, ստացած եմ ի վերոյնշանակեալ գումարէդ լոկ 1,500 փրանկ (500 Հայքուսակի Քննադատութեան համար եւ 1,000 Կորիւն վարդապետի համար), եւ մի միայն այս ողորմելի 1,500 փրանկով կարողացած եմ օգնել մեր տնական ամենօրեայ ծախուց: Եթէ իմ հայագիտութիւնս ամեն տարի շահ բերած ըլլար ինձ գոնէ 3.000 ռուբլի, իմ սիրելի կինս ողջ էր այսօր, զի աշխատութիւնն է որ սպաննեց զինք տարածամ:

Իմ ժամանակիս հայերն երբէք հասկացած չեն, թէ ինչպիսի ծառայութիւն կարող էի մատուցանել ազգային գրականութեան: Բախեցի շահ եւ շահ դռներ, աղաչեցի, պաղատեցայ, ամենայն ինչ անօգուտ, եւ ոգեսպառ ժամավաճառութիւն: Եթէ գտնուած ըլլային երկու երեք մտացի եւ բարեսիրտ մեծատուններ՝ որ զիս, դատելով ի Բառաքնութենէս, ի Գաղղիերէն-հայերէն բառարանէս, ի Քննասիրէ, ի Տեղեկութեանցն³⁵ յԱսողիկ, ի *De l'Urgence* տետրակէս, յայլեւայլ քննադատական յօդուածներէս, ի Կորիւն վարդապետէ, եթէ, կ'ըսեմ, երկու երեք մտացի եւ բարեսիրտ մեծատուններ՝ զայդքանեաց եւ զայդպիսեաց երկասիրողն արժանաւոր համարէին քաջակերութեան եւ դրամական նպաստներու (ինչպէս զանազան ժամանակակից մերազգիներ բախտաւոր գտնուեցան հազարներով ռուբլի ստանալու ի խրախուսութիւն³⁶ իւրեանց աշխատանաց), 1882ի դեկտեմբերէն մինչեւ ի սեպտեմբեր 1903ի, քսան տարիէ աւելի, ես իբր կոճղ անպիտան ինկած չէի մնար ի սառնամանիս հիւսիսոյ, այլ կ'ոգեւորուէի հետզհետէ հրատարակելու զարդիւնս իմ քննութեանց եւ ուսումնասիրութեանց, բայց իմ ժամանակիս հայոց անզգայութիւնն եւ անտարբերութիւնն ի գերեզման յուղարկեց զիմ սիրելի ամուսինս, իմ ժամանակիս հայոց անզգայութիւնն եւ անտարբերութիւնն վաղուց սովամահ սատակած էր եւ զիս. եւ եթէ տակաւին կ'ապրիմ՝ պաշտելի ամուսինիս երախտիքն է այն, որ 1879էն ի վեր կերակրած է զիս եւ կը կերակրէ: Սիրելոյս դրամագլխոյն տարեկան տոկոսիքներն չեն այնչափ առատ՝ որ լայն լայն ծախսեմ. բայց, գոհութիւն Աստուծոյ, ի մանկութենէ հետէ սովոր եմ զրկմանց, եւ ոչ մի տրտունջ չի խառնուիր այն անսպառ երախտագիտութեան ամենաջերմ զգացմանց հետ, որովք ամեն

³⁵ Մ Տեղեկութեանցս

³⁶ Մ > ի խրախուսութիւն

որ կ'օրհնեմ զՍիրելիս: Առողջութեանս վիճակն կը պահանջէր որ երթայի ի³⁷ Cannes, ի Nice, ի San Remo. հարկաւորեցայ շատանալ Վենետիով, ուր կարելի է ապրիլ չափաւոր ծախուք: Աստ եւս կը շարունակեմ պարապիլ իմ նախնեաց³⁸, շունելով ուստեք բարւոյ եւ օգտի ակնկալութիւն, մինչեւ որ գայ մահն եւ զիս անշնչացընէ:

Յուսամ այժմ իմացայք³⁹ թէ ինչո՛ւ չը պատասխանեցի ձեր նամակներուն: Զդառնացեալ սրտիս փղձուկն՝ մի անգամ՝ եւս թափէի. սաստիկ⁴⁰ վհատած եւ վաստակաբեկ՝ վերստին ամուլ բանակցութեան՝նց ձեռնարկէի: Կրեսո՞ս էիք որ կ'ուզէիք հրապուրել զիս: Յայտագրիդ մէջ կ'ըսէք. «Պատմագիրք Հայոց հրատարակութեան ամբողջ ծախսը՝ թէ՛ տպագրութեանը եւ թէ՛ աշխատակիցների վարձատրութիւնը, հաշուած է մօտաւորապէս 20,000 ռուբլի»: Առաջին նամակիդ մէջ ալ գրեցիք. «Մտադիր եմ մի փոքր չափով նիւթական վարձատրութիւն առաջարկել աշխատակիցներին»: Դուք գոհ էք մի փոքր չափով նիւթական վարձատրութենէ այնպիսի ծանր գործոյ համար՝ որ «լաւ գիտէք թէ պատուաւոր գործ պիտի ըլլայ եւ ամօթով պիտի չկացուցանէ⁴¹ զձեզ գիտութեան առաջ»: Զիս բնաւ չի շլացըներ, բնաւ չի հրապուրեր մի փոքր չափով նիւթական վարձատրութիւնն. այդ «մի փոքր չափ»դ՝ շնչին չափ է ինձ համար, եւ կը նշանակէ ձրի հաղորդել ձեզ զիմ «բազմաթիւ եւ բազմախուռն» ուղղութիւններն նախնեաց մատենագրութեանց: Հերիք աշխատած եմ ձրի մեր օրհնեալ Ազգին համար՝ որ յաւուրց անտի Խորենացուց զիւր գրագէտներն անօթի, ծարաւ մեռցընել միայն գիտէ. ձրի ոչ ինչ կը գրեմ այսուհետեւ, ոչ ինչ կը հաղորդեմ ում եւ իցէ: Տպագրեալ նախնեաց մատենագրութեանց մէջ՝ 10,000է աւելի՝ մի քան զմի կարեւոր սրբագրութիւններ ունիմ, ինչպէս արդէն յայտարարած եմ այլուր: Կը փափագի՞ք իմ աշխատակցութեանս Պատմագիրք Հայոց հրատարակութեան համար. հաճեցէ՞ք հայթհայթել ինձ 25,000 (քսան եւ հինգ հազար) ռուբլի, յղեցէ՞ք ինձ զգումարդ, եւ ես կաշակցեմ ձեզ բոլոր զօրութեամբս:

Նամակս «գաղտնի» գրութիւն չէ՝ ձեր գիտութեան եւեթ սահմանեալ. իշխան էք հրատարակել զայն ամբողջապէս, եթէ կամիք:

³⁷ Մ > ի

³⁸ Մ նախնեաց (վստահ եմ՝ նկատի ունի իր «Նախնիք» աշխատութիւնը)

³⁹ Մ իմացաք

⁴⁰ Բնագրում շնչած յաջորդող՝ «յոզմած»

⁴¹ Մ չը կացուցանէ

Խորին մեծարանօ՛ք՝

Խ. Մ. Նորայր Ն. Բիւզանդացի» (հասցէ):

*N. de Byzance Norayr
Sant Angelo, Ponte dei Frati, 3536
Venice (Italie)*

Monsieur Stépan Malchasseantz

Մեծ. տէր Ստ. Մալխասեանց

Séminaire Arménien Nersisseean

Tiflis (Russie)⁴²:

Այս՝ «ի խորոց սրտից» ժայթքած փղծուկին, այս եղերերգութեան քան նամակին ես կարողացայ միայն հետեւեալը պատասխանել 1903 թ. դեկտեմբերի 17ին:

[ՆԱՄԱԿ 4.]⁴³

17 դեկտ./30 դեկտ. 1903, Թիֆլիս⁴⁴

«Մեծապատիւ Տէր,
Նորայր Բիւզանդ,

Ստացայ Ձեր նամակը՝ նոյեմբերի 26ից⁴⁵ (ն. տ.), ի պատասխան իմ երեք գրութեանց: Ձեր նամակը հետս տարայ մօտ օրերս էջմիածին եւ կարգացի հրատարակիչ-ընկերներիս, եւ նրանց գիտութեամբ եւ համաձայնութեամբ է՛ ինչ որ գրելու եմ:

«Հայոց Պատմագրքին» աշխատակցելու համար Ձեր դրած պայմանը՝ այն է՝ քսան եւ հինգ հազար թուրքի վարձատրութիւն տալ, մենք չենք կարող կատարել. ոչ այն պատճառով, որ թանկ⁴⁶ է՝ մտքի աշխատանքի⁴⁷, այն էլ քա-

⁴² Մ > N. de Byzance Norayr... Tiflis (Russie)՝ այս մասը Մալխասեանցը չի տպագրել:

⁴³ Մաշտոցեան Մատենադարան, Նորայրի թողօն, Հ^{տր} 113 (նախկին Հ^{տր} թղթ. 235, վա. 24): «[Նամակ 4]» Պատմագիրք Հայոցի խնդրով Նորայրին Մալխասեանցի գրած նամակների կարգային համարն է: Առաջին ետե՛ր տե՛ս ստորեւ. վերջինը սկզբում են՛ք դրել՝ «Մշակ»ի հրատարակման պատկերը խախտած շի՛նեղու նպատակով: «Մշակ»ում տպագրուածը եւ նամակի բուն բնագիրը միմեանց գրեթէ նշգրիտ համապատասխան են. այսուհանդերձ, տպագրի չնչին տարբերութիւնը նշել են՛ք «Մ» պայմանանիշով:

⁴⁴ Մ > 17 դեկտ... Թիֆլիս:

⁴⁵ Մ 16ից] 26ից: Ամսաթիւը նամակի վերջում է, բերել են՛ք առաջ, 4րդ էջի վերը մեկե-նագրուած է. «N-ո 15. Prof. Stéfan Malkhassians,- 1903, Tiflis,- (Lettre quatrième)»:

⁴⁶ Մ թանգ

⁴⁷ Մ աշխատանքի համար

ուսուն եւ հինգ տարի տեւող աշխատանքի համար, ոչ մի վարձատրութիւն թանկ⁴⁸ չէ. այլ որովհետեւ այդպիսի գումար հայթայթել շենք կարող: Ամբողջ հրատարակութեան ծախսը, թէ՛ տպագրութեան եւ թէ՛ աշխատակիցների վարձատրութեան, ինչպէս գիտէք, հաշուած է մօտ 20,000 ռուբլի⁴⁹, կարող է առ առաւելն հասնել մինչեւ 25,000 ռուբլիի. ուրեմն միայն Ձեր աշխատակցութիւնը պէտք է կրկնապատիկ⁵⁰ մեծացնէ մեր նախահաշիւը, որպիսի գումար ձեռք բերել մենք յոյս չունենք, ուստի ստիպուած ենք զուրկ մնալ Ձեր խիստ ցանկալի աշխատակցութիւնից:

Շնորհակալ եմ, որ թոյլ էք տալիս հրատարակել Ձեր նամակը. ես նրանից կօգտուեմ Պատմագրքի ընդհանուր Առաջաբանի կամ Յիշատակարանի մէջ. թող նա մի կողմից բացատրէ, թէ ինչո՞ւ Ձեր աշխատակցութեամբ զարդարուած չէ Պատմագիրքը, եւ միւս կողմից մի յիշատակ մնայ ապագայ դարերի համար՝ հայ գրագէտի ներկայ վիճակի մասին, ինչպէս մնացել է հորենացու դառն գանգատը իր դրութեան մասին (Բ. դբ.):

Արդար է Ձեր դառնութիւնը, Մեծապատիւ Տէ՛ր, բայց եթէ թոյլ կը տաք՝ կնկատեմ⁵¹, որ տասնեակ տարիներով հաւաքուած եւ կազմուած այդ դառնութիւնը թափում էք հէնց այն անձերի վրայ, որոնք ամենից քիչ արժան էին նորան, իրանք էլ Ձեր նման մայրենի հին գրականութեան օգտին ու պատուին նուիրուելով եւ հանգանակութեան (ու մուրացկանութեան) միջոցով դրամ հաւաքելով՝ մի մեծ գործ գլուխ բերելու. թափում էք այն գործի վրայ, որ ամենից աւելի պէտք է արժանանար Ձեր սիրուն ու խնամարկութեան:

Բոլոր սրտից մաղթելով Ձեզ քաջառողջութիւն եւ յաջողութիւն՝ մնում եմ առ Ձեզ խորին յարգանքով Խ. Մ.» (ստորագրութիւն) Ստ. Մալխասեանց⁵²:

Սրանով վերջանում է թղթակցութիւնը իմ եւ Նորայր Բիւզանդացու մէջ՝ «Պատմագրքի» աշխատակցութեան նկատմամբ: Ես շարունակեցի նրան ուղարկել Դ. Փարպեցու մեր նոր հրատարակութիւնը թերթ-թերթ, մամուլից դուրս գալուց յետոյ, եւ նա բաց նամակով շնորհակալութիւն յայտնեց այս մասին:

Ձեմ կարծում, թէ որ եւ է մէկը կարողանայ մեղադրել ինձ կամ հրատարակիչ-ընկերներին, որ մենք անտես ենք արել Նորայր Բիւզանդացուն, ամեն

48 Մ թանգ

49 Մ ռուբլիի

50 Մ ~ կրկնապատիկ պէտք է

51 Մ կը նկատեմ

52 Մ (ստորագրութիւն)] Ստ. Մալխասեանց

միջոց չենք գործ դրել նրա աշխատակցութիւնը ձեռք բերելու «Պատմագրքի» համար, կամ կարողացել բայց չենք կամեցել կատարել նրա պահանջը: Միւս կողմից՝ ես հեռու եմ որ եւ է մտքից՝ մեղադրելու Նորայր Բիւզանդացուն այդ նամակի համար, որով, ըստ երեւոյթին, պայման է առաջարկում, որ հաւասար է մերժողական պատասխանի: Պէտք է մտնել նրա հոգեկան դրութեան մէջ. մի մարդ, որ քառասուն եւ հինգ տարի անձնատուր է եղել գիտական աշխատութեան, ճանաչում է իր աշխատութեան բոլոր արժէքը, բայց չէ գտնում խրախուսանք, որ ունի պարտականութիւն իր ընտանիքը պահելու իր աշխատանքով, բայց փոխարէնը ապրում է իր կնոջ աշխատանքով, որ հայոց հին գրականութիւնը մշակում է՝ մի օտարուհու կեանքով ու մահով, իսկ հայերից օժանդակութիւն չէ գտնում, որ ներկայումս, յուսաբեկ, սգաւոր, ծերացած, անօգնական, օտար երկնքի տակ, ճգնում է մենակ, կերակրուելով նոյն օտարուհու թողած համեստ միջոցներով, հայերից դարձեալ անտես թողուած «մոռացուած մը».

պէտք է զգալ այս բոլորը, եւ այն ժամանակ նրա հոգու խորքերից՝ գրեթէ բռնի կորզուած նամակը մի արդար եւ կծու յանդիմանութիւն, հորենեան մի նոր ողբ կը ներկայանայ մեզ, որի առաջ ամօթապարտ եւ գլխակոր պէտք է կանգնի ամբողջ հայ ժողովուրդը:

Բայց արդեօք այս արդար յանդիմանութեան հրատարակութիւնից եւ «Մոռացուած մը» յօդուածից յետոյ, կը գտնուի՞ թէկուզ մի «մտացի եւ բարեւիրտ մեծատուն», որ, չեմ ասում Նորայր Բիւզանդացու դրած պայմանը կատարէր, դա երազ է, այլ գոնէ որ եւ է նիւթական օժանդակութեամբ խրախուսէր, ոգի ներշնչէր վաստակաւոր եւ վաստակաբեկ ծերունի գիտնականին. հայրենիքից ուղարկուած որեւէ նիւթական գոհաբերութեամբ ասէր Նորայր Բիւզանդացուն. «Ո՛չ, դու մոռացուած չես»:

* * *

Իսկ այժմ, որպէս Մալխասեանցի այս յօդուածի լրացում-վաւերացում, Նորայրի թողօնում պահպանուած բնօրինակների հիման վրայ, նոյնութեամբ հրատարակում ենք Մալխասեանցի երկրորդ՝ «Մոռացուած թէ ոչ» յօդուածում յիշատակած Նորայրին ուղղուած նրա առաջին երեք նամակը՝ 1) 29 նոյեմբերի 1902 թ., 2) 4 յունուարի 1903 թ., 3) 17 նոյեմբերի 1903 թ.:

ՆԱՄԱԿ 1.⁵³

17/29 նոյեմբերի 1902, Թիֆլիս

Մեծապատիւ բարեկամ,
պ. Նորայր Բիւզանդացի,

Երկարամեայ լռութիւնից յետոյ՝ նախ ողջունում եմ Ձեզ:

Երեւի կարդացած կլինիք «Մշակի» 238, 241 եւ 242 համարներում յօդուածներս եւ ծանօթացած մտադրութեանս, որ է՝ կատարել մի լաւագոյն տպագրութիւն մեր նախնեաց պատմական մատենագրութեան, «Պատմագիրք Հայոց» ընդհանուր անուան տակ, նուիրուած Ս. Մեսրոպ-Մաշտոցի անուան, ի յիշատակ հայոց գրերի գիւտի 1500-ամեայ յրբելեանին:

Յօդուածիս մէջ յիշել էի, որ յոյսս դրել եմ մեր բանասէր եւ բարեսէր ազգայինների աջակցութեան վրայ. իմ յոյսս, ի միջիայլոց եւ գլխաւորաբար, Ձեր վրայ է եղել, մեծապատիւ բարեկամ, որովհետեւ համոզուած եմ, որ Ձեր աջակցութիւնը մի քանի աստիճանով պէտք է բարձրացնէ հրատարակութեան գիտական արժէքը, միջոց տալով սրբագրել այն բազմաթիւ աղաւաղութիւնները, որ սպրդած են բնագիրների⁵⁴ մէջ:

Արդ, այս նամակովս դիմում եմ Ձեզ, մեծապատիւ բարեկամ, խնդրելու Ձեր աշխատակցութիւնը «Հայոց Պատմագրքի» մէջ. Ձեր աշխատակցութիւնը, քանի որ Դուք ձեռագիրներից հեռու էք՝ պէտք է կայանայ գլխաւորապէս նրանում, որ այդ հրատարակութեան համար մատակարարէք Ձեր արդէն պատրաստ ուղղագրութիւնները՝ աղաւաղուած բնագիրները վերականգնելու համար:

Բնագիրները, տպագրուելուց առաջ, պէտք է համեմատուին էջմիածնի ձեռագրերի հետ, եւ այս բանը յաջողեցնելու համար այս շաբթուս մի քանի օրով գնալու եմ էջմիածին, որպէսզի այնտեղի կարող ոյժերից խնդրեմ աշխատակցութիւն: Բայց, ինչպէս գիտէք, միայն բաղդատութիւնները բաւական չեն վերականգնելու այնպիսի աղաւաղութիւններ, որոնք մտել են շատ հին ձեռագիրների մէջ եւ նրանցից անցել են նորագոյն (այժմ միայն ծանօթ) ձեռագիրներին: Ուրեմն յամենայն դէպս Ձեր ուղղագրութիւնները անհրաժեշտ կլինին գործի կատարելութեան համար:

Մանրամասնութիւնների մասին առանձին կպայմանաւոր[ու]ենք՝ եթէ

⁵³ Մաշտոցեան Մատենադարան, Նորայրի թղթօն, Հ^մ 110 (նախկին Հ^մ թղթ. 235, վաւ. 26):

⁵⁴ Նախ գրել է «նրանց», ապա սա առել է փակագծերի մէջ՝ «[նրանց]» եւ տողամիջին գրել՝ «բնագիրների»:

Դուք սկզբունքով համաձայնութիւն տաք իմ խնդրիս: Բայց եւ այնպէս պարտք եմ համարում յայտնել իմ գլխաւոր սկզբունքս՝ «տալ զկայսերն կայսեր», ոչ մի ուղղագրութիւն, որ կառնուի Ձեզանից՝ չի մնայ արանց յիշատակուելուն՝ թէ Դուք էք այն ընձեռել: Նոյն սկզբունքը գործ եմ դնելու, ի հարկէ, եւ ուրիշ բանասէրների վերաբերմամբ: Բացի սրանից՝ մտադիր եմ մի փոքր շափով նիւթական վարձատրութիւն առաջարկել աշխատակիցներին, որի քանակութիւնը դժբախտաբար չեմ կարող առայժմ որոշել:

Ձեր համաձայնութեան դէպքում, որին լիայոյս եմ, կխնդրէի՝ Ձեր կողմից յայտնել պայմաններ ամէն տեսակէտներով, նրանք նիւթ կլինին խորհրդածութեան, եւ յոյս ունիմ երկուստեք համաձայնութեամբ:

- Մի պարոն (Երուանդ Լալայեան) խնդրում է իմանալ, թէ ի՛նչ արժէ Ձեր ֆրանսերէն-հայերէն բառարանը:

Ընդունեցէ՛ք, մեծապատիւ բարեկամ, իմ խորին յարգանաց հաւաստիքը, որով մնում եմ առ Ձեզ միշտ՝

Խ. ծ. Ստ. Մալխասեանց

Հասցէս - Tiflis (Caucase) Seminaire Nersisseean⁵⁵:

ՆԱՄԱԿ 2.⁵⁶

23 դեկտ./4 յունվ. 1902-3. Թիֆլիս⁵⁷

Մեծապատիւ պարոն,
պ. Նորայր Բիւզանդացի

Սրանից մի ամիս եւ 5 օր առաջ Ձեզ մի նամակ ուղարկեցի, որի մէջ յայտնելով «Պատմագիրք Հայոց» հրատարակութեան միտքը՝ խնդրել էի Ձեր թանկագին աշխատակցութիւնը, յայտնել էի նաեւ, որ աշխատակիցներին որոշուած է տալ վարձատրութիւն, սակայն առայժմ անկարող եմ որոշել քանակութիւնը. ցանկութիւն էի յայտնել, որ Դուք Ձեր կողմից որոշէիք վարձատրութեան քանակը եւ ուրիշ պայմաններ՝ եթէ պատրաստ ունէիք: Խնդրել էի, որ յամենայն դէպս բարեհաճէիք յայտնել Ձեր որոշումը իմ խնդրի վերաբերմամբ, եւ

⁵⁵ Սրանից ցած՝ մեքենագրուած՝ «N-^o 12. Prof. Stefanos Malkhassians, - 1902, Tiflis, - (Lettre première)»:

⁵⁶ Նորայրի թղթին Հ^մ 111 (նախկին Հ^մ թղթ. 235, վաւ. 27):

⁵⁷ Այլ, գուցէ՛ Նորայրի ձեռնով, ասելի բաց գոյնի թամախով կրկնած-նշգրտած՝ «23 դեկտեմբեր 1902/5 յունուար 1903»:

եթէ սկզբունքով ընդունէիք յանձն առնել աշխատակցութիւն (Ձեր ուղղագրութիւններով պատմագիրների աղաւաղուած բնագիրներին), մանրամասնութիւնները կմշակէինք նամակագրութեան միջոցով եւ անշուշտ համաձայնութեան կգայինք:

Այս նամակիս մինչեւ այսօր պատասխան չստացայ: Ենթադրելով միակ կարելին, այն է, որ նամակս Ձեր ձեռքը չէ հասել*, գրում եմ նորից նամակ, այս անգամ՝ ապահովեալ:

Նամակիս հետ դնում եմ եւ մի տպագրուած Յայտագիր, որից կտեղեկանաք հրատարակութեան մանրամասնութիւնների հետ:

Խնդրում եմ նորից, որ բարեհաճիք երկտողով պատասխանել իմ խնդրին, որ նոյնպէս միւս երկու հրատարակիչ-ընկերներիս խնդրին է:

Ընդունեցէք խորին յարգանքս, որով միշտ մնում եմ առ Ձեզ՝

Ստ. Մալխասեանց

Հասցէս՝ Յայտագրի տակ⁵⁸:

ՆԱՄԱԿ 3.⁵⁹

4/17 նոյեմբերի 1903, Թիֆլիս

Մեծապատիւ տէր,
պ. նորայր Բիւզանդացի,

Սրանից մի տարի առաջ Ձեզ գրել էի նամակ եւ յայտնելով ձեռնարկածս «Պատմագիրք Հայոց» քննական հրատարակութեան մասին՝ խնդրել էի Ձեր թանկագին աշխատակցութիւնը: Ձեր աշխատակցութիւնը, ինչպէս գրել էի՝ պէտք է կայանար գլխաւորապէս նրանում, որ ինձ միջոց ընձեռէիք օգտուելու Ձեր բազմաթիւ ուղղագրութիւններից՝ պատմագիրների աղաւաղուած տեղերը վերականգնելու համար: Առաջարկել էի մի քանի էական պայմաններ, ի միջի այլոց՝ մի որոշ վարձատրութիւն տալ Ձեր գործ դրած աշխատանքի համար եւ խնդրել էի, որ բարեհաճիք Ձեր կարծիքները կամ պայմանները յայտնել իմ առաջարկութեան եւ ենթադրած պայմանների մասին:

Այս իմ նամակս մնաց Ձեր կողմից անպատասխան: Համարելով, որ նա-

* Կամ՝ որ Ձեր պատասխանը իմ ձեռքը չէ հասել [Ս. Մ.]:

⁵⁸ 4րդ էջի վերը մեքենագրուած է. «N-° 13. Prof. Stéfan Malkhassiants, - 1902, Tiflis,- (Lettre deuxième)»:

⁵⁹ Մաշտոցեան Մատենադարան, նորայրի թղթն, Հ^մ 112 (մախկին Հ^մ թղթ. 235, վաւ. 25):

մակա կարող է կորած եւ Ձեր ձեռքը չհասած լինել՝ նոյն տարուայ դեկտեմբերի 23-ին (հ. տ.) ապահովուած նամակ ուղարկեցի Ձեզ, խնդրելով պատասխանել առաջին նամակիս*։ Այս երկրորդ նամակիս հետ ուղարկել էի Ձեզ եւ մի օրինակ տպագրուած «Յայտագիր» Հայոց պատմագրքի հրատարակութեան մասին։

Այս երկրորդ նամակս էլ Ձեր կողմից մնաց անպատասխան։

Ձեմ կարող ենթադրել, թէ այս ապահովուած նամակս էլ Ձեր ձեռքը հասած չլինի (այլապէս՝ նա պէտք է յետ դարձուէր ինձ). ուստի ստիպուած եմ կասկածել, թէ Դուք գուցէ որեւէ պատճառ էք ունեցել ինձ չպատասխանելու։

Այս մի տարուայ ընթացքում ես շատ եւ շատ անգամ մտածել եմ, թէ ի՛նչ կարող է լինել Ձեր այդ լռութեան պատճառը, մի երկտողով պատասխան զլանալը՝ եւ չեմ կարողացել բացատրել։ Ես Ձեզ երբեք առիթ չեմ տուել ինձանից վիրաւորուելու, եւ ինքս, բացի խորին յարգանքից դէպի Ձեզ, որ միշտ յայտարարել եմ գրով եւ խօսքով՝ չեմ ունեցել այնպիսի մի խօսք ասած, մի գործ կատարած՝ որից իրաւունք ունենայիք նեղանալու։ Ի՞նչ է ուրեմն Ձեր լռութեան պատճառը, — այժմ էլ չգիտեմ։

Սակայն գործը կարելոր է, Պատմագիրքը, որի առաջին հատորի (Կորիւն, Ագաթանգեղոս, Փաւստոս, Եղիշէ եւ Խորենացի) ծախսը յոգացուած է՝ արդէն սկսել եմ տպագրել։ Շարուած է Ղ. Փարպեցին։ Ամէն անգամ, երբ կա՛մ բնագիրն եմ կազմում ձեռագրի եւ տպագիրների բաղդատութեան հիման վրայ, կա՛մ սրբագրութիւն եմ անում՝ չեմ կարողանում մոռանալ, որ Դուք, հայոց մատենագրութեան այնպիսի սիրահարդ, նախնեաց քննական հրատարակութեան ջերմ քարոզողդ, մեր հեղինակների ուսումնասիրութեան վրայ մի ամբողջ կեանք մաշողդ եւ հմտութիւնների մեծ համբար ունեցողդ՝ Դուք Ձեզ մեկուսացնում էք այդ համազգային գործին մասնակցելուց եւ նպաստելուց։

Մեր ձեռնարկած հրատարակութիւնը պատուաւոր գործ կլինի, եւ մենք՝ ձեռնարկողներս ու աշխատակիցներս, ամօթով չենք մնայ գիտութեան առաջ։ Այս ես լաւ գիտեմ։ Բայց համոզուած եմ նոյնպէս, որ Ձեր աշխատակցութիւնն այնու ամենայնիւ անգնահատելի կլինէր այս հրատարակութեան համար։ Միեւնոյն ժամանակ Ձեր անունն էլ, իբրեւ բազմաթիւ եւ բազմախոսուն աղաւաղութիւնների ուղղիչի՝ կանմահանար այս հրատարակութեան էջերում։

Այս պատճառով, անտես անելով անձնական պատուի պահանջը, երկու նամակս անպատասխան մնալուց յետոյ՝ ահա գրում եմ այս երրորդ, եւ վերջին,

* Որի բովանդակութիւնը մէջ էի բերել [Ս. Մ.]։

նամակս. գրում եմ, որպէսզի հանգիստ լինի խիղճս, որ արի՛ ինչ որ կարելի էր անել, եւ պատասխան ունենամ տալու հայ հասարակութեան ու բանասիրութեան: Գրում եմ, ամենախոնարհաբար խնդրելով Ձեզանից՝ մի երկտողով պատասխանել, թէ չէ՞ք ուզում մասնակցել Հայոց Պատմագրքի հրատարակութեան, որպէսզի ես միամիտ լինիմ, կամ, եթէ ուզում էք մասնակցել, ապա յայտնել Ձեր պայմանները, որոնց բաւարարութիւն տալը, որչափ ինձանից է կախուած՝ իմ ջերմ ցանկութիւնս կլինի:

Խնդրում եմ Ձեզանից մի պատասխան, ի՛նչպիսի եւ իցէ բովանդակութեամբ: Ընդունեցէ՛ք, Մեծապատիւ տէր, խորին յարգանացս հաւաստիքը, որով մնում եմ առ Ձեզ՝

Խ. Տ. Ստ. Մալխասեանց

Հասցէս - Tiflis (Caucase), Stépan Malkhassiantz, Séminaire Nersisseean
կամ դարձեալ իմ անունով Rédaction «Mschak»⁶⁰:

* * *

Եթէ Մալխասեանցի համար նամակագրութեան աւարտով խնդիրը փակուել է⁶¹, ապա Նորայրի մէջ սեւեռուած ցաւը շարունակ վերարթնացել եւ մորմոքել է:

Այսպէս՝ 1905 թ. օգոստոսի 13ին Վենետիկից Գիւտ քհն Աղանեանցին գրած նամակում Նորայրը գրել է. «Գիտէք որ Տ. Ստեփան Մալխասեանց փափագեցաւ իմ աշակցութեան Հայ պատմագրաց նոր հրատարակութեան համար: Խնդրեցի 25,000 ռուբլի: Արժանի է,- պատասխանեց Մալխասեանց,- բայց երազ է: Եթէ «արժանի» էր՝ կարծեմ պէտք չէր որ «Երազ» համարուէր»⁶²:

Ապա՝ 1912 թ. փետրուարի 1ին նոյն Աղանեանցին գրել է. «Ստեփանոս Մալխասեան ներկայացուցեր է Ղուկասեան Մրցանակի վարչութեան զիւր հրատարակած «Ազաթանգեղոս»ն, Տփղիս, 1909, եւ վարչութիւնդ կը փափագի լսել զիմ «գրաւոր եւ պատճառաբանեալ կարծիքն այդ երկի մասին»: Հանդէս ամսօրէի 1911 հոկտ.-նոյեմբերի եւ դեկտեմբերի թերթերէն տեղեկացած էք՝ որ

⁶⁰ Վերջին էջի վերը մեքենագրուած է՝ «N-^o 14. Prof. Stéfan Malkhassiantz,- 1903, Tiflis,- (Lettre troisième)»:

⁶¹ «Մեանով վերջանում է քրթակցութիւնը իմ եւ Նորայր Բիւզանդացու մէջ՝ «Պատմագրքի» աշխատակցութեան նկատմամբ» (տե՛ս վերը՝ «Մշակ»ի հրատարակած 4րդ նամակից անմիջապէս յետոյ):

⁶² Բ. Ս. Ղազարեան, «Նորայր Բիւզանդացու նամակներից՝ ուղղուած Գիւտ Բահանայ Աղանեանին», Բե՛շ, 1992/1 (76), էջ 155:

եւ «Յուշարձան»ին մէջ ունիմ «Քննութիւն Մալխասեան հրատարակութեանց Ագաթանգեղոսի եւ Ղ. Փարպեցւոյ», ընդարձակ յօդուած⁶³ մի՞ որմէ լիով կ'իմանաք զիմ դատաստանն: Բայց դուք եթէ վճիռ կ'ուզէք յինէն, իմ վճիռս այս է. Տուէ՛ք Ղուկասեան Մրցանակի ամբողջական գումարը Մալխասեանի եւ իւր երկու ընկերաց⁶⁴, որպէս զի հաւասարապէս բաժնեն իրենց մէջ: Ի նորատիպ «Ագաթանգեղոս»ին կայ մեծ աշխատութիւն, եւ այս մեծ աշխատութիւնս է միայն զոր Դուք պիտի վարձատրէք: Այն որ պահանջեց 25,000 ռուբլի «Պատմագիրք Հայոց» հաւաքման հրատարակութեան աշակցելու համար, քաջ իսկ ըմբռնած էր գործոյն սաստիկ ծանրութիւնը, եւ մեծապէս օգտակար ըլլալ կը յուսար իւր յիսնամեայ քննութեամբք եւ ուսումնասիրութեամբք: Ուշիմ մարդիկ թող կարդան զյօդուած «Յուշարձան»ին եւ վկայեն թէ յօդուածագրին դիտողութիւնքն իրաւացի՞ են թէ ոչ: Զլացուեցաւ 25,000 ռուբլին այնպիսի աշխատութեան համար՝ որ բովանդակ կեանք մը մաշեցուցած է, եւ նախամեծար ընտրուեցաւ, «աժանութիւն»ն: Աւանիկ «աժանութեան» պտուղներն, այնպիսի՛ Ագաթանգեղոս եւ այնպիսի՛ Ղազար Փարպեցի»⁶⁵:

Իսկ 1912 թ. ապրիլի 5ի նամակով, ի պատասխան Ղուկասեան մրցանակի յանձնաժողովի պնդման՝ թէ «զիմ «Ագաթանգեղոս»ի «քննադատութեան վերջնական եզրակացութիւնը՝ մի երկտող պաշտօնագրով» ծանուցանեմ իրեն» – հրաժարուել է՝ «գրելու կարողութիւն չունիմ այժմ». եւ խոստանում է «Յուշարձան»ի յօդուածի առանձնատիպեր ստանալուն պէս ուղարկել՝ «նոյն օրին 3 օրինակ, մի Ձեզ, մի Ղուկասեան Յանձնաժողովոյն, եւ մի առ Ստեփանոս Մալխասեան՝ զոր խնդրեմ բարեհաճիք յանձնել իրեն»:

Կրկին չի մոռացել ասելու՝ «Յիսուն տարիէ աւելի աշխատած եմ Հայ հին մատենագրութիւնը եւ մատենագիրները ուսումնասիրելու, աշխատած եմ ձրի, եւ ձրի աշխատութիւնս հալած մաշած է զիս: Վերջին ձրի աշխատութիւնս եղաւ անցեալ տարի «Յուշարձան»ին համար գրած ընդարձակ յօդուածս»⁶⁶:

Այս քաղուածքները ցոյց են տալիս, որ Մալխասեանցը սխալուում էր՝ մտածելով թէ աշխատակցութեան իր առաջարկին ի պատասխան Նորայրը

⁶³ Տե՛ս վերը, ծնթ. 5:

⁶⁴ Ռ. Ղազարեանը ծանօթագրել է. «Նկատի ունի հայագետներ Գ. Տէր-Մկրտչեանին եւ Ստ. Կանայեանցին»:

⁶⁵ Նոյն տեղում, էջ 156:

⁶⁶ Նոյն տեղում, էջ 157:

«պայման է առաջարկում, որ հաւասար է մերժողական պատասխանի»․ այսինքն՝ պայմանը կարծես համարում է մերժման պատրուակ: Իսկ Նորայրը համոզուած էր, որ Մալխասեանցն իր պայմանը շատ ուղիղ պէտք է հասկանար եւ հնարաւոր ու անհնար բոլոր միջոցները գործադրելով, ամբողջ ծրագրի նախահաշիւ 20.000ը գերազանցող՝ 25.000 ռուբլի վճարէր իրեն. «հաճեցէ՛ք հայթայթել ինձ 25,000 (քսան եւ հինգ հազար) ռուբլի, յղեցէ՛ք ինձ զգումարդ, եւ ես կաջակցեմ ձեզ բոլոր զօրութեամբս»:

Մտածում ենք, որ կար նաեւ աւելին՝ Նորայրի զուտ անձնական խանդի հանգամանքը. Մալխասեանցի «Պատմագիրք Հայոց» ծրագիրը գրեթէ այն էր, ինչ որպէս աւելի լայն ընդգրկումի երազային անելիք, «Հայ Մատենադարան» անուանելով եւ «Նախնիք» խորագրի ներքոյ, նա հրապարակել էր դեռեւս 1887 թուականին. «Ես ի շատ ամաց վառեալ էի մեծ փափագով նուիրելոյ զիմ բոլոր կեանքս գրչագրաց տպագրութեան, եւ մինչեւ իսկ առատասիրտ անձանց ոմանց 4-5 հազար ռուբլոյ նպաստիւ կը խորհէի միջամուխ լինել ի գործ: Իմ դիտաւորութիւնս էր Հինգերորդ դարէն մինչեւ ցՎեշտասաներորդն հրատարակել զամենայն հայերէն մատենագրութիւնս եւ թարգմանութիւնս Հնոց, Միջնոց եւ Նորոց՝ ժամանակագրական կարգաւ եւ վերստին տպագրելով զմիանգամ տպագրեալս: Մէն մի հատոր այս Հայ Մատենադարանին (Bibliotheca Armenica) ճոխացեալ պիտի ըլլար կենսագրական տեղեկութեամբք զհեղինակէն, պատմական, աշխարհագրական |Ա.7| եւ հնախօսական ծանօթութեամբք, լուսաբանութեամբք, քննադատական տեսութեամբք եւ ընտրութեամբ ընթերցուածոց, հաւաքմամբ բառից եւ յատկաբանութեանց հեղինակին կամ թարգմանչին, բաղդատութեամբք բնագրաց (յոյն, ասորի, արաբացի): Գործ ամենածանր, զորոյ զհիմունսն ես կը բաղձայի դնել, թողով ալլոց զիմ գրեան եւ զթղթեան եւ զգրամագլուխ՝ որպէս զի յետ իմոյ վախճանին նովին ոճով շարունակեն»⁶⁷:

Խօսքի շարունակութիւնն արդէն չափազանց աւաղական է. «Սակայն այսպիսի փափագ մի յարդիւնս ածելոյ համար հարկ էր, որ բաց ըլլային իմ առջեւ ամենայն թանգարանք, ուր հայերէն գրչագիրք կը պահուին: Տարիներով աշխատեցայ, որ իմ ճանապարհս մաքրուի խոշերէ եւ արգելքներէ, եւ ես հասնիմ ի ցանկալի նպատակն. աւա՛ղ, յոգնութենէ եւ վհատութենէ զատ ոչ ինչ

⁶⁷ Գեորգ Տէր-Վարդանեան, «Նորայր Բիւզանդացու «Քննասէր»-ը», ՊՔՀ, 2005/Բ., էջ 105:

շահեցայ: Բարեա՛ւ մնան ուրեմն գրչագիրք՝ ուր որ են, եւ ես զբաղիմ մի միայն տպագրեալ մատենագրութեամբք նախնեաց: Երբ Տէր յաջողէ, որ հաստա|Ա.Տ|տուիմ ի քաղաքի, ուր հայ տպարան կը գտնուի, պիտի հրատարակեմ զիմ մատենանն ՆԱԽՆԻՔ, յորում ամփոփած եմ զիմ բովանդակ հետազօտութիւնս, եւ կը յուսամ՝ թէ այն ամէն հրատարակեալ գործք մեր հին մատենագրաց, զորս կրցած եմ հաւաքել եւ ուսումնասիրել՝ շատ տեղ բոլորովին նոր կերպարանօք պիտի ներկայանան»⁶⁸:

* * *

Ժամանակը ցոյց տուեց, որ թէ՛ Մալխասեանցն իր ժամանակի համար հնարաւորից շատ մեծ խնդիր էր ստանձնել եւ թէ՛ Նորայրն էր առաւել մեծ եւ մի մարդու ուժերից շատ աւելի մեծ երազանք փայտայել: Այդ պատճառով էլ Մալխասեանցի «Պատմագիրք Հայոց» շարքով տպագրուեց ընդամէնը երեք գիրք⁶⁹, Նորայրից էլ մնաց մեր մատենագիրներին երկերի բառական սրբագրութիւններ պարունակող՝ «Նախնիք» խորագրով մի անաւարտ եւ թերի պահպանուած աշխատութիւն, որը նրա վախճանից ութ տասնամեակ անց հրատարակեց Մարտիրոս Մինասեանը, մնացել է նաեւ նոյնպիսի խնդիրներ արծարծող ստուար նամականի, որը եւս անպայման պէտք է հրապարակել:

Առաւել եւս՝ թէ՛ Մալխասեանցի ու Նորայրի եւ թէ՛ վերջինիս հրատարակիչ, աւելի մերձաւոր անցեալի բազմավաստակ բանասէր Մարտիրոս Մինասեանի գիտական գրական ժառանգութեան հատորաշարային հրատարակութիւններ իրագործելը մեզ համար օրախնդիր հարց է: Այս երախտաշատ մտաւորականների երկերի բազմահատորեակների հրատարակութիւնը պարտաւոր է անել Մաշտոցեան Մատենադարանը, որովհետեւ՝ ա. երեքն էլ զբաղուել են հիմնականում Մատենադարանի պահպանած նիւթի՝ միջնագարի մեր մատենագրութեան խնդիրներով, բ. երեքի արխիւներն էլ Մատենադարանում են (Մինասեանինը՝ նաեւ որոշակի պայմանագրային պարտաւորութիւններով):

⁶⁸ Նոյն տեղում, էջ 105-6 («|Ա.7|» եւ «|Ա.8|») Նորայրի Քննասէրի Ա. պրակի էջահամարներն են):

⁶⁹ Փարսեցի՝ 1904, Ագաթանգեղոս՝ 1909, Խորենացի՝ 1913:

GEVORG TER-VARDANYAN

STEPANOS MALKHASEANTS, THE SERIES ARMENIAN
HISTORIOGRAPHERS, AND NORAYR BIUZANDATSI

Key words: Martiros Minasyan, study of old Armenian texts, questions of publication of scholarly literature.

The author characterizes and assesses the work of Stepanos Malkhaseants, Norayr Biuzandatsi, and partly of Martiros Minasyan, demonstrating its importance in the development of Armenian philology. Furthermore, the necessity of a multivolume publication of their works is stressed. The article is supplemented by a new edition of two articles by S. Malkhaseants: “From Old Ages” and “Forgotten or Not?”, as well as by Malkhaseants’s four letters to Norayr Byuzandatsi. These are the most important documents related to the editorial principles of the series Armenian Historiographers. They are significant for scholars interested in textological questions.

ГЕВОРГ ТЕР-ВАРДАНЯН

СТЕПАНОС МАЛХАСЯНЦ, СЕРИЯ “АРМЯНСКИЕ
ИСТОРИОГРАФЫ” И НОРАЙР БЮЗАНДАЦИ

Ключевые слова: Мартирос Минасян, исследование древнеармянских текстов, вопросы издания научного наследия.

В статье в общих чертах охарактеризованы и оценены заслуги Степаноса Малхасянца, Норайра Бюзандаци и, частично, Мартироса Минасяна перед филологической наукой, обоснована важность издания многотомников научных трудов этих ученых, переизданы две статьи С. Малхасянца – “Из древних веков” и “Забыт или не забыт?”, а также четыре письма С. Малхасянца к Норайру Бюзандаци. Эта совокупность важнейших документов освещает формирование принципов издания серии “Историографы Армении.” Знакомство с ними очень важно для филологов, интересующихся армянской текстологией.

**«ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ՎԵՊԻ» ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ
ԲՆԱԳԻՐԸ ԵՎ ԱԶԳԵՑՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ**

Բանալի բառեր՝ Կեղծ-Կալիսթենես, հունարեն խմբագրություններ, հայերեն խմբագրություններ, ձեռագրեր, փոխառություններ, «ոճական հագուստ», Մովսես Խորենացի, Թովմա Արծրունի, Գրիգոր Մագիստրոս:

«Ալեքսանդրի վեպի» հին հայերեն թարգմանությունը, որ հայտնի է իբրև «Պատմութիւն Ալեքսանդրի Մակեդոնացւոյ» (կամ «Պատմութիւն ստոյն Կալիսթենէայ»), մեզ է հասել աշխարհի տարբեր վայրերում պահվող շուրջ 70 ձեռագրով, մեծ մասամբ՝ Ժէ-ԺԸ դարերի: Թարգմանվելով հավանաբար Ե դարի 80-ական թվականներին՝ հունարեն հնագույն չպահպանված բնօրինակից (որից սերել են այլ խմբագրություններ), այն տարբեր ժամանակներում ենթարկվել է զգալի փոփոխությունների, համառոտումների ու հավելումների:

Վաղ միջնադարյան թարգմանական գրականության մեջ (Աստվածաշունչ, աստվածաբանական և վարքագրական, իսկ ավելի ուշ՝ փիլիսոփայական և մեկնողական երկեր, եկեղեցու պատմություններ) կիսապատմական ու գեղարվեստական «Ալեքսանդրի պատմությունը» բացառիկ էր իր աշխարհիկ բովանդակությամբ: Այն թարգմանելու նպատակը թերևս ճակատագրական պահին պարսից նվաճողական քաղաքականության դեմ պայքարի ելած հայերին Ալեքսանդր Մեծի երևակայական կերպարով ոգևորելն էր: Հետագայում այն սիրելի գիրք է դարձել, բանաստեղծների ոգեշնչել կաֆաներ գրելու և ներմուծելու դրանք հենց բնագրի մեջ, ապա, գոյատևելով նաև բանավոր ավանդության մեջ, հանգեցրել է մի տարբերակի առաջացմանը, որն էպիկական տարրերով աչքի ընկնող ձևափոխված պատում է:

1846 թ. հունարեն բնագրի իր հրատարակության մեջ Մյուլլերը¹ եղած խմբագրությունները բաժանել է երեք խմբի. Ա կամ Ալֆա՝ մեզ հասած հնագույն խմբագրությունը, որի հիմնական վկայությունը Փրզ. 1711 ձեռագիրն է (ԺԱ դար), Յ կամ Բետա, որին պատկանում է պահպանված ձեռագրերի մեծամասնությունը, իսկ գլխավոր վկայությունը, ըստ Մյուլլերի, Փրզ. 1685 ձեռագիրն է (1469 թ.), և Շ կամ Գամմա, որի հիմնական վկայությունն է Փարիզի Ազգային գրադարանի Supplement 113 (1567 թ.) կոչվող բնագիրը:

Մյուլլերի հրատարակած հունարեն բնագրի հիման վրա 1892 թ. Վիեննայի Մխիթարյան հայր Հակոբոս Տաշյանը լույս է ընծայել «Ալեքսանդրի պատմության» հայերեն թարգմանության մանրակրկիտ մի ուսումնասիրություն: Նա շեշտել է այն փաստը, որ, չնայած հայերեն հնագույն խմբագրությունը հիմնականում մոտ է պահպանված հնագույն հունարեն (Մյուլլերի A) խմբագրությանը, սակայն ոչ միշտ է համապատասխանում դրան և սերտ զուգահեռներ ունի ավելի ուշ՝ B, և, պակաս չափով՝ C խմբագրության հետ, որը B խմբագրության վերամշակված ու ընդմիջարկություններով լրացված մի տարբերակ է: Ավելին՝ նա նկատել է, որ հայերեն բնագիրը նմանություններ ունի երկի՝ Գ դարի կեսին Հուլիոս Վալերիոսի կատարած լատիներեն, ինչպես նաև ասորերեն թարգմանությունների հետ (այդ բոլորն այսպես կոչված Ալեքսանդրյան խմբի բնագրեր են, որ ծագել են հունարեն հնագույն կորած սկզբնագրից²): Տաշյանը մատնացույց է արել հայերեն հատվածներ՝ անշուշտ սկզբնաղբյուրից սերող, որոնք պարունակում են հունարեն A խմբագրությունից բացակայող և մասամբ լատիներեն թարգմանությամբ հաստատվող տեղեկություններ: Նա նոր օրինակներով հաստատել է արդեն առկա այն ճիշտ կարծիքը, որ հայերեն թարգմանությունն արվել է կորսված հունարեն սկզբնագրից և, հետևաբար, կարևոր է՝ հունարենը վերանայելու և վերականգնելու համար:

1896 թ., Տաշյանի աշխատության տպագրությունից չորս տարի անց, Ռաբեն³ հրատարակել է հայերեն բնագրի իր հակադարձ թարգմանությունը հունարենի, որը հետագայում օգտագործել է Քրոլլը՝ հունարեն A խմբագրու-

¹ *Pseudo-Callisthenis historiam fabulosam ex tribus codicibus nunc primum edidit, Itinerarium Alexandri et indices adiecit Carolus Müller*, Paris 1846.

² **Յ. Տաշեան**, Ուսումնասիրութիւնք Ստոյն-Կալիսթենեայ Վարուց Ալեքսանդրի, Վիեննա, 1892, էջ 7-19, 212-270:

³ **R. Raabe** (tr.), *Ιστορία Αλεξάνδρου: Die armenische Übersetzung der sagenhaften Alexanderbiographie (P.-C.) auf ihre mutmassliche Grundlage zurückgeführt*, Leipzig 1896.

Թյունը պատրաստելիս (տպագրվել է 1926 թ.)⁴: Ինչպես Տաշյանի ուսումնասիրություններից, այնպես էլ Ռաաբեի հետ-թարգմանության հիմքում հայերեն «Ալեքսանդրի վեպի» առաջին՝ Ռափայել Թրեանցի պատրաստած 1842 թ. հրատարակությունն էր⁵, որում իբրև հիմնական բնագիր վերարտադրված է երկի երկու հնագույն ձեռագրերից մեկը՝ Վնտկ. 424 (ԺԴ դ.)⁶: Այդ խիստ արժեքավոր ձեռագրի բնագիրն առաջին անգամ ներկայացնելով՝ Թրյանցը նաև առաջարկել է որոշ տարբերություններ, սակայն չի նշել, թե որ ձեռագրերից են դրանք:

Իր նոր հոգվածում Ջուստո Տրահինան տեղեկացնում է, որ Ռիչարդ Սթոունմենը և Տրիստանո Գարջուլոն պատրաստել են երկի հունարեն բնագրի ու լատիներեն թարգմանության նոր հրատարակություն և լույս են ընծայել եռահատորյակի առաջին երկու գիրքը⁷ (երրորդն էլ հրատարակության ընթացքում է): Տրահինան միաժամանակ արձանագրում է, որ շնայած այդ նոր քննական բնագիրն օգտակար է երկի ուսումնասիրության համար, սակայն սույն հրատարակության մեջ անհարկի թերագնահատված է հին հայերեն թարգմանության նշանակությունը: Ըստ նրա՝ հայերեն տարբերակը պետք է քննել «նույն մակարդակում, ինչ հունարեն խմբագրությունները», և այն իր կարևորությունը չի գիշում Հուլիոս Վալերիուսի լատիներեն թարգմանությանը⁸:

2003 թ. որակյալ նմանահանությունը տպագրվել է Վնտկ. 424 ձեռագիրը՝ իր բազմաթիվ գեղեցիկ նկարազարդումներով (ընդգրկված են նաև նկարներ այլ ձեռագրերից): Գիրքը հրատարակության է պատրաստել Ջուստո Տրահինան՝ Կ. Ֆրանկոյի, Տ. Գուլումջյանի և Կ. Վերոնեզե Արսլանի աշխատակցությամբ: Այն ընդգրկում է նաև երկի՝ Տրահինայի իտալերեն թարգմանու-

⁴ W. Kroll (ed.), *Historia Alexandri Magni* (Pseudo-Callisthenes), vol. 1, Recensio vetusta, Berlin, 1926 (reprint 1958).

⁵ Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացու, Վենետիկ, 1842:

⁶ Տաշյանը ձեռքին ուներ նաև այլ ձեռագրեր (մասնավորապես՝ Վիեննայի Մխիթարյանների մոտ պահվող): Վենետիկի ձեռագիրը երկի՝ կաֆաներ ու նկարազարդումներ պարունակող հինագույն օրինակն է. հմմտ. Հ. Սիմոնյան, *Հայ միջնադարյան կաֆաներ*, Երևան, 1975, էջ 77:

⁷ R. Stoneman, T. Gargiulo (eds.), *Il Romanzo di Alessandro: Testo greco e latino a fronte*, I-II, Milano, 2007, 2012.

⁸ G. Traina, “Some Observations on the Armenian Pseudo-Callisthenes”, *Greek Texts and Armenian Traditions, An Interdisciplinary Approach*, ed. by Francesca Gazzano, Lara Pagani, and Giusto Traina, Berlin–Boston, 2016, pp. 23-30.

թյունը⁹: Հայերեն բնագրի այս տարբերակից է արվել նաև Ուոհոջյանի անգլերեն թարգմանությունը, որ տպվել է 1969 թ.¹⁰:

1913 թ. Փֆիստերը հրատարակել էր երկի լատիներեն մեկ այլ՝ Նեապոլի ավագ քահանա Լեոնի ժ դարի թարգմանությունը, որտեղ նշում էր, թե «Ալեքսանդրի պատմության» այս խմբագրությունը ևս պատկանում է նույն խմբին, ինչ որ հայերեն ու ասորերեն, ինչպես նաև Հուլիոս Վալերիուսի լատիներեն թարգմանությունները¹¹: Սակայն հայերեն անգլերեն թարգմանած Ուոհոջյանը մի քանի օրինակով ցույց է տվել, որ հայերեն բնագիրը շատ ավելի ամբողջական և կապակցված շարադրանք է, քան Լեոյի լատիներենը (այն թողնում է համառոտ մի խմբագրության տպավորություն): Ուոհոջյանը ենթադրում է, որ կա՛մ Լեոյի լատիներենի հունարեն սկզբնագիրն էր մի համառոտ տարբերակ, կա՛մ էլ թարգմանիչն ինքն էր այն կրճատել¹²:

«Ալեքսանդրի պատմությունն» այնքան հեղինակավոր գործ է եղել միջնադարյան Հայաստանում, որ անգամ վերագրվել է Արիստոտելին (նաև եզովպոսին): Վնտկ. 424 ձեռագրում և ավելի ուշ ընդօրինակություններում բնագրի առաջին մեծ հատվածից անմիջապես հետո կարդում ենք. «Կատարեցան ծնունդք եւ գործք Աղեքսանդրի Մակեդոնացույ, գրեալ յիմաստնոյն Արիստոտելէ»¹³: Մյուսները նման մի բան է մատնացույց արել ժԲ դարի հեղինակ Եվստաթիոս Թեսաղոնիկեցու՝ Դիոնիսիոս Պերիեգետեսի մեկնության մեջ. Ἀριστοτέλης ἐν πέμτῳ Περὶ Ἀλεξάνδρου («Արիստոտելն Ալեքսանդրի մասին հինգերորդ [գրքում]»), սակայն դա գրչական սխալ է համարվում (ընդօրինակողը շփոթությունամբ «Արրիանոսի» փոխարեն գրել է «Արիստոտել») ¹⁴:

Չնայած առաջին հայացքից թվում է, թե Վնտկ. 424 ձեռագրի բնագիրը բավական փոփոխվել է խմբագրի՝ ժԳ-ԺԴ դդ. հոգևորական գործիչ և բանաստեղծ Խաչատուր Կեչառեցու ձեռքով (նա բնագրի տարբեր հատվածների

⁹ G. Traina (ed.), *La Storia di Alessandro il Macedone: codice armeno miniato del XIV secolo* (Venezia, San Lazzaro, 424), con la collaborazione di C. Franco, D. Kouymjian & C. Veronese Arslan, Padua, 2003.

¹⁰ A. M. Wolohojian (tr.), *The Romance of Alexander the Great by Pseudo-Callisthenes*, New York and London, 1969.

¹¹ F. Pfister (ed.), *Der Alexanderroman des Archipresbyters Leo*, Heidelberg, 1913, pp. 40-41.

¹² A. M. Wolohojian, *The Romance of Alexander the Great*, pp. 3-5.

¹³ Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացույ, էջ 73:

¹⁴ Մյուսներն ուսումնասիրել է այն հարցը, թե ինչ հեղինակների է երկը վերագրվել. տե՛ս Pseudo-Callisthenis historiam fabulosam, pp. 86-93:

միջև ներմուծել է իր գրած բազմաթիվ միահանգ կաֆաներ, իսկ վերջում ավելացրել է հինգ բարառնություն. տե՛ս ստորև), բայց այն համարվում է հունարեն սկզբնագրին ամենամոտ հայերեն խմբագրությունը: Այս տեսակետն անհամոզիչ կերպով վիճարկել է Հ. Միմոնյանը՝ Ալեքսանդր Մակեդոնացու պատմության իր քննական, ավելի ճիշտ՝ «գիպլոմատիկ» հրատարակության մեջ¹⁵: Միմոնյանն ուսումնասիրել է ԺԳ դարում ընդօրինակված ՄՄ 10151 ձեռագիրը և, քանի որ այն հայերեն «Ալեքսանդրի վեպը» պարունակող ամենահին գրչագիրն է՝ զերծ ուշ հեղինակների բանաստեղծություններից, եզրակացրել, թե դա բնագրի նախնական տարբերակն է: Նա իր գրքում զետեղել է երեք խմբագրություն՝ Ա, Բ և Գ. Ա-ն հաշատուր Կեչառեցու խմբագրությունն է՝ հետագայում լրացված նաև այլ խմբագիրների ձեռքով, Բ-ն՝ ԺԳ դարի ձեռագրի «նախնական» խմբագրությունն է, իսկ Գ-ն՝ երկի ժողովրդական պատումը, որ մեզ է հասել բանահյուսական ճանապարհով: Իբրև ուշ ու վերջնական գիտվող Ա խմբագրության հիմնական ձեռագիր Միմոնյանն օգտագործել է ՄՄ 5472-ը (ԺԷ դարի կես), որ ընդհանուր առմամբ համապատասխանում է Վնտկ. 424-ին, սակայն պարունակում է ևս երկու բանաստեղծի՝ Զաքարիա Գնունեցու և Գրիգորիս Աղթամարցու լրացուցիչ ոտանավորներ: Տողատակում Միմոնյանը բերել է Վնտկ. 424 և երեք այլ ձեռագրի տարընթերցումները (Վնտկ. Քյուրտյան 2 [1526 թ.], Եղմ. 473 [1536 թ.] և ՄՄ 10448 [ԺԶ-ԺԷ դդ.]): Բ-ի համար, որ իր կարծիքով «նախնական» խմբագրությունն է, նա օգտագործել է ԺԳ դարի միակ ձեռագիրը՝ ՄՄ 10151, իսկ Գ-ին՝ «ժողովրդականացված պատումի» համար՝ ՄՄ7993 (1672 թ.) և ՄՄ 6488 (ԺԹ դ.) ձեռագրերը:

Միմոնյանի առաջաբանում թվարկված են «Ալեքսանդրի պատմությունը», դրանից մասեր կամ դրան վերաբերող կաֆաներ պարունակող ձեռագրերը (էջ 34-65). 35-ը պահվում են Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում, 16-ը՝ Վենետիկում, 7-ը՝ Երուսաղեմում, 4-ը՝ Վիեննայում, 3-ը՝ Ս. Պետերբուրգում, 2-ը՝ Բեռլինի Ազգային գրադարանում. ընդամենը՝ 67: Փրգ. 291-ը (1646 թ., 1ա-187բ) այդ ցանկից բացակայում է:

Յուրաքանչյուր ձեռագրի մասին նախ ասվում է, թե որ խմբագրությանն

¹⁵ Պատմութիւն Ալեքսանդրի Մակեդոնացոյ. հայկական խմբագրութիւններ, աշխատասիրությամբ Հ. Միմոնյանի, Երևան, 1989 (այսուհետև Հայկական խմբագրութիւններ):

է այն պատկանում: Բացի իր հրատարակած «նախնական», «հետագա» խմբագրություններից և «բանավոր պատումից», Միմոնյանն առանձնացրել է մի «համառոտ խմբագրություն» ու «միջանկյալ խմբագրություն», նաև երեմիա Քյոմուրճյանի հայատառ թուրքերեն թարգմանությունը (Վեն. 473-ը երեմիայի ինքնագիրն է, կան և ուրիշ ձեռագրեր): «Միջանկյալ» խմբագրությունը «նախնական» ու «հետագա» խմբագրությունների միջև գտնվող տարբերակ է: Միմոնյանի հավաստմամբ՝ այն աչքի է ընկնում բնագրային ամբողջականությամբ, պարունակում հատվածներ, որոնք բացակայում են մնացած բոլոր օրինակներից, «այլև ավելի լավ են պահպանվել, քան հունալատինական հնագույն տեքստերում, որտեղ այդ հատվածները աղճատ և թերի են»: Նա եզրակացնում է, որ ինչպես «նախնական», այնպես էլ «միջանկյալ» խմբագրությունները կարող են նպաստ բերել հունարեն «նախաբնագրի» վերականգնմանը¹⁶: Խնդիրը վերստին ուսումնասիրելու անհրաժեշտություն կա, որով էլ մենք զբաղված ենք այժմ:

Համառոտի մասին ասված է, որ այն մեխանիկորեն համառոտված է «հետագա» խմբագրությունից (էջ 19-20)՝ ի հաշիվ նկարագրությունների, նամակների, ուղերձների և այլն: Արդյունքում բազմաթիվ կաֆաներ դարձել են սյուժեի կրողները: Խմբագրությունը պարունակում է նաև իտալացի Կեչառեցու բարաոնությունները:

Ավելացնենք, որ համառոտման հետևանքով բովանդակությունը երբեմն թերի է դարձել: Այս բնագիրը պահպանվել է բավական թվով (15) ձեռագրերով, ուստի հետաքրքիր է այն առումով, թե ուրիշ ինչ տարբերակով է «Ալեքսանդրի վեպը» շրջանառվել Հայաստանում: Ձեռագրերը հետևյալն են. ՄՄ 1449 (1656 թ., 269ա-336ա), ՄՄ 1781 (1765 թ., 7ա-62ա), ՄՄ 1782 (1652 թ., 2ա-61ա), ՄՄ 3387 (1635 թ., ամբողջ ձեռագիրը՝ 6ա-176ա), ՄՄ 3981 (ԺԸ դար, ամբողջ ձեռագիրը՝ 1ա-61ա), ՄՄ 7031 (1709 թ., 4ա-85բ), ՄՄ 8003 (ԺԹ դար, 60ա-170ա), Վնտկ. 893 (1665 թ., ամբողջ ձեռագիրը՝ 1-251), Վնտկ. 1107 (ամբողջ ձեռագիրը՝ 1ա-159բ), Վնտկ. 1489 (1673 թ., ամբողջ ձեռագիրը՝ 1ա-125բ), Վնտկ. 1905 (ամբողջ ձեռագիրը՝ 1ա-45ա), Եղմ. 1080 (ԺԶ դար,

¹⁶ «Առաջաբան», էջ 16: Հ. Միմոնյանը նշում է այդ խմբագրությունը պարունակող հետևյալ ձեռագրերը. ՄՄ 723, 1734 թ., հատված՝ 55բ-56ա, ՄՄ 10448, ԺԶ-ԺԷ դդ., 5ա-230բ և Ս. Պետերբուրգի Արևելյան ձեռագրերի ինստիտուտ A-76, 5ա-234բ:

ամբողջ ձեռագիրը՝ 1ա-57ա), Վիեն. 370 (1658 թ., 1ա-112ա), ՍՊԲ ԱԳ *Арм. Н.С.* 38 (1653թ., ամբողջ ձեռագիրը՝ 1ա-154բ), Բուլ. 805 (1535 թ., 1ա-102բ)¹⁷: Մենք այս բնագիրը պատրաստում ենք հրատարակության:

Թվարկված ձեռագրերի մեջ առանձնանում է նկարազարդ Բուլ. 805-ը, որի գրիչը, ծաղկողը և ստացողը հայտնի բժիշկ Հովասափ Սեբաստացին է¹⁸: Ի տարբերություն հիմնական բնագրի սև թանաքի՝ կաֆաները գրված են կարմիր ու կանաչ թանաքներով¹⁹: Հավանաբար տարբեր գույներն օգտագործվել են՝ կաֆաների հեղինակներին տարբերակելու նպատակով: Կաֆաների մեծ մասը (երբեմն՝ տարրնթերցումներով) առկա է Միմոնյանի Ա խմբագրության մեջ: Բայց կան հատ ու կենտ՝ այդ խմբագրությունից բացակայող կաֆաներ: Օրինակ (52 բ)

Է չարիս, ես քեզ ոնց ատամ,
 Երբ չունիս զոք ոչ մատուտր,
 Ոչ դալ ՚ի ոչ երդում ոնիս,
 Ջի քո սիրտն է խիստ նենգատր:
 Ջով որ կամենաս այսատր,
 Կու դնես շատոց թագատր,
 Եւ վաղն ձգես յաչիչ,
 Հատասար մոխրոյ և մոյոր:

Այս կաֆան, որոշ տարբերություններով, հատված է Ֆրիկի հայտնի բանաստեղծությունից²⁰:

Բուլ. 805-ի մանրանկարները, որ աչքի են ընկնում պարզ ոճով, բազմաթիվ են. դրանք զարդարում են բնագիրը պարունակող 204 էջից գրեթե

¹⁷ Ձեռագիրն առկա է անցանց՝ https://digital.staatsbibliothek-berlin.de/werkansicht?PPN=PPN682400300&PHYSID=PHYS_0111&DMDID=DMDLO0003&view=overview-toc

¹⁸ Նրա մասին տե՛ս Գ. Յովսեփեան, «Յովասափ Սեբաստացի», *Արարատ*, 1918, ապրիլ-դեկտեմբեր, էջ 226-280:

¹⁹ Խաչատուր Կեչառեցու կաֆաներն ի սկզբանե գրված էին կարմիր թանաքով: Դրանցից տարբերակելու նպատակով Գրիգորիս Աղքամարցին իր կաֆաները գրել էր կանաչ թանաքով. Հմմտ. *Edda Vardanyan*, “La portée politique de l’illustration des manuscrits du Roman d’Alexandre arménien,” *Alexandre le Grand à la lumière des manuscrits et des premiers imprimés en Europe* (XII^e-XVI^e siècle), sous la direction de *Catherine Gaullier-Bougassas*, Brepols, 2014 (pp.223-250), pp. 227, 235:

²⁰ Ֆրիկ, *Դիւան*, աշխատասիրութեամբ *Տիրայր արքեպիսկոպոսի*, Նիւ եոբֆ, 1952, էջ 373-374 (Ի էջ.24-36):

կեսը՝ 81 էջ²¹: Հովասափը նկարների մեծ մասն օժտել է դրանց բովանդակությունը լուսաբանող կարճ մակագրություններով. օրինակ՝ «Աղեկսանտր գիրկս արկանէ Դարեհի» (52ա), «Պովրոս գրէ առ Աղեկսանտր» (63ա): Երբեմն պարզապես նշված է պատկերված անձանց ով լինելը, օրինակ՝ պատկերված են Ալեքսանդրի ծնողները, և համապատասխանաբար գրված է՝ «Փիլիպոս է», «և կինն Ոլոմպիայ է» (7ա), իսկ Ալեքսանդրի թունավորման գրվագում՝ «Աղեկսանդր է» և «դեղ տըռողն է» (6բ):

Բնագիրը ոչ միայն համառոտված է, այլև, Սիմոնյանի Ա խմբագրության համեմատ, ավելի միջինհայերենյան նկարագիր ունի: Բերենք մի քանի օրինակ՝ «յաւանակ» (էջ 262) բառի փոխարեն կարդում ենք «քուռակ» (89ա): Կան նկարների այսպիսի մակագրություններ. «չոպանն է» (4ա), «տլըսմով կուռք է արած» (29բ, «տլըսմ/տլիսմ») արաբերենից փոխառված բառ է, որ նշանակում է «դյուլթություն»), «թագաւորն շնորհքկալ լինայ» (35բ) և այլն: Քերականական ձևերից՝ «թողունք», «չարախօսեց»: Աղավաղված անուններ. «առ Խսիական գոգովն» (էջ 251 – *περὶ τὸν Ἰσσιακὸν κόλπον, Alex. B 2.23.5*) դարձել է «առ Սինէական գոգովն» (56ա): Բայց մեկ այլ դեպքում համառոտի «Եմէդեղոս» (47բ) ընթերցումն ավելի մոտ է հունարենի *Εὐμῆλος (Alex. A 2.14.1)* անվանը, քան ընդարձակի «Մեդեդէոսը» (էջ 212):

«Ալեքսանդրի պատմության» առաջին երկու խմբագրության մասին Սիմոնյանի կարծիքը հետագայում հերքվել է: Ջուստո Տրահինան²² զուգահեռ օրինակներով և հունարեն սկզբնագրի հետ համեմատությամբ հստակորեն ցույց է տվել, որ ԺԳ դարի ձեռագրի բնագիրը, չնայած չի պարունակում հետագա բանաստեղծություններ, իրականում փոփոխված ու համառոտված մի տարբերակ է Վնտկ. 424 և նույն խմբի այլ ձեռագրերով պահպանված ավելի հին բնագրի, և որ Կեչառեցու խմբագրությունն այս կամ այն չափով արտացոլում է Ե դարի վերջի հայերեն թարգմանությունը:

Սիմոնյանի տեսակետը մերժել է նաև Փիթեր Քաուլին՝ առաջարկելով հայերեն թարգմանությունը բաժանել ոչ թե երեք, այլ չորս խմբագրության ու

²¹ Մեկ այլ ձեռագիր՝ ՄՄ 3387 (1635), «գրեթե ամեն էջի վրա» ունի մակագրություններով մանրանկարներ. տե՛ս Հայկական խմբագրություններ, էջ 38: Սիմոնյանի նկարագրած ձեռագրերի քվում մանրանկարներ ունեն տասը:

²² G. Traina, “Problemi testuali dello Pseudo-Callistene armeno,” in *La diffusione dell’eredità classica nell’età tardoantica e medievale: forme e modi di trasmissione*, a cura di Alfredo Valvo, Turin, 1997, pp. 233-240.

զարգացման փուլի: Նա ավելացրել է շորրորդ՝ դեռևս չհրատարակված մի նախնական խմբագրություն, որից սերում է Կեչառեցու բնագիրը, որի ենթագրերի վաղ (ԺԳ դարին նախորդող) վկայությունները կորսված են և որն այժմ փոփոխված տեսքով առկա է ուշ՝ ԺԶ–ԺԸ դարերի ձեռագրերում (Քաուլին չի նշում դրանց համարները)²³: Սիմոնյանի առաջաբանի ուշադիր ընթերցումը հստակություն է մտցնում այդ հարցում: Նա նշում է մի շարք ձեռագրեր (ՄՄ 1783, ՄՄ 3182, ՄՄ 5627, ՄՄ 6485, ՄՄ 9631, Վնտկ. 592, Վնտկ. 1390, Լենինգրադի Արևելագիտության ինստիտուտ²⁴ 157), որոնք բնորոշում է որպես «նախնական խմբագրությանը» պատկանող, ավելացնելով, թե դրանք սերում են ՄՄ 10151-ի լրացված տարբերակից²⁵: Այդ բնագրի հիմնական մասը (11ա-98բ) ԺԳ դարի ձեռագիր է, որը սկզբից ու վերջից թերի է եղել: 1606 թ. բացակայող մասերը (2ա-10բ և 99ա-124ա) լրացրել է Անտոն աբեղան²⁶: Սա է Քաուլին անվանել «դեռևս չհրատարակված մի նախնական խմբագրություն», որ փոփոխված տեսքով առկա է ուշ՝ ԺԶ–ԺԸ դարերի ձեռագրերում (ավելացնենք նաև ԺԹ դարի ՄՄ 1783 ու Վնտկ. 1390 ձեռագրերը):

Հիշյալ կարծիքի կողմնակից են նաև Գ. Ուլուհոջյանը և Ս. Մանչինի Լոմբարդին, որոնք համատեղ մի հոդվածում ցույց են տվել, թե հայերեն Բ խմբագրությունը, որ Սիմոնյանը նախնական է համարել, իրականում Ժ-ԺԱ-րդ դարերի վերամշակում է, իսկ Խաչատուր Կեչառեցու կաֆաներով ուղեկցվող «Ա» խմբագրության բուն բնագիրը շատ ավելի մոտ է հունարեն սկզբնագրին (հատկապես Բ խմբագրությանը)²⁷:

Ուսումնասիրությունը նաև պարզել է (Ալեքսանդրիայի նկարագրության

²³ P. Cowe, “Aspects of the Translation and Redaction Process of the Alexander Romance in Armenian,” in *Proceedings of the Fifth International Conference on Armenian Linguistics* (McGill University, Montreal, Quebec, Canada, May 1-5, 1995), ed. Dora Sakayan, Delmar, New York, 1996, pp. 245-260 (246-247).

²⁴ Այժմ՝ Ս. Պետերբուրգի Արևելյան ձեռագրերի ինստիտուտ:

²⁵ Հայկական խմբագրություններ, էջ 36 (№ 8), 37 (№ 10), 40 (№ 16), 42 (№ 19), 49 (№ 32), 55 (№ 40), 56 (№ 44), 63 (№ 64): ՄՄ 5627-ի և Լենինգրադի Արև. ինս. 157-ի բնագիրն, ըստ Սիմոնյանի, առագաված է ՄՄ 10151-ից:

²⁶ Հայկական խմբագրություններ, էջ 49 (№ 33):

²⁷ S. Mancini Lombardi, G. Uluhogian, “Due redazioni per il Romanzo di Alessandro armeno: tessere di un mosaico perduto?”, *La diffusione dell’eredità classica nell’età tardoantica e medievale. Il “Romanzo di Alessandro” e altri scritti, Atti del Seminario internazionale di studio* (Roma-Napoli, 25-27 settembre 1992), a cura di Rosa Bianca Finazzi e Alfredo Valvo, Edizioni dell’Orso, 1992, pp. 157-174.

[Գ 62] օրինակով), որ Մովսես Խորենացու բնագիրն ավելի մոտ է Սիմոնյանի հրատարակած Ա (իր կարծիքով՝ հետագա) խմբագրությունը, քան Բ-ին («նախնականին»), ավելի ճիշտ՝ Պատմահոր ձեռքին եղել է Ա-ին մոտ մի նախնական կամ դրանից սերող չպահպանված խմբագրություն²⁸:

Բնագրագիտական այս հակիրճ տեղեկություններից հետո մեր մյուս նպատակն է՝ ամփոփ ձևով վերհիշել, թե ինչ ազդեցություն է գործել «Ալեքսանդրի վեպը» հայ պատմագրության և առհասարակ գրականության վրա՝ ներկայացնելով մի շարք զուգահեռներ: Դրանք հիմնականում հայտնի են վաղուց ի վեր²⁹:

Նախ անդրադառնանք Մովսես Խորենացուն³⁰, որի գրքում կան բազմաթիվ բառացի փոխառություններ Կեղծ-Կալիսթենեսից: Քանի որ, ըստ ավանդական տեսակետի, «Հայոց պատմությունը» նա գրել է 480-ականների սկզբին, երբ, ինչպես ենթադրվում է, «Ալեքսանդրի վեպը» թարգմանվել է հայերեն, ապա թարգմանությունը, ինչպես որ այլ թարգմանություններ (ասենք՝ Փիլոն Ալեքսանդրացու երկերի թարգմանությունը³¹), վերագրվել է Խորենացուն: Բանասերներն ընդունել կամ մերժել են այս տեսակետը: Խորենացու ժամանակի խնդիրը (որին սերտորեն առնչվում է նրա հնարավոր թարգմանությունների հարցը), դուրս է սույն հոդվածի նպատակից: Նշենք միայն, որ առ այսօր բավարար փաստեր չկան՝ հիշյալ ենթադրությունը վստահաբար ընդունելու կամ չընդունելու: Տաշյանն անգամ փորձել է համաժամանակյա քննություն կատարել՝ ցույց տալու համար, որ Խորենացին թարգմանությունն արել էր իր երկը գրելու հետ մեկտեղ: Անվանի բանասերը նույնիսկ մատնացույց է արել, թե որ պահին էր Պատմահայրը սկսել թարգմանել, և որտեղ էր հասել իր գիրքը գրելիս, երբ ավարտել էր թարգմանությունը:

Ուշագրավ է, որ չնայած Տաշյանի հաշվարկով Խորենացին քսանից ավելի փոխառություն ունի «Ալեքսանդրի վեպից», սակայն «Հայոց պատմության»

²⁸ G. Traina, “Problemi testuali,” p. 240 և M. Bernardelli, “Movsēs Xorenac‘i e il Romanzo di Alessandro: un esempio di intertestualità”, *Bnagirk' yišatakac'*, *Documenta memoriae, Dall'Italia e dall'Armenia, Studi in onore di Gabriella Uluhogian*, Bologna, 2004. pp.139-164.

²⁹ Տե՛ս **Յ. Տաշեան**, *նշվ. աշխ.*, էջ 24-43 (Տաշյանն իր հերթին օգտագործել է այլ բանասերների երկեր):

³⁰ **Մովսես Խորենացի**, *Պատմություն Հայոց*, ֆինական բնագիրը և ներածուպիւնը **Մ. Աբեղեանի** և **Ս. Յարութիւնեանի**, նմանահամութիւն, լրացումները **Ա. Բ. Սարգսեանի**, Երևան, 1991 (առաջին հրատ.՝ Տփղիս, 1913):

³¹ Տե՛ս, օրինակ, **Նորայր Աբ. Մովսէսյան**, «Մովսէս Խորենացի և Փիլոն», *Վանասուր*, Երուսաղէմ, 1993, էջ 74-77:

երեք գրքից առաջինում չկա ոչ մի քաղվածք, մոտ հինգը կա երկրորդում, իսկ երրորդում նա դիմել է Կեղծ-Կալլիսթենեսին ավելի քան տասնհինգ անգամ (և, որ կարևոր է, երեք չի հիշատակել իր աղբյուրը): Երկրորդ գրքում մեջբերումներն «Ալեքսանդրի վեպի» սկզբից են, իսկ երրորդում՝ տարբեր մասերից: Ուստի Տաշյանը եզրակացրել է, որ «Հայոց պատմություն» առաջին գիրքը գրելիս Խորենացին դեռ չէր սկսել թարգմանել: Հավանաբար ձեռնամուխ էր եղել դրան երկրորդ գրքի տասներեքերորդ գլուխը գրելիս և, թվում է, ավարտել էր թարգմանությունը, երբ գրում էր երրորդ գրքի սկզբնական գլուխները³²:

«Ալեքսանդրի վեպից»՝ իբրև աղբյուրից Խորենացին օգտվել է³³ յուրօրինակ ու ինչ-որ չափով արտասովոր ձևով: Նա մեծ մասամբ չի դիմել պատմական տեղեկություններին, այլ, ասես մի «շտեմարանից», քաղել է արտահայտություններ ու ոճական հնարքներ՝ ուրիշ պատմական իրադարձություններ նկարագրելու և իր պատումի ոճը հարստացնելու նպատակով: Բերենք օրինակներ: Բ գրքի 63-րդ գլխում Խորենացին այսպես է պատմում Տրդատ Բ գրատունու և Այունյաց իշխան Բակուրի վեճի մասին.

«Եւ եղև յաւուր միում կոչել յընթրիս Բակրոյ նահապետին Սինեսաց. և յուրախանայն զինում, տեսեալ Տրդատայ զկին մի, զի յոյժ գեղեցիկ էր և երգէր ձեռամբ, որում անուն էր Նագինիկ՝ տրփացաւ և սաէ ցԲակուր. «Տուր ինձ զվարձակս զայս», և նա սաէ. «Ոչ տամ, զի հարձ իմ է»: Բսկ Տրդատայ բուն հարեալ ի կինն՝ յինքն քարշեալ ի բազմականն, շամբշեալ վառաշէր ըստ օրինակի երիտասարդի անարգել տարփատորի: Ըսո որ խանդացեալ Բակրոյ՝ յարեաւ հանել զնա ի նաննէ: Բայց յոտն կացեալ Տրդատայ, ծաղկակալ սկտեղըն իբրև զինու վարեցաւ, նա և զբարձակիցսն ի բազմականացն ի բաց պուղեաց: Եւ անդ էր տեսանել նոր զոմն Ողիսևս՝ զՊեննելուպայ զեղեխս սատակելով, և կամ զՂապիթեայցն և զՅուշկապարկացն կոիւս ի վերայ Պերիթեայ հարսանեացն»³⁴:

Այս պատմությունը նման է «Ալեքսանդրի վեպի» հայերեն թարգմանության Կէ գլխի³⁵ մի հատվածի, որտեղ նկարագրվում է, թե ինչպես ոմն Պավսանիաս («Պաւսիանոս»), ցանկացավ «ի հանդէսն» առևանգել Ալեք-

³² 3. Տաշեան, նշվ. աշխ., էջ 72-77:

³³ Զուգահեռների համար տե՛ս նշվ. աշխ., էջ 45-84:

³⁴ Մովսէս Խորենացի, Պատմութիւն հայոց, էջ 195-196:

³⁵ Այստեղ և այսուհետև համեմատությունները Հ. Սիմոնյանի պատրաստած հրատարակության «Ա» խմբագրության հետ են (գլուխների նման բաժանում ունի միայն այդ խմբագրությունը):

սանդրի մորը՝ Օլիմպիադային («Ոլիմպիաս»)՝³⁶։ Սակայն ավելի հետաքրքրական է, որ *Խորենացին* բառացիորեն իր շարագրանքի մեջ է ներմուծել «անդ էր տեսանել նոր զոմն Ուրիսևս՝ զՊենելոպայ զսեղեխս սատակելով, և կամ զՂապիթեայցն և զՅուշկապարկացն կոիւս ի վերայ Պերիթեայ հարսանեացն» նախագասությունն «Ալեքսանդրի վեպի» ԾԸ-ԾԹ գլուխներից։ Այնտեղ նույն զուգահեռները բերվում են՝ նկարագրելու համար Ալեքսանդրի պահվածքն իր հայր Փիլիպոսի և Կղեոպատրայի հարսանիքին (որի հետ Փիլիպոսն ամուսնանում էր՝ թողնելով Ալեքսանդրի մայր Օլիմպիադային), երբ նա «բարկացաւ և որպէս ունէր զբաժակն ի ձեռինն՝ ձգեաց ի Լիւսինայ և եհար զգագաթն հացկատակին և սատակեաց զնա», իսկ քիչ անց՝ «կորգեաց ի հարէն զսուներն և զամենեսեան անդ զբազմեալսն կիսախողխող արար»³⁷։

«Հայոց պատմության» երրորդ գրքի Խ գլխում *Խորենացին* խոսում է Վարազդատ թագավորի արտասովոր ունակությունների մասին (նա, ըստ Պատմահոր, հայոց գահին էր բազմել պարսից արքա Շապուհ Բ-ի հիսունհինգերորդ տարում)։ *Խորենացին* պատմում է.

«... Առաջին մարտին պատահեաց աւազակաց ոմանց Ասորոց ի դժուարս Դարանաղոյ, և փախստեայս արարեայ՝ հետամուտ լինէր։ Իսկ նոցա անցեայ ընդ նեղուցս կամրջին Եփրատայ՝ ընկեցին զփայտն զկնի իրեանց, այլ նորս հասեայ՝ վազեաց զԵփրատս առաւել քան զղակոնացին Քիոնեայ վազն քսան և երկուց կանգնոց չափ։ Եւ անդ էր տեսանել նոր զոմն Աքիլլևս ընդ Սկամանդրոս գետ վազելով»³⁸։

Օլիմպիական խաղերում հաղթող լակոնացի Քիոնի անունը եվսեբիոսի «Ժամանակագրությանից» է³⁹, իսկ Վարազդատի ցատկի համեմատությունը Աքիլլեսի ցատկի հետ՝ «Ալեքսանդրի վեպի» ՃԻԲ գլխից («զՍկամանդրոս գետ, ընդ որ վազեաց Աքիլլևս»), որտեղ Ալեքսանդրը գնում է Իլիոն քաղաքը, մոտենում է Սկամանդրոս գետի այն մասին, որտեղ, կարծում էին, Աքիլլեսը ցատկել է գետի մեջ ու կոտորել տրոյացիներին (ինչպես պատմում է Հոմերոսը), և զարմանում է, որ գետն այնքան լայն չէ, որքան ինքը կարծել էր⁴⁰։

³⁶ Հայկական խմբագրութիւններ, էջ 119:

³⁷ Հայկական խմբագրութիւններ, էջ 114:

³⁸ **Մովսէս Խորենացի**, Պատմութիւն հայոց, էջ 308:

³⁹ Հմմտ. Եւսեբի Պամփիլեայ Կեսարացույ ժամանակականք երկամսնեայ, աշխ. Մ. Աւգերեանի, մասն Ա, Վենետիկ, 1818, էջ 286. «Քիոնիս Գակոնացի երրորդ ի ստադիոն, որոյ մի վազ էր ԻԲ. կանգուն»:

⁴⁰ Հայկական խմբագրութիւններ, էջ 165:

Հետագայում «Ալեքսանդրի վեպի» այս հատվածը՝ մի քիչ փոխված, Հոմերոսի կենսագրության մեջ են ներմուծել Դիոնիսիոս Թրակացու քերականական երկի երկու մեկնիչ՝ Հովհաննես Երզնկացին և Հովհաննես Ծործորեցին⁴¹ (դա միայն վերջերս է նկատվել բանասիրության մեջ⁴²): Ընդ սմին ուշագրավ է, որ հորենացին թյուրիմացաբար այնպես է հասկացել, թե Աքիլլեսը ցատկել է ոչ թե գետի մեջ (ինչը հստակ է «Ալեքսանդրի վեպի» հունարեն բնագրում. *Σκάμανδρον ποταμόν, εἰς ὃν ἦλατο Αχιλλεύς*), այլ վրայով:

Մեկ այլ օրինակում (II ՀԹ) հորենացին խոսում է հայոց Տրդատ արքայի սիրանքների մասին: Նա հայտնում է, որ Տրդատի գահակալման տարիների վերաբերյալ տեղեկություններն ինքը քաղել է Փիրմիրխանոս եպիսկոպոսից (մ.թ. Գ դար), սակայն հատվածում կան զուգահեռներ նաև Եվսեբիոսի «Ժամանակագրության» և «Ալեքսանդրի վեպի» հետ: Խորենացին գրում է. «Նախ ի մանկութեանն յերիվար կամակար աշտանակեալ եւ կորովի ձիավարեալ, եւ զէնս շարժեալ յաշողակաբար, եւ այլ պատերազմականս ուսանել ախորժակս. ապա... ի մրցանակս ագոնին առաւելեալ քան զԿղիտոստրադոս հռոդացի, որ զվզէ եւեթ կալեալ յաղթէր: Դարձեալ եւ քան զԿերասոս արգիացի...»: Հետո պատմում է, թե ինչպես Տրդատը գերազանցեց այդ հույներին: «Կամակար աշտանակեալ» արտահայտությունն «Ալեքսանդրի վեպի» ԼԲ գլխից է, որտեղ նույնն ասվում է Ալեքսանդրի մասին («կամակար ի ձի աշտանակէր»), իսկ օլիմպիական խաղերում հաղթողների անունները Եվսեբիոսից գրքից են: Այդ աղբյուրներից ներմուծված արտահայտությունների օգնությամբ Խորենացին պարզապես ներկայացնում է Տրդատի քաջագործություններն առավել մանրամասնորեն և բարձր ոճով:

Ալեքսանդրիայի իր նկարագրության մեջ (III, ԿԲ) Խորենացին օգտվել է Կեղծ-Կալլիսթենեսից ու Փիլոնից՝ միմյանց հյուսելով նրանցից քաղած արտահայտություններ, ինչը բնագրերը կողք-կողքի դնելով ցույց է տվել Գրիգոր հալալթյանցը⁴³: Իր շարագրանքն այսպիսի փոխառություններով հարստաց-

⁴¹ Հմմտ. **Յովհաննէս Երզնկացի** (1230-1298), *Հաւաքումն մեկնութեան քերականի*, աշխատասիրութեամբ Լ. Խաչերեանի, Լոս Անճելլոս, 1983, էջ 94-95, և **Յովհաննէս Ծործորեցի** (1283-1340), *Համառօտ տեսութիւն քերականի, աշխատասիրութեամբ Լ. Խաչերեանի*, Լոս Անճելլոս, 1984, էջ 117-118:

⁴² **Գ. Մուրադյան**, *Հին հունական առասպելների արձագանքները հայ միջնադարյան մատենագրության մեջ*, Երևան, 2014, էջ 215:

⁴³ **Г. Халатянец**, *Армянские Аршакиды в “Истории Армении” Моисея Хоренского, опыт критики источников*, Москва, 1903, ч. I, Исследование, сс. 332-333, ч. II, Материалы, сс.

նելու հորենացու սովորությունը, հատկապես այդ նպատակով «Ալեքսանդրի վեպին» դիմելը, որ հստակ երևում է բերված երեք օրինակում, դեռևս 1956 թ. քննել է Գագիկ Սարգսյանը⁴⁴: Նա իրավացիորեն եզրակացրել է, որ լրացուցիչ աղբյուրներից, հատկապես Կեղծ-Կալլիսթենեսի երկից քաղված բառերն ու արտահայտությունները սոսկ «ոճական հագուստ» ու «հոետորական նյութի շտեմարան» են և չեն ազդում պատումի բովանդակության վրա: Նման փոխառություններն ինքին բավարար հիմք չեն տալիս կասկածի ենթարկելու հորենացու հաղորդած տեղեկությունների հավաստիությունը կամ նրա մատնանշած հիմնական աղբյուրի գոյությունը (որը պարզապես չափից դուրս հակիրճ է թվացել, ուստի և ինքն այլ բնագրերի օգնությամբ ոճավորել է քաղված տեղեկությունը): Իսկ «Ալեքսանդրի վեպն» այդ նպատակով նրա՝ հատկապես հաճախ օգտագործած աղբյուրներից է: Խորենացու գերքննադատ Խալաթյանցն էլ Փիլոնի ու Կեղծ-Կալլիսթենեսի երկերը դասում է Խորենացու երկրորդական աղբյուրների շարքում, որոնք, ի տարբերություն հիմնականների՝ նրան ոչ թե տեղեկություններ, այլ սոսկ ոճական նյութ են մատակարարել⁴⁵:

Այս մեթոդն է՛լ ավելի ուշագրավ կերպով է կիրառված Մովսես Խորենացու «Հայոց պատմության» Գ գրքի ԻԶ և ԻԷ գլուխներում, որտեղ նա պատմում է, թե ինչպես է պարսից արքա Շապուհը գրավում Տիգրանակերտը: Բանասերները բառացի գուգահեռներ են մատնացույց արել այդ գլուխների և «Ալեքսանդրի վեպի» ՂԹ ու Ճ գլուխների միջև, որտեղ նկարագրված է Տյուրոսի պաշարումը, նաև՝ ՃԻԶ ու ՃԻԷ գլուխների, որոնցում Կեղծ-Կալլիսթենեսը պատմում է, թե ինչպես Ալեքսանդրը գրավեց Թեբեն: Ահա՛ որոշ գուգահեռներ:

1. «Ալեքսանդրի վեպ», ՂԹ.

«Եւ անդուստ զարս ծողովեաց, գայ, հասանէ ի Տիրոս: Կան ընդդէմ նորս տիրացիքն ոչ տունալ թոյլ անցանել ընդ քաղաքն իրեանց ... Եւ հզար կոռոյ էղելոյ զբազումս սպանին ի մակեդոնացոցն և ի պարտութիւն մատնի զարին

129-130.

⁴⁴ Գ. Սարգսյան, «Աղբյուրների օգտագործման եղանակը Մովսես Խորենացու մոտ», ԲՄ 3, 1956, էջ 31-42 (36-42):

⁴⁵ Գ. Халатяни, Армянские Аршакиды в “Истории Армении” Моисея Хоренского, опыт критики источников, ч. I, сс. 372-373.

Աղեքսանդրի: Եւ դառնայ թագաւորն անդրէն ի Գազա և հանգիստ առեալ և արծարծեալ զիր զարսն յաշխատութենէ, ինդրէր առնուլ զԾուր⁴⁶»:

Մովսէս Խորենացի, III. ԻԶ.

«Շապուհ գայ հասանէ ի Տիգրանակերտ մեր քաղաք: Կան ընդդէմ նորա արք քաղաքին հանդերձ գունարտակ գնդաւ ... Եւ հզար կոռոյ եղելոյ՝ զբազումս ի Պարսիցն սպանանեն. եւ ի պարտութիւն մատնեալ գնդին Շապուհ, դառնայ անդրէն ի Մծրին. եւ հանգիստ առեալ զարացն եւ արծարծեալ յաշխատութենէն, ինդրէր առնուլ զՏիգրանակերտ»:

2. «Ալեքսանդրի վեպ», Ժ (Ալեքսանդրը ցասկոտ նամակ է հղում տյուրոսցիներին).

«Թագաւոր Աղեքսանդրոս մակեդոնացոց, որդի Ամոնայ և թագաւորի Փիլիպոսի մանուկ և մեծ թագաւոր Ելրոպայ, Ասիայ և Լիբիայ, ծուրացոց, որք ոչ ևս են, սաէ. Ես սկիզբն արարեալ յասորոց յազգն կոյս հանդերձ խաղաղութեամբ և քաջարէն ազատութեամբ կամէի զմտն առնել: Եւ եթէ դուք՝ ծուրացիք, որ քաջ առաջին էք, ոչ քաղաքավարութեամբ սսեմ, այլ իմոյ ուղեորութեամբս ընդդէմ կայք ինձ, ի ձէնջ ուսցին և այլ (քաղաք) զարութեան, որչափ կարեն մակեդոնացիք առ ձեր գրել ընդվզեալ ամբարտաւանութիւնդ⁴⁷»:

Մովսէս Խորենացի, III. ԻԶ (Շապուհը ցասկոտ նամակ է հղում տիգրանակերտցիներին).

«Մազդեզանց քաջ Շապուհ արքայից արքայ. Տիգրանակերտեայց, որք ոչ ես էք անուանելոց ի մէջ Արեաց եւ Ասարեաց: Ես կամէի ի ձէնջ սկսեալ յամենայն առաջիկայ քաղաքս խաղաղութեամբ եւ քաջարէն ազատութեամբ զմտն առնել. եւ եթէ դուք Տիգրանակերտեայք, որ առաջին էք, ոչ շահատակութեամբ սսեմ, այլ ի մտե ուղեորութեանս, ընդդէմ կացէք ինձ, ի ձէնջ ուսցին եւ այլք զդոյնս առնել: Այլ ի դարձին իմում բարկութեամբ այնպէս վանեցից զձեզ, զի կրկին եղիջիք արինակ խեղեալ ստահակելոց»:

⁴⁶ Հայկական խմբագրութիւններ, էջ 140:

⁴⁷ Նույն տեղում, էջ 141:

3. Երրորդ զուգահեռը Թեբեի գրավման նկարագրության հետ է.
«Ալեքսանդրի վեպ», ՃԻԶ, ՃԻԷ.

«Աղեքսանդրոս ստեալ զգաւրսն և ճանապարհսս անցեալ զնսց ի Թեբայիս... Եւ թեբայեցիքն փակեցին զդրունսն և ոչ հրեշտակ անգամ ստաբեցին ստ նս, այլ դէմ յանդիմանն ճակատեալք զինեցան ընդդէմ Աղեքսանդրի: Եւ ելեալ ի վերայ պարսպին զհնտորն հինգ հարիւր ճայնեցին ստ Աղեքսանդր և սսեն եթէ «Կա՛մ պատերազմ տոր, կա՛մ ի բաց զնս ի քաղաքէս»: Եւ Աղեքսանդրոս ծիծաղեալ այսպէս սասց. «Ո՛վ քսջ թեբացիք... դուք զանձինս արգելեալ փակեցէք ի ներքս ընդ պարսպաքդ և արտաքդ յարիսկան ձայն արկանէք: Քանզի քսջ արանց է յազատ և յարձակ դաշտի կոռել, և կանանց գործ է արգելեալ և փակել զինքեանսն յերկիդէ ստ հանդերձեալ զկոհան»⁴⁸:

Մովսես Խորենացի, III. ԻԶ և ԻԸ.

Իսկ Շասպուհ եկեալ ի Տիգրանակերտ, դարձեալ աղիսեցին ընդդիմանալ ննս (այլ եւ ոչ հրեշտակս ստաբեաց ստ նս, եւ ոչ զնորայնս ընկալաւ). եւ ելեալ ի պարիսպն աղաղակեին. «Գնա՛ ի մէնջ, Շասպո՛ւհ, զի մի՛ չարիս յերկրորդումս ընդ քեզ ստաւել ես քսն զստաջինն անցուցանիցեմք պատերազմաւ»: Եւ նս պատասխանեաց. «Ո՛վ քսջդ ի Հայոց, որք զանձինս արգելեալ փակեցէք ընդ պարսպաքդ Տիգրանակերտի եւ արտաքս ձայն արկանէք սպսոնալեաց. զի քսջ արանց է յարձակ դաշտի եւ յազատ տեղոց կոռել, եւ կանանց գործ է արգելուլ փակել զինքեանս յերկիդէ ստ հանդերձեալ կոհան»:

Գերմանացի բանասեր Գիլգեմայստերը, որն արդեն 1886 թ. ցույց էր տվել «Ալեքսանդրի վեպի» և Խորենացու «Հայոց պատմության» միջև այս ակնառու զուգահեռները, նշել է, թե նման երևույթ դիտվում է Թուրքիզիդեսի «Պատմության» մեջ: Պլատեյայի պաշարման նկարագրության ժամանակ նա կիրառել է Հերոդոտոսի գրքի՝ մեկ այլ իրավիճակի վերաբերող ոճական հնարքները⁴⁹: Մենք պատճառ չունենք կասկածի ենթարկելու Շասպուհի և պարսից զորքի կողմից Տիգրանակերտի գրավմանը վերաբերող Խորենացու տեղեկությունները, քանի որ դրանք հաստատում է Փավստոս Բուզանդը (IV. ԻԴ)⁵⁰:

⁴⁸ Նույն տեղում, էջ 168-169:

⁴⁹ Տե՛ս 3. Տաշեան, նշվ. աշխ., էջ 64:

⁵⁰ Փաստոս Բուզանդ, Պատմութիւն հայոց, ՄՀ, Ա հատոր, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 355 (ընդօրինակված է Վեներիկ, 1933 հրատարակությունը):

հորենացին պարզապես Կեղծ-Կալլիսթենեսի օգնությամբ գոնավորել ու կենդանի շունչ է հաղորդել իր անհայտ աղբյուրի հավանաբար համառոտ և չոր շարադրանքին: Նրա պատումը հիմնականում շատ ճիշտ է ներկայացնում քաղաքներ գրավելու Շապուհի մեթոդը, որ այլ առիթներով նկարագրված են Ամմիանոս Մարկելլինոսի «Պատմության» մեջ⁵¹:

Մովսես հետո «Ալեքսանդրի վեպի» ամենից նշանակալի հետքերը գտնում ենք Թովմա Արծրունու «Պատմութիւն Արծրունեաց տան» երկում⁵²: Գրքի առաջին դպրության երրորդ գլխում Թովման հիշում է հեռավոր անցյալի դեպքերը և դատողություններ անում որոշ աշխարհագրական իրողությունների վերաբերյալ: Ասում է՝ իրեն հայտնի է Պտղոմեոսից, թե եմավոն լեռն արևելքում բարձր է բոլոր լեռներից, «անկոխելի ոտից մարդոց», իսկ կատարը հագիվ է տեսանելի, սես երկնքում լինի (հավանաբար խոսքը Հիմալայան լեռների մասին է): Դրանից այն կողմ մի լայնատարած հարթավայր է՝ «սաստիկ լուսով զարդարեալ ի գիշերի ... եւ ի տունջեան ամպ թանձրախոծ»: Թովման ենթադրում է, որ այդտեղ է բնակվել առաջին մարդ Ադամը, այսինքն՝ դա դրախտն է: Երկրի նկարագրությունն այնուհետև ազդված է «Ալեքսանդրի վեպից», մասնավորապես Ալեքսանդրի՝ իր մայր Օլիմպիադային գրած նամակից (երկարաշունչ ՄԹ գլուխն է⁵³), և Արծրունին բացահայտ նշում է դա. «Զոր և Աղէքսանդրի Մակեդոնացույ ի դէպ ելանէ առ Ողըմպիադայ վիպագրութիւնք՝ թերեւս ի մասն ինչ արտաքոյ սահմանաց դրախտին հասանել»: Ուրեմն այն հրաշագան երկիրը, ուր հասել էին մակեդոնացիները, Թովմայի կարծիքով դրախտի սահմանն էր: Այնուհետև նա նկարագրում է մի «անծանալ զարմանալի ծառ»՝ հետևելով Կեղծ-Կալլիսթենեսին և մեջբերում անելով նրանից.

Կեղծ-Կալլիսթենես, էջ 257	Թովմա Արծրունի, էջ 73
... Միանգամայն ընդ արեգական ծագիլն և ծառքն աճէին մինչև ի վեց ժամ և ի վեց ժամէ աւուրն ի վայր նուազէր, մինչ զի բնաւ ոչ ինչ երեկի ի նոցանէ: Եւ	... Եւ անծանալ զարմանալի ծառոյն դէպք՝ ի միում աւուր ունել զաճմունս փոյթ ընդ փոյթ, եւ դարձեալ սուգականութիւնս յանկարծաւրէն լինել, որոց եւ շիթք ցաղոյն ունէր

51 Տե՛ս Գ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 31-35:
 52 Թովմա Արծրունի և Ամանուն, Պատմութիւն Արծրունեաց տան, ՄՀ, ԺԱ հատոր, Ժ դար, Պատմագրութիւն, Անթիլիաս-Լիբանան, 2010:
 53 Հայկական խմբագրութիւններ, էջ 253-264:

<p>արտաւար ունէին իբրև զպարսիկք ստաքտիկէ և հոտ՝ կարի յոյժ պիտանացու և անուշահոտ: Եւ ասացի հատանել զծառսն և սպունգով ժողովել զարտաւարն: Եւ յանկարծարէն յիմոց մանկանց անտի տանջեալք լինէին յաներևոյթ դիւաց. զտանջողացն զճողփիւն լսեաք, բայց տանջողքն ոչ երևէին: Այլ ձայն իմն գայր, որ ասէր. «Մի՛ հատանիր, մի՛ ժողովէր, եթէ ոչ՝ եղիցի անձն այն մեռեալ և ժանտ ախտիւ սատակեսցին գումարտակքն ամենայն»: Եւ ապա ասացի ո՛չ հատանել և ո՛չ ժողովել:</p>	<p>զանհամեմատ անուշահոտութիւն: Եւ ո՛չ արմատոցն միայն աւտար եւ անիմանալի սարասիցն տիպք, այլ եւ աներևոյթ պահպանողական եւ անհպելի զգուշաւորութիւնն, որք եւ ի մերձենալ անգամ տանջեալ լինէին յաներևոյթ զաւրութենէն: Զոր ես ո՛չ հաւանիմ ասել ի դիւաց: Եւ զտանջողացն, ասէ, զճողփիւնն լսէաք, եւ զհարուածսն եկեալս ի վերայ թիկանցն տեսանէաք, բայց զտանջողան ոչ տեսանէաք: Այլ ձայն իմն գայր մի՛ ժողովել եւ մի՛ հատանել, թէ ոչ՝ եղիցի անձն այն մեռեալ եւ ժանդ ախտիւ սատակեսցի գումարտակը»: Եւ ահաբեկ երկիւղիւ ի բաց կացաք յայնմանէ:</p>
--	--

Այնուհետև Թովման մի երկարաշունչ հատված է մեջբերում «Ալեքսանդրի վեպից»: Տարբերությունները շատ աննշան են՝ գրեթե տարբերակները արժեք ունեն.

Կեղծ-Կալիսթենես, էջ 261-263	Թովմա Արծրունի, էջ 73-74
<p>Եւ բազում անգամ աղաչէին զիս բարեկամքն իմ դառնալ, և ես ոչ կամեցայ, քանզի կամէի տեսանել զկատարած երկրին: Եւ ապա անդուստ խաղացեալ ընդ անապատ ճանապարհ և գնացեալ ի ծովակողմն կոյս, և ոչ ևս այնուհետև ինչ տեսանէաք՝ ո՛չ հաւս, և ո՛չ գազան, ո՛չ սողուն և ո՛չ թռչուն, բայց միայն զերկինս և զերկիրս: Եւ զարեգակն ոչ այլ տեսանէաք, այլ ընդ աղաւտ յաւդ յաւուրս տասն: Եւ եկեալ ի տեղի մի ծովային և զվրանսն և զամենայն բանական ի ներքոյ եղեալ, մտա-</p>	<p>Բազում անգամ աղաչեցին զիս բարեկամքն դառնալ, եւ ես ոչ կամեցայ, քանզի կամէի տեսանել զկատարած երկրի. եւ անդուստ խաղացեալք ընդ անապատ ճանապարհ, գնացաք ի ծովակողմն կոյս: Եւ ո՛չ եւս այնուհետև ինչ ո՛չ տեսանէաք՝ ո՛չ հաւ եւ ո՛չ գազան, բայց զերկին եւ զերկիր, եւ զարեգակն ո՛չ տեսանէաք, այլ ընդ աղաւտ աւդ յաւուրս տասն: Եւ եկեալ ի տեղի մի ծովային եւ զվրանսն եւ զբանական զամենայն ի ներքս եղեալ, մտա-</p>

նէաք ի նաւան: Եւ նաւէաք ի կղզի մի ծովուն, որ ոչ էր հեռի յերկրէն, յորմէ լսէաք խաւսս մարդկան հելլենական: Եւ որք խաւսէին, ոչ տեսանէաք: Եւ զինուորքն ի մահ վտանգի տուեալ զանձինս, լուսանցանել ի նաւէն ի կղզիին: Եւ խեցգետի մի ել կորգեաց և ձգեաց ի ջուրն զինուորս յիսուն և շորս: Եւ անցեալ գնացաք ի տեղացն երկուցեալք: Եւ եկայք երկուս աւուրս ի տեղիս, ուր արեգակն ոչ ծագեցաւ, և կամեցեալ իմ պատմել և ձեռն արկեալ տեսանել ի ձեռն ծառայից, ուր երջանկաց վայրն էին, Կալիսթենէս իմ բարեկամն խրատ ետ ինձ մտանել հանդերձ բարեկամաւք քառասուն եւ մանկամբք հարիւր և զինուորաւք հազար եւ երկերիւր: Եւ արտաքոյ յետ ճանապարհին իմացաք էշ մատակ, որ ունի յաւանակ, զորոյ կապեցաք անդրէն զյաւանակն ի բանակին: Եւ ի մտանելն մերում լարաւք հնգետասան, հաւք երկու պատահեցին մեզ, որ ունէին մարդկեղէն երեսս, և մեծ էին, քան զհաւս, որ առ մեզ լինին, և հելլենականաւ խաւսիւք ի բարձանց աղաղակէին. «Ձի՞ վայր կոխես զաստուածոց զտունն տեսանելով: Ընդ կրո՛ւնկ դարձիր, ո՛վ թշուառական, քանզի զերջանիկ կամար[ար]ացն զկղզիս կոխել ո՛չ կարես: Ձի՞ յերկինս ելանել բռնանաս, զոր ոչ է հնար»: Եւ դողդոջումն և սարսափումն զիս կալաւ յահէն և յերկիւղէն եղելոյ և ի հարկէ լուայ ի յաստուածայնոյ ձայնէն, որ ի յերկրորդ հաւուցն ասացեալ եղև:

նէաք ի նաւան եւ նաւէաք ի կղզի մի ծովուն, որ ո՛չ էր հեռի յերկրէ, յորմէ լսէաք խաւսս մարդկան հելլենական, եւ որք խաւսէինն՝ ոչ տեսանէաք: Եւ զինուորքն ի մահու վտանգ տուեալ զանձինս՝ ի լոյղս անցանել ի նաւէն ի կղզին: Եւ խեցգետի մի ել, կորգեալ ձգեաց ի ջուրն զինուորս: Եւ անցեալ գնացաք ի տեղեացն երկուցեալք, եւ եկաք յերկուս աւուրս ի տեղիսն, ուր արեգակն ոչ ծագէ. եւ կամեցեալ իմ պատմել եւ ձեռնարկել տեսանել ի ձեռն ծառայից, ուր էր երջանկացն վայր, Կաղիսթենէս իմ բարեկամ խրատ ետ ինձ մտանել հանդերձ բարեկամաւք քառասուն եւ մանկամբք հարիւր, եւ զինուորաւք հազար եւ երկերիւր միայնովք: Եւ արտաքոյ յետ ճանապարհին իմացաք էշ մատակ, որ ունի յաւանակ, զորոց կապեցաք անդէն զյաւանակն ի բանակին. եւ ի մտանելն մերում լարաւք հնգետասան՝ հաւք երկու պատահեցին մեզ, որ ունէին մարդկեղէն երեսս, եւ մեծ էին քան զհաւանն որ առ մեզ լինին, եւ հելլենական խաւսիւք ի բարձանց աղաղակեցին. «Ձի՞ զվայր կոխես զաստուծոյ զտուն տեսանել, Աղեքսանդրէ, ընդ կրո՛ւնկն դարձիր, թշուառական, քանզի զերջանիկ կամարարացն կղզիս կոխել ո՛չ կարես. զի՞ յերկինս ելանել բռնանաս»: Դողդոջումն եւ սարսափումն զիս կալեալ յահէ յեր-

	կիւղէն եղելոյ. ի հարկէ լուայ յաստուածայնոյ սքանչելի ձայնին, որ ի հաւուցն ասացեայ եղև:
--	---

Թովմայի կարծիքով այդ թուշունները հրեշտակներ են. «Եւ դիպողագոյն է առ այս հրեշտակս զայնս ասել»:

«Ալեքսանդրի վեպի» հետ Մովսես Խորենացու և Թովմա Արծրունու երկերի այս բառացի զուգահեռները, հատկապես վերջին երկար մեջբերումը, կարևոր են՝ պարզելու համար, թե ինչ վիճակում է վեպի բնագիրը հասել մեզ (հարկ է նշել, որ Ալեքսանդրի նամակն Օլիմպիադային բացակայում է հունարեն հնագույն A խմբագրությունից և առկա է մյուսներում, սակայն տարբերվում է հայերեն բնագրից, ուստի Արծրունու քաղվածքը կարևորվում է նաև հունարեն սկզբնագրի տեսանկյունից):

Խաչատուր Կեչառեցին, որ ԺԳ-ԺԴ դարերում խմբագրել է հայերեն թարգմանության հնագույն բնագիրը, Վնտկ. 424 և մի քանի այլ ձեռագրերում պահպանված հիշատակարանում գրում է. «Նա զի հեթանոսական գրեալքն անմիաբան են և անվայելուչ ... թէպէտ էր յընտիր և ի հին արինակէ, այլ անյարմար և շողփաղփ, վասն որոյ զտեալ և քերեալ քերողարէն՝ արարի անսուտարինակ ճանապարհ»⁵⁴: Ուրեմն Կեչառեցին իր խմբագրական աշխատանքը բնորոշել է «քերեալ քերողարէն» բառերով: Կարող էր թվալ, թե նա «քերել-հանել» է բառեր, արտահայտություններ, ամբողջական հատվածներ: Սակայն Խորենացու և Արծրունու բառացի մեջբերումները փարատում են այդ տագնապը. իրականում Խաչատուր Կեչառեցին «Ալեքսանդրի վեպը» սոսկ թեթևակի է խմբագրել (օրինակ՝ հեթանոսական «աստուածք» փոխարինել է «չաստուածք»-ով), նաև որոշ հատվածներից հետո ավելացրել է ոտանավորներ, որոնք կա՛մ հստակեցնում են դրանց բովանդակությունը կա՛մ ավելի զգացմունքային ու կենդանի դարձնում այն: Ուստի «քերեալ քերողարէն»-ը թերևս կարելի է համարել «քերթեալ քերողարէն»-ի գրչական մի տարբերակ, այսինքն՝ «ստեղծագործաբար վերանայելով» կամ հենց շափածո հորինելով, արարելով «անսուտարինակ ճանապարհ»⁵⁵:

Այլ միջնադարյան հայ հեղինակներ էլ են դիմել «Ալեքսանդրի վեպին»,

⁵⁴ Հայկական խմբագրութիւններ, էջ 362-363:

⁵⁵ Հմմտ. 3. Տաշեան, նշվ. աշխ., էջ 88-95:

ասկայն նրանք փոխառել են միայն առանձին բառեր ու արտահայտություններ, երբեմն՝ Մովսես Խորենացու միջնորդությամբ: Հայերեն Կեղծ-Կալլիսթենեսի առաջին նման հետքը գտնում ենք Ղազար Փարպեցու «Պատմության» ՀԳ գլխում, որտեղ նա գրում է, թե ինչպես հայ-վրացական միացյալ զորքը, պարսիկների դեմ կռվի գնալիս լրտեսներ ուղարկելով, «տայր երեւեցուցանել լոյսս կրակաց բազմաց եւ կոճեղս ծառոց զինեալս այրանմանս, ըստ խաբէութեան Մակեդոնացոյ Աղէկսանդրի»⁵⁶: Սա հավանաբար արձագանք է Կեղծ-Կալիսթենեսի ՃՀԳ գլխի, որում Ալեքսանդրը «ոստս հատեալ կապեաց ի վերայ շորքտանեաց»՝ փոշի բարձրացնելու, մթնեցնելու և պարսիկներին «սրտաբեկ» անելու նպատակով⁵⁷:

«Ալեքսանդրի վեպի» ՃԾԸ գլխում կարդում ենք, թե ինչպես Ալեքսանդրը իր բանակով հասավ Մարաց երկիրը, որտեղից շտապեց Մեծ Հայք: Հետո եկավ «ի գետն Արածանի, որ հոսի ի ծաղկաւէտ լեռանցն Անգղայ գաւառին. և ակունքն է Եփրատայ՝ հանդէպ լերինն Արարատայ»⁵⁸: Փարպեցու ԼԱ գլխի Ծաղկուտն և Անգղ տեղանունները գուցե միասին հանդես են գալիս այդ հատվածի հետևություններով. «Ամենայն բազմութիւնն Հայոց ի տեղիս հովոց՝ գային հասանէին ի գաւառն որ կոչի Ծաղկուտն, մերձ ի բերդն ամուր, զոր Անգղն անուանեն»⁵⁹: «Ալեքսանդրի վեպի» նույն հատվածը թերևս ծանոթ էր նաև Սեբեոսին, քանի որ ԼԲ գլխում նա գրում է. «Եւ զարն Յունաց գումարեալ նստան ի Ծաղկոտանն, մերձ ի գեղն որ կոչի Անգղն, ընդ որ անցանէ գետն Արածանի»⁶⁰ (այն տարբերությամբ, որ Կեղծ-Կալիսթենեսի հայերեն բնագրում Անգղը գավառի անուն է, Փարպեցու մոտ՝ բերդ, իսկ Սեբեոսի մոտ՝ գյուղ):

ԺԱ դարի մատենագիր և քաղաքական գործիչ, դասական հունական գրականության և առասպելների գիտակ Գրիգոր Մագիստրոսն իր նամակներ-

⁵⁶ Ղազարայ Պատմութիւն Հայոց և Թուրք առ Վահան Մամիկոնեան, աշխատասիրութեամբ Գ. Տէր-Մկրտչեանի եւ Ստ. Մալխասեանցի, ՄՀ, Բ հատոր, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 2327 (ընդօրինակված է Տփղիս, 1904 հրատարակությունը):

⁵⁷ Հայկական խմբագրություններ, էջ 208:

⁵⁸ Նույն տեղում, էջ 199: Ի դեպ, մեջբերված հատվածը համապատասխանում է հունարեն երկու բառի՝ τὸν Εὐφράτιον ποταμόν («Եփրատ գետին»), տե՛ս Pseudo-Callisthenis historiam fabulosam ... edidit... *Carolus Müller*, 2.9.2.1:

⁵⁹ Ղազարայ Պատմութիւն Հայոց, 2257:

⁶⁰ Պատմութիւն Սեբեոսի, ՄՀ, հտ. Գ, էջ դար, Անթիլիաս-Լիբանան, 2005, էջ 507 (ընդօրինակված է հետևյալ հրատարակությունը. Պատմութիւն Սեբեոսի, աշխատասիրությամբ Գ. Աբգարյանի, Երևան, 1979 հրատարակությունը):

րում անուններ և արտահայտություններ է մեջբերում, որոնց աղբյուրն «Ալեքսանդրի վեպն» է. օրինակ՝ «Ալեքսանդրոս որդի Նեքտանեբեայ» (9[Հ])⁶¹, որի մասին անշուշտ գիտեր վեպի սկզբնական գլուխներից: Կամ՝ Հոմերոսի այն դրվագի հիշատակումն ու դրա մասին ակնարկները, որոնցում Զևսը հոնքերի շարժումով սասանում է Օլիմպոսը (9 [Հ], 26 [ՀԱ], 33 [ԾԴ], 40 [Խ]⁶²). հմմտ Կեղծ-Կալիսթենես, ՂԳ. «Ուրպէս ասաց սքանչելի երգիչն այն Հոմերոս. «Եւ կապուտակային յաւնաւքն ակնարկեաց Զրուանեան, և սքանչելի աստուածային վարսքն շարժեցան անմահ գլխոյն թագաւորին, և մեծապէս շարժեալ տատանեցաւ Ոլիմպոս»⁶³: Մագիստրոսն ակնարկ է անում Ալեքսանդրի թունավորվելու, փսխելու համար փետուր խնդրելու և թունի մեջ թաթախված փետուրով նենգաբար կրկին թունավորվելու պատմությունը («Ե՛կ դու, յորժամ Ալեքսանդրոս զմահացուցիչն կամէր արտաքսել, դարձուցանելով կրկին թեւոյն թաթախեալ ի ժահր, սպանութեան եղև փութացուցիչ», 24 [ԺԹ]⁶⁴), հավանաբար՝ «Ալեքսանդրի վեպի» ՄԿԶ գլխի հետևություններ. «Իսկ Ալեքսանդրի ... կամեցեալ զկարի շատ գինին փղձկեալ, խնդրեաց թև, քանզի սովոր էր այսպէս առնել: Եւ շար Ուղղոսն, շաղախեալ դեղովն՝ մատոյց նմա, վասն որոյ եւ առաւել կարի յաղթեաց դեղն անապականագոյն ընդ մարմինն խառնեալ և բախեալ»⁶⁵: Չնայած բերված հատվածների միջև բառացի նմանություն քիչ կա, սակայն դրանց կապը մատնում է «թև» բառը՝ «փետուր»-ի փոխարեն, ինչը բացատրվում է հունարեն *πτερόν* բառի երկիմաստությամբ (այն նշանակում է և՛ փետուր, և՛ թև):

Մագիստրոսը հիշատակում է եգիպտական եղջյուրավոր Ամոն աստծուն և Նեքտանեբոս մոգին, որը նրա կերպարանքն է ընդունում. «զԱմոնսն հար եղջերաւքն առնի պատկանեալ պաշտէին, որովք Նեքտանեբոս կիւսոյ պատ-

⁶¹ **Գրիգոր Մագիստրոս**, *Թուղթք և չափաբերականք*, ՄՀ, ԺԶ հատոր, ԺԱ դար, Երևան, 2013, էջ 222 (փակագծերում նշված է նամակի համարը, իսկ ուղղանկյուն փակագծերում՝ [], նույն նամակի համարը հին հրատարակության մեջ՝ *Գրիգոր Մագիստրոսի թղթերը*, բնագիրն առաջաբանով եւ ծանօթագրություններով առաջին անգամ ի լոյս ընծայեց **Կ. Կոստանեանց**, Ալեքսանդրապոլ, 1910):

⁶² **Գրիգոր Մագիստրոս**, *Թուղթք և չափաբերականք*, էջ 222, 293, 304, 315:

⁶³ Հայկական խմբագրություններ, էջ 136:

⁶⁴ Նույն տեղում, էջ 279:

⁶⁵ Հայկական խմբագրություններ, էջ 336-337: Հմմտ. *Pseudo-Callisthenis ... edidit ... Müller*, 3.3.1-2. *ὁ δὲ Ἀλέξανδρος ἀπερᾶσαι βουλόμενος τὸ πολὺ τοῦ οἴνου ἤθησε πτερόν· εἶθιστο γὰρ οὕτως ἐμεῖν. ὁ δὲ Ἰόλλας περιχρίσας τῷ φαρμάκῳ ἔδωκεν αὐτῷ· διὸ πολὺ ἐνήργει τὸ φάρμακον, ἀκρατέστερον εἰς τὸ σῶμα προσενεχθέν:*

րանս պատշաճէր մոլորութեանն եւ զուարակ եղջերաւքն կիսագնդակ յարմարեալ ըստ լուսնական հմայահաւանութեան վարկանէին» (47[ԽԹ]⁶⁶), հմմտ. «Նեգդանիբոս վերջին թագաւոր եգիպտոսի, զկնի որոյ թագաւորութեան պատուոյ անկաւ, մոգական կախարդութեամբ ամենեցուն յաղթել, մինչ զի աշխարհական տարերց հնազանդել նմա»⁶⁷: «Ալեքսանդրի վեպում» պատմվում է, որ Նեքտանեբոսը Օլիմպիադային տիրացավ խաբէությամբ, համոզելով նրան, որ իր ապագա անպարտելի որդու հայրն Ամոն աստվածն է, իսկ Ամոնը նկարագրվում է խոյի եղջուրներով⁶⁸:

Մագիստրոսին ծանոթ է Ալեքսանդրի հայտնի Բուկեփալոս ձին՝ «զուարակագլուխն յորջորջեալ» (76 [ԺԷ]⁶⁹). հմմտ. այդ բնորոշումը՝ «երիվարն զուարակագլուխ», «զուարակագլուխ ձին»⁷⁰, բայց նաև՝ «կոչեցեալ երիվարայն ցլագլուխ», «Այս է ցլագլուխ ձին, զոր հայրն քո արգելեալ փակեաց, վասն զի մարդակեր է»⁷¹: Այդ արտահայտությունը՝ «մարդակեր, որպէս զուարակագլուխ ձին Ալեքսանդրի» գտնում ենք նաև Միսիթար Գոշի «Դատաստանագրքում» (II.ՃԺ)⁷²:

Հեթում պատմիչի (ԺԳ-ԺԴ դդ.) «Պատմութիւն թաթարաց» երկի (1307 թ.) բնագիրը հին ֆրանսերեն է: Հեղինակի պատմածը գրի է առել և ապա լատիներեն թարգմանել Նիկոլա Ֆոլկոնը (Nicolas Faulcon), իսկ Մկրտիչ Ավգերյանն այն լատիներենից գրաբար է թարգմանել և հրատարակել 1842 թ.: Ապա եղել են տարբեր լեզուներով այլ թարգմանություններ: Այս երկում էլ կան հատվածներ, որոնց աղբյուրը հավանաբար Կեղծ-Կալլիսթենեսն է: Զ գլխում, որ Հնդկաստանի նկարագրությունն է, Հեթումը գրում է. «Ի հիւսիսոյ կողմանէ է երկայն և մեծ անապատ հնդկաց, ուր օձս բազումս և ազգի ազգի կենդանիս եգիտ, ասեն, Ալեքսանդր ինքնակալ»⁷³: Հատվածն

⁶⁶ Գրիգոր Մագիստրոս, Թուղթք և չափաբերականք, էջ 325:

⁶⁷ Նույն տեղում, էջ 69:

⁶⁸ Նույն տեղում, էջ 75, 78:

⁶⁹ Նույն տեղում, էջ 365:

⁷⁰ Հայկական խմբագրություններ, էջ 226, 232, 272, 351, նաև Խաչատուր Կեչառեցու կաֆայի կազմում՝ «զուարակագլուխ ձի էրիվար», էջ 94:

⁷¹ Հայկական խմբագրություններ, էջ 100, 105: Հմմտ. Pseudo-Callisthenis ... edidit ... Müller, 1.17.2-3. 'Οὗτός ἐστιν ὁ Βουκέφαλος, ὃν ὁ πατήρ σου ἐνέκλεισεν διὰ τὸ ἀνθρωποφάγον αὐτὸν εἶναι:

⁷² Միսիթար Գոշ, Գիրք դատաստանի (Բ խմբագրություն), ՄՀ, ԺԹ հատոր, ԺԲ դար, նույն տեղում, գիրք Ա, երևան, 2014, էջ 595:

⁷³ Հեթում պատմիչ, Պատմութիւն թաթարաց, յեղեալ ի լատին օրինակէ ի հայ բարբառ ի ձեռն

առնչություն ունի «Ալեքսանդրի վեպ»-ում Հնդկաստանի նկարագրության հետ (Ալեքսանդրի՝ Արիստոտելին հղած երկար նամակում, որ ՄԻԴ գլուխն է⁷⁴): Հեթումը նաև խոսում է (գլուխ Ժ) Համշեն գավառի մասին, որտեղ միշտ խավար է, անտեսանելի արարածների մարդկային ձայներ են լսվում, թռչունները խոսում են և այլն⁷⁵: Հիմքում Ալեքսանդրի նամակն է իր մորը (ՄԹ), որից Թովմա Արծրունին երկար մեջբերում է արել⁷⁶:

Վերջապես նշենք «Ալեքսանդրի վեպի» հետ երկու միջնորդավորված գուգահեռ՝ քաղված Մովսես Խորենացու «Հայոց պատմությունից»: Առաջինը Ստեփանոս Ասողիկի երկում է՝ Խոսրով արքայի մասին. «Մարմնով փոքր, այլ ոչ որքան Մակեդոնացին Աղեքսանդր» (Բ1)⁷⁷ (հմմտ. ՃՀԹ. «Պարսիկքն պշուցեալ հայէին յԱղեքսանդրոս և զարմացեալ ընդ մարմնոյն փոքրկութիւն», ՄԺԹ. «Պովրոս էր կանգուն հինգ, իսկ Աղեքսանդր՝ կանգունս երիս»⁷⁸, և Խորենացի (III Ը). «Զի թէպէտ էր մարմնովն փոքր, այլ ոչ որքան Մակեդովնացին Աղեքսանդր, որ միայն երից կանգնոց ունէր զչափ հասակի»): Մյուսը ներսես Շնորհալու «Վիպասանութիւն» պոեմում է. «Նոր Աքիլեւս աստ երեւեալ, // Ընդ Սկամանդրոս գետըն վազեալ // Եւ զՔրոնեա գերազանցեալ, // Երկու եւ քսան կանգուն քայլեալ»⁷⁹:

Խաչատուր Կեչառեցին, Գրիգորիս Աղթամարցին և Զաքարիա Գնունեցին

հ. Մ. Աթոռակալ վարդապետի Աւգերեան, Վենետիկ, 1842, էջ 10-11: Հմմտ. Hayton, “La flor des estoires de la terre Orient”, *Recueil des historiens des croisades, Documents Arméniens*, tome second, *Documents latins et français relatifs à l’Arménie*, par J. Dardel, Paris, 1906, p. 125: “Devers septentrion par long est le grand desert d’Inde, là où l’empereour Alisandre trouva si grant diversete de serpens e de bestes, si com contient en ses estoires”, և “Flos historiarum terre orientis”, *ibid.*, p. 265: “Ex parte septentrionis perlonge, est magnum desertum Indie, ubi tot serpentes et animalium diversitates imperator Alexander dicitur invenisse, sicut in suis hystoriis continetur”:

⁷⁴ Հայկական խմբագրություններ, էջ 284, 286-287, 289-290, 297, (ողջ գլուխը՝ էջ 282-297):

⁷⁵ Հեթում պատմիչ, Պատմություն թաթարաց, էջ 15: Հմմտ. Hayton, “La flor des estoires de la terre Orient”, p. 129: “en Jorgie si a une province, que l’om apelle Hamsen, que tien bien III jornées environ, et tant come dure cele province, partout y a une si grant obsculté que nul home n’i puet riens voer ... E les habitors de cele terre content que il oient vois d’omes, chant de coc...”, և “Flos historiarum terre orientis”, *ibid.*, p. 269: “In illis partibus est quedam provincia que vocatur Hanisem ... per totum quadam tenebrosa caligine locus ille taliter offuscatur, quod nullus est qui aspicere possit quicquam ... Habitatores illius patrie asserunt se sepius audivisse voces hominum vociferantium, cantus galli...”:

⁷⁶ Հայկական խմբագրություններ, էջ 262-263:

⁷⁷ Ստեփանոս Տարսնեցի Ասողիկ, Պատմություն տիեզերական, ՄՀ, ԺԵ հատոր, Ժ դար, Պատմագրություն, Գիրք Բ, Երևան, 2011, էջ 678-679:

⁷⁸ Հայկական խմբագրություններ, էջ 218 և 273:

⁷⁹ ՄՀ, ԻԱ հատոր, ԺԲ դար, Ներսես Շնորհալի, Գիրք Ա, Երևան, 2018, էջ 108-109

Կեղծ-Կալլիսթենեսի վեպը ճոխացրել են կաֆաներով⁸⁰: Հ. Սիմոնյանը նշում է, որ կաֆաները սովորաբար արձակ բնագրերի մեջ ներմուծված ութատող, 7/8 շափով գրված ոտանավորներ են, որոնք վերաշարադրում են նախընթաց հատվածը կամ արտահայտում դրա հետ կապված որևէ խոհ, վերաբերմունք կամ տրամադրություն: Բացի «Ալեքսանդրի վեպից», կաֆաներ են ներմուծված «Պղնձե քաղաքի պատմության», «Փահլուլ թագավորի պատմության» և «Մանկան ու աղջկա պատմության» մեջ: Երբեմն հանդիպում են նաև ինքնուրույն, առանց արձակ բնագրերի շրջանավոր կաֆաներ⁸¹: «Ալեքսանդրի վեպն» ամենից կաֆայաշատ երկն է: Հ. Սիմոնյանն իրավամբ հավանական չի համարում Մ. Ավդալբեգյանի⁸² այն ենթադրությունը, թե գոյություն է ունեցել Խաչատուր Կեչառեցու հեղինակած՝ Ալեքսանդրի շափածո մի պատմություն՝ «Ալեքսանդրի տաղ»⁸³:

Վեպի մեջ ներմուծված կաֆաներում երբեմն գործող անձինք համեմատվում են աստվածաշնչյան կերպարների հետ: Կաֆաների շարքում պատահում են բանաստեղծական գեղեցիկ հատվածներ, սակայն մեծ մասը միջակ որակի են, իսկ երբեմն՝ անհաջող ու անճաշակ:

Պատմության վերջում Կեչառեցին ավելացրել է բարաոնություններ՝ «Թէ որպիսի ողբս վտանգալից եւ աղէտս աւաղականս ասացեալ է բարաոնաբար Աղեքսանդր ի հիւանդութեան իւրում», «Եւ թէ իւր զրկեալ եւ տառապեալ որպէս ողբայր Ուոմպիադա մայրն Աղեքսանդրի», «Եւ թէ որպիսի ողբս յօրինեաց դուստր Դարեհի Հոռքսիանէ, կինն աշխարհակալին Աղեքսանդրու», «Եւ թէ նախարարք եւ զաւրջն զորպիսի կական բարձեալ լան զթագաւորն իւրեանց», «Եթէ ամենայն վարուց յաղթութեան եւ արիութեան, նա եւ զվախճանն նշանաւք առ Տէրն մեր որպէս, զոր բերեմք մարգարէութեամբ»⁸⁴: Այդ ժանրը՝ «դիմառնութիւն» և «կերպարանառնութիւն» տարատեսակներով,

⁸⁰ Ծագում է արաբերէն qāfiyya «բանաստեղծական հանգ» բառից, տե՛ս Հ. Աճառյան, *Հայերէն արմատական բառարան*, Բ. Ֆ, Երևան, 1973, էջ 563: Առաջին անգամ օգտագործել է Գրիգոր Մագիստրոսը՝ իր «Հազարատողեան» պոեմի առաջաբանում, որտեղ իբրև միախանգ է բնորոշում արաբական բանաստեղծությունը. «Տաղասացութիւնք արաբացոցն... միայալ աւարտեալ գծի, զոր դոմ կափիա (տարընթեցումներ՝ գափիէ, կափայ) անուանէ», **Գրիգոր Մագիստրոս**, *Թուղթ և շափաբերականք*, էջ 140:

⁸¹ Հ. Սիմոնյան, *Հայ միջնադարյան կաֆաներ*, էջ 35:

⁸² Մ. Ավդալբեգյան, *Խաչատուր Կեչառեցի*, Երևան, 1958, էջ 74-75:

⁸³ Հ. Սիմոնյան, *նշվ. աշխ.*, էջ 71:

⁸⁴ Հայկական խմբագրություններ, էջ 355-360:

հայտնի է Ե դարավերջի կիսաթարգմանական ճարտասանական ձեռնարկից՝ «Պիտոյից գրքից»⁸⁵: Գրքում ներկայացված տասը տեսակի ճարտասանական վարժություններից բարառնությունն ու դիմառնությունն են, որոնց ամենից հաճախ են դիմել հետագա հայ հեղինակները⁸⁶: Դրանք ճառեր են՝ արտասանված իրական կամ երևակայական անձանց անունից որևէ դրամատիկ իրադարձության (Կեչառեցու հորինածները՝ Ալեքսանդրի մահվան) առիթով:

Հետաքրքիր է, որ մի բարառնության մեջ Կեչառեցին Ալեքսանդրին համեմատում է Հիսուս Քրիստոսի հետ⁸⁷: Նա գրում է. «Ապա որչափ ևս առաւել այրս այս սքանչելի Աղեքսանդրոս Մակեդոնացի տիպ և գաղափար եղև երկնակալ թագաւորին մերոյ Յիսուսի Քրիստոսի»: Հետո, Սուրբ Հոգուց ներողություն խնդրելով անհարկի թվացող համեմատության համար, հաստատում է իր կարծիքը նմանատիպ բնորոշումների և կյանքի հանգամանքների մի բռնագրոսիկ ցանկով. Ալեքսանդրը ծնվել է Մակեդոնիայում Օլիմպիադայից՝ եգիպտացի մոգ նեքսանեբոսի խաբեության հետևանքով, իսկ Տէր Հիսուս Քրիստոսը՝ Մարիամից Բեթղեհեմում՝ բանսարկուի (օձի) խաբեության հետևանքով, Ալեքսանդրը կրթվել է աթենացիների դպրոցյամբ, իսկ Տերը՝ հայրական իմաստությամբ, Ալեքսանդրը տիրել է եգիպտոսին, իսկ Տերը կանչվել է եգիպտոսից, Ալեքսանդրը հաղթել է Դարեհին, Հիսուսն էլ հաղթել է սատանային, Ալեքսանդրը հնազանդեցրել է խուժադուժ ու բարբարոս ազգերին, իսկ Տերը կոչել է հրեաներին ու հեթանոսներին, Ալեքսանդրին թագավորներն էին հեռվից ընծաներ բերում, Տիրոջը՝ «թագաւորքն Արաբայ և Սաբայ», Ալեքսանդրը գահընկեց է արել հնդիկների թագավոր Պովրոսին, իսկ Տերը՝ խավարի իշխանին և այլն:

Գ խմբագրությունն «Ալեքսանդրի վեպի» խիստ համառոտված և բավական ձևափոխված բանավոր տարբերակ է, որում վառ արտահայտվել է ժողովրդական և էպիկական մտածողությունը: Այստեղ էլ կաֆաներ կան, սակայն ի տարբերություն հին խմբագրության կաֆաների՝ դրանք մեծ մասամբ սոսկ լրացումներ չեն, այլ պատումի անկապտելի մաս, այսինքն՝ որոշ դրվագներ չափածո են շարադրված: Պատմությունն այսպես է սկսվում. «Կայր

⁸⁵ Գիրք պիտոյից, աշխատասիրությամբ Գ. Մուրադյանի, Երևան, 1993, էջ 184-185, և նման վարժությունների օրինակներ՝ էջ 185-200, 239-247:

⁸⁶ Ա. Գափինյան, «Դիմառնությունը հայ միջնադարյան բանաստեղծության մեջ», ԼՀԳ 1974, 5, էջ 32-41:

⁸⁷ Հայկական խմբագրութիւններ, էջ 360-362:

Թագաւոր մի Փիլիպէ անուն և նստէր ի Թեսաղոնիկէ քաղաքին, որ է Սելենիկ: Եւ նա շինեաց յետոյ քաղաքն Ֆիլիպեայ և անուանեաց զանուն նորա Ֆիլիպուպոլիս՝ ըստ անուան իւրոյ: Եւ ունէր թագաւորն այն թագուհի մի աննման գեղեցիկ, և անուն նորա Օլոմպիադա: Եւ թագաւորն Ֆիլիպէ ոչ ունէր սերմն որդեծնութեան: Եւ էր անցեալ բազում ժամանակ, և ոչ ունէին զաւակ՝ ժառանգ աթոռոյն իւրեանց: Դարձեալ կայր թագաւոր մի յեգիպտոս՝ Նեգդանիբոս անուն: Սա լուաւ զգեղեցկութիւն Օլոմպիադայ, վասն որոյ յոյժ ցանկայր տեսանել զգեղեցիկ պատկեր նորա և բազում ժամանակ խորհէր ի սրտի իւրում ... զի ... կատարեսցէ զչար ցանկութիւն սրտի իւրոյ»: Եվ Նեկտանեբոսը լուծում է գտնում. երբ Փիլիպոսը բացակա է, գալիս է Փիլիպուպոլիս՝ բժշկի հանդերձանքով. «Որպէս թէ եկեալ է ճարտար բժիշկ մի և գիտէ բազում հնարս բժշկութեան, մանաւանդ որդէծնութեան»: Երբ Օլիմպիադան հարցնում է՝ արդյո՞ք նա ունի մի «գեղ որդէծնութեան», նա անմիջապէս առիթից օգտվում է և մի քանի անգամ տիրանում թագուհուն՝ կերպարանափոխված օձի, արծվի, շար վիշապի: Արդյունքում ծնվում է Ալեքսանդրը, որը տասնհինգ տարեկանում ցանկանում է պարզել, թե ով է իր հայրը, սակայն մայրը խստիվ պահում է գաղտնիքը: Ալեքսանդրը ճշմարտությունն իմանում է աստղերից և, մորը մեղադրելուց հետո, արտասանում հետևյալ տողերով սկսվող բանաստեղծությունը. «Օձն էր կորստեան պատճառ, // որ եհան զԱդամ ի դրախտէն. // Հանց Նեգդանիբոս արար, // զկինն եհան ի Փիլիպոսէն...» Յլագլուխ ձին ծովից ելած մի հսկա առասպելական էակ է, և թագավորի ողջ զորքը չի կարող բռնել կամ մոտենալ նրան: Սակայն, տեսնելով նորածին Ալեքսանդրին, ձին իսկույն հնազանդվում է իր ապագա տիրոջը և գլուխը խոնարհում նրա առաջ⁸⁸:

Տիգրան Գույումջյանը ենթադրում է, որ նկարագրողումներ առաջին անգամ կցվել են բնագրին կաֆաների հետ միաժամանակ՝ ԺԳ-ԺԴ դդ., և առաջին ծաղկողը հենց խաչատուր Կելառեցին է եղել: Գույումջյանը նաև նշում է, որ «Ալեքսանդրի պատմությունն» աշխարհիկ բովանդակությամբ ամենավաղ երկն է, որին մանրանկարների շարք է հատկացվել⁸⁹:

⁸⁸ Հայկական խմբագրություններ, էջ 446-450:

⁸⁹ D. Kouymjian, "Illustrations of the Armenian Alexander Romance and the Motifs from Christian Iconography," *Jos Weitenberg Festschrift*, pp. 153-157 (149-182), in press (տե՛ս <https://www.academia.edu/33443324> / Dickran Kouymjian Illustrations of the Armenian Alexander Romance and Motifs from Christian Iconography Jos Weitenberg Festschrift Hebrew University Armenian Studies series Louvain Peeters in press. pp. 149-182. page proofs 2015):

Քննելով «Ալեքսանդրի վեպի» հայկական ձեռագիր ավանդույթը՝ նկարագարողումներով հանդերձ, էդդա Վարդանյանը եզրակացրել է, որ, ի տարբերություն Բյուզանդիայի ու եվրոպական երկրների, որտեղ Ալեքսանդրի կերպարն օգտագործում էին թագավորական քարոզչության համար, Հայաստանում նա սովորաբար հանդես է եկել քաղաքական ճգնաժամերի ընթացքում ու արտաքին թշնամիների հետ պատերազմական իրավիճակներում: Ալեքսանդրը, իբրև օրինակելի ու հզոր միապետի կերպար, ոգևորել է հայերին և պետականությունը վերականգնելու ու արդարությունը վերահաստատելու հույսեր ներշնչել⁹⁰:

Իսկ անկախ քաղաքականությունից՝ երկի զանազան խմբագրություններն ու դրանք պարունակող ձեռագրերի մեծ թիվը՝ հաճախ ճոխ նկարագարողումներով (մոտ ութսուն պահպանված ձեռագրից տասնչորսը նկարագարված են. դրանցից վաղագույնը Վնտկ. 424-ն է, իսկ հաջորդ հինգն ընդօրինակվել են մոտ 200 տարի անց), վկայում են, որ «Ալեքսանդրի վեպը» միջնադարում հայերին շատ սիրելի գիրք է եղել: Այն մնում և մնալու է այդպիսին՝ շնորհիվ իր հետաքրքրաշարժ ու հրաշապատում բովանդակության:

ARAM TOPCHYAN

**THE TEXTUAL TRADITION OF THE OLD ARMENIAN VERSION OF
THE ALEXANDER ROMANCE AND ITS INFLUENCE ON
MEDIEVAL ARMENIAN LITERATURE**

Key words: Pseudo-Callisthenes, Greek recensions, Armenian recensions, manuscripts, borrowings, “stylistic dress”, Movsēs Khorenats’i, Tovma Artsruni, Grigor Magistros.

The article briefly discusses four old Armenian recensions of the Alexander Romance in comparison with those of the original Greek text. Three of the Armenian recensions (Ա [A], Բ [B] and Գ [C]) have been included in the “diplomatic”

⁹⁰ **Edda Vardanyan**, “La portée politique de l’illustration des manuscrits du Roman d’Alexandre arménien,” pp. 247-249.

edition prepared by Hasmik Simonyan, who has erroneously regarded recension B (instead of A) as the oldest Armenian witness. The fourth, short recension, which may be of interest with regard to the textual tradition of the work, has not been published yet and is currently prepared for publication by the author. As for the possible fifth, “intermediary” recension, it still remains somewhat obscure and needs further study.

The article also summarizes the importance of the Alexander Romance, as a work of fiction and a “stylistic repository”, for such major Armenian authors as Movsēs Khorenats‘i, T‘ovma Artsruni, Grigor Magistros, et al.

АРАМ ТОПЧЯН

**ТЕКСТУАЛЬНАЯ ТРАДИЦИЯ ДРЕВНЕАРМЯНСКОГО
ПЕРЕВОДА РОМАНА ОБ АЛЕКСАНДРЕ И ЕГО ВЛИЯНИЕ НА
СРЕДНЕВЕКОВУЮ АРМЯНСКУЮ ЛИТЕРАТУРУ**

Ключевые слова: Псевдо-Каллисфен, греческие редакции, армянские редакции, рукописи, заимствования, “стилистическое одеяние”, Мовсес Хоренаци, Товма Арцруни, Григор Магистрос.

В статье кратко охарактеризованы четыре древнеармянские редакции Романа об Александре в сопоставлении с редакциями греческого оригинала. Три из армянских редакций (Ц [A], Բ [B] и Չ [C]) были включены в “дипломатическое” издание, подготовленное Асмик Симонян, которая ошибочно считала редакцию В (а не А) самой ранней. Четвертая, краткая редакция, которая может быть интересна с точки зрения текстуальной традиции памятника, впервые готовится к изданию автором настоящей статьи. Что касается возможной пятой, «промежуточной» редакции, вопрос о ее существовании нуждается в исследовании.

В статье также подытожено значение Романа об Александре как художественного произведения и “хранилища стилистических приемов” для таких армянских авторов, как Мовсес Хоренаци, Товма Арцруни, Григор Магистрос и др.

ՀԱՂԱՐԾԻՆԻ ՎԱՆԱԿԱՆ ԳՊՐՈՑՆ

Բանալի բառեր՝ հաշատուր Տարոնացի, խազեր, Հովհաննես Արմանեցի, Նոր Գետիկ, Կայենո գավառ, Ջորափոր, Գևորգ Գ, Խաղարծին:

Միջնադարյան Հայաստանի նշանավոր հոգևոր և մշակութային կենտրոն Հաղարծինի վանքը գտնվում է պատմական Ջորափոր, հետագայում Կայան կոչված գավառում՝ անտառապատ լեռներով ու ձորակներով շրջապատված մի գեղատեսիլ հարթավայրում, ուր Հաղարծին գետակի երկու վտակները լեռնոտ բարձունքներից իջնող փեշերի վրա կազմում են թերակղզի, ապա վանքից փոքր-ինչ ներքև միանալով խառնվում Աղստե գետին:

Վանքն աղբյուրներում հանդիպում է նաև Խաղարծին¹, Հողարծին², Հավարծին³, Աղարծին⁴, Աղրծին⁵ անվանումներով: Ժողովրդական ստուգաբանության համաձայն՝ «Հաղարծին» անունն առաջացել է «արծիվ» և «խաղաց» բառերից, որ նշանակել է արծիվների խաղ կամ արծիվների խաղալու վայր: Ըստ ավանդազրույցի՝ տաճարի օծման հանդեսին վանականները տեսնում են, որ Սուրբ Հոգին արծվակերպ իջել է կաթողիկեի վրա, և նկատելով արծվի սավառնելու ժամանակ պտույտներ գործելու խաղը՝ անվանել են «խաղ արծվի», որից էլ վանքը կոչվել է Խաղարծին կամ Հաղարծին⁶: Թևատարած արծվի կերպարն արտացոլվել է վանքի զարդաքանդակներում: Սբ. Աստվածածին եկեղե-

1 Վիմազիր արձանագրություններում հանդիպում է և՛ Խաղարծին, և՛ Հաղարծին ձևով: Տե՛ս Իրվան հայ վիմագրության, պրակ VI, Իջևանի շրջան, կազմեցին՝ Ս. Ավագյան, Հո. Զանփողպյան, Երևան, 1977, էջ 20-61:

2 Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի, քնն. հրատ. Հ. Պերպերեանի, Փարիզ, 1960, էջ 12: Մ. Զամյանց, Հայոց պատմություն, հ. Գ, Երևան, 1984, էջ 96:

3 Ա. Մաքևոսյան, Հայերեն ձևագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, Երևան, 1984, էջ 560:

4 Աբրահամ Կրետացի, Պատմութիւն, առաջաբանը և ծանոթագրությունները Ն. Դորդանյանի, Երևան, 1973, էջ 74:

5 ՄՄ 1028, Պահպանակ Ա, տե՛ս Մայր ցուցակ հայերեն ձևագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Գ, Երևան, 2008, էջ 118:

6 Հ. Ոսկեան, Արցախի վանքերը, Վիեննա, 1953, էջ 231:

ցու արևելյան պատին քանդակված տաճարի աջ և ձախ կողմերում երկու վեղարավոր հոգևորականներ են, որոնք ձեռքերը պարզել են վեր և ցույց են տալիս կաթողիկեի խաչին նստած արծվին⁷:

Հաղարծինի վանական համալիրի մասին հիմնական աղբյուրը վիմագիր արձանագրություններն են, որոնք կարևոր տեղեկություններ են հաղորդում միջնադարյան Հայաստանի այս նշանավոր հոգևոր ու մշակութային կենտրոնի պատմության, միաբանության, հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, հոգևոր-մշակութային կյանքի վերաբերյալ: Հակառակ վիմագիր արձանագրությունները՝ մատենագրական աղբյուրները սակավախոս են: Մատենագրական առաջին տեղեկությունները հաղորդում է Կիրակոս Գանձակեցին: Պատմիչը գրում է, որ 1196 թվականին Նոր Գետիկի եկեղեցու օծման հանդեսին ներկա էր նաև Հաղարծինի վանահայր Խաչատուր Տարոնացին՝ սուրբ և առաքինի, գիտություն, հատկապես երաժշտական արվեստով հռչակված մի մարդ⁸, որի առաջնորդության տարիներին Հաղարծինը դառնում է միջնադարյան Հայաստանի հոգևոր-մշակութային նշանավոր կենտրոններից մեկը: Կիրակոս պատմիչը նաև վկայում է, որ 1246 թվականին, երբ Վարդան Արևելցին Կիլիկիայից Հայաստան է բերում Կոստանդին կաթողիկոսի սահմանած կանոնները, Կարինի, Անիի, Բջնիի, Ամբերդի, Հաղպատի, Սանահինի, Գետիկի, Կեչառիսի, Այրիվանքի և այլ նշանավոր հոգևոր առաջնորդների շարքում կար նաև Հաղարծինի վանքի առաջնորդի ստորագրությունը⁹: Հաջորդ տեղեկությունը տալիս է Վարդան Արևելցին՝ վանքը կոչելով Հողարծին. «Եւ բազում գաւառք ի կողմն հիւսիսոյ, որ կոչի Զակամ, ուր կայ Սուրբ Խորանաշատ եւ Հողարծին եւ Գետկաց վանք»¹⁰: Ստեփանոս Օրբելյանը վանքն անվանում է «զգերահռչակ ուխտն Հաղարծին»¹¹:

Ձևայած Հաղարծինի մասին առաջին հիշատակությունները ԺԲ դարից են, բայց քանի որ վանական համալիրը բաղկացած է Ժ-ԺԳ դարերում կառուցված շինություններից, ենթադրելի է, որ այնտեղ միաբանություն գործել է ավելի վաղ շրջանից:

Հաղարծինի վանական համալիրի մեջ են մտել Սբ. Գրիգոր, Կաթողիկե,

⁷ Նույն տեղում:

⁸ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, աշխատասիրությամբ՝ Կ. Մելիք-Յանջանյանի, Երևան, 1961, էջ 211-212:

⁹ Նույն տեղում, էջ 310:

¹⁰ Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի, էջ 12:

¹¹ Ստեփանոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 342:

Սբ. Ստեփանոս, Սբ. Աստվածածին եկեղեցիները, 2 գավիթ, սեղանատունը, արքունական դամբարանը, եկեղեցականների խուցերը, աղոթատեղիներ, խաչքարեր, օժանդակ շինություններ:

Առաջին շինությունների վերաբերյալ վիմագիր և մատենագիր տեղեկություններ չկան: Ամենահինը Սբ. Գրիգոր եկեղեցին է, որի հիմնադրման ստույգ ժամանակը հայտնի չէ: Չի պահպանվել ոչ մի արձանագրություն: Եկեղեցու մուտքին եղած միակ արձանագրությունն էլ ժամանակի ընթացքում մաշվել ու դարձել է անընթեռնելի: Դատելով ճարտարապետական ոճից՝ ենթադրվում է, որ եկեղեցին կառուցվել է Ժ-ԺԱ դարերում: ԺԲ-ԺԳ դարերում է կառուցվել Սբ. Ստեփանոս եկեղեցին: Վիճելի է նաև Սբ. Աստվածածին եկեղեցու հիմնադրման ստույգ ժամանակը: Ենթադրվում է, որ այն կառուցվել է 1071 թվականին, իսկ վերանորոգումը տեղի է ունեցել 1281 թվականին¹²:

Սելջուկների արշավանքներից ավերվում է վանքը: ԺԲ դարի վերջերին, երբ այս գավառում հաստատվում է Զաքարյանների իշխանությունը, Վրաց Գեորգի թագավորի հրամանով և նրա իշխաններ Սարգիս Զաքարյան ամիրսպասալարի, Մահկանաբերդի իշխան Ամիր Քրդի, Անտոնի Ճղունտելիի և Ելբեկի աջակցությամբ 1184 թվականին հաշատուր Տարոնացի վարդապետը և Սուքիասը, որին Մ. Բարխուդարյանը անվանում է Արցախեցի¹³, վերանորոգում են եկեղեցին, վերականգնվում են Հաղարծինի վանքի հողատիրական իրավունքները, և վանքը անհատուց ստանում է Միջնաշենի այգին, Աբասաձորը, Տանձուտը, Տեառնխաչը, Քրդեանը: Պատմական այս փաստը հաստատվում է Սբ. Գրիգոր եկեղեցուն կից գավիթի արևելյան պատին ագուցված սալի վրա

¹² Սբ. Աստվածածին եկեղեցու կառուցման ժամանակը վիճելի է: Եկեղեցու հարավային մուտքի քանդակալի կամարի երկու կողմերում պահպանվել են «Թ ԶԼ» և «ԹՎ ՇԻ» գրերը: Հետազոտողներից ոմանք սա ընդունում են որպես երկու տարբեր արձանագրություն և եկեղեցու կառուցման թվականը համարում են ՇԻ (1071), իսկ վերանորոգմանը՝ ԶԼ (1281): Դատելով ճարտարապետական ռեալիստիկական առանձնահատկություններից՝ որոշ հետազոտողներ էլ կարծում են, որ եկեղեցին չի կառուցվել ԺԱ դարի կառուցյ ինել, այլ ավելի ուշ շրջանի՝ ԺԳ դարի շինություն է, և արձանագրությունը կարդում են իբրև մեկ ամբողջություն, այսինքն՝ «Թ ԶԼ (1281) թվին շինեցաւ»: Տե՛ս Մ. ՏԷՐ-ՄՈՎՍԻՍԵԱՆ, *Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթևի, Հաղարծինի և Դաղի եկեղեցիները և վանական շինությունները*, Երուսաղեմ, 1931, էջ 74-75: Մ. Բարխուդարեանց, *Արցախ, Բագու*, 1895, էջ 364, Հ. Ոսկեան, *Արցախի վանքերը*, էջ 223, Հ. Եղիազարյան, «Հաղարծինի վանքը և նրա վիմագիր արձանագրությունները», *Էջմիածին*, 1954, ք. 9, էջ 35-38, Н. Токарский, *Архитектура Армении, Ереван*, 1961, ст. 288-289, *Գիվան, պրակ VI*, էջ 44, Ի. Էլարյան, *Աղստեկի հովտի պատմության և կոլտուրայի հուշարձանները*, Երևան, 1980, էջ 53:

¹³ Մ. Բարխուդարեանց, *Պատմություն Աղուանից*, Բ. Ա, Վաղարշապատ, 1902, էջ 195:

պահպանված արձանագրությունները. «Ի ՈւԳ (1184) թուիս Հայոց ի թագաւորութեանն Ափխազաց Գեորգեա, ի հայրապետութեանն Հայոց տեառն Գրիգորիսի ես՝ Խաչատուր վարդապետ, և Սուքիաս նորոգեցաք զՍուրբ Գրիգորս՝ հրամանաւ թագաւորին եւ իւր մեծամեծ իշխանացն՝ Սարգսի, Ամիր Քրդին, Անտոնի Ճղունտելին, Ելբեկին: Եւ թագաւորն զհին եւ զնոր կազմութիւնս գրով ետ ի Սուրբ Գրիգորս զայգին ի Միջնաշինին ջրին, զՏեառնխաջ՝ կոպար վանիցս ի միջին, զՔուրդեւանն, զԱբասաձոր, զՏանձուտն»: Նույն արձանագրության անեծքի բանաձևում հիշատակվում է Վարձիա վրացական վանքը՝ «Նգովեսցին ի Վարձէս Աստուածածնէն»¹⁴: Հովսեփ Օրբելին նկատում է, որ այս և Հաղարծինի վանքի մի շարք այլ արձանագրություններում հանդիպող վրացական անունները վկայում են այն մասին, որ Հաղարծինը այդ շրջանում հարել է քաղկեդոնականությանը¹⁵:

Մբ. Աստվածածնին կից գավիթը ավերվել է, մնացել են միայն ավերակները: Երկրորդ գավիթը եղբոր՝ Զաքարեի մահվանից հետո (1212 թ.) նրա հիշատակին կառուցում է Իվանե Զաքարյանը՝ «Եւ ես շինեցի ի մեր վանքս Հաղարծին ժամատուն վիմարդեան, կամարակապ ի դրան Մբ. Գրիգորիս եւ այգի յերեւան ետու վասն յիշատակի եղբարն իմոյ»¹⁶: Իվանեն արևմտյան մուտքին թողնում է ընդարձակ արձանագրություն Զաքարյանների հաղթանակած պատերազմների, հայրենի տիրույթները սելջուկների արշավանքներից ազատագրելու և վերադարձնելու մասին: Այս արձանագրության մեջ Զաքարյանները համարվում են Բագրատունիներ, թվարկվում են այն տարածքներն ու ամրոցները, որոնք ազատագրել են Զաքարյան եղբայրները. «Եւ ետ տիրել սեփհական ժառանգութեան նախնեաց մերոց ետ ի ձեռս մեր յառաջ զանառիկ զղեակն Անբերդ, եւ զթագավորանիստ քաղաքն Անի, ապա զամուրն Բջնի, զՄարանդ, Միչք եւ Գավազանք ի Թավրէժ, զԿարնո քաղաք մինչեւ Խլաթ, զՇաքի եւ զՇրուան, Պարտաւ մինչեւ Բելուկան եւ զայլ բազումս իւրեանց սահմանաւք»¹⁷:

Մբ. Գրիգոր եկեղեցու գավթի հարավային պատին կից է արքունական դամբարանը: 1865-1895 թվականներին, երբ Հաղարծինի վանահայր է դառ-

¹⁴ Դիվան, պրակ VI, էջ 37:

¹⁵ Դիվան հայ վիմագրության, պրակ I, Անի քաղաք, կազմեց՝ Հ. Օրբելի, Երևան, 1966, էջ IX:

¹⁶ Դիվան, պրակ VI, էջ 23:

¹⁷ Նույն տեղում, էջ 22, Ս. Զալալեանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, Կ. Ա., Տփլիսի, 1842, էջ 131, Հովհ. Շահխաթունեանց, Ստորագրութիւն Կաթողիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, Կ. Բ., էջմիածին, 1842, էջ 370, Մ. Բարխուդարեանց, Արցախ, էջ 366: Հ. Մանանդյան, Քննական տեսություն, Կ. Գ., Երևան, 1977, էջ 142-143:

նում էջմիածնի միաբան Պողոս վարդապետը, քանզում է դամբարանի պատերը և քարերը օգտագործում այլ կառույցների շինարարության մեջ¹⁸: Այժմ պահպանվել են դամբարանի հիմնապատերը և երկու տապանաքար: Ենթադրվում է, որ այստեղ հանգչում են Կյուրիկյան թագավորները¹⁹:

ԺԲ դարավերջին և ԺԳ դարասկզբին Հաղարծինը հիշվում է Հայաստանի նշանավոր ուսումնական կենտրոնների շարքում: Հաղարծինի մեզ հայտնի ուսուցիչը բանաստեղծ և երաժիշտ, միաբանության առաջնորդ Խաչատուր Տարոնացին²⁰ է, որի անվան հետ է կապվում Հաղարծինի վանական դպրոցի հիմ-

18 **Մ. արք. Սմբատեան**, *Տեղագրութիւն Գեղարքունի Մովազարդ գաւառի, որ այժմ նոր Բայազետ գաւառ, Վաղարշապատ, 1896*, էջ 179-185:

19 Այստեղ երեք տապանաքար է եղել, որոնցից մեկը կրաքարից է և ամբողջովին փայփայվել ու վերածվել է մանր բեկորների, անհնար է պարզել, թե ում տապանաքարն է: Ս. Զալալյանցը ժամանակին կարդացել է տապանաքարերի արձանագրությունը. «Այս է հանգստարան թագաւորաց Գագայ եւ Գաւգայ»: Այժմ պահպանվել է միայն մեկի անվան սկզբնատառը. «Այս է հանգստարան թագաւորաց Գ»: Երրորդի վրա արձանագրված է «Սմբատ թագաւոր»: Ժամանակին այն տեսակետն է եղել, որ այստեղ թաղված են Բագրատունի Սմբատ Բ (977-990) և Գագիկ Ա. (990-1020) թագավորները: Ըստ Ստեփանոս Ասողիկի Աշոտ Գ Ողորմածի որդիներից Սմբատ Բ թագավորը թաղված է Անիում. «Եւ մեռաւ անդէն եւ թաղեցաւ ի նմին ֆաղաբի»: Երկրորդ որդու՝ Գագիկ Ա-ի գերեզմանի տեղը չի նշվում: Աշոտ Գ Ողորմածի կրտսեր որդին՝ Գուրգեն Ա. Կյուրիկեն (982-989) հիմք դրեց Կյուրիկյան թագավորությանը Տաշիր-Ձորագետում: Նա թաղված է Սանահինում: Կյուրիկյանների հաջորդ գահակալը Տաշիր-Ձորագետում Գուրգեն Ա-ի որդի Դավիթ Անհողինն էր (989-1048), որն ուներ չորս որդի՝ Գուրգեն, Գագիկ, Ատրնեստեհ և Սմբատ անուններով և մեկ դուստր՝ Հրամուշը: Գագիկը 1037 թվականին տիրեց Կախեթ-Չերեքի գահին և դարձավ Կյուրիկյան արքայատոհմի կրտսեր նյուտի հիմնադիրը: Դավիթ Անհողինի մահից հետո Տաշիր-Ձորագետի թագավոր է դառում նրա ավագ որդին՝ Կյուրիկե Բ (1050-1089), իսկ Սմբատը եղբոր՝ Կյուրիկե Բ-ի հետ գահակից էր Տաշիր-Ձորագետում: Տե՛ս **Ստեփանոս Տարոնացի Ասողիկ**, *Պատմութիւն տիեզերական, տե՛ս Մատենագիրք Հայոց*, հ. ԺԵ, Գիրք Բ, կազմեց **Գ. Մանուկեան**, 2011, էջ 808, *Հայոց պատմություն*, Երևան, 2014, էջ 55-61, 127-135, **Ս. Զալալյանց**, *Ճանապարհորդութիւն...*, հ. Ա, էջ, 134, *Դիվան, պրակ VI*, էջ 59, **Հ. Նդիագարյան**, «Հաղարծինի վանքը և նրա վիմագիր արձանագրությունները», *էջմիածին*, 1954, թ. 9, էջ 39, **Մ. Բարխուդարեանց**, *Արցախ*, էջ 367, **Մ. Տէր-Մովսիսեան**, *Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթևի, Հաղարծինի և Դադի եկեղեցիները և վանական շինությունները*, էջ 78, **Լ. Խաչերեան**, *Հայագիր դպրութեան ուսումնագիտական կենտրոնները... միջնադարյան Հայաստանում եւ Կիրիկիայում (V-XVI դ.դ.)*, Լիզբոն, 1998, էջ 593 **Թ. Հակոբյան**, **Ստ. Մելիք-Բախյան**, **Հ. Բարսեղյան**, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հ. 3, Երևան, 1991, էջ 316, **Կ. Ղաֆաղարյան**, *Սանահինի վանքը և նրա արձանագրությունները*, Երևան, 1957, էջ 24, **M. Brosset**, *Deux historiens arméniens*, Petersbourg, 1870, ծմք. 51. **Ղ. Մովսիսեան**, *Լոռիի Կյուրիկեան թագաւորներու պատմութիւնը*, Վիեննա, 1923, էջ 32: **Լ. Մելիքսեթ-Քեղ**, *Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին*, հ. Ա, Երևան, 1934, էջ 210-212:

20 **Լ. Խաչերեան**, *Հայագիր դպրութեան ուսումնագիտական կենտրոնները...*, էջ 593-596: **Ա. Մովսիսյան**, *Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության*, Երևան, 1958, էջ 257-259:

գիտացված կենտրոններ: Ծաղկում է երաժշտական մշակույթը: Հանդես են գալիս ետնորհալիական շրջանի երաժշտական արվեստի գիտակներ, ինչպես ներսես Լամբրոնացին, Գրիգոր Սկևռացին, Հակոբ Կլայեցին Կիլիկիայում, Հովհաննես Սարկավազը, որը գլխավորում էր Անիի դպրոցը և շնորհալի երաժիշտ էր, «ընտրեալ երաժիշտ» Թորոսը՝ հարբերդում²⁵, «ընտիր բեմբական և անյաղթ երաժիշտ» Հովհաննեսը՝ Վանում²⁶, Հովասափը՝ Կարինում²⁷, գանձասաց Մխիթար Այրիվանեցին²⁸, Եղիան՝ Հավուց թառում, որ կարգավորեց իր եկեղեցու պաշտամունքային արարողությունը²⁹, երաժիշտ-բանաստեղծ Վարդան Արևելցին, երաժիշտ-տեսաբան Հովհաննես Պլուզ Երզնկացին³⁰, Գրիգոր Տաթևացին, որ «ուսուցանէր երգիչ վարդապետաց գերաժշտութիւնս քաղցրալուր ձայնի եղանակաւ»³¹, Հաղարծինում հաշատուր Տարոնացին էր: Գերազանց տիրապետելով հոգևոր երաժշտության կիլիկյան դպրոցի ավանդներին՝ հաշատուրը վանքին կից հիմնադրում է երաժշտական մասնագիտացված դպրոց, ապահովում սովորելու պայմաններ՝ իր շուրջը համախմբելով բազմաթիվ աշակերտներին: հաշատուրի դպրոցը իր ուսուցման մակարդակով ու որակով չէր զիջում Կիլիկիայի և Արևելյան Հայաստանի նմանատիպ նշանավոր կենտրոններին: Իբրև շնորհաշատ երաժիշտ և գիտնական՝ նա շրջում է արևելքի երկրներում, հավաքում, մշակում և Հայաստան է բերում այնպիսի խազեր, որ մինչ այդ Հայաստանում չէին եղել: «Սա եբեր զխազն ի կողմանս յարևելից, զանմարմին եղանակսն ի մարմին ածել, զարարեալսն յիմաստնոց, որ ցայն ժամանակս չև էր սփռեալ ընդ աշխարհս: Սա եկեալ գրեաց և ուսոյց բազմաց և բազում հանգիստ եղև ի ծանր աշխատութեանցն», – գրում է Կիրակոս Գանձակեցին³²: Տարոնացին Կիլիկիայում խմբագրված խազագրված երգարանները բերում և տարածում է Հայաստանի հյուսիսարևելյան շրջաններում³³: Հաղարծինի դպրո-

²⁵ Բ. Սարգսեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, Բ. Ա. Վենետիկ, էջ 399-400:

²⁶ Ղ. Ալիշան, Հայագատում, Վենետիկ, 1901, էջ 442:

²⁷ Ն. Թահմիզյան, Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V-XV դարերում, Երևան, 1985, էջ 39:

²⁸ Ն. Թահմիզյան, «Մխիթար Այրիվանեցին և Ավագ հինգշաբթի օրվա «Սիրտ իմ սասանի» գանձ-երգը», Հայկական արվեստ, 1983, ք. 2 էջ 33-35:

²⁹ Կիրակոս Գանձակեցի, էջ 172:

³⁰ Շարական հոգևոր երգոց, Կ. Պոլիս, 1815, էջ 5:

³¹ Լ. Խաչիկյան, «Գլավորի համալսարանը և նրա սաների ատենախոսությունները», Աշխատություններ, Բ. Ա. Երևան, 2012, էջ 307:

³² Կիրակոս Գանձակեցի, էջ 211:

³³ Ն. Թահմիզյան, Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V-XV դարերում, էջ 278:

ցում Տարոնացին ուսուցանում էր երաժշտություն և իմաստասիրական գիտություններ, ուշագրություն էր դարձնում հատկապես երաժշտական արվեստի կատարելագործմանը, նոր մակարդակի ու որակի է հասցնում պաշտոններգության կատարումը, կանոնավորում է հայկական ձայնագրությունը, բարեփոխում է Պատարագը: Խաչատուր Տարոնացին գրել է նաև գանձեր ու շարականներ: Նրա ամենանշանավոր ստեղծագործությունը «Խորհուրդ խորին» զգեստավորման շարականի «յոյժ ծանր» տարբերակն է³⁴, որ առաջին անգամ նա կատարել է բարձրաստիճան հոգևորականների ներկայությամբ Լոռեում Զաքարե իշխանի հրամանով մատուցված բացօթյա պատարագի ժամանակ³⁵:

Հայտնի չէ, թե քանի տարի է կրոնավորել Խաչատուրը Հաղարծինի վանքում: Վիմագիր արձանագրությունները բազմիցս հիշում են նրան՝ իբրև միաբանության առաջնորդի, որի վանահայրության տարիներին վանքն ստացել է բազմաթիվ նվիրատվություններ, կատարվել են շինարարական աշխատանքներ, իսկ Գանձակեցին նրան համարում է ժամանակի երևելի երաժիշտներից մեկը, որը շատ մեծ ներդրում ունեցավ Հաղարծինի դպրոցի ճանաչման գործում: Խաչատուրին առաջին անգամ տեսնում ենք 1184 թվականին, երբ նա վերանորոգում է թշնամու ասպատակություններից ավերված վանքը, իսկ մահը պետք է լինի 1205-1206 թվականներին, որովհետև գավիթի մուտքի նվիրատվական մի արձանագրության մեջ 1206 թվականին վանքի առաջնորդ է հիշվում տեր Ստեփանոսը³⁶: Տարոնացին վախճանվել է Հաղարծինում և այնտեղ էլ թաղվել³⁷:

Հաղարծինի գրչության կենտրոնի վաղ շրջանի վերաբերյալ տեղեկությունները սահմանափակվում են Խաչատուր Տարոնացու մասին եղած տվյալներով և եկեղեցու որմերին պահպանված երկու արձանագրությամբ: Այս շրջանից որևէ ձեռագիր հուշարձան մեզ չի հասել, և չունենք գրավոր տեղեկություն այն մասին, որ Տարոնացու դպրոցում նաև ձեռագիր մատյաններ են օրինակվել: Բայց նկատի ունենալով այն, որ Խաչատուրը արևելքից բերված խազագրված երգարանները, կամ ինչպես Գանձակեցին է ասում, խազերը ջանա-

³⁴ Ձայնագրեալ երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի, Վաղարշապատ, 1878, էջ 192, Գ. Ավետի-
ֆեան, Բացատրութիւն շարականաց, Վենետիկ, 1786, էջ 584-585, Հ. Անասյան, Հայկական
մատենագիտություն, Բ. Ա. Երևան, 1959, էջ LXVIII:

³⁵ Մ. Զաւյան, Հայոց պատմություն, Բ. Գ, էջ 179-182:

³⁶ Գիվան, պրակ VI, էջ 24:

³⁷ Կիրակոս Գանձակեցի, էջ 211:

սիրաբար տարածում էր Հայաստանի հոգևոր կենտրոններում, պետք է հոգար նաև երաժշտածիսական այդ ժողովածուները բազմացնելու, ինչու ոչ խմբագրելու և լրացնելու մասին: Իսկ Հաղարծինի պարագայում դրանք առավել քան անհրաժեշտ էին: Այլ խնդիր է, որ այս կենտրոնից որևէ ձեռագիր մեզ չի հասել: Այն, որ ձեռագիր մատյանները անչափ արժևորվել են Հաղարծինում, երևում է գավիթի արևելյան պատի որմնասյուները միացնող կամարների վրա պահպանված նվիրատվական երկու արձանագրություններից, որոնց համաձայն, նվիրատուները նաև թանկարժեք ձեռագիր մատյաններ ու իրեր են նվիրել եկեղեցուն: Գրանցից մեկը 17 տողից բաղկացած մի արձանագրություն է, ըստ որի՝ Ներսես քահանան ոսկով ու արծաթով զարդարված մի Ավետարան է նվիրել Սբ. Գրիգոր եկեղեցուն. «Ես՝ Ներսես քահանայ ետու զաւագ Աւետարանս ի Սուրբ Գրիգորս զարդարել յոսկո եւ յարծաթո»³⁸: Երկրորդ արձանագրությունը 1217 թվականին թողել են Հովհաննես և Սարգիս քահանաները: Նրանք Սբ. Գրիգոր եկեղեցուն նվիրել են թանկարժեք մասնատուփ, շուրջառ և մեկ Ավետարան. «Ես՝ Յոհանէս եւ Սարգիս քահանայք տուաք ի Սուրբ Գրիգորս զանգին մարգարիտն զաւագ մասն, Ա. շուրջառ, եւ Ա. Աւետարան»³⁹:

Հաղարծինի վանքի երկրորդ բեղուն շրջանը Հովհաննես Արմանեցու առաջնորդության տարիներն էին: Նա 1248 թվականին սրբատաշ քարերով կառուցել է տալիս նշանավոր սեղանատունը: Սեղանատան երդիկին և հարավային մուտքին պահպանված արձանագրությունների համաձայն՝ այն կառուցել է ճարտարապետ Մինասը, աշխատանքներին մասնակցել են Գրիգորեսը և Մուսեսը, իսկ կառուցման ծախսերը հոգացել է Կուտա անունով մի հոգևորական. «Ի թվին ՌՂԷ (1248) յառաջնորդութեան Յովաննիսի վարդապետի ի շինութեան աստուածաշէն տանս եւ ես՝ Կուտաս, արարող սնունդ սրբոցս ետու աւգնութիւն տրապիագիրս»⁴⁰: Չունենք որևէ տեղեկություն այն մասին, որ Արմանեցու ժամանակ Հաղարծինի դպրոցը շարունակել է իր գործունեությունը: Սեղանատան կառուցումից կարճ ժամանակ անց Հովհաննես Արմանեցին տեղափոխվում է Գետիկավանք, դառնում վանքի առաջնորդ, իսկ 1256 թվականին եպիսկոպոս ձեռնադրվելուց հետո վերջնականապես հաստատվում է Հաղարատում: Այս մասին գրում է Կիրակոս Գանձակեցին. «Տէր Յովհաննէս Արմա-

³⁸ Գիվան, պրակ VI, էջ 41:

³⁹ Նույն տեղում, էջ 36:

⁴⁰ Նույն տեղում, էջ 58:

նեցին, որ և Հաղարծնին էր առաջնորդ, և ձեռնադրեցաւ եպիսկոպոս յեօթն հարիւր հինգ թուականին (1256): Սա շինեաց ի Հաղարծինն զսեղանատունն երևելի սրբատաշ վիմօք, և ապա գնաց ի մեծ աթոռն ի Հաղբատ»⁴¹:

Ի՞նչ ձեռագրական ժառանգություն ենք ստացել Հաղարծինից:

Հաղարծինում գրված և մեզ հասած միակ ձեռագիրը ԺԳ դարից է: Այն պահվում է Երուսաղեմի Սբ. Հակոբյանց վանքի մատենադարանում⁴²: Մատյանը երկաթագիր մագաղաթյա Ավետարան է, կաշեկազմ՝ վրան Հարություն և Խաչելություն արծաթյա քանդակներով: Հուսկի որդի Աստվածատուրը 1284 թվականին Ավետարանը օրինակել է Գրիգոր քահանայի խնդրանքով և գրչության տեղը նշել՝ Հաւարծին. «Ի թուականութեանս Հայոց ՉԼԳ (1284) գրեցաւ Աւետարանս Յոհանու... ի վանս Հաւարծին կոչեցեալ՝ ընդ հունանեաւ Սուրբ Գրիգորին մեր Լուսաւորչի, ի ձեռն անարժան ծառայի Տեառն եւ անպիտան քահանայ Աստուածատրոյ՝ Յուսկայ որդոյ, եւ գրեցաւ հրամանաւ եւ արդեամբք սուրբ եւ պատուական քահանայի Գրիգոր անուն կոչեցեալ»⁴³: Գրիչը հիշատակարանում խնդրում է հիշել Գրիգոր քահանային, նրա կնոջը՝ Տիրանցին, մորը՝ Մարիամին, ինչպես նաև Մխիթարին և Նահապետին՝ իբրև արժանավոր քահանաների, Փթութին, որ մատյանի գրության ժամանակ «վասն յիշատակի հոգոյ իւրոյ» օժանդակել է գրչին: Աստվածատուրը խնդրում է անմեղադրություն, որովհետև գրչության ու մանրանկարչական արվեստում չունի բավարար գիտելիքներ. «Խոշորութիւն գրոյս անմեղադիր լերուք, աղաչեմ, եւ եթէ սխալանս ինչ գտանէք, ուղղեցէք աննախանձաբար, գիտեք զի ամենայն մսեղի տկարանայ ի գործս իւր: Հասու մարդ որ տեսնուս, վասն նշանացս մի մեղադրել, զի ոչ ուսեալ էի, եւ ոչ այլ նկարել, այդ չափ կարացի»:

Ունենք ևս երկու ձեռագիր մատյան, որոնք թեև գրվել են այլ վայրերում, բայց կազմվել ու նկարագրվել են Հաղարծինում:

1296 թվականին Բարջանջ գյուղում Իշխան սարկավագի խնդրանքով Անանիա սարկավագի օրինակած Մաշտոցը 1429 թվականին Հաղարծինում

⁴¹ Կիրակոս Գանձակեցի, էջ 223, Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Բ, էջվիածին, 2001, էջ 1951:

⁴² Եղմ. 2905, թերթ՝ 298, նյութ՝ մագաղաթ, 16,5 x 12,5, գիր՝ երկաթագիր, տող՝ 17: Տե՛ս Ն. առք. Պողոսեան, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Թ, Երուսաղէմ, 1979, էջ 105: Ձեռագրի նկարագրությանն ավելի վաղ անդրադարձել է նաև Ա. Սյուրմեյանը: Տե՛ս Ա. Սյուրմեյան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանքի, հ. Ա, 1948, էջ 359:

⁴³ Ա. Մաքևոյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 560:

կազմել է Սարգիս սարկավազը և տեղը կոչել Աղրծին. «Ես՝ մեղայապարտ Սարգիս սարգաւակս, որ կազմեցի Մաշտոցս ի յիշատակ ինձ եւ ծնողաց... ի հովանեաւ Սուրբ Աստուածածին, որ կոչի յԱղրծին»⁴⁴: 1511 թվականին Մանուել քահանայի խնդրանքով Գրիգոր գրչի՝ Սոթա գյուղաքաղաքում օրինակած Ավետարանը 1627 թվականին Հաղարծինում նկարագարդել ու կազմել է Հովհաննես վարդապետը⁴⁵:

Մոնղոլ-թաթարական արշավանքներից հետո լքվում ու ամայանում է վանքը և կրկին վերահաստատվում միայն ժէ դարում: Վանական համալիրում կատարվում են նորոգչական աշխատանքներ: 1681 թվականին Սբ. Աստվածածին և Սբ. Գրիգոր եկեղեցիները վերանորոգվում են թիֆլիսեցի Չիթաղյանների ու փահրապատեցի հոջագյուլի որդիների միջոցներով, իսկ Գրիգորը և Դավիթը հոգում են գմբեթի ծախսերը⁴⁶: Հակոբ եպիսկոպոսի առաջնորդության տարիներին թիֆլիսեցի Հոգիչանի որդիները և թոռների միջոցներով էլ վերակառուցվում է Սբ. Ստեփանոս եկեղեցին⁴⁷:

ԺԹ դարում կրկին ամայանում է վանքը՝ վերածվում անասնագոմի ու ավազակների կացարանի⁴⁸: 1895 թվականին Կայսնո գավառի երբեմնի գեղեցկուհին վերջնականապես լքվում է և դադարում հոգևոր կենտրոն լինելուց:

Ամփոփենք՝ Հաղարծինի վանքը միջնադարյան Հայաստանի հոգևոր-մշակութային և ուսումնական նշանավոր կենտրոններից է, որի ծաղկումը եղավ ԺԲ-ԺԳ դարերի սահմանագծին՝ ռաբունապետ Խաչատուր Տարոնացու առաջնորդության տարիներին: Հաղարծինում Խաչատուրը ծավալում է շինարարական, հասարակական-քաղաքական, գիտական-մանկավարժական բուռն գործունեություն: Քաջածանոթ լինելով հոգևոր երաժշտության Կիլիկյան դպրոցի ավանդներին՝ նա արևելքից Հայաստան է բերում խազերը, վանքին կից բացում երաժշտական մասնագիտացված դպրոց, ապա տարածում խազերը Հայաստանի հյուսիսարևելյան շրջաններում: Հաղարծինի վանական համալիրի պատմության երկրորդ շրջանը կապվում է Հովհաննես Արմանեցու անվան հետ: Վերջինս 1254 թվականին տեղափոխվում է Գետիկավանք, իսկ 1256 թվականին եպիսկոպոս ձեռնադրվելուց հետո վերջնականապես հաս-

⁴⁴ ՄՄ 1028, թերթ՝ 176, նյութ՝ թուղթ, 16,2 x 12,2, գիր՝ բյուրգիր, տող՝ 18-19:

⁴⁵ ՄՄ 10162, թերթ՝ 105, նյութ՝ թուղթ, 16,4 x 12,5, գիր՝ բյուրգիր, տող՝ 18:

⁴⁶ Գիվան, պրակ VI, էջ 48:

⁴⁷ Նույն տեղում, էջ 55:

⁴⁸ Գ. արք. Սմբատեան, Տեղագրութիւն ..., էջ 185:

տատվում է Հաղբատում: Հաղարծինն ունեցավ իր վերելքի ու վայրէջքի շրջանները: Երբեմնի հռչակ ունեցող կենտրոնը մոնղոլ-թաթարական արշավանքներից հետո աստիճանաբար լքվում ու ամայանում է: Հաղարծինից մեզ հասած միակ ձեռագիր մատյանը 1284 թվականին Հուսիկ որդի Աստվածատուրի ձեռամբ գրված երկաթարգիր մագաղաթյա Ավետարան է, որը պահվում է Երուսաղեմի Սբ. Հակոբյանց մատենադարանում:

TAMARA MINASYAN

L'ÉCOLE MONASTIQUE DE HAGHARDZINE

Mots-clés : Khatchatour Taronatsi, neume (khazes), Hovhannes Armanétsi, Nor Guétik, la province de Kayen, Dzorapor, Guévork III, Haghardzine.

Le monastère de Haghardzine a été l'un des célèbres centres spirituels, culturels et pédagogiques de l'Arménie médiévale, dont l'épanouissement coïncide avec les années du prieuré de Khatchatour Taronatsi (1184-1205/1206). À Haghardzine, Khatchatour a déployé d'importantes activités de bâtiment, ainsi que publiques, politiques, scientifiques et pédagogiques. Étant bien au courant des traditions de l'école cilicienne de musique religieuse, il a fait venir des notes (khazes) d'Orient en Arménie, ouvert une école musicale professionnelle, puis il a propagé les khazes dans les régions du nord-est de l'Arménie. Taronatsi accordait une attention particulière au perfectionnement de l'art musical et il a fait accéder à un nouveau degré et une nouvelle qualité l'exécution de la Liturgie, il a introduit un ordre dans l'inscription de la musique arménienne et réformé la Messe. Son œuvre la plus connue est l'hymne Mystère profond pour l'habillement, qu'il a chanté pour la première fois en présence du haut Clergé à Loré, lors de la Messe servie en plein air sur l'ordre du prince Zakaré.

La deuxième période de l'histoire du complexe monastique de Haghardzine est liée au nom de Hovhannes Armanétsi. En 1254, ce dernier s'est installé au monastère de Guétikavank, puis en 1256, après avoir été ordonné évêque, il s'est définitivement établi à Haghardzine. Haghardzine a eu des périodes de haut et de bas. Ce centre jadis glorieux a été abandonné à l'époque des incursions des Tatares et des Mongols et s'est vidé. Un unique manuscrit nous est parvenu de Hagh-

dzine en tant que centre de manuscrits et d'enseignement: c'est un Évangile en parchemin écrit en 1284 en onciales par Astvatzatour, fils de Housik ; il est actuellement conservé à la bibliothèque du monastère Saint-Jacques de Jérusalem.

ТАМАРА МИНАСЯН

МОНАСТЫРСКАЯ ШКОЛА АГАРЦИНА

Ключевые слова: Хачатур Таронаци, невмы (хазы, армянские музыкальные знаки), Ованнес Арманеци, Нор Гетик, провинция Кайен, Дзорапор, Геворг III, Хагарцин.

Агарцинский монастырь – один из знаменитых духовно-культурных и учебных центров средневековой Армении, расцвет которого пришелся на годы предстоятельства Хачатура Таронаци (1184-1205/1206 гг.).

В Агарцине Хачатур развернул бурную строительную, общественно-политическую и научно-педагогическую деятельность. Будучи прекрасно знаком с традициями киликийской школы духовной музыки, он “с Востока” привез в Армению невмы (хазы), открыл профессиональную музыкальную школу, а затем распространил хазы в северно-восточных регионах Армении. Таронаци обращал особое внимание на усовершенствование музыкального искусства, поднял на новый уровень и придал новое качество исполнению литургии, упорядочил армянское нотное письмо, преобразил обедню. Его самое известное произведение – гимн на облачение священников перед литургией “Глубокое таинство”, которое он впервые исполнил в присутствии высокопоставленных духовных лиц в Лоре, во время обедни, которую отслужили на открытом воздухе по приказу князя Закаре.

Второй период истории монастырского комплекса Агардзин связан с именем Ованнеса Арманеци. Последний в 1254 г. перебрался в монастырь Гетикаванк, а в 1256 г., после возведения в сан епископа, окончательно обосновался в Агарцине. Агардзин имел свои периоды взлёта и падения. Некогда прославленный центр во время татаро-монгольских завоеваний был заброшен и опустел. Из Агардзина, как рукописного и учебного центра, до наших дней дошла одна-единственная рукопись – Евангелие на пергаменте, написанное в 1284 г. уставным письмом сыном Усика Аствацатуром, ныне хранящееся в монастыре Св. Якова в Иерусалиме.

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐՁՆԿԱՑԻՆ (XIII Դ.) ԼՈՒՄՆԻ
ԵՐԿՈՒ ՏԻՊԻ ԱՄԻՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Բանալի բառեր՝ ամիս, լուսնի փուլեր, սինոդիկ, սիդերիկ:

Տիեզերքի մասին գիտելիքների պատմությունը սկիզբ է առնում խորը անցյալից. հնագույն գիտական կենտրոններ էին Բաբելոնը, Նգիպտոսը, Հնդկաստանը: Ինչպես նշում են գիտության պատմության ուսումնասիրողները՝ «Հունաստանը դարձավ նրանց ընդհանուր ժառանգորդը, և այնտեղ առաջին անգամ հիմնվեց գիտության ռացիոնալ հիմքը»¹: Քրիստոնեության տարածումից հետո որոշ չափով մոռացության մատնված անտիկ գիտությունն աստիճանաբար սկսեց կիրառվել եկեղեցական հայրերի գաղափարախոսության մեջ: «Հռոմում գիտությունը քիչ ուշադրություն էր դարձվում, այն բացարձակապես բացակայում էր եվրոպական բարբարոսների թագավորություններում: Հիմնականում արաբների կողմից վերածնված հունական և հին արևելյան գիտական ավանդույթները վերադարձան Արևելք, որտեղից եկել էին: Եվ միայն այդտեղից գիտությունը և տեխնիկան եկան միջնադարյան եվրոպա»²:

Քիտնականները համոզված են, որ աստղագիտական պատկերացումները, աշխարհի հնագույն մոդելները «այն նյութն են, առանց որոնց հնարավոր չէին լինի ո՛չ Կոպեռնիկոսի, ո՛չ Կեպլերի բացահայտումները»³: Այդ գործում իր դերն է ունեցել նաև «արևելյան աստղագետների և մաթեմատիկոսների մեկնողական գործունեությունը... Հաճախ այդ մեկնությունները գրվում էին ուսուցողական նպատակներով, կազմվում էին դասագրքեր, որտեղ նյութը ներկայացվում էր ավելի պարզ, հասկանալի եղանակով»⁴:

¹ **Дм. Бернал**, *Наука в истории общества*, Москва, 1956, с. 9.

² Նույն տեղում:

³ **А. Т. Григорьян, М. М. Рожанская**, *Механика и астрономия на средневековом Востоке*, Москва, 1980, с. 3.

⁴ **А. Гурвич**, «Что есть время?», *Вопросы литературы*, № 11, 1968, с. 14.

Հայկական ձեռագրերում պահպանված բնագիտական գիտելիքների պատմությունը սկիզբ է առնում Ե դարից. Եզնիկ Կողբացի (Ե. դ.), Եղիշե (Ե. դ.), Դավիթ Անհաղթ (Զ. դ.), Անանիա Շիրակացի (Է. դ.), Հովհաննես Սարկավազ (ԺԱ. դ.):

Այդ շարքում իր արժանի տեղը կարող է գրավել Հովհաննես Պլուզը: ԺԳ. դարի ականավոր մտածող Հովհաննես Երզնկացին հայտնի է որպես բանաստեղծ, գիտնական, փիլիսոփա: Նրա ապրած ժամանակաշրջանը նշանավորվում է մոնղոլական ծանր տիրապետությամբ, աստիճանաբար քայքայվում էր տնտեսությունը, ինչի հետևանքով նաև ստեղծագործական մտքի առաջադիմությունը: Ինչպես գրում է ակադեմիկոս Լ. Խաչիկյանը, «Հայ ժողովուրդը ընկավ կուլտուրական ցածր աստիճանի վրա կանգնած քոչվոր մոնղոլների ծանր ու զարհուրելի տիրապետության տակ»⁵: Հայ գիտական միտքը պահպանվում էր Կիլիկյան հայկական թագավորության մշակութային կապերի շնորհիվ:

Հայաստանում այդ ժամանակ որոշակի վերելք էր ապրում Եկեղյաց գավառի Երզնկա քաղաքը: Մեծ Հայքի Եկեղյաց գավառը Երզնկա քաղաքով մոնղոլների տիրապետության տակ էր անցել դեռևս 1243 թվականից: Հաճախակի արշավանքների, կողոպուտի և ավերածության ենթարկվելով հանդերձ, ԺԳ-ԺԴ դարերի ընթացքում Երզնկան իր բնական և աշխարհագրական դիրքի շնորհիվ դարձել էր առևտրական կենտրոն:

«Գտնվելով Արևելքը Արևմտյան Եվրոպայի երկրների և Ռուսաստանի հարավային շրջանների հետ կապող կարևորագույն երկու ուղիների վրա, — գրում է Լ. Խաչիկյանը, — նա մասնակցում է միջազգային առևտրին... Պարբերաբար կրկնվող կործանարար երկրաշարժերն ու բազմաթիվ արշավանքներն ու ասպատակությունները, որին ենթարկվել է Երզնկան XIII-XV դդ. հասցրել են նրան ծանր վերքեր, սակայն ժամանակավորապես են միայն խանգարել քաղաքի նորմալ կյանքը: Քաղաքը... ողջ միջնադարի ընթացքում շարունակել է խաղալ կարևոր դեր փոքր Ասիայի տնտեսական ու կուլտուրական կյանքում»⁶:

⁵ Լ. Խաչիկյան, «Կոստանդին Բարձրբերդցու խրատական թուղթը, առավելած Արևելյան Հայաստան 1251 թվականին», *ԲՄ*, 1958, էջ 271:

⁶ Լ. Ս. Խաչիկյան, 1280 թ., «Երզնկայում կազմակերպված «Ներայրությունը», *Տեղեկագիր*, 1951, № 12, էջ 74:

Երզնկան հաղորդակից է դառնում Արևելքի և Արև մուտքի երկրների մտավոր կյանքին ևս: Այստեղ էին գալիս բազմաթիվ օտարերկրյա ճանապարհորդներ, մտավորականներ: Իրենց հերթին Կիլիկիա էին գնում շատ ու շատ երզնկացիներ և շփման մեջ մտնում թե՛ տեղի և թե՛ դրսից եկած ուսումնականների հետ: Զարգացման ավելի բարձր մակարդակ ունեցող երկրների հետ այսպիսի լայն փոխհարաբերությունների շնորհիվ Երզնկան դառնում է կրթական կենտրոն. «Երզնկան, որ վանքերով շրջապատված ԺԳ-ԺԳ դարուն փայլուն անուն մը ուներ, Հայաստանի մեջ ճեմարան մը կներկայացներ, կարծես ճիգ մը ուներ մրցելու Կիլիկիո հետ, որ ուսումնական վարդապետներուն կեդրոնավայրն էր», – գրում է Մ. Պոստոլյանը⁷:

ԺԳ դարի երկրորդ կեսին Հայաստանում լայն ծավալ էր ստացել դավանաբանական պայքարը կաթոլիկ եկեղեցու դեմ: Միարարական տրամադրությունների դեմ պայքարել է նաև Հովհաննես Երզնկացի Պուզը: Նա մերժում էր միարարներին՝ քաղկեդոնականներին դավանաբանական և ծիսական զիջումներ անելու համար: Նա եղել է ոչ միայն հայ եկեղեցու կանոնների սոսկ քարոզիչ, այլև շատ կանոնների հեղինակ:

Հայտնի է, որ մինչև V դարը բոլոր քրիստոնյաները Ա. Ծնունդը նշում էին հունվարի 6-ին: Հետագայում այլ ազգերը այն սկսեցին տոնել Արևի տոնին՝ դեկտեմբերի 25-ին, իսկ Հայտնությունը կամ Մկրտությունը՝ հունվարի 6-ին:

Ծննդյան և Մկրտության տոնի կատարման օրվա կապակցությամբ Հովհ. Երզնկացին գրում է. «Յետոյ ոմանք բաժանեցին ըստ այլ և այլ կարծեաց, ոմանք պատճառանօք, և այլք հերձուածողական անբարշտութեամբ, և ոմանք՝ տգիտական անուսումնութեամբ... Իսկ մենք, որք ճիշտ և ուղիղ հաւատով ունիմք զգաւանութիւնս սրբոց առաքելոցն և զմեծ և զբրիցս երանեալ Լուսաւորչին մերոյ սրբոյն Գրիգորի և ըստ տրււթեան նոցա մեզ, և ի միում աւուր կատարեմք տօնախմբութիւն աստուածային իրագործութեան ի մեզ և վասն մեր եղելոյ: Ըշմարիտ աստուած խոստովանիմք զնա, միև նոյն ծննդեամբ և մկրտութեամբն»⁸:

Հայ առաքելական եկեղեցին առաջնորդվում է Նիկիայի տիեզերաժողովի սկզբունքով, որի ժամանակ Անդրեաս տոմարագետը որոշեց եկեղե-

⁷ Հ. Մ. Պոստոլյան, Կոստանդին Երզնկացի ԺԳ դարու բանաստեղծ և իւր քերթվածները, Վենետիկ, 1905, էջ 10:

⁸ Ա. Մրապյան, Հովհաննես Երզնկացի, Երևան, 1958, էջ 23-24:

ցական տոների և հատկապես Քրիստոսի կյանքի հետ կապված կարևորագույն օրերի վերջնական, անփոփոխ հաշվարկը: Հայ եկեղեցու կողմից Ս. Ծնունդն ու Ս. Հայտնությունը նույն օրը տոնելու որոշումը առիթ է տվել մյուս եկեղեցիների դժգոհության: Ձեռագրերը հայտնում են, որ այդ պատճառով հայոց և հարևան եկեղեցիների միջև հակասությունները շարունակվել են երկար ժամանակ՝ երբեմն հասնելով ընդհարումների. «Յոյներու և հայերու միջև Ծննդեան տօնին առթիւ կատաղի վիճաբանություններ տեղի կունենային»⁹:

Հայ և հարևան եկեղեցիների տարաձայնությունները ուղղված էին ոչ միայն եկեղեցու ինքնուրույնությունը պահպանելու գործին. «Միջին դարերում հայ ժողովուրդը դավաբանական տեսակետից անշատվելով հույն եկեղեցուց, դրանով ոչ միայն ուզում էր պաշտպանել Հայ եկեղեցու ինքնուրույնությունը Հույն եկեղեցուց, այլև մասնավորապես իր քաղաքական ինքնուրույնությունը, որը շարունակ ոտնձգությունների էր ենթարկվում Բյուզանդիայի կողմից»¹⁰:

Հովհաննես Պլուզը լինելով հասարակական-եկեղեցական գործիչ, շատ է շրջագայել. եղել է Երուսաղեմում, Կիլիկիայում, Վրաստանում և բուն Հայաստանի տարբեր շրջաններում: Ամենուրեք հանդես էր գալիս զանազան բնույթի զեկուցումներով, ծավալում հասարակական գործունեություն:

«Ձափազանց հագեցած է նրա գործունեությունը հատկապես Կիլիկիայում, ուր նա եղել է մի քանի անգամ: Այստեղ նա արժանանում է արքայի և կաթողիկոսի ջերմ վերաբերմունքին ... Նա համոզված է, որ երկրի հասարակության զարգացման համար կարևորագույն պայմաններից է գիտության և լուսավորության տարածումը՝ պահանջելով իշխողներից հոգատար լինել ենթակաների ոչ միայն նյութական, այլև հոգևոր, բարոյական և կրթական կարիքների նկատմամբ»¹¹:

1281-1284 թթ. Հ. Երզնկացին լինում է Կիլիկիայի տարբեր քաղաքներում, աշխարհիկ ու հոգևոր զանազան տոնակատարությունների առիթով մի շարք փիլիսոփայական, աստվածաբանական ճառեր ու քարոզներ է կարդում: Նույն թվականներին... քերականություն է ավանդում եկեղեցու աշակերտներին և հետագայում գրում ոչ միայն գիտական, այլև բանասիրական խոշոր

⁹ Հ. Ն. Ակիմեան, Հ. Տեր-Պողոսեան, «Մատենագրական հետազոտություններ», ՀԱ, 1975, № 4-6, էջ 135, 136:

¹⁰ Հ. Բարթիկյան, «Նոր նյութեր Կիլիկիայի հայկական պետության և Բյուզանդիայի փոխհարաբերությունների մասին», Հայ-բյուզանդական հետազոտություններ, Երևան, 2002, էջ 25-30:

¹¹ 3. Երզնկացի, Մատենագրություն, Ա., Երևան, 2013, էջ 22:

արժեք ունեցող մի քերականական աշխատություն... որ հանրագումարն է իրենից առաջ եղած քերականական գործերի... Այն գործածության մեջ է եղել որպես քերականական գիտելիքների ուսուցման հիմնական ձեռնարկ»¹²:

Հովհաննես Պլուզը համեմատում է Արեգակի ու մտքի լույսն ու խավարը. «Առաել խաւար, քան զամենայն է՝ անգիտութեանն խաւար, յորմէ ծնանի մեղք եւ անհաւատութիւն եւ անյուսուցիւն եւ ամէնայն գործքն խաւարի.. Ջոր արիւնակ, արեգակն լոյս է զգալի աչաց, եւ պատուիրանք Տեառն լոյս են մտաց իմանալի աչաց: Եւ զոր արիւնակ, մարմնոյ աչք եւ լոյս արեգականն, յորժամ ընդ միմեանս բաղակցին, ապա զմեզ զգալի լուսոյս ընդունակ առնէ, եւ չիք հնար միոյն առանց միոյն ներգործել»¹³:

Նա ներկայացնում է անտիկ աշխարհի և քրիստոնեական փիլիսոփայության համեմատությունը. «Մեք՝ իբր հանկանակաւ վարեցեալ արիւնաւք, զառաքեալականն եղաք զբան ի մեջ աստուածաժողով խրախճանութեանս, գերազանց գոլով զաւրութեամբ, քան զամենայն բանահիւսիցն արուեստախաւսութեամբ: Եւ արդ եթե տաղքն հոմերական չափաւորեալքն քանակութեամբ, իմաստն Սոկրատայ եւ Դիոնիսի հաւաքումն, եւ որ ըստ Հոմերոսի գիրն եւ արարուածն, Թէոնայ պրակացն մակացութիւնն... եւ Ստագիրացոյն Արիստոտելի՝ Ստորոգութիւնք տասն, պղատոնավարժ համբակի եւ ավենահրահանգ իմաստակի, բաւական վարժարան եղել աշակերտելոցն իրեանց ի բնաւ խօսութիւն եւ հնգեակ ներածութիւնքն Պորփիրի, որ յԱղէքսանդրի է, եւ քառեակն Պիթագորի... սիրելի եղեւ ուսումնական համբակաց՝ պարապել ի նոսին եւ բնաւորապէս կրթել, ապա քանի՞ եւս առաել զքրիստոսաշարժ լեզուին Պաւլոսի, որ զմիտս Քրիստոսի ունելով բարբառէր զբնախաւսութիւնն մերոյ ստեղծմանս, լիապէս իմաստիւք ուսանիմք ի նմանէ»¹⁴:

Հեղինակի խորը աստվածաբանական գիտելիքներին և անտիկ աշխարհի հեղինակների աշխատանքներին ծանոթ լինելը վկայում են միջնադարյան գիտական մտքի նշանավոր այդ մտածողի դերի և նշանակության մասին հայ գիտական մտքի պատմության մեջ:

Հետաքրքիր է Հովհաննես Պլուզի մասին Ղ. Ալիշանի կարծիքը. «Նա վերջինն է յարժանաւոր մատենագիրս մեր, ԺԳ դարը կնքելով և ԺԴ բանալով»¹⁵:

¹² Ա. Մրապյան, Հովհաննես Երզնկացի, Երևան, 1958, էջ 29: Հմմտ. Յ. Երզնկացի (1230-1298), Հավաքումն մեկնութեան քերականի, աշխատասիրութեամբ Լ. Խաչերյանի, Լոս Անճեթըս, 1983:

¹³ Յ. Երզնկացի, Մատենագրութիւն, Ա., Երևան, 2013, էջ 112:

¹⁴ Նույն տեղում, էջ 125:

¹⁵ Ղ. Ալիշան, Հայապատում, հ. Ա, Վեներիկ, 1901, էջ 119:

Հովհաննես Պլուզի աշխատությունների մեծ մասը հրատարակված է: Նա գնահատվել է իբրև խոշոր մատենագիր, տաղերգու, քարոզիչ, հասարակական-քաղաքական գործիչ, իմաստասեր: Սակայն նա մինչ այժմ չի գնահատվել իբրև ժամանակի տիեզերագիտական ուսմունքների գիտակ և տարածող:

Խոսքը նրա «Յաղագս երկնային շարժմանց» աշխատության մասին է. «Իր բնույթով գիտական է «Յոհաննու վարդապետի Եզնկայեցույ, որ մականունն Պլուզ կոչի՝ Յաղագս երկնային շարժմանց՝ շարադրեալ յիմաստնոց բանից» տիեզերագիտական աշխատությունը... Երկնքի, երկրի, մոլորակների, բնական երևույթների մասին նրա մեկնությունները արվում են ժամանակի գիտության սովյալներով»¹⁶:

Երկը 1284 թ. Տփխիսում տեղի կաթողիկե եկեղեցում կարդացած տիեզերագիտական մեծ քարոզի գրի առնված տարբերակն է: Այդ աշխատության մասին ինքը՝ Հովհ. Երզնկացին գրում է. «Ի թուին ԶԳ. (1284) պատահեաց գալ կողմանս աստուծապահ թագաւորութեանս աշխարհից Վրաց ի հռչակաւոր և ի մեծ մայրաքաղաքն ի Տփխիս, Փայտակարան կոչեցեալ ի գիրս պատմողաց: Եւ հանդիպեցաւ խօսել մեզ բանս քարոզութեան ի դուռն եկեղեցւոյն... Եւ էր խօսեցեալ բանն երկնային շարժմանն, վասն որոյ ախորժելի եղև զուարթումիտ պատանւոյն Վաղթանկայ, որ էր որդի կրտսեր հռչակաւոր անուան պարոն Ումէկայ... Սա խնդրեաց ի մէնչ յաղագս երկնի և նորին շարժմանն, յոր հարկեալ յորդորեաց զտկարութիւնս մեր և մեծազգ եպիսկոպոս Տէր Յօհան յազնուական զարմից:

Եւ շարժեալ ի սիրոյ և ի յուսոյ խնդրողաց... և յիմաստախոհ արանց պարզեալ գրեցի համառօտ բանիւ և աշխարհական խօսիւք վասն դիւրաւ հասկանալի լինելոյ ընթերցողաց»¹⁷:

Այն չափածոյի է վերածվել Ապլոց իշխանի խնդրանքով, որի մասին նա գրում է. «Յոհանիսի բան յաղագս երկնի ի խնդրոյ իշխանի հայոց Ապլոց անուն»¹⁸:

Նշենք, որ չափածո շարադրանքով են պահպանվել տեսական խնդիրների բացատրությունները նաև հնդկական տրակտատներում¹⁹:

Հայտնի է, որ տերունական գլխավոր տոներից Ս. Հարությունը (Զատի-

¹⁶ Ա. Մրապյան, Հովհաննես Երզնկացի, Երևան, 1958, էջ 58:

¹⁷ Յ. Երզնկացի, Յաղագս երկնային շարժմանն, աշխատասիրությամբ Լ. Ստեփանյանի, Երևան, 2001, էջ 62:

¹⁸ Ա. Մրապյան, նշվ աշխ., էջ 93:

¹⁹ А. Т. Григорьян, М. М. Рожанская, նշվ. աշխ., էջ 137:

կը) կապված է գարնանամուտի գիշերահավասարի, դրանից հետո պատահող առաջին լիալուսնի ու դրան հաջորդող կիրակի օրվա հետ: Լուսնի փուլերի, հատկապես լիալուսնի հաշվարկը կատարվում էր մեծ ճշգրտությամբ, քանզի. «Այս ի յիշատակ Տեառն ի ժամանակի շարշարանացն եղաւ յաղագս ամենայն քրիստոնէից: Վասն զի շարշարանք նորա յետ հասարակածին դիպեսցի ի լրմանն լուսնի»²⁰:

Հայտնի է որ, երկար դարեր «Աստղագիտությունը հիմնականում լուծում էր տոմարական հարցեր՝ հատկապես Զատիկի ճշգրիտ հաշվարկի համար»²¹:

Լուսնի հետ կապված դիտումների մանրամասն հաշվումներ առկա են հայկական ձեռագրերում պահպանված «Պատճէն տումարի» տեսական և գործնական գիտելիքների դասագրքում: Այսպես. «Եթէ կամիցիս գիտե՛լ՝ եթէ Լուսինն յորում կենդանակերպի է», «Եթէ կամիցիս գիտե՛լ՝ եթէ Լուսինն քանի ժամ լոյս տայ ի գիշերի», «Շաւիղ այսպէս արա»²²:

Լուսինը Արեգակից հետո երկրորդ երկնային մարմինն է, որն իր տեսանելի մեծությամբ ու փայլով գրավում է մարդկանց ուշադրությունը: Նա էլ Արեգակի նման ծագում է և մայր մտնում: Պատահում է այնպես, որ նրա ծագումը կամ մայրամուտը տեղի է ունենում ցերեկը, և դա մեզ համար նկատելի չէ: Սեփական լույս չունի, երևում է Արեգակի ճառագայցների անդրադարձմամբ: Արեգակի և Երկրի նկատմամբ Լուսնի դիրքի փոփոխման պատճառով այն երևում է փուլերով:

Նրա շարժումները երկնակամարի վրա զարմացնում էին միջնադարյան աստղագետին իրենց անփոփոխ ճշգրիտ ընթացքով. «Շաւիղն ճանապարհ ասէ, այսինքն թէ ճանապարհ ընթացից լուսաւորացն այսպէս արա: Բայց զանազան են ճանապարհք... Ինչ ապա զմտաւ ածիցես զերկնային շաւղաց նրբութիւն, որք զոսկէորակ թելս մետաքսեայ յաւէտ նրբագոյն գոլ, զոր ընթանան լուսաւորքն: Եւ վասն այսպիսի նրբութեան անխոտոր ընթացիցս «շաւիղ» ասէ և ոչ ճանապարհ անուանէ»²³, – կարդում ենք ձեռագրերից մեկում:

Իր առանցքի և երկրի շուրջը Լուսինը պտտվում է միևնույն պարբերությամբ, որի պատճառով միշտ նույն երեսով է ուղղված դեպի երկիր: Երկրի

²⁰ ՄՄ 1973, 157ա:

²¹ Дж. Бернал, *Наука в истории общества*, Москва, 1956, с. 176.

²² Պատճէն տումարի (է-ժե դդ.), աշխատասիրությամբ Զ. Ա. էյնաթյանի, աշխատակցությամբ և խմբագրությամբ Գ. Տեր-Վարդանյանի, Երևան, 2002, էջ 257:

²³ ՄՄ 1114, ք. 92բ:

շուրջը նրա կատարվող շարժումը բարդ է, և ուսումնասիրությունը երկնային մեխանիկայի լուրջ խնդիրներից մեկն է:

Լուսնի փուլերի առաջացման պատճառը հայտնի էր վաղ ժամանակներից: Երկրի շուրջը պտտվելու հետևանքով նրա դիրքը Արեգակի նկատմամբ անընդհատ փոխվում է: Երբ Լուսինը գտնվում է Արեգակի և երկրի միջև, մեզ է ուղղվում նրա չլուսավորված մասը: Այդ փուլը կոչվում է նորալուսին: Երկու շաբաթ անց երկիր է ուղղվում նրա լուսավոր մասը՝ լիալուսինը: Այնուհետև Լուսնի սկավառակը հետզհետե մաշվում է: Լուսնի իրար հաջորդող երկու միանման փուլերի միջև ընկած ժամանակամիջոցը կոչվում է «սինոդական ամիս», այն հավասար է 29,5 օրվա:

Փաստորեն՝ «ամիս» ասելով հասկանում էին միայն սինոդականը: «Ամիս» բառի բացատրությունը մեկնություններում այսպիսին է. «Տեսանելով առաջնոցն զլուսինն լցեալ և մաշեալ, իմացան զանցաւորութիւն կենաց իւրեանց և ասացին՝ «իմ ես պատկեր»²⁴:

Ամսվա ընթացքում աճելով և նվազելով՝ Լուսինը հիշեցնում էր մարդու կյանքը: Այդ պատճառով, — գրում են մեկնիչները, «իմ ես պատկեր արտահայտությունը ստացավ «ամիս» ձևը, քանի որ «ի ծնանիլ լուսոյդ... ամիսն սկսանի և ի պակասիլ լուսոյդ ամիսն... անյայտի, այսպէս և կեանք մեր երևի և ի վճար մահուան անյայտի և ծածկի»²⁵:

Գոյություն ունի նաև Լուսնի «սիդերիկ» (աստղային) ամիս²⁶: Եթե մենք նշենք Լուսնի դիրքը աստղերի նկատմամբ և սպասենք, մինչև նա մի պտույտ կատարի և վերադառնա այդ նույն դիրքին, դրա համար կպահանջվի 27 օր: Նրա պտտման այդ պարբերությունը ընդունված է անվանել աստղային կամ սիդերիկ ամիս: Նրա տևողությունն է 27, 32 օր, այն կարող է տատանվել 6 ժամի սահմաններում:

Սինոդիկ և սիդերիկ ամիսների տարբերությունը՝ մոտավորապես 2 օր, առաջանում է այն պատճառով, որ մի դեպքում գործ ունենք Լուսնի՝ աստղերի նկատմամբ, մյուս դեպքում շարժվող Արեգակի նկատմամբ շարժումով:

²⁴ ՄՄ 2017, ք. 412ա, Անանիա Շիրակացի, Տիեզերագիտություն և տոմար, Երևան, 1940, էջ 75, Ա. Աբրահամյան, «Մամվել Անեցու տոմարական և տիեզերագիտական աշխատությունը», էջմիածին, թիվ 1, 1952, էջ 35:

²⁵ ՄՄ 1114, ք. 42ա:

²⁶ Կա նաև Լուսնի «դրակոնական ամիս»՝ պայմանավորված նրա ուղեծրի և Արեգակի ուղեծրի հատման կետերի ժամանակային տևողությամբ, որի հետ կապված է արեգակնային և լուսնային խավարումների պարբերականությունը:

Լուսնի մասին Հովհաննես Երզնկացին այսպես է գրում.

«Սա Սելինոս անուն կոչի ըստ Յունական
Այլ և Ղամար՝ նա անուանի ըստ Տաճկական,
Իսկ մեք՝ Լուսին ասեմք սմա ըստ Հայկական...
Են աստիճանք գնացից նորա՝ յոյժ նրբական,
Զի նա տեղեալ մերձ է յերկիրս և մօտական:
Ուստի յաւուրս երկուս և կէս ի յընթացման
Զկենդանակերպըն կատարէ և զաստիճան...
Ի քսան և ինն օր և կիսոյն աւարտական,
Դարձեալ նորէ զիւր հնութիւնըն մանկական»²⁷:

Խոսքը սինոդիկ ամսվա մասին է, երբ Լուսինը յուրաքանչյուր կենդանակերպում երկու և կես օր մնալով ավարտում է իր 29,5 օրական սինոդական ամիսը:

Նույն տեղում նա ունկնդիրներին պատմում է նաև սիդերիկ ամսվա մասին.

«Ի քսան և եօթն թիւ աւուրցըն կատարման,
Դարձեալ ի նոյն գայ վերստին՝ տեղ ծննդեան»:

Սիդերիկ ամսվա մասին հիշատակելու փաստով Հովհաննես Երզնկացին առանձնանում է իրենից առաջ եղած հայ միջնադարյան մտածողներից, որոնք Լուսնի հետ կապված խնդիրներին անդրադառնալիս ներկայացնում էին միայն սինոդական ամիսը:

Հետաքրքիր է Հովհաննես Պլուզի մասին Միքայել Նալբանդյանի կարծիքը. «Յովհանն Երզնկացի Պլուզ, որ մանաւանդ յայտնի ի հանդիսի հայկական դպրութեան մեկնութեամբ քերականութեան և աստղաբաշխական գիտութեամբ, զորմէ գրեաց ի խնդրոց իշխանին Վրաց Վախթանկայ և եպիսկոպոսին Տփիսիսայ յամին 1284: Ի սմա դադարեալ տեսանեմք զոճ հայախօսութեան խորենացույ և եղիշեի»²⁸:

²⁷ Յովհաննու վարդապետ Երզնկացու Զարդր երկնից առ Ապուղ իշխան, ի Կալկաթա, ի Արարատեան ընկերութեան, 1846, էջ 23:

²⁸ Մ. Նալբանդյան, Յաղագս հայկական մատենագրութեան, Երկերի լրակատար ժողովածու, հ. 2, Երևան, 1947, էջ 38:

JULIETTA EYNATYAN

HOVHANNES YERZNKATS'I (13TH CENTURY)
ON TWO TYPES OF LUNAR MONTHS

Key words: church, middle ages, phases of the moon, synodic month, sidereal month.

Hovhannes Yerznkats'i Pluz, an outstanding author of the 13th century, is known as poet, scholar, public and political figure. His literary heritage is in general studied but his cosmographic work still remains unexplored. In this article, we analyze his work entitled *On the Celestial Movements*, which is a written version of his extensive cosmographic sermon delivered in 1284 in the Cathedral of Tiflis. Of various topics discussed in this work, we have focused on focuses on the information about synodic and sidereal lunar months. Their difference is that in one case we deal with the movement of the Moon with respect to the moving Sun, and in the other, with respect to the stars. Unlike other thinkers who presented only the synodic month and followed the sequence of the phases of the Moon (since the day of Easter was determined according to the exact calculation of the synodic month), Hovhannes Yerznkats'i also speaks about the sidereal month which had no relation to the feast calculations.

Джулиетта Эйнатян

ОВАННЕС ЕРЗНКАЦИ (XIII ВЕК)
О ДВУХ ТИПАХ ЛУННЫХ МЕСЯЦЕВ

Ключевые слова: месяц, фазы луны, синодический месяц, сидерический месяц.

Выдающийся автор XIII века Ованнес Ерзнкаци Плуз известен как поэт, ученый, общественный и политический деятель. Его труды в целом изучены, однако его космографическое сочинение до сих пор остаётся неисследованным.

Речь идёт о труде “О небесных движениях”, записанном варианте его пространной космографической речи, прочитанной в 1284 г. в кафедральном соборе Тифлиса. В данной статье из различных вопросов, обсуждаемых в речи, мы выделили сведения о синодических и сидерических месяцах Луны. Их разница состоит в том, что в одном случае мы имеем дело с движением Луны по отношению к движущемуся Солнцу, а в другом – по отношению к звёздам. В отличие от других мыслителей, которые представляли только синодический месяц и следили за последовательностью фаз Луны (так как по точному расчёту синодического месяца определялся день Пасхи), Ованнес Ерзнкаци говорит также о существовании сидерического месяца, который не имел отношения к праздничным расчётам.

**ԳԱՆՁԱՍԱՐԻ 1714 Թ. «ԳԱՂՏՆԻ ԺՈՂՈՎԻ»
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՎԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ**

Բանալի բառեր՝ Ապրես Բեկնազարյանց, Մակար Բարխուտարյանց, Բաֆֆի, «Գաղտնիք Ղարաբաղի», Արցախի մելիքություններ, Գանձասար, «գաղտնի ժողով», արձանագրություններ, գրական կեղծիք, անվավեր փաստաթուղթ:

1886 թ. Ս. Պետերբուրգում Ապրես Բեկնազարյանցի անունով լույս է տեսնում «Գաղտնիք Ղարաբաղի» խորհրդավոր վերտառությունմբ մի աշխատություն¹, որի հեղինակն իրականում Մակար եպս. Բարխուտարյանցն էր: Շատ շուտով այդ գրքում տեղ գտած կոպիտ փաստական սխալների և հորինվածքների խիստ քննադատությունմբ հանդես եկան Բաֆֆին² ու Լեոն³, որոնք համոզիչ կերպով ապացուցեցին, որ «Գաղտնիք» կոչվածը ոչ այլ ինչ է, եթե ոչ գրական կեղծիք: Այդ առիթով Բաֆֆին գրում էր. «Գաղտնիք»-ը ոչ միայն գրականական որևէ արժեք չունի, այլ մինչև անգամ վնասակար է: Անհմուտ ընթերցողին նա կարող է մոլորեցնել, և սուտը, կեղծը, անհավատալի ճշմարտի տեղ մատակարարել: Այդ գրքի հորինվածքի մեջ այնքան չի պիտի զարմանալ հեղինակի տգիտության վրա, որքան նրա անպատկառ հանդգնության վրա, որով նա վստահություն է ունեցել կարծելու, թե յուր աններելի վարմունքը գաղտնի կմնա «Գաղտնիք»-ի մեջ»⁴:

Արդեն ուղիղ 130 տարի է անցել «Գաղտնիք Ղարաբաղի» աշխատության հրատարակումից, սակայն այդ երկում տեղ գտած մի շարք գրական

¹ Ա. Բեկնազարեանց Գաղտնիք Ղարաբաղի, Ս. Պետերբուրգ, 1886:

² Բաֆֆի, Գաղտնիք Ղարաբաղի, Երկերի ժողովածու 12 հատորով, հ. 12, Երևան, 1999, էջ 17-133:

³ Լեո, Վէ՞պ, թէ պատմություն (Ղարաբաղի անցեալը Ապրես Բեկնազարեանցի գրչի տակ), Շուշի, 1887:

⁴ Բաֆֆի, նշվ. աշխ., էջ 133:

հնարքներ այսօր էլ շարունակում են գայթակղության քար հանդիսանալ որոշ հետազոտողների համար: Ասվածն առաջին հերթին վերաբերում է միայն «Գաղտնիք»-ի միջոցով մեզ հասած Գանձասարի 1714 թ. «գաղտնի ժողովի» արձանագրություններին, որոնց վավերականության քննությանն էլ նվիրված է սույն հետազոտությունը:

Նախքան մեր բուն քննությանն անցնելը, հարկ ենք համարում այդ արձանագրությունները բերել ամբողջությամբ.

«Ժողովն Աղուանից (Գանձասարի – Ա. Մ.) Եսայի կաթողիկոսի նախագահութեամբ որոշում և ստորագրում է հետևեալ կանոնները:

Ա. Աղուանից կաթողիկոսն կընտրուի ժողովրդեան ազատ իրաւունքով և կը հաստատուի Ս. Էջմիածնի կաթողիկոսի կոնդակով:

Բ. Աղուանից կաթողիկոսն, ըստ դարաւոր սովորութեան, պէտք է հպատակի Էջմիածնի կամքին, հայութեան միութեան կապը պահպանելու համար:

Գ. Եթէ Զալալեան տոհմի եպիսկոպոսներից և ազգից չգտնուի արժանաւորագոյն կաթողիկոսացու, դրսից ընտրելու է:

Դ. Որդիաբար հնազանդիլ Աղուանից կաթողիկոսին և սիրով ընդունիլ նորա հոգևոր կարգադրութիւնները:

Ե. Իւրաքանչիւր մեկիքի գաւառի վիճակաւոր եպիսկոպոսն կամ վարդապետն կընտրուի տեղական ժողովրդից և մեկիքից, և սոցա վկայաթղթով և հանրագրութեամբ կներկայացուի Աղուանից կաթողիկոսին:

Զ. Ամեն վիճակաւոր եպիսկոպոս իրաւունք ունի ձեռնամուխ լինիլ միայն իւր վիճակի կարգադրութեան և ո՛չ այլոց թէ՛ ձեռնադրութեամբ և թէ՛ որևիցէ գործերով:

Է. Եթէ ամեն գաւառում հարկաւորուին վարդապետ, քահանայ, սարկաւազ և դպիր՝ վիճակաւոր եպիսկոպոսներն նախ պարտաւոր են գրով կանխաւ զեկուցանել Աղուանից կաթողիկոսին և ապա ձեռնադրել նորա հրամանաւ:

Ը. Ամեն եպիսկոպոս պէտք է հոգալ իւր վիճակի և իւր վանքի լուսաւորութեան և որչափ կարելի է ձեռնադրել ուսեալները և ո՛չ թէ տգէտները:

Թ. Վանահայրերի ընտրութիւնն կախուած է միաբանութիւններից և Աղուանից կաթողիկոսին հաստատութիւնից:

Ժ. Յանցաւոր եպիսկոպոսների պատիժներն կախուած են կաթողիկոսից. իսկ միաբան վարդապետաց, սարկաւազաց և դպրացն՝ վանահայր եպիսկոպոսներից, և քահանաներինն՝ վիճակաւոր եպիսկոպոսից, բայց այս ամենն զգուշաւոր քննութիւններից վերջն:

ԺԱ. Իւրաքանչիւր մելիք պարտաւոր է գահերէջ ճանաչել Ջալալեան մելիքները և թէ՛ յայտնի և թէ՛ գաղտնի ժողովատեղի ընդունիլ Գանձասարի վանքը: Ամեն զօրավար հնազանդելու է իւր մելիքի հրամանին, ամեն գնդապետ իւր զօրավարին և ամեն զօրական իւր գնդապետին ևն:

ԺԲ. Իւրաքանչիւր մելիք պարտաւորուած կը լինի պահել Վ. (3000) կանոնաւոր զօրք, փորձառու զօրավար, հաւատարիմ սուրհանդակներ և պատրաստութիւններ:

ԺԳ. Իւրաքանչիւր մելիք պարտաւոր է արթուն հսկել իւր սահմաններին, և եթէ վտանգ կը նշմարէ թշնամեաց կողմից, անմիջապէս պէտք է հաղորդէ միւսներին:

ԺԴ. Իւրաքանչիւր մելիք, եթէ կը յանդգնի իւր գաւառի որոշեալ սահմաններից դուրս գալ և ուրիշ մելիքների իրաւունքը բռնի յափշտակել՝ կը պատժուի միւսների (մելիքների) ժողովով որոշած պատժով և ԺԹ. (10000) թուման տուգանք կը տուժէ մելիքաց (ընդհանուր) գանձարանին և կտուժէ առանձին՝ վնասուած մելիքի վնասը:

ԺԵ. Ամեն ոք (մելիք) պարտաւոր է ամրապնդած պահպանել ներքին սիրոյ և միաբանութեան կապը, միաձոյլ զօրութեամբ արտաքնոց դէմ կռուելու:

ԺԶ. Մեծ կամ փոքր պատերազմներն կը մղուին բոլոր մելիքների, զօրավարների և գնդապետների որոշելուց յետոյ: Անակնկալ կամ յանկարծակի դէպքերն բացառութիւն կը լինին:

ԺԷ. Հայրենեաց և կրօնի դէմ դաւաճանութիւն և ծանր յանցանք գործողն, թէ՛ մելիք լինի, թէ՛ զինուորական և թէ՛ ժողովրդական, կը պատժուի կրօնական և մելիքական խառն ժողովոյ որոշած պատժով:

ԺԸ. Ո՛չ այլազգի իշխանաւորաց հետ խնամութիւն հաստատել և ո՛չ երկպառակութեամբ նոցա յարիլ:

ԺԹ. Եթէ օժանդակութեան համար զօրեղ տէրութեան դիմելու հարկն զգալի լինի՝ կրօնական և աշխարհական խառն ժողովով որոշելու է առաջարկելի պայմանները և պահանջները:

Ի. Իւրաքանչիւր մելիք պարտաւոր է Հայրենեաց ընդհանուր շահերը իւր գաւառի շահերից վեր դասել և իւր գաւառի շահերը իւր անձնական շահերից և օգուտներից:

ԻԱ. Մելիքներից ով ոք կը յանդգնի, իւր օրինաւոր ամուսնոյն վերայ,

ուրիշ ապօրինի կին պահել, հասարակութեան տալ վատ օրինակ և գայթակղութիւն և թշնամանել եկեղեցւոյ օրէնքը՝ այնպիսին անխնայ կը պատժուի արդար վրէժխնդրութեամբ:

ԻՔ. Ամեն մելիք պարտաւոր է գտնուիլ իւր զօրաց գլխին պատերազմի ժամանակ և խրախուսել քաջասրտութեամբ իւր զօրքը և զօրավարը: Բացառութիւն է հիւանդութեան բնաւոր պատճառն:

ԻԳ. Մեզանից ով ոք կը յանդգնի սոյն կանոններին հակառակը գործել, Հայրենեաց և կրօնի թշնամու կողմն անցնիլ, նորա հետ միաբանելով Հայրենեաց հանգստութիւնը վրդովել, հայը հայի դէմ թշնամի յարուցանել և արինհեղութիւն պատճառել՝ այնպիսին մահուան պատժով կը պատժուի, միւս մելիքներն կը գրաւեն նորա բերդը և ինչքը ցնոր տնօրէնութիւն:

Ամենքն ստորագրում են բնագիրը և արտագրուած հինգ օրինակները, յորոց մի մի օրինակ առնում, տաճարի ս. բեմը համբուրում և հեռանում են»⁵:

Եթէ հավատալու լինենք «Գաղտնիք Ղարաբաղի» աշխատութեանը, Գանձասարի 1714 թ. ժողովին մասնակցում էին «Խաչենի Մելիք-Գրիգոր Ջալալեան, Կիւլստանի Մելիք-Յովսէփ Մելիք-Աբովեանց, Վարանդի Մելիք-Յիւսէփ Ա. Ջրաբերդի Մելիք-Եսայի Մելիք-Հայկազեանց և Դիզակի Մելիք-Աւան Բ»⁶:

Նախ և առաջ պարզենք, թե իրոք 1714 թ. մասնակիցների նման կազմով ժողով կարո՞ղ էր գումարվել: Քննութիւնը սկսենք Վարանդայի Մելիք-Հուսէփին Մելիք-Շահնազարյանից, որի իշխանութեան գալու տարեթիվն այժմ ստույգ հայտնի է: Մատենադարանում պահվում է Սեֆյան շահ Թահմասպ II-ի (1722–1732) հրամանագիրը, որով Վարանդայի մելիքի պաշտոնում նշանակում է Հուսէփին Մելիք-Շահնազարյանին: Անհրաժեշտ ենք համարում բերել այդ հրովարտակի XIX դարում կազմված և մեզ հասած պատճենի թարգմանութիւնը.

«Խոզի տարվա չորրորդ ամսի սկզբից Վարանդա մահալի մելիքութիւնը շնորհեցինք բարձրաստիճան Մելիք Մոհամմադ Հուսէփինին, որպէսզի ինչպես հարկն է այդ գործը ստանձնելով, նրա պարտականութիւնները առանց թերացման կատարի, ռայաթների հետ, որոնք ամենազոր Արարչի որոնումների արժեքավոր ձեռքբերումն են, լավ վերաբերվի՝ այնպես անելով, որպէսզի բոլորը նրա բարի արարքներից գոհ ու շնորհակալ լինեն և բարի օրհնանք հղեն սրբազնագոյն էութեանը: Վերոհիշյալ մահալի քաղախուդաներն ու

⁵ Ա. Բէկնազարեանց, նշվ. աշխ., էջ 211-214:

⁶ Նույն տեղում, էջ 210-211:

ուսուցիչները հիշյալ բարձրաստիճան պաշտոնյային պետք է այնտեղի մեկիք ճանաչեն, նրա օրինավոր խոսքին ու կամքին, որ ուղղված կլինի մահալի շենացմանը և դիվանի ունեցվածքի հարստացմանը, չհակառակվեն»⁷:

Հրովարտակը գրվել է հիջրայի 1142 թ. զի հեջջե ամսին⁸, ինչը համապատասխանում է Փրկչական 1730 թ. հունիսի 17-ից մինչև հուլիսի 17-ը ընկած ժամանակահատվածին: Ասվածից ինքնըստինքյան պարզ է դառնում, որ 1730 թ. Վարանդայում իշխանություն եկած Մելիք-Հուսեին Մելիք-Շահնազարյանը չէր կարող իր ստորագրությունը դնել 1714 թ. կազմված արձանագրությունների տակ:

Առավել անհավանական է այդ ժողովին «Կիլիստանի Մելիք-Յովսէփ Մելիք-Աբովեանցի» մասնակցության հարցը: Այստեղ խոսքն, անտարակո՛ւյս, Գյուլիստանի Մելիք-Աբովի որդի Մելիք-Հովսեփ Մելիք-Բեգլարյանի մասին է: Նրա հայրը՝ Մելիք-Աբով Բ-ը, հայտնի էր նաև Կաղ Աբով մականունով, քանի որ մի ոտքը վնասվել էր հրացանի գնդակից:

Աբովի կնիքը դրված է Արցախի մելիքների կողմից 1725 թ. ռուսական արքունիքին հղված երկու խնդրագրերի տակ, իսկ կնիքի վրա հատակորեն ընթերցվում է «Ք[րիստոս]ի ծ[ա]ռ[այ] Ապով» գրությունը⁹: Մեզ է հասել նաև ռուսաց հրամանատարության մոտ ուղարկված սընախների ներկայացուցիչ Քրիստափորի՝ 1726 թ. նոյեմբերի 25-ին Արցախի մելիքներին, յուզբաշիններին և ողջ բնակչությանն ուղղված նամակը, որի մեջ ևս հիշատակվում է Աբովի անունը¹⁰: Կաղ Աբովը վախճանվել է 1728 թ.¹¹:

Նրան հաջորդել է եղբայրը՝ Մելիք-Թամրազը, քանի որ Մելիք-Աբովի միակ որդին՝ Հովսեփը, դեռևս անչափահաս էր: Մելիք-Թամրազը ցանկանում էր իր պատանի եղբորորդուն զրկել և՛ հայրական ժառանգությունից, և՛ իշխանությունից, որը մելիքների սովորության համաձայն, պետք է անցներ Հովսեփին, երբ վերջինս չափահաս դառնար: Ի վերջո, հորեղբոր ու եղբորորդու

⁷ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), Կաթողիկոսական դիվան, քրթ. 2բ, վավ. 173: Վավերագրի հակառակ կողմում ռուսերենով մակագրված է. «копия от грамоты Тахмасп Шаха»: Հրատ. տե՛ս Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտակներ, պր. III, կազմեց Ք. Կոստիկյանը, Երևան, 2005, էջ 184:

⁸ Նույն տեղում:

⁹ Армяно-русские отношения в первой трети XVIII века, т. II, ч. II, Ереван, 1967, с. 235, 251.

¹⁰ Там же, с. 287.

¹¹ Բաճճի, Խամսայի մելիքությունները, Երևանի ժողովածու 12 հատորով, հ. 9, Երևան, 1987, էջ 423:

հակասությունը սրվում է, և Հովսեփի ջոկատը, գրավելով Թամրազի ամրոցը, նրան կախում է մի շինարի ծառից: Ըստ ՄՄ 7816 ձեռագրի վերջում տեղ գտած ժամանակագրության՝ Մելիք-Թամրազը սպանվել է 1750 թ. «մայիս ամսունն»¹², որից հետո նոր միայն իշխանությունն անցել է Մելիք-Հովսեփին: Վերջինիս 1714 թվականից բաժանում է գրեթե չորս տասնամյակ:

Մելիք-Հովսեփը երկար է կառավարել Գյուլիստանը և իր մահկանացուն կնքել է 1770-ական թվականների վերջերին¹³: Հստակ է, որ 1780 թ. վերջերին Մելիք-Հովսեփն արդեն վախճանված էր, քանի որ մեզ է հասել Դուկաս Կարնեցի կաթողիկոսի՝ նույն թվականի դեկտեմբերի 23-ով թվագրված և հանգուցյալի ավագ որդի Մելիք-Բեգլարին ուղարկված մխիթարական թղթի համառոտագրությունը: Այդ գրությունից տեղեկանում ենք, որ Դուկաս կաթողիկոսը Մելիք-Բեգլարին «վասն մահուան հօրն ևս զմխիթարութիւնս գրեաց և պատուէր՝ արի լինիլ յամենայն գործս բարութեան՝ լինելով նախանձախնդիր հայրենի օրինաց և աւանդութեանց սրբոց, և ժառանգել զանուն բարեպաշտութեան»¹⁴: Այս խորապատկերում շատ ավելի հավանական է կարծել, որ 1714 թ. Մելիք-Հովսեփը տակավին ծնված չէր, քան այն, որ նա այդ թվականին կարող էր իր ստորագրությունը դնել որևէ փաստաթղթի տակ:

Այժմ քննենք այդ ժողովին Դիզակի Մելիք-Եգանի մասնակցության հնարավորության հարցը, որը «Գաղտնիք»-ում ներկայացված է որպես «Մելիք-Աւան Բ»: Նախ և առաջ հարկ է նշել, որ Մելիք-Եգանը եղել է առաջինը և միակը իր տոհմում¹⁵ ու իր անվանը կից երբեք չի կրել «Բ» (երկրորդ) թվահամարը: Անցողակի նկատենք նաև, որ Արցախի մելիքներն իրենց անունների համարակալում չեն գործածել, այլ դա հետագա շրջանի ուսումնասիրողների գործն է:

Մելիք-Եգանի՝ Տող գյուղում գտնվող ընդունարանի մուտքի վիմագիր արձանագրության միջոցով հնարավոր է պարզել նրա իշխանության գալու մոտավոր թվականը: Այդ վիմագրում մասնավորապես կարդում ենք. «Այսպես

¹² ՄՄ 7816, ք. 20բ, նաև՝ Մանր ժամանակագրություններ XIII–XVIII դդ., Բ. I, կազմեց՝ Վ. Հակոբյան, Երևան, 1951, էջ 396:

¹³ Ա. Մաղալյան, Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII–XIX դդ., Երևան, 2007, էջ 88–89:

¹⁴ Գիվան հայոց պատմության, նոր շարք, գիրք I, Դուկաս Կարնեցի, Բ. Ա, աշխատասիրությամբ՝ Վ. Գրիգորյանի, Երևան, 1984, էջ 174:

¹⁵ Ա. Մաղալյան, նշվ. աշխ., ներդիր՝ Մելիք-Եգանյանների տոհմաձուրը:

է, որ ես Ղուկաս վարդապետի որդիս, որ իմ անունն է Մելիք-Եգան, նախապես ժողովուրդը հավաքվեց և ինձ քյոխվա [տանուտեր] կարգեց: Դրանից հետո, երբ երկիրը խառնակություն մատնվեց, շահ Սուլթան-Հուսեյնի որդի շահ Թահմասպ թագավորին որոշ ծառայություն մատուցեցի, և նա բերեց սրանց [վրա] ինձ մելիքություն տվեց...»¹⁶: Այս տողերից պարզվում է, որ նախքան Դիզակ գավառի մելիք դառնալը Եգանը եղել է Տող գյուղի տանուտերը:

Հայաստանի ազգային արխիվում պահվում է ՌՃԿԶ (1717) թվականը կրող մի առուծախի պայմանագիր, ըստ որի՝ Ջիլավանց Տիհու տղա Չալին իր ջրաղացը վաճառում է իր հորեղբայր «Սարքիսայ տղա Իսուն»¹⁷: Այդ պայմանագրի վրա դրված է Եգանի կնիքը՝ «Եկան քոխան վկ.» մակագրությամբ: Այսպիսով, այս փաստաթղթի շնորհիվ պարզ է դառնում, որ 1717 թ. Եգանը տակավին Տող գյուղի տանուտերն էր:

Մելիք-Եգանի ընդունարանի մուտքի վերոհիշյալ արձանագրությունից երևում է, որ նրա մելիքական իրավունքները հաստատվել են Սեֆյան շահ Թահմասպ II-ի կողմից: Ըստ նշանավոր պատմաբան Հ. Փափազյանի՝ դա կարող էր տեղի ունենալ 1724–1725 թթ., երբ վերջինս աֆղաններից հալածված անցել էր Ատրպատական¹⁸: Իսկ ինչպես տեղեկանում ենք ՄՄ 1915 ձեռագրի վերջում Մեսրոպ վարդապետի թողած հիշատակարանից, նաև նախքան այդ «ՌՃՀԲ (1723) թուին հոկտե[մ]բերի Ի և Թ (29)-ին թագաւորն Շահ Թահմազ եմուտ ի քաղաքն Նախչաւան»¹⁹: Սեֆյան շահը փորձում էր միավորել ուժերը՝ դիմագրավելու օսմանյան բանակի ներխուժմանն Անդրկովկաս և Ատրպատական: Ակներևաբար, այդ ժամանակ էլ հաստատվել են Եգանի մելիքական իրավունքները:

Մարգար հոջենց Գեղամյանի ստեղծագործական ժառանգությունը բազմաբնույթ է: Շնորհիվ մի շարք եվրոպական և արևելյան լեզուների իմացության (անգլերեն, ֆրանսերեն, իտալերեն, հունարեն, ռուսերեն, պարսկերեն, թուրքերեն, արաբերեն), նա կատարել է տարաբնույթ թարգմանություններ, ինչպես նաև խմբագրել և հրատարակության է պատրաստել ձեռագրեր, հեղինակել սեփական երկեր: Մեզ են հասել Հայաստանի, Ռուսաստանի, Ֆրանսիայի, Իտալիայի հավաքածուներում պահվող՝ նրա անվան հետ առնչություն ունեցող մի շարք ձեռագրեր և տպագիր գործեր: Ըստ այդ ժառանգության, կարելի է եզրակացնել, որ Մարգար հոջենցին հետաքրքրող խնդիրների շրջանակը բավականին լայն էր՝ փիլիսոփայություն, կրոն, երիտասարդ սերնդի կրթությունն ու դաստիարակությունը, ինչպես նաև հայոց ճակատագիրը:

Նախ և առաջ համառոտ ներկայացնենք հոջենցի հեղինակած արաբերենի քերականությունը: Հավանաբար, հայալեզու ուսանողների համար արաբերենի քերականության դասագիրքը Մարգար հոջենցը կազմել է Զմյուռնիայում, Անգլիայի հյուպատոսությունում թարգմանիչ աշխատելու շրջանում: Դասագրքի երկու ձեռագիր գտնվում է Մատենադարանում (ՄՄ ձեռ. Հ^մ 2323 և ՄՄ ձեռ. Հ^մ 6270): Ըստ հիշատակարանի՝ ՄՄ Հ^մ 2323 ձեռագիրն ինքնագիր է, արտագրված Ս. Պետերբուրգում, 1810 թ.՝ 1766 թ. Զմյուռնիայում գրված բնօ-

¹⁵ ՀԱԱ, ֆ. 1389, ց. 1, գ. 14:

րինակից (թ. 4բ): Այս ձեռագիրը նախատեսված էր ուսաց կայսր Ալեքսանդր Պավլովիչին (Ալեքսանդր Ա, 1801-1825 թթ.) նվիրելու համար: Ինչպես նշված է «Ընծայման» մեջ, հեղինակն ակնկալում է, որ կայսրը կկարգադրի այն թարգմանել ուսերեն: Խոջենցն առաջաբանում՝ «Առ բանասէր ընթերցողս», նշում է, որ եվրոպացիների հաջողությունները գիտության և արհեստների բնագավառում պայմանավորված են «ո՛չ այլով... բայց եթէ տեղեկութեամբ, թարգմանութեամբ եւ ընթերցմամբ գրեանց զանազան ազգացն լեզուաց»¹⁶: Ապա հեղինակն իր մտահոգությունն է հայտնում, որ հայերը, սփռված լինելով աշխարհով մեկ, ընդ որում՝ մեծ մասամբ Արևելքում, թեև վարժ տիրապետում են եվրոպական լեզուների, սակայն արաբերենի առումով թերանում են: Իսկ պատճառն այն է, որ գրեթե չկա այս լեզվի քերականության որևէ գիրք, որը հայ ընթերցողին մատչելի կներկայացնի արաբերենի, հատկապես՝ բայի քերականական կարգերը. «...որքան որ անթերի եւ անվրէպ փոխաբերեալ էին ի լեզուս իւրեանց, սակայն ի խոնարհմունս բայից հետեւեալ էին նոցունց դասակարգութեանց, որք են ըստ ամենայնի անհամաձայնք մերոց եւ իւրեանց եւրոպէացւոց քերականական ոճից, այսինքն՝ Վառնափնթոր (բնագրում) եւ շփոթեալ գոլով յեղանակս եւ ի ժամանակս, ի դէմս եւ ի սեռս արականաց եւ իգականաց, նաեւ յեզականս, յերկաւորականս եւ յոքնականս, ի կրաւորականս եւ ի ներգործականս, եւ գրեթէ ի բոլոր խոնարհեցմունս նոցին (որպէս եւ տեսանելոց էք յառաջիկայս գրեցեալ յիւրում տեղւոջ՝ հանդերձ պատճառան), որք եւ առբերէին կարի մեծ իմն դժուարութիւն եւ ժամանակի տեւողութիւն նորակիրթ ուսանողաց»¹⁷:

Ուստի, Խոջենցն իր առջև խնդիր է դնում՝ լրացնելու այս բացը և 1766 թ. Զմյուռնիայում ավարտին է հասցնում աշխատանքը՝ «ի վայելումն իր ազնվական ազգի ուսումնասեր հանճարների»: Վստահաբար կարելի է ասել, որ Խոջենցը հասել է իր նպատակին: Մանրակրկիտ ուսումնասիրության արդյունքում համոզվեցինք, որ շարադրանքի ու հեղինակի կիրառած մեթոդի շնորհիվ «Գիրք քերականութեան արաբացւոց»-ը թույլ է տալիս լիարժեք սովորել արաբերեն, այն մատչելի է նաև լեզուն ինքնուրույն ուսումնասիրողների համար: Զեռագրի շարադրանքն ու ձևավորումը հուշում են, որ այն սուպրատիվյան համար պատրաստված օրինակ է: Այս աշխատությունը հայ սուպրատիվ գրքի մատե-

¹⁶ ՄՄ ձեռ. Հ^մ 2323, ք. 4բ:

¹⁷ ՄՄ ձեռ. Հ^մ 2323, ք. 4ա:

նագիտություններում հիշատակված չէ, և մեզ համար դեռևս անհայտ պատճառներով այդպես էլ անտիպ է մնացել:

«Գիրք քերականութեան արաբացուց»-ի ևս մեկ օրինակ պահվում է Ֆրանսիայի ազգային գրադարանում: Այն նույնպես ինքնագիր է, արտագրված Ս. Պետերբուրգում (1811 թ.): Ըստ նախաբանի՝ ձեռագիրը նվիրվում է Ֆրանսիայի կայսր Նապոլեոն I-ին, իսկ ստացողը՝ Փարիզի Արևելյան լեզուների դպրոցի դասախոս Շահան Զրպետյանն է (Փրզ. հայ ձեռ. Հ^մ 297)¹⁸:

Յավոք, տեղեկություն չունենք այն մասին, թե ինչ ծավալով է կիրառություն մեջ եղել Մարգար Խոջենցի «Գիրք քերականութեան արաբացուց»-ը, սակայն կարող ենք եզրակացնել, որ գոնե Թիֆլիսում, 1823 թ. այն պահանջված է եղել, քանի որ կրկնօրինակվել է այնտեղ՝ Ներսես արքեպիսկոպոսի հրամանով (տե՛ս ՄՄ ձեռ. Հ^մ 6270): Այսպիսով, Մարգար Խոջենցին՝ Գևորգ դպիր Պալատեցու¹⁹ հետ մեկտեղ իրավացիորեն կարելի է համարել հայ արաբագիտության հիմնադիրներից մեկը²⁰:

ԺԸ. դարում հայ թարգմանչական գրականության մեջ ի հայտ է գալիս մի նոր երևույթ՝ կրոնափրկիստոփայական աշխատությունների կողքին սկսում են հայտնվել նաև աշխարհիկ ստեղծագործությունների թարգմանություններ²¹: Այս գործերից մեկը պատկանում է Մարգար Խոջենցի գրչին, որն առաջին անգամ հայերեն է թարգմանել Ֆրանսիացի հայտնի գրող, աստվածաբան և մանկավարժ Ֆրանսուա Ֆենելոնի «Պատմութիւն Թելեմաքի, որդւո Յուլիսի» վեպը: Այս գիրքն առաջին անգամ անանուն լույս է տեսել 1699 թ., ինչից հետո հեղինակի հանդեպ ճնշումներ սկսվեցին, քանի որ Ֆրանսիական արքունիքը այս վեպում կուղղովիկոս XIV թագավորի քաղաքականության քննադատության տարրեր էր տեսնում: Հետագայում, հեղինակի մահից հետո, 1717 թ. այն վե-

¹⁸ R. H. Kévorkian, A. Ter-Stepanian, *Manuscrits arméniens de la Bibliothèque nationale de France, Catalogue, avec le concours de B. Outtier et de G. Ter-Vardanian*, Paris, 1998, pp. 849-851.

¹⁹ Գևորգ դպիր Պալատեցի Տեր-Հովհաննիսյան (1737-1812), հեղինակել է «Քերականութիւն արաբացիոց լեզուին» (1765 թ.): Ձեռագրի մեկ օրինակ արտագրված 1865 թ. գտնվում է Կ. Պոլիսի Հայոց պատրիարքարանի գրադարանում (ձեռ. 183):

²⁰ Այս թեմային մանրամասն անդադարձել ենք Արամ Տեր-Ղևոնդյանի 85 ամյակին նվիրված միջազգային գիտաժողովին: Տե՛ս Ք. Սահակյան, «Արաբերենի առաջին հայերեն դասագրքերը», *Հայաստանը և արաբական աշխարհը՝ պատմություն և արդի խնդիրներ*, Երևան, 2014, էջ 115-122:

²¹ Առ, էջ 583:

րահրատարակվեց: Իր ժամանակի գրասերների շրջանում այն մեծ պահանջարկ ուներ: Այս մասին է վկայում վիճակագրությունը՝ «Պատմութիւն Թելեմաքի, որդւո Յուլիսի» վեպը 150 տարվա ընթացքում միջին հաշվով վերահրատարակվել է տարին մեկ անգամ և երկու տարին մեկ թարգմանվել տարբեր լեզուները²²: Խոջենցի հեղինակած առաջին հայերեն թարգմանությունն իրականացվել է 1790 թ. և հրատարակվել երկու մասերով՝ Թաղևոս վարդապետ Մարուքյանի խմբագրությամբ և Հովսեփ Արղուիթյանի աջակցությամբ, Ն. Նախիջևանում, համապատասխանաբար՝ 1793 և 1794 թթ.: Ինչպես նշում է թարգմանության հեղինակը, նա օգտվել է թե՛ Ֆրանսերեն բնագրից և թե՛ իտալերեն տարբերակից²³, ինչի հետևանքով էլ, հավանաբար, հայերենով հեղինակի անունը հնչում է Ֆրանչեսկո (իտալերեն Francesco) և ոչ թե Ֆրանսուա (ֆրանսերեն François): Առաջաբանում Խոջենցը գրում է, որ «Թելեմաքը» արդեն թարգմանվել է զանազան լեզուների, հրատարակության է պատրաստվում նաև ռուսերեն տարբերակը և ինքն «ամաչում է», որ հայ ընթերցողը դեռևս ծանոթ չէ եվրոպայում այդքան հանրահայտ ստեղծագործությանը: Դա էլ դրդել է իրեն իրականացնել սույն թարգմանությունը՝ երիտասարդությանը լուսավորելու և ճաշակը դաստիարակելու նկատառումով: Հետագայում Խոջենցի այս գործը մասնագետները քննադատել են «ծանր լեզվի» համար, սակայն Լեոն այն համարում է բարձր ճաշակի դրսևորում, իսկ լեզվի «ծանրությունը»՝ Թ. Մարուքյանի խմբագրման հետևանք²⁴: Ֆենելոնի «Թելեմաքը» հետագայում հայերեն թարգմանվել է ևս երեք անգամ:

Մարգար Խոջենցը թուրքերենից հայերեն է թարգմանել և մեկնաբանել Ժ. դ. թուրք միստիկ Վեյսի էֆենդիի Գուշակությունների գիրքը՝ «Թարգմանություն և մեկնություն գուշակության բանից Վեյսիի...»: Ուշագրավ է, որ հիմնվելով այս աշխատության վրա, նա կանխատեսել է Օսմանյան կայսրության մոտալուստ փլուզումը, Ղրիմի անջատումը, ինչպես նաև հայերի ազատու-

²² **Th. M. Van Lint**, “The Prophecy of Liberation: Margar Xoçenc‘ Erewanc‘i and Catherine the Great’s Conquest of the Crimea (1783). A Paragraph in the History of the Armenian Church in Russia”, in *Het Christelijk Oosten / The Christian East*, 2000 (3-4), p. 269-309; **A. Levi**, *Guide to French Literature: Beginnings to 1789*, Detroit etc, 1993, p. 289.

²³ **Ա. Ենոբյան**, «Ռուսահայ առաջին տպարանի հրատարակությունները եւ դրանց նկարագարով ման առանձնահատկությունները», *ԲՄ*, հ. 25, 2018, էջ 117: Նշվում է, որ Մ. Խոջենցն այն փոխադրել է իտալերեն քարգմանությունից:

²⁴ **Լեո**, էջ 584:

մը իսլամի լծից: Եվ այս ակնկալիքները կապվում էին Ռուսաց Եկատերինա II կայսրուհու (1762-1796 թթ.) անվան հետ: Հայտնի հայագետ Թեո Մ. Վան Լինտը մանրակրկիտ ուսումնասիրություն է հրապարակել՝ նվիրված Խոջենցի այս աշխատությունը՝ իր «Ազատագրման կանխագուշակում» հոդվածում²⁵: Ավելացնենք, որ բացի Վան Լինտի նշած՝ Մատենադարանում պահվող 6 ձեռագրերից (ՄՄ ձեռ. Հ^մ 2048, 2749, 6297, 9035, 9608, 1003), գոյություն ունի առնվազն ևս երկուսը՝ մեկը գտնվում է Էջմիածնում (ձեռ. Հ^մ 207)²⁶, մյուսը՝ Փարիզում, Ֆրանկյան հավաքածուում (MAF, ձեռ. Հ^մ 67)²⁷:

Հաշվի առնելով որոշ խնդրահարույց հրապարակումներ՝ Մարգար Խոջենցի թարգմանած հայատառ թուրքերեն նոր Կտակարանի վերաբերյալ, մանրամասն անդրադառնանք այս խնդրին:

Հայատառ թուրքերեն գրականությունը սկզբնավորվել է դեռևս ԺԳ դարում՝ Օսմանյան կայսրության հաստատման առաջին իսկ շրջանում: Այն ծառայել է թուրքախոս հայերի հաղորդակցման, միևնույն ժամանակ՝ նաև ազգային ինքնության պահպանման համար: Պահպանվել են աշուղական, բանահյուսական, գեղարվեստական, հոգևոր և կրոնադավանաբանական, պատմական, գիտություն տարբեր բնագավառների վերաբերող ձեռագրեր, տպագիր գրքեր, ինչպես նաև հայատառ թուրքերեն մամուլի հարուստ հավաքածու:

Հ. Փափազյանը նշում է, որ հայոց գրերի բացառիկ կատարելությունն ու հարուստ հնչյունային համակարգը թույլ է տալիս գերազանց կերպով արտահայտել թուրքերեն բոլոր հնչյունները: Այդ իսկ պատճառով անգամ Ի. դարի սկզբներին որոշ առաջադեմ հայացքների տեր թուրք գործիչներ հանդես են եկել արաբական տառերը հայկականով փոխարինելու առաջարկությամբ²⁸:

Վերոհիշյալ գրական ժառանգության մաս է կազմում Մարգար Խոջենցի՝

²⁵ Th. M. Van Lint, op. cit.

²⁶ «Էջմիածին» ամսագիր, Ը-Թ, 1964 թ., էջ 62:

²⁷ Շնորհակալություն էրդա Վարդանյանին՝ իր կազմած դեռևս անտիպ ցուցակից տեղեկությունը մեզ արամադրելու համար: Այս ձեռագիրը հիշատակում է նաև **Ժան Պիեռ Մանեն**՝ նշված հոդվածում (տե՛ս ծ. 8) և Կիմ Բակշին՝ **К. Бакши, Духовные сокровища Арцаха**, Москва, 2012, с. 182:

²⁸ **Հ. Փափազյան**, «Մեսրոպատառ այլալեզու գրականության մասին», *ԲՄ*, հ. 7, 1964, էջ 212: Հայատառ թուրքերեն գրականության մասին տե՛ս նաև **Հ. Ստեփանյան**, *Հայատառ թուրքերեն գրքերի և հայատառ թուրքերեն պարբերական մամուլի մատենագիտություն (1727-1968)*, Ստամբուլ, 2005: Նույնի՝ *Յուցակ հայերեն ձեռագրերի հայատառ թուրքերեն նրվերի և հայատառ թուրքերեն ձեռագրերի*, Երևան, 2008:

առաջին անգամ հայերենից թուրքերեն թարգմանած և 1819 թ. Ս. Պետերբուրգում հրատարակված «Նոր Կտակարանը»: Այն թուրքախոս հայերի շրջանում շրջանառություն մեջ է եղել մինչև ժՊ. դ. կեսերը:

Բրյուս Պրիվրատսկին Աստվածաշնչի թուրքերեն թարգմանություններին նվիրված իր աշխատության մեջ նշում է, որ թուրքերեն Աստվածաշնչի առաջին թարգմանիչն է եղել ստրուկ Վոյչեխ Բոդովսկին (*Wojciech Bodowski*), որը հայտնի էր Ալի Բեյ (*Ali Bey*) անվամբ: Նա թարգմանությունը կատարել է 1662-1665 թթ., իսկ առաջին տպագիր թուրքերեն Աստվածաշունչը լույս է տեսել 1819 թ. Փարիզում: Ըստ Պրիվրատսկիի՝ հետագայում հույներն ու հայերը օգտվել են այս թարգմանությունից՝ իրենց այբուբենով թուրքերեն Աստվածաշունչը շարագրելու համար²⁹: Այս տեսակետը, սակայն, հակասում է փաստերին: Այսպես, 1819 թ. Ս. Պետերբուրգում լույս տեսած օրինակի տիտղոսաթերթին նշված է, որ թարգմանությունը կատարվել է հայերենից. «Րապպիմիդ Յեսու էլ Մէսիհին Յահտ ի Ճէտիտ. Այսինքն Նոր Կտակարան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի... Թարգմանեալ ի հայկականէ ի թուրքաց բարբառ ի Գեղամեան Մարգար Զաքարեայ Խօճէնց երևանցոյ: Ս. Պետերբուրգ (Պետրոպոլիս): տպ. Հովսեփ Հովհաննիսյանի 1819»³⁰:

Երկրորդ՝ ինչպես նշում է Պրիվրատսկին, «Նոր Կտակարանի» թուրքերեն առաջին հրատարակությունը լույս է տեսել 1819 թ. Փարիզում: Քիչ հավանական է, որ նույն տարում հնարավոր էր, որ Խոջենցը հասցներ հայատառ թուրքերենով վերաշարագրել և հրատարակել իր տարբերակը՝ օգտվելով Պրիվատսկիի նշած օրինակից:

Պրիվատսկիի աշխատության մեջ սա միակ անտրամաբանական և անարժանահավատ պնդումը չէ: Նա գրում է, որ հայատառ թուրքերեն «Նոր Կտակարանը» 1819 թ. հրատարակվել է Ս. Պետերբուրգի Աստվածաշնչային ընկերակցության (*Bible Society*) կողմից, թարգմանիչն է ոմն Սերաֆիմ Խոջենցին (*Seraphim Khojentzi*), որն, ըստ նրա, Խոջենցից էր (*Khojend*, Տաջիկստան) հայ եկեղեցու վանահայր կամ վարդապետ էր: Բացի այդ, ըստ նրա, մեկ այլ

²⁹ **B. G. Privratsky**, *A History of Turkish Bible Translations Annotated Chronology with Historical Notes and Suggestions for Further Research*, 2014, p. 2. <https://historyofturkishbible.files.wordpress.com/2014/03/turkish-bible-history-version-s-in-preparation.pdf> 6.03.19.

³⁰ **Հ. Դավթյան**, *Հայ գիրքը 1801-1850 թթ.*, Մատենագիտություն, խմբ. Հ. Անանյանի, Երևան, 1967, էջ 92:

աղբյուրում նշված է, որ այդ հոջենցին եղել է Ռուսաստանի կառավարության թարգմանիչը³¹: Ապա, 1822 թ. այս թարգմանությունը վերամշակել և հրատարակել է ոմն Կեղամյան Երևանցի (*Keghamian of Erevan*) հայոց պատրիարքի (Կ. Պոլիս⁶) երաշխավորությամբ: Մինչդեռ գրքի տիտղոսաթերթին հստակ գրված է, որ այն հրատարակվել է Հովսեփ Հովհաննիսյանի տպարանում՝ «Ի Հայրապետութեան» Սրբոյ էջմիածնի Տ[եառ]ն Եփրեմայ՝ Սրբազանկատար Կաթողիկոսի ամենայն Հայոց: Եւ յառաջնորդութեան] Ռուսաստանու Տ[եառ]ն Յօհաննու Արհի Եպիսկոպոսի և Կաւալերի: Թարգմանեալ ի հայկականէ ի թուրքաց բարբառ ի Գեղամեան Մարգար Զաքարեայ հօճէնց Երևանցոյ: Արդեամբ ռուսաց Ա[ատուա]ծաշնչի ժողովոյն, որ ի Ս. Պետերբուրգ (Պետրոպոլիս): 1819»: Ինչն է գրդել Բրյուս Պրիվրատսկուն ներկայացնել վերոնշյալ խառնաշփոթ և իրականությունը չհամապատասխանող տեղեկությունները նոր Կտակարանի հայատառ թուրքերեն առաջին հրատարակության վերաբերյալ, մեզ համար անհայտ է, և մնում է միայն ենթադրել, որ նա ծանոթ չէ բնօրինակին և իր տեղեկությունները քաղել է կասկածելի աղբյուրներից, որոնք, ի դեպ, նա չի նշում:

Մարգար հոջենցը հետևյալ գործի համար արժանացավ ինչպես գովասանքի, այնպես էլ մեղադրանքների՝ գրագողության համար: Խոսքը հայտնի «Վարդ և Սոխակ» այլաբանական թեմայով ստեղծագործության մասին է: Այն հրատարակվել է 1812 թ. Ս. Պետերբուրգում, գրաբար և ռուսերեն՝ Հովսեփ Հովհաննեսովի թարգմանությամբ: Մեզ հայտնի է ևս երեք հրատարակություն: Փարիզում, 1826 թ., լույս տեսած տարբերակի տիտղոսաթերթին նշված է, որ այն ֆրանսերեն է թարգմանել Արևելյան լեզուների դպրոցի հայերենի ուսուցիչ Լը Վայան դը Ֆլորիվալը, սակայն ֆրանսերեն տարբերակը կցված չէ: Իսկ արդեն 1832 թ. ստեղծագործությունը լույս է տեսել երկու լեզվով՝ հայերեն և ֆրանսերեն, և 1833 թ.՝ առանձին ֆրանսերեն հատորով: Հետագայում, Արշակ Չոբանյանի խմբագրությամբ Փարիզի «Անահիտ» հանդեսում մի քանի մասով հրատարակվել է վրպակի աշխարհաբար թարգմանությունը (1898-1900 թթ.)³²: Սակայն, վերջին մասը հրատարակելուց առաջ Չոբանյանը հերքել է Մարգար հոջենցի հեղինակ լինելու փաստը: Նրա ձեռքն էր ընկել Շարլ Ժորեի «Վարդը

³¹ B. G. Privratsky, op.cit., p. 74.

³² «Անահիտ» հանդես, Փարիզ, 1898, № 1, էջ 11-14, 1899, № 4-5, էջ 176-178 և հետագա համարներում:

և Սոխակը հին ժամանակներում և միջնադարում» գիրքը³³, որտեղ հեղինակը մանրամասն վերապատմում է ԺՋ. դ. հայտնի թուրք պոետ Ֆազլի (*Fazil*) «Վարդ և Սոխակ» այլաբանական երկի բովանդակությունը, որի հետ, ըստ Չոբանյանի՝ համընկնում է հոջենցի ստեղծագործությունը: Ավելին, նա ծանոթանում է գերմանացի թուրքագետ՝ Յոզեֆ Ֆոն Համմերի հրապարակմանը՝ նվիրված նույն թեմային: Այս դեպքում հեղինակը ստույգ մեղադրանք է հնչեցնում Մարգար հոջենցի հասցեին, համարելով, որ վերջինս անհաջող թարգմանել և համառոտ ներկայացրել է Ֆազլի ստեղծագործությունը: Արդյունքում Չոբանյանը ափսոսանք է հայտնում, որ Մարգար հոջենցը, հետևելով իր որոշ նախորդների դատապարտելի օրինակին, հրատարակել է այս ստեղծագործության թարգմանությունը իբրև իր սեփական գործ՝ առանց իրական քերթողի անունը նշելու³⁴:

1879 թ. Վենետիկում, Սբ. Ղազարի տպարանում լույս է տեսնում Մարգար հոջենցի «Վարդ և Սոխակ»-ի իտալերեն թարգմանությունը: Եվս մեկ խմբագրություն՝ աշխարհաբար տպագրվել է 1950 թ., Ֆրեզնոյում, Հակոբ Պողոսյանի տպարանում: Ուշագրավ է, որ այս օրինակը վերատպված է «Անահիտ» հանդեսից և լույս է տեսել դեռևս Արշակ Չոբանյանի կյանքի օրոք: Գրքում նշված է նաև Ա. Չոբանյանի փարիզյան հասցեն, ինչը մեզ թույլ է տալիս եզրակացնել, որ այն հրատարակվել է վերջինիս գիտությունը: Սակայն նախաբանում, որը պատրաստել էր գրող և գրականագետ Վահե Հայկը, չի հիշատակվում ո՛չ Ֆազլի անունը և ո՛չ էլ «գրագողության» պատմությունը:

Յավոք, առայժմ մեր տրամադրության տակ չունենք Ֆազլի «Վարդ և Սոխակի» բնագիրը և սեփական եզրակացության համար համեմատել ենք Չոբանյանի աշխարհաբար թարգմանությունը և Ֆազլի ստեղծագործության նկարագրությունը: Իրոք, սյուժետային գիծն ու գործող կերպարները համընկնում են, և առայժմ ստիպված ենք համաձայնել քննադատության հետ: Սակայն, հաշվի առնելով այն փաստը, որ Արշակ Չոբանյանը, ինչպես ինքն է նշում հոդվածում, չի տիրապետել թուրքերենին, մեզ համար «գրագողության» հարցը բաց է մնում, և մտադիր ենք դրան անդրադառնալ հետագայում:

Մարգար հոջենցը կարևորել է «Վարդ և Սոխակ»-ի բարոյախրատական,

³³ Charles Joret, *La Rose dans l'antiquité et au Moyen Age*, Paris, 1892.

³⁴ «Անահիտ», 1900 թ., հր. 12: Տե՛ս նաև՝ Ա.Ղազիկեան, Հայկական նոր մատենագրութիւն և հանրագիտարան հայ կեանքի, Վենետիկ, 1909-1912, էջ 1195-1198:

դաստիարակչական առաքելությունը: Այն գովերգում է անշահախնդիր սերը, հավատարմությունը, հավատն ու իմաստությունը, ինչպես նաև դատապարտում է նախանձն ու ստորությունը: Եթե անգամ հոջենցի հեղինակած վիպակը ընդամենը թուրքերենից թարգմանությունն է, դա չի նսեմացնում ստեղծագործության գեղարվեստական արժեքը, իսկ իր ժամանակի համար բավական մեծ թվով հրատարակությունները՝ նաև թարգմանաբար, վկայում են նրա պահանջված լինելը:

Մաշտոցյան Մատենադարանի հավաքածուում պահվում է Հակոբ (կամ Շահամիր) Շահամիրյանի «Որագայթ փառաց»-ի 1805 թ. մի ձեռագիր (ՄՄ ձեռ. Հ^ն 1477): Այս օրինակը պատկանում է Մարգար հոջենցի գրչին, որը ոչ միայն արտագրել է Շահամիրյանի՝ Մադրասում 1773 թ. տպագրված աշխատությունը, այլ նաև, ինչպես ինքն է նշում, «հեղինակի թույլտվությամբ» գրագետ վերաշարագրել է ամբողջ բնագիրը՝ ուղղելով թե՛ քերականական և թե՛ ոճական սխալները: Նա սահմանադրության գլուխները խմբավորել է ըստ կիրառման ոլորտների, առաջին մասի ողջ շարագրանքը բաժանել է ենթագլուխների և նրանց տվել իմաստային վերնագրեր: Որպես երրորդ մաս, հոջենցը կցել է Շահամիրյանի ևս մեկ գործ՝ Մադրասի հայկական ինքնավարության կանոնադրությունը՝ «Տեսրակ, որ կոչի նշաւակ»-ը (Մադրաս, 1783): Այսպիսով, Մարգար հոջենցն ի մի է բերել և ավարտուն տեսք տվել Շահամիր Շահամիրյանի մշակած օրենքներին: Այս փաստն ինքնին և հատկապես կատարված աշխատանքի ծավալն ու հոջենցի ջանասիրությունը այս գործում թույլ է տալիս եզրակացնել, որ նա ոչ միայն համակրանքով էր վերաբերվում Հայաստանի անկախությանն ուղղված ձեռնարկվող միջոցառումներին, այլ նաև այդ գործընթացի անմիջական մասնակիցներին մեկն էր:

Վերջապես, հարց է ծագում արդյո՞ք Մարգար հոջենցի խմբագրած «Որագայթ փառացը» հրատարակվել է³⁵, և եթե ոչ, ապա ինչո՞ւ: Պատճառները կարող են լինել թե՛ տեխնիկական (այդ թվում նաև դրամական) և թե՛ քաղաքական, որոնք կարող են հետաքրքրել պատմաբաններին:

1792 թ. Նոր Նախիջևանի Աբ. հաչ եկեղեցու տպարանում լույս է տեսնում Մարգար հոջենցի «Տեսրակ համառօտ անուանեալ դուռն ողորմութեան» աշխատությունը, որտեղ պատմվում է Հովսեփ Արղուժյանի կողմից Գրիգորիո-

³⁵ Մեր ուսումնասիրած հայ տպագիր գրեթե ցուցակներում նման հրատարակություն չենք գտել:

պոլ քաղաքի հիմնադրման մասին և ներկայացվում նրա ճառը, ինչպես նաև եկատերինա II-ի՝ հայերին տված արտոնությունները:

Մեկ հոգավածի շրջանակում հնարավոր չէ ներկայացնել Գեղամյան Մարգար Զաքարիա հոջենց Երևանցու բոլոր աշխատությունները, և մենք մտադիր ենք դրանց անդրադառնալ հետագայում: Սահմանափակվենք նրա՝ այս պահին հայտնի ողջ ժառանգության թվարկմամբ: Աշխարհի տարբեր գրադարաններում և մասնավոր հավաքածուներում պահվում են նրա ինքնագիր ձեռագրեր և ընդօրինակումներ, ինչպես նաև տպագիր աշխատանքներ: Մեզ հայտնի ամենամեծ հավաքածուն Մաշտոցյան Մատենադարանում է: Այստեղ կարելի է գտնել նրա գրեթե ողջ գրավոր ժառանգությունը: Ընդհանուր թվով քսան ձեռագրերի շարքում են՝ «Կտակագիր Հոգեշահ բանից» (ՄՄ ձեռ. Հ^մ 3757), «Պատմութիւն Թելեմաքի, որդւո Յուլիսի» (ՄՄ ձեռ. Հ^մ 2907, տպագրվել է 1793 և 1794 թթ.), «Թարգմանություն և մեկնություն գուշակության բանից Վեյսի...» անտիպ աշխատության 6 օրինակ, այդ թվում՝ ինքնագիր (ՄՄ ձեռ. Հ^մ 2048, 2749, 6297, 9035, 9608, 1003) պահվում է Մատենադարանում, ևս մեկ ձեռագիր՝ էջմիածնում (ձեռ. Հ^մ 207), մյուսը՝ Փարիզում, Ֆրանկյան հավաքածուում (MAF, ձեռ. Հ^մ 67): «Որոգայթ փառաց» (ՄՄ ձեռ. Հ^մ 1477, անտիպ), «Համառօտ որպիսութիւն եկեղեցւոյ» 5 ձեռագիր, այդ թվում՝ ինքնագիր (ՄՄ ձեռ. Հ^մ 3597, 5084, 6613, 6880, 7345, տպագրվել է 1799 թ.), ևս մեկ ձեռագիր գտնվում է Ս. Պետրբուրգի՝ Ռուսաստանի ազգային գրադարանում (арм. н. с. 27⁸⁶)՝ «Հարցմունք Մարգար հոճենց Զմյուռնացիոյ եւ պատասխանիք Սերովբէ վարդապետի Պոլսեցիոյ»³⁷ (ՄՄ ձեռ. Հ^մ 9897), ևս մեկ ձեռագիր՝ Ս. Պետրբուրգի պետական համալսարանում (СПбГУ, ВФ, Ms. Cauc. 2), «Յանկ Կտակարանաց տրոհեալ յերիս մասունս» (ձեռագրի միկրոֆիլմը գտնվում է ՀԱԱ), տպագրվել է 1811 թ.: Մատենադարանում են պահվում նաև հոջենցի անտիպ աշխատության՝ «Գիրք քերականութեան արաբացւոց»-ի երկու օրինակ (ՄՄ ձեռ. Հ^մ 2323, 6270), ևս մեկ ինքնագիր օրինակ՝ Ֆրանսիայի ազգային գրադարանում (Փրզ. ձեռ. Հ^մ 297):

Մարգար հոջենցի մեզ հասած տպագիր ժառանգությունը հետևյալ

³⁶ К. Н. Юзбашян, *Армянские рукописи в петербургских собраниях, каталог*, С.-Петербург, 2005, с. 38.

³⁷ Վերագրվում է հոջենցին, սակայն համոզիչ ապացույցներ չկան:

պատկերն ունի՝ «Պատմութիւն Թելեմաքի, որդւո Յուլիսի» (1793 և 1794 թթ., Ս. Պետերբուրգ), «Բարառնական դիմառնութիւն բարոյական այսինքն՝ Րոման մօրալէ. Ի դիմաց վարդոյ և լուսինեկի, այն է պիւպիւլի...» (Ս. Պետերբուրգ, 1812՝ ռուսերեն կից թարգմանությամբ, Փարիզ, 1832՝ ֆրանսերեն թարգմանությամբ, «Անահիտ» հանդես, 1898-1890, և առանձին գրքույկով՝ Ֆրեզնո, 1950), «Նոր Կտակարան»-ի հայատառ թուրքերեն թարգմանությունը (Ս. Պետերբուրգ, 1819):

Այսպիսով, Գեղամյան Մարգար Զաքարիա Խոջենցը եղել է իր ժամանակի հայ մտավորականության վառ ներկայացուցիչներից մեկը: Նրան մտահոգել է երիտասարդ սերնդի կրթության և տեղեկացվածության մակարդակը: Նրա՝ որպես բազմակողմանի զարգացած անձնավորության մտորումները ամենազանազան հարցերի շուրջ էին՝ քրիստոնեության, իսլամի, միսսիցիզմի, գիտության, քաղաքականության, բարոյականության, ազնվության, սիրո և այլն:

KNARIK SAHAKYAN

THE LIFE AND WORKS OF MARGAR KHOJENTS՝
YEREVANTS՝I

Key words: Smyrna, St. Petersburg, New Testament, manuscript, archive, collection, translator, Armeno-Turkish.

The article is dedicated to the life and work of Margar Khojents՝, a prominent representative of the Armenian Diaspora, orientalist, translator, and linguist. It is known that Margar Khojents՝ was born in Yerevan and lived many years in Smyrna, where he worked as a translator at the British Consulate. From the end of the 18th century, Khojents՝ lived in St. Petersburg, where he served as a collegiate councilor at the Imperial Court. He knew several European and Oriental languages, was engaged in literary translation and created his own works. Khojents՝ contributed significantly to the Armenian book printing in Russia. In collaboration with Grigor Khaldaryan, Hovhannes Dolgoruky-Argutinsky, and the Lazarev family, he published his own and other authors՝ works in Astrakhan, Nor Nakhijevan, and St. Petersburg. Khojents՝ was held in high esteem both at the Imperial Court and in

the Armenian community. Yet, for the time being, his name is almost unknown. He died in 1820 in St. Petersburg at the age of 83.

On the basis of manuscripts from Matenadaran, as well as from France, Italy, and Russia, and documents from the National Archive of Armenia, we have revealed new facts about the life and work of Margar Khojents'. We have also studied several unpublished manuscripts belonging to his hand.

КНАРИК СААКЯН

ЖИЗНЬ И ТВОРЧЕСТВО МАРКАРА ХОДЖЕНЦА

Ключевые слова: Смирна, С.-Петербург, рукопись, Новый Завет, коллекция, архив, переводчик, армяно-турецкий.

Статья посвящена жизни и творчеству Маркара Ходженца - переводчика, лингвиста, востоковеда, одного из ярких представителей армянской интеллигенции. Известно, что Маркар Ходженц родился в Ереване, жил в Смирне, где работал переводчиком в британском консульстве. В конце XVIII в. он переехал в Санкт-Петербург и был назначен на должность коллежского советника при Императорском дворе. Маркар Ходженц владел несколькими европейскими и восточными языками, делал литературные переводы, сочинял собственные произведения. Он внес большой вклад в дело армянского книгопечатания в России. В результате сотрудничества с Григором Халдаряном, Иваном Долгоруким-Аргутинским и при содействии семьи Лазаревых Маркар Ходженц подготовил к печати как собственные труды, так и произведения других авторов в Новой Нахичевани, Астрахани и Санкт-Петербурге. Его высоко ценили как в армянском обществе, так и при Императорском дворе, однако нашим современникам его имя почти неизвестно. Маркар Ходженц умер в С. Петербурге в 1820 г. в возрасте 83-х лет.

В ходе исследования ряда рукописей Матенадарана, а также других коллекций Франции, России, Италии и архивных документов НАА нам удалось выявить новые факты о жизни и творчестве Маркара Ходженца, в том числе неопубликованные рукописи, принадлежащие его перу.

ԱՆԻ Ժ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԱՐԱԲԱՏԱՌ-ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒԻ
ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԻ ԴՐՎԱԳ
(1880-1915 ԹԹ.) ԵՎ ՔԵՐՈՎԲԵ ՊԱՏԿԱՆՅԱՆԻ ՆՎԻՐԱԾ
ՁԵՌԱԳՐԵՐԸ

Բանալի բառեր՝ Արաբատառ ձեռագրեր, օսմաներեն ձեռագրեր, թուրք գրականություն, Սբ. էջմիածին:

«... Ասեն մի ձեռագրի հիմքում, սերնդեսերունդ շարունակվող նրա կենսագրության մեջ բազմաթիվ խոնարհ, անանուն բարեգործների, մշակների անուններ կան»:

Հ. Թամրազյան

Մատենադարանի ձեռագրերի հավաքածուի հիմքում սկզբնապես եղել են էջմիածնի նախկին գրատան և վանքերի, Մոսկվայի Լազարյան ճեմարանի, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի, Հայկական Ազգագրական ընկերության, Երևանի գրական թանգարանի, այլ հաստատությունների ձեռագրական հավաքածուները, ընթացքում և հետագայում անհատների նվիրատվությունները:

Մատենադարանին է փոխանցվել նաև Սբ. էջմիածնի Մատենադարանի հայերեն ձեռագրերի հավաքածուի հետ, դեռևս 1880-ականներին ձևավորված արաբատառ՝ արաբերեն, պարսկերեն և օսմաներեն ձեռագրերի հավաքածուն¹:

Եվ այսպես, առաջին անգամ՝ դեռևս 1965 թ. ամփոփվել և հրատարակվել են Արաբատառ ձեռագրերի հավաքածուի մասնավորապես 1880-1962 թթ. Մատենադարան մուտք գործած ձեռագրերի ձևավորման պատմության և թվային հոսքի արձանագրությունները (995 ձեռագիր)²: Իսկ մինչ 2006 թվա-

¹ **Օն. Եգանյան**, «Մատենադարանի ձեռագրական հավաքածուները», *Յուզակ Ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի*, հ. Ա. (Կազմեցին Օն. Եգանյան, Ա. Ջեյթունյան, Փ. Անթաբյան), Երևան, 1965 (էջ 188-192), էջ 188 (այսուհետև՝ ՅՁ, Հ. Ա, և էջահամարը):

² ՅՁ, Հ. Ա, էջ 188-192, էջ 197: Տե՛ս այստեղ, այդս. Հ^մ 1:

կանը³ մուտքագրված ձեռագրերի մասին (2214 ձեռագիր) տեղեկություններ ենք քաղում «Բանբեր Մատենադարանի» համարներում (Հ^մ 8, 9, 11, 12, 13, 14, 15, 16, 17) գետեղված՝ ժամանակի ավանդապահների (Յննիկ Եգանյան, Արտաշես Մաթևոսյան, Գևորգ Տեր-Վարդանյան) կազմած աղյուսակներից⁴: Իսկ 2006 թ. մինչ այսօր որևէ հրատարակում չկա, թե այս տարիների ընթացքում Արաբատառ ձեռագրերի հավաքածուն ինչպես է համալրվել, որքան ձեռագրեր են մուտք գործել Մատենադարան: Միայն գիտենք, որ 2013 թ. Արաբատառ ձեռագրերի հավաքածուն ներառել է շուրջ 2,249⁵, 2016 թ.՝ 2,715⁶ ձեռագիր միավոր⁷:

Նկատի առնելով ձեռագրացուցակների կազմման, ձեռագրերի նկարագրման՝ ըստ հանգամանքների, ժամանակագրության, թեմատիկայի, բովանդակային խմբավորումների ուսումնասիրման ներկայումս կիրառվող մեթոդաբանությունը, անհրաժեշտ ենք համարում վերստին դիտարկել ու ճշգրտել հավաքածուի ձևավորման պատմությունը, ինչը կնպաստի ընդհանրական պատկեր ստանալուն: Ուստի, սույն հոդվածով փորձել ենք հյուսել մատենադարանյան Արաբատառ ձեռագրերի հավաքածուի ստեղծման պատմության 1880-1915 թթ. ընդգրկող հատվածը, որի համար հիմք են եղել 1965 թ. հրատարակված «Յուզակ Ձեռագրաց» Ա. հատորի ներածական բաժնի «Արաբատառ ձեռագրերի հավաքածու» խորագիրը կրող գլուխը և նրա ավարտին բերված Արաբատառ ձեռագրերի ցուցակը:

Վերոհիշյալ Արաբատառ ձեռագրերի ցուցակը դիտարկելիս՝ որոշակի ան-

³ Միայն 1963-1997 թթ. Մատենադարանի Արաբատառ հավաքածուին են միացել նաև Հարություն Հազարյանի նվիրած 291 միավոր ձեռագրեր (ձեռ. Հ^մ 719-1006, 1149, 1150, 1198, 1801, 1803) (Այս մասին տե՛ս, Գ. ՏԵՐ-ՎԱՐՊԱՆՅԱՆ, «Հատելուած Հազարեանի ձեռագրական հաւաքածուն և նրա մի մասի անուղղը», *Յննիկ Եգանեան Աշխատութիւններ*, Երևան, 2014, էջ 287):

⁴ ԲՄ, Հ^մ 8, 1967, էջ 322-326, ԲՄ, Հ^մ 9, 1969, էջ 490-491, ԲՄ, Հ^մ 11, 1973, էջ 430-436, ԲՄ, Հ^մ 12, 1977, էջ 334-337, ԲՄ, Հ^մ 13, 1980, էջ 356, ԲՄ, Հ^մ 14, 1984, էջ 287-293 ԲՄ, Հ^մ 15, 1986, էջ 353-355, ԲՄ, Հ^մ 16, 1994, էջ 296-304, ԲՄ, Հ^մ 17, 2006, էջ 343-351: Տե՛ս այստեղ, աղյս. Հ^մ 2 (ներկայացված է հղվածաբար – Ա.Ա.):

⁵ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ, «Մատենադարանի օսմաներեն ձեռագրերի հավաքածուն», *Էջմիածին*, Ը, 2013, (79-85), էջ 79:

⁶ A. Avetisyan, "The Collection of Ottoman Turkish Manuscripts of the Matenadaran and Description Methodology", *Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ*, XXX, Երևան, 2016, (252-263), էջ 252:

⁷ Ժամանակին այս տեղեկությունները մեզ է առամարել Մատենադարանի գլխավոր ավանդապահ Գևորգ Տեր-Վարդանյանը:

համապատասխանություններ նկատեցինք ձեռագրերի՝ Մատենադարան մուտքագրման թվականների արձանագրություններում և ձեռագրերում եղած հետագայի նշումների ու կազմաստառներին փակցված նշում-թերթիկների (գրադարանային նշումներ) հաղորդած տվյալների միջև:

Այս փաստը նկատել է նաև ձեռագրերի կենսագրականներին խորագրիտակ ավանդապահ Օննիկ Եգանյանը՝ ամփոփելով այն այսպես. «Դժվար է պարզել կաթիլ առ կաթիլ հավաքված ձեռագրերի պատկանելությունը, հատկապես այն պատճառով, որ բազմիցս թալանի ու ավերածության ենթարկվելով՝ գրատան գրչագրերը պակասել են, խաղաղ տարիներին՝ համարվել, միախառնվել, կորցրել են իրենց նախկին պատկանելության հետքեր: Ինչպես և էջմիածնի գրատանը սովորություն չի եղել առանձին մատյաններում արձանագրել, թե որ ձեռագիրը ումից է ստացված կամ որտեղից է բերված և երբ. միայն հատ ու կենտ մատյանների վրա կարելի է հանդիպել նման նշումներ հավաքածուի շերտերը պարզելու համար»⁸:

Այնուամենայնիվ, առաջնորդվում ենք ընդունված մեթոդաբանությամբ, ըստ որի էլ անդրադառնալու ենք Արաբատառ ձեռագրերի հավաքածուի ձևավորման ժամանակագրությանը, առանձնապես՝ օսմաներեն ձեռագրերի, առաջին անգամ տալու ենք տվյալ ձեռագրերի նկարագրությունները՝ արտաքին և բովանդակային մանրամասներով, ծանոթագրություններով:

Արաբատառ ձեռագրերի դեռևս 1880-ական թվականներին կազմված փոքրիկ հավաքածուն ներառել է 201 ձեռագիր⁹:

1903 թ. հաշիկ վրդ. Դադյանը իր հայերեն ձեռագրերի հարուստ հավաքածուի հետ միասին Մատենադարանին է նվիրել 20 տարվա ընթացքում Արցախ աշխարհից հավաքագրված 30 արաբատառ ձեռագիր: Հակոբ Թոփչյանը իր «Յուցակ ձեռագրաց Դադեան հաշիկ վարդապետի» աշխատասիրության առաջաբանում նշում է, որ այդ 30 պարսկերեն ձեռագրերով «պարսկերեն ձեռագրաց ժողովածուի հիմք կդրվի»¹⁰: հաշիկ Դադյանի ձեռագրական հավաքածուն մինչև 1906 թ. պահվել է սնդուկներում և պահարաններում և միայն 1913 թ. ձեռագրերը մատենադարանապետ Մեսրոպ Տեր-Մովսիսյանի¹¹ ձեռ-

⁸ ԶԶ, Հ. Ա., էջ 47:

⁹ ԶԶ, Հ. Ա., էջ 188:

¹⁰ Յուցակ ձեռագրաց Դադեան հաշիկ վարդապետի ժողոված 1878-1898, Մասն Ա., [Կազմեց՝ Յակոբ Յ. Թոփճեան], Վաղարշապատ, տպարան Մայր Աթոռ Ս. էջմիածնի, 1898, էջ Ը.:

¹¹ Մեսրոպ Տեր-Մովսիսյանի մասին տես Գ. ՏԵՐ-ՎԱՐՊԱՆՔԱՆ, Մեսրոպ Մագիստրոս

քով միացվել են ձեռագրական ընդհանուր հավաքածուին¹²:

Հաջորդ նվիրատուն՝ 1903 թ. Քերովբե Պատկանյանի (1833-1889 թթ.)¹³ որդի Սերովբե Պատկանյանցը, Սբ. Էջմիածնին է հանձնել հայրական գրադարանի մի մասը՝ հայոց լեզվի, գրականության, հայկական բանահյուսության, Արևելքի պատմության վերաբերյալ գրքեր, հայերեն ձեռագրեր, հոր թերթերը և այլն¹⁴:

Օսմաներեն ձեռագրացուցակի պատրաստման մեր աշխատանքներին հընթացս պարզեցինք, որ Քերովբե Պատկանյանի որդին այս հիշատակվող գրքերի հետ հանձնել է նաև 10 արաբատառ ձեռագիր: Այս ձեռագրերից մեկն արաբերեն է (ձեռ. Հ^մ 257)¹⁵, իսկ մյուսները՝ օսմաներեն (ձեռ. Հ^մ 296, 297, 302, 312, 313, 321, 323, 324, 413):

Հիշյալ 10 ձեռագրերը «Յուցակ Ձեռագրաց»-ի Ա. հատորի ներածության մեջ, Արաբատառ ձեռագրերի մուտք գործելու տարեթվային ցուցակում համարվել են 1925 թ. Մատենագարանի ձեռագրային հավաքածուի շարքերը համալրած հերթական ձեռագրեր¹⁶, և որևէ տեղ նշված չէ, թե դրանք ով է հանձնել, ինչպես են մուտք գործել հավաքածու:

Մինչդեռ ձեռագրերի Ա. կազմաստառին փակցված «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին» գրադարանային նշում-թերթիկները վկայում են, որ դրանք Սերովբե Պատկանյանն արդեն 1903 թվականին հանձնել էր Էջմիածնի Մատենագարանին:

Փամանակագրության վկայություններից է նաև «Արարատ»-ում հրատարակված 1903 թ. հունվարի 8-ին Սանկտ-Պետերբուրգից Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Մկրտչին ուղղված՝ Սերովբե Պատկանյանի նամակը, ուր նա տեղեկացնում է հոր հավաքածուն Էջմիածնին նվիրաբերելու ցանկության մասին¹⁷:

Ստորև նամակը բերում ենք ամբողջական՝

Արքեպիսկոպոս Տէր-Մովսիսեան (Կենսագործունէութիւնը, «Ընդհանուր Յուցակ Հայերէն Ձեռագրաց», Մատենագիտութիւն), Երևան, 1999, 180 էջ:

¹² ՅՁ, Հ. Ա, էջ 188-189:

¹³ Քերովբե Պատկանյանի մասին տե՛ս Յ. Ա. ԱԿՈՅԱՆ, *Керопэ Патканян (Жизнь и творчество)*, Ереван, 1975, 220 стр., նաև Ն. ՍԱՐՈՎԱՆՅԱՆ, *Հայ պատմագիտությունը XIX դարում և XX դարասկզբին*, Երևան, 2013, էջ 355-364:

¹⁴ Արարատ, 1903, ապրիլ, էջ 342:

¹⁵ Դուրանից հատված, պակասավոր օրինակ:

¹⁶ Տե՛ս այստեղ, աղյս. Հ^մ 1:

¹⁷ Արարատ, 1903, ապրիլ, էջ 341-342, էջ 349:

**« ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԵԱՆ Տ. Տ. ՄԿՐՏԻՉ
ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Զերդ Վեհափառութիւն

Իմ հօր՝ Քէրոբէ Պատկանեանի, մահուանից յետոյ ինձ ժառանգութիւն է մնացել արժեքաւոր գրադարան Հայոց լեզուի, գրականութեան և արևելքի պատմութեան վերաբերեալ: Իմ ծառայութիւնը և մասնաւոր պարապմունքները՝ վիճակագրութիւն, աշխարհագրութիւն և ժողովրդագրութիւն, այն աստիճան կլանում են իմ ոյժերը, որ հնար չունիմ պարապելու այն առարկաներով, որոնց իմ հայրը իւր ամբողջ կեանքը նուիրեց: Ես եկայ այն եզրակացութեան, որ այդ գրադարանը կարող է աւելի օգտակար լինել մասնագէտներին, քան թէ ինձ: Ի նկատի ունենալով այդ, որոշեցի գրադարանի մեծագոյն մասը ընծայաբերել էջմիածնի վանքի Մատենադարանին, որը հայկական բանահիւսութեան գլխաւոր կեդրոնն է: Ես պարտաւորուեմ եմ կազմել նուիրուած գրքերի ցուցակը, որը խնդրում եմ տպել վանքի հրատարակութիւններից մէկում: Գրքերից և բրոշուրներից բացի կցանկանայի նոյն մատենադարանին տալ իմ հանգուցեալ հօր թղթերի մի մասը, որը վերաբերում է նրա մասնագիտութեան: Միայն ով որ օգտուի նրանցից, կխնդրէի շնորհալու ծանօթութիւնների մէջ յիշել, թէ ինչ տեսակ տեղեկութիւններ է քաղել այդ աղբիւրից:

Բացի այդ, կխնդրէի Զերդ Վեհափառութիւնից ածել ի կատար հետևեալը. 1. կարգադրել կապել այստեղ գրքերը և ուղարկել վանքի հաշուով, 2. նուիրած գրքերը դարսել առանձին պահարանում և պահպանել կրակից ապահով շինութեան մէջ, այդ պահարանի վրայ կախել իմ հօր պատկերը որ ես կուղարկեմ էջմիածին, և 3. դասաւորել թղթերը և կազմել նրանց ցուցակը:

Նախապէս իմ շնորհակալութիւնը յայտնելով Զերդ Վեհափառութեան իմ այս խնդիրքի կատարման համար, ես ի սրտէ կցանկանայի, որ իմ նուիրած գրքերը հայ ազգին այնքան օգուտ բերեն, որչափով այդ գրքերից օգտուել է իմ հանգուցեալ հայրը:

Մատչելով ի համբոյր աջոյ Զերդ Վեհափառութեան, ակնածութեամբ մնամ խոնարհ որդի՝

Ս. Պատկանեանց

Ս. Պետերբուրգ

1903 թ. 8 յունուարի»¹⁸

Այսուհանդերձ Մեսրոպ վարդապետ Տեր-Մովսիսյանը կրկին «Արարատ»-ի 1903 թ. ապրիլ ամսվա համարում խոսելով նվիրատու Դավիթ Բեկ

¹⁸ Նույն տեղում, էջ 341:

Ավան-Յուզբաշյանի էջմիածնին տրվելիք նվիրատվությունների մասին, անդրադառնում է նաև Քերովբե Պատկանյանի գրադարանի Պետերբուրգից տեղափոխության ժամանակահատվածին և նկատում, որ այն, ըստ համաձայնության, պիտի տեղափոխվեր ապրիլ ամսվա ընթացքում և դեռ չէր փոխանցվել: Որպես չփոխանցելու պատճառ մատնանշում էր Սերովբե Պատկանյանի անվատահունջությունն ու մտավախությունը, որ հոր ժառանգությունը կարող է և անկորուստ չպահպանվեր Սբ. էջմիածնում: Մեսրոպ վարդապետը այս ամենի պատճառ էր համարում անտեղի չափազանցրած լուրերը, որոնք «ի հաշիվ վանքի և վանականների շատ շատերը բաւական միամտաբար տարածում են մեր ժողովրդի մէջ: Հեռու գտնուողները և մեր կեանքին անծանօթ մարդիկ հարկաւ աւելի մեծ հաւատ են ընծայում, նշմարտութեան տեղ ընդունելով անհիմն լուրերը»¹⁹:

Ի վերջո, Քերովբե Պատկանյանի որդին համոզվելով, որ հոր գրքերն էջմիածնի վանքում խնամքով կպահպանեն և կգնահատվեն, որոշում է գրանք ուղարկել²⁰: Վեհափառ հայրապետն էլ իր հերթին որպես գնահատանք՝ հատուկ կոնդակով գոհունակություն է հայտնել և օրհնել է նվիրատու Սերովբե Պատկանյանին. «Յանուն պ. Սերովբէի Ք. Պատկանեան. վասն նուիրելոյ նորա զգրադարան հանգ. հօրն իւրոյ պրոֆ. Քերովբէի Պատկանեան Մատենադարանի Մայր Աթոռոյ. ք. 393»²¹:

Քերովբե Պատկանյանի հավաքածուի օսմաներեն ձեռագրերի նկարագրություն²².

Հ^մր 296²³ ԺՈՂՈՎԱԾՈՒԷ (مجموعه) ԺԸ. դար

ԹԵՐԹ՝ 109. չգրված՝ 50բ, 51ա, 109բ: ՊՐԱԿ՝ 10 V (100)+V-1(109): ՆՅՈՒԹ՝

¹⁹ Արարատ, 1903, ապրիլ, էջ 349:

²⁰ Նույն տեղում, էջ 350:

²¹ Նույն տեղում, էջ 300:

²² Ձեռագրերը նկարագրվել են դեռևս 2009-2010 թվականներին և վերանայվել՝ 2017 թվականին:

²³ Ձեռագրի մեջի վերին մասում և պիսյ. Աս-ում հիշատակվող վերնագրերի մեջ կա նաև "قیافت نامه" («Քըյաֆեթ նամե») վերնագիրը: Սակայն այս վերնագրով գործ ձեռագրում չկա: «Քըյաֆեթ նամե»-ի հեղինակն է ԺՁ. դարի թուրք գրող Համդուլլահ Համդին (Համդի Չելեբի, 1448-1509 թթ.): Հունգարիայի Գիտությունների Ակադեմիայի ձեռագրացուցակում հիշատակվում է նույն վերնագրով մի աշխատանք ևս, որը թուրքերեն թարգմանությունն է Աբդուլլահ Մունամմեդ իբն Աբու Թալիբ-է Էնսարի է-Գիմիշի (Abdullah Muhammed b. Ebu Talib El-Ensari El-Dimishki) գործի: Թարգմանության հեղինակն է Մունամմեդ իբն Իլյասը:

թուղթ ճնշագծերով, լուսագծերով (հորիզոնական) և լուսադրոշմներով՝ «թագ» (թ. 3, 4, 12, 48, 73, 75), «ծաղիկ» (թ. 7, 8, 9, 17, 19, 22, 32, 43, 56, 71, 76, 78, 80-81), լատինատառ «IE» (թ. 23, 25 (դարձերեսին), թ. 37, 46, 49), «զինանշան» (թ. 55), լատինատառ «LL» (թ. 74): ՄԵԾՈՒԹՅՈՒՆ՝ 21.7x13.6: ԳՐՈՒԹՅՈՒՆ՝ երկսյուն, առնված կարմիր եզրագծերով ուղղանկյան մեջ: ԳԻՐ՝ նասթալիք (17x6.8): ՏՈՂ՝ 17: ՀԻՇԱԳԻՐ՝ յուրաքանչյուր Բ էջի ստորին ձախ անկյունում: ԹԱՆԱՔ՝ սև, ենթախորագրերը՝ կարմիր: ԿԱԶՄ՝ ծաղկաթուղթ, մեջքը և եզրերը՝ շագանակագույն մոմլաթ, սպիտակ թղթե կրկնակազմով, միջուկը՝ ստվարաթուղթ, աստառը՝ դեղին գունավորած թուղթ: ՊԱՀՊԱՆԱԿ՝ 2 (Ա+Բ), սպիտակ թուղթ:

ՎԻՃԱԿ՝ բավարար. կազմի Ա. փեղկի աջ անկյունի և մեջքի վերին մասի կրկնակազմը պատռված. թթ. 91-109, պհպ. Բ՝ վերին մասում խոնավության հետքեր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ա. 1բ-50ա خيرية نابی - ժէ. դարի թուրք գրող Յուսուֆ Նաբիի (1640-1712 թթ.) «Խայրիյե» պոեմը²⁴:

1բ Ակիզբ՝ حمد اول الله عظيم الشانه
 مبدع دائرة امكانه
 50ա Վերջ՝ چون ابو الخير قونلدى نامك
 خير ايده حضرت حق انجامك

Նաբին պոեմը գրել է 1694 թ. Հալեպում և նվիրել իր որդուն՝ Աբդուլ Խայրին (ամբողջական անունը՝ Աբդուլ Խայրը Մուհամմեդ Զեյթի): Հեղինակի նպատակն է եղել որդուն ստեղծագործության միջոցով ճիշտ ուղու վրա դնելը: Պոեմը խրատական է²⁵ և հաճախ ուսուցանվել է դպրոցում: Ստեղծագործության լեզուն պարզ է, քիչ են արաբերեն և պարսկերեն բառերը, մոտ է ժողովրդական խոսքին, շատ են ժողովրդական ասացվածքներն ու առածները:

Պոեմը սկսում է միաստվածությունը փառաբանող աղոթքով («Բեսմե-լե»): Պոեմի գլուխների խորագրերը պարսկերեն են: Յուրաքանչյուր գլուխ

²⁴ Բնագրային հատվածում վերնագիրը բացակայում է: Այն նշված է մեջքի վերին մասում և պհպ. Աա-ում:
²⁵ Գրականության պատմության մեջ այն ընդունված է համարել «Նասիհաթ նամե» (Nasihah-name), այսինքն՝ «Խրատագիր»:

նվիրված է կրոնի որևէ պատվիրանի, կանոնի, արատավոր երևույթի, սովորույթի և այլն. օրինակ՝ իսլամ կրոնի պարտադրանքներին, անհրաժեշտությունը, աղոթելու կարգին, նախատեսված պարտականություններին՝ ծոմապահությանը, Մեքքա ուխտագնացի Քաբբայի շուրջ պահվածքի, նախօրեին (Արիֆե) ուխտավորների շրջանում պարտավորիչ ողորմություն-մատաղի բաշխման (Ջաքաթ²⁶) և անձնվիրության, զանազան գիտությունների, Աստվածաբանության ուսումնասիրության, գեղեցիկ խոսքի զարգացման, ցանքի մշակման ու հունձքի նպատակներին, բժշկության իմաստության յուրացման, բարեգործության, օրհնության անհրաժեշտության և այլնի մասին: Քննադատում է արատները՝ ազահությունը, ծաղրանքը, կեղծավորությունը, նենգությունը, ապականությունը, հարբեցողությունը, ստախոսությունը, անհամբերությունը, բամբասանքը և այլն: Փառաբանում է բարերարությունը, ազնվությունը, առատաձեռնությունը, անարատությունը, ճշմարիտ ապրելը, համբերությունը և այլն: Աստղագիտությունը համարում է պղծություն, արգելում է շախմատ և նարդի խաղալը: Բազմանշանակ նկարագրում է սուրբ-դերվիշների երեսպաշտությունը, չարաշահումներն ու աղքատներին հարստահարելը, փաղիշահների խրախճանքները, հարբեցողությունն ու անառակությունը, վկայում սուլթանական պալատում հոգևոր հանգստության բացակայությունը: Որդուն կոչ է անում հեռու մնալ պալատական խարդավանքներից, չվարակվել նրա կեղտով, ստով, կեղծիքով, ծախվածությամբ և այլն:

Այն ուշադրության է արժանացել նաև Օսմանյան կայսրության սահմաններից դուրս: Թուրք գրականության առաջին գործերից է, որ թարգմանվել է ժ.Պ. դարում. 1857 թ. ֆրանսիացի գիտնական Պավլը դե Կուրտելը հրատարակել է «Խայրիյե»-ի բնագիրը ֆրանսերեն թարգմանությամբ²⁷:

ԼՈՒՍԱՆՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ Բառերի բացատրություններ (1բ-2բ):

ԱՅԼ ՁԵՌԱԳԻՐ ՕՐԻՆԱԿՆԵՐ ԸՍՏ ՁԵՌԱԳՐԱՅՈՒՑԱԿՆԵՐԻ՝ *Charles Rieu, Catalogue of the Turkish Manuscripts in the British Museum, Osnabrück, 1978, Add. 5985, p. 201b; Or. 3290 (foll. 56b-90a), 200a; Add. 7904 (foll. 1b-40b), 254a; Dur-*

²⁶ Կազմում է հասույթի 1/20-րդ մասը:

²⁷ Այս պոեմի նմանությամբ ժ.Վ.-Ժ.Պ. դարի թուրք բանաստեղծ Սունբուլ Ջադե Վեհբին Հչր. 1205/1790-1791 թթ. գրել է «Լութիյե» ("Lutfiye", "لطفييه") խոսաբանական հայտնի խրատական պոեմը և կրկին նվիրել իր որդուն (Այս մասին տես, E. J. W. Gibb, *A History of Ottoman Poetry*, Vol. 2, London, 1965, p. 246):

sun Kaya, Niyazi Ünver etc., Türkiye Yazmaları Toplu Kataloğu ISPARTA, T 811.218 (1329), Ankara, 2000, s. 781; Ismail Parlatur, György Hazai, Barbara Kellner-Heinkele, Catalogue of the Turkish Manuscripts in the Library of the Hungarian Academy of Sciences, Hungary, 2007, TÖRÖK.O.96 [point 3], p. 172; TÖRÖK.O. 163 (1b-43b), p. 230; TÖRÖK.O.18, pp. 231-232; TÖRÖK.O.47, pp. 232-233; TÖRÖK.O.52, pp.233-234; TÖRÖK.O.163, pp. 234; TÖRÖK.O.397, pp. 234-235:

բ. 51բ-109ա تحفة دلکش - «Թուհի-ի Դիլքեշ» Մեսնեհին է: Այն ժամանակին վերագրվել է Նաբիին²⁸: Սակայն, այժմյան ուսումնասիրությունները ճշտել են, որ այն պատկանում է մեկ այլ թուրք գրողի, Նաբիի ժամանակակից՝ Կոնեվի Նալի Մեհմեդին (*Nâli, Mehmed, Muhammed b. Osman el-Konevi*) (մահ. Հջր. 1086/1675 թ.): Այս շփոթության պատճառը, հավանաբար, դարձել է մեկ տառի սխալ ընթերցումը, այսինքն Ս տառի փոխարեն Բ է ընթերցվել (- نالی - نالی)²⁹:

51բ Ակիբբ ٥١٠ قبله نماى در ذات قريم

بسمله نك باسى اكر فتح باب

109ա Վերջ ١٠٩ ناييا حاصلی تحفك بى شك

فرق تحقيق مجازيده محك

Գրվել է Հջր. 1082-ին/1671-1672 թթ.: Այս մասին տեղեկանում ենք գործի ավարտին գրված գաղափար օրինակի հիշատակարանից (109ա):

²⁸ Ժամանակին մենք նույնպես այն վերագրել ենք Նաբիին՝ ելնելով մեր ձեռքի տակ եղած ուսումնասիրությունների, ստեղծագործության տպագիր օրինակների և ձեռագրացուցակների հաղորդած տվյալներից (Տե՛ս, Ա. Ավետիսյան, «Մատենդարանի օսմաներեն ձեռագրերի հավաքածուն (Նկարագրման մեթոդաբանությունը)», *էջմիածին*, Ը, 2013, (79-85) էջ 83, A. Avetisyan, "The Collection of Ottoman Turkish Manuscripts of the Matenadaran and the Description Methodology", էջ 257-258):

²⁹ Ստեղծագործությամբ, ինչպես նաև Նաբիին վերաբերող տպագրված նյութերում, ձեռագրացուցակներում և աշխատության տպագիր օրինակներում որպես հեղինակ նշված է Նաբին: Պատահում է նաև, որ միևնույն գրադարանի (օրինակ՝ Սուլեյմանիյե գրադարան (Süleymaniye Kütüphanesi), Ազգային գրադարան (Millî Kütüphanesi), Քյոթահիայի Վահիթ փաշայի անվան հանրային գրադարան (Kütahya Vahitpaşa İl Halk Kütüphanesi) նույն աշխատության օրինակների մի մասի հեղինակ է նշված Նալին, մի մասինն էլ՝ Նաբին (Այս մասին մանրամասն տե՛ս, N. Yılmaz, *Nâli'nin Tuhfetü'l-Emsâl Adlı Eserinin Katalog Kayıtları Hakkında*, İstem, Yıl: 5, Sayı: 9, 2007, ss. 111-119):

Հ^մր 297 ԺՈՂՈՎԱԾՈՒ (مجموعه) ԺԸ. դար

ԹԵՐԹ՝ 59. շգրված՝ 57ա, 59բ: ՊՐԱԿ՝ 5 V (50)+ V-1 (59): ՆՅՈՒԹ՝ թուղթ՝ լուսագծերով և լուսագրորոշմով՝ «զարդանախշ» (թ. 2, 14, 18, 21, 27-28, 32, 34-35, 40, 45, 48): ՄԵԾՈՒԹՅՈՒՆ՝ 21,7x11: ԳՐՈՒԹՅՈՒՆ՝ երկսյուն, միասյուն (57բ-59ա): ԳԻՐ՝ նասրալիֆ, շիֆասթեի տարրերով: ՏՈՂ՝ խառն: ՀԻՇՍԳԻՐ՝ յուրաքանչյուր Բ էջի ստորին ձախ անկյունում: ԹԱՆԱՔ՝ սև, ենթախորագրերը՝ կարմիր: ԿԱԶՄ՝ շագանակագույն մոմլաթ եզրագծերով, մարմարանման ստվարաթղթով (գույն՝ կանաչ, սպիտակ), մեջքը՝ շագանակագույն մոմլաթ, միջուկը՝ ստվարաթուղթ, աստառը՝ թուղթ (ունի սպիտակ թղթե երկկազմ): ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ասկզ., թուղթ մասն կազմաստառի (վրան գրված թվային հաշվարկ, 4 քըթա):

ՎԻՃԱԿ՝ բավարար. նորոգված. թ. 10 պատռված, հետագայում՝ նորոգված:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ա. 1բ-56բ خیرآباد لناعی مرحوم - Յուսուֆ Նաբիի (1640-1712 թթ.) «Խայրաբադ» խրատական պոեմը³³:

1բ Սկիզբ՝ حمد آكه كه حمد اكا رواد
حمدك دخى حمد نه يزادر
56բ Վերջ՝ بر كيمك كورر سه بو كتابى
بر فاتحه در رجای نابعى

Նաբիի երկրորդ պոեմն է, ավարտել է Հջր. 1117-ին/1705 թ., որի վկայութունն է պոեմի ավարտին գրված հատվածը (56բ): Լեզուն խրթին է լի արաբերեն և պարսկերեն բառերով ու քերականական ձևերով: Ենթախորագրերը պարսկերեն են:

Նաբին հենց ինքը հայտնում է, որ վերամշակել է ԺԲ. դարի իրանցի սուֆի բանաստեղծ Աթթարի (ամբողջական անուն՝ Շեյխ Ֆերիդեսդին Մուհամմեդ իբն Իբրահիմ Աթթար) «Իլլահինամէ»-ի ("Ilâhîname") սյուժեն:

Պոեմը սկսվում է միաստվածութունը փառաբանող աղոթքով, հաջորդում է Մուհամմեդ Մարգարեին ուղղված ներբողը, գովեստի խոսքեր է ասում

³³ Վերնագիրը նշված է պահպանակ Աա-ում:

իր հովանավոր՝ բարեսեր, լուսամիտ Մեծ վեզիր Մեհմեդ փաշային և ժամանակի Սուլթան Ահմեդ Գ.- ին (1703-1730 թթ.)³⁴:

ՆԱԽԱԳԱՂԱՓԱՐ ՕՐԻՆԱԿԻ ՀԻՇՆԱՍԱԿԱՐԱՆ

قطعة تاريخ تمام كتاب 56ر
 بو تازہ اثرله بينه نابي
 مجموعة روزكار طولسون
 يازسون ورق سپهره خورشيد
 تاريخن اثر مبارك اولسون
 سنة ١١١٧ 35

ԼՈՒՍԱՆՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ Հավելումներ, օսմաներեն բառերի հայերեն տառադարձումներ:

ԱՅԼ ԶԵՌԱԳԻՐ ՕՐԻՆԱԿՆԵՐ ԸՍՏ ԶԵՌԱԳՐԱՅՈՒՅԱԿԻ՝ *Ismail Parlatir, György Hazai, Barbara Kellner-Heinkele*, Catalogue of the Turkish Manuscripts in the Library of the Hungarian Academy of Sciences, Hungary, 2007, TÖRÖK.O.96 [point 4], pp. 172-173; TÖRÖK.O. 163 (45b-93a), p. 230; TÖRÖK.O. 397 (47b-108b), p. 231:

բ. 57բ-9ա «Լավ թրգմ.՝ «Լավ փաստաթուղթ (հաստատագիր) և պաշտոնական գործողության հաստատման, վավերացման համար վայելուչ մակագրություն գրելու կանոնները»):

ՀԵՏԱԳԱՅԻ ՀԻՇՆԱՍԱԿԱՐԱՆ

1ա (Տիրոջ)՝ «من كتب الفقر السيد عبد الله الشكري غفر الله له و لواديه و احسن اليهما (թրգմ.՝ «Սերիդ Աբդալլահ ալ Շյուքրիի գրքերից, Աստված նրան ներել է ...»):

³⁴ Ստեղծագործության մասին մանրամասն տե՛ս E. J. W. Gibb, *A History of Ottoman Poetry*, Vol. 3, London, 1965, pp. 370-374:

³⁵ Հունգարիայի Գիտությունների Ակադեմիայի ձեռագրացուցակում (*Catalogue of the Turkish Manuscripts in the Library of the Hungarian Academy of Sciences*), պոեմի ավարտ համարվել է այս հատվածն ամբողջությամբ: Թեև այն համարվում է ստեղծագործության ավարտ, սակայն մեր նկարագրական կադաստրում այն ենթադրում է հեղինակի հիշատակարանը, ուր նշվում է ստեղծագործության գրման տարեթիվը:

ԿՆՔԱԳԻՐՈՇՄ՝ 1ա՝ " سيد عبد الله شكري " (թրգմ.՝ «Սեիդ Աբդալլահ Շյուքրի»):

ՄԱՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ 1ա استصحبه الفقر الحقيير هاشم (թրգմ.՝ «Հանգուցյալ չքավոր նվաստ Հաշիմ»); 1ա ١٢٤٥ م معلم أمدى سنة؟ استصحبه يوسف (թրգմ.՝ «Հանգուցյալ Յուսուֆ՝ Մուսալիմ Ամդի, տարի՝ Հջր. 1245/1829 թ.»):

ՌՈՒՍԵՐԵՆ ՆՇՈՒՄ՝ Պհպ. Աբ (բովանդակության վերաբերյալ)՝ "наваучительная поэма Хабу":

ՆՇՈՒՄ՝ Ա կազմաստառին՝ «Մատենադարան Մայր Աթոռոյ, Ի գրոց՝ Պրն. Ք. Պատկանեանի, Նուէր՝ Ս. Պատկանեանից, Ստացուել է՝ 1903»:

Հ^մ 302 ԽՈՍՐՈՎ և ՇԻՐԻՆ (خسرو و شیرین) [ժե. դար]

ԹԵՐԹ՝ 156: ՊՐԱԿ՝ 9x8+7x12 (մեկընդմեջ 8 և 12 թերթանոց պրակներ, 4՝ 10, 5՝ 13, 16՝ 5): ՆՅՈՒԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹՅՈՒՆ՝ 19.5x13: ԳՐՈՒԹՅՈՒՆ՝ երկսյուն, առնված կարմիր եզրագծերով ուղղանկյան մեջ: ԳԻՐ՝ նասթալիֆ: ՏՈՂ՝ 17: ՀԻՇԱԳԻՐ՝ յուրաքանչյուր Բ էջի ստորին ձախ անկյունում: ԹԱՆԱՔ՝ սև, ենթախորագրերը՝ կարմիր: ԿԱԶՄ՝ դրոշմագարդ (կենտրոնում Մամիդուլա՝ ծաղկային), մուգ շագանակագույն կաշի, միջուկը՝ ստվարաթուղթ, աստառը՝ թուղթ: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա + Բ, սպիտակ թուղթ:

ՎԻՃԱԿ՝ բավարար. նորոգված. պրակները նորից կարված խախտումներով. առաջին պրակի թերթերն իրարից առանձնացած և մեջքից անջատված է. մեջքի ստորին հատվածը ընկած. 2ա՝ պատռված. խոնավուլթյուն տեսած:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

ժե. դարի թուրք բանաստեղծ Շեյխիի (իսկական անունը՝ Յուսուֆ Սինան Գերմիյանի, մահ. 1431 թ.) «Խոսրով և Շիրին» պոեմը: Պոեմն ունի պակասավոր հատվածներ, որոնց ստորին լուսանցքներում գրված է "نقصاندر" («Նոքսանդըր», թրգմ.՝ «թերի է») (38բ, 49բ, 50բ, 153ա): Հավանաբար, ձեռագրի բնագիրը համեմատվել է պոեմի մեկ այլ ձեռագիր-օրինակի հետ և արվել է նմանօրինակ նշում:

1բ Սկիզբ՝ بحمد الو احد الاحد القديم
و بسم الله ذى المنّ العظيم

155բ Վերջ՝ اولاً عرش اقسري كورسي سدیری
جهان چاکر جهانبان دستکیری

Շեյխին պոեմը գրել է Մուրադ իբն Մեհմեդ խանի (Մուրադ Բ., 1421-1451 թթ.) գահակալության տարիներին: Ակսվում է միաստվածությունը փառաբանող հատվածով, աղոթքով, ճանապարհի իմաստության, արարչագործության և արարչի գալուստի վերաբերյալ մի քանի խոսքով, Բարձրյալի խորհրդին ուղղված աղոթքներով, առ Աստված աղերսանքով, Մուհամմեդ Մարգարեի և նրա սերնդակիցների, Մեծագույն Սուլթան, վստահելի տեր Մուրադ իբն Մեհմեդ խանի ներբողներով:

ՀԵՏԱԳԱՅԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Պհպ. Բա (Տիրոջ) بو كيتابين صاحبی خديجه خاتون (թրգմ.՝ «Այս գրքի տերը Հադիջե խաթունն է»):

ԼՈՒՍԱՆՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ Պոեմից հատվածներ կամ հավելումներ պոեմին:

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 37բ (սև, բոլորչի)՝ անվերծանելի:

ԳՐՉԱՓՈՐՉ՝ 1ա, 155բ-6բ՝ Տարբեր ուղղություններով գրություններ են, որոնք չեն վերաբերում ձեռագրի բովանդակությանը, պհպ. Բա՝ նամակներից հատվածներ՝ عزتو و مرتحتلو قرداشم ملا محمد... (թրգմ.՝ «Մեծապատիվ, գթացող իմ եղբայր Մուլլա Մեհմեդ...»):

ՆԿԱՐՉԱՓՈՐՉ՝ 50ա լս.՝ Թռչուններ (գույներ՝ սև, սպիտակ):

ՆՇՈՒՄ՝ «Ի գրոց՝ Պր. Ք. Պատկանեանի: Նուէր՝ Ս. Պատկանեանից: Ստացուել է՝ 1903 թ.»:

ԱՅԼ ՁԵՌԱԳԻՐ ՕՐԻՆԱԿ ԸՍՏ ՁԵՌԱԳՐԱՅՈՒՅԱԿԻ՝ *Charles Rieu*, Catalogue of the Turkish Manuscripts in the British Museum, *Osnabrück*, 1978, *Add.* 7906, pp. 165-166:

Հ^մր 312 ԺՈՂՈՎԱԾՈՒ (مجموعه) 1848 թ.

ԹԵՐԹ՝ 23. չգրված՝ 12ա, 15բ, 16ա, 16բ, 17ա, 17բ, 18ա: ՊՐԱԿ՝ VI (12)+VI-1 (23): ՆՅՈՒԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹՅՈՒՆ՝ 21.5x17.5: ԳՐՈՒԹՅՈՒՆ՝ տարբեր (միասյուն, երկսյուն, եռասյուն): ԳԻՐ՝ ոփկա: ՏՈՂ՝ 8-22: ԹԱՆԱՔ՝ սև: Զօնգ: ԿԱԶՄ՝ նոր կազմ.

շագանակագույն մոմլաթ, միջուկը՝ ստվարաթուղթ, աստառը՝ թուղթ: ՊԱՀՊԱՆԱԿ՝ 2 (Ա+Բ), սպիտակ չգրված թուղթ, մասն կազմաստառի:

ՎԻՃԱԿ՝ բավարար. նորոգված. պրակները կրկին կարված. նորոգելիս հին կազմը (գունազարդ ստվարաթուղթ՝ սև, դեղին, կապույտ, կանաչ, վարդագույն) ձեռագրում պահպանվել է և համարակալվել՝ Ա-Բ. խոնավություն տեսած. որոշ թերթեր կարկատված են (Աբ, 1ա, 1բ, 2բ), պատուված (2ա):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ձեռագիրը կարծես եղել է աշխատանքային տետր՝ բազմաթիվ ուղղումներով, ջնջումներով, լրացումներով, նաև մատիտով հավելումներ, մեկնաբանություններ (այլ ձեռք):

Ընդգրկված նյութը բազմաբովանդակ է: Ձեռագիրն ընդգրկում է նամակ՝ գրված Նիկոլայ Պավլովիչին [Նիկոլայ Ա., 1796-1855 թթ.] (شوكتلو مهابتلو مرحمتلو) «Օգոստափառ, ազդեցիկ, գթացող, բարերար կայսր...») (Աբ)³⁶, նրան ուղղված նամակից առանձնացված նախագասություններ, հատվածներ, մակդիրներ (էպիտետներ) կայսեր համար (1ա)³⁷:

«Աշխարհում գեղազրույթուն առանց ավարտի» (جهانده حسن خط وار بی نهایت) վերնագրի տակ բերված են 4 նամակների սկսվածքներ, որոնք վերաբերում են դպրոցին, ուսումնառությանը, դպրոցական առօրյային (1բ, 2ա-4ա):

«Օգոստափառ արքա Մեծն Ալեքսանդր Պավլովիչի [Ալեքսանդր Ա., 1777-1825 թթ.] և քաջ սպայի հետ տեղի ունեցածի մասին» (وقوع کیفیت شاه) (شوکتیناه حضرت عکساندر پاولویچ یا افيچار متجاسر) որի ավարտին չկա ստորագրություն և թվականի նշում (5բ-6ա):

Երկայուն ջնջումներով, ավելացումներով, ուղղումներով գրություններից հնարավոր է եղել վերծանել Նիկոլայի ամուսնությունը շնորհավորող 2 ֆախիդ և մաղթանքներ. ավարտին նշվում է 1846 թ. (6բ-7ա): Քերականական բաժին

³⁶ Աբ-ում կան նաև 80-1000 թվերի տառային համարժեքները, հոլովների անունները:

³⁷ معظم ايمپراطور حضرت نيفولا پاولويچ (թրգվ.՝ «Մեծագուր կայսր, Նորին վսեմություն Նիկոլայ Պավլովիչ»), کرمان عدالتلو شهنشاہ رحم کستر (چاکر پرور), «Առասաշնորհ, արդար, գթություն տարածող (ծառայատե) արքայից արքա», زيبا طلعت ملك پيكر شفقتلو جليل الشان (թրգվ.՝ «Գեղեցկաբեմ, հրեշտակապետեր, գորովագույր, բարձրապատիվ»), نحيفی چاکران صدرين (թրգվ.՝ «Ժառանգ, գազիախֆերներ փառավորյալ, նշանավոր կայսր»):

(7բ-9ա, 12բ-15ա): Ողջունագրեր կայսրին, առաջին նախարարին, իշխանին (11բ)³⁸: Երկխոսության արձանագրումներ՝ դաշինքի, որպիսության հարցման, տեսակցության վերաբերյալ (9բ-11ա): Անձնական բնույթի նամակներ՝ գրված փառավոր ընկերոջը արժանապատիվ ընկերության կապակցությամբ, սիրելի բարեկամ, դպրոցակից, շնորհաշատ, ճարտար, ջանասեր, արժանապատիվ, ուսումնատենչ, վարպետության պատվանունը կրող, պերճույունն փնտրող, ազնիվ վարքի տեր, նախամեծար, լեզվաճանաչ, խոհեմ, ամենահաս ընկեր-եղբայրներին, որոնք ավարտվում են տարբեր թվագրումներով (հիմնականում շջր. 1246/1830-1831 թթ., 1846 թ., 1848 թ.), ստորագրություններով (անվերձանելի), երբեմն նաև ասացվածքներով (4բ, 5ա, 18բ, 19աբ, 20աբ, 21աբ, 22աբ, Բա):

ՃՆՇԱԳՐՈՇՄ՝ Ձեռագրի բոլոր թերթերի վրա՝ թագ, խառը (լատինատառ և կիրիլիցա) հետևյալ վերտառություններով՝ «ВИАМЕHC. ФАБР»:

ՆՇՈՒՄ՝ Նուիրատու՝ Ս. Պատկանեան (1903 թ.):

Հ^{օր} 313 ԳԻՐՔ ԸՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ (بَيْنَ الْحَقِيقَةِ كِتَابِي) ԺԹ. դար

ԹԵՐԹ՝ 42 (ունի արաբանիշ էջակալում՝ ١-٤٢, որ է 1բ-42բ). չգրված՝ 29ա-42բ: ՊՐԱԿ՝ 21 (42): ՆՅՈՒԹ՝ թուղթ լուսագծերով և լուսադրոշմով՝ «եռամահիկ»: ՄԵՇՈՒԹՅՈՒՆ՝ 21.5x16.6: ԳՐՈՒԹՅՈՒՆ՝ միասյուն, առնված մատիտով գծված շրջանակի

³⁸ جناب ربّ شیرنر شوکتلو ایمپراطور عدالتکتر افندمز حضرتلرینی سریر شوکتمصیر شاهانه لر نده همیشه مقرر و روع عالم خصوصن وجود لازم نمود وجود همایونلرینی دوکنمز ایام عاقبتله معمر ایلیوب سایه مرحمتوایه جهانداریلرینی مفارق عالمیاندہ بر قرار ایلسون آمین و دولتو ولی عنعم وزیر مرتوشیم غراف افندمز حضرتلرینی با صحت دائمه مسند و الای صدارتلرنده مؤید و ظلّ ظلیل مکار معديل وزیرانه لرینی [وزیرانلرینی] جملمز [جمله مز] اوزرلرندن عدم مبعد ایلسون آمین و ذات برکزیده صفات مرحمت آیاتلرینی مسند حلیل عالیلرنده آید نشین و کافه امور دولتلرین با یاورى توفیقات ربّانیه با لهوله برقىل. حسنیه رهین ایلیوب دل رافتعیل سامیلرین مسرت دیموتقیله شاد و خندان ایلسون آمین سنه ٤٨٠ یوم ٢٨ مایس «Բարձրյալ Տեր, կորովափառ, օգոստափառ, արդար կայսր, Նորին վսեմություն մեր թագավոր՝ քն վեհապետական, կայսերական գահը միշտ հաստատուն և եռանդդ էլ անսպառ լինեն, հասկապես գոյության համար անհրաժեշտ կայսերական օրհնյալ օրերն առողջ և հավես լինեն, գթասիրտ հովանու ներքո թագավորությունդ՝ հաստատուն թող մնա, Ամեն: Կսեմաշում, գթացող, բարեբար նախարար, մարդասեր գրաֆ, Նորին մեծություն մեր Տեր, ճիշտ աղոթողների շնորհիվ գնդի հրամանատարի պաշտոնը հավիտյան և բարձրյալի հովանու ներքո թող լինի, նենգավոր, խարդախ նախարարներից հեռու մնա, Ամեն: Ընտրյալ, գթառատ տիրոջ տիտղոսը, բարձր պաշտոնդ, գահակալությունդ՝ հավիտենական լինի, համայն տերությունների գործը քն օգնությամբ, Աստվածային հանությամբ լուծվի, ինչպես ասում են՝ բարձր, նվիրական երջանկությունդ էլ թող մշտնջենական լինի: Օր 28, Մայիս, 48 ք.»):

մեջ (12.7x16.8): ԳԻՐ՝ նախա: ՏՈՂ՝ տարբեր (21-23): ՀԻՇԱԳԻՐ՝ յուրաքանչյուր Բ էջի ստորին ձախ անկյունում: ԹԱՆԱՔ՝ սև: ԿԱԶՄ՝ նոր կազմ. մուգ շագանակագույն, ճնշագծերով մոմլաթ, միջուկը՝ ստվարաթուղթ, աստառը՝ դեղնավուն թուղթ: ՊԱՀՊԱՆԱԿ՝ 2 (Ա+ Բ), դեղնավուն չգրված թուղթ, մասն կազմաստառի:

ՎԻՃԱԿ՝ բավարար. նորոգված. ձեռագրում պահպանվել է հին թղթե կազմը, իր պահպանակներով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կրոնական աշխատություն՝ նվիրված քրիստոնեական կրոնի պարզաբանմանը: Բաղկացած է երկու գլխից. Առաջին գլուխ՝ վերաբերում է Մենզոց գրքին (1բ-20ա), երկրորդ գլուխ՝ Մուհամմեդ Մարգարեի անտեսումը քրիստոնեական Սուրբ գրքում (20ա-8բ):

Առաջին գլուխ.

1բ Սկիզբ՝ ای الله محمد بر دوستك سوزلرینی دگلیك و بر نصرانینك دلیللرینه جواب ویرمکه چالشك...

20ա Վերջ՝ اوزکه جواب ویره یم و الله تعالی حقیقتی طویمق و قلیلرگزده بنم دلیلرمک قوتک بلمکه مرحمتدن سزه ویرسون

Երկրորդ գլուխ.

20ա Սկիզբ՝ اولکی فصل ای الله محمد بر نصرانی مقدس یازولرک حقدده سویلیجکی سوزلری دخی ...

28բ Վերջ՝ جناب ربّ الرحمن الرحیم سزی هدایه و ارشاد ایلیوب کندو ایدی اولان یولنه کوترسون آمین

ԼՈՒՍԱՆՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ Բառի հայատառ գրություն կամ բառի հայերեն թարգմանություն:

ՌՈՒՍԵՐԵՆ ՆՇՈՒՄ՝ “Руководство ...”:

ՆՇՈՒՄ՝ Մատենադարան Մայր Աթոռոյ, Ի գրոց՝ Պր. Ք. Պատկանեանի, նուէր՝ Ա. Պատկանեանից, Ստացուել է՝ 1903:

Հնր 321 ԲԱՔԻԻ ԳԻՎԱՆՆՐ³⁹ (ديوان باقى) Հջր. 1016/1607 թ.

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ [Ներկայիս՝ Ստամբուլ]:

ԳՐԻՉ՝ Հասան իբն Մեհմեդ:

ԹԵՐԹ՝ 125. չգրված՝ 125բ: ՊՐԱԿ՝ IV (8)+VI (20)+IV(28)+VI (40)+IV (48)+VII (62)+V (72)+VII-4 (82)+III (88)+IV(96)+VIII (112)+I (114)+VIII-5 (125): ՆՅՈՒԹ՝ թուղթ, թ. 122-3՝ այլ թուղթ (կանաչ): ՄԵԾՈՒԹՅՈՒՆ՝ 18x9.5: ԳՐՈՒԹՅՈՒՆ՝ երկսյուն, գրադաշտն առնված բաղադրյալ ոսկե շրջանակի մեջ (5.7x13.7): ԳԻՐ՝ նասրալիֆ: ՏՈՂ՝ 17: ՀԻՇԱԳԻՐ՝ յուրաքանչյուր Բ էջի ստորին ձախ անկյունում: ԹԱՆԱՔ՝ սև, խորագրերը՝ կարմիր: ԿԱԶՄ՝ սև մոմլաթ վրան փակցված ծաղկաթուղթ (կանաչ, արծաթագույն բուսական զարդանախշերով), միջուկը՝ ստվարաթուղթ, աստառը՝ ծաղկաթուղթ, վերին լուսանցակողերին սև թանաքով՝ ديوان باقى كليتى (թրգմ.՝ «Բաքիի ընդհանուր գործերի դիվանը»): ՊԱՀՊԱՆԱԿ՝ Յ (Ա,Բ,Գ)+Յ (Դ,Ե,Զ) (Բ,Գ,Դ,Ե՝ սպիտակ թուղթ, Ա, Զ՝ նարնջագույն թուղթ՝ լուսագծերով և լուսադրոշմով՝ «թագ, որի տակ բուսական զինանշան հիշեցնող զարդանախշ Յ-6 թևանի աստղով»):

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹՅՈՒՆ. Ճակատագարդ՝ 1բ: Գույներ՝ կապույտ, կարմիր, սպիտակ, մանուշակագույն, երկնագույն, սև, ոսկի:

ՎԻՃԱԿ՝ բավարար. նորոգված. նորից կարված պրակային խախտումներով. խոնավուլթյուն տեսած. ցեցակեր լուսանցքներում:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

ԺԶ. դարի թուրք բանաստեղծ Մահմուդ Աբդուլ Բաքիի (1526-1600 թթ.) Գիվանն է (պակասավոր):

1բ Սկիզբ՝ هنكام شب كه كنكره قصر آسمان
زين اولمشيدى شعله لنوب شمع اختران
126ա վերջ՝ بلمين آتى صنديكم نجيدر
ايشو يدر كنارنه بامك

Այն սկսվում է քասիդ-ներբողով՝ նվիրված Սուլթան Սուլեյման Ա.- ին (1բ-2բ)⁴⁰: Գիվանում ընդգրկված են նաև քասիդ-ներբողներ՝ նվիրված Սելիմ Բ., Մուրադ Գ.,

39 Բանաստեղծությունների ժողովածու:
40 Քասիդ-ներբողի անգլ. քրգմ. տե՛ս, E. J. W. Gibb, A History of Ottoman Poetry, Vol. 3, London, 1965, pp. 147-151:

ՀԵՏԱԳԱՅԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա محرم فى سنة ١٢٤٧ (թրգմ.՝ Տերը Օվանես Ամզի, տարի՝ Հջր. 1247 /1831-1832 թթ. արաբական լուսնային տարվա 1-ին ամսին (Մուհարրեմ)):

* Տե՛ս, Բաբիի Գիվանի մեկ այլ ձեռագիր օրինակ՝ ՄՄ ձեռ. Հ^մ 948⁴⁸:

ԼՈՒՍԱՆՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ Բաբիի փախչները (37բ, 39ա, 68բ, 69ա, 70ա, 75բ, 77աբ, 78աբ, 79աբ, 80աբ, 84ա), երբեմն նաև վանկաչափերի նշումներ (5աբ, 7ա, 8ա, 9ա), բառի հայերեն տառադարձում «սիլնիլէլէ» (7բ):

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 1բ (ձվածիր), 2ա, 126ա (ութանկյուն)՝ անվերծանելի:

ՌՈՒՍԵՐԵՆ ՆՇՈՒՄ՝ Պհպ. Գա (բովանդակովյան վերաբերյալ)՝ “Смухоморопне тугреукого поэма Баку”:

ՀԱՅԵՐԵՆ ՆՇՈՒՄ՝ Կազմաստառ Ա՝ «Մատենադարան Մայր Աթոռոյ, Ի գրոց՝ Պրն. Բ. Պատկանեանի, Նուէր՝ Ա. Պատկանեանից, Ստացուել է՝ 1903թ.»:

ԱՅԼ ԶԵՌԱԳԻՐ ՕՐԻՆԱԿՆԵՐ ԸՍՏ ԶԵՌԱԳՐԱՅՈՒՅՄԱԿՆԵՐԻ՝ **Charles Rieu**, *Catalogue of the Turkish Manuscripts in the British Museum, Osnabrück, 1978, Add. 7922, pp. 187-188, Add. 25.423, pp. 188-189; Arabische, Türkische und Persische Handschriften der Universitätsbibliothek in Bratislava, 1961, Bratislava, pp. 340-341; Jan Schmidt, Catalogue of Turkish Manuscripts in the Library of Leiden University and Other Collections in the Netherlands, Volume I, Leiden, 2000, Cod. Or. 837, pp. 282-284; Ismail Parlatır, György Hazai, Barbara Kellner-Heinkele, Catalogue of the Turkish Manuscripts in the Library of the Hungarian Academy of Sciences, TÖRÖK.O.212, Hungary, 2007, pp. 177-178*⁴⁹:

⁴⁸ ՄՄ ձեռ. Հ^մ 948. Գրչության վայր՝ Կոստանդնուպոլիս, թվական՝ Հջր. 1017 /1607-1608 թթ., գրիչ՝ Աբդ ալ Սամադ Մահմուդ բն Մուհամմադ ալ Յենիշեհի, թերթ՝ 112: Գիվանի այս օրինակը ընդգրկում է 21 ֆախդ, 8 մուսամմաթ, 5 թախամիս-ի գազել, 1 մուխամմաս, 454 գազել, 10 ֆըթա, 21 մաթլա, 3 պարսկերեն թախամիս-ի գազել, 8 պարսկերեն գազել, 4 պարսկերեն մեսնևի, 3 պարսկերեն թեֆ բեյթ (Տե՛ս ձեռագրերի մասին մանրամասն Վ. Սահակյան, «Մահմուդ Աբդուլ Բաբիի Գիվանի ևս մի նորահայտ ընդօրինակություն (Մատենադարանի երկու ձեռագրերի համեմատական ֆննություն)», էջ 264-273):

⁴⁹ Հունգարիայի Գիտությունների Ակադեմիայում պահվող Բաբիի Գիվանի օրինակի սկսվածքն ու վերջը տարբեր են, ինչի մասին փաստում են ձեռագրացուցակի կազմողները (**Is. Parlatır and etc.**, *Catalogue of the Turkish Manuscripts in the Library of the Hungarian Academy of Sciences*) և նկատում, որ այս սկսվածքով և ավարտով օրինակն եզակի է: Բովանդակում է այս օրինակը 27 ֆախդ, 2 թերթիք-ի բենդ, 1 թերջիհ-ի բենդ, 7 թահմիս, 619 գազել, 24 ֆըթա, 38 մուֆրեդ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ՝ E. J. W. Gibb, *A History of Ottoman Poetry*, Volume, III, London, 1965, pp. 133-135, pp.145-147:

Հ⁵⁰ 323 ՖԱՀԻՄԻ ԳԻՎԱՆԸ (ديوان فهيم)⁵⁰ ԺԸ. դար

ԹԵՐԹ՝ 97: ՊՐԱԿ՝ VI(12), III(18), VII(32), III(38), VII(52), III(58), VII(72), III(78), VII(92)-2-III (96)+1: ՆՅՈՒԹ՝ թուղթ՝ լուսագծերով, ճնշագծերով և լուսադրոշմներով՝ լատինատառ «PP» (պհպ. Ա), լատինատառ «VID» (պհպ. Բ), «շրջանակներ», «ծաղիկ», «երեքնուկ» (թերթերի ստորին մասում), «առէջանման պատկեր», «շրջանակ վրան թռչուն», իսկ թ. 3, 51, 60՝ դեղին թուղթ: ՄԵԾՈՒԹՅՈՒՆ՝ 19x10.7: ԳՐՈՒԹՅՈՒՆ՝ երկսյուն, երբեմն ոսկյա շրջանակի մեջ առնված (2բ-5ա, 9ա-13ա, 32բ-3ա) (14x7): ԳԻՐ՝ նասրալիֆ նասալի տարրերով: ՏՈՂ՝ 17: ՀԻՇԱԳԻՐ՝ որոշ Բ էջերի ձախ անկյունում թեք գրված (2բ-32բ): ԹԱՆԱՔ՝ սև, վերնագրերը՝ կարմիր: ԿԱԶՄ՝ շագանակագույն լաքապատ մոմլաթ ոսկե դրոշմազարդ անկյունագծերով, միջուկը՝ ստվարաթուղթ, աստառը՝ թուղթ: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա+Բ, սպիտակ թուղթ, մասն կազմաստառի՝ պհպ. Աա մեջտեղի մասը պոկած հանած, այդ հատվածում հավանաբար եղել է որևէ պատկեր կամ ստորագրություն:

ՎԻՃԱԿ՝ բավարար. նորոգված. նորից պրակերը կարված. խոնավություն տեսած. գրադաշտը խոնացած, թանաքը ճապաղված (թ. 78-98). կազմի Բ փեղկը մասամբ առանձնացած է մեջքից, մեջքը կոտրված (վնասված), ստորին հատվածը կարված:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

ԺԷ. դարի թուրք բանաստեղծ Ֆահիմի (Ունջի Զադե Մուսթաֆա Զելեբի, Հջր-1037/1627 թ. - Հջր. 1057/1647-1648 թթ. կամ Հջր. 1058/1648-1649 թթ.) Դիվանն է: Դիվանը վերջում ունի հիշատակարան նախագաղափար օրինակի (96ա), ըստ որի՝ հայտնի է դառնում, որ Ֆահիմին եղել է եգիպտոսում Հջր. 1054-ին/1644-1645 թ. և հավանաբար հենց այդ ժամանակ էլ ավարտին է հասցրել իր Դիվանը:

دون کيجہ چرخہ کم عتاب ایتدم՝ 2բ Սկիզբ՝

Սկիզբ՝ ای بارگاه دلکش و ایوان دلک
دامن نك دار السعاده و العز و العان
یوسف کبی تحتکده سن یعقوب وش محتندہ بن
دل ساکن بیت الحزن تنهالره صادق بنی
50 վերնագիրը գրված է 2ա (ديوان فهيم) և 2բ (ديواني فهيم نامراد بي کس) էջերում:

حشره دك وقف اضطراب ايتدم

در مدار فجرن معنیده عد ایلوب قیلدم`
اکا لفظ اشارت کایده تحسین جانان عصر

Դիվանն ընդգրկում է ֆասիդներ (2բ-17ա, 29ա-31ա), 1 թերջիհ-ի բենդ (17բ-22ա), 3 թերֆիբ-ի բենդ (22ա-4բ, 24բ-6բ, 27բ-9ա), 1 թեադիս (վեցյակ ոտանավոր) (26բ-7բ), մուֆաթաթ` քաղաքին վերաբերող գազելներից և քասիդներից քաղված բեյթեր (երկտողեր) (31ա-2ա), այբբենական կարգով գրված գազելներ (32ա-89ա), 3 պարսկերեն գազել (92աբ), ժամանակագրություն ներկայացնող բանաստեղծություններ (chronogramme, تاریخ) (89բ-92ա) և ռուբայիներ (քառյակներ) (92բ-6ա):

Քասիդ-ներբողները նվիրված են Մուհամմեդ Մարգարեին (2բ-4ա, 4ա-5բ), Մեծն Մելանային [Ջելալետդին Ռումի] (5բ-6ա), Սուլթան Մուրադ խանին [Մուրադ Դ.] (6ա-8ա), էյուբ փաշային (8ա-9ա)⁵¹, Ավնի էֆենդիին (9ա-10բ)⁵², էյուբ փաշայի նեղոսում տարած հաղթանակին (29ա-31ա), բողոքագիր և մատուցակի բաժակաճառ և ֆանրիյե⁵³ (10բ-3ա)⁵⁴, բողոք և անձնագովք պարունակող մեկ այլ ֆասիդ (13բ-15ա), ֆասիդ իր գեղեցիկ վարմունքների մասին (15աբ), ֆասիդներ` իսկական և ճշմարիտ իրերի (15բ-16բ), ծոմ պահելու մասին (16բ-17ա), թերջիհ-ի բենդ (17բ-22ա), թերֆիբ-ի բենդեր` նվիրված գեղեցիկ բանաստեղծությանը (22ա-24բ), ութերորդ օրվա գանգատին (բողոքին) (24բ-26բ), ժողովրդին (27բ-29ա), թեադիս (վեցյակ ոտանավոր)` խոսքի հավաստիացման մասին (26բ-27բ), ժամանակագրական բանաստեղծություններ` նվիրված պաշտոնյանների նվաճումներին, կարևոր իրադարձություններին` տարեթվերի հիշատակումներով. Սուլթան Մուրադի [Մուրադ Դ.] կողմից Բաղդադը նվաճելու (89բ-90ա), Սուլթան Իբրահիմ խանի [Իբրահիմ Ա.] թագադրմանը (90աբ), էբու-Սուուդ էֆենդիի Շեյխուկիսլամ կարգվելուն (90բ-1ա), Ջելեբի Մեհմեդ փաշայի վեզիր դառնալուն (91աբ), անվերնագիր բանաստեղծություններ, որոնց ավարտին գրված են Հջր. 1054/1647 թ., Հջր. 1050/1640 թ., Հջր. 1047/1637 տարեթվերը, իսկ Հջր. 1047/1637 թ. տարեթիվն

⁵¹ Եգիպտոսի կառավարիչը, բանաստեղծի հովանավորը, որի հետ որպես գրագիր մեկնել է Եգիպտոս:

⁵² Եղել է դեֆթեր էմինին` Օսմանյան կայսրության կալվածքների արձանագրման վարչության գլխավորը:

⁵³ Անձնագովքերգող բանաստեղծություն:

⁵⁴ Տե՛ս անգլ. քրգով. E. J. W. Gibb, *A History of Ottoman Poetry*, vol. 3., p. 293:

ունեցող գազելը վերնագրված է, որպես «Ուրֆիի⁵⁵ Դիվանի համար գրված» (برای نوشتن دیوان عرفی) (91բ-2ա):

Ծնթ.՝ 1աբ Դիվանի բովանդակության ցանկը, ձեռագրի էջաքանակը, 2ա Ֆահրիմի ռուբայիներից, քրթաներից օրինակներ, 96ա-7բ երկտող բանաստեղծություններ (մուֆրեզ), քասիդ (այլ ձևեր), պոչ. Բ՝ գազելներ (այլ թուղթ, այլ ձևեր):

ՆԱԽԱԳԱՂԱՓԱՐ ՕՐԻՆԱԿԻ ՀԻՇՍԱԿԱՐԱՆ

بو دخی مصره داخل اولدغمزه اوچ تاریخدر 96ا
حساب سال تاریخ فهیم ایتدی بو مصرع حصر
بک الی دورده اوچ تاریخ اولدی عزم بلد المصر
در مدار فجرن معنیده عد ایلیوب قیلدم
اکا لفظ اشارت کایده تحسین جانان عصر
سنه ۱۰۵۴
تم

ՀԵՏԱԳԱՅԻ ՀԻՇՍԱԿԱՐԱՆ

2ա (Տիրոջ) صاحب و مالک حاجی زاده محمد الشهیری (թրգմ.՝ Տեր և Ստացող Հաջի Հադե Մեհմեդ Ալ-Շեհիրի):

2ա (Տիրոջ) از کتب العبد الضعیف میر رأفت کان الله تعالی (թրգմ.՝ Աբդ ալ-Ջալիֆ Միր Ռաֆեթի գրքերից, թող Աստծո կամքը լինի):

ԼՈՒՍԱՆՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ Բնագրային հավելումներ՝ ֆասիդներ, գազելներ, թերջիհ-ի բենդ, ինչպես նաև բանաստեղծություններ, որոնք նմանակումն են Շեյխի բանաստեղծությունների: Թվային հաշվարկներ: 2բ՝ قصیده برای نورانی محمد افندی عبد مصرا՝ (թրգմ.՝ Քասիդ նվիրված եգիպտոսի ծառա լուսեղեն Մեհմեդ էֆենդիին):

ՄԱՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ Պոչ. Աս استصحبه المذنب المحتاج الي رحمة الله الفقار السيد محمود مير [سنه ۱۲۰۹] طیار سر بوابین درکاه عالی سنه تسع و مائین و الف (թրգմ.՝ Աստված ողորմի հանգուցյալ նվաստ Սալիդ Մահմուդ Միր Թալարին՝ գլխավոր դռնապանը Բարձր արքունիքի, տարի՝ Հջր. 1209/1794 թ.):

ՌՈՒՍԵՐԵՆ ՆՇՈՒՄ՝ Կազմաստառ Ա (բովանդակության վերաբերյալ)՝ “Стихотворение турецкого поэта Фахими”:

⁵⁵ Ուրֆի Շիրազի՝ ժ. դարի իրանցի բանաստեղծ (1555/6-1591 թթ.):

ՆՇՈՒՄ՝ Կազմաստառ Ա-ին փակցված մանուշակագույն թուղթ «Մատենադարանի Մայր Աթոռոյ, Ի գրոց՝ Պրն. Ք. Պատկանեանի, Նուէր՝ Ս. Պատկանեանի, Ստացուել է՝ 1903 թ.»:

ԱՅԼ Զեոս-ԳԻՐ ՕՐԻՆԱԿՆԵՐ ԸՍՏ Զեոս-ԳԻՐԱՅՈՒՅԱԿՆԵՐԻ՝ *Charles Rieu*, Catalogue of the Turkish Manuscripts in the British Museum, *Osnabrück*, 1978, *Add.* 7924, *p.* 196; *Güstav Flügel*, Die Arabischen, Persischen, Türkischen Handschriften der k. u. k. Hofbibliothek zu Wien, I, *New York*, 1977, *SS.* 659-660:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ՝ *E. J. W. Gibb*, *A History of Ottoman Poetry*, 3 vol., London, 1965, pp. 290-293.

Հմր 324⁵⁶ ԱՐԱԲԵՐԵՆ ԲԱՅԵՐԻ ԽՈՆԱՐՀՄԱՆ ՄԵԿՆՈՂԱԿԱՆ-
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ (هذا شرح امثله) ԺԹ. դար

ՍԻԼԻՍԹՐԵՆ⁵⁷:

ԳԻՒԶ՝ Շեյխ Աբդուլ Ռահման էֆենդի: Հեղինակ՝ Մուհամմեդ իբն Ալ Հաշի Բեքիր :
ԹԵՐԹ՝ 40. չորված՝ 38բ: ՊՐԱԿ՝ 4 V (40): ՆՅՈՒԹ՝ արևմտյան թուղթ՝ լուսագծե-
րով, լուսադրոշմով՝ լատինատառ «PA», Միսթարայով (ճնշագծերով): ՄԵԾՈՒԹՅՈՒՆ՝
20.5x13.5: ԳՐՈՒԹՅՈՒՆ՝ միասյուն, առնված կարմիր շրջանակի մեջ (14.5x7.3): ԳԻՐ՝

⁵⁶ Զեռագրում կան նաև տարբեր բովանդակությամբ հետագայում ավելացված արաբերեն, պարսկերեն, օսմաներեն գրվածքներ (այլ ձևով). 1ա (օսմաներեն) Գեղատուն հոգնածության դեմ (فرنك زحمتی ایچون), «Շարհէ Ամսալէ Մուխթելիֆ» (شرح امثله مختلفه) աշխատությունից բերված փոքր հատված՝ نصر բայի խոնարհմանը վերաբերող հատվածից, 39ա (արաբերեն) Բուժական-խրատական բնույթի բանաստեղծություն՝ առնված կարմիր բաղադրյալ եռանկյան մեջ, մնացյալը՝ տարբեր հիվանդությունների վերաբերող դեղատոմսեր, որոնք բերված են Շեյխ Մահմուդ Ուսթուպարի աշխատությունից, 39բ (օսմաներեն) Ուսթուպարի Մահմուդ էֆենդիի [նույն Շեյխ Մահմուդ Ուսթուպարին է] ողբը (اسكدارى محمود افندى فرياد), 40ա (օսմաներեն, պարսկերեն) ԺԵ-ԺԷ. դարերի բանաստեղծներ՝ Ռուշենիի [Դեղե Օմեր Ռուշենի, 1407-1487 թթ.], Ռիյազիի [Ռիյազի Մեհմեդ էֆենդի, 1572-1644 թթ.], Ռուհի Բաղդադիի [մահ. 1605 թ.], Նեֆիի [Օմեր Նեֆի, 1572-1635 թթ.] ողբերը; Մահմուդ էֆենդիին նվիրված ներքոյ (نعت بر كمشنه نك) (حضرت محمود افندى), որևէ կորցրած իր գտնելու համար աղոթքի կատարման կարգ (بر كمشنه نك) (بر شیبی ضایع اولسه ایکی رکعت نماز قلسه بعد السلام...), էքզեղի աղյուսակ, 40ա էջի ստորին աջ անկյուն (արաբերեն)՝ դեղատոմս, 40բ (արաբերեն) Ազիզ Ալ-Ուսթուպարի Մահմուդ էֆենդիին պատկանող կրոնախրատական գրվածքներից, 40բ (արաբերեն) Իմամ Սուուդի գրքից վերցված Հադիսի օրինակ, գրիչն է Յահյա Մելիբը, Կազմաստառ Բ վերին հատված (օսմաներեն)՝ Հավվայի [ֆաղրապենիխ] պատրաստման բաղադրատոմս:

⁵⁷ Օսմանյան Կայսրության էյալեթներից, որը մինչև 1593 թ. ընդգրկված է եղել Ռումելի էյալեթի կազմում՝ որպես սանջակ:

سنة ١٢٢٠

في ٢٧ م

(Թրգմ.՝ «Միր ալ-Հաջ Մեհմեդ [Մուհամմեդ] Մուրադ Սալիհին որոշումով (բարեհաճությամբ) տրվել է գեղազրի կայսերական [բարձրագույն] վկայագիր, տարի՝ Հջր. 1220 արաբական լուսնային տարվա 1-ին ամսի 27-րդ օրը (Մուհարրեմ 27-ին) / 1812 թ. փետրվարի 11»):

ԼՈՒՍԱՆՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ Բնագրային հավելումներ:

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 1ա (Տիրոջ կնիք, սև, բոլորշի) مراد بنده خدا محمد مراد (Թրգմ.՝ «Աստուծո ծառա Մուհամմեդ Մուրադ»):

ՄԱՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ Կազմաստառ Բ (արաբերեն) تراب اقدام سادات مالکية اصحاب مراتب عاليه اعني ابو تراب يحيى بن احمد بن اسمعيل بن محمد بن علي المالكي الاشعري النقشبندی من ابناء قسطنطينيه من اولاد شيخ محمد ببيازاري و هو والد مرحوم شيخ جسم لطيف افندي خلوتي رحمه العزیز (Թրգմ.՝ «Բարձրաստիճան Տեր Աբու Թիրաբ Յահյա իբն Ահմադ իբն Իսմայիլ իբն Մուհամմադ իբն Ալի Ալ-Մալիքի Ալ-Աշարի Ալ-Նաբաթբանդի Կոստանդնուպոլսից, որդին Շեյխ Մուհամմադ Բայփազարիի, որը հայրն է հանգուցյալ Շեյխ Ջասեմ Լաթիֆ Էֆենդիի, Աստված ողորմի և հիշատակը սրբացնի»):

ՌՈՒՍԵՐԵՆ ՆՇՈՒՄ՝ “Комментарий на арабский ...” (?):

ՆՇՈՒՄ՝ Կազմաստառ Ա-ին փակցված վարդագույն թուղթ՝ «Մատենադարան Մայր Աթոռոյ, Ի գրոց՝ Պր. Ք. Պատկանեանի, Նուէր՝ Ա. Պատկանեանից, Ստացուել է՝ 1903»:

Հ^մր 413 ՀԵՔԻԱԹՆԵՐԻ, ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐԻ ՏԵՏՐ

(دفتر حكايات و روايات) ԺԹ. դար

ԹԵՐԹ՝ 58: ՊՐԱԿ՝ 1x58: ՆՅՈՒԹ՝ թուղթ՝ լուսագծերով: ՄԵՄՈՒԹՅՈՒՆ՝ 22x15.5: ԳՐՈՒԹՅՈՒՆ՝ միասյուն: ԳԻՐ՝ ո՛րևէ: ՏՈՂ՝ տարբեր: ՀԻՇԱԳԻՐ՝ յուրաքանչյուր Բ էջի ստորին ձախ անկյունում: ԹԱՆԱՔ՝ սև: ԿԱԶՄ՝ ծաղկաթուղթ (նարնջի, սև):

ՎԻՃԱԿ՝ բավարար:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքային տեսք: Հեքիաթների և պատմվածքների տեսք է:

1ա Սկիզբ՝ قوردك برى يابان صحرالرى بر او بوله مديغندن و آجلق جاننه كار ايتمش اولديغندن

نا چار جلب قوی ایچون بر کویه و ارمش کوی اولرینک داملرینی طولا شورکن بر باجه دن کورمشکه...

لألسنه خطاب اينوب هايدي قالى كيده لم واقعا بو حريفك نجتى *Կարգմաստառ Բ Վերջ* طيقانمشدر ديمش ايدى اول قره نجتلو بو كلامك مزاياسنه و اره ميوب ينه طيقندى ديه رك يرينى طوقومغه باشلايحق شاهد فى بابا كرچكدن طيقانمش ديوب مفارقت ايتمشدر و برو طرفده اويقلو اي الوب بيان كيفى كوك و دماغى چاغ اولمشدر.

ժողովրդական հեքիաթների, կենցաղային, կրոնական բնույթի, գեղագրությունը, ընկերությունը վերաբերող պատմությունների կողքին կան պատմություններ, օրինակ՝ Շահ Ալեքսանդրի և ազատամիտ, իմաստուն Ջալիևոսի մասին (31ա-4ա), Ալեքսանդր Շահի և Հնդկաստանի իմաստունների հետ եղած դեպքի մասին (35բ-6ա), Ալեքսանդրի և Հնդկաստանի փառիշահի՝ Պորդոսի հետ ունեցած խոսակցության մասին (36ա), Վիրավոր անգլիացի հրամանատարի որպիսության մասին (51աբ), Նշանավոր բանաստեղծ Ֆիրդուսու և Իրանի Շահ Մահմուդ Ղազնևիի որպիսության մասին (51բ-2բ), Յավուզ Սուլթան Սելիմ Խանի շախմատ խաղալու մասին (55բ-7ա), Պապի հարցերը և Կարդինալի պատասխանը (58բ), Սուլթան Մուրադի պարգևատրումը դժբախտ ջուհակին (58բ) և այլն: Յուրաքանչյուր հեքիաթի, պատմության ավարտին կան ասացվածքներ, բեյթեր, քրթաներ, ռուբայիներ: Կան խմբագրական նշումներ, գրչի արած ջնշումներ, ուղղումներ, բնագրային ավելացումներ:

ՆՇՈՒՄ՝ Ի գրոց՝ Պրն. Ք. Պատկանեանի: Նուէր՝ Ս. Պատկանեանից: Ստացուել է՝ 1903 թ.:

1905 թ. Արաբատառ ձեռագրերի հավաքածուն հարստացել է ևս մեկ ձեռագրով, որը մի շարք հայերեն ձեռագրերի հետ միասին նվիրել են Աբգար Հովհաննիսյանի հարազատները⁵⁸: Նվիրած ձեռագրի համարը (ձեռ. Հ^և 23) պարզել ենք «Մատենադարանի Պարսկերեն ձեռագրերի» ցուցակից՝ ըստ ձեռագրի վրայի նշում-թերթիկի, ուր գրված է. «Նուէր Մայր Աթոռի Մատենադարանին Աբգար Հովհաննիսեանի ընտանիքից ի ձեռն Ստեփանոսի Կանայեանց - Պատմութիւն Պարսից, ի լեզու պարսիկ, 1905 ամի, 1 յունիսի, Վաղարշապատում»⁵⁹:

Հայտնի է նաև, որ մինչև 1915 թվականը Արաբատառ ձեռագրերի հավաքածուն հավելում չի ունեցել: Նույն թվականին համաշխարհային

⁵⁸ 39, Հ. Ա, էջ 189:

⁵⁹ K. P. Kostikyan, *Catalogue of Persian Manuscripts in the Matenadaran*, Yerevan, 2017, pp. 20-21, MS 23 (Mīrzā Muḥammad Maḥdī Khān Astarābādī, Tārikh-i Nādirī):

պատերազմի հավանական հետևանքներից զերծ պահելու նպատակով, էջմիածնի հիմնական հավաքածուն՝ իր մեջ ամփոփած 232 արաբատառ ձեռագրով, փոխադրվել է Մոսկվա⁶⁰:

Վերոնշյալ 232 ձեռագրերի արդի համարները պարզվել են ձեռագրերում պահպանված առանձին նշումներից և օժանդակ այլ տվյալներից⁶¹: 1958 թվականին, հավաքածուի մշակման արդյունքում, 232 ձեռագրերից առանձնացվել են 14 վիմատիպ գրքեր⁶² և մուծվել Մատենադարանի տպագիր գրականության բաժնի արաբերեն, պարսկերեն և թուրքերեն գրականության ֆոնդերը: Ըստ այդմ էլ 1880-1915 թթ. էջմիածնի Մատենադարանի արաբատառ ձեռագրերի թիվը նախկին 232-ի փոխարեն արձանագրվել է 218⁶³:

Եթե հաշվի առնենք, որ ժամանակին 1903 թվականի վերոհիշյալ 10 ձեռագրի մուտք համարվել է 1925 թվականը և չի ընդգրկվել 1880-1915 թթ. ձեռագրերի թվաքանակի մեջ, ապա հաշվարկված 218 թվաքանակը ևս ճշգրիտ չէ: Այսինքն, այս 10 ձեռագրերը ներառելով 1880-1915 թթ. էջմիածնի հիմնական հավաքածուի ձեռագրերի ցանկի մեջ, Արաբատառ ձեռագրերի թվաքանակը 1915 թ. դրությամբ եղել է ոչ թե 218, այլ՝ 228 (այսինքն, 218 + 10)⁶⁴:

⁶⁰ 39, ձ. Ա, էջ 90, էջ 112:

⁶¹ 39, ձ. Ա, էջ 189:

⁶² Հ^մ 3 Շահնամե (պրակ.), Հ^մ 5 Մեթլեյուշեմա՞ (Պատմություն արֆունի, պրակ., Հր. 1304), Հ^մ 6 Զիյնեթ ուլ Մեշալիս (պրակ., Հր. 1309), Հ^մ 14 Կրոնական (պրակ.-արաբ.), Հ^մ 32 Դիվանե Նիզամի, Խամսե (պրակ., Հր. 1276), Հ^մ 38 Բանաստեղծություններ (պրակ., Հր. 1260), Հ^մ 41 Կրոնական (պրակ., Հր. 1309), Հ^մ 44 Թարիհի Նիզյարիսթան (լիտոգրաֆ [վիմատիպ], Հր. 1275, Միրզա Համիդ Ալի Շիրազի), Հ^մ 110 Դիվանի Վակֆ, Պոեմ, Միրզա Յուսուֆ Ղարաբաղլի (պրակ. ադրբ., 1856), Հ^մ 139 Միզանլահազ (Քրիստոնեության և Միստերական գիրք, որն արտահայտում է Մուհամմեդ մարգարեի շիները, պրակ., Հր. 1238), Հ^մ 163 Հաքիմ Նասրի Խոսրովի ուլլի՞ (Ինֆնակենսագրություն, պրակ., Հր. 1303), Հ^մ 169 Ումբաթ ուլ Է՛քլամ (դասագիրք, գրիչ Ախունդ զադե, լիտոգրաֆ [վիմատիպ գիրք], ադրբ., 1880 թ.), Հ^մ 188 Աշխարհագրություն (լիտոգրաֆ [վիմատիպ գիրք], պրակ., 1850 թ.), Հ^մ 221 Ռիսալե Ռուշթիե (ինֆնագիր, հեղ.՝ Միրզա Բիզա, պրակ., 1879 թ.) (Ձեռագրերի համարները տե՛ս, 39, ձ. Ա, էջ 189, իսկ բովանդակային մանրամասները վերականգնել ենք ըստ 1940 թ. Մատենադարանի Անտիպ ձեռագրացուցակ Հ^մ 17-ի):

⁶³ 39, ձ. Ա, էջ 189, էջ 191:

⁶⁴ Տե՛ս այստեղ, աղյս. Հ^մ 3:

ԱՂՅՈՒՄԱԿ Հ^մ 1

Թվական	Ձեռագրերի համարներ	Ձեռագրերի քանակ
1880-1915	1, 2, 4, 7-13, 15-31, 33-37, 39, 40, 42, 43, 45-107, 109, 111-138, 140-162, 164-68, 170-87, 189-220, 222-232, 234	218
1915-1916 ⁶⁵	255, 256, 259-261, 264, 266, 267, 270, 274, 275, 277, 278, 280, 281, 284, 286, 287, 290, 291, 293, 294, 298, 303, 304, 322, 347, 350-54, 362, 365, 366	35
1920	263, 279, 282, 295, 306-311, 315-320, 325, 328-330, 335, 337-339, 341, 343, 348, 398, 399, 431	31
1925*	257, 296, 297, 302, 312, 313, 321, 323, 324, 413	10

⁶⁵ 1915-1916 թվականներին Արևմտյան Հայաստանից կորստից փրկվել են Վասպուրական ու Տարոն աշխարհների գրչակենտրոններում (Աղթամարի սբ. Խաչ, Վարագա վանք, Լիմ, Կառուց անապատներ, Տարոն աշխարհի սբ. Առաքելոց, սբ. Կարապետ վանքեր և այլն) եղած նաև օսմաներեն, պարսկերեն, արաբերեն ձեռագրերի մնացորդները 34 ձեռագիր և 1 վիմատիպ գիրք, որից 6 օսմաներեն (ձեռ. Հ^մ 266, 284, 298, 347, 362, 365), 11 պարսկերեն (ձեռ. Հ^մ 264, 270, 277, 286, 287, 293, 350, 351, 352, 353, 304_{վիմ.}) և 18 արաբերեն (ձեռ. Հ^մ 255, 256, 261, 262, 267, 274, 275, 278, 280, 281, 290, 291, 294, 300, 301, 322, 354, 366) (Տե՛ս մանրամասն, **A. Avetisyan, K. Kostikyan, V. Makaryan**, "The Arabic Script Manuscripts of the Matenadaran Collection, Saved from Loss During the Armenian Genocide", *Բանբեր Հայագիտության, Հայագիտական Միջազգային Հանդես* (Journal of Armenian Studies, International Review of Armenian Studies), N1 (10), Երևան, 2016, էջ 192-203): Տե՛ս նույնը հայերեն՝ **Ա. Ավետիսյան, Ք. Կոստիկյան, Վ. Մակարյան**, «Մեծ եղեռնի տարիներին կորստից փրկված արաբատառ ձեռագրերի Մատենադարանյան հավաքածուն», *էջմիածին*, ժԲ, 2016, էջ 113-130):

1926-1936	251, 258, 265, 292, 301, 305, 314, 332, 333, 346, 349, 357-359, 361, 363, 364, 367-390, 392, 394-397, 400-412, 414-424, 426, 427, 429, 430, 432-443, 445-460, 463-467	107
1937	331, 336 ⁶⁶	2
1938 - [1940]	108, 233, 235-249, 252-54, 262, 268, 269, 271-73, 276, 283, 285, 300, 326, 327, 340, 342, 345, 355, 356, 360, 425, 489, 513, 535, 622 ⁶⁷	43
1941 – 1943	468-488	21
1944	490-511	22
1945	512	1
1946	514-524. 528, 531-533	15
1947	525, 526, 534	3
1949	527, 536	2
1950	529, 530	2
1953	537, 538	2
1954	539, 540, 541	3
1955	542, 543	2
1956	544-614, 631	72

⁶⁶ Այս ձեռագրերը բերվել են Ախյցխայից:

⁶⁷ Մատենադարանի Հ^մ 108, 253, 254, 262, 300, 326, 327, 340, 342, 345, 356 ձեռագրերը բերվել են Ախյցխայից, Հ^մ 233, 235*, 236, 237, 238, 239, 240, 241, 242, 243, 244, 245, 246, 247, 248, 249, 252, 269*, 271, 272, 273, 276, 283, 360, 535, 622 ձեռագրերը՝ Գրականության թանգարանից, իսկ այս նույն շարքից Հ^մ 235, 269 ձեռագրերը նախկինում՝ Լազարյան հեմարանից:

1957	619, 620	2
1958	3, 5, 6, 14, 32, 38, 41, 44, 110, 139, 163, 169, 188, 221, 250, 288, 289, 299, 334, 344, 391, 393, 394, 428, 444, 461, 462, 615-618, 621, 623-630, 632	41
1959	633-636	4
1960	637-646	10
1961	647-656	10
1962	657-995	339 ⁶⁸
Ձեռագրերի ընդհանուր քանակը՝ 995		

ԱՂՅՈՒՄԱԿ Հ^մ 2

Թվական	Ձեռագրերի քանակ
1962-1966	270
1966-1967	60
1970-1973	420
1974-1976	92
1977-1978	121
1979-1982	41
1983-1984	38
1985-1993	113
1993-2006	9
1962-2006 թթ.՝ 1164	

⁶⁸ Այս 339-ից 277-ը՝ Հարություն Հազարյանի անձնական հավաքածուն է, որը նվիրել էր Երևանի պետական համալսարանին, իսկ վերջինս էլ, նվիրատուի համաձայնությամբ՝ Մատենադարանին (ՅՁ, Հ. Ա, էջ 191):

ԱՂՅՈՒՍԱԿ Հ^{մր} 3

Թվական	Ձեռագրերի համարներ	Ձեռագրերի քանակ
1880-1915	1, 2, 4, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 15, 16, 17, 18, 19, 20, 21, 22, 23, 24, 25, 26, 27, 28, 29, 30, 31, 33, 34, 35, 36, 37, 39, 40, 42, 43, 45, 46, 47, 48, 49, 50, 51, 52, 53, 54, 55 ⁶⁹ , 56, 57, 58, 59, 60, 61, 62, 63, 64, 65, 66, 67, 68, 69, 70, 71, 72, 73, 74, 75, 76, 77, 78, 79, 80, 81, 82, 83, 84, 85, 86, 87, 88, 89, 90, 91, 92, 93, 94, 95, 96, 97, 98, 99, 100, 101, 102, 103, 104, 105, 106, 107, 109, 111, 112, 113, 114, 115, 116, 117, 118, 119, 120, 121, 122, 123, 124, 125, 126, 127, 128, 129, 130, 131, 132, 133, 134, 135, 136, 137, 138, 140, 141, 142, 143, 144, 145, 146, 147, 148, 149, 150, 151, 152, 153, 154, 155, 156, 157, 158, 159, 160, 161, 162, 164, 165, 166, 167, 168, 170, 171, 172, 173, 174, 175, 176, 177, 178, 179, 180, 181, 182, 183, 184, 185, 186, 187,	228

⁶⁹ ՄՄ, ձեռ. Հ^{մր} 55՝ երկլեզու ժողովածու է: Ժողովածուի 1բ-71ա էջերին ընդգրկված է Սայեր Մոհամմադ Ալի Թաբրիզիի «Դիվան»-ը (պարսկերեն), իսկ 73բ-96ա էջերին ժլ. - ժթ. դարերի բուրժ բանաստեղծ, բառարանագիր Սունբուլ Ջադե Վեհբիի «Թունֆե-ի Վեհբի» երկլեզվյան պարսկերեն-օսմաներեն չափածո բառարանը (Այս բառարանի մասին տե՛ս, **Ա. Ավետիսյան**, «Մատենադարանի պարսկերեն-թուրքերեն բառարանները», Հայագիտական և իրանագիտական երկրորդ միջազգային գիտաժողով, Գիտական հոգվածների ժողովածու, Երևան, 2011, էջ 148-169):

189, 190, 191, 192, 193, 194, 195, 196 ⁷⁰ , 197, 198, 199, 200, 201, 202, 203, 204, 205, 206, 207, 208, 209, 210, 211, 212, 213, 214, 215, 216, 217, 218, 219, 220, 222, 223, 224, 225, 226, 227, 228 ⁷¹ , 229, 230 ⁷² , 231, 232, 234 ⁷³ , [257, 296, 297, 302, 312, 313, 321, 323, 324, 413]	
---	--

Շարունակելի

- ⁷⁰ Տե՛ս ձեռագրի մասին, **Ա. Ավետիսյան**, «Մատենադարանի օսմաներեն ձեռագրերի հավաքածուն», էջ 82, **A. Avetisyan**, "The Collection of Ottoman Turkish Manuscripts of the Matenadaran and the Description Methodology", էջ 255-256:
- ⁷¹ ՄՄ, ձեռ. **Հ⁴ 228** մասին մանրամասն տե՛ս **Ա. Ավետիսյան**, «Մատենադարանի Հ⁴ 228 օսմաներեն ձեռագիր գավազանագիրը», *ԲՄ*, քիվ 20, Երևան, 2014, էջ 137-151:
- ⁷² ՄՄ, Հ⁴ **229** և Հ⁴ **230** ձեռագրերի մասին տե՛ս, **Ա. Ավետիսյան**, «Մատենադարանի պարսկերեն-թուրքերեն բառարանները», էջ 161-163:
- ⁷³ ՄՄ, Հ⁴ **1, 2, 4, 7, 8, 9, 10, 11, 13, 15, 16, 17, 18, 19, 20, 21, 22, 23, 24, 25, 26, 27, 28, 29, 30, 33, 34, 35, 36, 39, 43, 48, 51, 53, 54, 55, 56, 57, 58, 62, 65, 66, 67, 69, 70, 71, 73, 74, 75, 82, 85, 86, 87, 88, 89, 92, 93, 95, 97, 98, 99, 100, 101, 102, 103, 107, 113, 115, 116, 117, 119, 121, 122, 123, 125, 126, 128, 129, 130, 132, 133, 134, 135, 142, 149, 151, 155, 156, 157, 158, 159, 164, 166, 167, 170, 171, 172, 173, 177, 178, 182, 183, 186, 192, 195, 196, 198, 199, 200, 201, 202, 203, 205, 207, 208, 209, 211, 212, 213, 214, 215, 216, 217, 218, 224, 225, 229, 230, 231, 232, 234** ձեռագրերի նկարագրությունները տե՛ս, **K. P. Kostikyan**, Catalogue of Persian Manuscripts in the Matenadaran, Yerevan, 2017, pp. 10-110:
ՄՄ, Հ⁴ **12, 31, 37, 40, 42, 45, 46, 47, 49, 50, 52, 59, 60, 61, 63, 64, 72, 76, 77, 78, 79, 80, 81, 83, 84, 90, 91, 94, 96, 104, 105, 109, 111, 112, 114, 118, 120, 127, 131, 136, 138, 140, 141, 143, 144, 145, 146, 147, 148, 150, 152, 153, 154, 160, 161, 162, 165, 168, 175, 176, 179, 180, 181, 184, 185, 187, 189, 190, 191, 193, 194, 197, 204, 206, 210** ձեռագրերն ընդգրկված են արաբերեն ձեռագրերի հավաքածուում:
ՄՄ, Հ⁴ **68, 106, 124, 137, 219, 220, 227** ձեռագրերը ներառված են օսմաներեն ձեռագրերի հավաքածուում:

ANI J. AVETISYAN

AN EPISODE OF THE HISTORY OF CREATING THE ARABIC SCRIPT
MANUSCRIPTS COLLECTION IN MATENADARAN
(1880-1915) AND THE MANUSCRIPTS DONATED
BY KEROVBE PATKANYAN

Keywords: Ottoman Turkish, Ottoman Turkish Manuscripts, Turkish Literature, St. Etchmiadzin

This is the second article of the author on the same subject.⁷⁴ In its first part, the history of the Arabic Script Manuscripts Collection of Matenadaran is briefly described. It was first published in 1965, and since the information it contains and the methods of manuscript description used in it are now outdated, there is a need for re-examination, correction, and completion of the material.

In particular, the author discusses the first period (1880–1915) when the collection was formed. Several donators are referred to and special emphasis is put on Kerovbe Patkanyan's personal donations to the library of Holy Etchmiadzin in 1903. The article contains a complete description of all these manuscripts. It should be noted that in the publication of 1965, Kerovbe Patkanyan's name was not mentioned at all. It was only stated that his manuscripts had been included in the collection in 1925.

⁷⁴ See **A. Avetisyan, K. Kostikyan, V. Makaryan**, "The Arabic Script Manuscripts of the Matenadaran Collection, Saved from Loss During the Armenian Genocide", *Բանբեր Հայագիտության, Հայագիտական Միջազգային Հանդես* (Journal of Armenian Studies, International Review of Armenian Studies), N1 (10), Երևան, 2016, էջ 192-203). Cf. the Armenian version of the article: **Ա. Ավետիսյան, Ք. Կոստիկյան, Վ. Մակարյան**, «Մեծ եղեռնի տարիներին կորստից փրկված արաբատառ ձեռագրերի Մատենադարանյան հավաքածուն», *Էջմիածին*, 2016, ժԲ, էջ 113-130):

АНИ Ж. АВЕТИСЯН

ИЗ ИСТОРИИ СОЗДАНИЯ КОЛЛЕКЦИИ АРАБОГРАФИЧЕСКИХ
РУКОПИСЕЙ МАТЕНАДАРАНА (1880-1915): РУКОПИСИ, ПОДАРЕННЫЕ
КЕРОВБЕ ПАТКАНЯНОМ

Ключевые слова: османские рукописи, турецкая литература, Св. Эчмиадзин.

Это вторая статья автора в начатой ею серии публикаций, посвященных истории формирования коллекции арабографических рукописей Матенадарана⁷⁵.

В статье кратко описывается история формирования коллекции арабографических рукописей Матенадарана с 1880 по 1915 гг. Первая публикация по данной тематике вышла в свет в 1965 г., но, в связи с тем, что представленные сведения и методология описания рукописей устарели, появилась необходимость в новом исследовании. Помимо поправок и дополнений к упомянутой работе, предоставляется информация о коллекционерах, подаривших рукописи Матенадарану в данный период. В частности, приводятся примечательные подробности пожертвования личной библиотеки Керовбе Патканяна библиотеке Св. Эчмиадзина в 1903 году, полное описание каждого манускрипта.

Следует отметить, что в статье от 1965 г. имя Керовбе Патканяна не упоминается, и лишь указывается, что данные рукописиполнили коллекцию в 1925 году.

⁷⁵ См. **A. Avetisyan, K. Kostikyan, V. Makaryan**, "The Arabic Script Manuscripts of the Matenadaran Collection, Saved from Loss During the Armenian Genocide", *Բանբեր Հայագիտության, Հայագիտական Միջազգային Հանդես (Journal of Armenian Studies, International Review of Armenian Studies)*, N1 (10), Երևան, 2016, էջ 192-203). Та же статья вышла на армянском: **Ա. Ավետիսյան, Բ. Կոստիկյան, Վ. Մակարյան**, «Մեծ եղեռնի տարիներին կորստից փրկված արարատու ձեռագրերի Մատենադարանյան հավաքածուն», *Էջմիածին*, 2016, ժԲ, էջ 113-130):

**ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԲ
ՉԱՎԵՆ ՏԵՐ-ԵՂԻԱՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԱՔՍՈՐԻ
ՏԱՐԻՆԵՐԻՆ (1916-1918)**

Բանալի բառեր՝ Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքության լուծարում, Բաղդադ, Մոսուլի գրավում, Մեծ Բրիտանիայի պատերազմի նախարարություն, անգլիական զորահրամանատարություն, հայ գաղթականներ, Բաղդադի երկաթուղի, Մուզրոսի զինադադար, համաներում:

Երիտթուրքական իշխանություններին Հայոց ցեղասպանության իրագործումից զատ, Օսմանյան կայսրությունում բնակվող հայությանը հասցված ծանրագույն հարվածներից մեկը Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքության լուծարումն էր: 1916 թ. օգոստոսին օսմանյան իշխանությունները որոշեցին չեղարկել 1863 թ. Հայոց ազգային սահմանադրությունը և դադարեցնել Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի գործունեությունը¹: Բնաջնջման ենթակա հայ մտավորականության մեջ երիտթուրքերը կարևորում էին հայ հոգևոր դասի վերացումը, ինչը հետևողականորեն իրականացրին նախ Արևմտյան Հայաստանի, ապա ամբողջ կայսրության տարածքում:

1916 թ. օգոստոսի 22-ին Կ. Պոլսի հայոց պատրիարք Չավեն Տեր-եղիայանը, հոգեբանական ծանր կացության մեջ գտնվելով, ստիպված եղավ իր եղբոր ու նրա դստեր հետ հեռանալ Կ. Պոլսից և թուրք ոստիկանների ուղեկցությամբ ճանապարհ ընկնել դեպի Բաղդադ, որտեղ նա եղել էր շուրջ 26 տարի առաջ²: Հատկանշական է, որ հայոց պատրիարքին Բաղդադ աքսորելու վերաբերյալ երիտթուրքական իշխանությունների կայացրած որոշումը խիստ ան-

¹ St' u Takvim-i Vekayi, nr. 2611, 28 Temmuz 1332 (10 Ağustos 1916):

² St' u BOA. DH. EUM. 2 Şb. nr. 31/61: Սույն հոդվածում ֆիշատակվող այս և մյուս օսմաներեն արխիվային փաստաթղթերը պահպանվում են Թուրքիայի Օսմանյան վարչապետական արխիվում:

հանգստացնում էր անձամբ Ջավեն պատրիարքին, քանի որ վերջինս գրեթե վստահ էր, որ ինքն էլ կարժանանար իր հայրենակիցների ճակատագրին. «Որքան ալ այս մասին ապահովիչ խօսքերը ինձի կը հասնէին, սակայն ես Պոլիսէն մեկնիլ կը պատրաստուէի դէպի մահ դիմելու համոզումով: Կը խորհէի թէ Թուրք կառավարութիւնը հարիւր հազարաւոր հայ մահացնելէ վերջ զիս ինչո՞ւ պիտի վարանէր»³:

Մեծ դժվարություններով անցնելով մի շարք քաղաքներով և գյուղերով Ջավեն սրբազանը ականատես եղավ խոշոր ավերածությունների և մարդկային զգալի կորուստների: Արևմտյան Հայաստանից բռնությամբ տեղահանված հայության հավաքակայաններից մեկը համարվող Հալեպի նահանգի Մեսքենե քաղաքում՝ Եփրատ գետի ափին, նա իր աչքով տեսավ, թե ինչպես էր «բարբարոս Թուրքը՝ իր երկիրին աղն ըլլալու սահմանած եւ անոր համ ու հոտ տուող տարրը՝ Հայը բնաջնջած էր, անոր արիւնը եւ արցունքը խառնելով Եփրատի ջուրերուն, Երզնկայէն, Քէմախէն, Ակնէն եւ Խարբերդէն վար մինչեւ այս անպատները»⁴: Այստեղ ապաստանած հայ գաղթականներից մեկը, հանկարծ նկատելով սրբազանին, մոտեցավ նրան և աղաղակեց. «Allah'a şükür, bir Ermeni gördüm ki sürgün değildir» (Թուրքերեն՝ «Փա՛ռք Աստծո, մի հայ տեսա, որ աքսորված չէ»)՝: Իսկ Համամից Զիարաթ ճանապարհ ընկնելիս հայ գաղթականներն այնպես էին շուրջկալել պատրիարքին տանող կառքը, փորձելով մոտենալ նրան և համբուրել նրա ձեռքը, որ, այդ տեսարանից ազդված, Ջավեն սրբազանը բռնով արծաթյա դրամներ նետեց խեղճ տարագրյալների կողմը⁵:

Նույն թվականի սեպտեմբերի 26-ին Ջավեն սրբազանը հասավ Բաղդադ, որտեղ մնաց հինգ ամիս⁷: Ամբողջ ժամանակը նա անցկացրեց տանը՝ խուսափելով ավելորդ անգամ թուրքական ոստիկանության տեսադաշտում հայտնվելուց, քանի որ նրա տունը հեռվից հսկում էր մի թուրք ոստիկան: Միայն մեկ անգամ նա հանդիպեց Բաղդադի կուսակալ Ալի Սուլատ բեյի հետ՝ հայտնելով կառավարության կողմից տրվելիք թոշակի մասին:

1917 թ. փետրվարի 24-ին Քուլթի գրավումից հետո անգլիական բանակը

³ **Ջավեն Արֆեպս.**, Պատրիարքական յուշերս. վաւերագիրներ եւ վկայութիւններ, Գահիրէ, 1947, էջ 202:

⁴ Նույն տեղում, էջ 209:

⁵ Նույն տեղում:

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 210:

⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 220-225:

շարժվեց դեպի Բաղդադ: Կառավարության ջանքերով քաղաքի բնակչությունն աստիճաբար փոխադրվեց Մոսուլ: Թուրքական իշխանությունների որոշմամբ՝ մարտի 2-ին Զավեն սրբազանը նույնպես իր եղբոր դստեր՝ Վարդանուշի հետ թուրք ոստիկանի ուղեկցությամբ Բաղդադից ճանապարհ ընկավ դեպի Մոսուլ: Շուտով պարզ դարձավ, որ մարտի 11-ին անգլիական զորքը գրավել է Բաղդադը:

Մոսուլում Զավեն սրբազանը արժանացավ քաղաքի կուսակալ Հայդար բեյի և ոստիկանապես Մեհմեդ Խալիդի սիրալիք ընդունելությանը: Սակայն իրավիճակը փոխվեց մեկ ամիս անց, երբ Հայդար բեյին վերոհիշյալ պաշտոնում փոխարինեց Բաղդադի կուսակալ Մեմտուհ բեյը, ով անմիջապես հրամայեց խիստ հսկողության տակ վերցնել նախկին պատրիարքի տունը:

Մոսուլի անշուք հյուղականներում իրենց գոյությունը հազիվ պահպանող բազմաթիվ հայ գաղթականներ էին հանգրվանել⁸: Գրեթե բոլոր փողոցները լցված էին հայ որբերով ու կանանցով, որոնք մուրացկանություն էին անում: «Տեսնելով որ Հայ մանուկներ եւ կիներ փողոցները կը պտտին եւ կը մուրան շատ նեղուեցայ, որովհետեւ Հայուն մուրալը շէի տեսած»⁹, – իր հուշագրության մեջ գրում է Զավեն Տեր-Եղիայանը: Թեև նա փորձում էր զերծ մնալ այդ ահասարսուռ տեսարաններից, սակայն միտքն ամբողջությամբ իր հայրենակից տարագրյալների հետ էր: Նա իր խնայած գումարով կարմիր հաստ կտոր գնեց և մուրացկան դարձած հայ երեխաների համար իր ձեռքով շապիկ ու վարտիք կարեց: Այդպիսով, մի քանի օրվա մեջ, Մոսուլի նեղլիկ փողոցները լցվեցին կարմրազգեստ հայ որբերով: Սակայն որպեսզի նրանք իրենց նույնագույն զգեստով չգրավեն տեղական իշխանությունների ուշադրությունը, սրբազանը հնարամտորեն զգեստների գույնն այնուհետև փոխեց կապույտի¹⁰:

Հատկանշական է, որ Զավեն սրբազանին օգնության ձեռք մեկնեցին անձամբ կաթողիկոս-պատրիարք¹¹ Սահակ Բ Խապայանը՝ Երուսաղեմից նրան

⁸ Առավել մանրամասն տե՛ս Մ. Տէր Յակոբեան, *Իրաքահայ կեանքէն. Մոսուլ հասնող գաղթականութիւնը (1915-1918) ընդելուզուած Գրիգոր աւագ քահանայ Տէր Յակոբեանի ինքնակենսագրութեամբ*, Կ. Ա., Պէյրոս, 1981:

⁹ **Զավեն Արֆեպս.**, *նշվ. աշխ.*, էջ 233:

¹⁰ Տե՛ս նույն տեղում:

¹¹ Սահակ Բ Խապայանը հայոց կաթողիկոս-պատրիարքի պաշտոնն էր զբաղեցնում այն բանից հետո, երբ երիտթուրքական իշխանությունների 1916 թ. օգոստոսի 10-ի որոշմամբ Կոստանդնուպոլսի և Երուսաղեմի պատրիարքությունները, ինչպես նաև Սիսի և Աղթամարի (տվյալ դեպքում խոսքը Վասպուրականի թեմերի մասին է) կաթողիկոսությունները միավորվեցին:

ուղարկելով 500 թուրքական թղթադրամ¹², ինչպես նաև քաղաքի հակոբեիկյան և կաթոլիկ ասորիները, եզդիները և բազմաթիվ հայ անհատներ¹³:

Սովի և ծայրաստիճան թշվառության մատնված մեծաթիվ հայ գաղթականներն արաբների աշակցությամբ շուտով դիմեցին փախուստի՝ իրենց փրկությունը գտնելով անգլիական տիրապետության ներքո: Բաղդադի նախկին ոստիկանապետ, զորահրամանատար Մուհամմադ Խալիլ փաշան այս կապակցությամբ մեղադրանք էր հնչեցրել նախկին պատրիարքի հասցեին՝ հայտարարելով. «Յորչափ պատրիարքը հոս է, այս փախչողներու խումբերը պիտի շղադրին: Ինքն է ասոնք կազմակերպողը»¹⁴: Իր հերթին, Մոսուլի կուսակալ Մեմտուհ բեյը ներքին գործերի նախարարությանն ուղարկել էր մի պահանջագիր, որով հայտնում էր, թե «այլևս չի կարող հանդուրժել նախկին պատրիարքի ներկայությունն իր քաղաքում և մտադիր է նրան աքսորել Երուսաղեմ»¹⁵: Հստ էություն, ներքին գործերի նախարարությունն անհիմն էր համարել վերոհիշյալ բողոքագրերը և բացասական պատասխան էր տվել նահանգային իշխանություններին¹⁶: Ինչպես նշում է Զավեն պատրիարքն իր հուշագրության «Թրքական Մուսուլի մէջ» ենթագլխում, Մոսուլի կուսակալի իրական նպատակն էր նախկին պատրիարքին աքսորել դեպի Դեր Զոր¹⁷: Ներքին գործերի նախարարությանն ուղարկված հեռագրերից մեկից պարզ էր դառնում, որ Մեմտուհ բեյը, վախենալով, որ սրբազանը Դեր Զորի ճանապարհին «կդիմի փախուստի», խուսափել էր ավելորդ պատասխանատվությունից¹⁸: Մի առիթով նույնիսկ նա իր տանը ծառայող հայուհիներից մեկին խոստովանել էր, թե «այս Պատրիարքին միսը չկրցանք ուտել»¹⁹:

Հետագայում նույնպես բազմաթիվ բողոքներ հնչեցին Զավեն Տեր-եղիայանի հասցեին՝ նրան մեղադրելով ընդհանուր առմամբ «տարածաշրջանում տիրող խռովությունների մեջ»²⁰: Մասնավորապես, ներքին գործերի նախարարությանն ուղղված Մոսուլի կուսակալի հաղորդագրություններից պարզ էր

¹² Պապեան Եպիսկ. Գ., Հայ գողգոթիան. Դրուագներ հայ մարտիրոսագրությունէն. Պետլինէն դէպի Տէր Զոր, հ. Բ., Փարիզ, 1959, էջ 107:

¹³ Տէ'ս Զավեն Արեւայս., նշվ. աշխ., էջ 233-235, 237, 238, 240, 241:

¹⁴ Նույն տեղում, էջ 238:

¹⁵ BOA. DH.ŞFR. nr. 548/29. Հմմտ.՝ BOA. DH.ŞFR. nr. 578/9.

¹⁶ Տէ'ս BOA. DH.ŞFR. nr. 84/196.

¹⁷ Տէ'ս Զավեն Արեւայս., նշվ. աշխ., էջ 239, 240:

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Տէ'ս նույն տեղում, էջ 238:

²⁰ R. E. Güllü, *Ermeni sorunu ve İstanbul Ermeni Patrikhanesi (1878-1923)*, Ankara, 2015, s. 493.

դառնում, որ նախկին պատրիարքն, իբրև թե, անմիջական մասնակցություն է ունեցել Բաղդադի երկաթուղում աշխատող հայերի փախուստի կազմակերպման մեջ, ինչն էլ հաճախ առիթ է եղել հայերի ձեռքով մուսուլմանների սպանության և վիրավորելու դեպքերի²¹: Հատկանշական է, որ Զավեն պատրիարքը դեռևս 1915 թ. օգոստոսին, երբ թուրքական կառավարության հրամանով Բաղդադի երկաթուղու տնօրինությանը հարկադրվեց իր հայ աշխատողներից 850 հոգու իրենց ընտանիքներով փոխադրել տերուսթյան հեռավոր տարածքներ, հայ ժողովրդի և անձամբ իր անունից շնորհակալություն հայտնեց Բաղդադի երկաթուղու ընկերության գլխավոր տնօրեն Գյունթերին՝ ի նպաստ հայ աշխատողների և նրանց ընտանիքների անվտանգությանն ուղղված միջամտության²²: Թերևս այդ «շնորհակալական նամակն» էր պատճառ հանդիսացել, որ Մոսուլի իշխանությունները կասկածի առնեն պատրիարքի մասնակցությունը Բաղդադի երկաթուղում աշխատող հայերի և նրանց ընտանիքների փախուստի կազմակերպմանը և անհիմն զրպարտություններ ուղղեն պատրիարքի անձին:

Մոսուլի վիլայեթի իշխանությունները համառորեն շարունակում էին դիմել ներքին գործերի նախարարությանը՝ առաջարկելով նախկին պատրիարքին աքսորել մեկ այլ վիլայեթ, սակայն կուսակալի անհիմն առաջարկները շարունակաբար մերժվում էին ներքին գործերի նախարարության կողմից: Զավեն պատրիարքը շարունակում էր մնալ Մոսուլում՝ օգտակար լինելով ինչպես հայ, այնպես էլ մուսուլման կարիքավոր գաղթականներին:

1918 թ. հուլիսի 3-ին սուլթան Մեհմեդ Հինգերորդ Ռեշադի մահվանից հետո գահ բարձրացավ Օսմանյան կայսրության վերջին սուլթանը՝ Մեհմեդ Վեցերորդ Վահդեթթինը, ում հրամանով հայտարարվեց քաղաքական հանցավորների համաներում: Լուրը ստանալուն պես, Մոսուլի կուսակալը դիմեց կենտրոնական իշխանություններին՝ պարզելու, թե արդյոք հայոց նախորդ պատրիար-

²¹ Տե՛ս նույն տեղում:

²² Տե՛ս է. Մեյեր, Յ. Ա. Բեռլյան, *Հոկոսի և Արաքսի միջև. 900 տարվա գերմանա-հայկական հարաբերություններ*, Երևան, 2016, էջ 89: Բեուլին-Բադրադ երկաթուղում աշխատող հայերի մասին տե՛ս նաև Դորա Սաֆայանի՝ շվեյցարական արխիվներից հավաքած և գործերն ձեռագրերից վերձանած՝ Հայոց ցեղասպանության ականատեսների՝ շվեյցարացի ամուսիններ Կլարա և Ֆրից Զիգրիստ-Հիլթինների օրագրությունները՝ Գ. Սաֆայան, «Նրանց էջում են անապատները...»: Կլարա և Ֆրից Զիգրիստ-Հիլթինները Հայոց ցեղասպանության ականատեսներ (1915-1918), Երևան, 2017:

քը նույնպես ենթակա՞ է ներման²³: Թեև ներքին գործերի նախարարությունն պատասխանը դրական եղավ, սակայն այդ մասին դեռևս որևէ պաշտոնական հաղորդագրություն չկար:

1918 թ. հոկտեմբերի կեսերին, երբ թուրքական բանակն աստիճանաբար սկսեց նահանջել անգլիացիների շեշտակի առաջխաղացումից, Մոսուլի հանձնումն անխուսափելի դարձավ: Նույն թվականի հոկտեմբերի 30-ին Հունաստանի Լեմնոս կղզու Մուդրոս նավահանգստում՝ անգլիական «Ագամեմնոն» հաճանավի վրա, Անտանտի երկրների և Օսմանյան կայսրության միջև գինադադար կնքվեց: Նոյեմբերի 6-ին անգլիական բանակին հաջողվեց վերջնականապես դուրս մղել թուրքական տարրը Մոսուլից և իշխանությունը վերցնել իր ձեռքը:

Անգլիական բանակի կողմից Մոսուլի գրավումից հետո Զավեն սրբազանն ակտիվորեն սկսեց զբաղվել Հայոց ցեղասպանության հետևանքով հիմնականում Սղերդից ու Կարինից եկած և Մոսուլում ապաստան գտած հայ գաղթականության հարցերով: Շուտով Զավեն սրբազանը ծանոթացավ քաղաքի կառավարիչ, գնդապետ Լիչմենի հետ, և այդ բարեկամական հարաբերությունները մեծապես նպաստեցին նրա ձեռնարկած գործին: Այդ հանդիպման ժամանակ Զավեն սրբազանը գնդապետ Լիչմենին խնդրեց, որ նա «իր հոգածութիւնը տարածէ մեր տարագիր աղքատ ժողովուրդին վրայ եւս»²⁴: Ըստ այդմ, Զավեն սրբազանն առաջարկեց քաղաքի ոստիկանական ուժերի օգնությամբ շուտափույթ կազմակերպել հայ որբերին և կանանց մուսուլմանների տներից հավաքելու և իր համայնքի հոգածության տակ առնելու գործը, նրանց կարիքները հոգալու համար հատկացնելու 2000 ռուբլի, 1 տոննա բուրդ և օրական 500 կիլոգրամ ցորեն²⁵: Գնդապետ Լիչմենն անձամբ խոստացավ կատարել նրա խնդրանքը և համապատասխան հրամանագրով տեղյակ պահել ոստիկանությունը²⁶: Դեկտեմբերի 10-ին Մոսուլում լույս տեսնող «Մուսուլ» պաշտոնաթերթում նրա հրահանգով տարածվեց մի հայտարարություն, որով «կը պատուիրուէր նահանգին ժողովուրդին որ իրենց քով անընդունելի կեր-

²³ Տե՛ս Զավեն Արֆեպս., նշվ. աշխ., էջ 241:

²⁴ Նույն տեղում, էջ 247:

²⁵ Տե՛ս նույն տեղում:

²⁶ Տե՛ս նույն տեղում:

պով Հայ կին, տղայ կամ աղջիկ ունեցողները իրեն յանձնեն»²⁷: Հատկանշական է, որ մինչև 1917 թ. վերջը Մոսուլում կարիքավոր գաղթականների թիվը հասնում էր շուրջ 1700-ի²⁸:

Դրանից զատ Զավեն սրբազանը նամակ գրեց Բաղդադի հայոց թեմի առաջնորդ Մուշեղ եպիսկոպոս Սերոբյանին՝ նրան խնդրելով տեղափոխվել Մոսուլ և աջակցել հայ տարագրյալների փրկության գործին²⁹: Սակայն, ինչպես նշում է պատրիարքն իր հուշագրության մեջ, Մուշեղ եպիսկոպոսի «...ժամանումը օգտակար չեղաւ, եթէ ոչ վնասակար: Մուշեղ եպո. յախուռն քայլերով վէճի ու գայթակղութեան պատճառ եղաւ»³⁰: Խնդիրն այն է, որ երբ Մուշեղ եպիսկոպոսն էնեգեի շեյխ Ֆեհեդի արաբական աշիրեթից հայ աղջիկներին ու որբերին հավաքելու նպատակով դիմել էր գնդապետ Լիչմենի աջակցությանը, վերջինս բացասական պատասխան էր տվել՝ խուսափելով արաբական աշիրեթների հետ ավելորդ վիճաբանության մեջ մտնելուց³¹: Այս կապակցությամբ Մուշեղ եպիսկոպոսն իր «Դիտումներ եւ դատումներ» խորագրով օրագրության մեջ գրում է. «Անգղ. զինուորական կառավարութիւնը կը քաշուի խուզարկելէ արաբներու վրանները, նամէհրամի»³² և աւելի քաղաքական պատճառներով»³³:

Ահավասիկ, երբ Զավեն արքեպիսկոպոսն ու Մուշեղ եպիսկոպոսը Մոսուլում ապաստանած շուրջ 1500 հայ գաղթականներին տրվող օգնության ծավալները մեծացնելու միասնական խնդրագրով դիմեցին գնդապետ Լիչմենին, նա ստիպված եղավ հիշեցնել Մուշեղ եպիսկոպոսի՝ իրեն ուղղված բողոքագիրը և մերժել նրանց³⁴: Ըստ երևույթին, նրանց միջև ծագած անախորժությունները, հատկապես Մոսուլից Զավեն սրբազանի հեռանալուց հետո, պատճառ հանդիսացան, որպեսզի անգլիական բարձր զորահրամանատարությունը՝ ի դեմս գնդապետ Լիչմենի, դադարեցնի իր աջակցությունը Մոսուլի հայ գաղթականներին: Հատկանշական է Արսեն Հացագործյանի՝ Մուշեղ եպիսկոպոս Սե-

²⁷ Նույն տեղում, էջ 254:

²⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 249:

²⁹ Տե՛ս էջ 250:

³⁰ Նույն տեղում, էջ 251:

³¹ Տե՛ս նույն տեղում, էջ 253:

³² Թուրքերեն «նամահրեմ» (nâmahrem) բառի աղավաղված տարբերակն է: Նկատի ունի չամուսնացած աղջիկներին:

³³ Մ. Սերոբյան, Դիտումներ եւ դատումներ (էջեր օրագրէս), Պէրոպ, 1932, էջ 115:

³⁴ Տե՛ս Զավեն Արեւայս., նշվ. աշխ., էջ 251:

րոբյանին տված բնութագիրը. «Շնորհիվ իր անթաքթ քաղաքականութեան ու անհատական գործերուն աւելի ևս բարդացուց գործերը... անհրաժեշտ է փոխարինել զայն աւելի կարող և խրիմյան հոգին կրող անձնագորհ հովիտով մը, մինչեւ որ վերջ գտնէ Միջագետքի Հայութեան բաբելոնեան տարագրութիւնը»³⁵:

Դեկտեմբերի 24-ին գնդապետ Լիչմենն առանձին հանդիպում ունեցավ Զավեն սրբազանի հետ՝ նրան հայտնելով, որ Մեծ Բրիտանիայի պատերազմի նախարարութիւնը ներքին գործերի նախարարութեան թույլտվութեամբ պարտավորվում էր ապահովել նախկին պատրիարքի վերադարձը Կ. Պոլիս³⁶: Ինչպես հետագայում պարզ դարձավ, զինադադարը կնքվելուն պես Կ. Պոլսի հայոց կաթողիկոսական-պատրիարքական փոխանորդութեան կողմից արդարագատութեան և դավանանքների նախարարութեանն էր ուղարկվել մի պահանջագիր, որով կոչ էր արվում չեղարկել Կ. Պոլսի հայոց պատրիարքութեան և Կիլիկիայի հայոց կաթողիկոսութեան միացումը, վերահաստատել 1863 թ. Հայոց ազգային սահմանադրութիւնը և վերականգնել Կ. Պոլսի նախկին հայոց պատրիարք Զավեն Տեր-Եղիայանի պատրիարքական լիազորութիւնները³⁷:

1918 թ. նոյեմբերի 11-ին ձևավորված Թևֆիկ փաշայի կառավարութեան առաջին քայլերից մեկը վերաբերում էր 1916 թ. Կ. Պոլսի հայոց պատրիարքութեան լուծարման վերաբերյալ կանոնագրի չեղարկմանը և 1863 թ. Հայոց ազգային սահմանադրութեան վերահաստատմանը³⁸: Ընդ որում, թուրքական պաշտոնական շրջանակները պնդում էին, որ պատերազմի ընթացքում «հայերի հանդեպ անօրինականութիւն գործած անձինք կպատժվեն, հայերի հետ միասին մյուս փոքրամասնութիւնները ևս կներգրավվեն պետական կառավարման համակարգում, և այդպիսով սկիզբ կգրվի մերձեցման մի գործընթացի»³⁹:

Ահավասիկ, որոշման ընդունումից հետո կառավարութիւնը պատրիարքի գտնվելու վայրը պարզելու նպատակով դիմեց Մեծ Բրիտանիայի պատերազմի նախարարութեանը⁴⁰: Վերջինիս աջակցութեամբ դեկտեմբերի 29-ին Զավեն սրբազանը Մոսկուից ճանապարհ ընկավ Կ. Պոլիս՝ ստանձնելու իր պատ-

³⁵ Ն. Մարգարյան, «Հայ գաղթականների վրանադադարներն Իրաքում 1918-1922 թթ.», *Յեղասպանագիտական հանդես*, № 2, Երևան, 2016, էջ 73:

³⁶ Տե՛ս Զավեն Արֆեպս., *նշվ. աշխ.*, էջ 255:

³⁷ Sabah, İstanbul, 7 Kasım 1918.

³⁸ Güllü R. E., *նշվ. աշխ.*, էջ 495:

³⁹ Çelik A., *Osmanlı'nın Ermeni'yle İmtihan – Mütakere Dönemi İstanbul Hükümetleri Ve Ermeniler*, İstanbul, 2011, s. 96.

⁴⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 258, 259:

րիարքական պարտականությունները:

Ամփոփելով նշենք, որ երիտթուրքական իշխանությունների կողմից Կ. Պոլսի հայոց պատրիարքության վերացմամբ ոչ միայն խզվեց Ռուսական կայսրության հովանավորությամբ էջմիածնի կաթողիկոսության և արևելահայության միջամտությունն արևմտահայ կյանքին, այլև արմատախիլ արվեց արևմտահայության հոգևոր-մշակութային և քաղաքական կենտրոնը հանդիսացող Կ. Պոլսի կապը Հայոց ցեղասպանության հետևանքով իրենց ծննդավայրից կտրված հայ գաղթականների հետ: Այդուամենայնիվ, գաղտնիության պայմաններում, Կ. Պոլսի պատրիարքարանի ջանքերով և անձամբ Զավեն պատրիարքի անմիջական նախաձեռնությամբ՝ իրագործվեց արևմտահայ գաղթականների փրկության և նրանց խնամքի կազմակերպման գործը, որը շարունակվեց Մոսուլում, իսկ ավելի ուշ նաև՝ Կ. Պոլսում, զինադադարի կնքումից հետո: Հայոց ցեղասպանության տարիներին Զավեն պատրիարքին հաջողվեց որոշակի օգնություն հասցնել հայ գաղթականների խոշոր կայանատեղիներ հանդիսացող Քոնիա, Բուրսա, Դամասկոս, Երուսաղեմ և այլ քաղաքներ: Նրան մեծապես հաջողվեց նաև նպաստել Մոսուլում ապաստան գտած շուրջ 1700 կարոտյալ հայ որբերի և կանանց փրկության և խնամքի կազմակերպմանը:

SERGEY MANVELYAN

THE ACTIVITY OF THE ARMENIAN PATRIARCH OF
COSTANTINOPLE ARCHBISHOP ZAVEN TER-YEGHIAIAN DURING
HIS EXILE IN 1916-1918

Keywords:

British Ministry of War, abolition of the Armenian Patriarchate of Constantinople, Baghdad, occupation of Mosul, Armenian refugees, Baghdad railway, armistice of Mudros, amnesty.

⁹ Eusebius, *The Ecclesiastical History*, vol. I (Engl. Translation by Kirsopp L.), New York, 1926, p. 106-107, Mirkovich A., նշվ. աշխ., էջ 36:

¹⁰ *The Ante-Nicene Fathers*, Edited by Donaldson J. and Roberts A., vol. VIII, New York, 1916, p. 676-690.

¹¹ էթերիան (նույն ինքը Էգերիան կամ Սիլվան) ծնվել էր Հռոմեական կայսրության արևմտյան պրովինցիաներից մեկում և IV դ. վերջերին համփոռղել Պաղեստինում և Միջագետքում: Այդ մասին նա գրել է իր «Ուղեգրություն» մեջ (տե՛ս Egeria: *Diary of Pilgrimage* (Engl. Translation and Annotaed by Gingras G.), New York, 1970, p. 77-81.

¹² Eusebius, *The Ecclesiastical History*, vol. I, p. 84-86.

¹³ Հայերեն թարգմանությունը տե՛ս Եվսեբի Կեսարացու Պատմութիւն եկեղեցւոյ, թարգմանությամբ Հ. Աբրահամ Վ. Ճարեան, Վենետիկ, 1877, էջ 59:

¹⁴ Древнегреческо-русский словарь, том II, составил Дворецкий И., М., 1958, стр. 1636.

ἀναφανέντι ἐν τόπῳ Ἱεροσλύμων χαίρειν¹⁵ («Աբգար [կողմնակալ] իշխան Եդեսիոյ Յիսուսի փրկչի բարերարի որ երևեցաւ յաշխարհին Երուսաղեմացոց, ողջոյն»)՝¹⁶ Եվսեբիոսը այդպէս արտահայտել է իր ժամանակի իրողութիւնները, երբ Եդեսիան վաղուց դարձել էր հռոմեական պրովինցիա, իսկ Եփրատ գետը Հռոմեական կայսրութեան արևելյան սահմանն էր, և տեղի կառավարիչները չէին կարող հռոմեական պաշտոնյաներ չլինել, ուստի Աբգարը նույնպէս կիսանկախ կառավարիչ (τόπαρχος) է ներկայացվել¹⁷։ Կարևոր է նաև այն հանգամանքը, որ նրա համար քրիստոնյա թագավորի կատարելատիպը Կոստանդին Մեծն էր, և ուրիշ թագավորներ, այդ թվում առաջին քրիստոնեութիւն ընդունած արքան, չէին կարող հավասարվել նրան։

Ղեբուբնա (Լաբուբնա) Եդեսացու անունով ավանդված «Աղդեի»¹⁸ վարդապետութիւնը¹⁹ I-IV դդ. ստեղծված գրույցների հավաքածու է²⁰, որը վերջնականապէս ձևավորվել է IV դ. վերջին կամ V դ. սկզբին²¹։

Ըստ Ղեբուբնայի գրույցի՝ Եդեսիայի թագավոր Աբգար V Ուքբաման (Ք.ա. 4 - Ք.հ. 7 թթ. և Ք.հ.13-50 թթ.)²² առաջինն է պետականորեն ընդունել քրիստոնեութիւն։ Արքան նամակագրական կապ է հաստատել Հիսուսի հետ և

¹⁵ Eusebius, *The Ecclesiastical History*, vol. I, p. 88.

¹⁶ Եւսեբի Կեսարացայ, Պատմութիւն Եկեղեցոյ, էջ 61:

¹⁷ J. Corke-Webster, “A Man for the Times: Jesus and the Abgar Correspondence in Eusebius of Caesarea’s “Ecclesiastical History”, *Harvard Theological Review*, 2017, 110 (4), p. 576-677.

¹⁸ Առավել հավանական է, որ Ադդե քաղաքը գործել է ոչ թե առաջին, այլ երկրորդ դարի կեսերին (տե՛ս J. Segal, *Edessa “The Blessed City”*, Oxford, 1970, p. 65):

¹⁹ Այս գրույցը հայերեն թարգմանվել է հավանաբար V դ. 30-ական թթ.. հետո, երբ քրիստոնեական աշխարհում պայքար էր սկսվել ազդեցիկ դիրքի համար: Թարգմանության գլխավոր նպատակն էր ցույց տալ հայ եկեղեցու առաքելական ծագումը և զերծ պահել այլ եկեղեցիների ազդեցությունից (տե՛ս Հ. Մելոնյան, *Հայ-ասորական հարաբերությունների պատմությունից*, Երևան, 1970, էջ 160, Л. Тер-Петросян, *Сиро-армянские литературные связи в IV-V вв.: материалы защиты докторской диссертации*, Санкт-Петербург-Ереван, 2015, стр. 35-36):

²⁰ Պահպանվել են մի շարք այլ գրույցներ կապված Աբգարի և Թադեոսի անունների հրաշագործ գործության, Աբգարի պալատի, բուժիչ ավագանի հետ և այլն: Հավանաբար գոյություն է ունեցել ընդհանուր և բազմաշերտ մի ավանդություն, որը սկիզբ է առել հայկական ու ասորական գրավոր աղբյուրների կերպավորման արդյունքում (տե՛ս Հ. Մելոնյան, *Հայ-ասորական հարաբերությունների պատմությունից*, էջ 164, A. Mirkovic, *նշվ. աշխ.*, էջ 42):

²¹ Գ. Զարբանալեան, *Հայկական հին դպրութեան պատմութիւն (Գ-ԺԳ)*, Վենետիկ, 1886, էջ 170, Н. Пигулевская, *Культура сиринцев в средние века*, М., 1979, էջ 186-188:

²² Եդեսիայի արքաների կառավարման տարեթվերն ըստ «Իրանիկա» առցանց հանրագիտարանի (տե՛ս <http://www.iranicaonline.org/articles/abgar-dynasty-of-edessa-2nd-century-bc-to-3rd-century-ad>):

նրան հրավիրել եղեսիա՝ իրեն բուժելու և միասին կառավարելու: Պատասխան նամակում Հիսուսը խոստացել է ուղարկել աշակերտներից մեկին, որը օգնելու էր Աբգարին: Խոստման համաձայն, Հիսուսի աշակերտ Ադդեն (Թադեոսը) եկել է եղեսիա և բուժել արքային: Այնուհետև առաքյալը իրականացրել է նաև եղեսիայի քրիստոնեական դարձը: Բայց փաստերը ցույց են տալիս, որ հիմնական իրադարձությունները տեղի են ունեցել Աբգար VIII-ի օրոք (177-212 թթ.) և հետագայում տեղափոխվել, Հիսուսի ժամանակակից Աբգար V ժամանակներ: Փոփոխությունը բացատրվել է նրանով, որ II-III դդ. քրիստոնեական տարբեր ուղղությունների միջև սուր պայքար էր ծավալվել, և այսպիսի զրույցները նպաստում էին նորակազմյալ եկեղեցիների հեղինակության բարձրացմանը²³: Հետագայում նույնպես ստեղծվել են նման ավանդություններ, որոնց համաձայն՝ Ադդեի աշակերտները անցել են Հայաստան, Պարսկաստան, Ադիաբենե և հիմնել տեղի քրիստոնեական համայնքները: Այդ պատճառով էլ նշված երկրներում²⁴ նույնպես եկեղեցու հիմնադիր համարվել է Թադեոս (Ադդե) առաքյալը²⁵:

Ուխտավորուհի էթերիան Հռոմեական կայսրության արևմտյան պրովինցիաներից էր: Նա ուխտագնացություն է կատարել դեպի Երուսաղեմ, եղել Հիսուսի առաքյալների նահատակությունների վայրերում: Այս բոլոր վայրերի մասին նա կատարել է համառոտ գրառումներ²⁶: Ուղևորության ընթացքում նա այցելել է նաև եղեսիա: Ըստ ուխտավորուհու՝ այստեղ թաղված էր **Թովմաս առաքյալը**՝ այս երկրի քարոզիչը: Եղեսիայի եպիսկոպոսը ուխտավորուհուն պատմել է Աբգարի և Հիսուսի նամակագրության մասին, ցուցադրել արքայական պալատն ու արձանները: Էթերիայի ուղեգրության մեջ պահպանվել է եղեսիան պարսից ավերումից փրկած Սուրբ աղբյուրի մասին ավանդազրույցը²⁷, իսկ Սուրբ դաստառակի մասին խոսք չկա:

Հետագա դարերի այլազգի հեղինակների երկերում Աբգարի զրույցը նորանոր փոփոխություններ է կրել: Բյուզանդական պատմագիրները (Պրոկո-

²³ A. Camplani, նշվ. աշխ., էջ 255:

²⁴ Ըստ Մովսես Խորենացու հաղորդումների՝ Թադեոսի աշակերտներից Սիմոնը փառոզել է Պարսից աշխարհում (տե՛ս **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն (ՄՀ, Բ հ.), Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 1904):

²⁵ Հ. Մելիքյան, Հայ-ասորական հարաբերությունների պատմությունից, էջ 164-165:

²⁶ L. Honey, *Egeria's Site-Seeing: Christian Pilgrimage in the Fourth Century*, Calgary, 2002, p. 6-16.

²⁷ Egeria: *Diary of Pilgrimage*, p. 78-80.

պիոս Կեսարացին (VI դ.)²⁸, Կոստանդին Ծիրանածինը (X դ.)²⁹, Հովհաննես Սկիլիցեսը (XI դ.)³⁰ և այլք) իրենց երկերում առանձնահատուկ տեղ են հատկացրել Տիրոջ պատկերով Սուրբ դաստառակին, ինչը բացակայում էր Եվսեբիոս Կեսարացու «Եկեղեցական պատմություն» էջերից: Ըստ այս պատմիչների՝ Սուրբ դաստառակը Եդեսիան պաշտպանել է թշնամիներից, իսկ հետագայում հանդիսացել է բյուզանդական կայսրերի կարևորագույն խորհրդանիշներից մեկը: Այն կարևոր կոման է եղել հատկապես պատկերամարտների դեմ վեճերում³¹, իսկ Եդեսիայի քրիստոնեական դարձի պատմությունը երկրորդական նշանակություն է ունեցել: Բյուզանդական պատկերապաշտությունն ավանդույթներով են ձևավորվել նաև Աբգարի վարքի սլավոնական³² (սերբական, բուլղարական և ռուսական), արաբական³³ և այլ տարբերակները:

Աբգարի վարքը ենթարկվել է նոր կերպափոխությունների խաչակրաց արշավանքների և դրանց հաջորդած ժամանակահատվածներում³⁴: Այս արշավանքների հետևանքով Եդեսիան դարձել է խաչակիրների կարևոր կենտրոններից: Այն նաև առաջինն է նվաճվել մահմեդականների կողմից (1144 թ.) փոխելով ուժերի հարաբերակցությունը Արևելքում՝ ի վնաս խաչակիրների³⁵: Այս ամենը նոր ազդակներ էին Աբգարի զրույցը փոփոխությունների ենթարկելու համար:

²⁸ **Պրոկոպիոս Կեսարացի**, Պատերազմների մասին (Բյուզանդական աղբյուրներ, հ. Ա), թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Ն. Բարթիկյանի, Երևան, 1967, էջ 108-111:

²⁹ Կոստանդին Ծիրանածինի շարադրամբը Քրիստոսի անձեռագործ պատկերի մասին (Բյուզանդական աղբյուրներ, հ. Բ), թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Ն. Բարթիկյանի, Երևան, 1970, էջ LXII, 177-195:

³⁰ **Հովհաննես Սկիլիցես**, Համառոտություն պատմությանց (Բյուզանդական աղբյուրներ, Գ հ.), թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Ն. Բարթիկյանի, Երևան, 1979, էջ 110-119:

³¹ **M. Guscin**, *The Tradition of the Image of Edessa*, Cambridge, 2016, p. 2.

³² **Е. Мещерская**, *Легенда об Авгаре: раннесирийский литературный памятник*, М., 1984, стр. 88-111.

³³ **H. Gottheil**, "An Arabic Version of the Abgar-Legend" (Source: Hebraica, Vol. 7, No. 4), 1891, The University of Chicago Press, p. 268-277.

³⁴ Խաչակրաց արշավանքների հետևանքով Աբգարի զրույցը տարածվել է նաև Եվրոպայում: Բազմաթիվ եվրոպացիներ այցելել են Եդեսիա, Միջագետքի այլ ֆաղափներ, որտեղ իրենց գործունեությունն էին ծավալել Հիսուսն ու աշակերտները: Այս ամենի արդյունքում, Եվրոպայում լայն տարածում է գտել Հիսուսի պատկերումը եդեսիական դաստառակի ոճով: Անգամ XIX դ. բազմաթիվ անգլիացիների բնակարաններում կարելի էր հանդիպել այդ պատկերին (տե՛ս **Mirkovic A.**, նշվ. աշխ., էջ 3):

³⁵ **Վ. Տեր-Ղևոնդյան**, «Կիլիկիան Հայաստանն ու Սիրիան XII դ. 40-70-ական թվականներին», ՊԲՀ, 1986, թիվ 2, էջ 122:

Ասորի հոգևորականությունը ստիպված է եղել նոր քրիստոնյա հովանավորներ փնտրել՝ դիտարկելով նաև Կիլիկիայի Ռուբինյան իշխանությունը:

Ինչպես տեսանք, Աբգարի վարքաբանական զրույցը ասորական ծագում ունի և ասորական եկեղեցու ուղղափառության ու հեղինակության հիմնական գրավականներից է³⁶: Չնայած այս ամենին՝ զրույցը զգալի փոփոխություններ է կրել նաև այս միջավայրում: Սկսած VI դ. զրույցը ծառայեցվել է եղեսիա քաղաքի և տեղի եկեղեցու հեղինակության բարձրացման համար: Այս ժամանակ ապրած ասորի հեղինակ Յոշվա Ստիլիտը իր «ժամանակագրության» մեջ ավանդել է, որ եղեսիան սուրբ և ընտրյալ քաղաք է՝ Աստծո հովանավորության ներքո³⁷:

Սկսած Հակոբ Ասորու ժամանակագրությունից (VII-VIII դդ.) ասորի որոշ հեղինակներ սկսել են Աբգարին հայազգի ներկայացնել, իսկ եղեսիան՝ հայկական³⁸ ու հայերի կողմից հիմնադրված³⁹: IX-X դդ. Ազաթանգեղոսի ասորերեն թարգմանված «Պատմություն»-ը⁴⁰ ավանդում է, որ Աբգարը եղել է հայազգի: Թադեն քարոզչությամբ է զբաղվել Հայաստանում և դարձի բերել հայոց արքա Սանատրուկին. «Հայաստանում կար Սանատրուկ անունով մի թագավոր, որը Քրիստոսին նամակ գրող Ուռհայի թագավոր Աբգարի քեռորդին էր: Ասում են, որ նա Դավիթ արքայի ու մարգարեի ցեղից էր: Այստեղից էլ Հայաստանի բոլոր թագավորները Դավթի տնից են համարվում: Հայոց այս թագավորի՝ Սանատրուկի օրոք հայտնվեց Ղևին, որի մականունն էր Թադեոս, այսինքն՝ Ադդե, և նրան քարոզեց հավատքի խոսքը: Սանատրուկը՝ Աբգարի թագավորի քեռորդին ընդունեց նրան»⁴¹: Նման հիշատակություն բացակայել է

³⁶ A. Ward, F. Heichelheim, A. Cedric, *A History of the Roman People*, New York, 2016, p. 400.

³⁷ The Chronicle of **Joshua the Stylite** *Composed in Syriac A.D. 507*, Translation by **Wright W.**, Cambridge, 1882, p. 5-6, 51, **Կեղծ Յոշվա Ստիլիա (Սյունակյաց)**, ժամանակագրություն (Ասորական աղբյուրներ, հ. Ա), թարգմանությունը բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հ. Մեխրոնյանի, Երևան, 1976, էջ 173, 194-195:

³⁸ Հակոբ եղեսացու այս վկայությունը հիմնվել է հայկական որևէ բանավոր գրույցի վրա, ինչպես նաև կարող էր բխել հայ-ասորական եկեղեցական հարաբերություններից, որոնք այդ ժամանակ բարելավվում էին (տես **J. Segal**, *նշվ. աշխ.*, էջ 16):

³⁹ **L. Van Rompay**, “*Jakob of Edessa and the Early History of Edessa*” (*After Bardaisan*), *Edited by Drijvers J. W.*, Leuven, 1999, p. 273, 283:

⁴⁰ Հ. Մեխրոնյան, «Ասորական աղբյուրները հայ եկեղեցու մասին», *էջմիածին*, 1978, թիվ 16, էջ 177-180:

⁴¹ **Տեռ-Պետրոսյան Լ.**, «Ազաթանգեղոսի ասորական խմբագրությունը», *էջմիածին*, 1988, թիվ 16, էջ 44:

Ագաթանգեղոսի՝ հայերեն, հունարեն, վրացերեն տարբերակներից: Ագաթանգեղոսի «Պատմություն» մեջ նման մանրամասների ներառումը, վկայում է, որ ասորական եկեղեցին մտադիր է եղել սերտացնել հարաբերությունները հայոց եկեղեցու հետ և ընդհանուր ծագում վերագրել երկու եկեղեցիներին: Այս ժամանակաշրջանում Հայաստանում գահը անցել էր Բագրատունյաց տոհմին, որին հրեական ծագում էր վերագրվում: Ագաթանգեղոսի «Պատմություն» ասորերեն տարբերակում Աբգարին ու հայոց բոլոր արքաներին հրեական Դավիթ թագավորի ժառանգ ներկայացնելու դրվագը բխում էր հենց այդ զրույցից⁴²: Սա փաստում է, որ Աբգար թագավորի կերպարը բազմանշանակ կիրառություն էր գտնում և ասորական եկեղեցին փորձում էր այն օգտագործել հայոց արքաների բարեհաճությունը ստանալու համար:

Աբգար Եդեսացու և Օսրոենե-Եդեսիայի թագավորության մասին իր «Ժամանակագրություն»⁴³ էջերում նշել է XIII դ. ասորի նշանավոր հոգևորական Միքայել Մեծ Ասորին: Ըստ նրա՝ Աբգարը խիզախ և պատերազմասեր մարդ էր, որը, հաղթելով պարթևներին, ստեղծել է սեփական թագավորությունը: Ըստ Միքայել Ասորու՝ նա իշխել է նաև հայկական տարածքներում և հասել մինչև Բաբելոն: Նրա այս հաղորդումները նմանություն ունեն Մովսես Խորենացու պատմության հետ⁴⁴: Միքայել Ասորին համառոտ անդրադարձել է նաև Աբգարի նամակներին, Սուրբ դաստառակին և Թադեոս առաքյալի հրաշագործություններին⁴⁵:

⁴² **Նույնի՝** «Ագաթանգեղոսի ... էջմիածին, 1987, թիվ ԽԳ, էջ 88-89:

⁴³ Այս երկը հայերեն է թարգմանել Իշող ասորի ֆահանսան 1248 թ. Կոստանդին կաթողիկոսի պատվերով: Այն խմբագրել է Վարդան Արևելցին: Համարվում է Միքայել Ասորու ինֆնագրից կատարված թարգմանություն (տե՛ս **Փ. Անթապյան**, *Վարդան Արևելցի: Կյանքն ու գործունեությունը*, Գիրք Ա, Երևան, 1987, էջ 267-269, 325-351, **Լ. Տեր-Պետրոսյան**, *Ասորիների դերը հայկական Կիլիկիոյ մշակույթային կյանքում ժԲ-ժԳ դարերում*, Վենետիկ, 1989, էջ 35):

⁴⁴ Ասորի պատմագրի մոտ նույնպես Աբգարը հաշտարար է Արշակունիների միջև: Այստեղ ևս Եդեսիայի արքայի հրահանգով ներսեհո Պերոզին նշանակել է Նինվեի կառավարիչ (տե՛ս **Մովսես Խորենացի**, էջ 1893-1895, 1904, *Chronique de Michele le Syrien*, Editée pour la première fois et traduite en français par Chabote J.-B., T. I, Paris, 1899, p. 120): Միքայել Ասորին հայտնում է, որ հետևել է Եվսեբիոս Կեսարացու օրինակին և Աբգարին կոչել «**ազնիվ մարդ**» (տե՛ս *Chronique de Michele le Syrien*, p. 120): Մինչդեռ հայտնի է, որ Եվսեբիոսը Աբգարին անվանել է «սուրբ մարդ» (տե՛ս ծանոթ. 5): Աբգարին «**ալրազնիվ**» բնութագրումը տրվել է Եվսեբիոսի «Ժամանակագրության» հայերեն թարգմանության մեջ և բացառված չէ, որ Միքայել Ասորին օգտագործել է հենց հայերեն տարբերակը:

⁴⁵ *Chronique de Michele le Syrien*, p. 145.

Միքայել Ասորին Աբգարի մասին խոսել է նաև «Հայաստանի համառոտ պատմության» էջերում: Այստեղ նա մեջբերել է Աբգարի ավանդական պատմությունը, ներկայացրել նրա քրիստոնեական դարձը⁴⁶: Իր այս գրվածքում ասորի հեղինակը Աբգարին համարել է հայազգի արքա և նրան հիշատակել հայոց արքայացանկում⁴⁷:

Միքայել Ասորու գրվածքների բովանդակությունը թույլ է տալիս ենթադրել, որ նա ցանկացել է բարեկամական հարաբերություններ հաստատել հայոց եկեղեցու հետ: Այդ նպատակով նա երկու եկեղեցիների համար փորձել է գտնել պատմական ու գաղափարական ընդհանրություններ⁴⁸, դրանց միջոցով բարելավել եղած հարաբերությունները: Այս համատեքստում պետք է հասկանալ նաև Աբգարին հայազգի ներկայացնելու փորձը:

Աբգարի վարքի մեկ այլ տարբերակ պահպանվել է XIII դ. Ասորի Անանուն Նդեսացու «Ժամանակագրության» էջերում⁴⁹, որտեղ նույնպես Աբգարը ներկայացվել է հայազգի⁵⁰: Ուսումնասիրողները կարծում են, որ նա չի կրել հայկական աղբյուրների ազդեցությունը⁵¹ և, հավանաբար, ազդվել է հայաշատ Նդեսիայում տարածված որևէ գրույցից⁵²:

XIII դ. (1246 թ.) Կիլիկյան Հայաստանում ասորերենից հայերեն է թարգմանվել Թադեոս առաքյալին և Աբգար արքային նվիրված ասորի Հակոբ Սրճեցի եպիսկոպոսի ներբողյանը: Այս ներբողյանի թարգմանիչը համարվել է ասորի Շմոն քահանան, իսկ պատվիրատունն ու խմբագիրը՝ Վարդան Արև Ելցին⁵³: Ներբողի թարգմանությունը հաստատում է, որ Աբգար արքայի նկատմամբ հա-

⁴⁶ **Р. Гусейнов**, “Краткая история Армении” (Из “Хроники” Михаила Сирийца), *Кавказ и Византия*, вып. I, Ереван, 1979, стр. 186-187.

⁴⁷ *Նույն տեղում*, էջ 193:

⁴⁸ Ասորական ժամանակագրական երկերը, ունենալով վստահելի աղբյուրների համբավ, երբեմն՝ գաղափարական, ֆաղափական կամ հոգևոր սկզբունքներից ելնելով, իրադարձությունները ներկայացրել են իրենց ցանկալի ձևով (տե՛ս **Van J. Ginkel**, “Michael the Syrian and his Sources: Reflections on the Methodology of Michael the Great as a Historiographer and its Implications for Modern”, *Historians Journal of the Canadian Society for Syriac Studies* 6, 2006, p. 54):

⁴⁹ **Անանուն Նդեսացի**, *Ժամանակագրություն (Ասորական աղբյուրներ, հ. Բ)*, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ **Լ. Տեր-Պետրոսյան**, Երևան, 1982, էջ 195-196:

⁵⁰ *Նույն տեղում*:

⁵¹ **A. Hilken**, *The Anonymous Syriac Chronicle up to Year 1234 and its Sources*, Ghent, 2014, p. 412-415.

⁵² Այս գրույցների մասին տե՛ս ծանոթ. 14:

⁵³ **Փ. Անթապյան**, *նշվ. աշխ.*, էջ 315-316:

յոց մեջ հետաքրքրությունը չէր մարել, և նորանոր տեղեկություններ էին կուտակում ու գործածում: Միաժամանակ ներբողյանը ևս մեկ անգամ շեշտում էր հայ եկեղեցու առաքելական ծագումը և իր նպաստը բերում հայ-ասորական հարաբերությունների բարելավմանը⁵⁴:

Այսպիսով օտար մատենագրության մեջ Աբգար արքայի և Երեսիայի քրիստոնեական դարձը լայնորեն լուսաբանվել է և ունեցել զարգացման մի քանի փուլեր: II-IV դդ. հեղինակները, որոնք ժամանակակից էին Աբգար VIII-ին, միաբերան նշում են, որ Երեսիայում քրիստոնեության հիմնադիրը հենց այս արքան է: IV-VI դդ. ստեղծվել է Աբգարի սրբախոսական զրույցը: Պետք է նշել, որ այն զրույցների հավաքածու է՝ ստեղծված Երեսիա քաղաքը գովաբանելու և մեծ հեղինակություն ապահովելու համար: Սկսած VI դ. բյուզանդական իրականության մեջ Աբգարի զրույցը նոր կերպափոխության է ենթարկվել: Զրույցի գլխավոր առանցքը դարձել էր Հիսուսի պատկերով անձեռագործ Սուրբ դաստառակը, որը նույնիսկ ներառվել էր կայսերական պատվանշանների շարքում:

Ասորական միջավայրում, ուր տեղի էր ունեցել այս զրույցի ծնունդը, նույնպես փոփոխություններ են կատարվել: Սկսած VI դ., երբ ասորական եկեղեցին բռնել էր անկման ուղին և պաշտպանության կարիք ուներ, այն Աբգարին ներկայացրել է հայազգի կամ հայկական հողերում կառավարած թագավոր:

Արևմտաեվրոպական միջավայրում Աբգարի զրույցը տարածվել է խաչակրաց արշավանքներից հետո: Այստեղ ևս մեծ ճանաչում ունեն Սուրբ դաստառակի մասին զրույցը: Վերջինիս ոճով պատկերագրությունը լայնորեն կիրառվել է նաև հետագայում:

Վերադառնալով մեր բուն թեմային՝ հայ մատենագրության մեջ Աբգարի զրույցի կիրառության հարցին, պետք է ասել, որ այն մեծ տարածում է ունեցել: Հայտնի է, որ հայերեն առաջին թարգմանությունները կատարվել են ասորերեն ու հունարեն լեզուներից, ինչը փաստում է, որ հայ հեղինակները չէին կարող անտեղյակ լինել Աբգարի զրույցին:

Հայ իրականության մեջ Աբգարի զրույցը ամբողջությամբ մեջբերել է Պատմահայր Մովսես Խորենացին՝ հիմնականում օգտվելով «Աղղեի վարդապետության» հայերեն հին թարգմանությունից («Աբգարի զրույցը»⁵⁵), եվսե-

⁵⁴ Նույն տեղում, էջ 317:

⁵⁵ Ղերութնա (Լաբութնա) Երեսացու «Աղղեի վարդապետությունը (գործունեությունը)» հայոց մեջ հրատարակվել է երկու տարբեր ձևագրերի հիման վրա 1868 թ. Վենետիկում և

բիոս Կեսարացու «Եկեղեցական պատմություն»-ից, Ափրիկանոսի «Ժամանակագրություն»-ից⁵⁶, բանավոր զրույցներից⁵⁷ և այլն:

Վաղ միջնադարյան մյուս հայ պատմագիրները լռել են Աբգար թագավորի քրիստոնեական դարձի մասին: Միայն Փավստոս Բուզանդն է, որ տեղեկություններ է ավանդել թագոս առաքյալի՝ Հայաստանում ծավալած գործունեության մասին⁵⁸: Ըստ նրա՝ հայոց եկեղեցու հիմնադիրներն են եղել և՛ թագոս առաքյալը, և՛ Գրիգոր Լուսավորիչը. «Եւ նստուցին զնա (խոսքը Հուսիկ կաթողիկոսի մասին է-Շ.Ա.) յաթոռն առաքելոյն թագոսի, եւ յաթոռ իւրոյ հաւուն մեծին Գրիգորի», «Յուսիկն զհայրապետն զաթոռակալն զվիճակակալն զվիճակին թագոսի առաքելոյն եւ զնորին նմանոյն Գրիգորի»⁵⁹: Փավստոսը հայտնում է, որ Հայաստանում գրվել է թագոսի վկայաբանությունը և ինքը դրան ծանոթ է եղել⁶⁰:

Թագոս առաքյալի վկայաբանությունը, հավանաբար, գրվել է Կորյունի և Ազաթանգեղոսի երկերից հետո: Վկայաբանությունը ուժեղացնելու էր ասորական եկեղեցու ազդեցությունը Հայաստանում: Այն որոշ հարցերում չի համընկնում հորեկանացու մեջբերած պատմության հետ: Այստեղ թագոսի գործունեության մինչհայաստանյան շրջանը, այսինքն՝ եղեսիայում քարոզելու ժամանակաշրջանը, գրվել է «Աղբեի վարդապետության» ազդեցությամբ: Ի տարբերություն Մովսես հորեկանացու՝ թագոսի վկայաբանության հեղինակը Օսրոենեն անվանում է Միջագետք Ասորոց, իսկ եղեսիան՝ Ուռհա: Վկայաբանության

Երուսաղեմում (Տէ՛ս **Ղերութնա Եղեսայի**, Թուղթ Աբգարու թագավորի Հայոց, եւ քարոզութիւնք սրբոյն թագեի առաքելոյ, Երուսաղեմ (XV դ. ձեռագիր) և **Լաբուբնայ դիանագիր դպրի Եղեսոյ** Թուղթ Աբգարու յեղեալ յասորոյն ի ձեռն Ս. Թարգմանչաց, Վենետիկ (XII դ. ձեռագիր):

⁵⁶ Այս ժամանակագրությունը չի պահպանվել և փոխանցվել է հետագա պատմիչների աշխատությունների շնորհիվ: Աբգարի գրույցը մեջբերելիս հորեկանցին ևս օգտվել է այս հեղինակից (տե՛ս Ա. Թոփչյան, «Հուլիոս Աֆրիկանոսի «Ժամանակագրությունը» և Մովսես հորեկանցին», ՊԲՀ, 2000, թիվ 2, էջ 130):

⁵⁷ Մինչև IV դ. Միջագետքում կամ Եղեսիայում շրջագայած ուխտավորները չեն գրել Ադրեի ֆարոզության մասին, ինչը կարող է վկայել, որ այն գոյություն է ունեցել բանավոր ձևով և այդպես ներթափանցել Հայաստան (տե՛ս **Mirkovic A.**, նշվ. աշխ., էջ 26):

⁵⁸ Եղիշեն նույնպես ավանդել է թագոսի մասին և նրան համարել արևելյան կողմերի ֆարոզի՝ չնշելով Հայաստանում ֆարոզելու մասին (**Եղիշէ**, Վարդապետութիւն ըստ Յովհաննոս սիրբեւոյ ի շարշարանս Տեառն (ՄՀ, հ. Ա), Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 1046):

⁵⁹ **Փավստոս Բուզանդ**, Պատմութիւն Հայոց (ՄՀ, հ. Ա), Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 292, 299, 313:

⁶⁰ **Փավստոս Բուզանդ**, էջ 278:

մեջ Աբգարի հայազգի լինելը չի նշվել⁶¹: Այստեղ առանցքը Թադեոսի փառաբանումն է, նրա քարոզչությունը Հայաստանում: Սա բարձրացնելու էր հայոց եկեղեցու հեղինակությունը և հավասար էր դարձնելու մյուս եկեղեցիներին⁶²: Բացակայում էր Սուրբ դաստառակի մասին Լաբուբնայի վկայակոչությունը, ինչը ցույց է տալիս, որ այն դեռևս մեծ կարևորություն չէր ձեռք բերել:

Կորյունի տեղեկությունների համաձայն՝ Մաշտոցը հայոց գրերը ստեղծել է ասորիների եղեւսիա քաղաքում (նկատենք, որ վարքագիրը եղեւսիան ամենեւին հայկական քաղաք չի դիտարկել) և տրամաբանական պետք է լիներ, որ վարքագիրը նշեր այս քաղաքի և նրա արքա Աբգարի առանձնահատուկ դերը քրիստոնեական աշխարհում: Սակայն նա չի ավանդել նման տեղեկություններ: Ըստ նրա հաղորդումների՝ Մաշտոցի աշակերտներ Եզնիկն ու Հովսեփը մեկնել էին եղեւսի՝ ասորիների սուրբ պատմությունները թարգմանելու⁶³: Դատելով այն հանգամանքից, որ Կորյունը տեղյակ չէ եղեւսիայի և Աբգար արքայի առանձնահատուկ դերի մասին, կարող ենք կարծել, որ «Աղդեի վարդապետությունը» վաղ շրջանում չի թարգմանվել: Հավանական է, որ վարքի ասորական տարբերակը վերջնականապես ձևավորվել է եղեւսիայի Ռաբուլաս եպիսկոպոսի ժամանակ՝ 430 թ. հետո⁶⁴ լինելով զորեղ կռվան ընդդեմ հեթանոսների և աղանդավորների: Հավանաբար, այս ժամանակ է գրվել Հիսուսի պատասխան նամակի կրկնօրինակ արձանագրությունը, որը տեղադրված է եղել եղեւսիայի դարպասներից մեկի որմնաշարում⁶⁵: Կորյունի ու մյուս հայ պատմագիրների նման «անտարբերությունը», կարելի է բացատրել այն հանգամանքով, որ նրանք ավելի վաղ են եղել եղեւսիայում և չեն տեսել արձանագրությունը:

Ոսկեդարին հաջորդած ժամանակաշրջանում Աբգարի զրույցը սկսել է ավելի լայնորեն ընդգրկվել հայ մատենագրական երկերում: Հայ հեղինակները հաճախ մեջբերել են, ոչ թե ամբողջական տարբերակը, այլ իրենց հետաքրքրող հատվածները: Նման հատվածներից էր Սուրբ դաստառակի մասին զրույցը: Նշանավոր եկեղեցական գործիչ Վրթանես Քերթովը (VI-VII դդ.) պատկերա-

61 **Անանուն**, *Վկայաբանություն Թադեոսի առաքելուն, քարոզութեանն եւ գալստեան ի հայս եւ կատարմանն որ ի Քրիստոս գիւտ նշխարաց Թադեոսի առաքելուն (ՄՀ, հ. Գ)*, Անթիլիաս-Լիբանան, 2004, էջ 5-6:

62 **Ալիմեան Ն.**, «Մատենագրական հետազոտություններ. Թադեի եւ Սանդիստոյ վկայաբանությունը», *ՀՍ*, 1970, թիւ 1-3, էջ 15-22:

63 **Կորյուն**, *Վարք Մաշտոցի (ՄՀ, հ. Ա)*, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 237, 247:

64 **S. Griffith**, “The doctrina Addai as a Paradigm of Christian Thought in Edessa in Fifth Century”, *Hugoye: Journal of Syriac Studies*, 2003, Vol. 6.2, էջ 291:

65 **J. Segal**, *նշվ. աշխ.*, էջ 66, 75:

մարտություն ղեմ կարևորել է Ուժհայում պահվող Հիսուսի պատկերը⁶⁶: Ինչպես վերևում տեսանք, նմանատիպ գործելակերպ էր որդեգրել նաև բյուզանդական եկեղեցին և երկու եկեղեցիները համախոհ էին այս հարցում:

Հետագա դարերում Աբգարի զրույցը շարունակել է ուշադրության կենտրոնում մնալ և հատվածական կիրառվել հայ հեղինակների կողմից:

Կաթողիկոս պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցին հայ իրականության մեջ առաջինն է գրել հայ եկեղեցու պատմություն⁶⁷ և Աբգարի զրույցը մեջբերել է այս համատեքստում: Նա իր պատմությունից բաց է թողել որոշ հատվածներ՝ Աբգարի «թղթերը», քաղաքական պատմությանը վերաբերող տեղեկություններ, տեղավայրեր և այլն: Պատմիչը կատարել է նաև առանձին հավելումներ՝ ընդգծելով Աբգարի բարեպաշտությունը: Հովհաննես Դրասխանակերտցին նպատակ է ունեցել ամրապնդել հայ եկեղեցու հիմքերն ու իրավունքները, ցույց տալ հայոց եկեղեցու առաքելական ծագումը և զերծ պահել այն բյուզանդական եկեղեցու հարձակումներից⁶⁸:

X դ. մեկ այլ պատմիչ՝ Թովմա Արծրունին, Աբգարի զրույցը ծառայեցրել է հուրան Արծրունու մեծարմանը. «Ընդ որում (իմա՝ Աբգարի-Շ.Ա.) եւ մեծ իշխանն Արծրունեաց հուրան՝ եւ գլխապետ զաւրավար զաւրու եւ միահեծան թագաւորութեան Հայոց Մեծաց, որ առաջին ի Քրիստոս հաւատացեալ եղև իշխանս հուրան եւ մկրտեալ ի ձեռաց Թադէոսի առաքելոյ»⁶⁹: Ինչպես տեսնում ենք, հուրան Արծրունին ներկայացվում է Աբգար արքայի մտերիմ նախարարներից, որը նույնպես էական դեր է կատարել քրիստոնեության հաստատման գործում, արժանացել Թադէոս առաքյալի կողմից մկրտվելու պատվին: Փաստորեն, Թովմա Արծրունին Աբգարի զրույցը յուրահատուկ կերպափոխության է ենթարկել, այնտեղ ներմուծել այնպիսի հերոսներ, որոնք չկային զրույցի նախնական տարբերակում: Այսպիսով նա զրույցը օգտագործել է Վասպուրականի թագավորության գովերգման, նրա տերերի հեղինակության բարձրացման նպատակով:

⁶⁶ Վրթանես Քերթոզն այս հատվածը, հավանաբար, մեջբերել է հորենացուց, միայն թե «կենդանագրության ժրխանան աստեղին» արտահայտության փոխարեն գործածել է «տիրոջ պատկեր» արտահայտությունը (տե՛ս Մովսես Խորենացի, էջ 1899, Վրթանես Քերթոզ, Հաղագս Պատկերամարտից (ՄՀ, հ. Գ), Անթիլիաս-Լիբանան, 2004, էջ 495):

⁶⁷ Ա. Սարգսյան, Հովհաննես Դրասխանակերտցու «Հայոց պատմությունը» և Մովսես Խորենացին, Երևան, 1991, էջ 116:

⁶⁸ Նույն տեղում, էջ 88, 135-136:

⁶⁹ Թովմա Արծրունի և Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց (ՄՀ, հ. ԺԱ), Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 90-93:

Հովհաննես Դրասխանակերտցու և Թովմա Արծրունու կատարած խմբագրումներն ու Աբգարին մեծարելու գրվագները կամուրջ են Աբգարի գրույցի ձևափոխման և սրբախոսական չափանիշներին համապատասխան վարք դառնալու համար⁷⁰:

X դ. պատմիչ Ուխտանեսը ընդարձակ ձևով ներկայացրել է Աբգարի գրույցն և Թադեոսի վկայաբանությունը: Պատմիչը հիմնականում մեջբերել է Մովսես Խորենացու⁷¹ համապատասխան հատվածները՝ կատարելով որոշակի կրճատումներ⁷²: Հաջորդ դարում ապրած Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը Աբգարի վարքը ավանդել է սկզբնաղբյուր ունենալով Մովսես Խորենացու գրույցը⁷³:

XII-XIII դդ. պատմիչ Մխիթար Անեցին, ինչպես Դրասխանակերտցին և Ուխտանեսը, օգտվել է Մովսես Խորենացու պատմությունից: Նա կատարել է նաև հավելումներ՝ հավանաբար օգտվելով ասորական տարբերակից: Խոսելով Շամշազրամ և Մարիաբ նախարարների մասին՝ Մխիթար Անեցին չի առանձնացրել, թե նրանք որտեղից են՝ նշելով միայն Մարիաբի բղեշխ լինելը. «Իսկ ի ժամանակին իբրև դարձաւ Աբգար յարևելից, որ երթեալ միաբանեաց զեղբարս ազգի իւրոյ, առաքէ զերկուս ի գլխաւոր նախարարաց իւրոց՝ զՄար Իհաբ բղեշխն և զՇամշազրամ, առ Մառինոս հազարապետ Պաղեստինացոց և Փիւնիկեցոց և Ասորոց»⁷⁴: Այս հեղինակը փորձել է համատեղել թե՛ Խորենացու, թե՛ այլ աղբյուրների հիշատակությունները: Մխիթար Անեցին տեղյակ էր, որ Հիսուսի անձեռագործ դաստառակը այլևս չի գտնվել Եղեսիայում և այդ մասին Խորենացու վկայությունը չի նշել⁷⁵:

⁷⁰ Նաև այս հեղինակների շնորհիվ է համարվել հայ եկեղեցու տոնելի սրբերի շարքը, ինչը նպաստել է առանձին սրբախոսական ժողովածուների ստեղծմանը (տե՛ս Ք. Տեր-Դավթյան, *նշվ. աշխ.*, էջ 141):

⁷¹ Արզումանյան Զ., «Ուխտանես Եպիսկոպոս Սեբաստիո և իր «Պատմություն Հայոց» երկը», *էջմիածին*, 1985, թիվ 2, էջ 41, Ս. Քոլանջյան, «Ճշգրտումներ Ուխտանես պատմիչի կենսագրության վերաբերյալ», *ՊԲՀ*, 1980, թիվ 4, էջ 159:

⁷² Խոսքն Աբգարի Արևելք արշավելու և Պարսից աշխարհում միջնորդական առաքելություն իրականացնելու մասին է: Ի տարբերություն Խորենացու՝ Ուխտանեսը բիշ է գովաբանել ազգությանը հրեա Տուբիա իշխանին (տե՛ս Ուխտանես Եպիսկոպոս, *Պատմութիւն Հայոց* (ՄՀ, հ. ԺԵ), Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 473-477):

⁷³ Ստեփանոս Ասողիկը առհասարակ դուրս է թողել Աբգարի և Հիսուսի նամակագրության պատմությունը (տե՛ս Ստեփանոս Տարանեցի Ասողիկ, *Պատմութիւն Տիեզերական* (ՄՀ, հ. ԺԵ), Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 664-667):

⁷⁴ Մխիթար Անեցի, *Մատենան աշխարհավէպ հանդիսարանաց*, աշխատասիրությամբ Հ. Մարգարյանի, Երևան, 1983, էջ 81:

⁷⁵ Նույն տեղում, էջ 83:

Վարդան Արևելցին իր պատմության մեջ ներկայացրել է Մովսես Խորենացու մեջբերած զրույցի համառոտ տարբերակն ու Ստեփանոս Տարոնեցու նմանությունը կրճատել Աբգարի թղթերին վերաբերող հատվածները⁷⁶:

Մանր ժամանակագրություններում Աբգար թագավորի մասին հիշատակությունները համառոտ են և գլխավորապես առկա են արքայացանկերում⁷⁷: Դավիթ Բաղիշեցին իր ժամանակագրության մեջ (XVII դ.) համառոտ ներկայացրել է Աբգարի վարքի հայսմավուրքային տարբերակը⁷⁸:

Աբգարի զրույցի վարքագրական տարբերակը վերջնականապես ձևավորվել է սրբախոսական ժողովածուներում⁷⁹, հատկապես՝ հայսմավուրքային խմբագրություններում⁸⁰: Այս վարքը առաջին անգամ ընդգրկվել է Տեր Իսրայելի⁸¹ խմբագրած հայսմավուրքում⁸²: Տեր Իսրայելը և մյուս խմբագրողները

⁷⁶ Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի, լուսաբանեալ [ի Ղ. Ալիշանէ], Վենետիկ, 1862, էջ 33-35:

⁷⁷ Անանունի ժամանակագրություն (XVII դ., էջ 254-255, 257), Բաղդասար դպիրի ժամանակագրությունը (XVIII դ., էջ 336, 338), (Մանր ժամանակագրություններ (XIII-XVIII դդ.)), Բ. Ա. կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1951, Հովհաննես Աագերեցի ժամանակագրությունը (XIII դ., էջ 3), Ներսես Պալիենցի հայոց թագավորների և իշխանների կարգը (XIV դ., էջ 203) (Մանր ժամանակագրություններ (XIII-XVIII դդ.)), Բ. Բ. կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1956:

⁷⁸ Դավիթ Բաղիշեցու ժամանակագրությունը (XVII դ.) (Մանր ժամանակագրություններ (XIII-XVIII դդ.)), Բ հատոր, էջ 312-314:

⁷⁹ Զարմանալիորեն Աբգարի վարքը դուրս է մնացել Գրիգոր Վկայասերի խմբագրած «Ճաշոց» ժողովածուներից: Այս ժողովածուներում բացակայում է նաև Սմբատ I Բագրատունի արքայի վկայաբանությունը (տե՛ս ՄՄ 832, 979, Մ. Ավդալբեգյան, «Յայսմավուրք» ժողովածուները և նրանց պատմագրական արժեքը, Երևան, 1982, էջ 37-53, Շ. Ռընու, ««Ճաշոց» գրքի ծագումն ու զարգացումը», ՊԲՀ, 1987, թիվ 2, էջ 40-45, Ռ. Վարդանյան, Հայոց տոնացույցը (4-18-րդ դարեր), Երևան, 1999, էջ 267-279):

⁸⁰ Նախածերենցյան հայսմավուրքների խմբագրությունների և նրանց հեղինակների հարցը վերջնական լուծված չէ: Մշտոցյան Մատենադարանում նախածերենցյան հայսմավուրք ձեռագրերի թիվը 18 է: Ընդունված է համարել, որ կան նախածերենցյան 3 կամ 6 խմբագրություններ (տե՛ս Մ. Ավդալբեկյան, նշվ. աշխ., էջ 54, Եզնիկ Եպիսկոպոս Պետրոսյան, «Նախածերենցյան հայսմավուրքային խմբագրություններ», էջմիածին, 2005, թիվ 4Ա, էջ 52-61):

⁸¹ Տեր-Իսրայելի մասին տվյալներ պահպանվել են նրա հայսմավուրքի ընդօրինակության հիշատակարանում (տե՛ս Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա (1401-1450), կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1955, էջ 369, 481): Ըստ այս հիշատակության՝ Տեր Իսրայելը ապրել է XIII դ. առաջին կեսին: Նա ժամանակակից է եղել Ներքին Խաչենի Հասան Զալալ իշխանին ու Վանական Վարդապետին և նրանց պատվերով էլ կազմել է այս հայսմավուրքը: Արդեն 1253-1269 թթ. միջակայքում նրա ժողովածուն «Յայսմավուրք» անունով հայտնի է եղել եկեղեցական շրջանակներում (տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց Ա. Մաթևոսյան, Երևան, 1984, էջ 259):

⁸² Եզնիկ վարդապետ Պետրոսյանը Տեր Իսրայելի կազմածն է համարել ՄՄ 6283 (1437 թ., էջ

Եղեսիան անվանել են **Ուռհա**, որը առավել տարածված տարբերակն էր այս ժամանակներում և ընդունելի էր նաև հայկական միջավայրում:

Տեր Իսրայելի և Գրիգոր Խլաթեցու խմբագրած հայսմավուրքներում առանձնահատուկ կերպափոխություն է ենթարկվել Սուրբ դաստառակի մասին ավանդությունը: Գաստառակին սկսել են վերագրել բուժիչ հատկություններ, որը Աբգարին օգնել է կիսով չափ առողջանալ: Ամբողջական բուժումը վերագրվել է Թադեոս առաքյալին. «առաքեաց ընդ թղթոյն և զանձեռագործ պատկերն իւր՝ ձևացեալ ի սուրբ դաստառակին, զոր արկ Տէր մեր զերեսաւք իւր ի տան Գամաղիէլի յաւուր զՈգոմին: Եւ բերին զայն Աբգարու փոխանակ Տեառն, զոր տեսեալ բարեպաշտ թագաւորն՝ յոյժ բերկրեցաւ և արկեալ զերեսաւքն համբուրէր և բըժըշկեցաւ կէս մարմնոյ իւրոյ ի ցաւոց անտի և համարէր զբանն մարմնով տեսեալ»⁸³:

Սուրբ դաստառակի մասին պատումի փոփոխությունը, ամենայն հավանականությամբ, կապված է եղել Տեր Իսրայելի գրական հայացքների և նրա ապրած ժամանակաշրջանի հետ: Նա եղել է հորանաշատի վարդապետարանի սաներից⁸⁴, որտեղ աշակերտել է ժամանակի գիտակրթական խոշոր գործիչ Վանական վարդապետին, որը նույնպես քաջածանոթ էր Աբգարի վարքին⁸⁵: Վանական վարդապետը հատուկ ցուցում է տվել իր աշակերտներին զբաղվելու Տոնապատճառների և Հայսմավուրքների կազմությունով⁸⁶, կարևորել է այդ ժողովածուների քարոզչական, դավանաբանական նշանակությունը: Նա անձամբ հետևել է այնտեղ ներառված նյութերի բովանդակությանը և կատարել համապատասխան խմբագրումներ:

435բ-436ա) և Վնտկ 631 (1427 թ., էջ 585ա-586ա) ձեռագրերը: Երկու ձեռագրերն էլ կազմվել են Տրապիզոնում՝ միաժամանակ և համընկնում են (տե՛ս Յուցակ Ձեռագրաց, հ. Բ, Երևան, 1970, էջ 287-288, **Եզնիկ Եպիսկոպոս Պետրոսյան**, *նշվ. աշխ.*, էջ 57): ՄՄ 2695, 4873 և 4758 ձեռագիր հայսմավուրհները Մ. Ավդալբեկյանը համարել է Տեր Իսրայելի կողմից խմբագրված: Սակայն Եզնիկ վարդապետ Պետրոսյանի կարծիքով ՄՄ 2695 և 4873 ձեռագրերի հեղինակներն անհայտ են, իսկ թիվ 4758 ձեռագիրհայսմավուրհի հեղինակը Գրիգոր Ծերենցն է (տե՛ս **Եզնիկ վարդապետ Պետրոսյան**, Նախածերենցյան հայսմավուրհային խմբագրություններ, էջ 56, **Մ. Ավդալբեկյան**, *նշվ. աշխ.*, էջ 54):

⁸³ Տեր Իսրայելի խմբագրություններ՝ ՄՄ 2695, էջ 756-757, ՄՄ 4873, էջ 714-716, ՄՄ 4758, էջ 143b-145a, Վնտկ 631, 585ա-586ա, Գրիգոր Խլաթեցու՝ ՄՄ 4517, էջ 241ա-242ա, ՄՄ 7362, էջ 238բ-240ա:

⁸⁴ **Ա. Շահնազարյան**, «Վանական վարդապետ Տավուշեցի», *էջմիածին*, 2001, թիվ ԺԲ, էջ 57:

⁸⁵ **Լ. Խաչիկյան**, «Յաղագս տարեմտին ի Վանական վարդապետէ ասացեալ», *Գիտական նյութերի ժողովածու*, 1941, թիվ 1, էջ 166:

⁸⁶ Նույն տեղում, էջ 52:

Վանական վարդապետը, լինելով Մխիթար Գոշի աշակերտը, երիտասարդ տարիքում մասնակցել է Լոռեի (1204 թ.) և Անիի (1205 թ.) եկեղեցական ժողովներին, որտեղ քննվել են հայ եկեղեցու դավանաբանությունն ու ծեսերին վերաբերող հարցեր⁸⁷: Այս ժողովներին նախորդել էր 1203 թ. Սսում գումարված եկեղեցական ժողովը, որը հրավիրվել է Զաքարե իշխանի խնդրանքով, պարզելու այնպիսի հարցեր, որոնք գժտություն առիթ էին հայերի ու վրացիների միջև: Այստեղ, ի թիվս այլ որոշումների, ընդունվել էր սրբապատկերների պաշտամունքը. «Ընդունել զնկարագրութիւն պատկերի փրկչին, և ամենայն սրբոց, և մի՛ խոտել զնոսա իբրև զպատկերս հեթանոսաց»⁸⁸: Զաքարե ամիրսպասալարը, ստանալով Սսի ժողովի որոշումները, դրանք հաստատելու համար ժողով է հրավիրել Լոռեում: Սակայն Արևելյան Հայաստանի հոգևոր ներկայացուցիչները չեն ընդունել այդ որոշումները, և Զաքարեն ստիպված է եղել մեկ այլ ժողով հրավիրել Անիում և հարկադրել ընդունել հայոց կաթողիկոսի ու Լեոն արքայի որոշումները⁸⁹: Այս ժողովից հետո Մխիթար Գոշը փորձել է համերաշխության եզրեր գտնել վրաց եկեղեցու հետ և կանխել կրոնական վեճերի հետագա խորացումը⁹⁰:

Անկասկած, Մխիթար Գոշի աշակերտ Վանական վարդապետը այս դեպքերին վերաբերող որոշ դավանաբանական դրույթներ ներառել է իր սաների աշխատանքներում: Գրանցից է եղել նաև Սուրբ դաստառակի մասին զրույցը՝ յուրահատուկ ձևափոխության ենթարկելով այն:

Վանական վարդապետի աշակերտ Կիրակոս Արևելցին իրականացրել է հայսմավուրքների երկու խմբագրություն 1253 և 1269 թթ.: Առաջին խմբագրությունը⁹¹ նա կատարել է Նոր Գետիկի վանքում, իսկ երկրորդը՝ Միս քաղաքում: Առաջինը առանձնացել է նրանով, որ ավելի շատ արևելյան սրբեր ու տոներ է ներառել, իսկ երկրորդը՝ գրված կիլիկյան պահանջներին համապատասխան, ընգրկել է նաև արևմտյան տոների սրբեր⁹²:

⁸⁷ Ա. Շահնազարյան, «Վանական վարդապետ Տավուշեցի», էջ 52:

⁸⁸ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 170:

⁸⁹ Վ. Քոռոսյան, «Սսի, Լոռիի և Անիի եկեղեցական ժողովները», Հայոց պատմության հարցեր, հ. 11, Երևան, 2010, էջ 36:

⁹⁰ Պ. Մուրադյան, ԺԱ-ԺԳ դարերի հալ-վրացական դավանական խնդիրները և Մխիթար Գոշի «Առ Վրացիսն» թուղթը, Ս. էջմիածին, 2011, էջ 170-177:

⁹¹ Համաբարբառ յայսմավուրք, հ. ԺԲ, Ս. էջմիածին, 2010, էջ 5, Մ. Ավդալբեկյան, նշվ. աշխ., էջ 69:

⁹² Մ. Ավդալբեկյան, նշվ. աշխ., էջ 72-74:

Կիրակոս Արևելցու կազմած հայսմավուրքներում, ի տարբերություն Տեր Իսրայելի խմբագրությունների, բացակայում է Սուրբ դաստառակի բուժիչ հատկության մասին պատումը⁹³: Սա կարող է կապված լինել դավանաբանական ու քաղաքական նոր իրավիճակի հետ: Այս ժամանակ մոնղոլները գրավել էին Հայաստանի մեծագույն մասը և հայ-վրացական հարաբերություններում նմանատիպ դավանաբանական խնդիրները երկրորդական էին դարձել: Բնականաբար, հայ եկեղեցական գործիչներն էլ կարիք չէին տեսնում այս սյուժեն պահել գործածություն մեջ: Առավել ևս, որ սրբապատկերների պաշտամունքը չէր ամրապնդվել հայ իրականության մեջ⁹⁴:

Կիրակոս Արևելցին գրառել է Աբգարի վարքի ավելի ընդարձակ տարբերակը: Այստեղ առկա են Աբգարի՝ Պարսից աշխարհ կատարած արշավանքները, հիվանդանալը, նամակագրությունը Հիսուսի հետ, բժշկումը Թագեոսի կողմից և Եղեսիայի մկրտությունը:

Տեր Իսրայելի և Կիրակոս Արևելցու կազմած հայսմավուրքներում առկա են նաև Աբգարի նամակները: Դրանցում ներսեհը հանդես է գալիս իբրև **Բաբելոնի արքա** («...նոյնպէս և առ ներսեհ մանուկ արքա Բաբելոնացոց»⁹⁵), մինչդեռ Մովսես խորենացին նրան համարել է Ասորեստանի արքա, որի նստավայրը Բաբելոնն է⁹⁶: Վերջինս գտնվել է Արաբական խալիֆայության մայրաքաղաք Բաղդադի մերձակայքում և համարվել է նրա նախորդը⁹⁷: Չնայած Արաբական խալիֆայությունը կորցրել էր երբեմնի հզորությունը, սակայն շարունակում էր մնալ մահմեդական աշխարհի կենտրոնն ու գլխավոր նստավայրը⁹⁸: Սա ցույց է տալիս, որ հայսմավուրքների խմբագիրները տեղանունները նշելիս առաջնորդվել են իրենց ժամանակաշրջանի իրողություններով՝ չհետևելով ստեղծագործության բովանդակությանը: Ասորեստան երկիրը այլևս գոյություն չունեի և դուրս էր մնացել հայսմավուրքային խմբագիրների ուշադրությունից: Հեղինակները հայսմավուրքները դիտարկել են իբրև ժամանակի քաղաքական ու գաղափարական հայացքները արտահայտելու հարմար տարբերակ:

⁹³ ՄՄ 1339, էջ 248-250, ՄՄ 7530, էջ 164-166 և այլն:

⁹⁴ Վ. Թորոսյան, նշվ. աշխ., էջ 29:

⁹⁵ ՄՄ 2695, էջ 756-757, ՄՄ 4758, էջ 143բ-145ա:

⁹⁶ Մովսես Խորենացի, էջ 1904:

⁹⁷ Հ. Մարգարյան, «Զամառյանների ծագման ավանդությունը միջնադարյան հայ պատմագրության մեջ», ՊԲՀ, 1992, թիվ 2-3, էջ 149-150:

⁹⁸ Կիրակոս Գանձակեցի, էջ 76:

Գրեթե բոլոր հայսմավուրքային խմբագրություններում Աբգարը ներկայացվել է հրաշագործ, բժշկող զորություն մթտված արքա. «Իսկ Աստուածասէր թագաւորն եղև քարոզ բանին կենաց և նշանս առնէր և բժշկութիւնս կատարէր», «Իսկ թագաւորն Աբգար եղև այր առաքեալական և ստացաւ շնորհս բժշկութեան, քարոզէր ամենեցուն զՔրիստոս, խորտակէր զկուռս, փակէր զգրունս մեհենից», «Եւ եղև աստուածասէր թագաւորն Աբգար պատմող բանին կենաց առաքելաբար և առնէր նշանս և արուեստս բժշկութեան»⁹⁹: Այստեղ թագավորական իշխանությունը վերագրվել են հրաշագործ լիազորություններ, ինչը լայն տարածում էր ստացել հատկապես արևմտավրոպական միջավայրում¹⁰⁰: Սա գաղափարաքաղաքական նշանակություն ուներ և միտված էր թագավորական իշխանության ամրապնդմանը, նրա կարևոր ու սրբազան լինելու գաղափարի տարածմանը:

Սակայն հայսմավուրքների կազմության ժամանակ հայ իրականության մեջ միասնական թագավորական իշխանությունը անկում էր ապրել, ուստի նման փառաբանումը ուղղված էր տեղական հայ ավատատերերի հեղինակության բարձրացմանը: Քանի որ Խաչենի եպիսկոպոս Տեր Իսրայելը հայսմավուրքը կազմել է Ներքին Խաչենի իշխան Հասան Զալալի պատվերով և հովանավորչությամբ¹⁰¹, ուստի նրա իշխանությունը փառաբանող գրվածքներ պետք է ընդգրկեր իր աշխատանքում: Կավագույն տարբերակը աշխարհիկ որևէ սրբի և Հասան Զալալի միջև զուգահեռներ տանելը, նրանց միջև հոգևոր կապ ստեղծելն էր: Իր կազմած հայսմավուրքում Աբգար թագավորին հրաշագործ զորություններ վերագրելը և նրա իշխանության փառաբանումը ցույց է տալիս, որ այս թագավորը կարող էր ընտրվել հարմար նախատիպ: Պետք է ասել, որ Հասան Զալալը որոշ արձանագրություններում ներկայացվել է «թագավոր», «մե-

⁹⁹ Տեր Իսրայելը (տե՛ս ՄՄ 2695, էջ 756-757, ՄՄ 4758, էջ 143բ-145ա, Վնակ 631, էջ 585ա-586ա և այլն), Կիրակոս Արևելցին (տե՛ս ՄՄ 7433, էջ 183բ-184ա, ՄՄ 1339, էջ 123ա-124ա), Գրիգոր Անավարզեցին (ՄՄ 4683, էջ 313ա-314ա), Գրիգոր Խլաքեցին (տե՛ս ՄՄ 4517, էջ 241ա-242ա, ՄՄ 7362, էջ 238բ-240ա և այլն):

¹⁰⁰ Այս նույն ժամանակ Ֆրանսիայում և Անգլիայում տարածված էին տեղի արհմաների հրաշագործ և բժշկող զորությունների մասին գրույցները: Արհմաներին բուժիչ զորություններ սկսեցին վերագրել սկսած XI դ. և մի քանի հարյուրամյակ մադրիկ հավատում էին, որ արհմաները ձեռնադրության միջոցով կարող են բուժել գեղձախտ հիվանդությունը: Այսպիսի հրաշքները ծառայում էին արհմաների իշխանության սրբացմանն ու անձեռնմխելիության ամրապնդմանը (М. Блок, *Короли-чудотворцы*, Москва, 1998, стр. 97-98):

¹⁰¹ Այս մասին տե՛ս ծանոթ. 81:

ծափառ իշխան»¹⁰², «արքա»¹⁰³ տիտղոսներով: Նշվել է նրա բարեպաշտությունը և ավելի բարձր դիրքը մյուս իշխաններից¹⁰⁴:

Հասան Զալալը և ուրիշ հայ իշխաններ ընդունել էին մոնղոլական տիրապետությունը և ստացել «սուլթան» կամ «մելիք» կոչումները: Սրանից ելնելով, որոշ հայ իշխաններ, այդ թվում Հասան Զալալը, վրաց թագավորից իրենց անկախությունը շեշտելու համար սկսել էին իրենց մեծարել «թագավոր» կամ «արքա» տիտղոսներով¹⁰⁵: Սակայն նրանց ազդեցությունը չէր անցնում իրենց ավատատիրական իշխանության սահմաններից¹⁰⁶: Հավանաբար այս նույն մոտեցումից ելնելով, Տեր Իսրայելը չափազանցրել է Աբգար թագավորի զորությունը՝ հույս ունենալով, որ դա կնպաստի Հասան Զալալ իշխանի հեղինակության ամրապնդմանը:

Կիրակոս Գանձակեցու Պատմության մեջ նույնպես Հասան Զալալի և Աբգար արքայի միջև զուգահեռներ տանելու միտում կա: Պատմիչը հաղորդում է, որ Հասան Զալալի մայրը, ինչպես Աբգարի կին Հեղինեն, մեկնել է Երուսաղեմ և ողջ ունեցվածքը վաճառել ու նվիրաբերել կարիքավորներին. «Այլ և բարեպաշտուհի մայր սորա, յետ մահուան առն իւրոյ Վախթանգայ, զոր Տանկիկն կոչէին, կարգաւորեաց զերեսին որդիսն իւր՝ զԶալալն և զԶաքարէ և զԻւանէ, շոգաւ նա ի սուրբ քաղաքն Երուսաղէմ և ամս բազումս անդ կացեալ մեծաւ ճգնութեամբ՝ զարմացուցանէր զամենայն տեսողսն և զլսողսն. Քանզի ծախեալ զամենայն գոյս իւր՝ զոր ունէր, յաղքատս և ի կարոտեալս՝ նման Հեղինէի, կնուն Աբգարու»¹⁰⁷: Կիրակոս Գանձակեցին հրաշագործ զորություն է վերա-

¹⁰² Գրվան հայ վիճագրություն, պրակ V. Արցախ, կազմեց՝ Ս. Բարխուդարյան, Երևան, 1982, էջ 15, 37, 126:

¹⁰³ «Մեկնալ խաչ» կոչվող վայրում գտնվող խաչաբերից մեկի վրա Հասան Զալալին անվանել են արքա. «Շե ոջ Փոթր ԳԱՅԹ ԻՄ ԿԵՐ ոջ ԶԻՄ ՏՈՒՆՆ. ԹՎԻՍ. ՈԿԵ: (1216). ԵՍ ՄՐՊԱՏ ՈՐԳԻ ՎԱԽՏԱՆԳԱՅ ՏՆ ԽԱԶԻՆՈՅ, ԵՂՔԷՐ ԱՐՔԷԻՆ ՀԱՍԱՆԱՅ, ՏԵՐ ՄԵՂՐԵՆԵՅՆ ՇԱՏ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ ՇԻՆԵՅԻ ԶԿԱՄՄԻՐՔԱՐՆ ՀՈԳՈՎ ԻՄՈՎ ԵՒ ՔՄԻ. ՍՈՒՐԲ ՆՇԱՆԱԻՆ ՈՐՈ ԱՆՈՒԱՄԲ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՈՐՔ ԸՆԹԵՌՆՈՅՔ ԶԻՍ ՅԱՂԱԽԹՍ ՀԻՇԵՅԷՔ» (տե՛ս Գրվան հայ վիճագրություն, պրակ V. Արցախ, էջ 84, Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Երևան, 1975, էջ 212-213):

¹⁰⁴ Կիրակոս Գանձակեցի, էջ 268:

¹⁰⁵ Ա. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, Գիտ առաջին, Երևան, 1957, էջ 165-166:

¹⁰⁶ Ա. Հովհաննիսյան, նշվ. աշխ., Շահնագարյան Ա., «Իշխան Հասան Զալալը Կիլիկյան Հայաստանի և մոնղոլների առաջին բանակցությունների միջնորդ», ՊԲՀ, 2016, թիվ 2, էջ 205-206:

¹⁰⁷ Կիրակոս Գանձակեցի, էջ 268:

գրել Հասան Ջալալի մասունքներին¹⁰⁸: Այսպիսով Կիրակոս Գանձակեցին, որը փաստորեն նաև հայսմավուրքների խմբագրողն է եղել, նույնպես դիտարկել է Հասան Ջալալի և Աբգար թագավորի միջև հոգևոր կապ ստեղծելու հնարավորությունը և անուղղակի զուգահեռներ տարել նրանց միջև:

Այսպիսով փորձենք ի մի բերել մեր քննության գլխավոր արդյունքները: Եղեսիայի Աբգար թագավորի վարքաբանական զրույցը հայ մատենագրության մեջ զարգացման տևական ժամանակաշրջան է անցել: Այն հարատևել է հայ մատենագրության տարաբնույթ երկերում և ելնելով դրանց պահանջներից՝ համապատասխան փոփոխություններ կրել:

Ոսկեդարի հայ պատմագիրներից միայն Մովսես Խորենացին է մեջբերել Աբգարի զրույցը և փաստորեն ստեղծել նրա հայկական տարբերակը, որն ունեցել է մի շարք տարբերություններ բուն ասորական զրույցից: Նա առաջ է քաշել է այն գաղափարը, ըստ որի Աբգարը և նրա նախարարները հայազգի էին, իսկ Օսրոենե-Եղեսիան հայկական թագավորություն էր: Դրանով Խորենացին նպատակ է ունեցել հայացնել առաջին քրիստոնյա արքային և մեծ հեղինակություն վերագրել հայոց եկեղեցուն:

Խորենացիական տարբերակը ուղենշային է եղել հետագա դարերում ապրած հայ պատմիչների համար: Առանձին փոփոխություններ են կատարել նաև Հովհաննես Իրասխանակերտցին և Թովմա Արծրունին: Այս պատմիչների կատարած խմբագրությունները էական ազդեցություն են ունեցել զրույցից վարք փոխվելու ճանապարհին:

Ակսած VI դ. հայ իրականության մեջ նույնպես լայն տարածում է գտել Սուրբ դաստառակի մասին ավանդազրույցը: Հայոց եկեղեցու նշանավոր այրերը փրկչական մասունքը հաճախ օգտագործում էին պատկերամարտների դեմ վեճերում:

Աբգարի զրույցը վերջնական վարքագրական տեսք ստացել է հայսմավուրքային ժողովածուներում: Այս ժողովածուների հեղինակները կատարել են յուրատեսակ խմբագրումներ՝ գաղափարական, քաղաքական ու կրոնական նոր լիցք հաղորդելով: Մեծապես ներառվել են տվյալ ժամանակի իրողությունները: Հաճախ կերպափոխվել են Աբգարին վերագրվող հատկությունները: Այս ամենի արդյունքում ի հայտ են եկել տարածաժամանակային նոր իրողություններ, որոնք ակամա դարձել են պատմական տեղեկույթ տվյալ ժամանակի հասարակական ընկալումների ու իրադարձությունների վերաբերյալ:

¹⁰⁸ Նույն տեղում, էջ 268, 392:

SHAVARSH AZATYAN

**THE HAGIOGRAPHIC LEGEND OF KING ABGAR OF EDESSA AND ITS
TRANSFORMATIONS IN ARMENIAN LITERATURE**

Keywords: Apostle Thaddaeus, Movses Khorenatsi, life of a saint, Holy Mandyllion, historiography, Synaxarion.

The hagiographic legend of King Abgar of Edessa had a long period of development in Old Armenian literature. It is attested in works of various genres and has undergone changes according to their requirements.

Movses Khorenats'i was the only historiographer of the Golden Age who re-narrated the legend of Abgar and in fact created its Armenian version, which has certain differences from the original Syrian legend. Khorenats'i's Abgar and his princes are Armenians, and Edessa-Osroene is an Armenian kingdom. The historiographer's goal was to Armenize the first Christian king and to enhance the prestige of the Armenian Church.

Later Armenian historiographers followed Khorenats'i's interpretation of the legend. Some changes were made by Hovhannes Draskhanakertts'i and Tovma Arts'unii, whose revised versions played an essential role in the transformation of the legend into a life of a saint.

Starting from the 6th century, the legend of the Holy Mandyllion was also spread in Armenia. The fathers of the Armenian Church often used this relic in their controversies with the iconoclasts.

The legend of Abgar gained its final hagiographic shape in Armenian Synaxaria. The compilers of these miscellanies made specific changes, adding new ideological, political, and religious features, among which, many realities of their time. In these stories, the traits ascribed to Abgar were often transformed. As a result of this, new information related to the specific time and geography made its way into those texts, adding historical data connected to contemporary events and social conceptions.

ШАВАРШ АЗАТЯН

**АГИОГРАФИЧЕСКАЯ ЛЕГЕНДА ОБ ЭДЕССКОМ ЦАРЕ АБГАРЕ И ЕЕ
МЕТАМОРФОЗЫ В АРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЕ**

Ключевые слова: Эдесса, апостол Фаддей, царь Абгар, легенда, житие, Мовсес Хоренаци, Святой Мандилион, историография, синаксарь.

Агиографическая легенда об эдесском царе Абгаре прошла долгий путь развития в древнеармянской литературе. Она засвидетельствована в произведениях различных жанров, при этом претерпела соответствующие изменения.

Из историков Золотого века, Мовсес Хоренаци пересказал легенду об Абгаре и фактически создал ее армянскую версию, в некоторых деталях отличную от сирийской легенды. У Хоренаци Абгар и его нахарары (князья) армяне, а Эдесса-Осроена – армянское царство. Целью Хоренаци была арменизация первого христианского царя и придание большего авторитета армянской церкви.

Армянские историки последующих веков ориентировались на эту версию. Ован Драсханакертци и Товма Арцруни внесли в нее некоторые изменения, и редакции этих историков сыграли существенную роль на пути превращения легенды в житие.

Начиная с VI века в армянской среде стала также распространяться легенда о Святом Мандилионе. Отцы армянской церкви часто ссылались на эту реликвию в спорах с иконоборцами.

Легенда об Абгаре окончательно оформилась в житие в армянских синаксариях. Редакторы этих сборников также внесли определенные изменения, добавив в легенду новые штрихи идеологического, политического и религиозного характера, а также множество современных им реалий данного времени. В этих рассказах характеристика Абгара часто менялась. В результате в них проникала новая информация, соотносящаяся с новым временем и географией, неизбежно наполняя легенду историческими данными об общественных представлениях и событиях своего времени.

**ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԽՃԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹԸ
(ԵՐՈՒՍԱԳԼԵՄԻ ԽՃԱՆԿԱՐՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)**

Քանալի բառեր՝ միջնադարյան արվեստ, դեկորատիվություն, հայկական, պեղումներ, խորհրդանիշներ, հայատառ արձանագրություն:

Հայկական քրիստոնեական շրջանի խճանկարչության մասին կարող ենք որոշակի պատկերացում կազմել երուսաղեմում պահպանված ամբողջական նմուշների շնորհիվ: Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն ընդունվելուց հետո բազմաթիվ ուխտավորներ են այցելել Երուսաղեմ, կառուցվել են հայկական վանքեր: Հայ գաղթօջախի պատմության վաղ միջնադարյան շրջանի ուսումնասիրության համար կարևոր տեղեկություններ են պահպանվել Անաստաս վարդապետի անունով մեզ հասած թղթերում: Դրանցում տրված են Երուսաղեմի հայկական վանքերի ցուցակը և այն հանգամանքներն, որոնք դրդել են վերջինիս ձեռնամուխ լինել այդ գործին: Անաստասի անունը՝ որպես ցուցակի հեղինակի, արձանագրված է վերջում՝ Երուսաղեմ այցելած հայ ուխտավոր-վարդապետ, որը Համազասպ Կամսարականի խնդրանքով կազմել է տեղի հայոց վանքերի ցանկը¹: Երկի մասին առաջին անգամ խոսում է Մովսես Կաղանկատվացին² «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկում³:

¹ Աշխատանքը մեզ է հասել ուշ շրջանի ձեռագրերով: Վաղագույն ժողովածուն, որտեղ առկա է այդ բնագիրը, ՄՄ 1770 գրչագիրն է, ընդօրինակված 1589 թ. մի ձեռագրից, որն էլ իր հերթին կազմվել կամ արտագրվել է 1425 թ.:

² **Մովսես Կաղանկատուացի**, *Պատմութիւն Աղուանից աշխարհի*. (Բնական բնագիրը և ներածությունը *Վարդգ Առաքելյանի*), Երևան, 1983, էջ 285-286:

³ Աշխատության երկրորդ գրքի ՄԲ գլուխը վերնագրված է «Անունք վանորայցն, որք յերուսաղեմ են շինեալ յԱղուանից անուն, զոր ի թղթոյ երանելոյն Անաստասայ առ Վահան Մամիկոնեան առեալ ուսաք, այս են»: Դ. Ինճիեյանը գիտական շրջանառության մեջ է դրել

Մինչև օրս, երուսաղեմում պեղումները երևան են հանել V-VII դարերով թվագրվող հայկական յոթ արժեքավոր խճանկար: Դրանց հայկական ծագումը առաջին հերթին որոշվել է մեսրոպատառ արձանագրությունների առկայությամբ: Առաջին չորսը գտնվել են 1868-1893 թվականներին՝ Ջիթենյաց կամ Համբարձման լեռան վրա, հինգերորդը՝ Դամասկոսի դռան մոտ՝ 1894-ին, վեցերորդը և յոթերորդը՝ Սկոպուս լեռան վրա 1991թ., ինչպես նաև մի խճանկար-գրություն՝ 1999-2000 թթ. իրականացված պեղումների ժամանակ⁴:

Առաջին չորս խճանկարները գտնվում են Ջիթենյաց լեռան վրա՝ Սբ. Հովհաննես Կարապետ վանքի կալվածքում, որին հայերը տիրել են V-VI դդ.: Այդ վանքը գործել է մինչ XII դար⁵, որից հետո ավերվել է: Ժամանակին, եկեղեցու գավթի սալարկը զարդարող նշված խճանկարներն ունեն հայերեն երկաթագիր արձանագրություններ:

Առաջին խճանկարը հայտնաբերվել է Ռուսական Սբ. Հարություն տաճարում 1870-1887 թթ. իրականացված շինարարական աշխատանքների ժամանակ: 1×0,72 մետր մակերեսով երկրաչափական լուծումներով հյուսվածքավարդի ներսում գրված է.

ԲԱՐԵՆԱԽՍ ՈՒՆԵԼՈՎ
ԱՌ Ա(ՍՏՈՒԱ)Ծ ԶՍՈՒՐԲ Ե
ՍԱՅԻ ԵՒ ԶԵՐԱՆԵԼԻ
ՀԱՐՍՍ ԵՍ ՎԱՂԱՆ Ա
ՐԱՐԻ ՎԱՍՆ ԹՈՂՈՒ
ԹԵԱՆ ՄԵՂԱՑ ԶՅԻ
ՇԱՏԱԿԱՐԱՆՍ ԶԱՅՍ

Արձանագրությունը հյուսված կարմրավուն շրջանակի մեջ է վերցված, որից ներքև երկրաչափական պատկերներ՝ քառակուսիներ և շրջանակներ են՝

այն՝ հրապարակելով իր «Հնախօսուրին աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի» երկի մեջ, տե՛ս նաև Ղ. Իճճիճեան, *Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի*, Վենետիկ, 1895, և. 3, էջ 199, ծան. 1, Մ. Աղաւնունի, *Հայկական հին վանքեր և եկեղեցիներ սուրբ Երկրին մեջ*, Երուսաղեմ, 1931, էջ 19:

⁴ Պեղումների ժամանակ հայտնաբերված աշխատանքների մասին տե՛ս H. Cotton, *Corpus Inscriptionum Iudaeae/Palaestinae*, Vol 1. Jerusalem, Berlin – Boston, 2012, part 2, pp. 129-130, 132-133, 156-157, 157-158, 304:

⁵ Մ. Աղաւնունի, *Հայկական հին վանքեր և եկեղեցիներ սուրբ Երկրին մեջ*, Երուսաղեմ, 1931, էջ 161:

մեկական աստղ մեջտեղում: Ենթադրվում է, որ զարդարանքները կիրառվել են զուտ արձանագրությունները եզրազարդելու և դատարկ տարածությունը լցնելու համար:

Զիթենյաց լեռան խճանկարից առավել նշանավորը Արտավանի մայր Շուշանիկի ստորգետնյա ընդարձակ դամբարանի վրա կառուցված շենքի հատակինն է (նկ. 1): Այն բաղկացած է կլոր և ձվաձև մեղալիոններից, որոնցում պատկերված են կենդանիներ, թռչուններ և ձկներ: Այսպես կոչված «Արտավանի խճանկարը» առանձնանում է ոճավորումով և զարդերի բազմազանությամբ:

Հայաստան գրությունը հետևյալն է.

ԱՅՍ ԴԻՐ ԵՐԱՆԵԼԻՈՅ ՇՈՒՇԱՆԿԱՆ ՄԱԽՐ ԱՐՏԱՒԱՆԱ ՀՈՌԻ ԺԸ (18)⁶

Ավելի ուշ, հատակի տակ հայտնաբերված ծավալուն դամբարանը՝ ութ քարե սարկոֆագներով, թույլ է տալիս ենթադրել, որ, ըստ երևույթին, աշխատանքը Արտավանի մայր Շուշանիկի դամբարանի մի մասն է կազմել, որից մոտ 1/4 է պահպանվել՝ 6,7x4 մ մակերեսով:

Չնայած ներկայանալի սահմանափակությունը՝ հատականկարն առանձնանում է նուրբ համադրություններով, տոնային մեղմ անցումներով և լուսաստվերային լուծումներով: Հատակը ծածկող, բուսական զարդանկարներով զալարուն ժապավենաձև բաժանումները հանդիպում են նաև հայկական մանրանկարների խորանների պատկերումներում: Հյուսվածքազարդի հատման նմանատիպ լուծումներ են պատկերված Աղթամար կղզում 915-922 թվականներին Մանուել ճարտարապետի կառուցած Սուրբ Խաչ եկեղեցու արևմտյան ճակատին՝ կենտրոնական պատուհանի աջ կողմում պատկերված Գագիկ Արծրունի թագավորի բարձրաքանդակի արքայի հանդերձանքում:

Ոճական քննությունը Արտավանի խճանկարի ժամանակը հասցնում է V դարի կեսերը՝ աստիճանական լույս ու ստվեր, կոթողաչյունություն, թռչունների, ձկների և առարկաների լուսավորում միջին մասում, ուրվագծից խուսափում: Աշխատանքում պատկերված խորհրդանիշները (գառը՝ իբրև Աստծո գառան խորհուրդ, բաղը՝ որպես ձուկ, այսինքն՝ մարդու հոգու բռնող և այլն) քրիստոնեական են⁷:

⁶ Հոռին հայկական շարժական տոմարի երկրորդ ամիսն է:

⁷ Ա. Աղասյան, Հ. Հակոբյան, Մ. Հասրաթյան, Վ. Ղազարյան, Հայ արվեստի պատմություն, Երևան, 2009, էջ 84:

Հաջորդ աշխատանքը լեռան վրա գտնվող ռուսական մենաստանում է⁸։ Այն զարդանախաչային լուծումներ չունի, այլ միայն հայատառ արձանագրություն է, որի տողերը իրարից բաժանված են կարմիր գծով։

ՎԱՍՆ ԱՂԱԽԹԻՅ ԵՒ ՓՐ

ԿՈՒԹԵԱՆ ԹԵԻԱՅ Ա

ԲԱՍՈՒ ԵՒ ՄՈՒԲԱՆ

Ռուսական վանքի Սբ. Հովհաննես Կարապետի մատուռում է գտնվում երեք դաշտի բաժանված մեկ այլ խճանկար (նկ. 2)։ Այն ավելի սիմետրիկ, հարթապատկերային տեսք ունի՝ բուսական, կենդանական զարդապատկերներով։ Առաջին արձանագրությունը հետևյալն է.

ԱՅՍ ՅԻՇԱՍԱԿԱՐԱՆ Տ[ԵԱՌ] Ե ՅԱԿՈՎԲԱՅ ՈՐ ԵՂԵԻ Ի ՁԵՌՆ ԽՆԴՐԵԼՈՅ

1892 թ. վերջին կամ 1893 թ. սկզբին երևան հանվեց ավելի ծավալուն՝ շուրջ 3,5x3,2 մետր մակերես զբաղեցնող խճանկարը։ Այն բաժանված է իրար հաջորդող 5 հորիզոնական և 7 ուղղահայաց շարք կազմող քառակուսիների և կլոր մեդալիոնների։ 24 շրջանակներում մեկական թռչուն է պատկերված, իսկ մյուսներում՝ ծառ և պտուղներ։ Թեպետ խճանկարը բազմերանգ է, բայց թույլ գունազարդված պատկերների մեջ գերակշռող է գրաֆիկական կատարելանդանակը։ Կենդանիների և թռչունների ձևերը աչքի չեն ընկնում դինամիկությամբ։ Ոճով այն մոտ է VI դարի Ասորիքի խճանկարներին։

Զիթենյաց լեռան վրա գտնված այս խճանկարներից և ոչ մեկում չի նշվում ստեղծման տարեթիվը։ Երուսաղեմի վանքերի պատմությունը շարադրած Մկրտիչ Եպիսկոպոս Աղավնունին վկայաբերում է Պաղեստինում աշխատած հայտնի հնագետ Կլերմենտ-Գաննուլյի աշխատությունը⁹, ըստ որի՝ արձանագրությունները չեն համապատասխանում աշխատանքների ամբողջական կառուցվածքին ու գույներին, և ավելի ուշ շրջանի ստեղծագործություններ են։ Իսկ ինչ վերաբերում է հատուկ անուններին, նշվում է, որ Արտավանը պարսկահայ կուսակալ և զորապետ է եղել Հուստինիանոսի օրոք¹⁰։ Ըստ Պաղեստինի

⁸ Տե՛ս Խմբագրական, «Հայերէն նոր արձանագիր ի լեռոն Զիթենեաց», Արարատ, Վաղարշապատ, 1876, N 9, էջ 195:

⁹ C. Clermont-Ganneau, *Archaeological Researches in Palestine During the Years 1873-1874*, London, 1896, Vol 2, p. 329-337.

¹⁰ Այս տեսակետին է հարում նաև Հ. Քյուրդյանը։ Տե՛ս **Յ. Քյուրդեան**, «Խճանկարը հայոց մօտ. Երուսաղեմի խճանկարները – անոնց գիտը», *Բազմավեպ*, Վենետիկ, 1934, N 5-6, էջ 198:

պատմագիր Պրոկոպիոսի հաղորդած տեղեկությունների՝ Արտավան և Վահան Արշակունի եղբայրները Պարսկաստանից փախել են Բյուզանդիա և ծառայել այնտեղ: Ենթադրվում է, որ այդ հայ զորապետների մայրը՝ Շուշանիկը, թաղվել է Սբ. Կարապետ եկեղեցու գավթում, և Արտավանի նախաձեռնությամբ գերեզմանի վրա խճանկար է պատրաստվել:

Գիտարկելով աշխատանքներում եղած արձանագրությունների տառաձևերը՝ Հակոբոս Տաշյանը դրանց ստեղծման հավանական ժամանակաշրջան նշում է VI դարը¹¹, իսկ Գարեգին Հովսեփյանը՝ VI-VII դդ.: Այդուամենայնիվ, վերջին տասնամյակներում երուսաղեմում ընթացող պեղումները ցույց են տվել, որ խճագարդ հատակ ունեցող տեղանքները նախկինում հեթանոսական տաճարներ կամ մեհյաններ են եղել¹²: Եվ հնարավոր է, որ այս հուշարձաններում հայերեն արձանագրությունները հետագայում են կցվել արդեն պատրաստի աշխատանքներին:

Երուսաղեմի հայկական խճանկարներից ամենանշանավորը 1894 թ. Դամասկոսի դուան մոտ պեղված, այսպես կոչված «Թուշունների խճանկարն»¹³ է (նկ. 3), որը Հայոց Պատրիարքարանը մեծ ջանքերի գնով է ձեռք բերել: Այն տեղակայված է 7,15x4,40 մետր մակերես ունեցող հատակի վրա: Եզրագարդված մանվածո մի հյուսքով, այն չորս կողմից կրկնակի շրջանակի մեջ է առնված. արտաքինը 25-30 սմ լայնությամբ, անզարդ, իսկ ներսինը՝ պարանահյուս շրջանակ է՝ 26 սմ լայնությամբ: Խաղողի որթը, դեպի վեր ճյուղավորվելով, կազմում է քառասուներեք շրջանակ-վարդյակներ, որոնք երկարությամբ կազմում են հինգ շարք: Վարդյակների մեջ պատկերված են նաև խաղողի ողկույզներ, տերևներ, թռչունի և այլ պատկերներ: Բավականաչափ հարուստ այս հորինվածքի մեջ շեշտադրված է կենտրոնական շարքը: Դրա հիմքում ընկած է խաղողի որթը կրող անոթը, որի երկու կողմից պատկերված են մեկական սիրամարգ: Դրանից վերևի օղակի մեջ մրգերով լի զամբյուղ է, ավելի վերև՝ հա-

¹¹ **Յակովբոս Տաշեան**, Ակնարկ մը հայ հնագրութեան վրայ, Ուսումնասիրութիւն հայոց գրչութեան արուեստին, Վիեննա, 1898, էջ 136:

¹² Այդ տեսակետը ավելի ամրացավ Բերդեհեմի Սբ. Ծննդյան տաճարի հատակի խճանկարի պեղումներից հետո, երբ ընդգծվեցին թե ավելի վաղ, և թե քրիստոնեական շրջանի աշխատանքները: Այդ մասին տես Խմբագրական, «Կարեւոր պեղումներ Բոթրեմի տաճարին մեջ» Սիոն, Երուսաղեմ, 1934, N 11, էջ 330-342: Այս աշխատանքի մասին տես **Գ. Հովսեփյան**, Հայերեն արձանագրությամբ խճանկար երուսաղեմի հյուսիսում, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության», Երևան, 1987, հ. 2, էջ 340-342:

¹³ **N. Bazalel, Michael E. Stone**, *Armenian Art Treasures of Jerusalem*, Great Britain, 1979, p. 22. Եվ այս հայերեն հոդվածը՝ [http://hpj.asj-oa.am/5448/1/1993-1-2\(15\).pdf](http://hpj.asj-oa.am/5448/1/1993-1-2(15).pdf)

ջորդաբար՝ մի սագ, շքեղ զարդարուն անոթ՝ անտիկ մշակումով, արծիվ, մի փոքրիկ վանդակ, դարձյալ մեկ զամբյուղ՝ խաղողով ու մրգերով լի, և ամենավերին վարդյակում՝ խաղողի երկու ողկույզ կրող շիվերի վրա դեմ դիմաց կանգնած երկու աղավնի: Վերին եզրին կցված է մի կիսաշրջան ելուստ, որի մեջ պատկերված է մրգերով լի սկահակ, աջ և ձախ կողմերում՝ մեկական թռչուն: Սա մի ամբողջ թռչնանոց է՝ բաղկացած 43 թռչուններից՝ աղավնի, կաշաղակ, թուխակ, կաքավ, սագ, բադ, հավ, աքաղաղ, հնդկահավ, խաչտահավ, արծիվ, փասիան, կոռնկ, կարապ, Ֆլամինգո, ջալամ, ձկնկուլ, արագիլ և այլն: Հատակի վերևի՝ ճակատային մասում, զետեղված է հայերեն հետևյալ երկտող արձանագրությունը.

**ՎԱՍՆ ՅԻՇԱՏԱԿԻ ԵՒ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՅՆ
ՀԱՅՈՅ ԶՈՐՈՅ ԶԱՆՈՒԱՆՍ Տ[Է]Ր ԳԻՏԷ**

Արձանագրության, հետևաբար նաև խճանկարի հորինման ժամանակը ճշտելու համար նկատի է առնվել մեսրոպյան տառատեսակը: Ըստ Գարեգին կաթողիկոս Հովսեփյանի՝ այն պատկանում է արևելյան գծանկարչական ուղղությունը՝ VI-VII դարերին, իսկ ըստ Հ. Տաշյանի՝ V կամ VI դարերին¹⁴:

Հատակի վերևի՝ արևելյան կողմում կոնաձև պատկերներով զարդարված ևս մի հատված է պահպանել:

Թե որքան մանրակրկիտ և համբերատար աշխատանքի արդյունք է եղել այդ հատակը, կարելի է գաղափար կազմել խճերի թվից և գույներից: Խճանկարի գունավորումը կատարվել է բաց դեղնագույն հատիկներով, կիրառվել են նաև սև, կարմիր, կապույտ, նարնջագույն և մոխրագույն խիճեր: Կիրառված մասնիկների փոքր չափերը, սմալտայի բացակայությունը վկայում են, որ հատակը պատրաստված է *Opus vermiculatum* տեխնիկայով: Թռչնանկարչության և ծաղկանկարչության նմանատիպ համադրումներ հանդիպում են նաև հայկական քանդակագործության մեջ: Թ. Թորամանյանը, խոսելով Բագրատունյաց շրջանի վերածնության մասին, նշում է. «...Թռչուններ և կենդանիներ քանդակելու մեջ հայերը ուշագրավ հառաջադիմություն ըրեր էին 5-րդ և 7-րդ դարերու մեջ, սակայն Բագրատունի շրջանի վերածնությունը միանգամայն մոռացության տված էր նախնյաց մշակած այս ճյուղը»¹⁵:

¹⁴ Խմբագրական, «Երուսաղեմի հայկական խճանկարներ», **Թեոդիկ**, Ամենուն տառեցույցը, Փարիզ, 1927, էջ 399-406:

¹⁵ Թ. Թորամանյան, «Անի փաղափ թէ՛ ամրոց», *Ազգագրական հանդես*, Թիֆլիս, 1912, N 2, էջ 124:

Ս. Մնացականյանը զուգահեռներ անցկացնելով Պտղնավանքի քանդակների թուշունների պատկերների և Երուսաղեմի Դամասկոսյան դարպասների մոտ գտնվող հայկական խճանկարի միջև, նշում է երկու հուշարձաններում եղած թուշունների բազմազանությունը: Չնայած այն հանգամանքին, որ վերը բերված հուշարձանների թուշունների պատկերները նա չի կապում քրիստոնեական խորհրդանշանների հետ, բայց և այնպես այդ զուգահեռները ճիշտ են և տեղին. խճանկարների հորինվածքում պատկերված է Դրախտային աշխարհը (այգին), որն էլ, իր հերթին, ենթադրում է բազմապիսի թուշունների ու կենդանիների, թփերի ու ծառերի առկայությունը¹⁶:

Դամասկոսի դռան խճանկարում պատկերված «կենաց ծառի» գաղափարը եղել է նաև մինչ քրիստոնեական արվեստը: Կարմիր բլուրի պեղումների ընթացքում հայտնաբերված ուրարտական սաղավարտների վրա կան նույնատեսակ զարդանկարներ: Գեղազարդման այդ համակարգն ու հորինվածքային մանրամասները միանգամայն համահունչ են հայոց միջնադարյան գորգագործական ավանդույթներին: Դրանց մասին պատկերացում են տալիս Կարսի ավետարանի մանրանկարներից մեկում պատկերված Գագիկ Բագրատունու պալատի պատերն ու հատակը ծածկած գորգերը¹⁷:

Խճանկարում հիմնական օղակների եզրակապերն ավելի հաստ են և որոշակիորեն տարբերվում են երկրորդական օղակներից: Երկրորդական ճյուղ-օղակները փակված չեն, այլ կիսափակ են, և վերջավորություններից գրեթե ամենուր կախված են ողկույզներ: Ժան Պիեռ Մահեն հայկական ավետարանների խորաններում սիրամարգի և սկահակի պատկերմանը նվիրված իր հոդվածում անդրադարձ է անում նաև Երուսաղեմի այս խճանկարին, մասնավորապես նշելով, որ պահպանված բոլոր հայկական ավետարանների նկարներից ավելի հին է Մուսրարայի խճանկարը, որի կենտրոնում սափորը շրջապատում են երկու սիրամարգեր, և վերջինիցս դուրս են գալիս խաղողի որթերը¹⁸: Աշխատանքի զարդանկարները, մասնավորապես խաղողի վազի ոճավորումով, նման են Ռավեննայի խճանկարներին: Այնտեղ էլ սափորի միջից աճում է խաղողի երկու վազ, որոնք Երուսաղեմի խճանկարի նման ոճավորված մեղալիոններ են կազմում՝ ողկույզով, տերևներով, ծիլերով: Այս աշխատանքերի

¹⁶ Ս. Մնացականյան, «Պտղնի տաճարը», ՊԲՀ, 1961, N 3-4, էջ 229-230:

¹⁷ Ձեռ. եղմ. 2556 (ԺԱ դար):

¹⁸ Տե՛ս Ժան Պիեռ Մահե, «Արամարգն ու սկահակը հայկական ավետարանների խորաններում», ՊԲՀ, 1986, N 1, էջ 109:

զարդանկարային ոճի նմանություններն ակնհայտ են: Սերիկ Դավթյանը զարդանկարների զուգահեռներ է տանում IV դարի ղպտական գործվածքների հետ¹⁹:

Վերջինիս պատկանելիությունը սկզբում վեճի առարկա է դարձել հույների ու լատինների միջև, սակայն նկարի գլխամասում եղած մեսրոպյան տառերով արձանագրությունը լուծել է վեճը:

Դամասկոսի դռան խճազարդ հատակից ներքև հայտնաբերվել է երեք դամբարան²⁰: 1991-2000-ական թվականներին կատարված պեղումների ընթացում բացվել են ևս երկու հայատառ արձանագրությամբ խճանկարի բեկորներ, որոնք զարդարանքներ չունեն²¹:

1991 թ. վերջին Մուսրարայի թաղամասում Իսրայելի հնությունների վարչության աշխատակից Դավիդ Ամիթնի ղեկավարությամբ կատարված պեղումների ժամանակ գտնված խճանկարը վանական համալիրի բնակելի մասի ընդունարանի հատակին է (նկ. 4):

1,19 մետր տրամագիծ ունեցող շրջանակի ներսում դասական գրաբարով հայատառ արձանագրություն է.

ԵՍ

ԵԻՍՏԱԹ ԵՐԷՅ Ա

ՐԿԻ ՉՅԱԽԾԱՊԱԿՍ

ՈՐ ՄՏԱՆԷՔ Ի ՏՈՒՆՍ ՉԻՍ

ԵԻ ՉԵՂԲԱՅՐ ԻՄ ՉՂՈԻ

ԿԱՍ ՅԻՇԵՅԷ[Ք]Ի

Ք[ՐԻՍՏՈ]Ս

Զվածիր շրջանակը իրեն շրջապատող հատակից և արձանագրությունից տարբերվում է միայն քարերի դասավորությամբ: Ոճական նմանատիպ լուծումներով այն մոտ է նաև Սկոպուս լեռան վրա եկեղեցական համալիրի հատակի խճանկարին, որն, ի տարբերություն հայկականի՝ երիզված է բուսական տարրերով:

Արձանագրության մեջ հետաքրքրական է նաև խճանկարին տրված անվանում՝ «ՅԱԽԾԱՊԱԿ»: Հայկազյան բառարանն այս բառի համար հետևյալ

¹⁹ Ս. Դավթյան, Դրվագներ հայկական միջնադարյան կիրառական արվեստի պատմության, Երևան, 1981, էջ 168-169:

²⁰ Ա. Գրիգորյան, «Մոզաիկ նկարչության արվեստը Հայաստանում», էջմիածին, 1957, N 5, էջ 49:

²¹ Ստորև ներկայացվող աշխատանքների լուսանկարները և համապատասխան տեղեկությունները տե՛ս u H. Cotton, op. cit., p.129-130, 132-133, 156-157, 157-158:

բացատրությունն է տալիս. «Խիճ ապակույց և ընտիր ընտիր քարանց ի յատակս կամ յորմս յեռեալ ի զարդ, որ և ՄԱՆՐԱՆԻՃ»²²: Փաստորեն, Երուսաղեմի այս հուշարձանը պահպանել է միջնադարում խճանկարի համար օգտագործվող հայերեն անվանումը, գրված հենց խճագիր արձանագրություններով:

Ժամանակաշրջանը որոշելու համար հիմք են ընդունվել կրաշաղախի մեջ գտնված հինգ դրամները, որոնցից ամենավաղը IV դարի է, ամենաուշը՝ VII դարի կեսերի արաբաբյուզանդական դրամ: Բացառում ենք IV դարը: Խճանկարում օգտագործված տառերի ձևերի քննությունը VII դարը ավելի հավանական է դարձնում: Ըստ գրի տեսակի՝ այն մոտ է 1894 թվականին պեղված Մուսարայի «Թռչունների խճանկար»-ին:

Այդ նույն լեռան վրա 1990-2000 թվականներին հայտնաբերվել են բյուզանդական շրջանին պատկանող խճանկարների բեկորներ (V-VI դդ.): Դրանցից մեկը հունարեն, իսկ հաջորդը հայատառ է: Երկաթագիր հայերենով, սպիտակ ֆոնի վրա սև և կարմիր խորանարդիկներով գրված է.

+ԳՐԻԳՈՐԵ Ե-Ն(?) Ք[ՐԻՍՏՈ]Ս

Առջևի խաչը և վերջում փակագրով գրված Ք[ՐԻՍՏՈ]Ս-ը կարմիր են:

Հիանալի նրբությունը և գունագեղությունը հորինված այս խճանկարների գոյություն փաստից կարելի է հետևություն անել, որ հայերը Երուսաղեմում կարողացել են ստեղծել արվեստի բացառիկ նմուշներ: Դրանք նաև թույլ են տալիս պատկերացում կազմել հայ խճանկարչության քրիստոնեական ավանդույթի մասին, քանի որ բուն Հայաստանում պահպանված նման ամբողջականություններ չենք հանդիպում: Այս առումով հատկանշական է հատկապես Զվարթնոցի օրինակը: Բանն այն է, որ Զվարթնոցի տաճարը, ըստ մասնագետների, կառուցվել է Երուսաղեմի հնագույն Սբ. Հարություն տաճարի նմանություններով՝ արտաքին և թե՛ ներքին հարդարանքի առումով²³: Այդ տաճարը չի պահպանվել, սակայն առկա է նրա նկարագրությունը:

Զվարթնոցը եղել է տաճար-վկայարան, որտեղ ամփոփված էին Գրիգոր Լուսավորչի մասունքները: Ինչպես վերը տեսանք, Երուսաղեմի հայկական խճանկարների մի հիմնական մասը և նրանց արձանագրությունները հենց հիշատակային և հոգու փրկության գաղափարն արծարծող բնույթ ունեն:

²² Մ. Ալեքեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1836, հ. 2, էջ 313:

²³ Զ. Հակոբյան, Հայկական վաղ միջնադարյան քանդակը (4-7-րդ դարեր), Երևան, 2016, էջ 135-136:

Շատ հավանական է, որ Երուսաղեմի հայկական եկեղեցիներում կամ մարտիրոսարաններում եղած խճանկարները դառնային ընդօրինակման առարկա նաև բուն Հայաստանում:

Նշելի է նաև այն հանգամանքը, որ Երուսաղեմի հայկական խճանկարներն ուղեկցվում են հայերեն արձանագրություններով: Նման երևույթ, բայց որմնանկարների պարագայում, տեսնում ենք Հայաստանի վաղ միջնադարյան եկեղեցիներում (Մրեն, Արուճ, Թալին, Կոշ և այլն):

Ինչ վերաբերում է թեմատիկային, ապա Երուսաղեմի հայկական խճանկարներում այնքան հաճախ հանդիպող թռչունների, խաղողի որթի, գավաթի և այլ խորհրդանշական պատկերների մենք հաճախ հանդիպում ենք վաղ միջնադարյան հայկական քանդակում, որմնանկարներում և մի փոքր ավելի ուշ շրջանի գրքային գեղանկարչության մեջ՝ մանրանկարներում:

Այսպիսով, Երուսաղեմի հայկական խճանկարչական գործերը զգալի չափով լրացնում են մեր պատկերացումները հայ միջնադարյան քրիստոնեական մշակույթի մեջ արվեստի այս ուղղության կիրառության մասին:

Երուսաղեմում, բացի վերը թվարկած խճանկարներից, կան նաև ավելի ուշ շրջանի աշխատանքներ, հանգամանք, որը վկայում է այստեղ ավանդական այդ արվեստին տրվող նախապատվության մասին: Մասնավորապես խճանկարագրող է այժմյան Սբ. Հարություն տաճարում գտնվող հայկական Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հատակը²⁴: Մեկ այլ խճանկար զարդարում է Տիրամոր ուշագնացության մատուռի պատը²⁵: Խճագրող են նաև Հայկական այլ հոգևոր կառույցներ:

²⁴ Եկեղեցին տաճարի ամենահին կառույցներից է, որը չի տուժել 1808 թվականի հրդեհից: Նրա հյուսիսային և հարավային մասերը կառուցվել են բյուզանդական շեղինե թագուհու դեպի Երուսաղեմ ուխտագնացության ժամանակ, իսկ արևելյան պատը և գմբեթը վերակառուցվել են Կիլիկյան հայոց թագավորության ժամանակ: Եկեղեցու երկու խորանները նվիրված են Գրիգոր Լուսավորչին և Հովհաննես Մկրտչին: 20-րդ դարում պատրաստված այդ իճազարդ հատակը եզրագարդված է բուսական էլեմենտներով, որոնցում պատկերված են զանազան կենդանիներ և թռչուններ, ներքև՝ կենտրոնական հատվածում Նոյի տապանն է, վերևում՝ Արարատը, իսկ նրա շուրջ յոթ հայկական եկեղեցի, այդ թվում՝ Զվարթնոցի տաճարը:

²⁵ Այստեղ իաշելությունը պատկերող խճանկարը, ըստ վրայի արձանագրության՝ «ՌՆԺԶ», պատրաստվել է 1967 թվականին, և հավանական պատվիրատուի կամ հեղինակի անունը նշվում է «ՀԱՅԿ ԳԱՎՈՒՃՆԱՆ», առկա է նաև Դեխուս հորինվածք: Բյուզանդական խճանկարչական օրենքներին հարելով՝ վարպետները կիրառել են ընդհանրվող և հավասար շարժերով սավառայի խորանարդիկների շարվածք:

SYUZANNA GRIGORYAN

**THE CHRISTIAN TRADITION IN MEDIEVAL
ARMENIAN MOSAIC PAINTING
(ON THE EXAMPLE OF JERUSALEM MOSAICS)**

Key words: mosaics, medieval art, decorative features, excavations, symbols, Armenian inscriptions.

Our knowledge of the mosaic art of Armenia would be quite limited, if the Armenian mosaics in Jerusalem were not preserved. According to written sources, in the V–VII centuries there were many Armenian monasteries and churches in the Holy City. Their existence and luxury has also been proved by the Armenian mosaics discovered during construction works in Jerusalem in the late 19th century.

In terms of composition, motifs, and, partly, style, the Armenian mosaics both in Armenia and Jerusalem have noticeably retained antique features but at the same time have clearly moved away from them, acquiring new forms and contents in accordance with the ideological and artistic requirements of the era.

СЮЗАННА ГРИГОРЯН

**ХРИСТИАНСКИЕ ТРАДИЦИИ АРМЯНСКОЙ СРЕДНЕВЕКОВОЙ
МОЗАИЧНОЙ ЖИВОПИСИ
(НА ПРИМЕРЕ ИЕРУСАЛИМСКИХ МОЗАИК)**

Ключевые слова: Мозаики, средневековое искусство, декоративность, армянский, раскопки, христианские, символы, армянские надписи.

Наши представления о мозаичной живописи Армении оказались бы совершенно ничтожными, если бы не сохранились армянские мозаики в Иерусалиме. По сведениям письменных источников, в Святом городе в V—VII вв. было множество армянских церквей и обителей. Судя по обнаруженным в армянских сооружениях Иерусалима образцам, мозаичная живопись имела широкое распространение.

Армянские мозаики как в самой Армении, так и в Иерусалиме по композиции, мотивам, отчасти и стилистическим особенностям заметно сохраняют черты мозаичной живописи античного периода, но в то же время явно отошли от них, приобретая новые формы и содержание в соответствии с идеологическими и художественными требованиями эпохи.

**ՆԵՐՍԵՍ ԼԱՄԲՐՈՆԱՅՈՒՄ՝ ԱՍՏՎԱԾԱՄՈՐ ՎԵՐԱՓՈԽՄԱՆԸ
ՆՎԻՐՎԱԾ ՆԵՐԲՈՂԻ ԲՆԱԳՐԱՅԻՆ ԵՒ
ԼԵԶՎԱՈՃԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

Բանալի բառեր՝ քննական բնագիր, ձեռագիր, հանգ, ուրիշ, ոճական արտահայտչամիջոցներ, նորակազմություններ:

Սուրբ Աստվածածնի ննջելու և երկինք փոխադրվելու հիշատակը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հինգ հիմնական՝ տաղավար տոներից է, որը նշվում է օգոստոսի 15-ին կամ մոտակա կիրակի օրը՝ «Վերափոխումն» կամ «Ննջումն Սուրբ Կույսի» անվամբ: Սա Աստվածածնին նվիրված տոներից հնագույնն է, հիշատակվում է Երուսաղեմյան Ճաշոցում՝ չորրորդ դարից սկսած¹: Սուրբ Կույսի վերափոխման պատմությունը մեզ հասել է Սրբազան Ավանդության² շնորհիվ, քանի որ Նոր Կտակարանում ոչ մի ակնարկ չկա այդ մասին. սկզբնական շրջանում տերունական բոլոր պատմություններն ու պատգամները բերանացի էին փոխանցվում սերնդեսերունդ, ոչինչ չէին գրում, քանի որ վստահ էին, որ Քրիստոսի երկրորդ գալուստը շատ մոտ է:

Աստվածածնի վերափոխման պատմությունը բազմաթիվ ճառերի, ներբողների և շարականների նյութ է դարձել թե՛ այլազգի և թե՛ հայ հեղինակների համար, սակայն մենք կանդորադառնանք դրանցից միայն մեկին՝ հայ միջնադարյան գրականության ականավոր ներկայացուցիչ Ներսես Լամբրոնացու (1153-1198 թթ.) Աստվածածնի վերափոխմանը նվիրված ներբողին: Ըստ

¹ Վ. Իգնատիսյան, *Աստվածամայրը*, Երևան, 2002, էջ 26:

² Գրավոր կամ բանավոր ավանդված աստվածային, մարգարեական, առաքելական պատվիրան կամ պատմություն, ծես և օրենք, որի վրա հաստատված է Ընդհանրական եկեղեցին, այն Աստծո գրավոր հայտնության՝ Ս. Գրքի լրացուցիչ մասն է (տե՛ս Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Երևան, 2002, էջ 123-124):

Ղևոնդ Ալիշանի՝ Կամբրոնացին այս ներբողը հավանաբար գրել է քահանա եղած ժամանակ³ 1171-1173 թվականների ընթացքում, երբ ընդամենը 18-20 տարեկան էր:

Աստուածամոր վերափոխման ներբողի բնագիրը հրատարակել է Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ հայր Համազասպ Ոսկյանը, որը, չունենալով որևէ հին ձեռագիր, օգտվել է իր ձեռքի տակ եղած Վիենն. 610 ձեռագրից (1788 թ.) համեմատելով այն Վիենն. 966 Ճառքնատրի հետ, որ պարունակում է միայն ներբողի վերջին մասը⁴: Ոսկյանը բնագիրը հրատարակել է արձակ, քանի որ երկար ժամանակ Կամբրոնացու՝ Աստվածածնի վերափոխմանը, ինչպես նաև Քրիստոսի Համբարձմանը և Սուրբ Հոգու Գալստյանը նվիրված ներբողները ավանդաբար համարվել են ճառեր և հրատարակվել արձակ: Սակայն դրանք աներկբա ինքնուրույն գեղարվեստական ստեղծագործություններ են, որտեղ վկայված են ներբողյանի ժանրին բնորոշ գլխավոր առանձնահատկությունները՝ ունեն նախաբան, հիմնական մաս և վերջաբան⁵: Այս մասին Գրիգոր Հակոբյանը գրում է. «Ճիշտ չի լինի Կամբրոնացու ներբողները «ճառ» համարել և դնել նրա արձակ գործերի մեջ, ինչպես արվել է մինչև հիմա: Այդ ներբողները յուրատեսակ շափածո գործեր են՝ թեև շատ հաճախ առանց հանգերի ու տողատման, ինչպես մեր բազմաթիվ շարականներն ու տաղերը»⁶: Հաշվի առնելով նշյալ հանգամանքը՝ քննական հրատարակություն պատրաստելիս մենք տողատեղ ենք Աստվածամոր Վերափոխմանը նվիրված ներբողի բնագիրը⁷, քանի որ ամենուր ակնհայտորեն առկա է ուրիշ, բացի այդ՝ կան հանգավորված մեծ ու փոքր հատվածներ, օրինակ՝

Ի սմանէ ծանեաք զհոլուն՝ հող,
Զբանն՝ մարմին, զլոյսն՝ ի խաւար,
ԶԱստուած՝ մարդ, զճոխն՝ աղքատ,

³ Ղ. Ալիշան, Սիսուան, Վեներտիկ, 1885, էջ 97:

⁴ Հ. Ոսկեան, «Ներսէսի Կամբրոնացոյ Ներբողեան ի Վերափոխումն Աստուածածնի», ՀԱ, ԼԹ. տարի 1925, էջ 355:

⁵ Ներբողյանի մասին առավել մանրամասն տես՝ Գիւրգ Պիտոյից, աշխ. Գ. Մուրադյանի, Երևան 1993, էջ 95-124, Ա. Ղազիմյան, «Ներբողը հայ հին գրականության մեջ», Հայ միջնադարյան գրականության ժանրեր, Երևան 1984, էջ 127-179:

⁶ Գ. Հակոբյան, Ներսես Կամբրոնացի, Երևան, 1971, էջ 15:

⁷ Ա. Ավետիսյան, «Ներսէս Կամբրոնացու ներբողը՝ նուիրուած Աստուածամօր Վերափոխմանը», Էջմիածին, թիվ Ը., էջ 11-29, թիվ Թ., էջ 42-61, Ս. Էջմիածին, 2018 (այսուհետ շարադրանքում վկայակոչվելու է Ը, Թ և էջը):

Ձանկարաւոն՝ քաղցեալ, զանտանելին՝ քանակեալ,
 Ձանհասն՝ շարշարեալ, զհզարն՝ տկար,
 Ձանմահն՝ մեռեալ վասն մերոյ փրկութեան... (Ը., էջ 15)

Յորժամ յաճախէր զնշանս զանազան
 Եւ հացիւ յագեցոյց նա զամենեսեան,
 Մայրն կախեալ էր զյուսոյն խոստման,
 Թէ ահա ընդունի զթագն դաւթեան:
 Իսկ ապա տեսեալ այսր փոխան
 Զշարշարանս Որդոյն զանազան՝
 Յուսակտուր կայր ի յերերման,
 Եւ գովթն եհար զսիրտն սրոյ նման... (Ը., էջ 27)

Բնագրի պատրաստման համար հիմք ենք ընդունել ներբողյանի ցայժմ հայտնի հնագույն օրինակը՝ Հալեպի Քառասուն մանկունք եկեղեցու մատենագարանի Հ^մ 141 ձեռագիրը, որի գաղափար օրինակն արտագրված է Ներսես Լամբրոնացու ինքնագրից⁸ (այս մասին կարդում ենք Հ^մ 141 ձեռագրի հիշատակարանում (ԺԳ. դարի սկիզբ), որտեղ գրիչը՝ Գրիգոր Ակներցին, մասնավորաբար նշում է. «Նուզեալ գտի գրեալ աստուածընկալ ձեռաց տեսոն Ներսէսի Տարսոն եպիսկոպոսի տիեզերալոյս վարդապետի...»⁹): Այն համեմատել ենք ՄՄ Հ^մ 3770 (1304 թ.), ՄՄ Հ^մ 779 (1643 թ.), ՄՄ Հ^մ 4574 (1824 թ.), ՄՄ Հ^մ 2682 (1823-1825 թթ.) ձեռագրերի և Համագասպ Ոսկյանի հրատարակած բնագրի հետ:

Համբրոնացին այս ներբողն արտասանել է Աստվածամոր Վերափոխման տոնին՝ Սկևռա վանքում, սակայն ներբողում միայն Վերափոխման մասին չէ, որ խոսվում է. Համբրոնացին պատկերում է Աստվածածնի ամբողջ կյանքը՝ ավելի մանրամասն անդրադառնալով վերափոխման դեպքին: Գեղարվեստական զանազան ոճավորումներով մանրակրկիտ ներկայացված են Մարիամի ծնունդը, Հիսուսի ծննդյան ավետումը Մարիամին՝ Գաբրիել հրեշտակապետի կողմից, Քրիստոսի ծնունդը, մոգերի գալուստը, փախուստը Եգիպտոս, տաճար գալը, Սիմեոն ծերունուն տեսնելը, Հիսուսի հրաշագործությունները, խա-

⁸ Ն. Ակիմեան, Ներսէս Լամբրոնացի, Վիեննա, 1956, էջ 208:

⁹ Հալեպի ձեռ. Հ^մ 141, էջ 156:

չելությունը, թաղումը, հարությունը, համբարձումը և, ի վերջո՝ Աստվածամոր վերափոխումը:

Թեև, ինչպես արդեն նշեցինք, Տիրամոր ննջման և վերափոխման մասին Սուրբ Գրքում որևէ հիշատակություն չկա, այնուամենայնիվ, Ներսես Լամբրոնացու ներբողի առաջին և հիմնական աղբյուրը Աստվածաշունչն է. հեղինակը բազմաթիվ բառացի և ոչ բառացի մեջբերումներ է անում աստվածաշնչյան տարբեր գրքերից, ինչպես՝ Ծննդոց, Առակաց, Սաղմոսաց գրքերից, Դանիելի և Եսայու մարգարեություններից, Երգ երգոցից, Ավետարաններից և թղթերից: Հինկտակարանյան մեջբերումներից առավել հաճախ հանդիպում են Երգ երգոցից հատվածներ, ուստի դրանք արժանի են առանձնակի ուշադրության: Երգ երգոցի մեկնողական գրականության մեջ առավել տարածված է փեսա-Քրիստոս և հարս-եկեղեցի զուգահեռը, սակայն այս գրքից արված մեջբերումներում Ներսես Լամբրոնացին որպես փեսա ներկայացնում է Քրիստոսին, իսկ հարսին վերաբերող բոլոր ձևակերպումները վերագրում է Աստվածամորը. օրինակ՝

Ձայն եղբորորդույ իմոյ.

Ահալասիկ սա եկն վազելով ի վերայ լերանց՝

Խայտալով ի վերայ բլրոց (Երգ Բ. 8):

Ձայն որդեկի իմոյ.

Ահալասիկ սա եկն վազելով ի վերայ լերանց՝

Խայտալով ի վերայ բլրոց (Թ., էջ 55):

Նշենք, որ Հայ եկեղեցու տոնացույցում Աստվածամորը նվիրված բոլոր տոների ճաշու ընթերցվածներում առանցքային տեղ է գրավում Երգ երգոց գիրքը, որտեղ ևս առկա է հարս-եկեղեցի-Աստվածամայր զուգահեռը, ուստի այս պարագայում Լամբրոնացին հետևել է Հայ առաքելական եկեղեցու ծիսական ավանդության մեջ հայտնի մոտեցմանը: Հարկ է նշել, որ այս երևույթը բնորոշ է նաև այլ եկեղեցական ավանդություններին, որպես օրինակ ներկայացնենք հին անգլերենով պահպանված անանուն հեղինակի՝ Աստվածամոր Վերափոխմանը նվիրված միջնադարյան մի բանաստեղծություն, որն, ըստ աշխատասիրողի, հավանաբար թարգմանված է լատիներեն ավելի հին աղբյուրից¹⁰:

¹⁰ **Karen Saupe**, *Middle English Marian Lyrics*, Kalamazoo, Michigan, 1997, N 49. (<https://d.lib.rochester.edu/teams/text/saupe-middle-english-marian-lyrics-assumption-and-mary-as-queen-of-heaven#one>, <https://thomaslmcDonald.wordpress.com/tag/assumption/>, un 30.01.2019).

Crist sayde to hur:

*“Com, my swete, com, my flour,
Com, my culver, myn owne boure,
Com, my modyr, now wyth me:
For hevyn qwene I make thee.”*

Then the body sat up, and lowtd to
Crist, and sayde:

*“My swete sonne, with al my love
I com wyth thee to thyn above;
Wher thou art now, let me be,
For al my love ys layde on thee.”*

Christ visited the body of Mary, and
said:

*“Come my sweet, come my flower,
Come my dove, come my bower,
Come, my mother, now with me,
For heaven’s Queen I make thee.”*

Then the body sat up, bowed to Christ,
and said:

*“My sweet son, with all my love
I come with you to heaven above:
Where you are now, let me be
For all my love I lay on thee.”*

Քրիստոսն այցի եկավ Մարիամի մարմինն և ասաց.

*«Արի՛ անու՛շ իմ, ծաղի՛կ իմ,
Աղավնի՛ իմ, օթեա՛ն իմ,
Մա՛յր իմ, արդ, արի՛ ինձ հետ,
Երկնային թագուհի կդարձնեմ ես քեզ»:*

Հետո մարմինը վեր կացավ, խոնարհվեց Քրիստոսին ու ասաց.

*«Իմ անու՛շ որդի, իմ ամբողջ սիրով
Գալիս եմ քեզ հետ դեպ երկինք վերին,
Որտեղ որ դու ես հիմա, թող ես էլ լինեմ,
Իմ ողջ սիրով ես քոնն եմ» (Թրգմ. Ա.Ա.):*

Այս բանաստեղծութունը ներսես Լամբրոնացու ներբողի և Երգ երգոցի համապատասխան հատվածների հետ համեմատելիս անհնար է չնկատել

Թեմատիկ ընդհանրությունները, ակնհայտ է, որ և՛ անգլիացի բանաստեղծի, և՛ Ներսես Լամբրոնացու համար իբրև աղբյուր ծառայել է հենց նրա երգոցը.

«Արի՛, ե՛կ, Մա՛յր իմ, գեղեցի՛կ իմ, աղանի՛ իմ,
 ե՛կ ի գաւառն հայրենի,
 Հանգի՛ր ի չքնաղակերտն խորանս»:
 «Արդ, ո՛վ դասք առաքելոց, աւրիորդք իմոյս հարսնութեան,
 Մուծէ՛ք զիս ի տուն գինւոյ,
 Կարգեցէ՛ք ի վերայ իմ գսէրն,
 Հաստատեցէ՛ք զիս իւղովք,
 Հաւաքեցէ՛ք յիս խնձորս,
 Վասն զի խանդակաթեմ ես սիրով Միածնիս իմոյ,
 Ահեակ նորա ի վերայ գլխոյ իմոյ
 եւ աջ նորա պատեսցի զինեւ.
 եւ առեալ զիս, թռուցեալ ամբարձցի յերկինս» (Թ., էջ 56):

Պատասխանի տայ եղբորորդին իմ ինձ՝ եւ ասէ.
 Արի՛, ե՛կ, մերձաւո՛ր իմ, գեղեցի՛կ իմ, աղանի՛ իմ...
 Յօրիորդսն հարսնն ասէ.
 Մուծէ՛ք զիս ի տուն գինւոյ,
 Կարգեցէ՛ք ի վերայ իմ գսէր,
 հաստատեցէ՛ք զիս իւղով.
 կուտեցէ՛ք յիս խնձոր,
 զի խանդակաթ եմ ես սիրով...
 Զախ նորա ընդ գլխով իմով, եւ աջ նորա պատեսցէ զինեւ... (Երգ Բ. 4-10):

Վերափոխման ներբողի կարևոր աղբյուրներից են նաև պարականոն կամ ոչ կանոնական գրքերը, որոնցից որպես առավել նշանակալի աղբյուրներ կարելի է առանձնացնել Մովսես Խորենացու անվամբ պահպանված «Պատասխանի թղթոյն Սահակայ»¹¹, որի մեջ անդրադարձ կա նաև Աստվածածնի Վերափոխմանը, Դիոնիսիոս Արեոպագացու «Յաղագս աստուածային

¹¹ Մատենագրութիւնք Մովսէսի Խորենացոյ, Վենետիկ, 1843, էջ 283-296:

անուանց»¹² և «Պատասխանի թղթոյն Տիտոսի... Յաղագս ննջման Սրբոյ Աստուածածնի և միշտ կուսին Մարիամու»¹³ երկերը¹⁴: Վկայակոչենք մի օրինակ, որից ակնհայտ երևում է, որ Համբրոնացին ձեռքի տակ ունեցել է Դիոնիսիոսի վերոնշյալ երկերը, ամենայն հավանականությամբ՝ հայերեն թարգմանությամբ.

Մինչդեռ աստուածընկալ քահանայապետքն
Շուրջ կային զաստուածակիր մարմնովն,
Քանզի միահամուռ դասք առաքելոցն
Անդր եկին գումարեալ որպէս ասացաւ.
Անդ էր աստուածեղբայրն Յակոբոս
Եւ անաւթն ընտրութեան Պաւղոս,
Եւ մեծիմաստն Յոնթէոս,
Որպէս պատմէ աշակերտ նոցին Դիոնէսիոս...
Աստուածաբանն Յոնթէոս ի մէջ կացեալ
Եւ զսքանչելի խորհուրդս յայտնեալ առ յամենեցունց, որք լուանն,
Աստուածընկալ եւ աստուածային արհնաբանող կոչեցաւ.
Որք ապա եւս հաստատեալ ի պատիւ Իսկուհւոյն... (Թ., էջ 54):

¹² *The Armenian version of the works attributed to Dionysius the Areopagite*. [Text in Armenian]. Edt.: **R. W. Thomson**. Corpus Scriptorum Christianorum Orientalium Vol. 488 Scriptorum Armeniaci Tomus 17. Lovanii, 1987, pp. 128-223.

¹³ ՄՄ 1309, ք. 250բ-251բ:

¹⁴ Վերափոխման ներքոյի պարականոն աղբյուրներից են նաև «**Մարիամի ննջումը**» (Ե. դարից ոչ ուշ, ըստ Ֆեթթերի այս ստեղծագործության հայկական տարբերակը մեզ է հասել Զ. դարից (տե՛ս **Vetter P.** *Die armenische Dormitio Mariae*. Եզվ. աշխ. ծան. 22, ThQ 84, 1902, էջ 325), ասորական եկեղեցու հայրերից **Հակոբ Սրնեցու** «Ներքողեան ասացեալ ի ննջումն սրբոյ Աստուածածնին և միշտ կուսին Մարիամայ» (*Գիրք եւ ճառ հոգեշահ*, Կ. Պոլիս, 1722, էջ 427-441) և «Յաւուր մեծի խաչելութեանն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և յաւազակն, որ հրափրեցաւ ի դրախտն և ի սերովբէն, որ պահէր զհանապարհ ծառոյն կենաց» (*Գիրք և ճառ հոգեշահ*, էջ 170-203, ըստ Գարեգին Զարբանալյանի՝ այն ասորերենից թարգմանվել է «*հրամանաւ տեառն Գրիգորիոսի Հայոց կաթողիկոսի, ի ձեռն քահանայի ուժեմն Իսահակ անուն կոչեցեալ, ասորի ազգէ, անարուեստ գոլով մերոյ դպրութեանս, շաղփաղի և կոկորդախօս լեզուաւ, և ստուգեցաւ ի սուրբ և յանբիժ եւ ի մեծ արհիեպիսկոպոսէ ի տեառն Նէրսիսէ հռետոր իմաստասիրէ (Ներսես Շնորհալի – ծնթ. Ա.Ա.)*», տե՛ս **Գ. Զարբանալյան**, *Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեանց* (դար Դ.-ԺԳ.), Վենետիկ, 1889, էջ 573) ստեղծագործություններից, ինչպես նաև **Եփրեմ Ասորու** «*Մեկնութիւն Աւետարանի Համաբարբառ*» (Տատիանոս Ասորու Դիատեսարոնի) մեկնությունից (տե՛ս **Սրբոյն Եփրեմի մատենագրութիւնի**, Կ. Բ., Վենետիկ, 1836, էջ 6-260): Պարականոն աղբյուրների շարքին է պատկանում նաև Տիրամոր ննջմանը վերաբերող մի հառ, որ վերագրվում է **Սբ. Հովհանն Ոսկեբերանին** (**M. van Esbroeck**, *Oriens Christianus*, 1990, էջ 209-220): Այս մասին առավել մանրամասն տե՛ս **Թ. Տասնապետեան**, *Աստուածածինը. Նոր յօդուածներու ժողովածու*, Անթիլիաս, 2008, էջ 79-153:

Դիոնիսիոս Արեոպագացու «Յաղագս աստուածային անուանց» երկում կարդում ենք՝ «...յորժամ մեք և նա, զոր գիտես իսկ, և բազումք ի սրբազան մերոց եղբարցն, ի տեսութեան կենդանապետականի և աստուածընկալ մարմնոյն եկաք միահամուռ, անդ էր և աստուածեղբայրն Յակոբոս, և Պետրոս գլխաւորն, և երիցագոյն աստուածաբանիցն ծայրութիւն... նա՛ քան զամենայն սրբազանսն խորհրդագգածս հօրագոյն էր յետ աստուածաբանիցն, բոլորովիմբ սարսելով, բոլորովիմբ զարմացմամբ յինքեան, և առ օրհնաբանութիւնսն զկցորդութիւն կրելով, և առ ի յամենեցունց, որք լսէինն և տեսանէին, և որք գիտէինն, և որք ոչն գիտէինն, աստուածընկալ և աստուածայնին օրհնաբանօղ կոչիւր...»¹⁵:

Անդրադառնալով Աստվածածնի վերափոխման ներբողի ոճական արտահայտչամիջոցներին՝ համոզվում ենք, որ թեև Լամբրոնացին տասնութ-քսան տարեկան երիտասարդ էր, սակայն ուներ լեզվական բարձր ճաշակ և զարմանալի հմտությամբ կարողացել է ճիշտ շփով և ճիշտ տեղում կիրառել զանազան պատկերավորման միջոցներ՝ գերծ մնալով անհարկի վերամբարձ շարադրանքից:

Ներբողը գրելիս Լամբրոնացին պարզապես չի վերաշարադրել պարականոն աղբյուրների նյութը, այլ մի շարք արտահայտչամիջոցների կիրառմամբ յուրահատուկ նրբերանգային շեշտադրումներ է կատարել: Հեղինակը ներբողում առատորեն կիրառել է մակդիրներ, որոնց միջոցով տրվում են առարկայի կամ որևէ երևույթի գեղարվեստական, պատկերավոր բնութագրությունները, ինչպես՝ «սրտաբորբոք գութ» (Լ., էջ 23), «ամենակար խնամք» (Թ., էջ 53), «բաժակ անմահութեան», «պտուղ օրհնութեան», «կենաց սերմն» (Լ., էջ 25) և այլն:

Նյութը հարուստ է նաև փոխաբերություններով: Ոճի խորագիտակ ուսումնասիրողներից Սենեքերիմ Մելքոնյանը գրում է, որ գեղարվեստական մտածողության յուրահատկությունը բառային մակարդակում ոչ մի այլ միջոցով այնքան բնորոշ ու հարուստ արտահայտություն չի կարող ունենալ, որքան փոխաբերության կիրառությամբ, մանավանդ որ, բառի նման իմաստով գործածությունը հիմք է դառնում խոսքի պատկերավորության և արտահայտչականության շատ այլ միջոցների համար և զանազան ձևերով սերտորեն

¹⁵ *The Armenian Version of the Works attributed to Dionysius the Areopagite*. [Text in Armenian]. Edt.: **R. W. Thomson**. Corpus Scriptorum Christianorum Orientalium Vol. 488 Scriptorum Armeniaci Tomus 17. Lovanii, 1987, pp.151-152.

առնչվում դրանց հետ¹⁶: Բերենք փոխաբերության բնութագրական օրինակներ՝ «Եւ այժմ ամենայն երախտագործութիւն քո ունայնացաւ...» (Թ., էջ 42), «Մեծութիւն նորա այսպիսի բարձրացաւ...» (Լ., էջ 16), «Կուսութեամբ ծնայ և արդարութեամբ սնուցի» (Լ., էջ 28):

Ներբողի ոճը հարստացնում են բազմաթիվ համեմատությունները, ինչպես՝ «Եւ գութն եհար զսիրտն սրոյ նման» (Լ., էջ 27), «Եւ դիր զիս իբրեւ զկնիք ի վերայ սրտի քո / Եւ իբրեւ զմատանի ի վերայ բազկի քո» (Թ., էջ 56), «Ով է սա, որ ելանէ յանապատէ / Իբրեւ զստեղն խնկոյ ծխեալ» (Թ., էջ 53):

Բառային կրկնությունների շնորհիվ կամբրոնացին ստեղծել է յուրօրինակ ներքին բանաստեղծական հանգավորում, ինչպես՝ «Սա մխիթարեսցէ զքեզ, մինչեւ ամից ի հայրենիսն / Սա պաշտեսցէ զքեզ, մինչեւ կոչեսցիս ի յերկինս / Սա եղիցի քեզ որդի, մինչեւ ի փոխելն զմայրդ իմ առ իս» (Լ., էջ 28):

Ներբողում ներառված ճառերը, աղոթքներն ու երկխոսությունները, որոնցով ներսես կամբրոնացին ճոխացրել է պարականոն աղբյուրների հատվածական վկայությունները, ըստ ամենայնի, ինքնուրույն ստեղծագործություններ են. այստեղ հեղինակը կիրառել է հին պատմիչներին բնորոշ հերոսներին խոսքեր վերագրելու հնարքը:

Ներբողն ինքնին, լինելով ճոխ, պերճ ու զարդարուն ոճի ստեղծագործություն, հեղինակից պահանջում է նորակերտ բառերի կիրառություն: Այս տեսանկյունից դատելով՝ կարող ենք ասել, որ կամբրոնացու լեզուն աչքի է ընկնում իր բառապաշարի յուրօրինակությամբ, նա ոչ միայն մեծատաղանդ, այլև ինքնատիպ բառաստեղծ է: Միայն Վերափոխման ներբողում կիրառված է շորս նորակազմ բառ, որոնցից երկուսն առհասարակ վկայված չեն բառարաններում, իսկ մյուս երկուսի դեպքում էլ օրինակները բերվում են միայն կամբրոնացուց, այսպես՝

1. **Թևաքող** - նձբ-ում կա միայն թևաքողեմ բայը՝ «թևով որպես քողով պատել և ծածկել զինքն առ պատկառանաց» բացատրությամբ: Այս բայը հիմնականում կիրառվում է սերովբեներին¹⁷ բնորոշելու համար, կամբրոնացին նորա-

¹⁶ Ս. Մելոնյան, Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Երևան, 1984, էջ 94:

¹⁷ «Սերովբե»-ն երբայեքն բառ է, որ նշանակում է վառվող, կիզվող: Սուրբ Գրքում այս բառը հանդիպում է միայն Եսայու մարգարեության վեցերորդ գլխում, ըստ որի՝ սերովբեներն ունեն վեց թև, որոնցից երկուսով թռչում են, իսկ մյուս երկու զույգ թևերով ծածկում են իրենց երեսներն ու ոտները (Ես. 6.2): Ըստ Սուրբ Հովհանն Ոսկեբերանի սերովբեներն այսպես են վարվում այն պատճառով, որ ի վիճակի չեն դիմանալու Տիրոջ Գահից նառագող աստվածային փառքի յույսին և, ինչպես մարդիկ են երեսները ծածկում կայծակի փայլատակման ժամանակ, այնպես էլ նրանք, մշտապես Աստծո առաջ լինելով,

կերտ «Թեաւքօղ» ածականը նույնպէս կիրառում է սերովբեների այդ հատկանիշը ընդգծելու համար՝ «Ի կառս քերովբէից Աստուածդ բազմեալ / Թեաւքօղ սերօբէիւքն սրբաբանեալ» (Լ., էջ 20):

2. **Հայրենագաւառ** – «Հայրենի»՝ «սեպհական հօր, և հարց, և նախնեաց» և «գաւառ»՝ «նահանգ, աշխարհ առանձինն, կողմն աշխարհի, մանաւանդ հայրենի երկիր» բառերից -ա- հոդակապով կազմված գոյական, որը տեքստում կիրառվում է «հայրենի երկիր» նշանակությամբ՝ «Քանզի յերեւեալ դարձուցանողին զգերութիւն մարդկան / Ի պանդուխտս վայրէ ի հայրենագաւառն վերին» (Լ., էջ 19):

3. **Ստորահեղու** – Հունաբանների ստեղծած նախածանցով կազմված այս բայի բաղադրիչներից արդեն իսկ հասկանալի է իմաստը, ըստ ՆՀԲ-ի՝ «ի վայր հեղու, ստորածորի, ստորահոսել»։ Բառարանում նշված օրինակներից պարզ է դառնում, որ Լամբրոնացին տարբեր երկերում հաճախ է կիրառել բառը. մեր ուսումնասիրության ենթակա տեքստերում բառը բնութագրում է հրեշտակների վար իջնելը՝ «Ստորահեղան գուարթունք, գումարեցան անմարմինք / Իջին սերաւբէք, խոնարհեցան քերաւբէք» (Թ., էջ 55):

4. **Սրտաբորբոք** – Դարձյալ -ա- հոդակապով ստեղծված այս ածականը ՆՀԲ-ում բացատրվում է հետևյալ նշանակությամբ՝ «բորբոքեալ սրտիւ, անձկալից, ջերմեռանդն»՝ Իւրաքանչիւր ոք ի զգայարանացն սրտաբորբոք գթով համբուրէր եւ ասէր...» (Լ., էջ 23):

Այս ինքնատիպ ներբողը բնագրային, լեզվական և աստվածաբանական ուսումնասիրության հարուստ նյութ է ընձեռում։ Ամփոփելով՝ ընդգծենք, որ Աստվածածնի մահվան իրողության մասին վկայված պարականոն նյութը գտելով՝ Ներսես Լամբրոնացին հիրավի նոր պատում է ստեղծել, որն անվարան գրական և աստվածաբանական գլուխգործոց կարող ենք համարել։

ARPINE AVETISYAN

NERSES LAMBONATS' I'S PANEGYRIC ON THE
ASSUMPTION OF VIRGIN MARY

Key words: critical edition, manuscript, rhyme, rhythm, means of expression, neologisms.

Archbishop Nerses Lambronats'i is one of the outstanding medieval authors

and Fathers of the Armenian Church. He was a poet, prose writer, translator, and commentator (he wrote commentaries on Genesis, Ecclesiastes, Wisdom, he interpreted church rites, the mystery of the Liturgy etc.).

His panegyric on the Assumption of Virgin Mary was published on the basis of one manuscript (Vienna, No. 610, 1788) as a prose text, but it clearly has a rhythm and sometimes rhymes, which allowed us to break it into verses. Our critical edition of this panegyric is based on four manuscripts of Matenadaran, the oldest surviving manuscript from the Church of the Forty Martyrs in Aleppo, and the previous edition.

Lambronats'i has applied various means of expression in his panegyric: epithets, comparisons, metaphors, repetitions etc., which have created his original vivid and eloquent style.

АРПИНЕ АВЕТИСЯН

**ОДА НЕРСЕСА ЛАМБРОНАЦИ НА
ВОЗНЕСЕНИЕ ДЕВЫ МАРИИ**

Ключевые слова: критическое издание, рукопись, рифма, ритм, языковые выразительные средства, неологизмы.

Архиепископ Нерсес Ламбронаци – один из выдающихся отцов Армянской Церкви и величайших средневековых писателей. Он был поэтом, прозаиком и переводчиком, а также талантливым толкователем Священного Писания. Известны его толкования на книги Бытия, Экклезиаст, Премудрости, размышления о церковных обрядах и толкование тайны Литургии и т.д..

Его ода, посвященная Вознесению Девы Марии, была опубликована по одной поздней рукописи (Вена N 610, 1788 г.) в виде прозаического текста. Однако в ней четко заметны ритм, а местами и рифма, что позволило нам разделить ее на стихотворные строки. Нами издан критический текст этой оды, с использованием четырех рукописей Матенадарана имени Маштоца, древнейшей сохранившейся рукописи из церкви Сорока мучеников в Алеппо и текста начальной публикации.

Различные выразительные средства, использованные в оде Ламбронаци – эпитеты, сравнения, метафоры, повторения и др., обеспечивают цветистость ее своеобразного стиля.

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅՐ ԱՆՏԻՈՔԻ
ԻԾԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Բանալի բառեր՝ խաչակրաց արշավանքներ, Բյուզանդական կայսրություն, ասպետական միաբանություններ, ավատատիրական համակարգեր, Երուսաղեմի թագավորություն, մոնղոլական արշավանքներ:

Խաչակրաց արշավանքների, Բյուզանդիայի, Կիլիկիայի ու Մերձավոր Արևելքի պատմության անցուղարձերը մշտապես եղել են պատմաբանների ուշադրության կենտրոնում: Առաջին խաչակրաց արշավանքի ընթացքում ձևավորվեցին չորս խաչակրաց պետական միավորներ, որոնցից մեկը 1098 թ. վերջերին կազմակերպված Անտիոքի իշխանությունն էր: Իրավական առումով Արևելքի բոլոր լատինական երկրները միավորված էին Երուսաղեմի թագավորության կազմում, սակայն փաստացի այդ իշխանությունը վարում էր անկախ քաղաքականություն: Նույնիսկ հիերարխիկ աստիճանակարգով Անտիոքի կառավարիչներն ունեին ընդգծված առավելություն՝ կրելով իրենց հատուկ պրինցի կոչում, որը ցածր էր միայն թագավորական կարգից:

Անտիոքի իշխանությունը հյուսիսային և հյուսիսարևմտյան ուղղություններով սահմանակից էր Կիլիկյան Հայաստանին: Խնդրո առարկա ժամանակահատվածում Կիլիկիայում տեղի էին ունենում հայկական իշխանությունների միավորման գործընթացներ, որոնք Անտիոքի իշխանների հետ պետք է մտնեին Դաշտային Կիլիկիայի վրա ազդեցություն տարածելու երկարատև պայքարի մեջ: Սակայն այդ պայքարի էական առանձնահատկություններից մեկը նրանում էր, որ հարևան պետությունները, ու մասնավորապես Բյուզանդիան, ևս լուրջ նպատակներ ունեին հիշյալ տարածքների հետ կապված:

Կիլիկիայի նկատմամբ Անտիոքի նկրտումները դրսևորվեցին հենց սկզբից: 1098 թ. նոյեմբերին-դեկտեմբերին Բոհեմունդն՝ (1098-1111 թթ.)

արդեն Անտիոքի իշխանի կարգավիճակով, շարժվում է հյուսիս և առանց որևէ դիմադրության նվաճում Տարսոսը, Մամեստիան, Ադանան, Անարզաբան ու Դաշտային Կիրիկիայի մյուս շրջանները, որտեղ նշանակվեցին Բոհեմոնդին հավատարիմ ծառայողներ¹: Այս հաղորդումը վկայում է այդ քաղաքների Անտիոքի տիրապետությանը խաղաղ ճանապարհով անցելու մասին²:

Արդեն 1103 թ. սկզբին, Անտիոքի ասպետները տիրում են նաև Լաոդիկեա (հայկական աղբյուրներում նաև Լավոդիկիա) նավահանգստին³: Լաոդիկեային, Մամեստիային, Ադանային ներքին գործերը տնօրինելու հարցում թողնվում է մասնակի ինքնավարության իրավունք, բայց դրվում են ծանր հարկեր ու ռազմական օգնության ցույց տալու պահանջ⁴:

Բյուզանդիան կորցրած դիրքերը վերականգնելու համար հաճախ էր դիմում ռազմական գործողությունների, սակայն լուրջ հաջողություններ այդպես էլ չարձանագրվեցին մինչև 1108 թ. սեպտեմբեր, երբ Բոհեմոնդը պարտություն կրեց կայսր Ալեքսիոսից (1081-1118 թթ.) և Դեաբոլում կնքեց մի պայմանագիր⁵, որի մեզ հետաքրքրող հատվածները հռչակում էին.

- Բոհեմոնդն ընդունում էր վասալական կախվածություն Ալեքսիոս Կոմնենոսից և նրա գահաժառանգ Հովհաննես II-ից:

- Անտիոքը հրաժարվում էր Լաոդիկեայից, Դաշտային Կիրիկիայում ձեռք բերած բոլոր տիրույթներից և, ընդհանրապես, նրա նկատմամբ ունեցած որևէ հավակնություններից:

¹ Willermi Tyrensis Archiepiscopi, *Historia rerum in partibus transmarinis gestarum*, Recueil des historiens des croisades (այսուհետ՝ RHC), Hist. occidentaux, t. 1, Paris, 1844, pp. 279-280.

² В. П. Степаненко, А. В. Шорохов, “К хронологии византийско-антиохийской борьбы за Равнинную Киликию. 1098-1108 гг.”, *Античная Древность и Средние Века*, 1983, вып. 20, с. 141.

³ *Gesta Tancredi in expeditione Hierosolymitana*, auctore Rudolfo Cadomensis, RHC, Hist. occidentaux, t. 3, Paris, 1866, pp. 706-709, П. Виймар, *Крестовые походы*, перев. с фр. Журавлевой Д. А., СПб, 2006, с. 148.

⁴ *Gesta Tancredi in expeditione Hierosolymitana*, p. 709.

⁵ А. Комнина, *Алексиада*, под ред. Я. Н. Любарского, Москва, 1965, с. 365-372. Պայմանագրի կետերի և աշխարհագրական տեղայնացումների մասին մանրամասներ տե՛ս В. П. Степаненко, “Мараш и графство Эдесское в Девольском договоре 1108 г.”, *Византийский временник*, 1987, т. 48, с. 53-63, Ս. Runciman, *A History of the Crusades*, t. 1, London-New York, 1951, p. 33-52, Ա. Ա. Բոդրյան, *Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը*, Երևան, 1988, էջ 72-74:

- Դաշտային Կիլիկիայի մեծ մասը՝ Տարսոն, Ադանա, Մամեստիա և Անարզաբա քաղաքներով, անցնում էր Բյուզանդիային:

Ինչևիցէ, Դեաբոլի պայմանագիրը մնաց միայն թղթի վրա, իսկ Բոհեմոն-դի հաջորդ Տանկրեդին (1100-1103; 1105-1112 թթ.) այն պարտադրել Ալեքսիոս կայսերը չհաջողվեց: Ընդհակառակը, նրա հետագա հաջողությունները նորմաններին դարձրեցին ողջ Դաշտային Կիլիկիայի միակ տերը:

Իրավիճակը սկսում է փոփոխվել Ռուբինյան հարստության ամրապնդմամբ: Լևոն I-ի կառավարման շրջանում (1129- 1137 թթ.) առաջին փորձերն են արվում հաստատվելու Դաշտային Կիլիկիայում: Նա կարողանում է 1135 թ. Անարզաբայի տիրապետությունը տարածել Անտիոքի իշխանությանը պատկանող Սարվանդիքար ամրոցի վրա⁶: Անկարող գտնվելով զենքի ուժով հնազանդեցնել Լևոնին՝ Անտիոքի խաչակիրները սկսում են այլ ճանապարհներ որոնել. 1136 թ. դուքս Ռայմունդ Պուատյեն (1136-1149 թթ.) գերում է Լևոնին և շղթայակապ բերում Անտիոք⁷: Աղբյուրներում Լևոնի և Ռայմունդի բախման մասին տեղեկությունների բացակայությունը հիմք է հանդիսացել այն խարդախություն համարելու համար⁸:

Լևոնին ազատելու համար նրա որդիները պատանդ ուղարկվեցին Անտիոք, Ռայմունդին հանձնվեցին Ադանան, Մամեստիան, Սարվանդիքարն ու վճարվեց 60 հազար դահեկան փրկագին⁹: Այն կարծիքը, որ ազատվելուց հետո Լևոնը հետ է բերել կորցրածը և ստիպել Ռայմունդին պատանդներ ուղարկել հայոց արքունիք¹⁰ համոզիչ չէ¹¹: Անտիոքի և Կիլիկիայի հաշտեցման գործում

⁶ Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 159-160:

⁷ Անանուհ Եղեացի, Ժամանակագրություն, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 12, Ասորական աղբյուրներ, գիրք Բ, Երևան, 1982, էջ 80, Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 160: Մանրամասներ տե՛ս u G. Dédéyan, *Les pouvoirs arméniens dans le Proche-Orient Méditerranéen (1068-1144)*, t. 2, Paris, 1990, pp. 499-517, 530-531.

⁸ Մ. Չամչեանց, Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1786, հ. Գ, էջ 51, R. Grousset, *Histoire des croisades et du royaume franc de Jérusalem*, t. 2, Paris, 1935, p. 52, Г. Г. Микаелян, *История Киликийского Армянского государства*, Ереван, 1952, с. 101, Ս. Մ. Տեր-Ներսեսյան, Կիլիկյան Հայաստանի թագավորությունը, հ. 2, Լոնդոն, 1969, քարգվ. Լ. Հ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները և հայերը, հ. Ա, Երևան, 2005, էջ 387, նույն տեղում, հ. Բ, Երևան, 2007, էջ 107:

⁹ Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 160:

¹⁰ Մ. Չամչեանց, նշվ. աշխ., հ. Գ, էջ 51, R. Grousset, *Histoire des croisades et du royaume franc de Jérusalem*, t. 2, p. 52, Г. Г. Микаелян, указ. соч., с. 101.

¹¹ F. Chalandon, *Les Commènes*, Հատված. քարգվ. Լ. Հ. Տեր-Պետրոսյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 157, Ե. Հ. Քասունի, Կիլիկիոյ հայկական իշխանապետությունը Մերձաւոր Արևելեւիքի քաղաքական հոլովոթիւն մէջ (1080-1137), Պէյրոս 1974, էջ 201:

միջնորդությամբ հանդես եկավ Եղեսիայի կոմս Ժոսլեն II-ը¹² (1131-1150 թթ.), բայց նոր բախումներն անխուսափելի կլինեին, եթե նրանք չմիավորվեին Հովհաննես II-ի (1118-1143 թթ.) դեմ. կայսրը 1137 թ. արշավանք էր ձեռնարկել դեպի Կիլիկիա և Անտիոք:

Ձբացառելով Մամեստիայի, Ադանայի և Տարսոնի ձեռքից-ձեռք անցնելու վարկածը¹³ մի շարք փաստեր հաստատում են Դաշտային Կիլիկիայի վրա 1100-1137 թվականներին Անտիոքի ազդեցությունը.

- 1111 թ. Տանկերդի հրամանով հավաքված վասալների շարքում նշված են Տարսոնի և Մամեստիայի տեր Վիդո Կոռնեոլիսը (Գի դը Շեվրի), Տարսոնի եպիսկոպոս Ռոգերիուսը, Լեոն Ռուբինյանը, Գոդ Վասիլն ու իշխան Օշինը¹⁴:

- Մամեստիա քաղաքի եպիսկոպոսը մինչև 1135 թ. Անտիոքի ապագա պատրիարք Ռաուլ Դոմֆրոնտացին էր¹⁵:

- 1132 թ. Հոռմի պապի կոնդակներից մեկն Անտիոքի աթոռի ավագությանը տարածում է Անարզաբայի, նրա 9 եպիսկոպոսների, Սելևկիայի ու նրա 24 եպիսկոպոսների վրա ևս¹⁶:

- Տրանկների կողմից 1132 թ. Կիլիկիա կազմակերպված արշավանքի, ապա Լեոնի գերության տրամաբանական պատճառն Անտիոքի հսկողությանից Դաշտային Կիլիկիայի դուրս գալն էր, բայց մինչև 1137 թ. Ռայմունդ Պուլատյեն վերականգնեց իր իշխանությունն այդ տարածքների վրա:

Մինչև XII-րդ դ. 70-ական թթ.՝ պայմանավորված Բյուզանդիայի լուրջ հաջողություններով, Կիլիկյան Հայաստանի և Անտիոքի իշխանության հարա-

¹² **Մ. Չաֆեանց**, նշվ. աշխ., հ. Գ, էջ 51, **Dédéyan G.**, op. cit, t. 2, pp. 518-523.

¹³ **Grousset R.**, op. cit., t. 1, Paris, 1934, p. 51 հմմտ. **Chalandon F.**, *Essai sur le règne d'Alexis Ier Comnène (1081-1118)*, Paris, 1900, p. 235, **հույճի՝ Les Comnène, Études sur l'empire Byzantin au XI et au XII siècles, Jean II Comnène (1118-1143), et Manuel I Comnène, (1143-1180), Paris, 1912, p. 108-109, **Г. Г. Микаелян**, указ. соч., с. 95, 100-101.**

¹⁴ **Alberti Aquensis**, *Historia Hierosolymitana, RHC, Hist. occidentaux*, t. 4, Paris, 1879, pp. 682-683, **Galterii, cancellarii Antiocheni**, *Bella Antiochena, RHC, Hist. occidentaux*, t. 5, Paris, 1895, op. cit., p. 93.

¹⁵ **Willermi Tyrensis Archiepiscopi**, op. cit., p. 619. Ռաուլ Դոմֆրոնտացու մասին տե՛ս **L. Mas Latrie de**, “Les patriarches latins d'Antioche”, *Revue de l'Orient latin*, Paris, № 2 (1894), p. 193, **E. Rey**, “Les dignitaires de la principauté d'Antioche”, *Revue de l'Orient latin*, Paris, № 8 (1900—1901), pp. 133-135, **B. Hamilton**, “Ralph of Domfront, patriarch of Antioch (1135—1140)”, *Univer. of Nottingham*, № 28 (1984), op. cit., pp. 1-22.

¹⁶ **Willermi Tyrensis Archiepiscopi**, op. cit., pp. 623-624.

բերույթյուններում դիրքերի էական փոփոխություն չի նկատվում: Դրանք հիմնականում զարգանում էին սահմանակից մի քանի բերդերի (Դարպսակ, Բաղրաս) պատկանելության վեճերի համատեքստում: Սակայն Կոստանդնուպոլիսի դիրքերի թուլացումը Միրիոկեֆալոնի ճակատամարտից հետո (1176 թ.) սրում է հակասությունները պետությունների միջև, որի առիթ են դառնում.

ա. Կիլիկիայի ներքաղաքական հարցերում Բոհեմունդի միջամտությունը, որն օգնում էր Լամբրոնի Հեթումյաններին¹⁷:

բ. Տարսոնի պատկանելության հարցը, որը Բոհեմունդ III-ը (1163-1201 թթ.) ստիպված վաճառել էր իշխան Ռուբեն III-ին (1175-1187 թթ.)¹⁸:

Այն վերադարձնելու նպատակով Բոհեմունդը 1185 թ. Անտիոք է հրավիրում Ռուբենին ու ձերբակալում նրան¹⁹: Ազատության դիմաց Անտիոքին են զիջվում Թիլը, Ճկերը, Մամեստիան և Ադանան²⁰: Որպես գրավական՝ Անտիոք են ուղարկվում Ռուբենի մայր Ռիտան ու այլ ազգականներ²¹:

Հստ ամենայնի, Ռուբենը նաև վասալական երդում է տվել Բոհեմունդին, որը հետագայում տարածվել է Լևոն II իշխանի վրա (1187-1219 թթ. 1198 թ-ից թագավոր Լևոն I): Կարծիքը հենվում է Լևոնի Անտիոք գնալու, Բոհեմունդի կողմից ասպետ կարգվելու ու նրա մոտ ծառայության անցնելու մասին եղած հաղորդման վրա²², քանի որ ավելի ուշ Լևոնը Անտիոքի հպատակ չի դարձել: Պատահական չէ, որ Լևոն II-ը 1188 թ. կնություն առավ Անտիոքի իշխանուհի Սիբիլայի զարմուհի Իզաբելլային²³:

XII դ. 80-ական թթ. խաչակրաց պետություններին սուլթան Սալահ ադ-Դինի հասցրած հարվածներից անմասն չի մնում նաև Անտիոքի իշխանությունը: Անտիոքի թուլացումը ճանապարհ էր հարթում Կիլիկիայի անվանական

¹⁷ **Սմբատայ Սպարապետի Տարեգիրք**, էջ 193 հմմտ. «Ճաշոց Հեթմոյ Արֆայորդոյ» (ՄՄ 979 ձեռագրի հիշատակարանը), Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դ. (այսուհետ՝ ՀՁՀ ԺԳ դ.), կազմեց Ա. Մաթևոսյան, Երևան, 1984, էջ 586:

¹⁸ Willermi Tyrensis Archiepiscopi, op. cit., pp. 1113-1114.

¹⁹ **Vahram D'Edesse**, Chronique rimée, des rois de la Petite Arménie, RHC, Doc. arméniens, t. 1, Paris, 1869, pp. 509-510, ճաշոց Հեթմոյ Արֆայորդոյ, ՀՁՀ, ԺԳ դ., էջ 586:

²⁰ **Bar Hebraeus**, The chronology of Gregory Abu'l Faraj, Oxford, 1932, pp. 319-320, Միխայել Ասուրի, Ժամանակագրություն, Երուսաղեմ, 1871, էջ 492:

²¹ **Սմբատայ Սպարապետի Տարեգիրք**, էջ 194, **Vahram D'Edesse**, op. cit., p. 510.

²² Լ. Հ. Տեր-Պետրոսյան, նշվ, աշխ., հ. Բ, էջ 160-163:

²³ **Սմբատայ Սպարապետի Տարեգիրք**, էջ 201: Ֆ. Ուպենսկին Իզաբելլային համարում է Բոհեմունդ III-ի աղջիկը: Տե՛ս Փ. Ի. Успенский, История крестовых походов, Москва, 2001, с. 418.

կախվածությունը չեզոքացնելու համար: Կիլիկիայում կորցրած դիրքերը ռազմական ճանապարհով հետ բերելու գիտակցումը այլևս ոչ մի այլ հույս չէր թողնում, քան իր «վասալին» դավադրությամբ պատժելու մասին խորհելը²⁴: Սակայն Լևոնն ինքն է հակաքայլ ձեռնարկում և 1193 թ. գերում է իշխանին²⁵:

1194 թ. կողմերի միջև համաձայնություն է հաստատվում, որը մեծ գիշումներ էր նախատեսում Բոհեմունդի համար²⁶: Ազատության դիմաց իշխանը պարտավորվում էր Կիլիկիային հանձնել Բաղրասից ու Պորտեկայից մինչև Այաս ընկած տարածքները, ընդունել Լևոնի գերիշխանությունը²⁷: Հաշտությունն ամրագրվում էր Բոհեմունդի որդի Ռայմունդի և Լևոնի զարմուհի Ալիծի ամուսնությունից, որոնք ապրելու էին հայոց արքունիքում, իսկ ծնված արու զավակը պետք է ժառանգեր և՛ Անտիոքը, և՛ Կիլիկիան²⁸:

Այսպիսով, Բոհեմունդ III-ի գերությունից և դրան հետևած պայմանագրով Լևոնը ձգտում էր, ի թիվս բազմաթիվ այլ հարցերի, հնարավորություն ու իրավաբանական հիմք ստեղծել հետագայում Անտիոքը Կիլիկիային միավորելու և ավագությունն Անտիոքի նկատմամբ ապահովելու համար:

Վերջին հանգամանքը Լևոնից պահանջում էր ունենալ ավելի բարձր տիտղոս, քան կրում էին Անտիոքի իշխանները: Այս կապակցությամբ Կ. Կաէնը կասկածի տակ դնելով Ստում Բոհեմունդի վասալական երդումը Լևոնին՝ շեշտում է, որ պրինցը չէր կարող հասարակ իշխանի ստորակա դառնալ²⁹: Վերջին փաստն իր հերթին արագացնում էր թագադրման շուրջ տարվող

²⁴ **Chronique d'Ernoul et de Bernard le Trésorier**, Paris, 1871, p. 319, **Les Gestes des Chiprois**, RHC, Doc. arméniens, t. 2, Paris, 1906, p. 661, **C. Cahen**, *La Syrie du nord à l'époque des croisades et la principauté franque d'Antioche*, Paris, 1940, p. 582, **R. Grousset**, op. cit., t. 3, Paris, 1936, pp. 123-129, **Г. Г. Микаелян**, указ. соч., с. 156, **Լ. Հ. Տեր-Պետրոսյան**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 171-172:

²⁵ Նույն տեղում, էջ 204, «Հեթում պատմիչի ժամանակագրությունը», *Մանր ժամանակագրություններ*, XIII-XVIII դդ. (այսուհետ՝ *ՄԺ*, XIII-XVIII դդ.), հ. 2, Երևան, 1956, էջ 60, **Les Gestes des Chiprois**, op. cit., pp. 661-662.

²⁶ Պայմանագրի վերլուծությունը տե՛ս **Լ. Հ. Տեր-Պետրոսյան**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 174-175:

²⁷ **Chronique d'Ernoul et de Bernard le Trésorier**, pp. 320-321, **Les Gestes des Chiprois**, op. cit., p. 662.

²⁸ **Սմբատայ Սպարապետի Տարեգիրք**, էջ 206-207, **Смбат Спарамет, Лемонисъ**, пер. **Галстян А. Г.**, Ереван, 1974, с. 115, հմմտ. **L'estoire de Eracles empereur**, RHC, Hist. occidentaux, t. 2, Paris, 1859, pp. 209-215, *La continuation de Guillaume de Tyr (1184-1197)*, Paris, 1982, p. 170-171, 176-178, «Հեթում պատմիչի ժամանակագրությունը», *ՄԺ*, XIII-XVIII դդ., հ. 2, էջ 60:

²⁹ **C. Cahen**, op. cit., p. 586.

բանակցությունները: Այս կապակցությամբ պահպանվել է հետաքրքիր տեղեկություն Բեռնար Գանձապահի և էննուլի ժամանակագրության մեջ: Հստայգամ, Լեոնը Հենրի Շամպայնացուն Կրիկիայից ճանապարհելուց առաջ դիմում է նրան թագ ստանալու համար հետևյալ խոսքերով. «...Սիր, ես ունեմ բավական հողեր, քաղաքներ և ամրոցներ, բավարար եկամուտներ, որպեսզի դառնամ թագավոր: Անտիոքի իշխանն իմ մարդն է (ենթակայի իմաստով): Խնդրում եմ ինձ թագադրել... Եվ կոմսն ուրախությամբ թագադրեց նրան³⁰»:

Ինչևիցէ, 1201 թ. Բոհեմունդ III-ի մահից հետո Կրիկիան շատ մոտ էր Անտիոքի դքսության վրա վերահսկողություն սահմանելուն: Սաի պայմանագրի համաձայն Անտիոքում գահը ժառանգելու էր Ռայմունդի ու Ալիծի որդին, քանի որ Ռայմունդը արդեն մահացել էր: Մանուկը ծնվել էր Կրիկիայում, որին նրա կնքահայր Լեոն թագավորը անվանեց Ռուբեն³¹: Այս իրավիճակում Անտիոքը Ռուբենի անունից Սահն ենթարկելու նոր հնարավորություն էր ընձեռնվում Լեոն I-ին, սակայն Անտիոքում քաղաքի ազնվականությունը Տրիպոլիից հրավիրում է կրտսեր Բոհեմունդին և հոր մահվան օրն իսկ նրան հռչակում Անտիոքի իշխան³²: Լեոնը հարկադրված էր վերադառնալ Կրիկիա:

Արդեն 1203 թ. նոյեմբերին Լեոնը նոր հարձակում է կազմակերպում Անտիոքի դեմ, բայց քաղաքում բախվելով Տաճարականների դիմադրությանը³³, որոնց օգնության էին շտապում նաև Հալեպի սուլթան Ալ-Մելիք ալ-Ջահիրի (1186-1216 թթ.) զորաբանակները, նահանջում է³⁴: Վերջինս 1205-1206 թթ. լուրջ հակահարվածներ ստացավ Լեոնի կողմից³⁵:

³⁰ Bernard le Trésorier, *Continuation de Guillaume de Tyr*, Paris, 1824, pp. 240, 242-243, *Chronique d'Ernoul et de Bernard le Trésorier*, pp. 322-323. Այստեղ, անկասկած, հեղինակը շփոթում է թագադրման հարցի կապակցությամբ տարվող բանակցային կողմերի անձերը Հենրի Շամպայնացուն ու Գերմանիայի կայսեր Հենրի VI-ին: Լեոնը թագ ստացավ վերջինից միայն 1198 թ.:

³¹ Սմբատայ Սպարապետի *Տարեգիրք*, էջ 207, *Chronique d'Ernoul et de Bernard le Trésorier*, p. 321, *La continuation de Guillaume de Tyr (1184-1197)*, p. 176.

³² *L'estoire de Eracles empereur*, op. cit., pp. 228-230, 313, *Chronique ...*, p. 321 հմմտ. Սմբատայ Սպարապետի *Տարեգիրք*, էջ 214, *Les Gestes des Chiprois*, op. cit., p. 663.

³³ *Les Gestes des Chiprois*, op. cit., p. 663, «Հերոս պատմիչի ժամանակագրությունը», *Մժ*, XIII-XVIII դդ., հ. 2, էջ 61:

³⁴ *Chronique ...*, pp. 322, 342, «Հերոս պատմիչի ժամանակագրությունը», *Մժ*, XIII-XVIII դդ., հ. 2, էջ 86, Աբու-Լ-Ֆիդա, *Ժամանակագրություն, Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին*, Երևան, 1965, էջ 228: Մանուսաներ տե՛ս R. Grousset, op. cit., t. 3, pp. 247-248.

³⁵ Վ. Տե-Ղևոնդյան, Ա. Բոզոյան, Ռ. Շոմուրով և Գ. Դանիելյան, *Կրիկյան Հայաստանը սահմանակից պետական միավորների ընկալումներում*, Երևան, 2016, էջ 137.

Անտիոքի հպատակեցման հարցում Լևոն I-ը փորձում էր օգտագործել նաև Տրիպոլիում և Անտիոքում Բոհեմոնդի դեմ ծագած դժգոհությունները: Լատին պատրիարք Պետրոս Անգուլեմացու (1196-1208 թթ.) գլխավորությամբ Անտիոքում տեղի ունեցող շարժմանը 1208 թ. օգնության հասան հայկական ուժերը: Ապստամբները Լևոնի առաջ բացում են դարպասները, Պետրոս Անգուլեմացին Ռայմունդ-Ռուբենին հռչակում է Անտիոքի իշխան: Բոհեմոնդ Միականին Տաճարականների գորակցությամբ այս անգամ ևս հայերին հեռացնում է քաղաքից՝ նորից հայցելով ալ-Ջահիրի ու Իկոնիյի սուլթան Քեյ խոսրով I-ի (1192–1196, 1205–1211 թթ.) օգնությունը³⁶:

Գեպքերի նման զարգացումը ստիպում է Լևոն I-ին վերանայել քաղաքականությունը Տաճարականների հետ ու նոր մակարդակի վրա բարձրացնել Ռայմունդ-Ռուբենի իրավունքները՝ փորձելով միարժամանակ ի ցույց դնել նրա օրինական կախվածությունն իրենից: Այսպես, նա 1209 թ. Ռայմունդ-Ռուբենին հռչակում է նաև իր թագաժառանգ, իսկ 1210 թ. Հոռմի պապի և Գերմանիայի կայսեր կողմից ստանում նրա համար խնդրած թագը³⁷:

Անտիոքի ժառանգության համար պայքարում շրջադարձային եղավ 1216 թ.: Տեղեկանալով Բոհեմոնդի Տրիպոլիում գտնվելու մասին՝ Լևոնը 1216 թ. փետրվարին շարժվում է Անտիոք, որտեղ պատրիարք Պետրոս Լաչեղոնացին Ռայմունդ-Ռուբենին կրկին հռչակում է Անտիոքի իշխան³⁸:

Թվում է՝ Լևոնին վերջապես հաջողվեց միավորել Կիլիկիան և Անտիոքը, սակայն նստելով դքսության գահին, Ռայմունդ-Ռուբենը փորձում է ընդհանրապես ազատվել նրա խնամակալությունից ու Հայոց թագավորին վանում Անտիոքից³⁹: Այս իրադարձությունը կարելի է համարել Լևոնի ծրագրի ավարտ, քանի որ Ռայմունդ-Ռուբենն արդեն չափահաս էր և նրա անունից Անտիոքը կառավարելու ոչ մի օրինական հիմք ինքն այլևս չուներ, իսկ նրան

³⁶ L'histoire de Eracles empereur, op. cit., pp. 313-314 հմմտ. Աճառուն Եղեսացի, նշվ. աշխ., էջ 171-172: Մանրամասներ տե՛ս Ս. Պապիկեան, «Հայերը և խաչակիրները», Հանդէս Ամսօրեայ, Վիեննա, № 10-12 (1965 թ.) էջ 506, Վ. Տեր-Ղևոնդյան, Ա. Բոզոյան, Ռ. Շոխրով և Գ. Դանիելյան, նշվ. աշխ. էջ 93-96.

³⁷ Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 217:

³⁸ Les Gestes des Chiprois, op. cit., p. 665, Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 219, L'histoire de Eracles empereur, op. cit., p. 318, «Հեթում պատմիչի ժամանակագրությունը», ՄԺ, XIII-XVIII դդ., հ. 2, էջ 63:

³⁹ Bar Hebraeus, op. cit., p. 370, L'histoire de Eracles empereur, op. cit., p. 347. Մանրամասներ տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները և հայերը, հ. Բ, էջ 225-227:

ուղղակիորեն ղեկավարելու ջանքերը շարդարացան: Ռայմունդ-Ռուբենի ապաշնորհությունն ամբողջությամբ երևաց Անտիոքում կառավարելու տարիներին, երբ վարած քաղաքականության արդյունքում իր դեմ տրամադրեց նաև դաշնակիցներին: Դժգոհությունը նրանից այնքան մեծ էր, որ 1219 թ. կեսերին Բոհեմունդ IV-ի կողմնակիցները վերականգնեցին նրա իշխանությունը⁴⁰:

Անտիոքի վրա վերահսկողություն հաստատելու Լևոնի փորձերը թեև լուրջ հաջողություններ ունեցան, սակայն վերջ ի վերջո նա իշխանությունում հանդիպեց լատին ասպետների դիմադրությանը և չկարողացավ վերջնականապես ամրապնդվել Անտիոքում: Իսկ նրա մահից հետո Կիլիկիայում ծավալված գահակալական վեճերն արդեն հնարավորություն են ընձեռում իշխանությանը միջամտելու հայկական պետության ներքին գործերին: Երկար վիճաբանություններից հետո հայ ավագանին վճռում է Լևոն արքայի դստերը կնություն տալ Բոհեմունդ IV Միականու կրտսեր որդուն՝ Ֆիլիպին⁴¹, որից հետո Կիլիկիային տիրանալու Անտիոքի իշխանների նկրտումներն ավելի հավանական էին դառնում, քան երբևէ: Այսպես.

- Ֆիլիպը Բոհեմունդ IV-ի խորհրդով պաշտոնանկ է անում հայ իշխաններին ու նրանց փոխարինում Անտիոքից հրավիրված ու դրածոներով⁴².

- Լևոնի ու նրա նախնյաց հարստությունը յուրացնում և մաս-մաս ուղարկում է Անտիոք⁴³.

- Ֆիլիպի կառավարման ընթացքում Բոհեմունդը խորամանկությամբ կարողացել էր որդուց կորզել մեծ քանակությամբ արծաթ ու ոսկի, ինչպես նաև Լևոն II-ի թագն ու գահը, որն Անտիոքում գրվում էր միայն հանդիսավոր օրերին⁴⁴.

⁴⁰ *Les Gestes des Chiprois*, op. cit., pp. 665, 670 հմմտ. **L'Estoire de Eracles empeureur**, op. cit., pp. 318, 348-349, «Հեթում պատմիչի ժամանակագրությունը», ՄԺ, XIII-XVIII դդ., հ. 2, էջ 63:

⁴¹ **С. Спарамет**, указ. соч., с. 127 հմմտ. **Bar Hebraeus**, op. cit., p. 380, **Michel Le Syrien**, *La chronique*, RHC, Doc. arméniens, t. 1, Paris, 1869, pp. 407-408, **Լ. Հ. Տեր-Պետրոսյան**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 247:

⁴² **С. Спарамет**, указ., соч., с. 128, «Հեթում պատմիչի ազգաբանական աշխատությունները», ՄԺ XIII-XVIII դդ., հ. 2, էջ 104-105, **Bar Hebraeus**, op. cit., p. 380, **Michel Le Syrien**, op. cit., p. 407.

⁴³ **Սմբատայ Սպարապետի Տարեգիրք**, էջ 225, **Կիրակոսի Գանձակեցոյ, Պատմութիւն Հայոց**, աշխատասիրությամբ **Կ. Ա. Մելիք-Յանջանյանի**, Երևան, 1961, էջ 189, **Վարդանայ Վարդապետ**, *Հաւաքումն պատմութեան*, Վենետիկ, 1862, էջ 143:

⁴⁴ **Դավիթ Բաղիշեցու ժամանակագրությունը**, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 2 էջ 344, **Կիրակոսի Գանձակեցոյ**, նշվ. աշխ., էջ 189, **Վարդանայ Վարդապետ**, նշվ. աշխ., էջ 143, **De Vardan**

- Ֆիլիպը լիովին գտնվում էր հոր հսկողության տակ և ըստ Միքայել Ասորո՝ նա անգամ խաբվել է Բոհեմոնդի կողմից⁴⁵:

Նման քաղաքականությունը հայերի մոտ նույնիսկ իրենց երկիրը ֆրանկների կողմից գրավված տեսնելու վախ էր ներշնչում⁴⁶, այդ պատճառով երկրի ավագանին Կոստանտին Պալլի գլխավորությամբ հաշվեհարդար է տեսնում Ֆիլիպի հետ: Այս իրադարձությունների արդյունքում հայ-անտիոքյան հարաբերությունները բավական սրվում են, բայց և ավարտվում են նույնքան անսպասելի՝ մոնղոլների ու մամլուքների ծավալվող հակամարտությանը զուգահեռ: Նման ուժերին դիմակայելու միակ երաշխիքը մնում էր համատեղ պայքարը:

Անտիոքի ու Կիլիկիայի միջև ծավալված երկխոսությունը վերջնականապես ամրապնդվում է Բոհեմոնդ VI-ի (1252-1268 թթ.) և Հեթում I-ի (1226-1270 թթ.) դուստր Սիբիլլայի ամուսնությամբ⁴⁷: Հարցին անդրադարձած մի շարք պատմաբանների կարծիքով ամուսնությունը հաջորդել են հետևյալ փոփոխությունները Կիլիկիա-Անտիոք հարաբերություններում⁴⁸.

ա. Ամուսնությունից հետո Բոհեմոնդը դարձել է Հեթում արքայի վասալը:

բ. Հայերը համաձայնել են կիսել Անտիոքի պաշտպանության պատասխանատվությունը:

գ. Այնուհետ իշխանությունն ամբողջությամբ գործել է Կիլիկյան Հայաստանի քաղաքական համակարգում:

Որպես այդ ազդեցության իրական արտացոլում համարում են.

- Բոհեմոնդի և Հիվանդախնամ միաբանների միջև պայմանավորվածության ձեռքբերման հարցում Հեթումի միջամտությունը,

le Grand, L'histoire universelle, RHC, Doc. arméniens, t. 1, Paris, 1869, 442-443. Կիրակոս Գանձակեցու օգտագործած «պատալն» բառը բացատրվում է որպես զահ կամ վրան: Տե՛ս Գ. Գ. Микаелян, указ. соч., с. 293, Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ-Ս. Ղազար, 1885, էջ 94:

⁴⁵ Michel Le Syrien, op. cit., p. 407.

⁴⁶ Իբն Ալ-Ասիր, Կիսկատար պատմություն, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 11, Արարական աղբյուրներ, գիրք Բ, Երևան, 1981, էջ 332:

⁴⁷ Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 230, 231, Bernard le Trésorier, op. cit., p. 553, L'Estoire..., op. cit., p. 442, «Հեթում Բ-ի տարեգրությունը», ՄԺ XIII-XVIII դդ., հ. 1, էջ 81, «Հեթում պատմիչի ազգաբանական աշխատությունները», ՄԺ, XIII-XVIII դդ., հ. 2, էջ 105:

⁴⁸ S. Runciman, A history of the Crusades, t. 3, London-New York, 1954, p. 287, Լ. Հ. Տեր-Պետրոսյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 70-71, R. Grousset, op. cit., t. 3, pp. 515-516.

- 1259 թ. Անտիոքի դքսի դեմ Տրիպոլիում ծագած ապստամբության ճնշման հարցում Հեթումի դերը,

- Իշխանությունը մոնղոլների հետ եռակողմ դաշինքի մեջ ներքաշելու փաստերը:

Կարևորելով հանդերձ մեծանուն գիտնականների եզրակացությունները՝ փորձենք առանձին-առանձին անդրադառնալ նշված հանգամանքներին:

Աղբյուրների տեղեկությունները ստիպում են ավելի շատ խոսելու փոխադարձ այցելություններով ամրապնդված ֆրանկո-հայկական կայուն դաշինքի⁴⁹, քան փաստացի վասալության մասին: Քննարկելով Անտիոքի իշխանի ու նրա հակառակորդների միջև Հեթում թագավորին վերագրվող միջամտությունների դեպքերը՝ նշենք.

ա. Հիվանդախնամների մագիստրոս Գիյոմ դե Շատոնյոֆը (1243-1258 թթ.), դեռևս 1256 թ. Բոհեմունդի հետ եկել էր նախնական համաձայնության: 1259 թ. Անտիոքի իշխանի և միաբանների նոր մագիստրոս Հյուգո դե Ռեելի (1258-1277 թթ.) միջև ստորագրվում է մեկ այլ համաձայնագրություն, որը կոչված էր դադարեցնելու Երուսաղեմի գահաժառանգության համար մղվող քաղաքացիական պատերազմը: Ավելացնենք նաև, որ այսքանով Բոհեմունդ VI-ի ու Հիվանդախնամների միջև հակասությունները վերջնական լուծում չստացան: Բերված փաստերը չեն խոսում Անտիոքի ու Հիվանդախնամների հաշտեցման ընթացքում Հեթումի որևէ լուրջ դերակատարության մասին:

բ. 1259 թ. Հեթումը 200 մարտիկներով նավարկում է Տրիպոլիի կոմսություն և օգնում Բոհեմունդին ապստամբությունը ճնշել⁵⁰: Այնուամենայնիվ, Հեթումի ցույց տված օգնությունը դժվար է դիտել որպես «սյուզերենի պարտավորությունների կատարում», առավել ևս, որ այդ ապստամբությունը ծագել էր այնպիսի հավակնոտ ծրագրի արդյունքում, ինչպիսին էր Բոհեմունդի պայքարը Երուսաղեմի ու Կիպրոսի թագավորությունների խնամակալ հռչակվելու համար⁵¹: Ուստի դժվար է այն համարել միջամտություն Անտիոքի ներքին գործերին:

⁴⁹ Սմբատայ Սպարապետի *Տարեգիրք*, էջ 231:

⁵⁰ Նույն տեղում, էջ 234, «Հեթում պատմիչի ժամանակագրությունը», *Մժ, XIII-XVIII դդ.*, հ. 2, էջ 70, «Հեթում Բ-ի տարեգրությունը», *Մժ, XIII-XVIII դդ.*, հ. 1, էջ 82:

⁵¹ L'Estoire ..., op. cit., pp. 439, 443, 634-635, Bernard le Trésorier, op. cit., էջ 555, Les Gestes des Chiprois, op. cit., pp. 742-744, 780, «Հեթում պատմիչի ժամանակագրությունը» *Մժ, XIII-XVIII դդ.*, հ. 2, էջ 68, Kenneth M. Setton, *History of the Crusades*, t. 2, Wisconsin, 1969, pp. 569-570.

գ. Անտիոքի հետ Կիլիկիայի ռազմաքաղաքական դաշինքի ավելի ցայտուն օրինակ է նրանց դաշինքը մոնղոլների հետ: Այստեղ Հեթումի դերը միանշանակ ընդգծվում է, սակայն Բոհեմունդի որոշումը պետք է դիտարկել ոչ թե Հայոց թագավորի ազդեցության, այլ սեփական շահերի պաշտպանության տեսանկյունից:

Մոնղոլների հետ դաշինքը կարևորվում էր նրանով, որ այդ նոր ուժի ի հայտ գալուց հետո Կիլիկիան և Անտիոքը միայն միասնական գործողությունների շնորհիվ կարող էին գոյատևել: Բացի այդ, օգտվելով հովանավորությունից, նրանք հնարավորություն էին ստանում վերադարձնել կորցրած տարածքները: Այդ դաշինքի նպատակահարմարության մեջ Հեթումը կարողացավ համոզել նաև Անտիոքի իշխանությանը: Չնայած Բոհեմունդ VI-ը սկզբում մերժեց մոնղոլների պայմանները, բայց Բաղդադի հառանի, Եդեսիայի ու Սրուճի հպատակեցումից հետո⁵², Անտիոքի սահմաններին հասած Հուլավու խանը այլ ընտրության չէր թողնում Բոհեմունդին⁵³: Գործք Կիպրացոցն այս առնչությամբ նշում է. «Չքնաղ իշխան Բոհեմունդը մեծ ընդունելության արժանացավ հզոր արքա Հուլավուի կողմից, քանի որ իշխանը հայոց արքայի փեսան էր...: Նրանք պետք է միանային թաթարներին և առաջանային սարացիներին (կամ սարակինոսներին) ձեռքում գտնվող Դամասկոս»⁵⁴: Այս տեղեկությունն այն առանցքն է, որի հիման վրա Բոհեմունդի ներքաշումը հակամամլուքյան դաշինքի մեջ դիտվում է որպես Անտիոքի վրա Կիլիկիայի քաղաքական ազդեցության հետևանք: Բայց սա ավելի շատ ընդգծում է Հեթումի լավ փոխհարաբերությունները Հուլավուի հետ, քան Անտիոքի իշխանի կախվածությունը նրանից: Բացի այդ, Բոհեմունդը դաշինքի դիմաց մոնղոլներից այնպիսի առաջարկներ ստացավ, որ դժվար է պատկերացնել, թե որևէ մեկը կարող էր դրանցից հրաժարվել:

Հուլավուն խոստացավ հաջողության դեպքում Անտիոքին վերադարձնել անդրորոնտյան բոլոր տարածքները, որոնք մահմեդականների ձեռքում էին⁵⁵: Չնայած ստեղծված դաշինքի սկզբնական հաջողություններին, ի վերջո մոն-

⁵² Bar Hebraeus, op. cit., pp. 509.

⁵³ А. А. Доманин, *Крестовые походы под сенью креста*, Москва, 2005, с. 352 հմմտ. Ж. Ришар, *Латинно-Иерусалимское королевство*, СПб, 2002, с. 349, 350.

⁵⁴ Les Gestes des Chiprois, op. cit., pp. 751.

⁵⁵ Haytonus, *Flos historiarum terre Orientis*, RHC, Doc. arméniens, t. 2, Paris, 1906, p. 302.

ղոլները ծանր պարտություն կրեցին մամուլքներից, որին հետևեցին նրանց տատժիչ արշավանքները Կիլիկիա և Անտիոք 1266 և 1268 թթ.: Այդ հարվածների արդյունքում Անտիոքի իշխանությունը դադարեց քաղաքական միավոր լինելուց՝ վերջ դնելով նաև Կիլիկյան Հայաստանի հետ երկարատև մրցակցության պատմությանը:

Ամփոփելով, նշենք, որ Անտիոք-Կիլիկիա հարաբերություններում ավագությունը պայմանավորում էր հիմնականում կողմերից մեկի ռազմաքաղաքական առավելությունը տվյալ պահին: Կիլիկիայում և Անտիոքում հաստատված արքունիքները երբեք մեկ ավատական համակարգի մաս չեն կազմել: Մինչև թագավորության հռչակումը հայ իշխանները ճանաչվում էին որպես Բյուզանդիայի վասալներ, իսկ Անտիոքի իշխանությունը պաշտոնապես մնում էր որպես Երուսաղեմի թագավորության մաս: Բացառություն են կազմում միայն Բյուզանդիայի կողմից Անտիոքին պարտադրված հաշտությունները, որտեղ Անտիոքի իշխանները ընդունում էին նաև կայսեր գերակայությունը՝ միաժամանակ մնալով Երուսաղեմի թագավորության մաս: Ստեղծվում էր բավական բարդ ավատական փոխհարաբերությունների խճճված շղթա, սակայն դրանց կարգավորման համար անհրաժեշտ ժամանակի և ուժերի բացակայությունն ամեն անգամ իրերի դրությունը վերադարձնում էին ելման կետ: Բյուզանդական զորքերի հետքաշումից շատ չանցած Անտիոքի իշխանները խախտում էին պայմանագրերով ստանձնած գրեթե բոլոր պարտավորությունները:

Կայսրության թուլացումը տարածաշրջանում աներկբա ստեղծում էր մի իրավիճակ, երբ երկու երկրների իշխող վերնախավերը փորձում էին մյուս կողմին պարտադրել իրենց գերակայությունը: Քանի որ նրանցից ոչ մեկը, տարբեր պատճառներով, չէր կարող հավակնել հարևան պետության ուղղակի գրավմանը, ուստի փորձ էր արվում քաղաքական ազդեցության տարածելու միջոցով վերահսկել իրավիճակը գոնե Գաշտային Կիլիկիայի ու սահմանակից բերդերի պարագայում: Բացի տնտեսական, առևտրային կարևորությունից, դրանց վերահսկումը հնարավորություն էր տալիս ապահովել ռազմավարական առավելություն մյուս կողմի նկատմամբ:

Համադրելով բազմաթիվ իրարամերժ տեղեկությունները՝ կարող ենք ընդգծել, որ Անտիոքի իշխանության սկզբնական ավագությունը հայկական պետության նկատմամբ աստիճանաբար վերափոխվեց Կիլիկիայի թագավորության առավելությանը: Մի շարք հետազոտողներ իշխանության գոյության

վերջին տասնամյակները նույնիսկ ամբողջությամբ պայմանավորում են Հայոց թագավորության քաղաքականությանը, բայց փաստերի համադրումը մի փոքր ավելի բարդ պատկեր է ստեղծում:

VAHE AVETISYAN

**THE QUESTION OF POLITICAL INFLUENCE IN THE
RELATIONS BETWEEN THE PRINCIPALITY OF ANTIOCH
AND CILICIAN ARMENIA**

Key words: Crusades, Byzantine Empire, chivalric-religious orders, feudal systems, Kingdom of Jerusalem, Mongol invasions.

As a result of the First Crusade in the Middle East, four Latin states were formed. Of these, the Principality of Antioch from the very beginning of its existence laid claim to Cilicia which then belonged to the Byzantine Empire. With the strengthening of the Cilician Armenian state and the gradual weakening of the Empire, the question as to the ownership of these territories arose. Since Antioch lacked necessary forces for direct control over the disputed territories, the only possible way to achieve the desired goal was to make an attempt of political influence on the Armenian Court. However, from a certain moment the Armenian nobility itself resorted to this method of influence on the Principality of Antioch.

ВАЗ АВЕТИСЯН

**ВОПРОС ПОЛИТИЧЕСКОГО ВЛИЯНИЯ ВО ВЗАИМОТНОШЕНИЯХ
МЕЖДУ АНТИОХИЙСКИМ КНЯЖЕСТВОМ И
КИЛИКИЙСКОЙ АРМЕНИЕЙ**

Ключевые слова: крестовые походы, рыцарско-монашеские ордена, феодальные системы, Иерусалимское королевство, монгольские завоевания.

В результате первого крестового похода на Ближнем Востоке образова-

лись четыре латинских государства. Из них Антиохийское княжество уже с самого начала своего существования претендовало на Киликию, принадлежащую тогда Византии. В условиях усиления Киликийского армянского государства и постепенного ослабления Византийской империи, встал вопрос о принадлежности этих территорий. Отсутствие у Антиохийского княжества необходимых для прямого контроля над спорными территориями сил, сделало попытки политического влияния на армянский двор единственным возможным способом достижения желаемого. Однако с определенного момента сама армянская знать прибегла к этому методу для воздействия на Антиохийское княжество.

**ԹՅՈՒՐՔԱԿԱՆ ՑԵՂԵՐԻ ԲՆԱԿԵՑՈՒՄԸ
ՀՅՈՒՄԻՍԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍԵՖՅԱՆՆԵՐԻ ՕՐՈՔ
(XVI-XVII ԳԴ.)**

Բանալի բառեր՝ Հյուսիսարևելյան Հայաստան, էթնոսոցիոլոգագրություն, թյուրքական ցեղ, Օսմանյան կայսրություն, Սեֆյան Իրան, Լենկ Թեմուր, Ղզլբաշ, տեղահանություն, Տավուշ:

Մեծ Հայքի Գուգարք աշխարհը, ինչպես նաև Ուտիքի ու Արցախի վերնագավառները կազմում են աշխարհագրական այն միջավայրը, որն ընդհանրական անվամբ սովորաբար կոչվում է Հյուսիսարևելյան Հայաստան: Վերջինիս էթնոսոցիոլոգագրական պատկերի վերհանման, այնտեղ զանազան օտար ցեղերի ներթափանցման, բնակեցման ու տեղաբաշխվածության խնդիրները գիտական մանրագնին քննության չեն ենթարկվել: Ճիշտ է, Հյուսիս-արևելյան Հայաստանում ազգաբնակչության կազմի մեջ փոփոխությունները սկսվել են դեռևս XI դարում՝ թյուրքական ցանազան ցեղերի ներթափանցման հետևանքով և շարունակվել մոնղոլների, ինչպես նաև կարա-կոյունլու ու ակ-կոյունլու թյուրքմենական պետությունների տիրապետության ժամանակաշրջանում, սակայն, վճռորոշը XVI-XVII դդ. ժամանակահատվածն է: Իրանից ելնելով անդրադառնանք Սեֆյանների օրոք Մեծ Հայքի Գուգարք նահանգի հյուսիսարևելյան գավառներում, ինչպես նաև Ուտիքի ու Արցախի վերին գավառներում թյուրքական ցեղերի վերաբնակեցմանը:

XVI դ. Հայաստանը ենթարկվում է մահմեդական երկու խոշոր պետությունների՝ Օսմանյան կայսրությանը ու Սեֆյան Իրանին: Ի տարբերություն առաջինի, որն արդեն գտնվում էր իր հզորության գագաթնակետին, Սեֆյան Իրանը ձևավորվեց XVI դ. սկզբում: Երբ Լենկ Թեմուրը մեծ ավարով ու գերիների անթիվ բազմությամբ վերադառնում էր Փոքր Ասիայից, ցանկացավ հանդիպել շեյխ Սեֆիին, որը հյուսիսային Ասորպատականի Արդաբիլ քաղաքում գործող շիա մուսուլմանական հայտնի միաբանության/հոսանքի առաջնորդն էր: Լենկ Թեմուրը

շեյխ Սեֆիի սրբակեցությունը ու իմաստնությունը խիստ տպավորված՝ ցանկացավ որևէ ընծա տալ նրան: Ի վերջո Սեֆին խնդրեց, որ Լենկ Թեմուրն ազատի գերինների այն բազմությունը, որոնց բերում էր Փոքր Ասիայից: Հենց այս գերինները, որոնք Թյուրքական զանազան ցեղեր էին, հետագայում դարձան Սեֆյան Իրանի հիմնական զինյալ ուժը¹: Լենկ Թեմուրը նաև զգալի արտոնություններ շնորհեց Արդաբեյլին, մասնավորապես ազատելով մի շարք հարկերից²: Սեֆյանների հիմնական հենարանը դարձան Թյուրքական քոչվոր ցեղերը, որոնք հետագայում ստացան ղզլբաշ անվանումը:³ Այս ցեղերի մի մասն ուներ բուն օղուզական ծագում, իսկ մյուսը մասը սերում էր միջինասիական Թյուրքերից: Հետագայում Սեֆյանների գերիշխանության տակ անցան նաև զանազան քոչվոր ցեղեր, որոնք ևս հիշատակվում են ղզլբաշ անվամբ: Օսմանյան կայսրության հետ երկարամյա պատերազմները Սեֆյան շահերին ստիպում էին ավելի ուշադիր լինել իրենց տերության հպատակների նկատմամբ: Իսմայիլ շահի (1502-1524) հաջորդները, հատկապես Թահմասպ I շահը (1524-1576), կարևորում էին դավանական գործոնը՝ համոզված լինելով, որ ընդունելով շիայականություն/ շիա ուղղությունը, պետության հյուսիսային շրջաններում տեղաբախշված ցեղերն ավելի օգտակար ու վստահելի կլինեն թուրքական զորքերի դեմ պատերազմներում⁴: Սկզբնական շրջանում ղզլբաշ ցեղերի ազդեցությունը շատ մեծ էր, սակայն Շահ Աբաս I-ի (1587-1629) բարեփոխումներից հետո իրավիճակը փոխվեց: Աստիճանաբար Սեֆյանների տերության մեջ սկսում է ավելի ընդլայնվել պարսկական տարրի ազդեցությունը: Շահ Աբասի օրոք միայն սահմանային շրջաններում էր հանդուրժվում ղզլբաշ ցեղապետերի իշխանությունը⁵:

Սեֆյանների հսկայածավալ պետության մեջ հայկական տարածքները հիմնականում ներառված էին Երևանի, Ղարաբաղի, Շիրվանի ու Թավրիզի բեկլարբեկություններում: Բեկլարբեկության գլուխ կանգնած էին բեկլարբեկերը: Հյուսիսարևելյան Հայաստանի մի քանի գավառներ էլ մտնում էին Քարթլի-Կախեթի վրացական թագավորության մեջ: Բեկլարբեկեր նշանակվում էին առավելապես

¹ Առ, Հայոց պատմություն, հ. 3, Երևան, 1946, էջ 43:

² Iskander beg Monshi, *History of Shah Abbas the Great*, vol. 1, Boulder, Colorado, 1930, p. 28.

³ И. П. Петрушевский, *Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI-начале XIX вв.*, Ленинград 1949, с. 68.

⁴ А. А. Рахмани, «Тарих-и алам арай-и Аббаси» как источник по истории Азербайджана, Баку, 1960, с. 43.

⁵ И. Петрушевский, указ. соч., с. 81.

ղզլբաշական ցեղերի տարբեր ճյուղերի ներկայացուցիչներ: Նրանց ձեռքում էր կենտրոնացված բեկլարբեկության ռազմական ու վարչական ամբողջ իշխանությունը: Բեկլարբեկերը նշանակումից հետո սովորաբար իրենց ամբողջ ցեղախմբով հաստատվում էին իրենց ենթակա տարածքում՝ իսկական պատուհաս դառնալով հայ բնակչության համար: Այսպես, օրինակ, Թահմասպ I-ը էմիր Շահվերդի սուլթան Զիյադօղլուին, որը ղաջարների ցեղից էր, նշանակում է Ղարաբաղի բեկլարբեկ: Հետագա տարիներին ղաջարների ցեղապետերը հակասություններ ունեցան շահերի հետ, որից հետո նրանց մի մասը տեղափոխվեց Շիրվան, իսկ մի մասն էլ մնալով Ղարաբաղում՝ թուրքական արշավանքների ժամանակ տեղափոխվեց Արդաբիլ: Սակայն մի քանի տարի անց Շահ Աբասը ղաջարներին կրկին վերադարձրեց Ղարաբաղի էյալեթ և նրանց ցեղապետերին կրկին բեկլարբեկ դարձրեց⁶: Այս կամ այն տարածքում նշանակված բեկլարբեկն իր հետ այդտեղ հաստատում էր նաև վասալ մի շարք մանր ցեղախմբերի, ինչն էլ հետագայում նրանց համար դառնում էր ամուր հենարան⁷:

Հայկական բնակավայրերում Սեֆյանների օրոք հաստատված թյուրքական ցեղերից ամենամեծը վերոնշյալ ղաջարական ցեղն էր: Ի. Շոպենի հաղորդած տվյալների համաձայն՝ այդ ցեղը մոնղոլական հորդանների կազմում ներխուժել է Փոքր Ասիա⁸: Այնուհետև նրանք բնակություն են հաստատել Սիրիայի տարածքում, ապա Լենկ Թեմուրի կողմից բնակեցվել Պարսկաստանում: Շահ Աբասի օրոք նրանք բաժանվում են երեք մասի: Նրանց մի մասին Աբասը բնակեցնում է Գանձակում, մյուս մասին՝ Մերվում, իսկ մի հատվածին՝ Մազանդարանում⁹: Նրանց Գանձակում հաստատելով շահն իր պետության հյուսիսային սահմանը ամրապնդում էր լեզգիների հարձակումներից, ինչպես նաև հզոր հակազիռ էր ստեղծում վրացական կիսանկախ թագավորության համար: Այս ցեղախումբը խիստ ազդեցիկ էր: Ուստի այն բաժանելով և տարբեր վայրերում բնակեցնելով խորամանկ տիրակալը նաև լուծում էր ներքին խնդիր, որովհետև այդ ցեղախումբը քանիցս մասնակցել էր գահակալական կռիվներին: Պատահական չէ նաև, որ հետագայում իշխանությունն ուժով գրաված և 1796 թ. շահ հռչակված Աղա Մահմադ խանը ղաջարների ցեղից էր:

XVI դ. վերջում Կուրի հովտում հաստատվել էր ղազախու-ղազախ թյուր-

⁶ Iskander Munshi, op. cit., p. 390.

⁷ И. Петрушевский, указ. соч., с. 126.

⁸ Шопен И., Исторический памятник состояния Армянской Области, в эпоху ее присоединения к Российской империи, Санкт Петербург, 1852, с. 531.

⁹ Նույն տեղում:

քական ցեղը: Այս մասին առաջին տեղեկությունները հայտնում է Իսկանդեր Մունշին: Երբ 1588 թ. Վրաստանն ասպատակելուց հետո թուրքերը Ֆարհադ փաշայի հրամանատարությամբ իրար հետևից սկսում են գրավել Սեֆյանների տիրույթները, զազախու ցեղը մնում է այստեղ: Նրանք չեն հետևում այն ցեղերի¹⁰ օրինակին, որոնք ժամանակավորապես հեռանում են: Ղազախու ցեղի առաջնորդ Նազար սուլթան Ղազախուն ընդունում է թուրքերի գերիշխանությունը¹¹: Այնուհետև Ֆարհադ փաշան որոշ ժամանակ կանգ է առնում այստեղ և ձեռնարկում Գանձակի ամրոցի կառուցումը: Կարճ ժամանակ անց, երբ Շահ Աբասը կրկին այս տարածքները վերանվաճում է, զազախու ցեղի առաջնորդն ընդունում է պարսկական գերիշխանություն: Ավելին, 1605 թ. նրա որդի Շամս-ադ-դին խանը Շահ Աբասից ստանում է խանական տիտղոս, ինչպես նաև՝ կալվածքներ Շիրվանում¹²: Այսպիսով, մերթնդմերթ տիրափոխ լինելով զազախու ցեղը կարողանում է ավելի շատ տարածքներ զբաղեցնել: Հետագա տարիների գրավոր հիշատակարաններում ու սկզբնաղբյուրներում Աղստեի ստորին հովտի մեծագույն մասը հիշատակվում է Ղազախ ձևով, ինչը կապված էր այդ ցեղի անվան հետ: Հատկանշական է, որ Շահ Աբասը առանձնակի դաժանությամբ էր վարվում սուլանի մահմեդականների հետ: Առաքել Դավրիժեցին՝ մանրամասն ներկայացնելով շահի նվաճումները, հաղորդում է, որ երբ Գանձակը գրավվեց թուրքերից, այնտեղ բնակվող սուլանի մահմեդական չեկիրլու ցեղն ամբողջությամբ կոտորվեց¹³:

XVII դ. ֆրանսիացի հայտնի ճանապարհորդ Ժան Շարդենը, որը ուղևորվում էր Թիֆլիսից դեպի Պարսկաստան, անցնելով հայկական բնակավայրերով, բավական ուշագրավ տեղեկություններ է հաղորդում նաև Հայաստանի հյուսիսարևելյան շրջանների բնակչության վերաբերյալ: Մանրամասն նկարագրելով Թիֆլիս-երևան երթուղին նա նշում է. «4-րդ օրը կեսօրին մենք հասանք մի բնակավայրի, որն ուներ 300 տուն, այն կոչվում էր Դելիջան... Այն տեղակայված է Աղստե գետի մոտ, բարձր և սարսափելի լեռան լանջին, որը պատկանում էր այն լեռնաշղթային, որը մենք անցնում էինք նախորդ օրերից... Կան գյուղեր, որոնք տեղակայված են այնպիսի բարձր լեռների վրա, որ ճամփորդը դժվարությամբ

¹⁰ Խոսքը վերաբերվում է զաշար, ֆարամանյու, բայթ և այլ ցեղերին, որոնք վերադարձան Իրան: Այս մասին ավելի մանրամասն տե՛ս **И. Петрушевский**, указ. соч., с. 134.

¹¹ **Iskander Munshi**, op. cit., p. 583.

¹² Նույն տեղում, էջ 907:

¹³ **Առաքել Դավրիժեցի**, *Գիրք պատմութեանց*, աշխատասիրությամբ **Լ. Ա. Խանլարյանի**, Երևան, 1990 էջ 113:

կարող է նկատել դրանք. Դելիշան վայրը և նրա ողջ շրջակայքը 6 մղոն հեռավորությամբ պատկանում են Ղամշի խանին և կոչվում են Ղազախ երկիր: Այն գտնվում է Պարսկաստանից այնպիսի կախման մեջ, ինչպես և Վրաստանը, այսինքն մշտապես կառավարվում է տեղական ծագմամբ սեփական իշխանի կողմից, որն անցնում է ժառանգաբար: Աբբաս Մեծը նվաճել է այս երկրները Վրաստանի հետ միաժամանակ»¹⁴:

Ադրբեջանական պատմագիտության մեջ հետզհետե գերակշռող է դառնում այն տեսակետը, համաձայն որի՝ Ղազախլու ցեղն այստեղ հաստատվել է դեռևս VII դարից սկսած: Ադրբեջանական որոշ հեղինակներ այս ցեղի նախնիներ են համարում ղվիշաղներին¹⁵: Սակայն հայ և օտար սկզբնաղբյուրները նման պնդման որևէ հիմք չեն տալիս: Ավելին՝ Իսկանդեր Մունշին, իր աշխատության մեջ հիշատակելով ղվբաշական ցեղերն ըստ հերթականության, 14-րդ տեղում նշում է Ղազախլու ցեղը: Ուստի նման տեսակետը մտացածին է և վերոնշյալ տարածքներում ադրբեջանական էթնիկ տարրի առկայությունը հին ժամանակներ տանելու նպատակ է հետապնդում:

Թյուրքական ցեղերի բնակեցման հաջորդ տարածքը Գուգարքի Լոռու հատվածն էր: 1628 թ. որպես Լոռու տեր հիշատակվում է արդեն մեզ ծանոթ Շամսադ-դին խան Ղազախլուն¹⁶: Վերջինիս ստացած առատ պարգևներից կարելի է եզրակացնել, որ նա բավական ակտիվ դերակատարում է ունեցել այդ շրջանի բնակավայրերի յուրացման և նվաճման գործում:

Ինչպես վկայում է XVIII դ. վրաց պատմագիր Վախուշտի Բագրատիոնը, այս շրջաններն էլ գերծ շմնացին մահմեդական տարրի վերաբնակեցումից¹⁷: Վախուշտին նշում է. «Եվ այնուհետև, երբ Շահ Աբբասը խլեց այն (խոսքը վերաբերում է Լոռուն և Դեբեդ գետի հովտին- Ա. Ե.) 85-րդ արքա Գեորգիից¹⁸, նա բերեց և այստեղ բնակեցրեց բորչալու ժողովրդին և դրանից երկիրը սկսեց կոչվել Բոր-

¹⁴ Жан Шарден, Путешествие Шардена по Закавказью в 1672-1673 гг., Тифлись, 1902, с. 237-238.

¹⁵ Гейбуллаев Г. А., Топономия Азербайджана, Баку, 1986, с. 25.

¹⁶ И. Петрушевский, указ. соч., с. 142.

¹⁷ Вахушти Багратион, География Грузии, Тифлись, 1904, с. 32.

¹⁸ Վախուշտիի, ինչպես նաև վրացական մյուս աղբյուրների տեղեկություններին, որոնք վերաբերվում են հյուսիս-արևելյան Հայաստանի տարածքներին, պետք է որոշակի վերապահումներով մոտենալ: Նրանք իրենց աշխատություններում այդ տարածքները համարում են վրացական հողեր:

չալու»¹⁹: Աբրահամ Կրետացին, այս դեպքերից ավելի քան մեկ դար անց ներկայացնելով Մուղանի ժողովի մասնակից ցեղապետերին ու խաներին, որպես կոռուտեր հիշատակում է Քելեպ-Հուսեյն խանին²⁰:

Այս տարածքները, որոնք մինչ այդ Վրաստանի կազմի մեջ էին, 1604 թ. Շահ Աբբասն առանձնացնում է և ենթակա դարձնում Գանձակի բեկլարբեկությանը²¹: Այսպիսով, Աբասը շարունակում էր հայկական տարածքներում թյուրքական ցեղերի բնակեցման իր քաղաքականությունը: Հետագա դարերում, ինչպես նշում է Հ. Ամիրջանյանը, կոռին ու Բորչալուն տարածքային առումով հաճախ համընկնում էին: Բուն կոռին կազմում էր արդեն ի հայտ եկած աշխարհագրական նոր տեղանվան՝ Բորչալուի²² հարավային մասը²³:

Թյուրքական ցեղերի բնակեցման մյուս տարածքը Զակամի շրջանն ու Մեծ Հայքի Ուտիք աշխարհի Տավուշ գավառն էին: Դվլբաշական զուլբադար ցեղի շամսադդինու Տյուզը դեռևս Իսմայիլ I շահի օրոք հաստատվում է Գանձակից հարավ ընկած հարթավայրային շրջաններում²⁴: 1605 թ. նրա ցեղապետ Ալիսուլթան Շամսադդինուն ընդարձակ կալվածքներ է ստանում Շահ Աբասից: Հետագայում, երբ Սեֆյան զորքը օսմանցիներից գրավում է Ախալցխա ամրոցը, Ալիսուլթանի հաջորդ Սելիմ-խան Շամսադդինուն տեր է դառնում նաև այդ ամրոցին²⁵:

Հյուսիսարևելյան Հայաստանում թյուրքական ցեղերի բնակեցումը ծանր հետևանքներ ունեցավ տեղի հայ բնակչության համար: Բնակավայրերն ու եկեղեցիներն ավերվում են, իսկ բնակչությունը ստրկության է մատնվում: Այս ամենին գումարվում են սովն ու համաճարակը²⁶: Բացի այդ, հայկական բնակավայրերի հարևանությամբ հետզհետե առաջանում էին քոչվոր ցեղերի բնակատեղիները: Հայկական մի շարք տեղանուններ ու բնակավայրեր սկսում են հետզհետե ստանալ օտարահունչ անուններ: Այս տեղանունները սկսում են կոչվել նաև նոր բնակ-

¹⁹ Նույն տեղում, էջ 32:

²⁰ Աբրահամ Կրետացի, Պատմություն, Երևան, 1973, էջ 62:

²¹ Ամիրջանյան Հ., կոռին XVIII դարի վերջին և XIX դարի առաջին երեսնամյակին, Երևան, 2010, էջ 20:

²² Բորչալու գավառի աշխարհագրական սահմանների մասին ավելի մանրամասն տե՛ս Լալայեան Ե., «Բորչալուի գաւառ. Յառաջաբան. Տեղագրութիւն», Ազգագրական հանդէս, 1901, N 7-8, էջ 271-302:

²³ Ամիրջանյան Հ., նշվ. աշխ., էջ 5:

²⁴ И. Петрушевский, указ. соч., с. 135.

²⁵ Նույն տեղում:

²⁶ Հովհաննես Ծարեցի, Աղուանից աշխարհի պատմությունը, Երևան, 1978, էջ 474:

վող քոչվոր ցեղերի անուններով. օրինակ՝ Շամշադին, Բորշալու, Ղազախ և այլն:

Նորամուտ քոչվոր ցեղերը սկզբնական շրջանում հաստատվում են Կուրի հովտային շրջաններում: Տեղաբնիկ հայկական բնակչությունը հարկադրված հետզհետե տեղաշարժվում է դեպի լեռնային ու նախալեռնային շրջաններ: Սակայն ամուսն ամիսներին քոչվորներն իրենց հոտերը քշում էին դեպի այդ շրջաններ:

Թուրքերն ու պարսիկները, գրավելով հայկական բնակավայրերը, տեղի բնակչությանը հաճախ գերեվարում ու տանում էին իրենց երկրի խորքերը: Տարածաշրջանի էթնոթողովրդագրական պատկերի փոփոխմանը նպաստում էր նաև հայերի հարկադրական կրոնափոխությունը՝ իսլամացումը: XVII դ. Կեսերին գրված իր հիշատակարանում ձեռագրի գրիչ Եսայիմ խոսում է հայերի կրոնական հալածանքների մասին: Նա նշում է. «Ի թուականիս Հայոց ՌՂԴ (1645), ի հայրապետութեան տեառն Գրիգորի, ընդ հովանեաւ Ս. Նահատակիս, ի յերկրիս Տայուշ, ի գեաւղս, որ կոչի Թաւուզ, յորում ամի և ըստ մեղաց մերոց բռնացաւ անարէնութեան չարիք ի վերայ մեր ի հենէ Պարսից, լուծ ծառայութեան նոցա հարկանելով և տանջելով ստիպեն դարձուցանել ի մոլոր յարեես իւրեանց»²⁷:

Այսպիսով հյուսիսարևելյան շրջաններում թյուրքական ցեղերի բնակեցումը բազմաթիվ առումներով աղետալի հետևանքներ ունեցավ տեղի հայության համար:

ANDRANIK YESAYAN

THE SETTLEMENT OF TURKIC TRIBES IN NORTHEASTERN ARMENIA IN THE SEFEVID PERIOD (XVI-XVII)

Key words: demography, Ottoman Empire, Iran, Tamerlan, kizilbash, deportation, Tavush.

In northeastern Armenia, the demographic picture significantly changed since the 16th century, when the region was settled by different nomadic tribes. This policy was carried out by the Ottoman Empire and Sefevid Iran, whose goal was to have strong support of their rule in Armenia. The new inhabitants changed not only the demography and the religious structure of the region but also the Ar-

²⁷ Հայերեն ձեռագրերի ժէ դարի հիշատակարաններ (1621-1640 թթ.), հ. Բ, կազմեցին՝ Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երևան, 1978 էջ 181:

menian toponyms. The muslimization of Armenians and their deportation to the Ottoman Empire and Sefevid Iran also played a major role in the demographic changes in northeastern Armenia. After the devastation of those Armenian territories, various tribes replaced the local inhabitants. At first they settled near the River Kur, while the Armenians moved to the mountains, but later on the nomads also occupied the mountainous territories for pasturing their livestock in summer.

АНДРАНИК ЕСАЯН

**ЗАСЕЛЕНИЕ СЕВЕРО-ВОСТОЧНОЙ АРМЕНИИ ТЮРКСКИМИ
ПЛЕМЕНАМИ В ПЕРИОД СЕФЕВИДОВ (XVI-XVII)**

Ключевые слова: этнодемография, Османская Империя, Сефевидский Иран, бекларбекство, Тамерлан, кызылбаш, депортация.

В северо-восточной Армении демографическая картина сильно изменилась начиная с 16-го века, когда в регионе появились различные кочевые племена. Важную роль сыграли Османская Империя и Сефевидская Персия, которые переселяли в Армению разные племена, чтобы иметь здесь прочную опору для своей власти. Под влиянием новых племен изменилась не только демографическая и религиозная картина, но также армянские топонимы стали заменяться турецкими и персидскими; большая часть их сохранилась до сих пор. В изменении демографии важную роль играло вероотступничество населения и переселение армян в Османскую Империю и Сефевидскую Персию. После опустошения армянских территорий там стали селиться различные племена. Поначалу они селились у реки Кура, а здешние армяне уходили в горы, но затем и горные регионы были захвачены кочевниками для выгона скота в летнее время.

**ԲՈՒՍԱԿԱՆ ՏԱՐՐԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՋՆԱԳԱՐՅԱՆ
ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԳԱՐԱՆ-ՔՈՒՄ**

Բանալի բառեր՝ քանդակային հարդարանք, բուսազարդ, Դրախտ, Երկնային արքայություն, ականթ, արմավ, ձիթենի, շուշան, Կենաց ծառ, սիմվոլիկա:

Արևելաքրիստոնեական արվեստում, և այդ թվում հայկական միջնադարյան արվեստում, մեծ տեղ են զբաղեցնում բուսական զարդատարրերը, որոնք, համաձայն միջնադարյան պատկերացումների, հանդիսանում են Երկնային աշխարհի կամ Դրախտային պարտեզի խորհրդանիշները¹: Մի շարք ծառերի և բույսերի մասին հիշատակումներ կան թե՛ Սուրբ Գրքում (Գ Թագ. 2, 29, 31-32, 35, Սաղմ. 13, Եսայի 4, 13, Առակ. ԺԱ 30), թե՛ միջնադարյան երկերում²:

Մեծ հետաքրքրությունը բուսական տարրերի նկատմամբ գալիս է դեռ նախաքրիստոնեական շրջանի՝ հին արևելյան, անտիկ, հելլենիստական մշակույթներից³: Եվ այդ պատկերացումների համաձայն այգին, անտառը և դրանց

¹ **Հ. Պետրոսյան**, «Հայ միջնադարեան պատկերացումները իդէալական կենսատարածքի և կենսընթացի մասին. Աշխարհը որպէս այգի», ՀԱ, № 1-12, Վիեննա-Երևան, 2002, էջ 438, **А. Ю. Казарян**, “Фасадная аркатура армянских и грузинских церквей VII-XI вв.. Структурные отличия и взаимосвязь традиций”, Հայագիտության արդի վիճակը և զարգացման հեռանկարները, Երևան, 2004, էջ 453, **Զ. Հակոբյան**, «Զվարթնոցի խորհրդաբանական կերպարը (պատկերաբանակների մեկնաբանման հարցի շուրջ)», *Էջմիածին*, 2, 2006, էջ 81-82, **Յ. Акопян**, “Образ ‘Рая’ во внешней декорации памятников средневековой Армении и Древней Руси”, *Россия и православный Восток: новые исследования по материалам из архивов и музейных собраний*, Москва, 2007, с. 8-10:

² **Եսեքիոս Կեսարացի**, Պատմութիւն եկեղեցւոյ, թարգմ. Ի ձեռն Հ. Աբրահամ Վ. Ճարեան, Վենետիկ, Ս. Ղազար, 1877, էջ 733-737, **Վ. Ղազարյան**, *Խորանների մեկնություններ*, Երևան, 1995:

³ *Բառարան սուրբ գրոց, հանդերձ պատկերօր, աշխարհացուցօր եւ տախտակօր*, Կ. Պոլիս, 1881, էջ 321, **Լ. Ազարյան**, *Վաղ միջնադարյան հայկական քանդակը*, Երևան, 1975, էջ 42, **Дж. Холл**, *Словарь сюжетов и символов в искусстве*, Москва, 1996, с. 328, 417, “Акант, аканф”; *Словарь архитектурно-реставрационных терминов*; эл. адрес; <http://terms.archodessa.com/all/kant-akanf/> (19.01.2019):

անքակտելի մասը կազմող բույսերը (դրանցից օրինակ արմավը՝ որպես կենաց ծառի⁴, ձիթենին և առավել ընդհանրական ներկայացվող անտառն աշխարհի⁵ խորհրդանշաններ) խորհրդանշորեն կապվում էին վերերկրային՝ իդեալական աշխարհի կամ Դրախտի հետ⁶: Գաղափարական այդ մոտեցումներն աստիճանաբար վերաիմաստավորվում և ներմուծվում են քրիստոնեական մշակույթ արտահայտելով կամ լրացնելով քրիստոնեական կրոնական դրույթներն ու պատկերացումները: Քրիստոնեական արվեստում դրանք զտվում և աստիճանաբար ձևավորում են որոշակի խումբ՝ իրենց հստակ ու հաճախ էլ բազմաշերտ խորհրդանշական իմաստներով ու պատկերազրույթյամբ, համաձայն որի արտը այս աշխարհն է (Մտթ. ԺԳ 37-38), կենաց ծառը⁷ (Առակ. ԺԱ 30, Սաղմ. ԶԳ 12)՝ Երկնային այգին⁸ (պարտեզը⁹), որի մաս են կազմում մի շարք բույսեր

- 4 **Հ. Պետրոսյան**, *Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերազրույթունը, իմաստաբանությունը*, Երևան, 2007, էջ 287-288, **Л. Микаелян**, “Мотив аканфа и пальметты в раннесредневековой скульптуре Армении и в искусстве сасанидского Ирана”, *Актуальные проблемы теории и истории искусства, V сборник научных статей*, Санкт-Петербург, 2015, с. 227:
- 5 **Дж. Холл**, *Словарь сюжетов*, с. 403, **Հ. Պետրոսյան**, «Հայ միջնադարեան պատկերացումները», էջ 424:
- 6 *Բառարան սուրբ գրոց*, էջ 41, **Հ. Պետրոսյան**, *Խաչքար. ծագումը*, էջ 287, “Роща”, *Энциклопедия знаков и символов*; эл. адрес; <http://www.symbolarium.ru/index.php/%D0%A0%D0%BE%D1%89%D0%B0> (19.01.2019)
- 7 Կենաց ծառը խորհրդանշում է Քրիստոսին (**Գրիգոր Տաթևացի**, *Քարոզ Սուրբ Խաչի մասին*, Երևան, 1995, էջ 1, «Կենաց ծառ», «Իրախա», *Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան*, Երևան, 2002, էջ 482, 282, **Գրիգոր Նարեկացի**, *Մատյան ողբերգության (Նարեկ)*, էջմիածին, 2013, էջ 323, 387):
- 8 Կենաց ծառը, լինելով Դրախտի սիմվոլը, ներկայացվում է նաև **Խաչի կամ թփի, ինչպես նաև ծառի տեսքով (Ա. Ազարյան**, *Վաղ միջնադարյան*, էջ 42, **О. Е. Этингоф**, “Аканф”, *Православная энциклопедия*, т. 1, Москва, 2000, с. 370, **Հ. Պետրոսյան**, *Խաչքար. ծագումը*, էջ 51, 63, 67-68, 275-276, **Л. Микаелян**, “Мотив аканфа и пальметты”, с. 227, **Զ. Հակոբյան**, *Հայկական վաղմիջնադարյան քանդակը (4-7-րդ դդ.)*, դասախոսություններ, Երևան, 2016, էջ 116, 118): Խաչը ևս որպես Կենաց ծառ և Քրիստոս, տես նաև **Գրիգոր Տաթևացի**, *Քարոզ Սուրբ Խաչի ...*, էջ 1, **Նույնի**, *Գիրք Հարցմանց*, Երուսաղեմ, 1993, էջ 494-495, **Նույնի**, *Ձմեռան հատոր*, Երուսաղեմ, 1998, էջ 538, **Յովհան Իմաստասեր (Աւմնեցի)**, *Մատենազրույթիւնք նախնեաց*, Վենետիկ, 1833, էջ 162-163, 171:
- 9 Քրիստոսի Երկրորդ գալստյան ժամանակ արդարներին տրվելու է խոստացված նոր երեւը՝ կենաց պարտեզը (Երկնային արայությունը) (**Հայտն. ԻԲ 14**), որը հաստատվելու է նաև երկրի վրա: **Պարտեզ** բառը հին հունարեն παράδεισος-ի («դրախտ») համարժեքն է: Վերջինս քրիստոնեության մեջ նշանակում է աստվածատուն կարտեզ, երանավետ վայր, արդարների հոգու հավիտենական կացարան, օրևան: Երաչեւեանում նույնպես «պարտեզ»-ը դրախտ (եբր. «կան») բառի համարժեքն է (Ժող. Բ 5) («Իրախա», «Երեւմ», *Քրիստոնյա Հայաստան*, էջ 282, 286-287, “Paradise”, *Encyclopaedia Judaica*, vol. 13,

(խաղողի որթը, արմավը, շուշանը, ականթը, նուռը, ձիթենին)¹⁰, որոնք ուղղակիորեն առնչվում են արդարություն, անմահության և Դրախտում հավիտենական կյանքի արժանանալու պատկերացումների հետ (Հայտն. ԻԱ 3, 10, Եսայի ԾԱ 3, 4 13):

Բուսական տարրերը և դրանց հետ կապված խորհրդաբանությունը ընդհանուր են ողջ քրիստոնեական աշխարհի համար: Ինչպես առհասարակ քրիստոնեական, այնպես էլ մասնավորապես հայ միջնադարյան արվեստում այս տարրերը լայն կիրառում են ստանում առաջին հերթին նկարազարդ ձեռագիր մատյաններում և նաև քանդակում: Դժվար է պատկերացնել որևէ հայկական եկեղեցի, որը չունենա գոնե շատ համեստ բուսաերկրաչափական հարդարանք: Այս իմաստով մի առանձին խումբ են կազմում նաև քառանիստ կոթողներն ու հատկապես խաչքարերը՝ բուսազարդերի առատությունը¹¹:

Jerusalem, 1972, p. 77-85, էջ. հասցե՝

<http://www.jewishencyclopedia.com/search?utf8=%E2%9C%93&keywords=paradise&commit=search> (19.01.2019):

Ինչպես նշել ենք, Կենաց ծառը խորհրդանշում է Քրիստոսին (տե՛ս 7-րդ և 8-րդ ծան.ները), ուստի պատահական չէ նաև, որ հայերենում պանիվերենից ծագող դրախտ (draxt՝ «ծառ») բառն արտահայտում է «ծառնոց, պարտեզ» իմաստները (Հ. Աճառյան, Հայերեն արժատական բառարան, հ. Ա, Երևան, 1971, էջ 690-691, Նույնի, հ. Դ, Երևան, 1979, էջ 69-70): Մեջբերենք նաև մի հատված Եվսեբիոս Կեսարացուց. «...Եւ իբրև երկիր որ անեցուցանէ զձաղիկս իւր, և իբրև պարտեզ որ բուսուցանէ զսերմանիս իւր, այնպէս ծագեացէ Տէր զարդարութիւն իւր և զցնծութիւն առաջի ամենայն ազգաց» (Յաւերթոս Կեսարացի, Պատմութիւն եկեղեցւոյ, էջ 738):

¹⁰ Այս բուսատեսակների խորհրդանշական իմաստների մասին ծանոթանում ենք՝ Յաւերթոս Կեսարացի, Պատմութիւն եկեղեցւոյ, էջ 737, տե՛ս նաև Բառարան սուրբ գրոց, էջ 321, 422, 428-429, Լ. Ազարյան, Վաղ միջնադարյան, էջ 42-43, В. Д. Лихачева, Искусство Византии IV-XV вв., Ленинград, 1986, с. 61, Р. Donabédian, “Les thèmes bibliques dans la sculpture arménienne préarabe”, REArm, t. 22, Paris, 1990-1991, p. 271-281, Վ. Ղազարյան, Խորանների, էջ 24, 25, 28, 29, 77, Д.ж. Холл, Словарь сюжетов, с. 171, 333-334, 403, 417, О. Е. Этингоф, “Аканф”, с. 370, Հ. Պետրոսյան, Խաչքար. ծագումը, էջ 288, Л. Микаелян, “Мотив аканфа и пальметты”, с. 226, 227, Չ. Հակոբյան, Հայկական վաղմիջնադարյան քանդակը, էջ 116, 118, Ա. Ասրյան, «Արմավենու և ականթի զարդաբանականները Տայֆի հուշարձաններում և դրանց վաղմիջնադարյան և համաժամանակյա զուգահեռները», ԲՄ, հ. 24, Երևան, 2017, էջ 50, 52 և այլն:

¹¹ Օրինակ՝ Թալինի (4-5-րդ դդ.), Գառնահովտի և Ազարակի ֆառանիստ կորոզները (4-7-րդ դդ.) (Լ. Ազարյան, Վաղ միջնադարյան, նկ. 35, 40, 86, 25, 45, З. Акоюн, “Новоявленные образы и сюжеты армянских раннесредневековых стел”, Византия в контексте мировой культуры, LXXXIX, Санкт-Петербург, 2017, ил. 1), Թանահատի (Միուկ, 7-րդ դ.), Տաթևի վանքի Մայր տանաթի արևմտյան պատի մեջ ագուցված (11-րդ դ. սկիզբ) և Նուրատուրի խաչքարերը (13-րդ դ.) (Հ. Պետրոսյան, Խաչքար. ծագումը, նկ. 34, 125, 257, Ի. Стржиговский, Архитектура армян и Европа (обмеры Т. Тораманяна, перевод П. Амбургера), т. 1, книга вторая (перевзд.), Ереван, 2018, ил. 293) և այլն:

Բուսական տարրերի առավել տարածված և սիրված օրինակներներից են խաղողի որթը, արմավենին կամ արմավաճյուղը, ականթը, Կենաց ծառը, ձիթենին, նուռը կամ նոնենին, շուշանը: Այս բուսազարդերը լայն կիրառում են ստացել եկեղեցիների արտաքին հարգարանքում՝ կարևորելով և ընդգծելով մուսթերը, լուսամուտների բացվածքները, թմբուկը, քիվերը, իսկ եկեղեցու ներքին տարածքում՝ խորանի հաղթականամարը, դրա որմնախոյակները, քիվը, ինչպես նաև բեմառաջը¹²:

Մի կողմ թողնելով խաղողի որթը և նոնենին, որոնք ամենաշատն են մեկնաբանված¹³, անդրադառնանք մյուս բուսական տարրերին:

Դրանցից ամենատարածվածը թերևս ականթն է: Ականթը անտիկ շրջանում կապվում էր հաղթանակի և փորձույթյունները հաղթահարելու գաղափարի հետ, այն լայնորեն կիրառվում էր կորնթական օրդերում¹⁴: Քրիստոնեության մեջ, ինչպես արմավի դեպքում, որի մասին կխոսենք, ականթը խորհրդանշում է Դրախտը, հավերժական կյանքը¹⁵, և միևնույն ժամանակ սրբերին¹⁶ ու արդարներին: Պատահական չէ, որ վերջիններս այս զարդատարրի ներքո են ներկայացվում արևելաքրիստոնեական արվեստում, օրինակ՝ Ռավեննայի Ուղղափառների մկրտարանի խճանկարում (451-475 թթ.): Նույն սկզբունքն է կիրառված հայկական վաղմիջնադարյան Բայբուրդի միանավ բազիլիկում (5-6-րդ դդ.), որտեղ խորանի խոյակներին ներկայացված են մարդկանց դեմքեր՝ «թաքնված» ականթի տերևների մեջ:

¹² Տե՛ս, օրինակ, Էջմիածնի Մայր տաճարի քմբուկի պատմաանների (А. Ю. Казарян, *Церковная архитектура стран Закавказья VII века, Формирование и развитие традиции*, т. 1, Москва, 2012, ил. 305-306, 308-309, 311, 315, 320-323), Ագաթանի Սր. Ստեփանոս, Օձունի և Սր. Գայանե եկեղեցիների (բաղրն է՝ 7-րդ դ. առաջին կես) արևելյան նակատների, պատմաանների կամարհոնների և մուսթերի (Там же, т. 2, ил. 826-827, 768, 770, 780, 516-522, 534), Մակարավանի եկեղեցու բեմառաջի հարդարանքները (13-րդ դ. սկիզբ) (В. Арутюнян, С. Сафарян, *Памятники армянского зодчества*, Москва, 1951, ил. 150, V. Harout'yunian, G. Francesco, "Makaravank", *Documenti di architettura armena*, 22, Venezia, 1994, f. 7, 2. Պետրոսյան, *Խաչքար. ծագումը*, նկ. 332) և այլն:

¹³ *Քառարան սուրբ գրոց*, էջ 436, 422, P. Donabédian, "Les thèmes bibliques", p. 275, 280, Վ. Ղազարյան, *Խորանների*, էջ 28, Дж. Холл, *Словарь сюжетов*, с. 130-131, 171 և այլն:

¹⁴ "Акант, аканф"; *Словарь архитектурно-реставрационных терминов*; эл. адрес; <http://terms.archodessa.com/all/kant-akanf/> (19.01.2019):

¹⁵ Տե՛ս ծան. 10:

¹⁶ Л. Микаелян, "Мотив аканфа и пальметты", с. 226.

Նկատենք, որ վաղմիջնադարյան հայկական արվեստում ականթի պատկերման ձևերում դեռևս զգալի է կապն անտիկ գեղարվեստական մտածելակերպի հետ¹⁷, թեև, ընդհանուր առմամբ, առկա է գեղարվեստական մեկնաբանման պարզեցումն ու ռճավորումը¹⁸, ինչպես, օրինակ, Տեկորի (5-րդ դարի 80-ական թթ.), Երեբուլքի (6-րդ դար) մուտքերի որմնասյուների խոյակներին: Այդ միտումը առավել ակնհայտ է դառնում, երբ համեմատում ենք վաղքրիստոնեական ականթագարդ խոյակների հետ (օրինակ՝ ղպտական խոյակը Բոստոնի թանգարանից, Ռուսաֆայի և Կալաթ-Սիմանի (Սբ. Սիմեոն Սյունակացի վանք) քանդակագարդ խոյակները՝ Սիրիա (բոլորն էլ՝ 5-րդ դ.): Ականթի պարզեցման և ռճավորման միտումները հայ արվեստում էլ ավելի զգալի են 10-11-րդ դարերում¹⁹ (օրինակ՝ Աղթամարի Սբ. Խաչ (915-921 թթ.), Իշխանի (10-րդ դ.), Օշկվանքի (10-րդ դ. երկրորդ կես) և Անիի Սբ. Առաքելոց եկեղեցիների հարդարանքում (10-11-րդ դդ. սկիզբ)²⁰ և հաջորդող դարաշրջաններում (օրինակ՝ Թեթառուլքի (12-րդ դարի վերջ), Տիգրան Հոնենցի Սբ. Գրիգոր, Գանձասարի Սբ. Հովհաննես Մկրտիչ (երկուսն էլ՝ 13-րդ դարի առաջին կես) եկեղեցիներում):

¹⁷ Պ. Տոնապետյանը նշում է, որ անտիկ (հելլենիստական՝ Թ. Ա.) պատկերագրական ավանդույթներին հարող ականթի միակ հայկական օրինակը Գառնիից է (I կամ II դ. կեսից հետո, տե՛ս Փ. Ի. Тер-Мартиросов, *Храм в крепости Гарни – геронн, мартурий*, Ереван, 1995, с. 29-30), P. Donabédian, “Les métamorphoses de l’acanthé sur les chapiteaux arméniens du V^e au VII^e siècle. Dans: *L’acanthé dans la sculpture monumentale de L’Antiquité à la Renaissance*”, Actes du colloque tenu du 1er au 5 octobre 1990, à La Sorbonne, Paris, 1993, p. 168): Սակայն Աղձնում, 2015-2017 թթ., Հայոց արհաների դամբարան-հուշահամալիրի N 7՝ վաղմիջնադարյան կառույցի պեղումների արդյունքում հայտնաբերվել է ականթագարդ կորողի բեկոր, որը ենթադրվում է, որ ամրացվել է արևմտյան ճակտոնի զագաթին: Այդ ավանդույթը բնորոշ է եղել հելլենիստական ճարտարապետությանը և իր զուգահեռն ունի Գառնիի հեթանոսական տաճարում (Հ. Սիմոնյան, Մ. Սաֆարյան, Տ. Սիմոնյան, Ն. Քալանթարյան, Ե. Աթոյանց, «Աղձի արհայական դամբարանի պեղումների 2015-2017 թթ. արդյունքները», *Հուշարձան, Տարեգիրք*, ԺԲ-ԺԳ, 2017-2018, էջ 37, Հ. Սիմոնյան, Մ. Սաֆարյան, Ն. Քալանթարյան, «Աղձի Հայոց արհաների դամբարան-հուշահամալիրի կառուցապատման սկզբումներն ու փուլերը», *Հայաստանը և արևելաքրիստոնեական քաղաքակրթությունը*. Բ, *Հայագետ-բյուզանդագետ Կ. Յուզբաշյանի (1927-2009) ծննդյան 90-ամյակին նվիրված Միջազգային գիտաժողով (դեկտեմբերի 7-8, 2017 թ.)*, *Զեկուցումներ և զեկուցումների գրույթներ*, Երևան, 2017, էջ 247), Ա. Ասրյան, «Արմավենու և ականթի զարգացմանը», էջ 49:

¹⁸ P. Donabédian, “Les métamorphoses de l’acanthé.”, p. 170:

¹⁹ Նույն տեղում, էջ 148.

²⁰ Տե՛ս, օրինակ, Անի-ՌԾ Պատկերագարդ գիրք-ալբոմ, կազմեց՝ Ս. Կարապետյանը, Երևան, 2011, էջ 115, նկ. 292, 293:

Արմավին իր խորհրդանշական իմաստով հայտնի է վաղնջական ժամանակներից՝ հինարևելյան երկրների արվեստում (Ասորեստան, Ուրարտու, Աքեմենյան և Սասանյան Իրան)²¹ հանդես գալով որպես Կենաց ծառ²²: Այդ խորհրդաբանությունը այն կիրառում է գտնում նաև քրիստոնեական արվեստում: Համաձայն հրեական և դրանից բխող քրիստոնեական պատկերացումների, արմավենին դրախտային ծառերից մեկն է («...ով յաղթի, ես նրան թոյլ կը տամ ուտելու կեանքի ծառից, որ գտնուում է Աստծու դրախտի մէջ» (Հայտն. Բ 7)), ինչպես նաև Ավետյաց երկրի խորհրդանիշը: Այն համարվում է նաև հավատքի տունկը, Քրիստոսի, արդարների ու սրբերի խորհրդանիշը²³, որոնք արժանանալու են Երկնային արքայություն, որի մասին խոսվում է նաև Սաղմոսներում (Սաղմոս ՂԱ 13): Քրիստոնեական արվեստի համատեքստում կարևոր է նաև արմավի խորհրդանշական կապը Սողոմոնի տաճարի հետ: Սուրբ Գրքում այդ մասին կարդում ենք. «Տան բոլոր պատերի վրայ ներսից ու դրսից ... փորագրեց քերովբէներ, արմաւենիներ ու բարձրաքանդակներ» (Գ Թագ. 2 29):

Հայկական արվեստում արմավի քանդակային վաղագույն պատկերներ ունենք 5-րդ դարից, ընդ որում, հանդիպում է ինչպես արմավածառի, այնպես էլ առանձին ճյուղերի տեսքով: Արմավածառեր կան Քասաղի բազիլիկի (5-րդ դարի վերջ) արևմտյան շքամուտքի բարավորին՝ «Հավատքի աղբյուրից սնվող եղջերուների» (Սաղմ. ԽԱ 2 (ԽԲ 1)) պատկերների խորքին, ինչպես նաև Պտղնավանքի հարավային ճակատի շարվածքում վերաօգտագործված մի քարի վրա՝ առյուծի պատկերի ֆոնին: 5-րդ դարի վերջին են ի հայտ եկել նաև Ամարասի Աբ. Գրիգորիսի դամբարանի արմավենու զույգ պատկերները: Սակայն լավագույն օրինակը, որտեղ այս ծառը պատկերված է իր իրապաշտական ձևերով, հանդիպում է արդեն 7-րդ դարում, Կողբի քանդակային հորինվածքում²⁴, որի ներքևում ներկայացված են նաև շուշանածաղիկներ²⁵:

²¹ Л. Микаелян, “Мотив аканфа и пальметты”, с. 220, 227, Ա. Ասրյան, «Արմավենու և ալանթի զարդաֆանդակները», էջ 50:

²² Տե՛ս ծան. 4:

²³ Տե՛ս ծան. 10:

²⁴ Լ. Ազարյանն այն թվագրում է 5-6-րդ դարերով (Լ. Ազարյան, *Վաղ միջնադարյան*, էջ 43), իսկ Հ. Պետրոսյանը՝ 6-7-րդ դդ. (Հ. Պետրոսյան, *Խաչքար. ծագումը*, էջ 36):

²⁵ Լ. Ազարյան, *Վաղ միջնադարյան*, էջ 43, Զ. Հակոբյան, *Հայկական վաղմիջնադարյան քանդակը*, էջ 117-118: Ժ.-Մ. Թիերին, Պ. Տոնապետյանը, ինչպես և Հ. Պետրոսյանը նման հորինվածքները համարում են «դրախտային» (P. Donabédian, J.-M. Thierry, *Les arts arméniens*, Paris, 1987, p. 61, Հ. Պետրոսյան, *Խաչքար. ծագումը*, էջ 36 (նկ. 32, Կողբ), (նկ. 16, Աղձֆ), էջ 62):

Այս քանդակը նույնանում է վաղբյուզանդական հուշարձաններում հանդիպող արմավածառի պատկերների հետ (օրինակ, Սբ. Պողիկտոսի եկեղեցու խոյակը (6-րդ դ.)²⁶, Սբ. Սոֆիայի առաջին տաճարի քանդակազարդ քիվը (415 թ., կառուցված Թեոդորոս 2-րդ կայսեր կողմից)²⁷ երկուսն էլ Կ. Պոլսում): Արմավի իրապաշտական պատկերի բացառիկ օրինակ է Կափառնաումի սինագոգի մուտքի քանդակազարդ պահոնակը (կոնսոլը) (5-րդ դ.)²⁸:

Արմավի և ականթի դեպքում, ինչպես հաճախ ենք նկատում, առկա են ընդհանրություններ թե՛ խորհրդաբանության, թե՛ հատկապես գեղարվեստական մեկնաբանման տեսանկյունից, ինչի հետևանքով էլ դրանք երբեմն պատկերագրորեն նույնանում են, կամ պարզապես տարրալուծվում²⁹: Այս երևույթն առավել հատուկ է զարգացած միջնադարի քանդակային նմուշներին, ուր երբեմն անհնար է դառնում այդ զարդատարրերը միմյանցից տարբերակելը:

Ջիթենին անտիկ շրջանում համարվում էր աշխարհի խորհրդանիշը, իսկ արդեն միջնադարում այն կապում էին խաղաղության գաղափարի հետ: Այս համատեքստում կարևորվում է շրհեղեղից սկսած Աստծո և մարդկանց միջև հաստատված խաղաղությունը՝ արտահայտված ձիթենու ճյուղի միջոցով: Ջիթենին երուսաղեմի Ջիթենյաց լեռան ծառն է³⁰, Սուրբ քաղաքի այն վայրը, որտեղ տեղի են ունեցել առաքյալների հետ Քրիստոսի զրույցները, նրա Հարությունը, այնուհետև Համբարձումը: Ջիթենին (ἔλαια) նաև բերկրանքի և աստվածային ողորմածության խորհրդանիշն է³¹: Համաձայն աստվածաշնչյան բազմաթիվ հիշատակումների, խորհրդանշում է նաև արդարներին և հավատացյալներին (Հռոմ. ԺԱ 17-24): Այս իմաստով արմավը և ձիթենին ևս ունեն ընդհանուր խորհրդաբանական եզրեր, և հավանաբար դա է պատճառը, որ պատկերագրության մեջ նույնականացվում են, փոխարինելի են: Նման

²⁶ Л. А. Беляев, *Христианские древности. Введение в сравнительное изучение*, Санкт-Петербург, 2000, с. 264-267, ил. на с. 266.

²⁷ А. Grabar, *Sculptures Byzantines de Constantinople (IV – X^e siècle)*, Paris, 1963, pl. XV (1).

²⁸ R. Hachlili, *Ancient Jewish Art and Archaeology in the Land of Israel*, Brill, 1988, fig. 36.

²⁹ Н. Токарский, *Архитектура древней Армении*, Ереван, 1946, с. 192, Ա. Ասրյան, «Արմավենու և ականթի զարդաֆանդակները», էջ 49-50:

³⁰ Տե՛ս ծան. 10:

³¹ “Олива”, *Энциклопедия знаков и символов*; эл. адрес;

<http://www.symbolarium.ru/index.php/%D0%9E%D0%BB%D0%B8%D0%B2%D0%B0> (19.01.2019)

մոտեցում ենք տեսնում Հաղպատի ավետարանի «Մուտք Երուսաղեմ» մանրանկարում: Ավետարանական այս պատմության մեջ արմավենին կարևոր դեր ունի, քանի որ արմավենու ճյուղերով են դիմավորում Քրիստոսին: Սակայն նշված մանրանկարում այն փոխարինված է ձիթենու պատկերով, ինչը նշել է Կ. Մաթևոսյանը³², իսկ Գ. Հովսեփյանը բնութագրելով տեսարանը ասել է, թե «Քրիստոսին դիմավորում են որպես բարձրաստիճան անձի, կամ թագավորի»³³: Այս իմաստով հատկանշական է հրեաների մոտ ձիթենու նշանակությունը, որպես քահանայապետերի և թագավորների օժման կարևոր տարր՝ օժտված իշխանության և օրհնության խորհրդով: Համամիտ լինելով Գ. Հովսեփյանի ձևակերպման հետ, կարծում ենք, որ նշված իմաստն ավելի խոսուն դարձնելու համար է, որ Հաղպատի ավետարանում արմավենու փոխարեն ձիթենի է պատկերված՝ ընդգծելու համար Քրիստոսի իշխանության գաղափարը և նրա՝ որպես Երկնային թագավորի հաղթական մուտքը Սուրբ քաղաք:

Ձիթենու քանդակային պատկերներ ունենք Երեբույքի տաճարի (6-րդ դ.) հարավային երկու մուտքերի բարավորներին, որոնց կենտրոնում պատկերված են հավասարաթև խաչեր, իսկ երկու կողմերում՝ ձիթենիների հարթային պատկերներ՝ ներկայացված մեկում խոյերի, մյուսում՝ վեցաթև վարդյակների ուղեկցությամբ³⁴:

Շուշանաձաղիկը քրիստոնեական արվեստում այն բուսական, ծաղկային մոտիվն է, որը, կարելի է ասել, իր մեջ է խտացրել քրիստոնեական մի ամբողջ շարք սիմվոլներ, քանի որ արտահայտում է անմահության, մաքրության, սպասվելիք Դրախտի, Փրկչի և Երկրորդ գալստյան, Վերին Երուսաղեմի, վերածննդի, հարության, աստվածային նախախնամության (Մտթ. 2 25-34), ապաշխարության խորհուրդները³⁵: Շուշանազարդի կիրառման մասին հիշատակումներ ունենք Աստվածաշնչում (Գ Թագ. է 19-26, Բ Մնաց. Գ 5): Սողոմոնի տաճարի նկարագրության մեջ ասված է. «Սիւների գլխին շուշանաձեւ զարդեր քանդակեց» (Գ Թագ. է 22): Կարևոր է նշել, որ քրիստոնեական եկեղեցիներին դի-

³² Կ. Մաթևոսյան, «Նկարիչ Մարգարեի «Մուտք Երուսաղեմ» մանրանկարը», ԼՀԳ, հ. 9, 1982, էջ 54:

³³ Նույն տեղում, էջ 59:

³⁴ Հ. Պետրոսյան, *Խաչքար. ծագումը*, էջ 63, Զ. Հակոբյան, *Հայկական վաղմիջնադարյան քանդակը*, էջ 41-42:

³⁵ Տե՛ս ծան. 10:

տարկվում է որպես Սողոմոնի տաճարի նմանօրինակը և հետևաբար, այստեղ օգտագործված զարդատարրերը քրիստոնեական տաճարի հարդարանքում առաջին հերթին խորհրդանշական կապ են ստեղծում Սողոմոնի տաճարի ու նաև պալատի հետ: Ուստի պատահական չէ, որ արմավաճյուղի³⁶ և շուշանածաղկի³⁷ համատեղ պատկերման օրինակներ ունենք Դվինի (640-ական թթ., ներսես Շինարարի վերակառուցումը) և Արուճի (7-րդ դ.) պալատական կառույցների խոյակներին³⁸ (երկուսն էլ մասամբ վնասված են), որոնց միավորում են պատկերագրական ընդհանրությունները³⁹:

Հայկական հուշարձանների հարդարանքում հաճախակի համատեղվում են մեկից ավելի բուսազարդեր, օրինակ՝ ականթ-արմավ, արմավ-շուշան, ականթ-շուշան, ականթ-արմավ-շուշան: Վերջիններս ներկայացվում են համակցված, երբեմն էլ միաձուլված, որը մեծապես պայմանավորված է այդ բույսերի խորհրդաբանության ընդհանրությունները կամ գաղափարական համատեքստն ամփոփ դարձնելու առանձնահատկությամբ: Այս երևույթն, իհարկե, առավելապես իր արտահայտությունն է գտել խաչքարերի քանդակազարդման մեջ՝ որպես խաչատակից ծագող կամ պատվանդանին և վարդյակին փոխլրացնող կամ փոխարինող տարրեր⁴⁰:

Ինչպես արդեն նշեցինք, շատ հին արմատներ ունի Կենաց ծառը, որի

³⁶ Արմավանյուղի փոխաբեն, ելնելով վերջինիս հետ կառուցվածքային նմանությունից, առհասարակ կարելի է դիտարկել նաև եղևնափայտը կամ լիբանանյան մայրին, որոնց մասին հիշատակվում է Սողոմոն արքայի կատարած շինարարական գործունեության մեջ (Գ Թագ. Ե 9-10, Զ 29, 32, 35, է 2):

³⁷ Այստեղ ևս, ինչպես նախորդ ծանուցման պարագայում էր, շուշանածաղկի փոխաբեն կարելի է դիտարկել նույն ծաղկած կամ բացված բողբոջը, որի կիրառման մասին ևս հիշատակումներ ենք գտնում Աստվածաշնչում (Ելք ԻԼ 33, Գ Թագ. է 18, 20):

³⁸ Վ. Հարությունյանը և Ս. Սաֆարյանը Դվինի կաթողիկոսական պալատի խոյակը քվադրում են 5-6-րդ դարերով (В. Арутюнян, С. Сафарян, Памятники армянского, с. 46, ил. 31), իսկ Ս. Ղազարյանը՝ 7-րդ դարով (А. Ю. Казарян, Церковная архитектура стран Закавказья, т. 2, с. 479-487, ил. 1015): Արուճի պալատական խոյակը ևս համաժամանակյա է (Ս. Հասարթյան, Արուճի վաղմիջնադարյան համալիրը, Երևան, 2010, էջ 159-161):

³⁹ Տարբերությունը միայն խոյակների թաղակապի (աբակի) հարդարման մեջ է: Այսպես, Դվինի աբակին, երկու գոտիով, միմյանց հակադիր ֆանդակված են կիսակամարներ, որոնց շաբերն ընդհատվում են Յ-աթերթ բույսերով, իսկ Արուճինը ներկայացնում է խաղողի որթ՝ գալառուն տերևներով:

⁴⁰ Օրինակ Մեծ Մասրիկի (881թ.), Հացառատի՝ Գրիգոր երեցին նվիրված (898թ.), Բջնիի Սբ. Աստվածածին եկեղեցու (11-րդ դ.), Զրվեժի (12-րդ դ. 60-ական թթ., վարպետ՝ Վարդ (Վարդան)) խաչաբերը (Հ. Պետրոսյան, Խաչքար. ծագումը, նկ. 97, 106, 143):

խորհրդաբանությունն ու պատկերագրությունը հատուկ է ավելի ընդհանրական բնույթը: Կենաց ծառի հիշատակումները հայտնի են աշխարհի արարման առաջին օրերից մինչև սպասվող Երկրորդ գալուստը (Մենդ. Բ 8, 9, Հայտն. ԻԲ 2): Կենաց ծառը, լինելով Քրիստոսի, ինչպես նաև Դրախտի սիմվոլը, ներկայացվում է խաչի կամ թիփի, ու նաև ծառի տեսքով⁴¹:

Այս առումով հետաքրքիր է Մրենի տաճարի (639 թ.) հյուսիսային մուտքի բարավորի հորինվածքը, որն առանձնանում է իր հետաքրքիր և հազվագեղ պատկերագրությամբ, որում, համաձայն համեմատաբար նոր ուսումնասիրությունների, ներկայացված է «Կենարար խաչի վերադարձը Երուսաղեմ» տեսարանը, և որի զուգահեռն ունենք արդեն հիշատակված Կողբի քանդակում⁴²: Մրենի և Կողբի հորինվածքների կենտրոնում խաչն է՝ երեք կերպարների ուղեկցությամբ: Մրենի հորինվածքի աջակողմյան հատվածում ոճավորված Կենաց ծառ⁴³, իսկ Կողբի բարավորի դեպքում ներկայացված է արմավենի, և երկուսն էլ ակնարկում են Երուսաղեմն ու Ավետյաց երկիրը, որի հետ և կապվում է հորինվածքի սյուժեն: Մրենի ծառի տերևներն ունեն ականթի, արևելյան սոսու կամ թղենու տերևների ձև⁴⁴, բայց ընդհանուր առմամբ նման չեն դրանցից և ոչ մեկին: Այս անորոշ պատկերագրությունը պայմանավորված է սիմվոլիկ պատկերի հավաքական բնույթով, որով թերևս, ինչպես վերևում նշեցինք, տարբեր և միմյանց լրացնող խորհրդանշական իմաստներ են վերհանվում՝ ողջ գաղափարական և պատմական առանցքում ընկած կարևորագույն իրողություններն ու դրանց նշանակությունը ներկայացնելու համար,

⁴¹ Տե՛ս ծան. 8:

⁴² **J.-M. et N. Thierry**, “La cathédrale de Mrèn et sa decoration”, *Cahiers archéologiques*, t. XXI, 1971, p. 69-75, **Ch. Maranci**, “The Humble Heraclius: Revisiting the North Portal at Mren”, *REArm*, t. XXXI, 2008-2009, p. 167-170, **Զ. Հակոբյան**, «Կողբի բարավորի պատկերագրական առանձնահատկություններն ու քվագրությունը», *Էջմիածին*, ԺԲ, 2010, էջ 68-69, 76:

⁴³ Լ. Ագաբյանը այս ռեալիզմով ծառը արմավենի է համարում (**Լ. Ագաբյան**, *Վաղ միջնադարյան*, էջ 42-44): Պ. Տոնապետյանը Մրենի դեպքում ընդհանուր տեսարանը նմանեցնելով Կողբի հորինվածքի հետ՝ ծառը համարում է խիստ ռեալիզմով (**P. Donabédian**, *L'âge d'or de l'architecture arménienne; VII^e siècle*, Marseille, 2008, p. 109): Զ. Պետրոսյանը, Ա. Ղազարյանը և Զ. Հակոբյանը նշում են, որ դա Կենաց ծառ է (**Զ. Պետրոսյան**, *հաշքար. ծաղումը*, էջ 51, **А. Ю. Казарян**, *Церковная архитектура стран Закавказья*, т. 2, с. 168, **Զ. Հակոբյան**, *Հայկական վաղմիջնադարյան քանդակը*, էջ 116, 118):

⁴⁴ Թզենու և սոսու մասին հիշատակումներ գտնում ենք Աստվածաշնչում, թեև այս ծառերի խորհրդանշական իմաստի վերաբերյալ չկան միջնադարյան մեկնություններ (համեմայն դեպս մեզ հայտնի չեն): Եվ, նկատի ունենալով այս հորինվածքների բացառիկությունը, կարծում ենք, որ գուցե դա է հանգեցրել ծառի՝ առանձնահատուկ ներկայացմանն այստեղ, որպես Կենաց ծառի տեղական դրսևորում:

ինչպիսին է և Մրենի Կենաց ծառը: Համաձայն Աստվածաշնչի՝ «բարի պտղից (գործերից) է ճանաչվում ծառը» (Մտթ. է 16-20, ԺԲ 33-35, Ղկ. Ձ 43-44, ԺԳ 6-9, Նսայի Կ 13), և ենթադրելի է, որ այս հորինվածքներում ներկայացված կերպարներն իրենց մեծագործության համար կարող էին ակնկալել, որ արժանանալու են Երկնային արքայություն: Մրենի՝ յուրօրինակ պատկերագրությամբ Կենաց ծառն իր գուգահեռն ունի Բոլնիսի Սիոնի (5-րդ դարի երկրորդ կես) քանդակում՝ ավելի վաղ թվագրությամբ, որտեղ պայմանականորեն արված ծառի ճյուղերն ավարտվում են եռանկյունաձև տերևներով կամ պտուղներով:

Կենաց ծառի պատկերման օրինակներ են հայտնի Հովհաննավանքից (13-րդ դարի առաջին կես), Աղթամարի Սբ. Խաչ և Կարսի Սբ. Առաքելոց եկեղեցիներից (երկուսն էլ՝ 10-րդ դար): Կենաց ծառի մի տարբերակ էլ ունենք Գանձասարի Սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու (13-րդ դարի առաջին կես) թմբուկի արևմտյան կենտրոնական նիստին՝ Ադամի և Եվայի պատկերներին կից: Նիստի ճակտոնին ներկայացված է օրհնող Քրիստոսի կերպարը, որով ամբողջական գաղափարական լուծում է գտնում հորինվածքը: Նրանից ներքև, ճիշտ կենտրոնում, քանդակված է ոճավորված Կենաց ծառ՝ համակցված ականթ-շուշանի ու թռչունների պատկերներով⁴⁵: Կենաց ծառն այստեղ ընկալվում է և՛ որպես հինկտակարանային՝ բարու և չարի իմացությունների ծառ, որն Աստված տնկեց Դրախտի մեջտեղում, միևնույն ժամանակ և՛ նորկտակարանային Կենաց ծառ՝ այսինքն՝ Նոր Երուսաղեմ, որը կբացվի Երկրորդ գալստյան ժամանակ:

Այսպիսով, հայկական և արևելաքրիստոնեական արվեստում բուսազարդերի լայն կիրառումը գալիս է փաստելու, որ այս տարրերը ծառայում էին քրիստոնեական կարևոր գաղափարախոսությանն ու խորհրդաբանությանը. այն հնարավորություն էր ընձեռում ընդգծելու և ամբողջացնելու Վերին Երուսաղեմի և Գալիլի փրկության մասին ունեցած միջնադարյան պատկերացումները, որոնք ներդաշնակորեն միահյուսվում էին միջնադարյան եկեղեցական կառույցների գեղարվեստական կերպարում:

⁴⁵ Գայանե Ղազարյանն այս ծառը ծաղկուն ծաղկով ավարտող բարու և չարի գիտության ծառ է համարում և գտնում է, որ այն նաև գավաթ է հիշեցնում: Նա կարծում է, որ տեսարանը կարելի է հասկանալ որպես «Հավատքի աղբյուր» (Г. Казарян, *Храм в Гандзасаре. Архитектура и рельефы*, Автореферат канд. диссертации, Москва, 2010, с. 18-20).

TAGUHI AVETISYAN

**THE PLANT MOTIFS IN THE EXTERIOR DECORATION OF
THE MEDIEVAL ARMENIAN CHURCHES**

Keywords: sculptural decoration, plant ornament, Paradise, Heavenly Earth, acanthus, palmettes, olive tree, lily, Tree of Life, symbolism.

An important part of the exterior decoration of the medieval Armenian churches are plant motifs such as acanthus, palmettes, olive tree, lily, the Tree of Life etc., which are widespread both on the monuments of the Early Christian period (Bayburd [5th -6th cc.], Kasakh [late 5th c.], Tekor [the 80s of the 5th c.], Erevuyk [6th c.] and others) and the churches of the High Middle Ages (The Holy Cross of Aghtamar [915-921], Ishkhan and Oshkvank [late 10th c.], Holy Apostles in Ani [10th-11th cc.], Tejaruyk [late 12th c.], St. Gregory [Tigran Honents‘] in Ani and John the Baptist in Gandzasar [13th c.]). These decorative motifs, having originated in the Pre-Christian (Ancient Eastern, Classical, and Hellenistic) epochs, were later revised, newly interpreted, and widely used in Christian, including Armenian, art.

Plant ornaments usually decorated the most important parts of Armenian church façades, such as portals, windows, and drums. They symbolized and expressed such basic Christian notions as the victory of faith, righteousness, holiness, purity, and eternal life, which are in the core of the symbolic images of the Heavenly Earth and Paradise. Furthermore, since each of these motifs has additional symbolic meanings, they are presented in combined compositions or are melded graphically, which contributes to a more laconic and accentuated expression of the semantic context.

As to the artistic interpretation of the motifs, on Early Christian Armenian monuments the connection with the Antique prototypes is still clearly visible, while on the churches of the High Middle Ages one can see the tendency towards comparative simplification and stylization of forms, which vividly expresses the local aesthetic perceptions and artistic style.

ТАГУИ АВЕТИСЯН

**РАСТИТЕЛЬНЫЕ МОТИВЫ ВО ВНЕШНЕМ УБРАНСТВЕ
АРМЯНСКИХ СРЕДНЕВЕКОВЫХ ЦЕРКВЕЙ**

Ключевые слова: скульптурный декор, растительный орнамент, Рай, Царствие Небесное, аканф, пальметта, оливковое дерево, лилия, Древо жизни, символика.

Важным составляющим внешнего убранства армянских средневековых церквей являются растительные мотивы, такие как аканф, пальметта, оливковое дерево, лилия, Древо жизни и др., нашедшие широкое распространение как на памятниках раннего периода (например, Байбурд (V-VI вв.), Касах (кон. V в.), Текор (80-е гг. V в.), Ереруйк (VI в.) и т.д.), так и в эпоху зрелого средневековья (например, церковь Св. Креста на острове Ахтамар (915-921 гг.), Ишхан и Ошкванк (обе втор. пол. X в.), Св. Апостолов в Ани (X-XI вв.), Тежаруйк (кон. XII в.), Св. Григория (Тигран Онец) в Ани и Иоанна Предтечи в Гандзасаре (обе XIII в.)). Отмеченные декоративные элементы восходят к дохристианской – древневосточной, античной и эллинистической – культуре и, подвергаясь переосмыслению и новой интерпретации, продолжают широко применяться в средневековом, в том числе, в армянском искусстве. Растительные мотивы украшают в основном порталы, оконные проемы и барабаны армянских церквей, символизируя и выражая такие общехристианские понятия, как победа веры, праведность, непорочность, святость, вечная жизнь, составляющие основу символических представлений о Царствие Небесном и Рае. Более того, каждый из этих растительных мотивов имеет и другие символические значения, благодаря чему последние выступают в неразрывной связи, а часто и иконографически сливаются, становясь взаимозаменяемыми, что способствует более лаконичному и акцентированному выражению смыслового контекста. Что касается художественной интерпретации данных мотивов, на раннесредневековых армянских памятниках все еще сильнее ощущается связь с античными прототипами, тогда как в период зрелого средневековья наблюдается тенденция к относительному упрощению и стилизации форм, в чем яснее выражается локальное эстетическое восприятие и художественный стиль.

**ՅԱԶԼՈՎԵՑ ՔԱՂԱՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 1648-1669 ԹԹ.
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՅԱՆԸ. ՆՈՐԱՀԱՅՑ
ՄԻ ԱՂԲՅՈՒՐ ԼԵՀԱՍՏԱՆԻՑ**

Բանալի բառեր՝ Կրակովի Ազգային արխիվ, Լեհ-լիտվական թագավորություն, 17-րդ դար, Յազլովեց, հայկական դատարան, դատական արձանագրություններ, հայատառ լեհերեն, հայատառ ղփչաղերեն, հրեաներ:

2015 թ. Լեհաստանի Կրակով քաղաքի Յագելոնյան համալսարանում պաշտպանեցինք մեր գիտական ատենախոսությունը՝ նվիրված Լեհական, իսկ 16-րդ դարից՝ Լեհ-լիտվական միացյալ թագավորությունում¹ 14-18-րդ դարերի ընթացքում ստեղծված հայալեզու ձեռագրական ժառանգությանը²: Աշխատության մեջ Լեհաստանում վերջերս հայտնաբերված հայագիտական բնույթի աղբյուրների թվում հակիրճ գրությամբ տեղեկացրել էինք Յազլովեց քաղաքի հայկական դատարանի 1648-1669 թթ. արձանագրությունների մատյանի մասին: Աղբյուրը, որը պատահաբար հայտաբերվել էր Կրակովի Ազգային արխիվում, անձամբ ուսումնասիրելու հնարավորություն չէինք ունեցել: Իրա գոյության մասին տեղեկացել էինք Լեհահայ համայնքի պատմության բազմամյա ուսումնասիրող, Յագելոնյան համալսարանի պրոֆեսոր Քշիշտոֆ Ստոպկայի

¹ Հայ իրականությանը, մասնագիտական գրականության մեջ Լեհ-լիտվական միացյալ թագավորությունը, որը գոյություն է ունեցել 16—18-րդ դարերի ընթացքում, առավել հայտնի է Ռեչ Պոսպոլիտա անվամբ, որը լատ. Res publica (հանրության, ընդհանուր գործ) արտահայտության լեհերեն (Rzeczpospolita՝ rzecz-գործ, pospolita-ընդհանուր) համարժեքն է:

² Ատենախոսության պաշտպանությունից հետո պարզվեց, որ Յագելոնյան համալսարանի՝ 650 տարուց ավել գոյության պատմության մեջ առաջին հայտնիին ենք, որն արժանացել է գիտական այդ կոչմանը:

շնորհիվ: Միայն 2017 թ. առիթ ստեղծվեց մեկնելու Կրակով և անձամբ ուսումնասիրելու աղբյուրը³: Սույն հոդվածի շրջանակներում նպատակ ունենք ընթերցողին ծանոթացնելու մեր նախնական ուսումնասիրության արդյունքներին:

Յազլովեցի (ներկայումս գյուղ Ուկրաինայի արևմտյան շրջանում) հայկական համայնքին առնչվող մեր աղբյուրները սուղ են⁴. դրանք հիմնականում կրոնական բովանդակության մոտ մեկ տասնյակ ձեռագրեր են՝ հիշատակարանային բնույթի համեստ տեղեկություններով⁵: Թերևս միակ բացառությունը Յազլովեցի հայկական երիտասարդական կազմակերպության, այսպես կոչված կտրիճների եղբայրության 1658 թ. կանոնադրությունն է: Վիեննայի Մխիթարյան միաբանության գրադարանում պահվող, ընդամենը յոթ թերթից բաղկացած, պատմական մեծ կարևորություն ունեցող այդ աղբյուրը դեռևս 1973 թ.-ին հրատարակել է Լեհ-լիտվական թագավորության հայ համայնքի պատմությանը նվիրված բազմաթիվ աշխատությունների հեղինակ, Մատենադարանի երբեմնի փոխտնօրեն Վարդան Գրիգորյանը⁶: Այս առումով հասկանալի է 256 թերթ (512 էջ) պարունակող յազլովեցյան նորահայտ աղբյուրի կարևորությունն ու պատմական նշանակությունը, մանավանդ որ

³ Նման հնարավորություն ստացանք Կրակովի Մշակույթի միջազգային կենտրոնի *Thesaurus Poloniae* կրթամշակույթի շնորհիվ: «Յազլովեցի ֆաղափի հայկական դատարանի 1648-1669 թթ. արձանագրությունների մատյանը որպես Լեհ-լիտվական թագավորության պատմության կարևոր աղբյուր» խորագրով մեր թեման աշխարհի տարբեր երկրներից ուղարկված հինգ տասնյակից ավել հայտերի շարժում էր, որն ընտրվեց հանձնաժողովի կողմից (տե՛ս <http://mck.krakow.pl/programme-editions>):

⁴ Տե՛ս Վ. Ռ. Գրիգորյան, «Յազլովեցի ֆաղափի հայ գաղթօջախը (Համառոտ պատմություն)», ՊԲՀ, 1973, 3, էջ 52-70: Յազլովեցի վերաբերյալ բազմաթիվ վկայություններ կան Քշիշտոֆ Ստոպկայի և Անդժեյ Փիենբայի հեղինակած «Հայոց Լեհաստանը» խորագրով լեհերեն աշխատության մեջ, տես՝ *K. Stopka, A. Zięba, Ormiańska Polska*, Warszawa, 2018 (տե՛ս աշխատությանը առանձին գրքով կցված անձնանունների և տեղանունների ցանկը, „Jazłowiec” բառի տակ, էջ 34):

⁵ Յազլովեցի հետ առնչություն ունեցող հայկական ձեռագրերի մասին տե՛ս Վ. Ռ. Գրիգորյան, «Յազլովեցի ֆաղափի հայ գաղթօջախը...», էջ 64-65: Յազլովեցում 1618 թ. ընդօրինակված, ներկայումս ՄՄ 9655 ձեռագրի մասին տե՛ս Փ. Մնացականյան, *Լեհահայեր. Ձեռագրական ժառանգություն. Կազմվել է Մատենադարանի ձեռագիր հավաքածուների հիման վրա. կովում հայկական թեմի հիմնադրման 650-ամյակի (1367-2017) առթիվ*, Երևան 2017, էջ 80, 115: Ձեռագրի մանրանկարները տե՛ս էջ 118-123, կազմի նկարը տե՛ս էջ 110-111:

⁶ Վ. Ռ. Գրիգորյան, «Յազլովեցի ֆաղափի հայկական գաղութի «Վարիմվորաց եղբայրության» կանոնադրությունը», *ԼՀԳ*, 1973, 9, էջ 40-60: Ձեռագրի տիպոգրաֆերը տես *K. Stopka, A. Zięba, Ormiańska Polska*, էջ 138:

այն Յազլովեցի հայ համայնքում ստեղծված, մինչ այժմ մեզ հայտնի հայերեն հնագույն դատական մատյանն է⁷:

Մատյանի արտաքին նկարագրությունը

Յազլովեցի հայկական դատարանի 1648-1669 թթ. արձանագրությունների մատյանը պահվում է Կրակովի Ազգային արխիվում (այսուհետև՝ ԿԱ), գույքահամար *Podh II 165*: Բաց շագանակագույն կաշեպատ գիրք է՝ ոսկեզօծ զարդանախշերով: Կազմի Ա երեսի կենտրոնում երևում է Լեհական Լյուբոմիրսկի իշխանական ընտանիքի զինանշանի ոսկեզօծ կնիքը: Ձախ անկյունի վերևում փակցված քառակուսի թղթի վրա մատյանի գույքահամարն է և Կրակովի Ազգային արխիվի անվանումը Լեհերենով՝ «*Archiwum Państwa w Krakowie Podh II 165*»: Կազմի Բ երեսի կենտրոնում Լեհ իշխան Ալեքսանդր Դոմինիկ Լյուբոմիրսկու (1693-1720) ոսկեզօծ գրքանիշն է՝ կենտրոնում՝ շրջանակի մեջ առնված «*DE LA BIBLIOTHEQUE DE MR. LE PR. ALEXANDRE LUBOMIRSKI*» գրությունը: Կազմի թիկունքին կան հորիզոնական ոսկեզօծ գծեր: Վերևի հատվածում փակցված թղթե պատառիկի վրա երևում է ձեռագիր գրված «10» թվանշանը: Դրանից ներքև՝ քառակուսի թղթե պատառիկի վրա դրոշմված է «*MANUSCRIPT 1648*» ոսկեզօծ գրությունը, ներքևում ձեռագիր ավելացրած՝ «*Ormiański*» գրությունը: Կենտրոնում ոսկեզօծ դրոշմագիր «*W*» տառն է: Ստորին հատվածում՝ քառակուսի թղթե պատառիկի վրա դրոշմված է «*G 15.*» ոսկեզօծ գրությունը: Ձեռագրի մեծությունն է՝ 31x19: Թերթերի քանակը՝ 256/512 էջ: Ձեռագիրն ունի տարատեսակ լուսադրոշմներ: Վիճակը՝ լավ:

⁷ Մինչ այժմ հայտնի էին Յազլովեցի հայ համայնքում ստեղծված, պատմական կարևոր ժամանակահատված՝ 1669-1672 թթ. ընդգրկող, լեհերեն գրված դատական արձանագրությունները: Դրանց հղումներ և դրանցից ընդարձակ ֆաղվածքներ է արել 19-րդ դարի լեհահայ գործիչ, դոմինիկյան միաբանության անդամ Սադոկ Բարոնշը (1814-1892) իր «Յազլովեցյան հուշեր» խորագրով լեհերեն աշխատության մեջ, տե՛ս *Pamiętki Jazłowieckie, zebrał x. Sadok Barącz Zakonu Kaznodziejskiego*, Lwów, 1862, էջ 110-117: Սադոկ Բարոնշի մասին տե՛ս Ռ. Համբարձումյան, *Սադոկ Բարոնշը Լեհահայոց պատմության ուսումնասիրող*, Երևան 1998: Տե՛ս նաև Վ. Ռ. Գրիգորյան, «Յազլովեց ֆաղափի հայ գաղթօջախը...», էջ 60:

Արձանագրությունների բովանդակությունը

Լեհական թագավորությունում գործող հայկական ինքնավար մարմինների գործառույթներից ամենակարևորը դատական իշխանության իրականացումն էր⁸: Յազլովեցի հայկական դատարանի արձանագրությունները վերաբերում են տվյալ դատարանի իրավասության ներքո գտնվող տարաբնույթ հարցերի: Դրանք գլխավորապես քաղաքացիական բնույթի գործեր են, քանզի քրեական հարցերով դատավարությունը գտնվում էր լեհական դատարանների իրավասության ներքո:

Յազլովեցյան արձանագրությունները վերաբերում են սեփականության, գույքային իրավունքի հարցերի (առուծախ, վարձակալություն, ժառանգում), ստանձնած ինչ-ինչ պարտավորությունների կատարմանը կամ դրանց խախտմանը (որևիցե իրի պատրաստում, նորոգում, մատակարարում), մանր խուլիգանությանը (ծեծ, հայհոյանք), գումարային հարցերի (պարտք վերցնել, պարտքը ժամանակին չվերադարձնել), կտակների կազմմանը, գրօրենքների՝ ամուսնության նոտարական դաշնագրերի կնքմանը: Դատական գործերում մեծ թիվ են կազմում մի շարք տոնավաճառների, գլխավորապես յազլովեցյան ամենամյա տոնավաճառի մասին հիշատակությունները, որոնք ոչ միայն տնտեսական գործարքներ կնքելու առիթ էին դրանց մասնակից Լեհ-լիտվական թագավորության հպատակների և օտարերկրյա քաղաքացիների համար, այլ նաև հնարավորություն էին տալիս պարտապաններին մարելու իրենց պարտքերը: Հաճախ առևտրականները լրացուցիչ ժամանակ էին խնդրում դատարանից գումարը վերադարձնելու համար՝ հիմնավորելով դա այն հանգամանքով, որ առևտրի համար անհաջող տարիներ են եղել: Խոսքը 1648-1654 թթ. ընթացքում Լեհ-լիտվական թագավորության դեմ Զապոռոժիե նահանգի հեթման Բոգդան Խմելնիցկու գլխավորած կոզակական ապստամբության մասին է, որի պատճառով շատ ճանապարհներ վտանգավոր էին դարձել առևտրական քարավանների համար: Փաստորեն, յազլովեցյան արձանագրությունների՝ գիտական շրջանառության մեջ դնելը մի լրացուցիչ աղբյուր կհանդիսանա ուսումնասիրելու, թե ինչպես էր ընթանում թագավորության տվյալ հատվածի հայ համայնքի կյանքը ապստամբության անբարենպաստ տարիներին:

⁸ Ռեշ Պոսպոլիտայում հայկական ինֆանվար մարմինների իրավասության ներքո գտնվող հիմնական գործառույթների մասին մանրամասն տե՛ս Մ. Լ. Հովհաննիսյան, *Ուրվագծեր Լեհաստանի և Արևմտյան Ուկրաինայի հայկական գաղթավայրերի պատմության*, Երևան 1977, էջ 113-139:

Գատական արձանագրություններում հիշատակվում են հայ և օտարազգի հպատակներ՝ առևտրականներ ու արհեստավորներ Լեհ-լիտվական թագավորությունից (Լվով, Կամենեց, Ջամոչչ, Բրոդի), նրա անմիջական հարևան պետություններից՝ Մոլդավիայից, Վալախիայից (Սուլավա, Սերաթ), Օսմանյան կայսրությունից (Անկարա, էդիրնե, Ստամբուլ, Հալեպ), հատկապես կայսրության տիրապետության տակ գտնվող բուն հայկական տարբեր շրջաններից (Բիթլիս, Սեբաստիա, Բաբերդ, Թոխաթ), Սեֆյան Իրանից (Ջուղա, Ագուլիս), Կրիմից և այլն:

Մասնագիտություններից հիշատակվում են՝ կոշկակար, ոսկերիչ, ջուլհակ, կերպասագործ, սեկագործ, պասմաճի, ժամկոչ, դերձակ, վաճառական, փականագործ, մշակ, ոսկեբորակի հետ աշխատող մասնագետ, կառուպան, մազման, վերմակ կարող, սափրիչ, մոմճի, ներկարար, մսագործ և այլն: Տնտեսական գործարքներ են կնքվում սննդամթերքի՝ մեղրի, գարեջրի, գինու, նաև կոշկեղենի, մորթեղենի, թրի, թուխտների, ձիու և այլի հետ կապված:

Ազգություններից՝ բացի հայերից, արձանագրություններում հանդիպում ենք հրեաների, լեհերի, ռուսիների⁹, հոռոմների (հույների), օլախների¹⁰ (նաև վլախներ կամ վալախներ), ինչպես նաև մահմեդական ազգերի ներկայացուցիչների վերաբերյալ հիշատակություններ: Քանի որ Լեհական թագավորության հայկական դատարանները քննում էին նաև օտարազգիների հայցերը, որոնք առնչվում էին թագավորության հայ բնակչությանը, ուստի Յազլովեցի

⁹ Չլիդրել ռուսների հետ: Հայկական աղբյուրներում հաճախ հանդիպող էրնոնիմ է: Պատմական ռուսիները արևելալավոնական ծագում ունեցող ժողովուրդ էին, որոնց նույնականությունը հիմնված էր առաջին հերթին կրոնի՝ ուղղափառության և ոչ թե ազգության: Խորհրդային պատմագրությունը «ռուսին» էրնոնիմը վերագրել է գլխավորապես ուկրաինացիներին:

¹⁰ Վալախիա պատմական մարզի ժողովուրդների անունը: Հայկական աղբյուրներում առավել հաճախ հանդիպում է «օլախ» տարբերակը: Հետաքրքրական է ՄՄ 1527 ձեռագրի հիշատակարանը, որտեղ «օլախ» և «վլախ» տարբերակները համարժեք են և միասին են հանդես գալիս, մասնավորապես Հովհաննես արհեստակարար ներկայացվում է որպես նախ «Լևոսաց եւ Ալախաց» աշխարհի, ապա «[Լևո]սաց աշխարհի եւ Վալախաց» հայոց արհեստակարար, տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ե, կազմեցին Օ. Եգանեան, իմբագրությամբ Յ. Քեռէկեանի, Ա. Ղազարոսեանի, Տ. Շահէ քհյ. Հայրապետյանի, ցանկերը կազմեց՝ Վ. Դերիկեանը, Երևան 2009, էջ 333-334: Հայ իրականության մեջ էրնոնիմը վերագրվում է մոլդավացիներին (տե՛ս Ռ. Ս. Ղազարյան, Հ. Մ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, 2-րդ բարեփոխված հրատարակություն, Երևան 2009, էջ 823) և ռուսիներին (տե՛ս Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 11, Երևան 1985, էջ 229):

դատական արձանագրություններում հանդիպում ենք վերոնշյալ օտարազգիների մասին հիշատակություններ: Հատկապես մեծ թիվ են կազմում հրեաների հայցերը:

Արձանագրություններում հանդիպում ենք նաև կտրիճների եղբայրության անդամների վերաբերյալ տեղեկություններ:

Կառուցվածքը

Արձանագրությունների կառուցվածքը գրեթե միանման է: Որպես կանոն, տրված է տարեթիվը, ամսաթիվը, հաճախ նաև շաբաթվա օրը, ապա նշված է նիստին նախագահող վոյթի¹¹ համայնքի առաջնորդի անունը, որը նաև համայնքի դատական իշխանության գործառույթ էր իրականացնում: Երբեմն հիշատակվում են նաև լեհ բարձրաստիճան պաշտոնյաների անուններ: Հայ վոյթի հետ միասին հաճախ տրված են դատական նիստին մասնակցած ավագանու անդամների՝ աղաների անունները, այդ թվում նաև երեսփոխանի գործառույթը իրականացնող անձի անունը: Որոշ արձանագրություններում հանդիպում ենք համայնքի հոգևոր իշխանության ներկայացուցիչների անուններ, օրինակ՝ եպիսկոպոսի, դատական գրագիրների: Այնուհետև շարադրվում է բուն գործը: Դատարան դիմած անձը ներկայացնում է իր հայցը: Ապա ներկայացվում է հայցվորի պատասխանը: Վերջում տրված է վոյթի որոշումը: Բոլոր կողմերի ելույթները տրված են ուղղակի խոսքով, ինչը կարևոր նյութ է լեզվաբանների համար, քանի որ դա 17-րդ դարի երկրորդ կեսի Յազուվեցի հայության խոսակցական լեզուն է: Արձանագրությունների վերջին էջերում կան ցուցակներ՝ համայնքային գանձանակին գումար տրամադրած անձանց անունների և գումարի չափի վերաբերյալ:

Լեզուն

Արձանագրությունները գրված են մի քանի լեզվով՝ հայերեն, լեհերենից, լատիներենից և արևելյան ծագման բառերի փոխառություններով, հայատառ լեհերեն, հայատառ ղփչաղերեն, հայատառ լատիներեն, լեհերեն և լատիներեն: Գրությունների գերակշռող մասը հայատառ լեհերենով է: Սա մեզ հայտնի

¹¹ Ռ. Ս. Ղազարյան, Հ. Մ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան..., էջ 740:

Թերևս առաջին աղբյուրն է, որը պարունակում է այսքան մեծ թվով հայատառ Լեհերեն գրություններ: Լեզուների այս զանազանությունը շատ բնորոշ էր Լեհ-լիտվական թագավորության հայ համայնքին առհասարակ, այդ թվում նաև Յազլովեցի հայությանը:

Ստորև ներկայացնում ենք հայերեն մի արձանագրության օրինակ՝ օտար լեզուներից փոխառնված բազմաթիվ բառերով ու կից բառարանով: Ինչպես սովյալ օրինակում, այնպես էլ առհասարակ բոլոր արձանագրություններում մեծ թիվ են կազմում հատկապես բայական հարադրությունները, որոնց բաղադրիչներից մեկը, որպես կանոն, հայերեն բայ է: Հաճախ այդ հարադրությունները բաղկացած են երկու բայերից, ընդ որում, հարադիր բաղադրիչը օտար ծագման բառ է, իսկ հարադրյալը՝ հայկական ծագման (տե՛ս ստորև կցված բնագիրը):

Բնագիր

«ԹՎ ՌՂԷ. փետրվար ԻԴ., օրն Դ-շաբթի:

Արջև սլավեղնը բան Մարտիրոս վոյթիին սղանուլըը բերսօնալիդեր Մարկոս, որդի Գասթարին տօպրօլօնեէ, եավնեէ, եասնեէ պարտք զէզնադ արաւ Նիկօղօս երեսփոխանին սումայ հինգ հարիւր ու քստսուն զօլօթի բօլսքի հէսէպօլ, ամէն զօլօթի երսունակլանլ հրօշ, որն որ այս սումային զաբխատդ արաւ զտունը գրաւ, որ բօմէնեօնը սուման բօվինէն կշլլամ վճարելու նազնաչօնը ատենին, թօյ ետդ աքից Գ. տարի՝ աղանց խօսք, աղանց կալաճի: Երկուսումըն, ես՝ Մարկոս, որդի Գասթարին աղի այս զվըը մեանօվանը զաբխսին վշրայ բան Նիկօղօս երափոխանէն սումայ ԳՃ. զօլօթի բօլսքի հէսէպօլ, ամէն զօլօթի երսունական հրօշ, որ բօմեօնեօնը սուման բօվինէն կշլլամ վճարելու վեց րաթայօլ, թօյ ետդ աղջի րաթան Եազլովցայ եարմարքին, ԹՎ ՌՂԸ. այս հէսէպօլն, ամէն տարի յիսունական զօլօթի բօվինէն կշլլամ վճարելու ամէն <տարի> («տարի» բառի վրա արված կետեր, որ բառը ջնջել է) րաթան նազնաչօնը ատենին, նեէ օտխօօնց թօրայէն, պէզ վշէլաքի տիլացիլի աբէլացիի, ոչ մէկ ցեղ ֆանդերով կամ ըոզկօլ, թիլքօ նաղտ ստըկօլ: Թէ որ նազնաչօնը ատենին այս զվշմեանօվանը սուման թօ ետդ 540 զօլօթին օտտադ չանեմ, դէտը բօվինէն կշլլամ տշնէն օտտօմբիդ անելու»¹²:

¹² Յազլովեցի ֆաղափի հայկական դատարանի 1648-1669 թթ. դատական արձանագրությունների մատյան, ԿԱԱ Родн II 165, էջ 3:

Բնագրի թարգմանությունը

«1648 թ. փետրվարի 24, օրն չորեքշաբթի:

Պատվական վոյթ պարոն Մարտիրոսի առջև անձամբ կանգնելով՝ Գասպարի որդի Մարկոսը հոժար կամքով, բացահայտ, պարզորոշ վկայեց, որ Նիկողոս երեսփոխանին պարտք է հինգ հարյուր ու քսոսասուն լեհական զլոտի հաշվով գումար, յուրաքանչյուր զլոտին երեսունական գրոշ, և այս գումարի դիմաց իր տունը գրավ դրեց: Նշված գումարը պարտավորվում էավճարել սահմանված ժամկետում, այսինքն արանից երեք տարի՝ առանց խոսքի ու ավելորդ խոսակցության: Երկրորդ, ես՝ Գասպարի որդի Մարկոս, այս վերոհիշյալ գրության վրա պարոն Նիկողոս երեսփոխանից վերցրել էավ 300 լեհական զլոտի հաշվով գումար, յուրաքանչյուր զլոտին երեսունական գրոշ, որ նշված գումարը պարտավորվում էավճարել վեց մոծումններով, այն է՝ առաջին մոծումը [կատարել] Յազրովեցի՝ 1649 թ. տոնավաճառին, այս հաշվով՝ ամեն տարի հիսունական զլոտի պարտավորվում էավճարել ամեն տարվա մոծումի սահմանված ժամկետին, չեղանկարով դատարանից, առանց որևիցե ուշացման և բողոքարկման, ոչ մի տեսակ գրավով կամ ապրանքով, [այլ] միայն կանխիկ դրամով: Թե որ սահմանված ժամկետում այս վերոնշյալ գումարը, այսինքն՝ 540 զլոտին չտամ, ուրեմն պարտավոր կլինեմ տնիցս հրաժարվելու»:

Փոխառյալ բառերի բառարան

սլավէդներ (*slawetny*) – պատվական

բան (*pan*) – պարոն

վոյթ (*wójt*) – համայնքի ավագ, ընտրովի առաջնորդ, գավառապետ

սդանովշը բէրսոնալիդէր (*stanqwszy personaliter*) – անձամբ կանգնելով

սոպրովոլնեէ (*dobrowolnie*) – հոժար կամքով

եավնեէ (*jawnie*) – բացահայտ

եասնեէ (*jasnie*) – պարզորոշ

զէզնագ արաւ (*zeznać* (անորոշ դերբայ) – ցուցմունք տալ, վկայել) –
վկայություն, ցուցմունք տվեց

սուճայ (*suma*) – գումար

բոլսքի (*polski*) – լեհական

հէսէպ¹³ – հաշիվ

¹³ Այստեղից սկսած բառարանի բոլոր այն բառերը, որպես կանոն արևելյան ծագման, որոնց կողմին տրված չեն դրանց գրելաձևերը, աննշան փոփոխություններով հանդիպում են հայերեն բառարաններում, մասնավորապես տե ս Թ. Մ. Ղազարյան, Հ. Մ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, 2-րդ բարեփոխված հրատարակություն, Երևան 2009:

հրոշ (*grosz*) – դրամական միավոր
 զաբիսադ արաւ (*zapisać* (անորոշ դերբայ) – գրել) – գրեց [հօգուտ]
 բօմենեօնը (*promieniony*) – նշված, հիշատակված
 նազնաչօնը (*naznaczony*) – սահմանված, նշված
 թօյ էսդ (*to jest*) – այսինքն, այն է
 կալաճի – ավելորդ խոսակցություն, զրույց
 զվըշ մեանօվանը (*zwyż mianowany*) – վերը նշված
 զաբիս (*zapis*) – գրություն, արձանագրություն
 բօվինէն կըլլամ (*powinien* – պետք է) – պարտավոր կլինեմ
 րաթայ (*rata*) – վճար, մուծում
 նեէ օտիօծօնց (*nie odchodząc*) – չհեռանալով
 թօրա¹⁴ (*tora*) – օրենք, իրավունք, դատ, դատարան
 պէզ վշէլաքի (*bez wszelaki*) – առանց որևիցե
 տիլացիա (*dylacja*) – ուշացում, հապաղում
 աբելացիա (*apelacja*) – բողոքարկում
 ֆանդ (*fant*) – գրավ
 ըոզակ – ապրանք, ունեցվածք
 թիլքօ (*tylko*) – միայն
 նաղտ – կանխիկ
 օտտադ շանեմ (*oddać* (անորոշ դերբայ) – տալ, հանձնել) – շտամ
 դէտը (*tedy*) – ուրեմն, ուստի, այսպիսով
 օտսդօմբիդ անելու (*odstąpić* (անորոշ դերբայ) – հրաժարվել, հետ կանգնել,
 նահանջել, զիջել) – հրաժարվելու, զիջելու

Կարծում ենք, որ յազլովեցյան դատական արձանագրությունների վերաբերյալ հաղորդած անգամ ընդհանուր բնույթի այս տվյալները վկայում են, թե որքան կարևոր է ամբողջական նյութը գիտական շրջանառության մեջ դնելը: Դրա հիման վրա պիտի կարողանանք վերականգնել 17-րդ դարի երկրորդ կեսի Յազլովեցի հայ համայնքի պատմությունը վերաբերող տարաբնույթ իրողություններ: Հաշվի առնելով աղբյուրի առանձնահատկություն-

¹⁴ Այս եբրայերեն բառը հաճախ է հանդիպում լեհահայերի դատական արձանագրություններում, մասնավորապես ղփչախերեն:

ները՝ չենք կարծում, որ սոսկ բնագրի հրատարակությունը կարող է բավարար համարվել աղբյուրը գիտական շրջանառության մեջ դնելու տեսանկյունից: Հայատառ լեհերենով և հայատառ դիշաղերենով գրված արձանագրությունները թեև ընթեռնելի են լինելու հայ ընթերցողի համար, սակայն անհասկանալի՝ բովանդակության առումով: Հակառակ երևույթը նկատվելու է լեհ ընթերցողի պարագայում. օրինակ, հայատառ լեհերեն արձանագրությունների բնագիր հրատարակության դեպքում, այսինքն՝ բովանդակությունը հասկանալի է լինելու: Նման խնդրի առջև ենք կանգնելու նաև լեհերեն և լատիներեն արձանագրությունների պարագայում: Ինչ վերաբերում է հայերեն արձանագրություններին, ապա վերևում բերված օրինակը վկայում է, որ լեհերենին անձանոթ ընթերցողը դժվարությամբ է ընկալելու այդ արձանագրությունների բովանդակությունը, անգամ հրատարակության հետ նախատեսվող փոխառյալ բառերի բառարանի առկայության պարագայում, մանավանդ, որ յազլովեցյան արձանագրություններում գրեթե չկան զուտ հայերեն, առանց օտար փոխառությունների գրություններ: Ուստի բնագրին կից հայերեն և լեհերեն թարգմանությունները համարում ենք անհրաժեշտություն:

Համոզված ենք, որ աղբյուրի հրատարակումը հետաքրքրություն կառաջացնի հայ և օտարազգի մասնագետների շրջանում՝ նոր մանրամասներ բացահայտելով Լեհ-լիտվական թագավորության տարաբնույթ հարցերով զբաղվող ուսումնասիրողների համար¹⁵:

¹⁵ Լեհաստանում գտնվելու ժամանակ զեկույցով հանդես եկանք հոկտեմբերի 11-ից 14-ը Կրակովում տեղի ունեցած Լեհաստանի պատմությամբ զբաղվող արտասահմանցի գիտնականների 3-րդ միջազգային գիտաժողովում: Բացի այդ, նոյեմբերի 27-ից 29-ը դասախոսությամբ հանդես եկանք Պոզնանի Ադամ Միցկևիչի և Լեշնոյի Յան Ամոս Կոմենսկու անվան համալսարաններում: Օգտվելով ընձեռված առիթներից՝ զեկույցի ամբիոնն օգտագործեցինք գիտական հանրությանը տեղեկացնելու յազլովեցյան նորահայտ աղբյուրի մասին, հատկապես ուշադրություն հրավիրելով հայատառ լեհերեն գրությունների վրա, ինչը, կարծում ենք, կառող է 17-րդ դարի երկրորդ կեսի խոսակցական լեհերենի ուսումնասիրման նյութ հանդիսանալ լեհ լեզվաբանների համար:

Piruz Mnatsakanyan

**THE ARMENIAN COURT REGISTER BOOK OF YAZLOVETS (1648-1669).
NEW-FOUND SOURCE FROM POLAND**

Keywords: The National Archives in Cracow, Polish-Lithuanian Commonwealth, 17th century, Yazlovets, the Armenian Court, Court Register Book, Armenian-Polish and Armenian-Kipchak allogographies, Jews.

In this paper, the author describes the major aspects of the Armenian Court Register Book of Yazlovets (1648-1669) in former Polish-Lithuanian Commonwealth, nowadays kept in the National Archives in Cracow (signature Podh II 165), which she had studied during a three-month fellowship programme “Thesaurus Poloniae” (17th edition, September – December 2017) of the Ministry of Culture and National Heritage of Poland.

The Court book, which contains 512 pages, is written in several languages, such as Armenian, with numerous loan-words from Polish and Eastern languages, Armenian-Polish, Armenian-Kipchak and Armenian-Latin allografies, also in Polish and Latin. The Court files are devoted to the civil law of the Armenian Community in Yazlovets with the mention of Armenian and non-Armenian subjects. They are from various cities of the Polish-Lithuanian Commonwealth, of her nearest neighboring countries, also from the Ottoman Empire, especially from the historical Armenian lands, under the Ottoman rule, Iran, Crimea. Besides Armenians, the Court Book contains cases of Jews, Poles, Ruthenians, Vlachs, also representatives of the Islamic religion. As an example, the author cites an Court case written in Armenian, with numerous loan-words, mostly from Polish, and provides its modern Armenian translation along with a Glossary. The author intends to publish this source in Armenian and Polish translations.

ПИРУЗ МНАЦАКАНЯН

**АРМЯНСКАЯ СУДЕБНАЯ КНИГА ЯЗЛОВЦА
(1648-1669). НОВЫЙ ИСТОЧНИК ИЗ ПОЛЬШИ**

Ключевые слова: Национальный архив в Кракове, Речь Посполита, XVII век, Язловец, Армянский Суд, Судебная книга, армяно-польская и армяно-кыпчакская аллография, евреи.

В статье дается предварительное описание регистрационной книги армянского суда Язловца (Речь Посполита, 1648-1669 гг.), в настоящее время хранящейся в Краковском национальном архиве (Podh II 165). Исследование осуществлено благодаря трехмесячной стипендии, выделенной в рамках программы “Thesaurus Poloniae” (17-й выпуск, сентябрь - декабрь 2017) Министерства культуры и национального наследия Польши.

Судебная книга, содержащая 512 страниц, написана на нескольких языках: на армянском, с многочисленными заимствованиями из польского и восточных языков, армяно-польскими, армяно-кыпчакским и армяно-латинским аллографами, а также на польском и латыни. Сборник содержит гражданские правовые акты армянской общины Язловца, в которых упоминаются множество лиц различного гражданского состояния и национальностей. Это подданные Речи Посполитой и иностранцы, жители ближних стран, но и Османской империи, Ирана, Крыма и собственно Армении; помимо армян, в Судебной книге часто упоминаются евреи, а также поляки, русины, влахи и представители мусульманских народов. В качестве образца разбирается один из актов суда, показываются многочисленные заимствования из польского и других языков. Текст акта снабжен глоссарием и армянским переводом.

ԱՎԵՏԻՍ ԵՐԵՑ ԵՐԵՎԱՆՑԻ ԳՐԶԻ ԶԵՌԱԳՐԱԿԱՆ
ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Նվիրվում է Երևանի 2800-ամյակին

Բանալի բառեր՝ Երևան, ձեռագիր, եկեղեցի, գրիչ, պատվիրատու, պատմագիր, մանրանկար, հիշատակարան, Ավետարան:

Երևանի միջնադարյան պատմության ուսումնասիրման համար բացառիկ սկզբնաղբյուրներ են քաղաքի տարբեր եկեղեցիների հովանու ներքո ընդօրինակված ձեռագիր մատյանները, որոնց հիշատակարանները հավաստի տեղեկություններ են հաղորդում ոչ միայն գրչության պայմանների, վայրի ու ժամանակի, այլև ընդօրինակողների մասին: Չնայած նրան, որ Երևանի (ներառյալ միջնադարում Երևանամերձ բնակավայրերի՝ Նորք, Նորագավիթ, Քանաքեռ և այլն) գրչական կյանքի մասին վաղագույն ստույգ հիշատակությունները դեռևս ժ.Պ. դարից են¹, այդուհանդերձ Երևանն իբրև գրչության կենտրոն առավելապես հայտնի է դարձել ժ.Ն. դարում: Երևանում գրված և մեզ հասած ձեռագրերի զգալի մասը հենց ժ.Ն. դարից է, որոնց հիշատակարաններն անփոխարինելի նշխարներ են քաղաքի՝ տվյալ ժամանակաշրջանում ունեցած դերի, հոգևոր ու մշակութային կյանքի մասին: Հիշատակարանների միջոցով է, որ

¹ Երևանից մեզ հայտնի ժամանակագրորեն վաղագույն ձեռագիրը Նորից է. ՄՄ 522 Տոնապատմաբանի գրչության հիշատակարանի համաձայն՝ այն 1297 թ. ընդօրինակել է Սարգիս Բանանա գրիչը՝ Նորք գյուղաբաղաճի Ս. Ստեփանոս եկեղեցու հովանու ներքո (Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի (այսուհետև՝ ՄՅՀՁ ՄՄ), հ. Բ., կազմեցին՝ Օ. Եղանեան, Ա. Զեյթունեան, Ա. Քեօշկերեան, Երևան, 2004, սիւն 1126, հմմտ. Ա. Մաքևոսյան, «Երևանի գրչության կենտրոնները», Երևանի հոբեյանը-2750, հեղինակ-կազմող՝ Ա. Խաչիկյան, Երևան, 1972, էջ 114):

ընդհանուր պատկերացում ենք կազմում Երևանի եկեղեցիների որպիսություն, տեղի գրիչների ու ծաղկողների գործունեության մասին:

Ժէ. դարի երկրորդ կեսին գործած բազմաշխատ գրիչ է ծագումով երևանցի Ավետիս երեցը, որի ձեռագրական ժառանգությունը մինչ օրս ամբողջական ու պատշաճ ուսումնասիրված չէ: Երևանի պատմության ուսումնասիրման համատեքստում Ավետիս գրչին ու նրա մատենագրական ժառանգությանը համառոտ անդրադարձել է պատմաբան Թադևոս Հակոբյանը, որը վկայակոչելով նրա գրչագրած ձեռագրերից շորսը՝ նշում է, որ Ժէ. դարի 60-90-ական թթ. երևանում գործում էր ծագումով երևանցի բավական հայտնի ու բեղուն գրիչներից մեկը՝ Ավետիս երեցը, որը շուրջ 30 տարի զբաղվել է գրչարվեստով՝ իր ընդօրինակած ձեռագրերում թողնելով ընդարձակ հիշատակարաններ²:

Մաշտոցյան Մատենադարանի ձեռագրացուցակների, հիշատակարանների ժողովածուների և անվանի ձեռագրագետ Արտաշես Մաթևոսյանի կազմած «Հայ գրչության կենտրոններ» քարտարանի օգնությամբ մեզ հաջողվել է ցուցակագրել Ավետիս գրչի ընդօրինակած ձեռագրերից մեկ տասնյակը (մի քանիսը ևս վերագրելի են նրա գրչին), որոնցից 8-ը՝ Մաշտոցյան Մատենադարանի հավաքածուից են (ՄՄ 246, 1772, 3769, 6315, 8785, 8880, 10349, 10846), մեկը՝ Վիեն. 137 (հին Հ^մ 83) ձեռագիրն է, մյուսը՝ Կարինի Ջիթավոզբ գյուղի Ս. Աստվածածին եկեղեցու ավետարաններից մեկը, որը չի պահպանվել, և նրա մասին տեղեկությունը մեզ է հասել Հ. Հակոբ վրդ. Քոսյանի՝ 1912 թ. կազմած Կարնո գյուղերի ձեռագրացուցակի տվյալներով (Հ^մ 16):

Ավետիս գրիչն, ըստ իր ընդօրինակած ձեռագրերի հիշատակարանների՝ գործել է Երևան քաղաքի տարբեր եկեղեցիների՝ Կաթողիկե Ս. Աստվածածնի, Ս. Պողոս-Պետրոս-Երկուերեսնի, Ս. Հակոբի, Ս. Սարգսի գրչության դպրոցներում: Վերջին երկուսը երբեմնի Չորագյուղի անապատի եկեղեցիներն են, որոնցից Ս. Սարգիսը, թեպետ ձևափոխված, բայց այսօր էլ կանգուն է: Բովանդակային առումով, Ավետիս երեցի գրչագրած ձեռագրերը տարաբնույթ են՝ Ավետարան, Հայսամավորք, Ճաշոց և, որ հետաքրքիրն է, նա ընդօրինակել է նաև Առաքել Դավրիժեցու Պատմագրքի մեզ հասած երկու օրինակ: Այդ ձեռագրերն են՝ Վիեն. 137-ը և ՄՄ 1772-ը, որոնց ընդօրինակումն իրականացվել է Առաքել պատմագրի կենդանության օրոք³ և նրա հանձնարարությամբ՝ 1665-

² Թ. Հակոբյան, Երևանի պատմությունը 1500-1800 թթ., Երևան, 1971, էջ 394:

³ Առաքել պատմագիրը վախճանվել է 1670 թ. և թաղվել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբա-

1666 թթ.: Միայն այս հանգամանքը թույլ է տալիս փաստել, որ Ավետիս Երեցը ժամանակի բավականին հայտնի ու հմուտ գրիչներից մեկն էր, ինչ-որ տեղ նաև Առաքել Դավրիժեցու վատահմուտները վայելած գրիչ-քարտուղարը, որը պատիվ է ունեցել ընդօրինակել պատմագրի՝ Ժէ. դարի պատմության համար առաջնային սկզբնաղբյուր համարվող երկը: Այս բազմաշխատ գրչի մատենագրական ժառանգությանն առավել հիմնավոր ծանոթանալու համար անդրադառնանք նրա գրչագրած ձեռագրերին առանձին-առանձին.

Ժամանակագրորեն վաղագույն երկու ձեռագրերը հենց Առաքել Դավրիժեցու Պատմագրքի ընդօրինակություններն են, որոնցից առաջինը գրչագրվել է 1665 թ., Երևանի Կաթողիկե եկեղեցում: Ներկայումս Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարանում պահվող ձեռագիրը Հ. Հակոբոս Տաշյանը նկարագրել է նույն մատենադարանի հավաքածուի ձեռագրացուցակում, որտեղից էլ քաղել ենք մեզ հետաքրքրող տվյալները:

Ա. Վեեն. 137 (83), ԱՌԱՔԵԼ ԴԱՎՐԻՇԵՅԻ, ՊԱՏՄՈՒԹԻՒՆ:

ՌՃԺԳ. — 1665 թ., Երևան, ի դուռն սուրբ եկեղեցոյս, որ անուանի Կաթողիկէ:

Գրիչ՝ Աւետիս Երէց [Երեւանցի]: Ստացող՝ Առաքել Դավրիժեցի:

Կազմը՝ նոր կիսակաշի (թերևս՝ մոմլաթ), 432+ 5 թերթ, թուղթ, 18,5x14, միասյուն, բոլորգիր՝ կանոնավոր և վայելուչ, 23 տող, վիճակը՝ լավ, սկզբից 4 թերթ ընկած, խորագրերն ու սկզբնատողերը՝ կարմրով և մանուշակագույնով:

Գրչության ժամանակի հիշատակարանում կարդում ենք. «...գրեալ եղև գիրքս, որ կոչի Պատմագիրք, ի մեծ թվականիս Հայոց ՌՃԺԳ. (1665), ի մայրաքաղաքս Երևան, ի դուռն սուրբ եկեղեցոյս, որ անուանի Կաթողիկէ, հոգաբարձութեամբ, ծախիւք եւ արդեամբք Առաքեալ վարդապետի, որ է նոյն ինքն այս պատմագրքիս շինողն եւ արարողն թարվիղեցի Առաքեալ վարդապետն, որ վասն զօրինակն բազմացուցանելոյ էտ գրել զայս գիրքս, որ եւ այս չորրորդ գիրք է, որ ինքեան Առաքեալ վարդապետի ձեռացագիր օրինակէն գաղափարեցաւ, որ յոլով ջանիւ եւ բազում հոգաբարձութեամբ ծախէ ինչս եւ ձեռամբ

նական գերեզմանոցում: Օրոհոցաձև տապանափարի նեղ նիստերից մեկին պահպանվել է հետևյալ արձանագրությունը. «Պատմագիրն, այս է տապան Առայել վարդապետին, ՌՃԺԹ (1670) թվին» (Ա. Հարությունյան, Վաղարշապատ. վանքերը և վիճական արձանագրությունները, Ս. էջմիածին, 2016, էջ 138-139, արձ. 171):

գրչաց գրել տայ, առաջին՝ վասն օրինակին բազմանալոյ, եւ երկրորդ՝ վասն առ Տէր յիշատակին... Ընդ սոցին մաղթեմ յիշել ի Քրիստոս զիս՝ զփանաքի գրիչս զԱւետիս երէցս, որ հրամանաւ Առաքեալ վարդապետին գրեցի զգիրքս վասն հասարակաց օգտի...»⁴:

Բավական ուշագրաւ հիշատակարանը լավագոյնս բնութագրում է ձեռագրի ստեղծման հանգամանքները և այդ գործում հեղինակ Առաքել Դավրիժեցու ներգրումը, որն իր ունեցվածքը վաճառել ու անձնական միջոցներով է հանձնարարել ընդօրինակել իր աշխատությունը:

Առաքել Դավրիժեցու Պատմության քննական բնագիրը կազմելիս՝ Լենա Խանլարյանն անդրադարձել է երկի՝ մեզ հասած բոլոր ձեռագիր օրինակներին (8 միավոր), նաև՝ տպագրերին (3 միավոր): Ձեռագրերից 4-ն, ըստ նրա՝ կատարված են մայր օրինակից, որը չի պահպանվել: Մնացած 4 ձեռագրերը (ՄՄ 1772, 1773, 7296, Վիեն. 137), որոնք ընդօրինակվել են հեղինակի կենդանության օրոք և անմիջական հսկողությամբ, և Խանլարյանի դիպուկ բնորոշմամբ՝ գրեթե ինքնագրի արժեք ունեն⁵: Ժամանակագրորեն վաղագոյնը Կարբիում՝ 1663 թ. Աթանաս դպիրի ձեռքով ընդօրինակված ձեռագիրն է, որը ՄՄ 1773-ն է⁶: Մայր ձեռագրից ընդօրինակվածների շարքում հետազոտողը նշում է նաև Վիեննայի հիշյալ ձեռագիրը, որի հիմամբ, ըստ նրա՝ Ոսկան Երևանցին 1669 թ. Ամստերդամում առաջին անգամ հրատարակել է Պատմագիրքը: Դառնանք Ավետիս երեցի ընդօրինակությամբ մեզ հասած Պատմագրի երկրորդ ձեռագրին:

Բ. ՄՄ 1772, ԱՌԱՔԵԼ ԴԱՎՐԻԺԵՑԻ, ՊԱՏՄՈՒԹԻՒՆ:

ԹՃԺԵ. – 1666 թ., Երեւան, ի դուռն սրբոյ եկեղեցոյս, որ անուանի Կաթողիկէ:

Գրիչ՝ Աւետիս երէց [Երեւանցի]: Ստացող՝ Առաքել Դավրիժեցի:

Կաշեկազմ՝ դռնակով, 419 թերթ, թուղթ, 21,5x15,5, միասյուն, նոտրգիր, 23 տող, վիճակը՝ բավարար, կապիչներն ընկած, մանրանկարչությունը՝ զուսպ

⁴ Յուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, կազմեց՝ Հ. Յակովբոս վ. Տաշեան, Վիեննա, 1895, էջ 433, տե՛ս նաև Ք. Հակոբյան, Երևանի պատմությունը 1500-1800 թթ., էջ 394: Ձեռագրի մանրաժապավենը պահվում է Մաշտոցյան Մատենադարանում՝ Հ^մ 678:

⁵ Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, աշխատաւիրությամբ՝ Լ. Խանլարյանի, Երևան, 1990, էջ 49:

⁶ Ձեռագրի գիտական ընդարձակ նկարագրությունը տե՛ս ՄՅՁՁ ՄՄ, հ. Ե., կազմեց՝ Ս. Եգանեան, Երևան, 2009, սիւն 1159-1166:

է, ունի գծանկարային եղանակով արված կիսախորան (7ա), զարդագրեր՝ կենդանագիր, թռչնագիր, հանգուցագիր, վիշապաձև բոլորակ (356բ, նկ. 2): Գույներից օգտագործված է կարմիրը:

Դատելով գրչության հիշատակարանից, որը գրեթե կրկնում է նախորդ ձեռագրի հիշատակարանը՝ այս մեկը ևս գրվել է Առաքել Դավրիժեցու պատվերով 1666 թ., դարձյալ Երևանի Կաթողիկե եկեղեցում. «...գրեալ եղև գիրքս, որ կոչի Պատմագիրք, ի Մեծ Թվականիս Հայոց ՌՃԺԵ. (1666), ի մայրաքաղաքս Երեւան, ի դուռն սրբոյ եկեղեցոյս, որ անուանի Կաթողիկէ, հոգաբարձութեամբ, ծախիւք եւ արդեամբք Առաքեալ վարդապետի... որ եւ այս հինգերորդ գիրք է, որ ինքեան Առաքեալ վարդապետի ձեռացագիր օրինակէն գաղափարեցաւ»⁷:

Հիրավի, բովանդակային առումով այն գրեթե չի տարբերվում նախորդ օրինակից, ինչը վկայում է, որ սրանք են հիմք հանդիսացել ամստերդամյան տպագրի համար, քանի որ վաղարշապատյան երկրորդ (1884 թ.) և երրորդ (1896 թ.) հրատարակություններում կան հավելումներ (ընդ որում, դրանց մի մասը վերագրվում է Առաքել պատմագրին), որոնք բացակայում են նշված ձեռագրերում:

Ավետիս Երեցի գրչական վաստակի ժամանակագրորեն վաղագույն օրինակներն արդեն իսկ պարզում են տաղանդաշատ գրչի վարպետությունն ու ունեցած համբավը, որը դրսևորվել է նրա բուռն գործունեության հետագա տարիներին ևս:

Ավետիս գրչից հայտնի հաջորդ ձեռագիրը մեզ չի հասել: Բարեբախտաբար, նկարագրությունը պահպանվել է Կարինի գյուղերի ձեռագրական հավաքածուն ամբողջացնող ցուցակում:

Գ. ԿԱՐԻՆԻ ՁԻԹԱՎՈՂՔ ԳՅՈՒՂԻ ՁԵՌ. 16, ԱԻԵՏԱՐԱՆ:

ՌՃԺԸ. – 1669 թ., Երեւան:

Գրիչ՝ Աւետիս Երէց [Երևանցի]:

Թավշապատ փայտե կազմ, 269 թերթ, թուղթ, 19x13, երկայուն, բոլորգիր, 22-23 տող, վիճակը՝ բավարար, վերջից հիշատակարանը պակասավոր,

⁷ ՄՅՀԶ ՄՄ, հ. Ե., սիւն 1157: Հիշատակարանն ամբողջությամբ հրատարակված է նաև վաղարշապատյան երկրորդ, երրորդ և երևանյան տպագրերում. տե՛ս Պատմութիւն Առաքել վարդապետի Դարիժեցոյ, Վաղարշապատ, 1884, էջ 520, նույնի՝ Պատմութիւն..., Վաղարշապատ, 1896, էջ 673, նույնի՝ Գիրք Պատմութեանց..., Երևան, 1990, էջ 504:

մանրանկարչությունը՝ ավետարանիչների պատկերներ, կիսախորաններ, լուսանցազարդեր, զարդագրեր:

Գրչության հիշատակարանը, կանոնի համաձայն, զետեղված է եղել վերջում՝ Հովհաննու Ավետարանից հետո, որը պակասավոր է, սակայն, կարևորի մասին տեղեկանում ենք. «...[գրեցալ] ԸՃԺԸ. (= ՌՃԺԸ. – 1669) ձեռամբ մեղապարտ գրչի Աւետիս երիցու, ի գաւառս Արարատեան, ի քաղաքս Երեւան, ի հայրապետութեան Սուրբ Էջմիածնի տէրն Յակոբայ, ուստի զկնի թվին ԸՃՁԲ. (= ՌՃՁԲ. – 1733 [°]) ըստացաւ զսա աստուածասէր եւ բարեմիտ այրս //»⁸:

Հիշատակված Հակոբ հայրապետը Ամենայն Հայոց կաթողիկոս Հակոբ Դ Ջուղայեցին է (1655-1680), որի օրոք ձեռագիրն ընդօրինակվել ու տրվել է ոմն աստվածասեր ու բարեմիտ մարդու, որի անունը, ցավոք, չի պահպանվել: Կարծում ենք՝ հիշատակարանն ընդօրինակողը երկրորդ՝ 1733 թվականը սխալ է ընթերցել:

Գ. ՄՄ 246, ԱԽԵՏԱՐԱՆ:

ՌՃԼԳ. – 1684 թ., էրեւան, ընդ հովանեաւ Ս. Յակոբ հայրապետիս եւ Ս. Սարգսիս, Ս. Էրկու Էրէսիս եւ Ս. Կաթողիկէիս:

Գրիչ՝ Աւետիս Էրէց [Երեւանցի]: Ստացող՝ Խանփարի:

Կաշեկազմ՝ դռնակով, 258+2 թերթ, մագաղաթ, 16,7x11,5, երկսյուն, բոլորգիր, 21 տող, վիճակը՝ բավարար, մանրանկարչությունը՝ կարմիր թանաքով և գծանկարային եղանակով արված կիսախորաններ, լուսանցազարդեր ու զարդագրեր:

Գրչության հիշատակարանի սկզբնամասը նվիրված է ձեռագրի պատվիրատու Խանփարիին և նրա ընտանիքին, այսինքն՝ գրիչը, ձեռագրի ստեղծման մանրամասները հաղորդելուց առաջ, նախ հարկ է համարել հիշատակել ստացողին. «...տեսեալ զսորա անճառ փրկագործութեան խորհուրդ, աստուածասէր եւ հաւատարիմ եւ զընտրեալն ի կանայս զԽանփարին եւ ստացաւ զսա եւ ցանկացող եղեալ այս աստուածաբերան սուրբ Աւետարանիս... եւ ջերմեռանդ սրտիւ ետ գծագրել զսա... յիշատակ իւրն եւ որդւոցն՝ Յեթարին եւ Մարգարիտին, եւ կենակցին՝ Յովանէսին... եւ ծնօղացն՝ Յովանէսին եւ Խանբէկուն, եւ

⁸ Յուլյակ հայերէն ձեռագրաց Կարնոյ գիւղերու, կազմեց՝ Հ. Յակոբ վրդ. Քօսեան, ՀԱ, 1963, յովիս-սեպտեմբեր, սիւն 388-389:

եղբարցն՝ Ամիրբեկն, Ազիզն, Ուլուբեկն, Շահունն, զՄարգարէն, եւ զհանգուցեալ քոյրն իւր՝ զՆանէն»⁹: Այնուհետեւ բուն գրչութեանը վերաբերող հատվածն է. «...ես՝ յետինս գրչաց եւ անարժանս ի քահանայից, սուտանուն Աւետիս էրէցս, եւ տեսի զսէր եւ զփափագ Խանփարուս, յանձն առի գծագրել, այլ կարողութեամբն Աստուծոյ աւարտեցի զսա ի քաղաքս իմ յէրեւան, ընդ հովանեալ Սուրբ Յակոբ հայրապետիս եւ Սուրբ Սարգսիս, Սուրբ Էրկու յէրէսիս եւ Սուրբ Կաթողիկէնիս, ի հայրապետութեան տեառն Եղիազարու եւ առաջնորդութեան Սուրբ Ամենափրկչի Լհեցի Յովանէս վարդապետի, ի ղանութեան քաղաքիս Զալխանիս, ի թվականիս Հայոց ՌՃԼԳ. (1684)»¹⁰:

«Սուտանուն» մականվամբ իրեն ստորագասող Ավետիս Երեցը ձեռագիրն ընդօրինակել է իր հարազատ Երևան քաղաքի եկեղեցիների հովանուներքո: Նրանցից Ս. Հակոբ հայրապետն ու Ս. Սարգիսն, ինչպես վերը նշեցինք, երբեմնի Զորագյուղի անապատի կազմում գտնվող եկեղեցիներն են (նաև՝ կաթողիկոսարանի Ս. Գևորգ եկեղեցին), որոնցից պահպանվել և այսօր էլ կանգուն է Ս. Սարգիս առաջնորդանիստը¹¹: Կաթողիկէն քաղաքի կենտրոնում՝ Սալթ-Նովա և Խ. Աբովյան փողոցների խաչմերուկում գտնվող և ներկայիս Ս. Աննա եկեղեցական համալիրի կազմում ներառված փոքր եկեղեցին է (Ժ-ԺԱ. դդ.), որին կից վաղմիջնադարյան բազիլիկ հորինվածքով շինության տեղում ժէ. դարում վերակառուցվել էր նորը, միայն թե ներկայիս փոքր եկեղեցին ընդգրկվել էր այդ բազիլիկի մեջ իբրև ավագ խորան: 1930-ականներին բազիլիկը քանդել են, որի ընթացքում ի հայտ են եկել Կաթողիկէի ԺԳ-ԺԴ. դդ. թվագրվող արձանագրությունները¹²: Ինչ վերաբերում է Երկուերեսնի եկեղե-

⁹ ՄՅՀԶ ՄՄ, հ. Ա., կազմեցին՝ Օ. Եգանեան, Ա. Զէյթունեան, Փ. Անթաթեան, Երևան, 1984, սիւն 1069-1070:

¹⁰ Նույն տեղում, սյուն 1070:

¹¹ Զորագյուղի անապատի եկեղեցիների մասին մանրամասն տեղեկություններ է հաղորդում Ս. Էջմիածնի միաբան և Երևանի թեմակալ առաջնորդ Հովհաննես Եպս. Շահխաթունյանցը, ըստ որի՝ հնագույնը, թերևս Ս. Գևորգ փոքր եկեղեցին է եղել՝ կառուցված Եղիազար Այնթապցի կաթողիկոսի (1681-1691) օրոք, որից հետո կառուցվել է ներկայիս Ս. Սարգիս եկեղեցին. այն հիմնովին վերակառուցվել է 1835-1842 թթ., իսկ Ս. Հակոբ հայրապետի եկեղեցին, որը գտնվել է անապատի հյուսիսային կողմում՝ ֆարափի գլխին. «կառուցեալ ի վերայ շորից սեանց՝ որմունք ի հասարակ ֆարանց եւ ի հողոյ, իսկ սիւնն եւ կամարն հանդերձ առաստաղօք ի թրծեալ աղիւսոյ» (Յովհաննէս Եպս. Շահխաթունեանց, Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, աշխ. Ա. Տեր-Ստեփանյանի, Ս. Էջմիածին, 2014, էջ 305-306):

¹² Կաթողիկէ Ս. Աստվածածին եկեղեցու և նրա վիմագրերի մասին տե՛ս Կ. Ղաֆադարյան,

ցուն, որի ստույգ վայրը մինչև վերջերս հայագիտության վիճահարույց խնդիրներից էր, ապա այն, ըստ ամենայնի, Կաթողիկեից ոչ հեռու գտնվող Ս. Պողոս-Պետրոսն է, որը գտնվելիս է եղել ներկայիս «Մոսկվա» կրիոթատրոնի տեղում և դարձյալ քանդվել է 1930-ականների սկզբներին: Եկեղեցիների նույնացման միանգամայն տրամաբանական գաղափարն առաջ է քաշել երկրաբան Ռ. Հարությունյանը, ըստ որի. «Երկու երեսի կամ Երկու երեցի եկեղեցին հենց Ս. Պողոս-Պետրոսն է: Բացառված չէ, որ եկեղեցին ի սկզբանե կոչվել է Ս. Պողոս-Պետրոս և միայն հետագայում ավելի կիրառական է դարձել «Երկու երեցի» անունը՝ նկատի են ունեցել Ս. Պողոսին և Ս. Պետրոսին»¹³:

Հիշատակարանում վկայված են նաև կաթողիկոս Եղիազար Այնթապցու, Երևանի թեմակալ առաջնորդ և Հավուց թառի վանահայր Հովհաննես Լեհացու, որի նստավայրը Հավուց թառի Ս. Ամենափրկիչն էր, ինչպես նաև պարսից Զալխանի անունները: Նկատենք, որ Երևանում և Հավուց թառում գրված ժէ. դարի բազմաթիվ ձեռագրերի հիշատակարաններում հաճախ վկայված էր նաև Հավուց թառում նստող Երևանի առաջնորդի անունը, քանի որ վերջինս նաև Հավուց թառի վանահայրն էր: Հավուց թառ – Երևան փոխառնչություններին հատուկ անդրադարձել է պատմաբան Կ. Մաթևոսյանը¹⁴, սակայն հիշատակարանում վկայված Հովհաննես Լեհացի վարդապետի մասին ստույգ տեղեկություն գտնել մեզ չհաջողվեց, ըստ այդմ՝ սա դեռևս միակ հիշատակությունն է:

Ուշագրավ է նաև հիշատակարանի վերջնամասը, որը կենսագրական բնույթ ունի, քանի որ գրիչը վկայակոչում է ծնողների և ընտանիքի անդամների անունները. «Արդ, որք ճաշակիք յաստուածային բուրաստանիս ընթերցմամբ կամ տեսութեամբ, յիշեսչիք ըգտրուպ Աւետիս գծողս եւ զծնողսրն իմ՝ զԳրիգորն եւ զՀռիփսիմէն, եւ կենակիցն իմ՝ զվերոգրեալ Նանէն, եւ որդիքն իմ՝ զՊետրոսն եւ զՀռիփսիմէն...»¹⁵: Ինչպես նկատել է նաև արվեստաբան Աստղիկ Գևորգյանը՝ վերը հիշատակված վաղամեռիկ Նանեն գրիչ Ավետիս Երևանցու

Երևան. միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրությունները, Երևան, 1975, էջ 17-28, 137-158:

¹³ Ռ. Հարությունյան, Հին Երևանի ճարտարապետական առեղծվածների պարզաբանումը, Երևան, 2007, էջ 38:

¹⁴ Կ. Մաթևոսյան, Հավուց թառի վանքը, Երևան, 2012, էջ 59-61:

¹⁵ ՄՅՀԶ ՄՄ, հ. Ա., սիւմ 1070:

կողակիցն է, իսկ պատվիրատու Խանփարին՝ կնոջ քույրը¹⁶:

Ե. ՄՄ 8880, ԱԻԵՏԱՐԱՆ:

ՌՃԼԳ. – 1685 թ., Երևան (՝):

Գրիչ՝ Աւետիս իրից չէրեւանցի: Ստացող՝ Աւաք Կարբեցի:

Կազմը՝ մոմլաթապատ ստվարաթուղթ (Ի. դար), 5 թերթ, թուղթ, 17,5×12,5, միասյուն, բոլորգիր, 15 տող, պահպանված է միայն հիշատակարանի մասը:

Ձևայած գրիչ Ավետիս Երևանցին հիշատակարանում գրչություն վայրը չի նշում, այդուհանդերձ տրամաբանական ենք համարում, որ այն ևս Երևանում պետք է գրված լինի. «...յիշատակս այս գրեցաւ թվին ՌՃԼԳ. (1685), ձեռամբ Աւետիս իրիցի չէրեւանցոյ, եթէ ով ոք կարդայ, յիշէ Հայր մեղայի...»¹⁷: Փոխարենը գրիչը քանիցս հիշատակում է ստացող «սրբասէր եւ մեծահաւատ» այր Ավագ Կարբեցուն, նրա ընտանիքին ու մերձավորներին, որն իր արդար վաստակած միջոցներով պատվիրել է ձեռագիրն ու նվիրել Կարբի Ս. Կիրակոս եկեղեցուն. «...յիշեցէք ի Քրիստոս զպարոն Ավաքն եւ կենակիցն իւր զԽոնդփաշէն եւ որդին իւր՝ Եղիբաբն եւ Եղիբաբի կենակիցն իւր, եւ որդին Մաղաքիայն յիշեցէք... որք վայելէք ընթերցմամբ կամ օրինակելով յիշմամբ արժանի առնէք զանարժան Ավաքս եւ ետու զսուրբ Աւետարանս մեր Կարբու Սուրբ Կիրակոս անուն եկեղեցոյն՝ յիշատակ մեզ եւ ծնօղաց մերոց... ի վայելումն սրբասէր քահանայիցն...»¹⁸, ապա հետևում է նզովքի բանաձևը՝ ուղղված սուրբ Գիրքը եկեղեցուց հանողներին, որը վերաբերում է և՛ տեղացիներին, և՛ օտարներին:

Կարբին ՀՀ Արագածոտնի մարզի միջնադարյան հուշարձաններով հարուստ բնակավայրերից է: Տեղի ներկայումս ավերակ Ս. Կիրակոս եկեղեցու կառուցման վերաբերյալ տեղեկություններ չկան: Ուսումնասիրողներն այն թվագրում են Ժ-ԺԳ. դդ., որին կից կիսավեր գավիթ-սրահը կառուցվել է ԺԸ. դարում¹⁹:

Զ. ՄՄ 6315, ՃԱՇՈՅ:

¹⁶ Ա. Գևորգեան, Անանուն հայ մանրանկարիչներ. մատենագիտութիւն Թ-ԺԷ. դդ., Գանիրէ, 2005, էջ 547, չմ^ր 757:

¹⁷ ՄՄ 8880, 3բ-4ա:

¹⁸ Նույն տեղում, 2բ-3ա:

¹⁹ Ա. Ասատրյան, Կարբի. պատմություն, հուշարձաններ, ազգագրություն, Երևան, 2010, էջ 291:

ՌՃԼԶ. – 1687 թ., էրեւան:

Գրիչ Աւետիս երէց Երեւանցի: Ստացող՝ Զաքարիա Քանաքեռցի և կինը՝ Հուսնիխան Երեւանցի:

Կազմը՝ մոմլաթապատ ստվարաթուղթ (մեջքը՝ սև լաթ), 354+ 6 թերթ, թուղթ, 27,2x20,4, երկսյուն, բոլորգիր, 31 տող, վիճակը՝ բավարար, նորոգված և վերակազմված 1950-ական թթ., սկզբից և վերջից պակասավոր, որոշ թերթերի արտաքին լուսանցները մկրատված, մանրանկարչությունը՝ ունի լուսանցային մանրանկարներ. պատկերված են ձիավոր Ս. Սարգիսը (28բ), Ս. Վարդան Մամիկոնյանը (36բ), Ս. Հռիփսիմեն (255ա), Ս. Տրդատ թագավորը (274ա, նկ. 3), Ս. Փեբրոնիա կույսը (352բ), ինչպես նաև բուսական, կենդանական, հուշկապարիկների տեսքով լուսանցազարդեր (16բ, 20բ, 30բ, 48ա, 112բ և այլն), կիսախորաններ ու ճակատազարդեր (157ա, 285ա, 326բ): Գույներից գերիշխող են կարմիրը, կապույտը, նարնջին, մանուշակագույնն ու սևը²⁰:

Ձեռագրի տարբեր էջերի ստորին լուսանցներում և բովանդակության միավորներին կից պահպանված գրչության հիշատակարանները համառոտ հաղորդագրություններ են՝ ուղղված ստացողներ Զաքարիային և նրա կողակից Հուսնիխանին. «Եւ զստացող սուրբ ճաշոցիս՝ յէրեւանցի Հուսնիխանն [եւ] զայրն իւր՝ իշխանաշուք պարոն Զաքարիէն եւ ծնօղքն՝ զՅովանէսն եւ Խանուժմին, եւ եղբայրն՝ զՍիմոն[ն] յիշեցէք»²¹ կամ «Ողորմեա՛ ստացողի այսմ ա[ստուա]ծաշունչ բուրաստանիս՝ Քանաքեռցի իշխանաշուք պարոն Զաքարիային եւ ամուսնոյն՝ Հուսնիխանին, եւ իւր ծնօղացն՝ Ակոբճանին եւ Ալթունին, եւ աներոջն՝ Յովհաննէսին, եւ զոքանջին՝ Խանուժմին, եւ աներձագին՝ Սիմոնին եւ Գուլումին եւ ամենայն...»²²:

Իր անունն ու գրչության վայրը հիշատակելիս՝ Ավետիս գրիչն իրեն մշտապես բնութագրում է ինքնանվաստացուցիչ «փծուն» և «տրուպ» ածականներով. «Աւարտեցաւ սուրբ Գիրքս ի քաղաքն յէրեւան, ձեռամբ տրուպ Աւետիս իրիցու յէրեւանցուոյ, թվին ՌՃԼԶ. (1687), ի մուտն յուլիս ամսոյ»²³: Յավոք, հիշատակարանում գրիչը միայն Երևան անունն է նշում՝ չմասնավորեցնելով, թե ստույգ ո՞ր եկեղեցու կամ եկեղեցիների հովանու ներքո է ընդօրինա-

²⁰ Ա. Գեորգեան, Անանուն հայ մանրանկարիչներ, էջ 554, Հ^մ 770:

²¹ ՄՄ 6315, 58բ:

²² Նույն տեղում, 240ա:

²³ Նույն տեղում, 231բ:

կել ձեռագիրը:

է. ՄՄ 10846, ՅԱՅՄՄԱԻՈՒՐՔ (խմբ. Գր. Ծերենց):

ՌՃԽԱ. — 1692 թ., էրեւան, ընդ հովանեաւ Սուրբ Կաթողիկէին եւ Սուրբ Երկու երեսին, Սուրբ Յակոբին եւ Սուրբ Սարգիս զօրաւարին:

Գրիչ՝ Աւետիս Երեւանցի: Ստացող՝ Տէր Անդրիաս քահանա Կարբեցի եւ եղբայրը՝ պրն. Մարգարէ:

Կազմը՝ կաշեպատ սովարաթուղթ, 530 թերթ, թուղթ, 40,2x26,5, երկ-սյուն, բոլորգիր, 39 տող, վիճակը՝ բավարար, կազմի կաշին մաշված, տեղ-տեղ պոկված և ընկած, թերթերի արտաքին լուսանցները ևս գործածությունից մաշված, խոնավության հետքերով: Հարգարված է ճակատագարդերով (92բ, 133ա, 241ա և այլն [մեկը՝ կիսախորանաձև՝ 7ա, նկ. 4]), լուսանցազարդերով:

Ստացողների հիշատակարանները գրեթե բոլոր միավորների վերջում են. «Ողորմեա՛ Քրիստոս Աստուած ստացողի գրոցս՝ հարազատ եղբարցն Անդրիաս քահանային եւ պարոն Մարգարին եւ քահանայի կողակցին՝ Հեղինէն եւ որդոցն՝ Յովհաննէս քահանային, Դաւթին, Մարուքին, Պետրոսին եւ դստերացն»²⁴: Հիշատակված են նրանց ծնողները՝ Ուղուրլուն և Մարիանը, Մարգարի ընտանիքը՝ կողակից Մարգարիտը, որդիներ Թամրազն ու Ուղուրլուն և դուստրերը: Վերջում գրիչը հիշում է նաև իրեն՝ փծուն Ավետիս գծողին:

Գրչության ընդարձակ հիշատակարանը գրիչը զետեղել է ձեռագրի վերջում, որտեղ անդրադառնում է նաև մատյանի բովանդակությանը, ապա գրչության ժամանակին, վայրին, դարձյալ ստացողներին ու նրանց հարազատներին: Ավետիս գրիչը Հայսմավուրքն այսպես է բնութագրում. մեծածավալ մատյան, որը պարունակում է տարվա ամիսները, շաբաթներն ու օրերն ըստ հետևյալ կարգի. «զճառս նահապետացն եւ զմարգարէիցն, դատաւորացն եւ զթագաւորացն, զառաքելոցն եւ հայրապետացն, զվարդապետացն եւ զքահանայիցն, զսարկաւագացն եւ զզինուորացն, զճգնաւորացն եւ զկուսանացն, զԱստուածածնին եւ զհամօրէն մարտիրոսացն՝ յիւրաքանչիւրում կարգի եւ տօնի ըստ պատշաճի աւուրն»²⁵:

Դառնալով գրչության հանգամանքներին՝ գրիչը մանրամասնում է. «...եղեւ զրաւ գրչութեանս սորա, ի յերկիրս Այրարագեան, ի քաղաքն յերեւան, ձե-

²⁴ ՄՄ 10846, 252ա:

²⁵ Նույն տեղում, 529ա:

ուամբ յոգնամեղ եւ տրուպ Աւետիս գծողս յէրեւանցոյ, ընդ հովանեաւ Սուրբ Կաթողիկէին եւ Սուրբ Երկու երեսին, Սուրբ Յակոբին եւ Սուրբ Սարգիս զօրաւարին, ի թուաբերութեանս Հայկազեան տօմարի ՌՃՆԱ. (1692) թուի, ի թագաւորութեանն պարսից շահ՝ Սուլէյմանին, ի բռնակալութեանն տանըս /// Չալխան[ին], ի հայրապետ[ութեանն] էջմիածնայ տեառն Նահապետի սրբազան հեղինակի եւ յաջորդութեան սուրբ ուխտիս մերոյ Ռհանավանից Սուրբ Կարապետին՝ Սարգիս քաջ հոգետորի, արհի եւ պանծալի եպիսկոպոսի եւ ջատագով վարդապետի»²⁶:

Նկատենք, որ հիշատակարանում գրիչը դարձյալ հատկանշում է Երևանի գրչութիւն կենտրոն-եկեղեցիների անունները՝ Կաթողիկէն, Երկուերեսին, Երբեմնի Չորագյուղի անապատի Ս. Սարգիսն ու Ս. Հակոբը: Ակնհայտ է, որ նրա ապրած ժամանակաշրջանում Երևանում բավականին զարգացած էր գրչութիւն արվեստը, որի վերագարթոնքի հիմնադիրն անկասկած Մովսէս Գ. Տաթևացի (1629-1633) հայրապետն էր: Վերջինս ժէ. դարի 20-ական թթ. Տաթևի նախկին Մեծ անապատից (իմա՝ Հալիձորի Հարանց անապատ) գալով Երևան՝ բարեկարգում է այգիներում ծվարած Ս. Անանիա առաքյալի անապատը, որտեղ դպրոց է հիմնում ու միաբանութիւն հաստատում՝ մեծապես կարևորելով գրչարվեստի ուսուցումը²⁷: Աներկբա, նրա աշակերտների շառավիղներից մեկն էլ գրիչ Ավետիս երեցն է, որը մեկ այլ նշանավոր գրիչ Գրիգոր Երևանցու ժամանակակիցը լինելով՝ նրա հետ միասին շարունակել են իրենց նախորդների սկսած գրչագրական գործը:

Հիշատակարանի կարևորագույն արժանիքներից մեկն էլ պետական այրերի ու նշանավոր հոգևոր առաջնորդների մասին վկայութիւններն են: Ըստ այդմ՝ գրիչը Նահապետ Ա եղեսացի կաթողիկոսի (1691-1705) ու պարսից շահ՝ Սուլէյմանի (1666-1694) անունները հիշատակելուց բացի, նշում է նաև Երևանի բռնակալ Չալխանի անունը: Հատկանշելի է այն, որ գրիչը վկայակոչում է

²⁶ Նույն տեղում:

²⁷ Երևանի Ս. Անանիա առաքյալի անապատի գրչության դպրոցի մասին տե՛ս Հ. ՆԵՐՍԷՍ ԱԿԻՆԵԱՆ, «Հին Երևանը», ՀԱ, 1934, թիւ 5-7, էջ 333-339, Ք. ՀԱԿՈԲՅԱՆ, Երևանի պատմութիւնը 1500-1800 թթ., էջ 383-393, Ա. ՄԱՔՆԱՍՅԱՆ, «Երևանի գրչության կենտրոնները», էջ 117-118: Նշենք, որ հրատարակության ենք պատրաստել «Երևանի Ս. Անանիա առաքյալի անապատը կամ Չորավոր Ս. Աստվածածին եկեղեցին» խորագրով մենագրությունը, որի էջերում հատուկ անդրադարձել ենք Ս. Անանիա առաքյալի անապատի գրչության դպրոցին՝ ներկայացնելով այստեղ գրված 11 ձեռագրերի ընդհանուր բնութագիրը:

նակ Հովհաննավանքի առաջնորդ Սարգիս արքեպիսկոպոսի անունը՝ նրան բնութագրելով իբրև քաջ հոգևոր, պանծալի եպիսկոպոս ու շատագույն վարդապետ: Պատմագիր Զաքարիա Քանաքեռցու հաղորդմամբ՝ ծագումով Կարբի գյուղաքաղաքից Սարգիս վարդապետը Հովհաննավանքի առաջնորդ է կարգվել Հայոց ՌձԻԸ. (1679) թվականին, Հովհաննես վարդապետի ձեռամբ, երբ դեռ 28 տարեկան էր: Պատմագիրը գովեստով է խոսում նրա մասին. «...որդի մեծատան բարեպաշտի եւ երկիւղածի՝ Կարապետ կոչեցեալ՝ յազգէ Մարեցի, որ ի տիս մանկութեան ետ զնա ի Սուրբ ուխտս Յօհաննու վանք: Եւ կացեալ համեստութեամբ եւ պարկեշտ վարուք՝ ուսաւ զվարս բարիս եւ զկրօնս հոգեւորս»²⁸:

Գրիչն այնուհետ խնդրում է մշտապես հիշել ու աղոթել պատվիրատուների, նրանց ծնողների ու զավակների համար. «Յիշեցէք ի Քրիստոս Կարբցի տէր Անդրիասն եւ եղբայրն իւր՝ զպարոն Մարգարէն եւ ծնօղքն իւր՝ Ուղուրլուն եւ Մարիանն, որ ստացան զշար մարգարտեայ եւ զանառիկ մեծութիւն եւ զպայծառութիւն սրբոյ եկեղեցւոյ...»²⁹:

Հիշատակարանի շարունակությունը պարզում է, որ պատվիրատու Անդրիաս քահանան Կարբիի Ս. Կիրակոս եկեղեցու հոգևոր հովիվներից է, որը ձեռագիրը հանձնարարել է ընդօրինակել՝ թերևս հենց հիշյալ եկեղեցում պահելու և եկեղեցական արարողությունների ընթացքում կիրառելու համար: Գրչի հաղորդմամբ՝ այդ ժամանակաշրջանում Կարբիում սպասավորում էին հետևյալ հոգևորականները. «Եւ ի մերում ժամանակին էին քահանայք Սուրբ Կիրակոսի եկեղեցւոյն, ես՝ վերոյ գրեալ տէր Անդրիասս, եւ որդին իմ՝ Յովանէս քահանայն, տէր Ազարիէն, տէր Խաչատուրն, երկրորդ տէր Ազարէն, տէր Մկրտիչն, տէր Մարտիրոսն, տէր Պետրոսն, տէր Մինասն, յիշ՝»³⁰: Նշենք, որ պատվիրատու Անդրիաս և նրա որդի Հովհաննես քահանաները թաղված են Կարբիի Ս. Կիրակոս եկեղեցու հարակից գերեզմանոցում: Տեր Անդրիասի հարթ տապանաքարի արձանագրությունը հետևյալն է. «Յայս է տապան տէր Անդրեասին /// քահանայ»³¹, իսկ որդու օրորոցաձև տապանաքարին կարդում ենք. «Այս է

²⁸ **Զաքարիա Քանաքեռցի**, Պատմութիւն. Կոնդակ Սուրբ ուխտին Յօհաննու վանից, աշխ. Ա. Վիրաբյանի, Երևան, 2015, էջ 198: Կարբիի նշանավոր հոգևորականների շարքում Սարգիս Կարբեցուն անդրադարձել է նաև Ա. Ասատրյանը (Ա. Ասատրյան, Կարբի, էջ 77-78):

²⁹ ՄՄ 10846, 529ա:

³⁰ Նույն տեղում, 529բ:

³¹ Ա. Ասատրյան, Կարբի, էջ 296, արձ. 11:

տապան դամբարանի, տէր Յովանէս քահանայի, որ է որդի տէր Անդրիասի, գոր վաղջանեց օրն Զատկի, մի օր Ե. շափաթ կիրակի է, ի ՌՃԾԱ. (1702) թվականի»³²:

Ձեռագրի վերջում փակցված մեքենագիր թերթիկի գրություն համաձայն՝ Հայսմավուրքը տեական ժամանակ պահվել է Վանի Բերդախ գյուղի բնակիչ ուն Պետրոսի տանը, որը 1812 թ. գաղթել է Արևելյան Հայաստան ու հաստատվել ՀՀ Արագածոտնի մարզի Ծիլքար գյուղում: Թուրքական հարձակումների ժամանակ ձեռագիրը քանիցս թաքցրել են ցորենի հորում: Հայսմավուրքը ժառանգաբար անցել է Պետրոսի որդի Մկրտիչին, ապա թոռանը՝ Կարապետին: 1936 թ. ձեռագիրը հանվել է թաքստոցից ու մինչև 1981 թ. խնամքով պահվել Կարապետ Պետրոսյանի տանը: Նույն թվականին պատմաբան Վարդան Գրիգորյանի նախաձեռնությամբ ձեռագիրը հանձնվել է Մաշտոցյան Մատենադարանին՝ ի հիշատակ նախնիների:

Ը. ՄՄ 8785, ԱԻԵՏԱՐԱՆ:

ՌՃԽԲ. – 1693 թ., Երեւան, ընդ հովանեաւ Սուրբ Կաթողիկէին եւ Սուրբ Սարգիս զօրավարին եւ Սուրբ Երկու երեսուն եւ Սուրբ Յակոբին:

Գրիչ՝ Աւետիս երէց [Երեւանցի]: Ստացող՝ Աննա:

Կաշեկազմ՝ դռնակով, 264 թերթ, թուղթ, 19,6x14, երկայուն, բոլորգիր, 21 տող, վիճակը՝ բավարար, մանրանկարչությունը՝ հարդարված է ճոխ անվանաթերթերով (կիսախորան (նկ. 5, 6), լուսանցազարդ, զարդագիր), վարպետորեն արված լուսանցային մանրանկարներով 4բ, 5ա, 7ա, 9բ, 11ա եւ այլն³³, գույներից օգտագործել է միայն մանուշակագույնի երանգները:

Գրչության հիշատակարանում գրիչն ի մասնավորի նշում է. «Գրեցաւ Աւետարանս ձեռամբ յոգնամեղ գրչի Աւետիս մեղապարտ իրի[ցուն] ունայնագործ մեղաւորի, ի թուաբերութեանս Հայոց ՌՃ. եւ ԽԲ. (1693), ի յեր[կիրս Արա]րատեան, ի մայրաքաղաքս յԵրեւան, ընդ հովանեաւ Սուրբ Կաթողիկէին եւ Սուրբ Սարգիս զօրավարին եւ Սուրբ Երկու երեսուն եւ Սուրբ Յակոբին եւ

³² Նույն տեղում, էջ 295, արձ. 6:

³³ Արվեստարան Աստղիկ Գևորգյանը ծանոթագրում է, որ անհայտ նկարիչը վարպետությամբ ընօրինակել է եվրոպական մի Ավետարանից: Բացակայում են ավետարանիչների պատկերները, պահպանվել են միայն Մատթեոսի ուրվանկարի հետմերը (Ա. Գևորգեան, նշվ. աշխ., էջ 569, Հ^մ 792):

այլ սրբոցն, ի հայրապետութեան Սուրբ Էջմիածնայ տեառն Նահապետի, ի Թագաւորութեանն պարսից շահ Սուլէյմանին եւ ի բռնակալութեան աստուածապահ քաղաքիս Երեւանայ Մուրթուզա Ղուլի բէկին, որ զի ջանի շինէր եւ ոչ էր խան, բայց իշխօղ էր ամենայնի որպէս խան»³⁴:

Սա Ավետիս երեցից մեզ հասած երրորդ ձեռագիրն է, որի հիշատակարանում գրիչը թվարկում է Երևանի գրչությունն կենտրոն-եկեղեցիները³⁵: Այստեղ հիշատակված է Ջալ խանին փոխարինած Երևանի տեղապահ Մուրթուզա Ղուլի բէկի անունը, որը խան չէր, բայց ամեն բանի իշխում էր որպէս խան: Նրա դաժան ու կողոպտիչ վարքը, պայմանավորված գինեգործությունն ապօրինի կասեցնելու հետ, լավագույնս նկարագրում է պատմագիր Ջաքարիա Քանաքեռցին. «Սա եկեալ նստաւ յԵրեւան մեծաւ յուսով ակն ունելով մնալ աստէն եւ լինել աւագ իշխան... եւ ոչ եղեւ, զոր ինչ կամէրն, վասն որոյ կամեցաւ հնարիւք իմն կողոպտել զերկիրն: Եւ պատճառ իմն եգիտ, թէ հրաման է Թագաւորին, զի գինի ոչ երեւեցի յաշխարհին Երեւանայ եւ առաքեաց զարս յամենայն գաւառսն՝ կնքել զամենայն կարասս եւ գուբս գինւոյ»³⁶: Պատմագրի հաղորդմամբ՝ խնդիրը լուծվում է միայն գավառապետերի ու տանուտերերի դրամական հանգանակության միջոցով. «Եւ գաւառապետքն գրեցին գեղորէիցն եւ ժողովեցին զգրամն եւ ետուն նմա»³⁷:

Ձեռագրի պատվիրատուն «բարեպաշտ» տիկին Աննան է, որը հանձնարարել է Ավետարան գրել իր ծնողների, ամուսնու արեւշատության համար, ինչպէս նաև վաղամեռիկ որդու՝ Դանիելի հիշատակին. «... աստուածապատում եւ քրիստոսաւանդ տառիս ցանկացօղ եղեալ հեզահոգի եւ աստուածասէր եւ բարեպաշտ կինն Աննայ ետ գրել զսուրբ Աւետարանս ի հալալ ընչից եւ վաստակոց իւրոց, ի վայելումն անձին իւրոյ եւ յիշատակ հոգւոյ իւրոյ եւ ծնողացն, որք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր՝ զյամօթխած յԱննէն եւ ծնօղքն իւր զտէր Առաքեալն եւ Խանփարին եւ նորա մանուկ որդին՝ իւր զԴանիէլն, որ հանգեաւ ի Քրիստոս, յիշեցէք եւ Աս-

³⁴ ՄՄ 8785, 262աբ:

³⁵ 1671-1672 թթ. Երևանի Ս. Կաթողիկէ, Ս. Երկուերեանի և Ս. Սարգիս եկեղեցիների հովանու ներքո է ընդօրինակվել նաև ՄՄ 2446 Ավետարանը. ցավոք, գրչի անունը հիշատակարանում վկայված չէ (*ՄՅՀԶ ՄՄ*, հ. Ը., խմբագրութեամբ Գ. Տէր-Վարդանեանի, Երեւան, 2013, սիւն 129):

³⁶ **Ջաքարիա Քանաքեռցի**, *Պատմութիւն*, էջ 167:

³⁷ Նույն տեղում:

տուած ողորմի ասացէք:

Գարձեալ յիշեցէք ի Քրիստոս զյԱննէն եւ կենակիցն իւր Ուլուխանն եւ պապն իւր՝ Յիսային եւ հանիկն՝ Քառղուճաշն յիշ՝»³⁸:

Նշենք, որ վերջին տարիներին, իբրև մասամբ նաև Ս. Սարգիս եկեղեցուձ ընդօրինակված ձեռագիր, այս Ավետարանը Ս. Սարգիս զորավարի տոնին Մաշտոցյան Մատենադարանից տարվում է Արարատյան հայրապետական թեմի առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցի և մինչև երեկո դրվում ավագ խորանի սուրբ Սեղանին՝ ի վայելումն հավատավոր ժողովրդի, ովքեր հնարավորութուն են ունենում հաղորդակցվել և ստանալ սուրբ Ավետարանի զորութունը³⁹:

Թ. ՄՄ 3769, ԺՈՂՈՎԱԾՈՅ (բաղկացած 2 տարբեր ձեռագրերից):

Ձեռագիր Բ.⁴⁰ ՌՃՆԴ. – 1695, [Երեւան] (Շ)

Գրիչ՝ Աւետիս իրից Երեւանցի: Ստացող՝ Իսահակ վարդապետ:

Կաշեկազմ՝ դռնակով, 34 թերթ (195-229), թուղթ, 29,5x20,5, երկսյուն, բոլորգիր, նոտրգիր, 34 տող, վիճակը՝ բավարար, բուն ձեռագիրը սկզբից պակասավոր, հիմքից թուլացած ու անշատված, որոշ թերթեր մկրատված, մանրանկարչութունը՝ ճակատագարդ, բուսական լուսանցազարդեր և զարդագրեր՝ թռչնագիր, հանգուցազիր, գույներից իշխող են կարմիրը, կապույտը, կանաչն ու դեղինը:

Գրչության հիշատակարանը սեղմ է. հաղորդում է գրչության ժամանակն ու գրչի անունը. «Գրեցաւ ի թուին ՌՃՆԴ. (1695) ձեռամբ յոքնամեղ Աւետիս իրիցի Երեւանցոյ»⁴¹: Վերևում համանման հիշատակարան՝ ուղղված ստացողին. «Կատարեցաւ գիրք Յեսուայ՝ որդւոյ Սիրաքայ, ի վայելումն մեծն Իսահակ աստուածաբան վարդապետի»⁴²:

Հաջորդ՝ նոտրգրով շարադրված միավորի գրիչը ևս, կարծում ենք, Ավե-

³⁸ ՄՄ 8785, 262բ:

³⁹ Այս մասին տե՛ս Ա. Թրուանց, «Երեւանի գրչութեան գանձերէն», «Ժամանակ» քաղաքական, ժողովրդական օրաթերթ, 2018, յունուար 30, երեխաբքի:

Այս ձեռագրին համառոտ անդրադարձել է նաև աստվածաբան Լուսինե Թումանյանը. տե՛ս Լ. Թումանյան, «Երևանյան մի ձեռագիր Ավետարան», Շողակն Արարատյան երկշաբաթաթերթ, 2016, հունվար Ա-Բ., թիվ 1 (371), էջ 4:

⁴⁰ Ձեռագրի հիմնական՝ Ա. մասն (թերթ՝ 1-194) ընդօրինակվել է 1684 թ. Գուրաբիայում (ի Յունաց երկիր), գրիչներն են՝ Տ. Հարություն Բահանան և Մինասը, ստացողը՝ Դավիթ ախրացու Թոխաթցին (ՄՄ 3769, 145աբ, 192բ):

⁴¹ ՄՄ 3769, 220բ:

⁴² Նույն տեղում:

տիս երեցն է, այլ ոչ անանուն մեկը: Ավետիս գրիչը հմտորեն տիրապետում էր այդ երկու գրատեսակներին, բացի այդ մանրանկարչական օրինակները, որոնք դարձյալ հակված ենք վերագրել նրա վրձնին, վկայում են միևնույն գրիչ-ծաղկողի աշխատանքի մասին:

Ձեռագիրը նախկինում Ս. Թադեոս առաքյալի վանքի սեփականությունն է եղել, որտեղից նախորդ դարասկզբին տեղափոխվել է Ս. Էջմիածին, ապա՝ Երևան: Այդ մասին են վկայում թերթերի լուսանցներում պահպանված 1737 թ. սև քառանկյուն և 1901 թ. կապույտ շրջանաձև կնքադրոշմները:

Ճ. ՄՄ 10349, ՅԱՅՄՄԱԽՈՒՐՔ:

Ժէ. դար, [Երևան] (°)

Գրիչ՝ Աւետիս Երևանցի: Ստացող՝ Ոսկան քահանայ:

Ստվարաթղթե կազմ (Ի. դար), 25 թերթ, թուղթ, 34,5x24, երկսյուն, բոլորգիր, 37 տող, վիճակը՝ բավարար, մասն ձեռագրի, մանրանկարչությունը՝ հարդարված է ճակատագարդերով և լուսանցազարդերով:

Ձեռագիրը պատկանելիս է եղել Ախալքալաքի Բուռնաշեթ գյուղի եկեղեցուն և միայն 1968 թ. տեղափոխվել է Երևան ու նվիրաբերվել Լևոն Խաչիկյանին: Այդ մասին է վկայում 24ա էջի գրառումը, որը ստորագրել են նշանավոր գիտնականներ Պարույր Մուրադյանը, Ալեքսանդրա Երեմյանը և Լիպարիտ Սադոյանը⁴³:

Հայսմավուրքներին հատուկ է բովանդակության միավորների վերջում համառոտ հիշատակարանների առկայությունը, որոնց վրա հետագա ստացողների անուններով այլ թղթեր են փակցվել, ինչպես օրինակ. «Մահտեսի Եղիային եւ ծնողացն՝ մահտեսի Դշխունին, կողակցին՝ Սավարին եւ որդոցն՝ Աղապալիին, Յակոբին, մահտեսի Պողոսին եւ Տեփանոսին եւ ամենայն զարմից նոցին»⁴⁴:

Գրչության հիշատակարաններից մեկն ամբողջությամբ ընթեռնելի է, ուր Ավետիս Երեցը, սովորության համաձայն, ընթերցողներից խնդրում է հիշել նախ ձեռագրի պատվիրատուներին. «...յիշեսջիք առ Աստուած զըստացող գրոցս Ոսկան քահանային, եւ կենակցին՝ Շահնիկարին, եւ ծնողացն՝ Կարապետին եւ Գուլիխանին, եւ եղբարցն՝ Թարաղուլուն, Սարգսին, Աղաջանին, Միրզաջանին եւ որդոցն՝ ն[եր]սէ[սին], եւ փծուն Աւետիս գծողի յերևանցուց եւ

⁴³ ՄՄ 10349, 24ա:

⁴⁴ Նույն տեղում:

ծնօղաց իմոց»⁴⁵:

Ընդհանրացնելով Ավետիս երեց Երևանցու ձեռագրական ժառանգությանը նվիրված մեր համառոտ ուսումնասիրությունը՝ հարկ ենք համարում արձանագրել հետևյալը.

Ինչպես տեսնում ենք, Ավետիս գրիչը գործել է բացառապես Երևան քաղաքում: Նրա ընդօրինակած ձեռագրերից և ոչ մեկի հիշատակարանում տեղեկություններ չկան ծաղկողների մասին: Սա վկայում է, որ Ավետիս գրիչն, ըստ ամենայնի, նաև ծաղկողն է, որն իր երկրորդ «մասնագիտությունը» հատուկ շեշտել չի ցանկացել: Գրիչ-ծաղկողների արտաքուստ «քողարկված» այս երևույթին ժամանակին անդրադարձել է նաև Արտաշես Մաթևոսյանը, որն այն հետևյալ կերպ է բացատրում. «Հայերեն բազմաթիվ հնագույն նկարագարող ձեռագրեր, որոնց հիշատակարանները կորել են, կամ եղած հիշատակարաններում չեն հիշվում ծաղկողները, իսկ նկարներն անստորագիր են, մեծ մասամբ զարդարվել են տվյալ ձեռագրերի գրիչների ձեռքով: Գրիչները, որոնք բարեխղճորեն հիշում են մագաղաթ պատրաստողին ու թուղթ կոկողին, թանաք եփողին ու մի աման ապուր բերողին, չէին կարող ծաղկողին չհիշել, եթե նա ուրիշ մարդ էր: Այդ ձեռագրերում ծաղկողների մասին գրիչների լռության պատճառը իրենց իսկ ծաղկող լինելու հանգամանքն է, որը չեն ուզում գրել՝ այն համարելով գրչի սովորական գործ»⁴⁶:

Ավետիս երեցի՝ իր իսկ ձեռագրերի ծաղկողը լինելու մեր տեսակետը որոշակիորեն հիմնավորվում է նաև վկայակոչված ձեռագրերի մանրանկարչության համեմատության արդյունքում (բացառությամբ ՄՄ 8785 ձեռագրի): Ավետիս գրչին բնորոշ է նկարագարման հիմնականում գծանկարային եղանակը: Գույներից առավելապես օգտագործում է կարմիրն ու մանուշակագույնը, հաճախ՝ այլ գույներ ևս, երբ նախընտրել է գունազարդել զարդատարրերը:

Մանրանկարներից զատ, Ավետիս երեցի ձեռագրերն ուշագրավ են նաև գրչարվեստի տեսանկյունից. նրան բնորոշ է վայելչագիրը՝ ինչպես նոտրգիր, այնպես էլ բոլորգիր գրատեսակներով: Գրում է կոկիկ, գրեթե զերծ սխալագրություններից, ջնջումներից, անհամաչափություններից:

Ի վերջո, ուշագրության են արժանի նաև Ավետիս երեցի բազմաբնույթ ձեռագրերի վերջում կամ միավորների միջնամասերում պահպանված հիշա-

⁴⁵ Նույն տեղում, Ցա:

⁴⁶ Ա. Մաթևոսյան, «Գրիչ Հովհաննես Սանդղկավանցի («Մոզմու Ավետարանը»)», ԲՄ, հ. 10, Երևան, 1971, էջ 381:

տակարանները, որոնց բովանդակության հիմքում երևանցի գրիչն առաջին հերթին պատկերում է միջնադարյան Երևանն իր բազմաթիվ եկեղեցիներով: Ժէ. դարի երկրորդ կեսի Երևանը ներկայանում է իբրև գրչության ինքնատիպ դպրոց, որի հոգևոր կենտրոններին կից գրատներում գործում են հայ մշակույթի դպիրներն ու երեցները, որոնցից մեկն էլ ինքն է՝ շնորհաշատ Ավետիս Երեց Երևանցին:

**ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ՝
ԱՎԵՏԻՍ ԵՐԵՑ ԵՐԵՎԱՆՅՈՒ ՁԵՌԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ**

Հմբ	Թվականը կամ մոտավոր ժամանակը	Բովանդակությունը	Տեղը	Ստացողը
Վիեն. 137	ՌՃԺԴ.-1665 թ.	Առաքել Դարիժեցի, Պատմութիւն	Երեւան, ի դռն սուրբ եկեղեցոյս, որ անուանի Կաթողիկէ	Առաքել Դարիժեցի
ՄՄ 1772	ՌՃԺԵ.-1666 թ.	Առաքել Դարիժեցի, Պատմութիւն	Երեւան, ի դռն սուրբ եկեղեցոյս, որ անուանի Կաթողիկէ	Առաքել Դարիժեցի
Կարնոյ Զիթատոյճ գիւղի ձեռ. 16	ՌՃԺԸ. -1669 թ.	Աւետարան	Երեւան	
ՄՄ 246	ՌՃԼԳ.-1684 թ.	Աւետարան	Երեւան, ընդ հովանեա Ս. Յակոբ հայրապետիս եւ Ս. Սարգիս, Ս. Էրկու յէրէսիս եւ Ս. Կաթողիկէիս	Խանփարի
ՄՄ 8880	ՌՃԼԴ.-1685 թ.	Աւետարան	Երեւան (°)	Ասափ Կարբեցի
ՄՄ 6315	ՌՃԼԶ.-1687 թ.	Ճաշոց	Էրեւան (°)	Զափարիա Քանափեոցի և կինը՝ Հուանիխան Երեւանցի

ՄՄ 10846	ՌՃԽԱ.-1692 թ.	Յայսմատուրֆ	Էրեւան, ընդ հովանեա Սուրբ Կաթողիկէին եւ Սուրբ Երկու երեսին, Սուրբ Յակոբին եւ Սուրբ Սարգիս զօրասարին	Տէր Անդրիաս ֆանան Կարբեցի եւ եղբայրը՝ պրն. Մարգարէ
ՄՄ 8785	ՌՃԽԲ.-1693 թ.	Աւետարան	Էրեւան, ընդ հովանեա Սուրբ Կաթողիկէին եւ Սուրբ Սարգիս զօրավարին եւ Սուրբ Երկու երեսուն եւ Սուրբ Յակոբին	Աննա
ՄՄ 3769 (Բ. ձեռ.)	ՌՃԽԴ.-1695 թ.	Ժողովածոյ	Էրեւան (°)	Իսահակ վարդապետ
ՄՄ 10349	Ժէ. դար	Յայսմատուրֆ	Էրեւան (°)	Ոսկան ֆահանայ

ARSEN HARUTYUNYAN

THE SCRIBAL LEGACY OF PRIEST AVETIS YEREVANTSI

Keywords: Yerevan, manuscript, church, commissioner, historiographer, miniature, colophon, Gospel.

Manuscripts written in various churches of Yerevan are exceptional historical sources for the study of the medieval history of the city. The colophons of the manuscripts give reliable information not only about the writing conditions, place and time, but also about the scribes. Priest Avetis Yerevants'i is one of the most prominent scribes of the second half of the 17th century, whose legacy hasn't been studied so far. Ten manuscripts copied by Avetis Yerevants'i are known to us. Eight of them are kept in Mesrop Mashtots Matenadaran (Mss. M246, M1772, M3769, M6315, M8785, M8880, M10349, M10846) and one in the Mekhitharist library of Vienna (W137). Another one was kept in the church of the Dzitavoghk village of Karin, but it has been lost (it is described in the catalogue by Archiman-

drite Hakob Kosyan, 1912, № 16).

According to colophons of manuscripts, scribe Avetis worked mainly at the scriptoria of churches in Yerevan: the Cathedral of the Holy Mother of God (Katoghike), St. Paul and Peter (Yerkueresni), St. Sargis, and St. Hakob. The contents of the manuscripts are various: Gospels, Lives of Saints, Lectionary, and, what is of special interest, in 1665-1666 Arakel Davrizhets'i commissioned him to make copies of his Book of Histories.

An overview of the manuscripts allows us stating that Priest Avetis also illuminated them. His handwriting is neat and proportional (he mastered both the notrgir and bolorgir scripts). The long colophons, in addition to giving various pieces of information, also describe medieval Yerevan with its numerous churches.

АРСЕН АРУТЮНЯН

**РУКОПИСНОЕ НАСЛЕДИЕ ПИСЦА АВETИСА
ИЕРЕЯ ЕРЕВАНСКОГО**

Ключевые слова: Ереван, рукопись, церковь, писец, заказчик, историограф, миниатюра, памятная запись, Евангелие.

Для изучения средневековой истории Еревана исключительную ценность представляют созданные под покровительством различных церквей города рукописи, памятные записи которых содержат достоверные сведения не только об обстоятельствах, при которых они создавались, месте и времени их написания, но и о переписчиках этих рукописей.

Одним из выдающихся создателей рукописей XVII века является иерей Аветис родом из Еревана, рукописное наследие которого по сей день недостаточно изучено. Нам известно о десятке рукописей, скопированных писцом Аветисом: восемь из них хранятся в собрании Матенадарана им. М. Маштоца (№ 246, 1772, 3769, 6315, 8785, 8880, 10349, 10846), одна в собрании рукописей конгрегации Мхитаристов в Вене (№ 137), одна рукопись из церкви Св. Богородицы села Дзитавохк в Карине не сохранилась (ее описание приводится в каталоге рукописей сел области Карин, составленном в 1912-ом году Архимандритом Акопом Косьяном, № 16).

Иерей Аветис, судя по памятным записям скопированных им рукописей, работал в основном в скрипториях при ереванских церквях: в кафедральном соборе Св. Богородицы (Катогике), Св. Петра и Павла (Еркуересни), Св. Акопа, Св. Саргиса. В содержательном плане созданные им рукописные книги многообразны – это Евангелия, Жития Святых, Миссалы (Чашоц) и, что особенно примечательно, в 1665-1666 годах по заказу Аракела Даврижеци им была скопирована в нескольких экземплярах “Книга истории” Аракела.

Общее рассмотрение рукописей позволяет констатировать, что иерей Аветис занимался также созданием миниатюр. Его почерк аккуратен и соразмерен (использованы типы письма нотгир и болоргир), а пространственные памятные записи, помимо различной информации, содержат также описания средневекового Еревана с его многочисленными церквями.

**ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՈՒ ԱՄՍՏԵՐԴԱՄԻ ՄԻՋԵՎ.
ՎԱՂ ԱՐԴԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՃԱՌԱԿԱՆԿԱԿԱՆ
ԶԵՌՆԱՐԿՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ**

Բանալի բառեր՝ վաճառական, Կոստանդ Ջուղայեցի, Աշխարհաժողով, Ղուկաս Վանանդեցի, վաճառականական դասագիրք, շրջանառություն:

Նոր Ջուղայի հոգևոր առաջնորդ Ստեփանոս Ջուղայեցին 1690 թվականի ապրիլի 24-ին հանդիմանական նամակ է ուղարկում Եվրոպայում բնակություն հաստատած հայ վաճառականներից մեկին՝ Աղա դի Մաթոսին: Ֆլորենցիայի պետական դիվանում պահպանված այս նամակում¹ Ստեփանոս Ջուղայեցին չի թաքցնում վրդովմունքն իր ազգակից վաճառականներից, որոնք անտեսել էին Եվրոպայից Նոր Ջուղա տպագրական պարագաներ ուղարկելու իր նախորդ նամակ-խնդրանքները: Այս անգամ իր նամակը հասցեագրելով Աղա դի Մաթոսին՝ ջուղայեցի հոգևորականը նրանից ակնկալում էր ստանալ 300 մառչիլ արժողությամբ թուղթ («մինչեւ երեք հարիւր մառչիլ թուղթ առնուս»), ինչպես նաև՝ եվրոպական տպագրական սարքավորումներ

¹ Նամակի բնօրինակը տե՛ս Archivio di Stato di Firenze, Acquisti e Doni, busta 123, Documenti Armeni Inserto 1, 1-38: Այս վավերագիրը, ի շարս իտալական դիվաններում պահպանված բազմաթիվ այլ փաստաթղթերի ընդօրինակությունների, տե՛ս նաև Վնտկ. ձեռ. 1458, ք. 135բ-136բ (ձեռագիրը կազմել է Ժ. Դ. իտալական արխիվներն ուսումնասիրած Մխիթարյան միաբան Գրիգոր Ճելալյանը, ինչպես տեղեկացնում է Բարսեղ Սարգիսյանն իր կազմած ձեռագրացուցակում՝ *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ*, Կ. երկրորդ, Վենետիկ, 1924, էջ 1233): Աղա դի Մաթոսին ուղղված՝ Ստեփանոս Ջուղայեցու այս նամակի բնագրի հրատարակության և անգլերեն թարգմանության համար տե՛ս Սեպուհ Ապանյանի հանգամանալից ուսումնասիրությունը՝ «The Early Arrival of Print in Safavid Iran: New Light on the First Armenian Printing Press in New Julfa, Isfahan (1636–1650, 1686-1693)», *Handes Amsoreay*, 2014, no. 1-12, pp. 460-468:

(«Գ. դաստ գիր, Բ. երկաթէ չամպար, մէկ գրի շարչու» են)²: Վաղ արդի³ հայ նամակագրական հսկայական ժառանգության այս միավորը հիանալի արտահայտությունն է այն դժվարությունների, որոնց առաջ կանգնում էին տպագրական գործի կազմակերպիչները Նոր Ջուղայում ժէ. դարի վերջին: Սրան համապատասխան էլ՝ ջուղայեցի հեղինակներն, ըստ էության, զրկված էին իրենց գրական ստեղծագործություններն առանձին գրքերի տեսքով լույս ընծայելու հնարավորությունից: Ասվածը վերաբերում է նաև սույն ուսումնասիրության հիմքում ընկած երկերից երկուսին՝ Կոստանդ Ջուղայեցու վաճառականական դասագրքերին՝ «Աշխարհաժողով» և «Դոներն ռաղամին» վերնագրերով, որոնք շարագրման ժամանակից՝ 1687 թվականից ի վեր այդպես էլ ընթերցողներին հասանելի մնացին միայն ձեռագիր վիճակում:

Նույն ժամանակահատվածում բոլորովին այլ էր իրավիճակը եվրոպական ծովափնյա քաղաքներում, որտեղ «նավահանգստային հայերը»⁴, ինչպես Սեպուհ Ասլանյանն է բնորոշել, նյութական միջոցներ էին ներդնում հայկական տպարանների հիմնադրման գործում և հովանավորում հայերեն գրքերի հրատարակության աշխատանքները: Հենց «նավահանգստային հայերից» մեկի՝ Պետրոս Ջուղայեցու հովանավորությամբ 1699 թվականին Ամստերդամում գործող Վանանդեցիների տպարանում լույս տեսավ վաճառականական մեկ այլ դասագիրք: Հեղինակ Ղուկաս Վանանդեցին իր աշխատության համար ընտրել էր «Փանձ չափոյ, կշռոյ, թւոյ եւ դրամից բոլոր աշխարհի» վերնագիրը՝ այն հասցեագրելով հայ վաճառականությանը՝ «առ հայազուն վաճառասէր եղբարս»: Իր ծավալին հակառակ՝ ընդամենը 80 էջանոց այս

² S. Aslanian, “The Early Arrival of Print in Safavid Iran”, pp. 462-463, Մ. Կարապետյան, Է. Քաջիրյան, «Էջեր XVII դարի վերջի նոր Ջուղայի պատմությունից», Բեձ, 1998, ք. 2, էջ 81, Է. Քաջիրյան, Նոր Ջուղայի հայ գաղթօջախը 17-18-րդ դդ. եվրոպական աղբյուրներում, մաս I, Երևան, 2012, էջ 68-69:

³ Վաղ արդի հայոց պատմության՝ առանձին պատմափոփ յուրահատկությունների դիպուկ վերհանման համար տե՛ս S. Aslanian, “Port Cities and Printers: Reflections on Early Modern Global Armenian Print Culture,” *Book History*, no. 17, 2014, pp. 53-58: Համաշխարհային պատմագիտության մեջ ընդունված «վաղ արդի դարաշրջան» եզրը հայագիտական հետազոտություններում շրջանառելու անհրաժեշտության, ինչպես և հարցի շուրջ առկա տեսակետների ամփոփ ներկայացման համար տե՛ս իմ աշխատության «Վաղ արդի դարաշրջանն ու հայոց պատմությունը» ներածական մասը՝ Ս.Բաղդարյան, Նոր Ջուղայից երևան ու էրզրում. ճիզվիտ քարոզիչները հայկական բնակավայրերում XVII-XVIII դդ., Երևան, 2018, էջ 9-23:

⁴ S. Aslanian, “Port Cities and Printers: Reflections on Early Modern Global Armenian Print Culture”, p. 56.

փոքրիկ գրքույկն արժանացել է ոչ միայն իր ժամանակակիցների ուշադրությանը, այլև վաղ արդի պատմության մասնագետների բարձր գնահատականին: Բավական է հիշատակել այն փաստը, որ վաճառականական այս ձեռնարկին մի ծավալուն պարբերություն է նվիրել համաշխարհային համբավ ունեցող Ֆեռնան Բրոդելը «Քաղաքակրթությունն ու կապիտալիզմը 15-18-րդ դարերում» վերնագրով իր եռահատոր գրքի երկրորդ հատորում⁵:

Նոր Զուգայում ու Ամստերդամում ընդամենը 12 տարվա տարբերությամբ ի հայտ եկած հայկական վաճառականական այս ձեռնարկները բնորոշվում են աչքի զարնոդ բովանդակային համանմանությամբ: Երկերի առնչակցության վերաբերյալ հետազոտողների գնահատականները հիմնված են հենց այդ համանմանության վրա: Այսպես՝ Հովհաննես Տեր-Գավթյան Զուգայեցու հաշվեմատյանի վերաբերյալ իր նշանավոր հոդվածներում դեռևս 1966-1967 թվականներին Լևոն Խաչիկյանը հպանցիկ կարծիք է հայտնել «Աշխարհաժողով»-ից Ղուկաս Վանանդեցու լայնորեն օգտված լինելու վերաբերյալ⁶: 1975 թվականին Գեղամ Գևորգյանը, առանձին հոդված նվիրելով Ղուկաս Վանանդեցու երկին, կրկնել է նույն տեսակետը⁷: Առևտրական երկու երկերի առնչակցության վերաբերյալ այդ տեսակետն ավելի ուշ հաստատել է նաև Էլիզաբեթ Թաշիրյանը⁸: Ի վերջո, 2011 թվականին տպագրված իր ուղենշային գրքում Սեպուհ Ասլանյանը Ղուկաս Վանանդեցու «Գանձ չափոյ»-ն բնորոշել է որպես Կոստանդ Զուգայեցու «Աշխարհաժողով»-ի «խտացված տարբերակ»՝ ամստերդամյան հրատարակությունը բացատրելով ձեռագիր օրինակների սակավությանը և այն դժվարություններով, որոնց կարող էին բախվել հայ

⁵ **F. Braudel**, *Civilization and Capitalism, 15th-18th Century*, vol. 2: *The Wheels of Commerce*, New York: Harper and Row, 1983, p. 158.

⁶ **L. Khachikian**, “The Ledger of the Merchant Hovhannes Joughayetsi”, *Journal of the Asiatic Society* 8, no. 3, 1966, p. 178, idem, “Le registre d'un marchand arménien en Perse, en Inde et au Tibet (1682-1693)”, *Annales: Économies, sociétés, civilisations*, 22e année, no. 2 (mars-avril), 1967, p. 266.

⁷ **K. Kévonian**, “Marchands arméniens au XVIIe siècle: A propos d'un livre arménien publié à Amsterdam en 1699”, *Cahiers du Monde Russe et Soviétique*, 1975, no. 16, pp. 200-201.

⁸ **Է. Թաշիրյան**, «Ղուկաս Վանանդեցու «Գանձ չափոյ, կշոյ, թոյ էլ դրամից բոլոր աշխարհի» աշխատության հայկական աղբյուրների հարցի շուրջ», *ՀեՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների 19-րդ նստաշրջանի գեկուցումների թեզիսներ*, Երևան, 1985, էջ 7:

վաճառականները ձեռագիր «Աշխարհաժողով»-ը հայթայթելիս⁹: Ընդհանուր առմամբ, այս բոլոր գնահատականների հիմքում ընկած է մի ընդհանուր մոտեցում՝ Ղուկաս Վանանդեցու երկը հիմնված է «Աշխարհաժողով»-ի վրա, այլ կերպ ասած՝ դրա փոխադրված ու համառոտ տարբերակն է: Այս հարցի կապակցությամբ դիտելի է նաև աննկատ մնացած այն հանգամանքը, որ հեղինակն ինքը, թեև շտալով Կոստանդ Ջուղայեցու անունը, խոստովանել է հայկական աղբյուրներից օգտված լինելու հանգամանքը և առաջաբանում արձանագրել. «Ըստ կարի մերում, և ըստ որում՝ ի հարազատ գրեանս եղեալ գտինք, զյետ նոցա երթալով զնոյն մեք եւս ի յօգուտ մերազնեայ վաճառասէր եղբարցդ արձանացուցուք»¹⁰:

Վերջին երեք տարվա ընթացքում հայկական առևտրական սկզբնաղբյուրների, մասնավորապես՝ վաճառականական ձեռնարկների ուսումնասիրությունն ակնհայտ դարձրեց այս հարցի կապակցությամբ հանգամանալից քննության վրա հիմնված գնահատականների անհրաժեշտությունը: Երկերի բնագրերի խորքային ծանոթության ու բնագրային զուգադիր համեմատությունների միջոցով հնարավոր կլինի փաստարկված տեսակետ հնչեցնել, հատկապես որ նախորդ գնահատականները, հպանցիկ բնույթ կրելով, հասկանալիորեն այդպիսի նպատակ չեն հետապնդել: Բնագրերի համեմատությունը թույլ կտա ոչ միայն լույս սփռել ժէ. դարավերջին շարադրված առևտրական այս աշխատությունների առնչությունների հարցի վրա, այլև ի հայտ բերել բովանդակային տարբերությունների այն շարքը, որը ուշադրությունից դուրս մնացած հետևությունների ուղի կարող է հարթել: Բավական է ասել, որ, օրինակ, Կոստանդ Ջուղայեցու առևտրական երկերն ընկալվել են մեկ ամբողջություն, մինչդեռ ջուղայեցի այս դպրապետը հեղինակել է միանգամայն տարբեր երկու դասագիրք:

Այս կապակցությամբ տեղին է նշել նաև, որ հայկական առևտրական

⁹ S. Aslanian, *From the Indian Ocean to the Mediterranean: The Global Trade Networks of Armenian Merchants from New Julfa*, Berkeley: University of California Press, 2011, p. 137. Այս հարցին ուսումնասիրողն անդրադարձել է նաև իր ավելի վաղ փրատարակված կարևոր հոդվածում՝ S. Aslanian, “The Circulation of Men and Credit: The Role of the Commenda and the Family Firm in Julfan Society”, *The Journal of the Social and Economic History of the Orient*, 2007, 50:2, pp. 137-138:

¹⁰ Ղուկաս Վանանդեցի, *Գանձ չափոյ, կշոոյ, թւոյ և դրամից բոլոր աշխարհի, Ամստերդամ, 1699, էջ 3 (ընդգծումը մերն է – Ս. Բ.):*

ձեռնարկների վերաբերյալ առկա պատկերացումները խիստ աղոտ են և ակնհայտորեն կարող են բնորոշվել որպես հայ վաճառականության պատմության բաց ոլորտ: Պատկերն ամենևին չի փոխվել Միշել Աղասյանի ու Գեղամ Գևորգյանի՝ դեռևս 1988 թվականին արված գիտարկումից հետո. «Ձեռագրերում ցրված են մի շարք առևտրական ուղեցույցներ, որոնք պետք է ցուցակագրել ու ուսումնասիրել մի օր»¹¹: Այս ուղղությամբ կատարվելիք աշխատանքների առանցքում պետք է հայտնվեն ոչ միայն առավել ուշագրավ առևտրական ձեռնարկների գիտական բնագրերի կազմումն ու հրատարակումը, այլև դրանց ուսումնասիրությունը վաղ արդի շրջանի եվրոպական վաճառականական դասագրքերի լայն համապատկերում:

Այս աշխատանքն սկսվում է խնդրո առարկա առևտրական ձեռնարկների մասին ոչ ընդարձակ, սակայն հանգամանալից անդրադարձով ուշադրության կենտրոնում պահելով դրանց շարադրման հանգամանքներն ու բովանդակությունն առնչվող հարցերը: Երկրորդ մասում փորձելու եմ վերանայել գերիշխող այն տեսակետը, թե Ղուկաս Վանանդեցու ձեռնարկը Կոստանդ Ջուղայեցու «Աշխարհաժողով»-ի սոսկ համառոտ տարբերակն է: Բնագրային բազմաթիվ համապատասխանությունների հետ մեկտեղ՝ ուսումնասիրությունն ակնհայտ է դարձնում նաև զգալի այն աշխատանքը, որ կատարել է վանանդեցի հեղինակը՝ բազմաթիվ հատվածներում ներկայացնելով այնպիսի տեղեկություններ, որոնք բացակայում են Կոստանդ Ջուղայեցու «Աշխարհաժողով»-ում: Բնագրերի համեմատությունը թույլ է տալիս մի կողմից հավասարակշռված գնահատական տալ «Փանձ չափոյ» առևտրական ձեռնարկին, իսկ մյուս կողմից՝ բացահայտել նրա հեղինակի կատարած ստեղծագործական աշխատանքի առանձնահատկությունները: Հետազոտությունն ունի նաև հեռահար նպատակ. «Աշխարհաժողով»-ի ու «Փանձ չափոյ»-ի աղբյուրագիտական առնչակցության մատնանշումը մղում է մտածելու հարցերի այնպիսի խմբի մասին, որի առանցքում Կոստանդ Ջուղայեցու երկի ազդեցությունն է վաղ արդի հայ վաճառականական գրականության վրա առհասարակ և, որ առավել հետաքրքրական է, նրա շրջանառությունը Նոր Զուղայի համաշխարհային առևտրական ցանցում:

¹¹ M. Aghassian, K. Kévonian, "Le commerce arménien dans l'Océan Indien aux 17^e et 18^e siècles", *Denys Lombard et Jean Aubin (éds.), Marchands et hommes d'affaires asiatiques dans l'Océan Indien et la Mer de Chine 13^e-20^e siècles*, Paris: Éditions de l'École des Hautes Études en Sciences Sociales, 1988, p. 163.

**Կոստանդ Ջուղայեցու «Աշխարհաժողով» և «Դռներն ռաղամին»
առևտրական ձեռնարկները**

Որպես բացառիկ ու ինքնատիպ երկ՝ Կոստանդ Ջուղայեցու «Աշխարհաժողովը» մշտապես հիշատակվել է հայ վաճառականության պատմությանը նվիրված հետազոտություններում: Առաջ եկած որոշակի հետաքրքրությունը, սակայն, բավարարվել է աշխատության մասին միայն նկարագրական տեղեկատվության առկայությամբ: Դա, մասնավորապես, հանգում է հետևյալին. Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի դպրոցում¹² առևտրական դասընթացներ վարած Կոստանդ Ջուղայեցին 1680-ական թթ. շարագրել է վաճառականական դասագիրք, որը հայտնի է «Աշխարհաժողով» անունով: Բազմիցս ընդգծվել է, որ հեղինակը հարուստ տվյալներ է ներկայացրել տարբեր երկրների չափի ու կշռի համակարգերի, դրամական միավորների մասին՝ կարևոր տեղեկություններ հայտնելով նաև զանազան ապրանքների շուկաների վերաբերյալ¹³: Հպանցիկ ծանոթության շրջանակները չգերազանցող այս նկարագրությունը թույլ չի տվել գոնե քիչ թե շատ ամբողջական պատկերացում կազմելու առևտրական այս ձեռնարկի բովանդակության մասին, իսկ բնագրի անտիպ լինելու հանգամանքը զգալիորեն խոչընդոտել է նրա պարունակած հարուստ տեղեկությունների օգտագործմանը¹⁴: Ինչ վերաբերում է Կոստանդ Ջուղայեցու

¹² Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի դպրոցի մասին տե՛ս **Բալդարյան Ս.**, «Կրթություն և հաշտություն. Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի դպրոցը (XVII դ.-XVIII դ. սկիզբ)», *Մատենադարանի 3-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի հոդվածների ժողովածու*, Երևան, 2018, էջ 51-64:

¹³ Կոստանդ Ջուղայեցու ու նրա «Աշխարհաժողով»-ի հպանցիկ նկարագրություններից տե՛ս, օրինակ, **Յ. Տեր-Յովհաննեսյան**, *Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան*, հ. Ա, Նոր Ջուղա, 1880, էջ 159-160, հ. Բ, Նոր Ջուղա, 1881, էջ 253-254, **Վ. Բայբուրդեան**, *Համաշխարհային առևտուրը եւ իրանահայութիւնը 17-րդ դարում*, Քեմբրիջ, 1996, էջ 55-56, **S. Aslanian**, *From the Indian Ocean to the Mediterranean*, pp. 136-137, **S. Hovhannisyan**, “Examination of Armenian Trade Capital (16th-18th centuries) in Light of Fernand Braudel’s Civilization Theory”, *Armenian Review*, Vol. 54, Number 3-4 (Spring-Summer), 2014, pp. 52-53 ևն: Ակնհայտորեն օգտվելով Լ. Խաչիկյանի նշանավոր հոդվածում բերված տեղեկությունից՝ Կոստանդ Ջուղայեցու երկը հպանցիկ հիշատակել է նաև դանիացի նշանավոր պատմաբան Նիլս Սթենսգարն իր դասական հետազոտության մեջ **N. Steensgaard**, *The Asian Trade Revolution of the Seventeenth Century: The East India Companies and the Decline of the Caravan Trade*, Chicago and London: University of Chicago Press, 1974, p. 23, n. 4:

¹⁴ «Աշխարհաժողով» առևտրական ձեռնարկի միակ հրատարակված փոփոխված հատվածը տե՛ս **Վ. Փափազյան**, «Կոստանդ Ջուղայեցու «Աշխարհաժողովի» Հայեպ-Թավրիզ մայրուղուն վերաբերող հատվածը», *ԼՀԳ*, 1985, թ. 6, էջ 80-85, նույնի, *Հայաստանի*

երկրորդ՝ «Թոներն ուղամին» երկին, ապա այն ևս պատշաճ ուշադրություն չի արժանացել: Ասվածը հավաստելու համար բավական է նկատել, որ այն անգամ չի տարանջատվել «Աշխարհաժողով»-ից՝ դիտարկվելով որպես առևտրական միևնույն դասագրքի մաս:

Հայերեն ձեռագրացուցակների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Կոստանդ Զուղայեցու առևտրական երկերը մեզ են հասել վեց ամբողջական ձեռագրով, որոնցից երեքը պահվում են Մաշտոցի անվան Մատենադարանում (Հճ՝ 5994, 8443, 10704), երկուսը՝ Օքսֆորդի Բողեյան գրադարանի հայերեն ձեռագրական հավաքածուում (Հճ՝ 14, 15), և մեկն էլ՝ Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի դիվանում (Հճ՝ 64): Ընդ որում, եթե տարբեր հետազոտողներ զանազան առիթներով հիշատակել են շուղայեցի հեղինակի երկերն ամփոփող այս կամ այն ձեռագիրը, ապա Բողեյան գրադարանի վերոհիշյալ Հճ՝ 15 ձեռագիրը մնացել է ուշադրությունից դուրս՝ առ այսօր հայտնի լինելով միայն Ֆրեդերիկ Կոնիբերի ու Սուքիաս վ. Պարոնյանի համառոտ նկարագրությամբ¹⁵: Նպատակ չունենալով կենտրոնանալու Կոստանդ Զուղայեցու առևտրական ձեռնարկների ձեռագրերի վրա՝ արձանագրենք միայն երկու հետաքրքրական հանգամանք: Առաջին՝ դրանց մի մասի դատարկ մնացած էջերին կարելի է հանդիպել ձեռագրերն օգտագործող վաճառականների հետագայում թողած հիշատակարանները¹⁶, որոնք փաստական անփոխարինելի վկայություն են տալիս վաճառականների ուղևորությունների ժամանակ Կոստանդ Զուղայեցու ձեռնարկների՝ որպես ուղեցույցների գործածության մասին: Երբևէ չհրատարակված այս հիշատակարանների մասին պատկերացում կազմելու համար մեջբերենք դրանցից մեկը. «Աստուծով թիվն ՌՃԾ. (1701) դամար ԺԳ. (13) Յովանն օրն ուրբաթ գնացին դապի և Ալետնն Ֆռանգըստան: Աստուած ուրէնց

առևտրական ուղիները միջազգային առևտրի ոլորտում XVI-XVII դարերում, Երևան, 1990, 160-163: Այս առիթով տեղին է նշել, որ ավարտական փուլում են Կոստանդ Զուղայեցու առևտրական ձեռնարկների գիտական բնագրերի պատրաստման աշխատանքներս, որոնց զուգահեռ ընթանում է նաև բնագրերի ծավալին գերազանցող հանգամանակից ծանոթագրությունների կազմման ու առևտրական զանազան հասկացությունների բացատրության առավել դժվարին ու տևական ջանքեր պահանջող գործը:

¹⁵ *Catalogue of the Armenian Manuscripts in the Bodleian Library*, compiled by **Rev. Sukias Baronian and Frederic Conybeare**, Oxford, 1918, p. 245.

¹⁶ Կոստանդ Զուղայեցու ձեռնարկներն ամփոփող ձեռագրերի հիշատակարանների վրա ուշադրություն է հրավիրել միայն Սեպուհ Ասլանյանը՝ *From the Indian Ocean to the Mediterranean*, p. 137:

բան, աչն աջողի: Աստուած յերկար ումբր տայ և ամենեցուն: Ամէն»¹⁷: Հովհաննի ու Ավետի՛ Եվրոպա գործնական ուղևորութիւնն արձանագրող այս ու մեկ տասնյակը գերազանցող համանման այլ հիշատակարաններից պետք է եզրակացնել, որ Կոստանդ Ջուղայեցու ձեռնարկները ոչ միայն դասագրքերի գործառույթ են ունեցել Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի դպրոցում, այլև առևտրական ճանապարհորդութիւնների ժամանակ ուղեցույցի դեր են կատարել: Անցնելով ձեռագրերի վերաբերյալ երկրորդ ուշագրավ դիտարկմանը՝ առանձին ուշադրութեան առարկա պետք է դարձնել ձեռագրերի այն հատվածները, որոնցում առկա են բնագրային շեղումներ, այսինքն՝ ընդօրինակված են ոչ թե Կոստանդ Ջուղայեցու գրչին պատկանող, այլ նրա ձեռնարկների հետ որևէ առնչութիւն չունեցող նյութեր: Ասվածի լավագույն օրինակը ՄՄ 5994 ձեռագիրն է, որում «Աշխարհաժողով»-ի Հնդկաստանի մասին պատմող հատվածն ընդմիջվում է մի բնագրով «Յաղագս առևտրի մարգարտի Հնաստան, որ վաճառականք չէվայ խսէպ ասեն» խորագրով¹⁸: Մյուս ձեռագրերում չհանդիպող այս բնագրի հեղինակն այդպես էլ անհայտ կմնար, եթե այս բացառիկ նյութին հաջորդող հիշատակարանը պարզութիւն չմտցնէր. «Սորա տեսանօղն և գրօղն խօճայ Մինասեան պարոն Սաֆրազի որդի Աղամալ աղան է ելել, Աստուած լուսաւորէ իւր հոգին»¹⁹: Մինասյան նշանավոր ընտանիքի ներկայացուցիչ Աղամալի չափազանց հետաքրքրական այս բնագիրը, որն իրավամբ առանձին երկի տպավորութիւն է թողնում, բաժանված է 21 գլուխների, որոնցից յուրաքանչյուրում պատմվում է թանկարժեք քարերից մեկի մասին՝ մարգարիտ, արմազ, կարմիր յաղութ և այլն: Նույն ձեռագրում «Աշխարհաժողով»-ի ընդօրինակութիւնն ավարտելուց հետո գրիչը, թողնելով «Աստուծով ներքոյ գրեալս Մատրասին մարգարտին չէվայ հիսապն է» ցուցումը, զետեղել է մարգարտի առքուվաճառքին վերաբերող մի բնագիր՝ կից բազմաթիվ աղյուսակներով²⁰: Մինասյան վաճառականական ընտանիքի

¹⁷ Նոր Ջուղա ձեռ. Հ^մ 64, 6ա: Ձեռագրի թվային պատկերները տրամադրելու համար խորին շնորհակալություն եմ հայտնում Սեպուհ Ասլանյանին (Կալիֆոռնիայի համալսարան, Լոս Անջելես):

¹⁸ ՄՄ 5994, 4ա-12բ:

¹⁹ Նույն տեղում, 12բ:

²⁰ Նույն տեղում, 27բ-44բ:

պատմություն²¹ տեսանկյունից բացառիկ այս նյութերը, որոնք մինչև այսօր որևիցէ ուշագրություն չեն արժանացել²², միաժամանակ ուշագրավ են դարձնում Կոստանդ Ջուղայեցու ձեռնարկներն ամփոփող ձեռագրերից մեկը:

Դասագիրքը վաճառականների համար առավել ընկալելի և գրավիչ դարձնելու հեղինակի ցանկությունն իր կնիքն է թողել «Աշխարհաժողով»-ի կառուցվածքի վրա: Երկը շարագրված է երկու վաճառականների միջև ընթացող երկխոսության ձևաչափով, և իր կուտակած առևտրական հարուստ տեղեկատվությունը Կոստանդ Ջուղայեցին ներկայացնում է որպես զրուցակիցներին՝ միմյանց հղված հարցերի պատասխաններ: Օրինակ՝ զրուցակից վաճառականներից մեկի խնդրանքը՝ «կու խնդրեմ, որ քաղաքէ քաղաք, երկրէ յերկիր, ապրանաց ապրանքի որպիսութիւնն՝ չափէրն, քաշէրն, փողէրն, ըստակնէրն և ամենայն ինչ ևս ասասցես»²³, Կոստանդ Ջուղայեցուն հնարավորություն է տալիս անցնելու վաղ արդի աշխարհի առևտրական շուկաների իր բացառիկ նկարագրությունը՝ այն ձևակերպելով որպես հնչեցված հարց-խնդրանքի պատասխան: Զափագիտական ու դրամագիտական տեղեկությունների կողքին հեղինակն անհրաժեշտ չափով կենտրոնանում է նաև առևտրական մաքսավճարների ու տվյալ տարածքի հիմնական ապրանքատեսակների վրա: Ներկայացված տվյալների համեմատությունն այլ աղբյուրների հետ ի հայտ չի բերում զգալի տարբերություններ, իսկ առաջ եկած որոշ անհամապատասխանություններն էլ պայմանավորված էին ինչպես չափի, կշռի, դրամի միավորների անընդհատ փոփոխություններ կրելու, այնպես էլ հարկային պաշտոնյաների կողմից սահմանված սակագները խախտելու երևույթի հետ²⁴:

²¹ Մինասյան վաճառականական ընտանիքի մասին տե՛ս Շ. Խաչիկյան, Նոր Զուղայի հայ վաճառականությունը և նրա առևտրատնտեսական կապերը Ռուսաստանի հետ XVII-XVIII դարերում, Երևան, 1988, էջ 81-100, Տ. Aslanian, *From the Indian Ocean to the Mediterranean*, pp. 159-164:

²² Հավելեմ, որ ՄՄ 5994 ձեռագրի այս երկու բնագրերը, որոնք որևիցէ աղբյուր չունեն Կոստանդ Ջուղայեցու առևտրական ձեռնարկների հետ, հանգամանալից ծանոթագրություններով հրատարակության է պատրաստել Կալիֆոռնիայի համալսարանի (Լոս Անջելես) ուսանող Սոնա Թաշիրյանը “*Involvement of the Armenian Mercantile Community of New Julfa in the Early Modern Global Trade of Diamonds and Gemstones*” խորագրով իր ատենախոսության շրջանակներում:

²³ Նոր Զուղա ձեռ. Հ⁴ 64, 9բ-10ա:

²⁴ Տիբեթ այցելությամբ և իր հաշվեմատյանով հայտնի Հովհաննես Ջուղայեցին, 18 հոբ մահող արտահանելով Իրանից, Բանդար Աբասի նավահանգստում վճարել է 24 թուման 240 դիան մասատուր, մինչդեռ, ըստ Կոստանդ Ջուղայեցու տվյալների, հարկային պաշտոնյաները պետք է գանձեին 15,22 %-ի չափով, այն է՝ ընդամենը 22 թուման 6017 դիան գումար (Կոստանդ Ջուղայեցու երկուս Բանդար Աբասի նավահանգստի տուրֆերի

Կոստանդ Ջուղայեցին ինքն էլ բարեխղճորեն զգուշացնում է իր ընթերցողին այդ մասին՝ պարբերաբար կրկնելով «վախտի գօրայ՝ գայ եվել, գայ պակաս» արտահայտությունը²⁵: Երկի սկզբում ու միջնամասում էլ վաճառականների զրույցի բովանդակությունը միմյանց հղված խրատական խորհուրդներն են, որոնք չափազանց հետաքրքրական են առևտրական գործունեության բազմազան վտանգներն արձանագրելու, դրանցից զերծ մնալու զգուշացումների ու այդպիսով վաճառականի առօրյա կենցաղն արտացոլելու տեսանկյունից: Ջուղայեցի այս հեղինակի երկրորդ ձեռնարկը, որն ավելի նպատակահարմար է անվանել «Դոներն ուղամին»²⁶, վաճառականական խնդիրների ժողովածու է՝ շարադրված առևտրական տարբեր գործարքների օրինակներով թվաբանական հմտություններ փոխանցելու ծրագրով: Շուրջ 150 այս խնդիրներում ար-

մասին տե՛ս Նոր Ջուղայի ձեռ. Հ⁴ 64, 23բ): Գրեթե 1,5 թումանի այս տարբերությունը վկայությունն է ոչ այնքան հայկական առևտրական ձեռնարկի մատուցած տեղեկության անվստահելիության, որքան Սեֆյան Իրանի հարկային պաշտոնյաների կամայականությունների (Հովհաննես Տեր-Դավթյան Ջուղայեցու հաշվետումարը, աշխատասիրությամբ՝ Լ. Խաչիկյանի ու Հ. Փափազյանի, Երևան, 1984, էջ 38-39):

²⁵ Կոստանդ Ջուղայեցու այս արտահայտությունը հիշեցնում է նույն հարցի կապակցությամբ Գուկաս Վանանդեցու համարժեք ձևակերպումը՝ «այլշվերիշի բանն աստուածադիր կանոն չէ, որ անփոփոխ լինի, բայց փոփոխական է, եւ մարդադիր կանոն, եւ ժամանակատ» (Գուկաս Վանանդեցի, *Գանձ չափոյ*, էջ 53): Hierapet di Martin կամ Մարտիրոսի որդի Հայրապետ անունով հայտնի հայ վաճառականը, որից մեզ է հասել երբևէ չուսումնասիրված նամակագրական հսկայական ժառանգություն, կարծես արձագանքելով Կոստանդ Ջուղայեցու ու Գուկաս Վանանդեցու ձևակերպումներին, իր նամակներից մեկում գրում է. «Էսօրին գնէրն էտ է, որ արգ արարի. Աստուծոյ ձեռն է եվելսանալն, պակասիլն» (տե՛ս Archivio di Stato di Venezia, Documenti Armeni Mercantili, busta 3):

²⁶ 1675 թ. Մարսելում տպագրված «Արհեստ համարողութեան» գրքի կապակցությամբ երկու տարբեր առիթով Հակոբ Անասյանն անդրադարձել է Կոստանդ Ջուղայեցու երկերին՝ նշված գիրքը համարելով նրա տեսական աշխատության խմբագրված տարբերակը, իսկ «Աշխարհաժողով»-ը և առևտրական խնդիրների ժողովածուն՝ համապատասխանաբար՝ նրա պատմական ու գործնական աշխատություններ (Յ. Անասեան, «Հայերեն թուաբանական դասագրքերի պատմութեան համար, Ա. «Արհեստ համարողութեան», Բ. «Արիթմետիկայ», Մանր երկեր, Լոս Անջելես, 1987, էջ 671-674, նույնի, *Հայկական մատենագիտություն*, հ. Բ, Երևան, 1976, էջ 874-877): Խնդիրներն ամփոփող երկի խորագրի տեսանկյունից կարևոր է նշել, որ նշանավոր ուսումնասիրողն այն հիշատակում է «Դոն համարողական արհեստին» վերնագրով՝ ակնհայտորեն հետևելով ՄՄ 5994 ձեռագրին (թ. 48ա): Վերջինս, սակայն, ենթարկվել է ընդօրինակող գրչի միջամտություններին, ինչի արդյունքում ոչ միայն բնագրի հետ առնչություն չունեցող երկու նոր նյութ է հավելվել բուն տեքստին, այլև ընտրվել է կամայական վերնագիր Կոստանդ Ջուղայեցու երկի համար: Մյուս բոլոր ձեռագրերում վաճառականական խնդիրների ներկայացումը սկսվում է «կատարեցավ աշխարհաժողով չափի և գազի, ֆարի և կշեռի և հառաջ աժեմֆ գրուներն ուղամին» բառերից հետո՝ առանց որևէ վերնագրային ցուցման (տե՛ս, օրինակ, Նոր Ջուղա ձեռ. Հ⁴ 64, 47բ): Ելնելով այս իրողությունից՝ «Դոներն ուղամին» տարբերակը որպես ձեռնարկի վերնագիր առավել հարազատ ենք համարում բնագրի ոգուն:

ծարծվում են վաճառականի գործունեության տարբեր փուլերում հանդիպող իրավիճակներ՝ զանազան ապրանքների առուվաճառքից մինչև դրամի փոխատվությանն ու կտակներին առնչվող հարցեր²⁷: Կոստանդ Ջուղայեցին առաջադրված խնդրից անմիջապես հետո մատուցում է դրա լուծման տարբերակը՝ իր ընթերցողներին ապահովելով մաթեմատիկական գործնական հմտությունների անհրաժեշտ պաշարով: Այսպես՝ վերանշյալն ամփոփելու պարագայում, առանց մեծ դժվարության հնարավոր է ուրվագծել Կոստանդ Ջուղայեցու դասագրքերում գրի առնված առևտրական տեղեկատվության երեք շերտը՝ խրատական խորհուրդներ, առևտրական շուկաների մասին փաստական տեղեկություններ և վաճառականական խնդիրների միջոցով թվաբանական հմտություններ:

Ղուկաս Վանանդեցու «Չանձ չափոյ, կշոյ, թւոյ և դրամից բոլոր աշխարհի» առևտրական ձեռնարկը

Վաղ արդի հայկական մշակութային աշխարհի նշանավոր ներկայացուցիչ Ղուկաս Վանանդեցին, որը թողել է մատենագրական պատկառելի ժառանգություն, հայտնի էր տարբեր գիտությունների ասպարեզում իր գիտելիքներով ու լեզվական հմտություններով: Այս հանգամանքն արձանագրել է Թովմաս Վանանդեցին Մովսես Խորենացու պատմական երկի առաջին հրատարակության՝ «Ազգաբանութիւն տոհմին յաբեթեան» խորագրով գրքի հիշատակարանում՝ իր տոհմակցին գովաբանելով «Ղուկաս Ֆիլիսոֆա, որ է վարժ զանազան լեզուաց» խոսքերով²⁸: Հայ կաթոլիկ հեղինակ Ստեփանոս Ռոշքան նույնպես Ղուկաս Վանանդեցուն հիշատակել է դրվատական բառերով բնութագրելով նրան որպես «գիտուն եւ գովելի ի վարս իւր»²⁹: Հոռմում ստացած բարձրակարգ կրթությունը Ղուկաս Վանանդեցուն հնարավորություն էր տալիս հաղորդակից լինելու եվրոպական գիտության նվաճումներին: Հայտնի

²⁷ Կոստանդ Ջուղայեցու երկում բնութագրական մի խնդրի համար տե՛ս Ս. Բայդարյան, «Կրթություն և հաջողություն. Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի դպրոցը», էջ 57:

²⁸ Ազգաբանութիւն տոհմին յաբեթեան, յօրինեցեալ ի Մովսիսէ Խորենացու, Ամստերդամ, 1695, էջ 487:

²⁹ Ստեփանոս Ռոշքա, Ժամանակագրութիւն կամ Տարեկանք եկեղեցականք, Վիեննա, 1964, էջ 190: Ավելորդ չէ նշել Համազասպ Ոսկյանի գնահատականը, ըստ որի՝ Ստեփանոս Ռոշքան «հաւանօրէն յարաբերութեան մէջ գտնուած ըլլայ... Թովմաս Վանանդացի եպիսկոպոսին եւ անոր Գաբրիել (Միխայել) ու Ղուկաս եղբօրորդիներու հետ, որոնք Ուրբանեան վարժարանին մէջ փիլիսոփայութեան դասընթացքը ըրած են» (Ոսկեան Հ., Ա. Ստեփանոս Վ. Ռոշքա, Բ. Մատթէոս Վ. Զուղայեցի, Վիեննա, 1968, էջ 10, ընդգծումն իմն է – Ս. Բ.):

են նրա առնչությունները ժամանակի առաջադեմ գործիչներից մի քանիսի հետ: Հիշատակելի են, օրինակ, նրա հանդիպումն ու նամակագրական կապը գերմանացի հայտնի մաթեմատիկոս և փիլիսոփա Գոթֆրիդ Լայբնիցի հետ³⁰: Հեղինակելով աշխարհագրական ու վաճառականական բնույթի մի շարք խիստ արժեքավոր գրքեր՝ Ղուկաս Վանանդեցին ձեռք էր բերել մեծ հռչակ, ինչի արտահայտություններից էին Հոլանդիայի աշխարհագրական ընկերության հատուկ պատվոգիրն (1699 թ.)³¹ ու Արվեստների մագիստրոսի պատվավոր կոչումը (1707 թ.)³², որ շնորհիվ Վանանդեցիների տոհմի այս ներկայացուցչին ծավալած բեղմնավոր գործունեության համար:

Ի թիվս այլ բացառիկ հրատարակությունների՝ Ղուկաս Վանանդեցու գրչի արդյունքն էր 1699 թ. լույս ընծայված «Գանձ չափոյ, կշռոյ, թւոյ և դրամից բոլոր աշխարհի» առևտրական ձեռնարկը: Այն աշխարհաբար տպագիր երրորդ գիրքն էր «Արհեստ համարողութեան» (1675 թ.) և «Պարզաբանութիւն հոգեհոսագ» (1687 թ.) գրքերից հետո: Հետաքրքիր է արձանագրել նաև, որ այս երկը տեղ է գտել ուշ միջնադարում ու վաղ արդի շրջանում եվրոպայում հրատարակված առևտրական ձեռնարկների կոթողային մատենագիտության մեջ³³: Պատահական չէ անվանաթերթում նշված այն տեղեկությունը, ըստ որի՝ գիրքը հրատարակվել է «ծախիւք և ի խնդրոյ հայցման Զուղայեցի Խաչատուրի որդի պարոն Պետրոսին»³⁴, առևտրական գրականություն ունենալու անհրաժեշտությունը առանձին վաճառականների մղում էր նմանատիպ ձեռնարկների հրատարակությունը հովանավորելու

³⁰ Է. Թաչիրյան, «Հոլանդահայ գաղութը և հայ ազատագրական միտքը (XVII դար)», 16-18-րդ դարերի հայ ազատագրական շարժումները և հայ գաղթավայրերը (հոդվածների ժողովածու), Երևան, 1988, էջ 121:

³¹ Մ. Խաչատրյան, «Հայ և ռուս փարեզագրության կապերը 17-րդ դարում», ՊԲՀ, 1966, ք. 2, էջ 188:

³² Մ. Գրիգորեան, *Նոր նիւթեր և դիտողութիւններ հրատարակիչ Վանանդեցոց մասին*, Վիեննա, 1969, էջ 74: Բողոքյան գրադարանի օգնական Թոմաս Հերնի վկայությամբ՝ 1707 թվականի մայիսի 29-ին Օֆսֆորդի Շելդոնյան թատրոնում տեղի ունեցած հանդիսավոր արարողության ժամանակ «Գորթնի արհեստիսկոպոսին», այն է՝ Թովմաս Վանանդեցուն շնորհվեց աստվածաբանության դոկտորի, իսկ նրա զարմիկ Ղուկաս Նուրիջանյանին (Luke Nurigian) արվեստների մագիստրոսի կոչումը (տե՛ս նրա օրագիրը **William Dunn Macray**, *Annals of the Bodleian Library, Oxford, A.D. 1598- A.D. 1867*, Oxford, Rivingtons, 1868, p. 127):

³³ *Ars Mercatoria: Handbücher und Traktate für den Gebrauch des Kaufmanns, Manuels et traités à l'usage des marchands, 1470-1820*, **J. Hoock et P. Jeannin (eds.)**, *Eine Analytische Bibliographie*, Band 2, 1600-1700, Paderborn, 1993, p. 540.

³⁴ **Ղուկաս Վանանդեցի**, *Գանձ չափոյ*, անվանաթերթ:

գործին: Գրքի առաջաբան-հիշատակարանում ևս հեղինակը արձանագրել է մեկանասի անունը՝ «ստիպեալ մանաւանդ ի խնդրոյ Զուգայեցի բարեպաշտ պարոն Պետրոսին»³⁵: Հատկանշական է, որ Վանանդեցիների տպարանն արդեն իսկ իր ներդրումն ունեցել էր վաղ արդի հայ վաճառականական գրականության հրատարակության գործում՝ 1695 թվականին լույս ընծայելով «Համատարած աշխարհացոյց» առաջին հայատառ քարտեզը, իսկ 1696 թվականին՝ «Բանալի համատարածի աշխարհացոյցին» ուղեցույց-ձեռնարկը: Վերջինս, ըստ գրքի առաջաբանի դիպուկ ձևակերպման, «առաւելապէս պիտանանայ Վաճառականաց՝ մանաւանդ Հայկազարմից, որք... ընդ ամենայն աշխարհ զանքոյթ երթեկուծիւն ունելով՝ զամենայն երկիր առ ոտն հարելով յաճախեն»³⁶: Հայ վաճառականության գրահրատարակչական կարիքներն սպասարկելու գործառույթը Ամստերդամի հայկական համայնքը դարձնում է առավել քան յուրահատուկ, չնայած այն հանգամանքին, որ հոլանդական այս քաղաքում բնակություն հաստատած հայերի թվաքանակը չէր գերազանցում 100-ը³⁷: Կարևոր է արձանագրել նաև, որ հայ վաճառականները նույն պատրաստակամությունը հանդես չէին բերում Վանանդեցիների տպագրական մյուս նախաձեռնությունները ֆինանսավորելիս. 1695-1705 թթ. Ամստերդամում հրատարակված 13 գրքերի ու մեծադիր քարտեզի նյութական միջոցների մեծ մասը գոյացել էին Թովմաս Վանանդեցու ավելի քան քսանամյա ճամփորդությունների, հանգանկությունների ու եվրոպական մի շարք տիրակալների անմիջականորեն դիմելու շնորհիվ³⁸:

Հասցեագրված լինելով հայ վաճառականական միջավայրին՝ Ղուկաս Վանանդեցու այս ձեռնարկը ծառայել է իր նպատակին՝ հայտնվելով համաշխարհային առևտրում ներգրավված հայ վաճառականների ուշադրության կենտրոնում: Բնութագրական է ժէ-ժԸ. դդ. սահմանագծին առևտրական գործունեություն ծավալած եղիա Կարնեցու օրինակը, որն իր շուրջ 5 տասնյակ գրքերից կազմված գրադարանի ցուցակներում նշում է հետևյալ

³⁵ Նույն տեղում, էջ 3:

³⁶ Բանալի համատարածի աշխարհացոյցին մերոյ նորածնի, Ամստերդամ, 1696, էջ 2:

³⁷ S. Van Rooy, “Armenian Merchant Habits as Mirrored in 17-18th Century Amsterdam Documents”, *REArm (Nouvelle Série)*, no. 3, 1966, p. 347, S. Aslanian, *From the Indian Ocean to the Mediterranean*, p. 80.

³⁸ Ս. Ասլանեան, «Reverendissimi in Christo Patris. Յաննաւարական նամակներ, ցանցեր և շարժումակութիւն Թովմաս Վանանդեցիի կեանքին մէջ (1677-1707)», *ՀԱ*, 2018, ք. 1-12, էջ 147-148:

գիրքը՝ «Գիրք արհեստի չափոց և կշռոց բոլոր աշխարհի»³⁹: Վանանդեցիների հրատարակությունների հանդեպ հայ վաճառականության ցուցաբերած հետաքրքրության մեկ այլ օրինակ է Շահվելու որդի Սարհադի հաշվեմատյանի այն հատվածը, որը վերաբերում է 1713 թ. «Համատարած աշխարհացոյց»-ի 2 օրինակ գնելուն. «Բ. (2) դանայ խայեվար աշխարհացոց առի, գինն այ՝ ԻԴ. (24) գուլդի»⁴⁰: Վաճառականական գրականության պահանջարկի տեսանկյունից ավելորդ չէ ուշադրություն դարձնել 1 օրինակի բարձր գնի վրա՝ 12 հոլանդական գուլդեն, որը համարժեք էր 2400 իրանական դրանի⁴¹: Համեմատության համար նշենք, որ գրքերի ձեռքբերումների մասին եղիա Կարնեցու գրառումների համաձայն՝ 1710-1720 թթ. հայ տպագիր գրքի արժեքը տատանվել է 150-200 դրանի սահմաններում⁴²:

Վանանդեցիների հրատարակությունների, տվյալ դեպքում՝ Ղուկաս Վանանդեցու ձեռնարկի հանդեպ հայ վաճառականության բուռն հետաքրքրությունը պայմանավորված էր դրանց բացառիկ օգտակարությամբ: Ինչպես գնահատում է Ա. Սարուխանը, «այս գիրքն իսկապէս մի «Գանձ» էր ընդհանրապէս հայ վաճառականների եւ մասնաւորապէս Ամստերդամում հաստատուած շուղայեցիների համար»⁴³: Իսկապես, հայ վաճառականները եզակի հնարավորություն էին ստանում առևտրական տպագիր ձեռնարկի միջոցով ստանալու բազմաբնույթ այն տեղեկատվությունը, առանց որի առևտրական գործունեությունը նկատելիորեն պակաս արդյունավետ կլիներ:

Թե՛ կառուցվածքային, թե՛ բովանդակային առումով «Գանձ չափոյց»-ն շարադրված է առևտրական տեղեկատվությունն առավել համակարգված մատուցելու ծրագրով: «Առ հայագուն վաճառասէր եղբարս» խորագրով առաջաբանին հաջորդում է 3 գլուխ՝ «Յաղագս հին կշռոց, չափոց եւ դրամից», «Պատմութիւն եւ խօսք վաճառականութեան», «Յաղագս մղոնչափութեան»: Առա-

³⁹ Բ. Զուգասյան, «Եղիա Մուշեղյանի (Կարնեցու) գրադարանը», ԼՂԳ, 1983, թ. 1, էջ 70: Այս գիրքը եղիային ուղարկել էր «Մովսէսն քօխաքցի Պէկլէրի որդի Մինասի ձեռովն» (նույն տեղում, էջ 67):

⁴⁰ Շահվելու որդի Սարհադի հաշվեմատյանը, աշխատասիրությամբ՝ Շ. Խաչիկյանի, Երևան, 1994, էջ 22, 80:

⁴¹ Ըստ Շահվելու որդի Սարհադի հաշվեմատյանի տվյալների՝ 1 հոլանդական գուլդենը հավասար էր 200 դրանի (Շահվելու որդի Սարհադի հաշվեմատյանը, էջ 169): Զարմանալի է, որ Կոստանդ Ջուղայեցին ու Ղուկաս Վանանդեցին իրենց առևտրական ձեռնարկներում գուլդենի փոխարժեքի մասին ոչինչ չեն գրում՝ այդպիսով Սարհադի հաշվեմատյանի ցուցումը դարձնելով եզակի:

⁴² Բ. Զուգասյան, նշվ. աշխ., էջ 68:

⁴³ Ա. Սարուխան, Հոլանդացիներ և հայերը ժԶ.-ԺԹ. դարերում, Վիեննա, 1926, էջ 115:

ջին գլխում ներկայացված են տարբեր երկրների շափի, կշռի ու դրամական համակարգերը, իսկ երկրորդում շարադրված է վաղ արդի աշխարհի առևտրական շուկաների մասին արժեքավոր տեղեկատվություն: Երրորդ գլուխն ավելի բազմաբովանդակ է՝ բաղկացած լինելով հետևյալ հատվածներից՝ «Չափ մղոնաց կամ մլից Եւրօպայո», «Կարճառօտ պատմութիւն ռաղամի դռնէրին», «Յաղագս երեքի կանոնին», «Ճարդ երեքի կանոնին», «Յաղագս վաճառական ընկերութեան»: Ղուկաս Վանանդեցուն հաջողվել է լուծել վաճառականական ձեռնարկի սահմաններում առևտրական բազմաբնույթ տեղեկություններ ի մի բերելու խնդիրը, որը «գործ իմն ծանր, դժուարին եւ անհնարին» էր համարում հեղինակն ինքը գրքի առաջաբանում⁴⁴:

Վաճառականական ձեռնարկները համեմատության մեջ

Ղուկաս Վանանդեցու ու Կոստանդ Զուգայեցու ձեռնարկների առնչակցության մասին հստակ պատկերացում կազմելու համար տեղին է կատարել բովանդակային համեմատություն՝ անհրաժեշտության դեպքում դիմելով նաև բնագրերի զուգադիր քննության: Կառուցվածքային առումով Ղուկաս Վանանդեցու ձեռնարկն առավել մշակված ու համակարգված շարադրանքի տպավորություն է թողնում: Մատուցվող նյութը հեղինակը հետևողականորեն մասնատել է մի շարք հատվածների: Այսպես՝ առաջին գլխում առանձին հատվածների տեսքով են ներկայացված շափի, կշռի ու դրամական միավորները: Երկրորդ գլխում վաճառականական շուկաների ներկայացմանը, որպես առանձին մաս, հաջորդում է նույն այդ վայրերի վերաբերյալ էթնոմշակութային տեղեկատվություն: Երկր երրորդ գլուխն առավել մասնատվածն է՝ ընդգրկելով եվրոպական քաղաքների՝ միմյանցից ունեցած հեռավորությունից մինչև առևտրական թվաբանության հմտությունների ներկայացում: Կոստանդ Զուգայեցու «Աշխարհաժողով»-ը, ընդհակառակը, շարադրված է առևտրական շուկաների ամբողջական ու հաջորդական նկարագրման սկզբունքով: Այսպես օրինակ՝ Զենովայի վերաբերյալ տվյալներին հեղինակն անցնում է միայն Վենետիկի մասին առևտրական ողջ տեղեկատվությունը ներկայացնելուց հետո: Չափի, կշռի միավորների ու դրամական համակարգի մասին բոլոր տվյալներն ուղեկցվում են Վենետիկի՝ որպես առևտրական շուկայի ամբողջ

⁴⁴ Ղուկաս Վանանդեցի, Գանձ շափոյ, էջ 3:

ջական նկարագրությունը: Նույն սկզբունքի վրա կառուցելով ողջ շարադրանքը՝ Կոստանդ Ջուղայեցին հերթականությունը ներկայացնում է Հեռավոր Արևելքից մինչև Արևմտյան Եվրոպա ընկած առևտրական կենտրոնները: Այսպիսով՝ Ղուկաս Վանանդեցու ու Կոստանդ Ջուղայեցու ձեռնարկները կառուցվածքային առումով շարադրված են իրարից զանազանվող ծրագրերով: Այս հանգամանքի վրա թերևս իր ազդեցությունն է թողել երկերի բնույթը. եթե «Աշխարհաժողով»-ը գրված էր որպես դասագիրք առևտրական դասընթացի համար, ապա Ղուկաս Վանանդեցու խնդիրն էր իր գիրքը հասցեագրել առավել լայն շրջանակներին՝ ներկայացվող տվյալները դարձնելով համակարգված ու դյուրընկալելի:

Բովանդակային տեսակետից ևս «Գանձ չափոյ»-ն ու «Աշխարհաժողով»-ը հեռու են համանման պատկեր ներկայացնելուց: Բազմաթիվ են հատվածները, որոնք առկա են կա՛մ մի, կա՛մ մյուս ձեռնարկում: Ընդ որում, անգամ դժվար է հստակ պատասխան տալ այն հարցին, թե երկերից որն է առավել բովանդակալիցն ու հարուստն առևտրական տեղեկատվության տեսանկյունից: Հակառակ այն կարծիքին, թե Ղուկաս Վանանդեցու ձեռնարկը «Աշխարհաժողով»-ի վերախմբագրված տարբերակն է՝ բազմաթիվ են «Գանձ չափոյ»-ում հանդիպող այնպիսի հատվածները, որոնք բացակայում են ջուղայեցի հեղինակի երկում: Դրանց թվին են պատկանում տարբեր ժողովուրդների վերաբերյալ էթնիկական ուշադրավ տեղեկությունները, ապրանքների գների ու եվրոպական քաղաքների՝ միմյանցից ունեցած հեռավորության մասին տվյալները, թվաբանական գործողություններին ու հարակից հարցերին անդրադարձները և այլն: Ընդ որում, եթե եվրոպական քաղաքների դիրքի մասին տեղեկությունները նա կարող էր վերցրած լինել Եվրոպայում լայն տարածում գտած աշխարհագրական բնույթի գրքերից, ապա թվաբանական գործողություններին հաջորդող «երեքի կանոնի» ու «վաճառականական ընկերության կանոնի» մասին հատվածներն ակնհայտորեն հիշեցնում են հայկական մաթեմատիկական դասագրքի՝ «Արհեստ համարողութեան» գրքի⁴⁵ համապատաս-

⁴⁵ Հայկական մաթեմատիկական այս դասագիրքը, որը նաև աշխարհաբար առաջին տպագիր գիրքն էր, երկար ժամանակ համարվել է գերմանացի գիտնական Քրիստոֆեր Կլավիուսի (1538-1612 թթ.) աշխատության հայերեն թարգմանություն, մինչդեռ, ինչպես առաջին անգամ մատնանշել է Հակոբ Անասյանը, այս գրքի հեաֆերը տանում են դեպի Նոր Ջուղա՝ հեղինակային պատկանելության հարցը լուծելով հոգուտ հենց Կոստանդ Ջուղայեցու (Յ. Անասեան, «Հայերէն թուաբանական դասագրքերի պատմութեան համար», էջ 671-674, նույնի, Հայկական մատենագիտություն, էջ 874-877): Այս մասին տես նաև Ա. Փաշայան, «Արհեստ համարողութեան»-ը հայ հնատիպ գրքի պատմութեան հո-

խան մասերը⁴⁶: Ինչ վերաբերում է նրա գրի առած վաճառականական խնդիրներին, ապա դրանք առնչություն չունեն Կոստանդ Ջուղայեցու խնդիրների հետ, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ վերջինիս «Դոներն ռազամին» երկը չի հայտնվել Դուկաս Վանանդեցու ուշադրության կենտրոնում:

Որոշակի տարբերություններ կարելի է մատնանշել նաև վաճառականական շուկաների՝ երկու երկերի նկարագրություններում: Բերենք մի հատկանշական օրինակ. «Աշխարհաժողով»-ի ձեռագրերում «Եւ Լէ ու Մաշարն քրիստոնեայ են» բառերին հաջորդում է դատարկ տարածություն⁴⁷, որը հավանաբար բաց է թողնվել հետագայում համապատասխան տեղեկություն գտնելու և լրացնելու նպատակով: Եվրոպական շուկաների հարցում հմուտ Դուկաս Վանանդեցին, լրացնելով այս բացը, Մաշարի, այն է՝ Հունգարական թագավորության դրամական միավորների մասին հավելել է հետևյալը. «Ի Մաշառն՝ 1 մարչին՝ 7 շէլինգ եւ 7 գրօտ է: 1 դուկատն՝ 10 շէլինգ: 1 շէլինգն՝ 30 գրօտ: 1 Ֆլօրինն՝ 20 շէլինգ: 1 շէլինգն՝ 12 հէլր: Կայ այլ միւս Ֆլօրին, որ 100 գրօտ է: 1 գրօտն՝ 2 հէլր»⁴⁸: Թեև առևտրական շուկաների նկարագրություններում այլ անհամապատասխանություններ էլ կան, վաճառականական գիտելիքի հենց այս մասը ներկայացնելիս է Դուկաս Վանանդեցին առավելագույն չափով օգտվել «Աշխարհաժողով»-ից⁴⁹: Դրա մասին է խոսում այն հանգամանքը, որ եթե «Գանձ չափոյ»-ի մնացած մասերում հեղինակը շարադրանքը միշտ սկսում է եվրոպական քաղաքներից, ապա առևտրական շուկաները ներկայացնում է Կոստանդ Ջուղայեցու նախընտրած արևելքից արևմուտք հաջորդականություններով: Գնահատականներն առավել առարկայական դարձնելու և երկու երկերի միջև բնագրային համեմատություն անցկացնելու համար տեղին է դիտարկել Վենետիկի մասին նրանց հաղորդած տեղեկությունները: Ջախ սյունակում ներկայացված հատվածը մեկ ամբողջություն է Կոստանդ Ջուղայեցու երկում, իսկ աջ սյունակում մեջբերվածները վերցվել են Դուկաս Վանանդեցու ձեռնարկի զանազան մասերից և դրվել «Աշխարհաժողով»-ի

լովույթում», ՀԱ, ք. 1-12, 2005, էջ 345-364:

⁴⁶ Արհեստ համարողութեան ամբողջ եւ կատարեայ, Մարսել, 1675, էջ 106-121: Հմմտ. **M. Aghassian, K. Kévonian**, "Le commerce arménien dans l'Océan Indien aux 17^e et 18^e siècles", p. 172:

⁴⁷ Նոր Զուլա ձեռ. Հ^մ 64, 30ա:

⁴⁸ **Դուկաս Վանանդեցի**, *Գանձ չափոյ*, էջ 23:

⁴⁹ Հնդկաստանի առևտրական շուկայի մասին Կոստանդ Ջուղայեցու ու Դուկաս Վանանդեցու հաղորդած գրեթե համանման տեղեկությունների ֆրանսերեն քարգմանությունը տե՛ս **M. Aghassian, K. Kévonian**, "Le commerce arménien ..., pp. 172-173:

համապատասխան հատվածների դիմաց:

Կոստանդ Ջուղայեցի, Աշխարհաժողով ⁵⁰	Ղուկաս Վանանդեցի, Գանձ շափոյ ⁵¹
<p>Եւ Վանատիկն ամենայն ալիշվէրիշն էլ ողջ Ալիկոռնու պէս այ:</p> <p>Խանբարով իքմինն թաղայ-թաղայ կու ծախսվի և քաշով դաբայ իքմինն ղանթարով կու ծախսվի և ղանթարով կու քաշվի, որ մին ղանթարն ճ (100) լտրայ է, որ մին լտրէն ղզ (96) դրամ է, որ մին ղանթարն իզ (24) յօղայ է, որ մին ղանթարն թոզճ (9600) դրամ է:</p> <p>Ղանթարայհասապ իքմին այսք են՝ բուրթն, բանբակն, բանբակէ մանածն, պալմոմն և այլ նման սոցոնց, և աբրշմին հաֆայն էս այ, որ ղադիմի բարբաստ կապէլ ան, որ քնար աբրիշումին լտրէն խը (48) ղոռւշէթ այ, որ է՝ բ (2) տուկատ կորէնթ այ, գրայ իզ</p>	<p>Վէնէտիկու ալիշվէրիշն կիգօրնու պէս այ:</p> <p>Վէնէտիկցիք մին լիբրէն բաժանեն ի 12 ունցա, 1728 ղիրաթ, 6912 գրան: Մին ղանթարն՝ 100 լիբրայ, մին լիբրէն՝ 96 դրհամ կամ 12 ունցա, մին ունցէն՝ 9 դրհամ, որ է՝ 6 մսխալ: Արդ՝ մին ղանթարն 24 հօղկայ է՝, 9600 դրհամ:</p> <p>Ապրիշումի ահվալն այս է. ղադիմի սովորութիւն է՝ կապած քնար ապրիշումն լիտրէն 48 ղրուշէթ, որ է՝ 2 կոռէնթ դուկատ: Թէ թանկ է քնար ապրիշումն՝ դարէն փոքր այ, թէ աժան է՝ դարէն շատ է: Միւս ապրիշումիցն՝ վախտին գէօրայ՝ գահ աւել, գահ</p>

⁵⁰ Նոր Ջուղա ձեռ. Հ՛մ 64, 41ա-42բ:

⁵¹ **Ղուկաս Վանանդեցի**, *Գանձ շափոյ*, էջ 9-10, 24, 42 ևն: Կարելի է հավելել, որ Վենետիկի մասին առևտրական տեղեկատվությունը, բացի վաճառականական ձեռնարկներից, մեծ ծավալով շրջանառվել է նաև հայ վաճառականների նամակներում: Հայրապետի որդի Մարտիրոսի նամակների սևագիր օրինակների ժողովածուն, որը պահվում է Վենետիկի պետական արխիվի հայերեն փաստաթղթերի ֆոնդում և հասնում է շուրջ 500 էջի, լի է Վենետիկի առևտրական շուկայի մասին բազմաբանակ տեղեկություններով: Այսպես՝ Հայոց 1151 թվականի [1151+551=1702] փետրվարի 7-ին «Պարօն Յօվանիսին» գրած իր նամակի մեծագույն մասը Հայրապետը հատկացրել է Վենետիկի շափի ու կշոփ միավորների, դրամական համակարգի, վաճառքի համար եկամտաբեր ապրանքների ու այլ հարցերի լուսաբանմանը. «Դարձեալ բաղօլվաթ բարօլ այս երկիրս գալու համարիբ գրել և ապրանաց անֆայն այս է: Նախ ղըռմըզին լտրէն, որ տեղս ծախման է, ղզ [96] դրամ է, լիբրայ սուբիլ կասեն, նե մըտելուն լրբին բ [2] ղոռւշէթ է, որ իզ [24] ղոռւշէթն մին տուկատ է, մին տուկատըն գ [6] լիբայ, դ [4] սօլտի է, մին սվիլայ մառչիլն, որ բազըրկանի միջումն Խօռմաց երկրէն կամպի գոյ, ը [8] լիբայ հասապ կառեն, որ մին մառչիլն 31 ղոռւշէթ գնի...» (տե՛ս Archivio di Stato di Venezia, Documenti Armeni Mercantili, busta 3):

<p>(24) ղռուշէթն մին տուկատ կորէնթ այ: Հիմացիր, որ քնար աբրշմին թանկ յեժանութինն դարայ առելէ վերայ կու խօսեն, թէ թանկ այ՝ դարէ փոքրէ, թէ յեժան այ՝ դարէն շատէ, և միուս աբրշմինոցն վախտի գօրայ գայ թանկ, գայ յեժան և ալիշվէրիշին շատն ղռուշէթ կու խօսեն և գայի դօպլի և ձքին և ունկուուզ կու խօսեն, որ էստոնք ոսկի ան, և էլ ըսկուլթ և տուկատուն, մառչիլ և տուկատ էլ կու խօսեն, որ էստոնք արծաթ ան և էլ լիրայ և ղռուշէթ և ղազէթայ և սօլդի էլ կու խօսեն, որ էստոնք պղինձ ան: Հիմացիր, որ Տալիու ա (1) դօպլին իը (28) լիրայ է և Ասպանիու ա (1) դօպլին իթ (29) լիրայ է, գայ եվէլ գայ պակաս և մին ձքինն ժը (18) լիրայ է և մին ունկուուզն ժէ (17) լիրայ է և մին ըսկուլթն ժ (10) լիրայ է և մին տուկատուն թ (9) լիրայ զ (6) սօլդի է և մին մառչիլն ը (8) լիրայ է և մին տուկատն զ (6) լիրայ դ (4) սօլդի է, որ մին լիրէն ի (20) սօլդի է, որ ի (20) սօլդին ժ (10) ղազէթ այ:</p> <p>Եւ Վանատըկին բանքօյին հասապն էս այ, որ բանքօյի մին լիրէն ծ (50) տուկատ բանքօյի այ և էլ բանքօյի մին լիրէն ի (20) սօլդի բանքօյի այ և մին բանքօյի սօլդին կէս տուկատ բանքօյի այ և մին բանքօյի տուկատն իդ (24) ղռուշէթ բանքօյի այ և ա (1) բանքօյի ղռուշէթն զ (6) սօլդի կորէնթ այ և մին բանքօյի լիրէն ժբ (12) տուկատ կորէնթ այ:</p>	<p>փոքր, թանկ ու աժան: Ալիշվէրիշի փողն շատն կրուշէթ այ:</p> <p>Վէնէտիկումն 2 սօլդին մին ղազէթ այ: Քսան սօլդին մին լիրայ է: 24 ղռուշէթն մին դուկատ է: 6 լիրէն եւ 4 սօլդին մին դուկատ է: 8 լիրէն մին մարչիլ է: 9 լիրայ եւ 6 սօլդի մին դուկատուն է: 10 լիրէն մին ըսկուու է:</p> <p>Վէնէտիկ՝ մէկ մարքն 8 ունց է, մէկ</p>
--	--

<p>եւ այլ միւս լտրով քաշով իքմինն այսք են՝ դոմզն, մոշամն, քարբարն, քարաստալն, առճրճով ուլունքն, և այլ ինչ որ քաշ կու մտի՝ լտրով, որ մին լտրէն ղզ (96) դրամ է, և մուշկն էլ օնցով կու ծախվի, որ մին օնցէն թ (9) դրամ է և այլ ինչ որ մացով կու ծախվի, որ է՝ գողվիին, մացէն խ (40) պատ այ և նազլուղարին մացէն եճ (500) պատ է և այլ խալլիին և ջամն դանայ շմարէլ սանդղով էլ կու ծախվի: Եւ մագաղի խտր դավաթն, որն կու քաշեն, որն կու համպարեն, որն դուզինով այ, որ մին դուզինն ժբ (12) այ և քաղաթն ըռըզմով այ, կայ ըռըզմ՝ լ (30) դաստայ այ, կայ, որ ըռըզմ՝ ի (20) դաստայ այ, որ մին դաստէն իդ (24) դաբաղայ այ և ամենայն ապրանքին գնէրն փոխական ան՝ գայ եվել գայ պակաս, և ինչ ապրանք, որ Վանատիկն կու մտի, գմբրուկ չունի, դէրազ, որ նագարաթին խալջն կտան և ինչ ապրանք, որ Վանատըկէն դուս կելնի, ճ-ին (100) ժ (10) գումբրուկ կտան ամենայն խալջով:</p>	<p>ունցէն՝ 4 քուարտ, մէկ քուարտն՝ 36 ղիրէթ, մէկ ղիրաթն 4 գրան է: Կինի մէկ մարքն Վէնէտիկու 4608 գրան կամ 1152 ղիրաթ:</p> <p>Սիգուրաթն այսպէս էր: Իզմիր, Հստամպօլ, Զանթայ և Վէնէտիկ գնալն և գալն 7 և 8 էր:</p> <p>Կամբին այսպէս էր: Վէնէտիկ ալ ուզօ 2 ամիս, 93 գրօտ:</p> <p>Հօլլանդու և Ֆիանդրու երկրի հարիւր մարքն ոսկույ կամ արծաթի հարիւր քաշն... Վէնէտիկ քաշէ՝ 103 մարք, 1 կարտ աւել:</p> <p>Հարիւր Անվէրսու փունթն Վէնէտիկ մեծ կշիւն՝ 98 և պզտիկ քաշն՝ 56:</p> <p>Համբօրգու շուրի Վէնէտիկն՝ 65 միլ կէս:</p> <p>Ջէնվու ի Վէնէտիկ՝ 198 (միլ): Վէնէտիկու ի Տրէնտ՝ 94 (միլ):</p> <p>Հոռմու մինչեւ Քիօցա՝ 25 (միլ), Քիօցու բարքայով կու մտնուս յամենավայելուչ քաղաքն Վէնէտիկ:</p>
--	--

Երկու ձեռնարկների համապատասխան հատվածների համեմատու-
թյունից կարելի է կատարել որոշ դիտարկումներ.

ա. Քաշի միավորները երկու ձեռնարկներում գրեթե համանման են շարահրոված, սակայն Կոստանդ Ջուղայեցին հարկ է համարում հավելել նաև ապրանքների մասին տվյալներ՝

ղանթարով կշռվող ապրանքներին մասին՝ «ղանթարայհասապ⁵² իքմին այսք են՝ բուրթն, բանբակն, բանբակէ մանածն, պալմոմն և այլ նման սոցոնց»,

լիտրով կշռվող ապրանքների մասին՝ «եւ այլ միւս լտրով քաշով իքմինն այսք են՝ ղոմզն, մոջամն, քարբարն, քարաստալն, առճրճօվ ուլունքն»,

թղթի վաճառքի մասին՝ «քաղաթն⁵³ ըռըզմոզ⁵⁴ այ, կայ ըռըզմ՝ և (30) դաստայ⁵⁵ այ, կայ, որ ըռըզմ՝ ի (20) դաստայ այ, որ մին դաստէն իդ (24) դաբաղայ⁵⁶ այ», և այլն:

բ. Զանազան շուկաներում վարվող հարկային քաղաքականությունն անդրադառնալու Կոստանդ Ջուզայեցու ցանկությունն արտահայտվել է նաև Վենետիկի մասին հիշյալ հատվածում. «Ինչ ապրանք, որ Վանատիկն կու մտի, գմբրուկ շունի, դէրագ, որ նազարաթին խալջն կտան, և ինչ ապրանք, որ Վանատրկէն դուս կելնի, ճ-ին (100) ժ (10) գումբրուկ կտան ամենայն խալջօվ»: «Գանձ չափոյ»-ում բացակայող այս տեղեկությունն արտացոլում է դեռևս 1615 թ. Վենետիկի հանրապետություն ներկրվող ապրանքների զանազան մաքսերի վերացումը⁵⁷: Հետաքրքիր է, որ առևտրական այս արտոնությունն արձանագրել է նաև խաչատուր Թոխաթցին «Պատմութիւն Վէնէտիկոյ քաղաքին» չափածո ուղեգրություն մեջ⁵⁸:

գ. Ղուկաս Վանանդեցուն՝ Վենետիկ տանող առևտրական ուղիների մասին մղոնաչափական տվյալները առհասարակ բացակայում են «Աշխարհա-ժողով»-ում.

⁵² Ղանթար բառի «մեծ կշեռ» բացատրությունը հուշում է, որ «ղանթարայհասապ», այն է՝ ղանթարով կշռվող ապրանքները ենթակա են եղել մեծածախ վաճառքի: Բավական է ասել, որ եվրոպական առևտրական կենտրոններում 1 ղանթարը հավասար էր 100 լիտրի, իսկ 1 լիտրը Սեֆյան Իրանում մի դեպքում համարժեք էր 3 կիլոգրամի («Թավրիզի դիտր»), մյուս դեպքում՝ շուրջ 6 կիլոգրամի («Աշամստանայ դիտր»):

⁵³ Պրսկ. ذغاك (kāz) – բուրդ:

⁵⁴ Արաբ. راسم (rasm) – կարգ, սովորույթ:

⁵⁵ Պրսկ. داسته (daste) – կապ, փունջ:

⁵⁶ Պրսկ. طباغه (tabāge) – այստեղ՝ շերտ:

⁵⁷ Հմմտ. Ա. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք Բ, Երևան, 1959, էջ 121:

⁵⁸ Սահակյան Հ., Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը, Երևան, 1975, էջ 281: Երկի հրատարակությունը տե՛ս Պատմութիւն Փարէզի եւ Վեննայի, Պատմութիւն Վենետիկ քաղաքին, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1966: Տե՛ս նաև խաչատուր Թոխաթցու այս չափածո երկի՝ Պավել Չոբանյանի հետաբերի վերլուծությունը՝ «Հայ ուղեգիրները Հռոմի եւ Իտալիայի մասին», Հայաստանի պատմութեան նիւթեր կենտրոնական Եւրոպայի դիւաններում, Երևան, 2001, էջ 24-27:

«Համբօրգու շուրի Վէնէտիկն՝ 65 միլ կէս, Ջէնովու ի Վէնէտիկ՝ 198 (միլ), Վէնէտիկու ի Տրէնտ՝ 94 (միլ), Հոռմու մինչեւ Քիօցա⁵⁹ 25 (միլ), Քիոցու բարքայով⁶⁰ կու մտնուա յամենավայելուչ քաղաքն Վէնէտիկ»:

դ. Ղուկաս Վանանդեցու հավելյալ տեղեկատվութեան մեջ հատկանշական է «կամբի»-ի *cambio* փոխանցային մուրհակի մասին գրանցումը. «Կամբին այսպէս էր: Վէնէտիկ ալ ուզօ 2 ամիս, 93 գրօտ»: Հայկական աղբյուրներում, ինչպէս հայտնի է, փոխանցագիրը հանդես է գալիս «ավաք», «զմեի ավաք», «բաբաթ» կամ «հընդվի» անուններով⁶¹, մինչդեռ դրա եվրոպական տարատեսակը սկսած ԺԻ. դ. ստացել էր «կամբիո» իտալերեն անվանումը⁶²:

ե. Ուշադրութեան արժանի է նաև թվերի գրանցման համակարգը երկու ձեռնարկներում: Կոստանդ Ջուղայեցին նախընտրում է գործածել այն մոդելը, որը հիմնված էր հայկական տառաթվային համակարգի վրա և լայն տարածում ուներ ջուղայեցի վաճառականների շրջանում⁶³: Դրա համաձայն՝ միավորներն ու տասնավորները գրվում էին անփոփոխ, մինչդեռ հարյուրավորներն ու հազարավորները կազմվում էին միավորների շարքի և «ճ» ու «ռ» տառերի համակցումով (օրինակ՝ եճ 500, զոգճիբ՝ 6322): Դրան հակառակ՝ Ղուկաս Վանանդեցին, ինչպէս հիշյալ հատվածում, այնպէս էլ ողջ երկում օգտագործում է արաբական թվանշանները: Միակ բացառությունը «1» թիվն է, որի փոխարեն հեղինակը հետևողականորեն գործածում է «մին» կամ «մէկ» բառերը: Այս հանգամանքը կարելի է բացատրել Ղուկաս Վանանդեցու վրա եվրոպական միջավայրի թողած ազդեցութեամբ. ԺԶ. դարի կեսերից արաբական թվանշաններն արդեն իսկ լայն գործածություն էին ստացել եվրոպայի մեծ մասում՝ հռոմեական թվանշաններն ամբողջովին թողնելով մրցակցու-

⁵⁹ Կիոցա – Վենետիկից 25 կմ հարավ, հայտնի էր «Փոբրիկ Վենետիկ» անունով:

⁶⁰ Լատին. *barca* – մակույկ: Անցել է եվրոպական մի շարք լեզուների (օր.՝ *barque*):

⁶¹ Խաչիկյան Շ., «Փոխանցային մուրհակը հայ խոջայական միջավայրում», ՊԲՀ, 1981, ք. 1, էջ 91, *Khachikian Sh.*, “The Bill of Exchange in the Milieu of New Julfan Armenian Merchants”, *Les arméniens dans le commerce asiatique au début de l'ère moderne*, *Sushil Chaudhury et Kéram Kévonian* (éds.), Paris, 2007, pp. 277-278.

⁶² *Denzel M.*, “The European Bill of Exchange: Its Development from the Middle Ages to 1914”, *S. Chaudhuri and M. Denzel (eds.)*, *Cashless Payments and Transactions from the Antiquity to 1914*, Stuttgart, 2008, p. 157.

⁶³ Հովհաննես Տեր-Դավթյան Ջուղայեցու հաշվետումարը, էջ 61-62: Այս մասին առավել մանրամասն տե՛ս *Kévonian K.*, “Numération, calcul, comptabilité et commerce”, *Les arméniens dans le commerce asiatique au début de l'ère moderne*, pp. 283-370:

Թյունից դուրս:

զ. Ընդհանուր առմամբ, Դուկաս Վանանդեցին զգալի ինքնուրույնություն է հանդես բերում: Այն, որ Վենետիկի մասին իր տեղեկությունների աղբյուրներից մեկը «Աշխարհաժողով»-ն է, ակնհայտ է առանձին դեպքերում շարադրանքի համանմանությունից: Այդ հանգամանքը, սակայն, ամենևին չի կաշկանդում «Գանձ չափոյ»-ի հեղինակին. նա ոչ միայն ընտրողաբար է ներկայացնում Կոստանդ Զուղայեցու տվյալները, այլև դրանց հավելում է բազմաթիվ այլ ուշագրավ տեղեկություններ՝ իր ձեռնարկը զգալիորեն ինքնուրույն դարձնելով «Աշխարհաժողով»-ից: Ընդ որում, այս գնահատականը պետք է տարածել ոչ միայն Վենետիկի առևտրական շուկայի վերաբերյալ հիշյալ հատվածի, այլև ողջ շարադրանքի վրա⁶⁴:

Եվ վերջում, մեկ կարևոր արձանագրում ևս: Վաճառականական դասագրքերի հարուստ պատմություն մեջ դրանց հեղինակների ստեղծագործական շփումների տեսանկյունից հայկական այս օրինակը եզակի չէ: Ընդհակառակը, Կոստանդ Զուղայեցու ձեռնարկից Դուկաս Վանանդեցու ունեցած որոշակի կախվածությունը պետք է դիտարկել վաղ արդի Եվրոպայում դիտված այն երևույթի համատեքստում, երբ վաճառականական լայն շրջանակների համակրանքին արժանացած դասագրքերը չափանիշ էին դառնում համանման ձեռնարկների ապագա հեղինակների համար: Այս առումով լավագույն օրինակն, անկասկած, Ֆրանսիացի վաճառական ու հեղինակ Ժակ Սավարիի (1622-

⁶⁴ Ամստերդամում «Աշխարհաժողով»-ի լայն գործածությունը համադրելի է մի շարք այլ բնակավայրերում ևս այս երկի շրջանառության դրվագների հետ: Այդ փաստը պետք է դիտարկել «մարդկանց ու առարկաների» շրջանառության այն տեսության շրջանակում, որ առաջարկել է Կլոդ Մարկովիցը 2000 թվականին (Markovits C., *The Global World of Indian Merchants, 1750–1947: Traders of Sind from Bukhara to Panama*, New York: Cambridge University Press, 2000): Համաձայն դրա՝ վաղ արդի առևտրական ցանցերում պետք է տեղի ունեցած լինե՞ր 5 երևույթի կայուն շրջանառություն՝ վաճառականներ, ապրանքներ, կապիտալ, տեղեկատվություն ու կանայք: «Աշխարհաժողով»-ի ուսումնասիրությունը թույլ է տալիս հետոն գնացող եզրահանգումներ անել Նոր Զուղայի ցանցում վաճառականական այս դասագրքի շրջանառության մասին՝ այն դիտարկելով որպես առևտրական տեղեկատվության փոխանցման յուրահատուկ տեսակ, որը, բնորոշ շլիեղով վաղ արդի շրջանի ասիական առևտրական մյուս համայնքներին, Նոր Զուղայի առևտրական ցանցն այս առումով դարձնում է յուրահատուկ: Այս մասին տե՛ս Baldaryan S., “An Armenian Trade Manual in Circulation: Constant of Julfa, His *Compendium* and the Dissemination of Information in the Julfan Trade Network”, Paper Presented at the 17th Graduate Student Colloquium in Armenian Studies, UCLA, February 15, 2019:

1690) «Կատարյալ վաճառականը» դասագիրքն է, որն առաջին հրատարակությունից⁶⁵ մինչև 1800 թվականն ընկած ժամանակահատվածում ունեցել է ավելի քանի 30 հրատարակություն, ներառյալ՝ անգլերեն, հոլանդերեն ու իտալերեն թարգմանությունները⁶⁶: Ինչպես ցույց է տալիս Ֆրանսիացի մի հետազոտողի ուսումնասիրությունը, ժ.Ը. դարում մարսելցի վաճառականներից յուրաքանչյուրն ուներ այս ձեռնարկի իր օրինակը⁶⁷: Ֆրանչեսկա Տրիվելլատոյի նորերս արված դիպուկ գնահատականում ակնհայտորեն արտացոլված է Սավարիի ձեռնարկի ունեցած համբավը ողջ եվրոպայում. «Ժակ Սավարիի «Կատարյալ վաճառականը», որն առաջին անգամ հրատարակվել է 1675 թվականին, ժ.Է. դարի ֆրանսիական առևտրական հասարակության մանիֆեստն էր: Այն նաև վաղ արդի եվրոպայի ամենից շատ վերահրատարակված, թարգմանված ու ընդօրինակված առևտրական դասագիրքն էր»⁶⁸: Հասկանալի է, որ վաճառականական այս ձեռնարկի համաեվրոպական համբավը պայմանավորում էր այն հնարավորինս ընդօրինակելու եվրոպացի հեղինակներից շատերի ձգտումը: Համանման նշանակություն կարելի է վերագրել նաև Կոստանդ Զուդայեցու առևտրական ձեռնարկներին, որոնք,

⁶⁵ **Jacques Savary**, *Le parfait négociant ou Instruction générale pour ce qui regarde le commerce des marchandises de France et des pays étrangers*, Paris: Chez Louis Billaine, 1675. Ժակ Սավարիի առևտրական այս ձեռնարկի մասին մանրամասն տե՛ս **Hauser H.**, “Le ‘parfait négociant’ de Jacques Savary,” *Revue d’histoire économique et sociale*, 1925, no. 13, pp. 1–28; **Hook J.**, “Le phénomène Savary et l’innovation en matière commerciale en France aux XVIIe et XVIIIe siècles”, **Jean-Pierre Kintz (ed.)**, *Innovations et nouveaux techniques de l’Antiquité à nos jours: Actes du colloque international de Mulhouse (septembre 1987)*, Strasbourg: Oberlin, 1989, pp. 113–123; **Coffman D’Maris**, “Economic Thought and State Practice in the Atlantic World: The ‘Phénomène Savary’ in Context”, **D’Maris Coffman, Adrian Leonard and William O’Reilly (eds.)**, *The Atlantic World*, Routledge: London and New York, 2015, pp. 618–632. Վերջին հոդվածի կապակցությամբ շնորհակալություն եմ հայտնում հեղինակին իր աշխատանքի էլեկտրոնային տարբերակը սիրալիբ կերպով իմ տրամադրության տակ դնելու համար:

⁶⁶ Ժակ Սավարիի դասագրքի՝ 1675–1800 թթ. վերաբերող բոլոր հրատարակությունների մատենագիտական ցանկը տե՛ս *Ars Mercatoria: Handbücher und Traktate für den Gebrauch des Kaufmanns, Manuels et traités à l’usage des marchands*, pp. 488–497.

⁶⁷ **Carrière C.**, *Négociants marseillais au XVIIIe siècle: Contribution à l’étude des économies maritimes*, Marseilles: Institut Historique de Provence, 1973, pp. 765–770.

⁶⁸ **Trivellato F.**, *The Promise and Perils of Credit: What a Forgotten Legend about Jews and Finance Tells us about the Making of European Commercial Society*, Princeton: Princeton University Press, 2019, p. 99.

գրական այդ ժանրում առաջին ամբողջական օրինակները լինելով հայ իրականություն մեջ, ուղենշային դերակատարություն պետք է ստանային հետագա հայ հեղինակների համար: Այս իմաստով Ղուկաս Վանանդեցու օրինակը միակը չէ: 1753 թվականին, երբ Նոր Զուղայի համաշխարհային առևտրական ցանցն արդեն անկում էր ապրել, Հակոբջանի որդի Մատուրն առևտրական իր ձեռնարկի ներածական մասը շարադրում էր՝ հետևելով «Աշխարհաժողով»-ի համապատասխան հատվածներին⁶⁹: Այս և վաղ արդի հայ առևտրական գրականության վրա Կոստանդ Պուղայեցու երկերի ազդեցությունն այլ դրվագները դրանց համար ապահովում են մոտավորապես այն դերակատարությունը, ինչ ժակ Սավարիի «Կատարյալ վաճառականն» է ունեցել վաղ արդի եվրոպայում⁷⁰:

Եզրակացություններ

Ուշ միջնադարում ու վաղ արդի ժամանակահատվածում եվրոպայում հսկայական տարածում ստացած վաճառականական ձեռնարկների շա-

⁶⁹ ՄՄ 9284, 5բ-6ա: Հարկ է նշել նաև, որ Աստրախանում շարադրված այս առևտրական ձեռնարկի վրա իր ազդեցությունն է թողել նաև Ղուկաս Վանանդեցու երկը: Բավական է ասել, որ հեղինակն իր ձեռնարկի տիտղոսաթերթը ձևավորել է «Գանձ չափոյ»-ի ակնհայտ նմանությունը՝ չվարանելով կատարել մի քանի անհրաժեշտ փոփոխություններ: Մասնավորապես, Ամստերդամը փոխարինվել է Աստրախանով, 1699 թվականը՝ 1753-ով, իսկ երկի հովանավոր Պետրոս Պուղայեցու անունը՝ հենց հեղինակի անվամբ (նույն տեղում, 4ա):

⁷⁰ Ամստերդամում ու Աստրախանում «Աշխարհաժողով»-ի լայն գործածությունը համարելի է մի շարք այլ բնակավայրերում ևս այս երկի շրջանառության դրվագների հետ: Այդ փաստը պետք է դիտարկել «մարդկանց ու առարկաների» շրջանառության այն տեսության շրջանակում, որ առաջարկել է Կրոդ Մարկովիցը 2000 թվականին (Markovits C., *The Global World of Indian Merchants, 1750–1947: Traders of Sind from Bukhara to Panama*, New York: Cambridge University Press, 2000): Համաձայն դրա՝ վաղ արդի առևտրական ցանցերում պետք է տեղի ունեցած լինե՞ր 5 երևույթի կայուն շրջանառություն՝ վաճառականներ, ապրանքներ, կապիտալ, տեղեկատվություն ու կանաչի: «Աշխարհաժողով»-ի ուսումնասիրությունը թույլ է տալիս հետոն գնացող եզրահանգումներ անել Նոր Զուղայի ցանցում վաճառականական այս դասագրքի շրջանառության մասին՝ այն դիտարկելով որպես առևտրական տեղեկատվության փոխանցման յուրահատուկ տեսակ, որը, բնորոշ շինելով վաղ արդի շրջանի ասիական առևտրական մյուս համայնքներին, Նոր Զուղայի առևտրական ցանցն այս առումով դարձնում է յուրահատուկ: Այս մասին տե՛ս Baldaryan S., “An Armenian Trade Manual in Circulation: Constant of Julfa, His Compendium and the Dissemination of Information in the Julfan Trade Network”, Paper Presented at the 17th Graduate Student Colloquium in Armenian Studies, UCLA, February 15, 2019:

րադրման ու հրատարակման գործը Ժէ.-ԺԸ. դդ. իր գուգահեռն է ունեցել նաև հայ իրականության մեջ: Սակայն «առևտրի գաղտնիքները»⁷¹ մասին պատմող հայկական վաճառականական ձեռնարկների ուսումնասիրությունը դեռևս միայն նախնական փուլում է գտնվում՝ լիակատար իրավունք ունենալով բնորոշվելու որպես վաղ արդի հայոց պատմության, առաջին հերթին՝ հայ վաճառականության պատմության բաց ոլորտ: Այս ուղղությամբ կատարվելիք աշխատանքները պետք է միտված լինեն այդ առևտրական ձեռնարկներից առավել կարևորների գիտական բնագրերի հրատարակությանը, ինչպես նաև՝ դրանց հետազոտությունը շատ ավելի լայն՝ եվրոպական համապատասխան աշխատությունների համապատկերում:

1699 թվականին Ամստերդամում լույս տեսած «Գանձ չափոյ, կշռոյ, թւոյ և դրամից բոլոր աշխարհի» ձեռնարկը Ղուկաս Վանանդեցին շարադրել է՝ ուշադրության կենտրոնում պահելով նախօրինակների՝ Կոստանդ Ջուղայեցու առևտրական դասագրքերը: Վանանդեցի հեղինակն իր երկի առանձին հատվածներում ակնհայտորեն օգտվել է Կոստանդ Ջուղայեցու «Աշխարհաժողով»-ից, ինչպես նաև՝ 1675 թվականին Մարսելում հրատարակված «Արհեստ համարողութեան» գրքից, որի հեղինակի հարցը, ըստ Հակոբ Անասյանի համոզիչ եզրակացության, պետք է լուծվի նույն այս ջուղայեցի դպրապետի օգտին: Հայկական առևտրական ձեռնարկների առնչակցության այս դրվագը հիշեցնում է վաղ արդի եվրոպայում արձանագրված այն երևույթը, երբ վաճառականների շրջանում լայն ընդունելություն գտած ձեռնարկները դառնում էին ընդօրինակման առարկա նմանօրինակ գրքերի հետագա հեղինակների համար: Այս ամենով հանդերձ, Ղուկաս Վանանդեցին հանդես է բերում ստեղծագործական ինքնուրույնություն՝ փոխառված հատվածների նկատմամբ ցուցաբերելով ընտրողական մոտեցում և իր երկում ներառելով առևտրական մեծաքանակ տեղեկատվություն, որը բացակայում է Կոստանդ Ջուղայեցու դասագրքերում: Բազմաթիվ առումներով «Գանձ չափոյ»-ի յուրահատկությունն ու ինքնատիպությունը մղում են առավել քան խնդրահարույց համարելու վերջինս «Աշխարհաժողով»-ի խմբագրված տարբերակի սահմաններում դիտարկելու լայն տարածում ունեցող մոտեցումը:

⁷¹ Markovits C., *The Global World of Indian Merchants*, p. 25.

SARGIS BALDARYAN

**BETWEEN NEW JULFA AND AMSTERDAM:
EARLY MODERN ARMENIAN TRADE MANUALS
IN COMPARISON**

Key words: merchant, Konstant of Julfa, Compendium, Ghukas of Vanand, circulation theory.

The paper explores three early modern Armenian trade manuals written in New Julfa and Amsterdam at the end of the seventeenth century. The author has carried out a comparative analysis: A Treasury of Measures, Numbers and Moneys of the Entire World by Ghukas of Vanand versus Compendium and Introduction to Arithmetic by Konstant of Julfa. The study is based on a detailed examination of the manuscripts of Konstant's manuals kept in Yerevan, Oxford, and New Julfa.

It begins with an overview of the contents of the three commercial manuals. The second part of the article argues that, contrary to the current opinion, Ghukas of Vanand did not simply copy his source. Ghukas' manual contains abundant commercial information significantly different from what Konstant of Julfa included in his handbooks.

САРКИС БАЛДАРЯН

**МЕЖДУ НОВОЙ ДЖУЛЬФОЙ И АМСТЕРДАМОМ:
АРМЯНСКИЕ УЧЕБНИКИ ТОРГОВОГО ДЕЛА
РАННЕГО НОВОГО ВРЕМЕНИ**

Ключевые слова: купец, Констант Джугаеци, Компендиум, Гукас Ванандеци, теория циркуляции.

В статье рассматриваются три армянских учебника торгового дела, написанных в Новой Джульфе и Амстердаме в конце 17-го века (“Компендиум” и “Введение в Арифметику” Константа Джугаеци и “Сокровищница мер, числа и денег всего мира” Гукаса Ванандеци), дается их сравнительный анализ. Исследование основано на детальном изучении рукописных пособий Константа, хранящихся в Ереване, Оксфорде и Новой Джульфе.

Оно содержит обзор содержания этих коммерческих учебников. Во второй части статьи показывается, что, вопреки распространенному мнению, учебник Гукаса Ванандеци не просто дублирует свой источник, но изобилует большим количеством коммерческой информации, которая значительно отличается от того, что включил в свои учебники Константин Джугаеци.

**ԳԱԲՐԻԵԼ ԱՅՎԱԶՅԱՆԻ «ԲԱՌԱՎՉՆՆՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻԿ
ԼԵՉՈՒԻ» ԶԵՌԱԳԻՐ ԵՐԿԸ՝ ՈՐՊԵՍ ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ
ՏԱՐԱԾՄԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ**

Բանալի բառեր՝ Մխիթարյան միաբանություն, Բազմավէպ, ձեռագիր, բառարան, աշխարհաբար, գրաբար:

Մեր նպատակը Գաբրիել Այվազյանի (Այվազովսկի) «Բառագննություն աշխարհիկ լեզուի» ձեռագիր երկի քննումն է՝ ոչ միայն աշխարհաբարի տարածման գործում Գ. Այվազյանի դերը ներկայացնելու նպատակով, այլև նրա այդ գործի դիտարկումը որպես աշխարհաբար հայերենի ևս մեկ նմուշ-բառարանի: Հեղինակն իր նախապես հրատարակած հոդվածներում տեսական դրույթներով հիմնավորած լինելով աշխարհաբարի զարգացման ուղին, այստեղ արդեն փորձում է շրջանառության մեջ դնել իր ժամանակի աշխարհաբարը որպես գրական լեզու: Նրա նպատակը միայն ժամանակի աշխարհաբարն արձանագրելը չէր, նաև ցանկանում էր որոշ հեղինակների հրամցնել հայերենի բառապաշարի որոշակի ուղեցույց, որից նրանք պետք է օգտվեին իրենց նյութն ընթերցողների լայն հասարակությանը հասանելի դարձնելու նպատակով:

Գ. Այվազյանը նշանավոր եկեղեցական և հասարակական գործիչ էր, բանասեր, պատմաբան, լեզվաբան, մանկավարժ, թարգմանիչ: Նրա կյանքի մեծ մասն անցել է Մխիթարյան միաբանությունում: Կարևոր է նրա դերը ոչ միայն միաբանական կյանքի, այլև Մխիթարյանների ծավալած հայանպաստ գործունեության, իսկ ավելի ուշ, արդեն «Բազմավէպ»-ը հիմնադրելու և խմբագրելու շնորհիվ նաև ժամանակի լեզվի զարգացման ուղիները մատնանշելու մեջ: «Բազմավէպ»-ը իր հիմնադիր-խմբագրի շնորհիվ պատմական, աստվածաբանական, թարգմանական կարևոր հարցերի քննությունից բացի, մեր լեզվի համար բախտորոշ դեր խաղաց գրաբար-աշխարհաբար հակամարտության հորձանուտում: Չնայած Գ. Այվազյանն իր պատմական գործերը գրել է գրաբարով, սակայն, հաշվի առնելով ժԹ՝ դարի կեսերին ձևավորվող աշխարհաբարի կարևորությունը ժողովրդի ստվար զանգվածին հասանելի լինե-

լու համար՝ նաև անվարան դիմել է աշխարհաբարին: Գ. Այվազյանը չափազանց մեծ տեղ էր հատկացնում ազգային լեզվին, ուստի մանկավարժական գործունեությունը և հայերենին նվիրված աշխատություններով իր նպաստը բերեց Ս. Ղազարում մանուկների հայեցի դաստիարակությանը և հետաքրքիր դիտարկումներ, յուրօրինակ մտտեցումներ առաջարկեց հայերենի ուսումնասիրության ու նրա առանձնահատկությունների պարզաբանման առիթով:

Լեզվին նվիրված և աշխարհաբարով շարադրված նրա բազմաթիվ աշխատությունները¹ մեծ դեր և նշանակություն ունեցան ժամանակի լեզվամտածողության և գրաբար-աշխարհաբար հակամարտության բարդ ու դժվարին փուլում. բարդ, քանի որ ինքը՝ հեղինակը սկզբնական շրջանում իր աշխատությունները գրել է գրաբարով: Ավելի ուշ, հաշվի առնելով աշխարհաբարի կարևորությունը և «Բազմավէպ»-ի նյութերը ժողովրդին հասանելի դարձնելու խնդիրը, ինչպես նաև, որպես մանկավարժ, գերխնդիր համարելով մանուկներին ավելի հասկանալի լեզվով նյութերի մատուցումը՝ նա սկսեց իր աշխատությունների մեծ մասը գրել աշխարհաբարով, զուգահեռ բազմաթիվ ուշագրավ դիտարկումներ արեց լեզվի զարգացման ուղիների մասին: Գ. Այվազյանը լեզվին վերաբերող իր մի քանի հոդվածներում² նշում է ազգային լեզվի զարգացման հիմնական ուղիները և նկատառումներ հայտնում վերջինիս տարածման մասին՝ իրեն ժամանակակից հեղինակներին հորդորելով նախապատվությունը տալ ժողովրդին հասկանալի լեզվին՝ աշխարհաբարին:

¹ Տե՛ս Գ. Այվազյան, *Խանգարմունք հայկաբանության ի հնումն եւ ի նորումս, Թէոդոսիա, 1869, Առակք Յովհաննու Քոիլովի չինն գիրս, Թարգմանեաց յաշխարհիկ բարբառ Գաբրիէլ արեւայիսկոպոս Այվազեան, Վաղարշապատ (երկրորդ տպագրություն), 1896, նույնի՝ Խրիմու հայոց լեզուովը շարադրուած առակներ, Ս. Պետերբուրգ, 1872, նույնի՝ Սրբագրութիւն սխալմանց տետրակացն լսարանի, Ս. Էջմիածին, 1865, նույնի՝ Ուղղագրութիւն լեզուիս Հայոց, Թէոդոսիա, 1869, նույնի՝ Տեսութիւն կարճեաց տետուն հայր Արսենի Բագրատունւոյ յաղագս հնչման Ղ եւ Լ տառից, Վենետիկ, 1852, նույնի՝ Նախակրթանք հայերէն լեզուի, 3 հատորով, 1860-1877 թթ. (Մասն Ա՝ Թէոդոսիա, 1860, երկրորդ տպագրութիւն, Վաղարշապատ, 1875, Մասն Բ՝ Վաղարշապատ, 1876, Մասն Գ՝ Վաղարշապատ, 1877), Գ. Այվազեան, *Ուղղախօսութիւն արդի հայերէն լեզուին*. այս աշխատությունը մեզ չհաջողվեց գտնել Գ. Այվազյանի տպված գործերի շարքում: ՄՄ 2878 ձեռագրի առաջաբանում հեղինակը նշում է, որ վերջինս տետրակ է (5բ) և հնարավոր է՝ ինչ-որ մի տեղ այն պահվում է ձեռագիր վիճակում, երկրորդ՝ ավելի քիչ հավանական տարբերակն էլ այն է, որ Գ. Այվազյանը «Ուղղախօսութիւն արդի հայերէն լեզուին» տետրակ ասելով նկատի ունի վերը նշված «Ուղղագրութիւն լեզուիս Հայոց»՝ կրկին 1869 թվականին Թէոդոսիայում (ՄՄ 2878 ձեռագրի գրչության ժամանակն ու տեղն է) տպված իր գործը:*

² Գ. Այվազեան, «Ազգային լեզուն պահելու վրայ», *Բազմավէպ*, հ. Ա, 1843, էջ 76-80, «Աշխարհաբար լեզուի վրայ», *Բազմավէպ*, հ. Ա, 1843, էջ 108-111:

Հենց լեզվին նվիրված մի քանի աշխատություններում Գ. Այվազյանը հորդորեց գրել աշխարհաբարով և նշեց այն հիմնական ուղիները, որոնք պետք է աղբյուր և հենք դառնային աշխարհաբարի՝ որպես գրական լեզվի վերջնական ձևավորման և տարածման համար: Այդպիսի աշխատություններից է մեր քննության նյութը՝ միայն ձեռագրով պահպանված «Բառազննութիւն աշխարհիկ լեզուի» (ՄՄ 2878 ձեռ.) գործը, որը ժամանակի աշխարհաբարը գիտական շրջանառության մեջ դնելու յուրօրինակ փորձ էր: Ավելին, բարեխիղճ լեզվաբանի նուրբ հոտառությամբ հեղինակը կարողացավ ոչ միայն սոսկ արձանագրել ժամանակի բառապաշարը, այլև բազմաթիվ հետաքրքիր բացատրություններով և այլ լեզուների հետ հաճախակի զուգադրումներով առավել համակողմանի ուսումնասիրել ժամանակի աշխարհաբարը՝ սեղանին դնելով հանրամատչելի լեզվով բացատրություններով մի գործ:

ՄՄ 2878 ձեռագրի մեր ուսումնասիրության նպատակն է արձանագրել Գ. Այվազյանի լեզվական հետաքրքիր դիտարկումներն ու բնորոշումները և դիտարկել աշխարհաբարին նախապատվություն տալու փաստարկները, ինչպես նաև ուսումնասիրել ԺԹ. դարի կեսերի աշխարհաբարի ևս մեկ նմուշ, ինչը թույլ կտա հստակեցնել տվյալ ժամանակաշրջանի հայերենի բառապաշարը:

Աշխարհաբարին վերաբերող աշխատությունները արևմտահայ իրականության մեջ սկսվում են ԺԸ. դարի սկզբից: 1717 թվականին Վենետիկում լույս տեսած Մխիթար Սեբաստացու «Դուռն քերականութեան աշխարհաբար լեզուին Հայոց»³ գիրքը համարվում է աշխարհաբարի առաջին քերականությունը, 1866 թվականին Արսեն Այտընյանի «Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի»⁴ աշխատությունը գիտական մակարդակի է հասցնում աշխարհաբարի ուսումնասիրությունը. նրանում անդրադարձ կա գրաբար-աշխարհաբար հակամարտությանը, և նախապատվությունը տրված է աշխարհաբարին և, էդ. Աղայանի բնորոշմամբ՝ հայերենագիտությունը բարձրացված է «եվրոպական առաջավոր լեզվաբանության մակարդակին»⁵: Աշխարհաբարի քերականությանը և բառապաշարին նվիրված կարևոր աշխատություններ են Գ. Մուրադյանի «Հայերէն քերականութիւն նորավարձ

³ Մխ. Սեբաստացի, Դուռն քերականութեան աշխարհաբար լեզուին Հայոց, Վենետիկ, 1727:

⁴ Ա. Այտընեան, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866:

⁵ 1987 թ.ին վերահրատարակված վերոնշյալ աշխատության առաջաբան, տե՛ս Ա. Այտընյան, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզվի, Երևան, 1987, էջ 3:

ուսանողաց համար»⁶, Վ. Չալըխյանի «Քերականութիւն հայկազնեան լեզուի»⁷, Ա. Գարագաշյանի «Դպրութիւն կամ նոր քերականութիւն հայերէն»⁸, Զ. Տոնելյանի «Գործնական քերականութիւն արդի աշխարհաբարի»⁹, Ն. Մելիք-Թանգյանի «Աշխարհաբարի քերականութիւնը»¹⁰ և այլն:

Դրանց զուգահեռ՝ ԺԹ. դարում այլալեզու բազմաթիվ բառարանների կողքին հրատարակվում էին գրաբարի և աշխարհաբարի բառարաններ: Գլուխգործոցներից էր «Նոր բառգիրք հայկազեան լեզուի»¹¹ բառարանը, որ առավել հայտնի է «Նոր Հայկազյան բառարան» համառոտումով: Նշենք այլ բառարաններ՝ «Համառոտ բառարան ի պէտս նորավարժից»¹², «Բառգիրք հայկազեան լեզուի»¹³, «Առձեռն»¹⁴, «Բառգիրք յաշխարհաբառէ ի գրաբառ, յաւելուածովք ոճոյ եւ դարձուածովք նախնեաց ի պէտս դպրոցաց»¹⁵ և այլն:

Աշխարհաբարին նվիրված ահա այդպիսի բառարան է Գ. Այվազյանի «Բառազնութիւն աշխարհիկ լեզուի» աշխատութիւնը, որը, ի տարբերութիւն վերը նշվածների՝ աշխարհաբարով աշխարհաբարը ժողովրդին հասցնելու նպատակ ունէր: Ժամանակի բառարանների հիմնական խնդիրն էր գրաբարով

⁶ Գ. Մուրատեան, Հայերէն քերականութիւն նորավարժ ուսանողաց համար, Տփլիս, 1860:

⁷ Վ. Չալըխեան, Քերականութիւն հայկազնեան լեզուի, Վիէննա, 1862:

⁸ Ա. Գարագաշեան, Դպրութիւն կամ նոր քերականութիւն հայերէն, Կ. Պոլիս, 1865:

⁹ Զ. Տօնէլեան, Գործնական քերականութիւն արդի աշխարհաբարի, Կ. Պոլիս, 1897 (գրական կեղծանունը՝ Սիպիլ, վերոնշյալ աշխատությունը բազմիցս հրատարակվել է նաև վերջինիս ամուսնու՝ Հրանտ Ասատուրի աշխատակցությամբ):

¹⁰ Ն. Մելիք-Թանգեան, Աշխարհաբարի քերականութիւնը, Նոր Զուղա, 1900:

¹¹ Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, Երկասիրութիւն երից վարդապետաց՝ Բ. Գաբրիել Աւետի-բեան, Բ. Խաչատուր Սիւմէլեան, Բ. Մկրտիչ Աւգերեան, Բ. 1, Ա-Կ, Վենետիկ, 1836 և Բ. 2, Հ-Ֆ, Վենետիկ, 1937:

¹² Համառոտ բառարան ի պէտս նորավարժից, Վենետիկ, 1859: Վերջինս գրաբար-աշխարհաբար բառարան է՝ միտված հասկանալի դարձնելու գրաբարով գրականությունը արդեն իսկ ժողովրդի մեջ լայն կիրառություն ստացած աշխարհիկ լեզվի՝ աշխարհաբարի օգնութեամբ:

¹³ Գ. Փէշարմալեան, Բառգիրք հայկազեան լեզուի, Բ. 1, Ա-Կ, Կոստանդնուպոլիս, 1844 և Բ. 2, Հ-Ֆ, Կոստանդնուպոլիս, 1846: Հայտնի է, որ այս աշխատությունը հեղինակը գրել է 1826 թվականից առաջ, սակայն չի ավարտել, այն լրացրել են նրա աշակերտները:

¹⁴ Տե՛ս Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Բ. Մկրտիչ Աւգերեան, Վենետիկ, 1846: Պետք է նշել, որ, աշակերտելով Մ. Ավգերյանին՝ Գ. Այվազյանը նույնպես ամուսան չի մնացել այս և «Հայկազեան» բառարանների կազմման աշխատանքներում: Բառարանը 1865 թ.-ին Վենետիկում վերահրատարակվել է Գրիգոր ձեյալյանի կողմից՝ 5000 բառահոգվածի հավելմամբ, տե՛ս և հմմտ.՝ Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Գ. ձեյալեան, Վենետիկ, 1865:

¹⁵ Եղ. Հիւրմիզեան, Բառգիրք յաշխարհաբառէ ի գրաբառ յաւելուածովք ոճոյ եւ դարձուածովք նախնեաց ի պէտս դպրոցաց, Վենետիկ, 1869:

ավանդված հին մատենագրությունը հասանելի դարձնել ժողովրդին, որի խոսակցական լեզուն չհղկված աշխարհաբարն էր, ըստ այդմ էլ, բառահոգվածները հիմնականում կազմվում էին **գրաբար-աշխարհաբար հաջորդականությամբ**: Սույն ձեռագրում աշխարհաբարը, որը պետք է հղկվեր և դառնար գրական լեզու, բացատրվում է հենց նույն աշխարհիկ լեզվով՝ **աշխարհաբար-աշխարհիկ լեզու կաղապարով**: Գ. Այվազյանի խնդիրն էր հեղինակներին ուղղորդել ընտրելու այն բառապաշարը, որն օգտագործելով՝ նրանք կարող էին և՛ հասկանալի լինել ժողովրդին, և՛ չշեղվել հայերենի զարգացման ճիշտ ուղուց:

Գ. Այվազյանի «Բառագննութիւն աշխարհիկ լեզուի» ՄՄ 2878 ձեռագիրը 79 թերթաքանակով և 33×22 մեծությամբ գործ է (շղագիր)¹⁶ գրված 1869 թ., Թեոդոսիայում, Սարգիս էլիկյուզեյանի¹⁷ հորգորով: Զեռագրի ընդարձակ առաջաբանում Գ. Այվազյանը մանրամասն նշում է բոլոր խնդիրներն ու իր մտահոգությունները՝ կապված հայերենի հետագա զարգացման, գրաբար-աշխարհաբար հակամարտության հետ, նաև թվարկում է դժվարությունները, որոնք անխուսափելի կլինեն, եթե նախապատվությունը տրվի աշխարհաբարին՝ որպես հայերենի զարգացման հիմնական ուղու: Այսպես, աշխարհաբարն աստիճանաբար դառնալով ուսումնասեր հասարակության մեծ մասի համար միանգամայն ընդունելի և մշակման ենթակա լեզու, այնուամենայնիվ, ուներ որոշակի թույլ կողմեր: Զուգահեռ ներկայացվում է նաև մյուս հատվածի մտահոգությունը. «...ոմանք կասկածոտ աչքով սկսան վախնալ, որ մի գուցէ սորա մշակութիւնը վնաս բերէ մեր հին նախնեաց պատուական լեզուին, այսինքն՝ գրաբառին, և կամաց կամաց այս դուստրը, այն վսեմ և գեղեցիկ մօրը կենդանութեան ժամանակին՝ նորա տեղը բռնէ»¹⁸: Անցած մի քանի տասնամյակը ցույց է տալիս աշխարհաբարի առավելու-

¹⁶ Զեռագրի ընդարձակ նկարագրությունը տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Թ., խմբագրութեամբ Գ. Տէր-Վարդանեանի, Երևան, 2017, էջ 1063-1068: Մենք փորձեցինք պարզել նաև ձեռագրի անցած ուղին, սակայն ունենք կցկտոր տեղեկություններ. հայտնի է միայն, որ վերջինս Մատենադարան է տեղափոխվել էջմիածնի ձեռագրերի Գևորգյան հավաքածուի կազմում, իսկ ինչ վերաբերում է վերոնշյալ հավաքածուի գոյացման աղբյուրներին, մենք այն գտանք «Նախկին պատկանելությունը անորոշ» ձեռագրերի (թվով 448) շարքում. տե՛ս *Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի*, հ. Ա., կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաբյան, ներածությունը՝ Օ. Եգանյանի, խմբագրությամբ՝ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի, Երևան, 1965, էջ 71:

¹⁷ Այդ անձի (Սարգիս էլիկյուզեյան) մասին շատ տեղեկություններ մեզ չհաջողվեց գտնել. «Մատենաց աղանի» հանդեսի (որ կրկին Գ. Այվազյանի հիմնադրածն էր) 1861 թվականի Թ., ԺԱ., ԺԳ. և ԻԳ. համարներում նա հիշատակվում է բաժանորդների ցուցակում (Կուստանդնուպոլսեցիների շարքում) և, հնարավոր է, եղել է ձեռագրի մեկեմասը:

¹⁸ ՄՄ 2878, էջ 2ա, այսուհետ ձեռագրի էջերը կհղենք շարադրամբ մեջ, փակագծված:

թյունը՝ ժողովրդին և ուսումնասեր մանուկներին հասանելի լինելու գործում, և նույնիսկ վերոնշյալ մտավարկության հայտնողները խոստովանեցին, որ «աշխարհաբառին ծաղկելուն օգուտները անհամեմատ առաելութեամբ մեծ են՝ քան թէ անկից յառաջացած կամ յառաջանալու վնասները» (Չա): Թողնելով այս իրարամերժ կարծիքները «հին հայկաբանութեան ջատագով բանասիրաց» և «ազգային կրթութեան աշխատող և ցանկացող նոր գրագիտաց» դատին՝ Գ. Այվազյանը նշում է. «ամէն մարդ ալ աղէկ հասկըցած է այժմ, որ յիրաւի տղայոց բան սովրեցընելու և ռամիկ ժողովրդոց մէջ կրօնական եւ արտաքին տեղեկութիւններ տարածելու համար անպատճառ հարկաւոր էր սովորական՝ ողջ և դիրիմաց լեզուով մը խօսիլ նոցա հետ, և ոչ այնպիսի լեզուով, որ գործածութենէ դուրս մնացած է ամէն տեղ, և իրաւամբ ասուեր է գրոց լեզու, գրոց բարբառ, գրաբառ, գրաւոր լեզու, նման Յունաց հելլենական լեզուին, Հռովմայեցի ազգաց լատիներենին, Ռուսաց սլաւեան կամ եկեղեցական լեզուին, և այլն» (Չա, ընդգծումները այստեղ և այլուր հեղինակինն են):

Այնուամենայնիվ, աշխարհաբարին նախապատվութիւն տալու հարցը, ըստ Գ. Այվազյանի, դեռևս խնդրի վերջնական լուծում չէ, քանի որ առաջ են գալիս որոշ խոչընդոտներ: Մեկն այն է, որ աշխարհաբարը գրաբարի նման միատեսակ չէ. գրեթե ամեն երկիր, կամ գոնե «Հայաստանի ամէն մէկ նահանգը» իր բնորոշ բարբառն ունի, որոնք շատ հաճախ անընկալելի են նույնիսկ միմյանց համար: Գ. Այվազյանը մտահոգութիւն է հայտնում, թե առկա երեսունից ավելի բարբառներից որի՞ն է պետք նախապատվութիւն տալ, քանի որ յուրաքանչյուր բարբառ ունի իրեն բնորոշ գեղեցկութիւնն ու կատարելութիւնը, և յուրաքանչյուր բարբառակիրի համար բնորոշ է «իւր մայրական և տեղական բարբառը սիրել և ուրիշներէն վեր դնել» (Չբ): Կեզվաբանին բնորոշ նուրբ հոտառութեամբ նա համոզիչ կերպով փաստարկում է, որ պետք է հաշվի առնել նախընտրելի բարբառի երկու կարևոր հատկութիւն: Առաջին՝ որքանո՞վ է մոտ տվյալ բարբառը գրաբարին՝ ոչ միայն բառապաշարի, այլ նաև բառակազմութեան և շարադասութեան տեսանկյունից, և երկրորդ՝ պետք է նախապատվութիւնը տալ այն բարբառին կամ դեռևս կազմավորման փուլում գտնվող այն աշխարհաբարին, որով խոսողները մեծամասնութիւն են կազմում մյուսների համեմատ: Ճիշտ է, այդ երկու առանձնահատկութիւնները միաժամանակ ունեցող աշխարհաբար¹⁹ դեռևս չկա, սակայն, ըստ

¹⁹ Շատ հաճախ Գ. Այվազյանը «աշխարհաբար» ասելով նկատի ունի ոչ թե բարբառային տարրեր ներառող մէկ լեզու (այսպէս օր. ԺԹ. դարի նկատմամբ աշխարհաբարը), այլ

հեղինակի՝ արդեն իսկ ուրվագծվում են այն հիմնական բարբառները, որոնք հետագայում դիմացան ժամանակի փորձությունը՝ դառնալով արևելահայերենի և արևմտահայերենի կարևոր հենք-բարբառները. «Ճշմարիտ է, որ եթէ վերիվերոյ նայիմք, այս երկու յատկութիւններն ալ հաւասարապէս ու լիովին ունեցող աշխարհաբառ մը չկայ դեռ մեր ազգին մէջ. բայց աւելի ուշադրութեամբ դիտողը կտեսնէ, որ երկու մայր բարբառներ ունիմք՝ ուրիշ մանր տեղական կամ գաւառական բարբառներէն շատ աւելի իրաւունք ունեցող մրցելու. և սոքա են **Արարատեանը՝ Արևելեան բարբառներուն մէջ, և Պօլսականը՝ Արևմտեաններուն մէջ**» (Չբ):

Հետաքրքիր է, որ այս երկուսից Գ. Այվազյանը նախապատվությունը տալիս է Պոլսի բարբառին, նշելով, որ շնայած Արարատյան բարբառն ավելի մոտ է մեր մայր լեզվին՝ գրաբարին, այնուամենայնիվ, Պոլսի բարբառով խոսողները ավելի մեծ թիվ են կազմում, ըստ այդմ էլ՝ վերջինս պետք է դառնա աշխարհաբարի մշակման հենքը: Ըստ նրա՝ Պոլսի բարբառը պետք է հղկվեր, աստիճանաբար շտկեր իր թերությունները՝ օգտվելով հիմնականում գրաբարից, բարբառներից անհրաժեշտ բառեր և կապակցություններ ևս որդեգրելով. «Եւ ահա այն ժամանակը կարելի է յուսալ, որ ունենամք հասարակաց հաճոյական աշխարհաբառ՝ պարզ և բաւական զարդարուն լեզու» (էջ 2բ): Հեղինակը բազմաթիվ մեջբերումներ է անում նաև Ա. Այտընյանի «Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի» աշխատությունից՝ բարձր գնահատելով վերջինիս ներդրումը աշխարհաբարի զարգացման գործում²⁰:

Գ. Այվազյանը մտավախություն է հայտնում՝ արդյո՞ք ժամանակ անց արդեն ձևավորված և կանոնավոր լեզու դարձած աշխարհաբարը չի նսեմացնի գրաբարի հարգն ու գործածությունը: Գրաբարի առաջացրած դժուարությունները փաստելիս, նա, սակայն, անհրաժեշտ է համարում աշխարհաբարի մշակումն ու տարածումը՝ նշելով, որ օրհասական է վերջինիս կանոնավորելու հարցը՝ թեկուզև որոշ թերություններով: Լեզվաբանին բնորոշ հմտությամբ նա հասկանում է, որ լեզուն կենդանի օրգանիզմ լինելով՝ չի կարող միշտ տեղավորվել բոլոր այն կաղապարների մէջ, որ առաջարկում են այս կամ այն քերականները, և հնարավոր է, որ սովյալ ժամանակին ճիշտ թվացող որոշ քերականական ձևեր կամ բառապաշարի որոշակի միավորներ չդիմանան ժամանակի փորձությանը և դուրս մղվեն կանո-

առանձին բարբառների վերջնական դրույթունը (յուրաքանչյուր բարբառի ժժ. դարում առկա վիճակը):

²⁰ Ձեռագրի ստորին լուսանցներում բազմաթիվ ծանոթագրություններ և մեջբերումներ կան Ա. Այտընյանի վերոնշյալ աշխատությունից, տես ՍՄ 2878, 2բ, 3ա, 3բ և այլն:

նավոր լեզվի գործառույթից, ուստի չի բացառում թեկուզև իր առաջարկած տարբերակների ոչ ճշգրիտ լինելը: Այս ամենին զուգահեռ՝ Գ. Այվազյանը նշում է, որ չպետք է որդեգրել նաև հակառակ երևույթը՝ թողնել լեզվի զարգացումը միայն ժամանակին, որի արդյունքում «լեզուի մը անկարգ և անկանոն ընթացքը մեծամեծ վնասներ կրնայ ունենալ, որոց առաջին և գլխաւորն է անսանձ վայրենութիւն կամ վայրենի ազատութիւն» (3բ):

Հաշվի առնելով վերը նշված բոլոր խնդիրները՝ առկա աշխարհաբարը «առավել ճկուն և զարդարուն» լեզու դարձնելու համար Գ. Այվազյանն առաջարկում է ստեղծել «դիւրիմաց» քերականություններ և «կոկիկ» բառարաններ, ուստի և որոշում է գրել այս աշխատությունը: Գ. Այվազյանը որպես աշխարհաբարին նվիրված համակողմանի գործ՝ կրկին վկայակոչում է Ա. Այտընյանի «Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի» աշխատությունը՝ որպես առավել ուսումնական ոճով և աշխարհաբարի ընդարձակ քննությամբ գիրք. «Տարակոյս չկայ, որ այս գրուածքը աշխարհաբարի վրայ մինչև ցայժմ ելած գրքերուն ամէնէն աւելի ճոխն ու ճշգրտախօսը կրնայ համարուիլ, և մեր լեզուին վրայ ընդհանուր և մասնաւոր շատ գիտելիք ու տեղեկութիւններ կբովանդակէ» (4ա), և այն գերադասելով օրեցօր հրատարակվող աշխարհաբար աշխատություններից՝ Գ. Այվազյանը հաջորդ մի քանի էջ հատկացնում է այդ աշխատության մանրամասն քննությանը²¹:

²¹ Գ. Այվազյանը, սակայն, իր վերլուծություններում տեղ-տեղ վրիպում է, նշելով իր կարծիքով մի քանի թերություն այս աշխատության լեզվի հետ կապված: Ըստ նրա Ա. Այտընյանի որդեգրած ոճը առավել եվրոպական կամ գերմանական է և դժվարընկալելի է ոչ միայն գրաբար իմացողների, այլև աշխարհաբարին չափավոր տիրապետողների համար: Նա քյուրիմացաբար մտավախություն է հայտնում, որ ընթերցողը «փոխանակ մաքուր բնական և պարզ աշխարհաբար հայերէն մը սովորելու՝ կրնայ գիտցածն ալ մոռնալ, և նորելուկ ֆուսկարանություն մը սովորի՝ հայկական մտքէ բոլորովին օտար և հեռու գաղափարներով (ՄՄ 2878, 4ա)», և բերում է բազմաթիվ մեջբերումներ վերոնշյալ աշխատությունից՝ գրի համապատասխան էջերի հղումներով՝ անհասկանալի համարելով բառապաշարի որոշակի շեղանք և ֆերականական կաղապարներ, որոնց մեծ մասը, սակայն, այսօր մեր հայերենի բաղկացուցիչ և անփակտելի մասն են: Նա Ա. Այտընյանի այս աշխատությունը համարում է բավական խրթին, որն, իր կարծիքով, կխոչընդոտի աշխարհաբարի արագ տարածմանը՝ նշելով, որ լեզվի ընկալելի լինելու առումով այն հավասարվում է Գ. Նարեկացու «Մատանն ողբերգութեան» պոեմի (Նարեկի դեպքում՝ նույնիսկ անցնում) և Դավիթ Անհաղթի «Պերիարմենիաս» աշխատության լեզվին: Աշխարհաբարին վերաբերող բազմաթիվ կարևոր դիտարկումներ ընդգրկող այսպիսի «խրթնախօս» ֆերականությունը Գ. Այվազյանը ներկայացնում է հետևյալ համեմատությամբ՝ «...Այտընեան Հօր ֆերականութիւնը կարելի է համեմատել այնպիսի հարուստ մթերանոցի՝ յորում հին և նոր ապրանքները բազմաթիւ, բայց այնչափ խառն ի խառն կուտակութեամբ դիզուած են, որ նոյն իսկ հեղինակը կամ տէրը դժուարաւ պիտի գտնէ մէջը իւր ուզածը» և որ թող ընթերցողը փորձի

Գ. Այվազյանը հանգամանալի բացատրում է նաև վերնագրի ընտրությունը՝ «Բառազննութիւն...», քանի որ իր նպատակը եղել է ոչ թե աշխարհաբարի ամբողջ բառապաշարի վերլուծությունն ու քննությունը, այլ միմիայն այն բառերի ու մասնիկների ծագումը, ուղղագրությունը և այլն, որոնք առավել գործածական են Պոլսի բարբառում: Հիշատակելով իր ժամանակակից որոշ բառարաններ²² նա նշում է, որ իր նպատակը ոչ թե աշխարհաբար լեզվի ամբողջական բառարան կազմելն է, ինչպես արել են վերոնշյալ բառարանների հեղինակները, այլ ընդամենն առավել գործածական բառերի քննություն կատարելը, իսկ վերջիններին բառարանների առիթով էլ նկատում, որ այդ աշխատությունները նույնպես չեն ընդգրկում աշխարհաբարի բառապաշարի ամբողջական շերտը և հեռու են լիակատար բառարաններ կոչվելուց²³:

Ինչ վերաբերում է ձեռագրի մեջ ընդգրկված բառապաշարային շերտի աղբյուրներին, Գ. Այվազյանն ընդարձակ մեջբերումներով վկայակոչում է Ա. Այտընյանի աշխատությունը՝ այդ գործի առիթով անուղղակիորեն անելով բազմաթիվ վերլուծություններ: Նաև որպես աշխարհաբարի բառապաշարի օժանդակ հենք՝ թվարկում է երեք լրացուցիչ աղբյուր՝ 1. Կոստանդնուպոլսում հրատարակվող լրագրերը, այնտեղ և Զմյուռնիայում տպված նորանոր թարգմանությունները, 2. Վիեննայի և Վենետիկի Մխիթարյան վանքերում տպված աշխարհաբար գրքերն ու լրագրերը, 3. Մոսկվայում և Թիֆլիսում հրատարակված աշխատությունները: Դրանցից կարելի էր բազմաթիվ աշխարհաբար բառեր, կաղապարներ և վկայություններ քաղել, բայց այդ ժամանակատար և տքնաջան գործը թողնելով հետա-

գտնել «անոր մէջ զատ և որոշ կերպով՝ զբաբառ լեզուին և աշխարհաբարոին կանոնները, աշխարհաբարոին ալ ընտելին ու խտտելին (էջ 5բ)»:

²² Մատնանշում է Մխիթար արքայի աշակերտ Հ. Մկրտիչ Անանյանի «Բառգիրք յաշխարհաբառէ ի գրաբառն» առանց հեղինակի անվան տպված բառարանը (Վենետիկ, 1769), որն ավելի հարստացված հրատարակել են 1869 թ. Վենետիկի Մխիթարյան հայրերը. էջմիածնի ժամանակի մատենադարանապետ Ս. Ամատունին (ձեռագրում բազմաթիվ սրբագրումներ և հավելումներ կան վերջինիս ձեռով) 1869 թ. վերահրատարակված այդ բառարանը իրավացիորեն վերագրում է էդ. Հյուսվուզյանին (ՄՄ 2878, 5բ). տե՛ս Եդ. Հիւսվիւզեան, Բառգիրք յաշխարհաբառէ ի գրաբառ յաւելուածովք ոճոյ եւ դարձուածովք նախնեաց ի պէտս դպրոցաց, Վենետիկ, 1869:

²³ Ըստ Գ. Այվազյանի՝ ամբողջական կամ «լիակատար» բառարանը պետք է ներառի. 1. Գրաբարի բառապաշարի գրեթե ամբողջ շերտը, 2. Աշխարհաբարի տարբերակների մեջ լայնորեն կիրառություն ունեցող բառերը, 3. «Գավառական» բարբառների գունե հիմնական բառապաշարը, 4. Փոխառությունները (մասնավորապես նշում է տանկերենից, պարսկերենից և եվրոպական լեզուներից մեր բառապաշարն անցած բառերը): Գ. Այվազյանը հույս է հայտնում, որ հետագայում այդպիսի գործ ձեռնարկողը օգտվի նաև իր այս աշխատությունից և «դիւրացընէ աշխարհաբառ լեզուի օրինատար փերականութիւն մը շինողին աշխատութիւնը» (ՄՄ 2878, 6ա):

գա սերունդներին՝ նա սահմանափակվում է իր ժամանակաշրջանի՝ հիմնականում բանավոր խոսքում առավել գործածական բառերի քննությունը: Հեղինակը նշում է, որ իր նպատակը լիակատար բառարան կազմելը չէ, այլ ժամանակակից հեղինակներին ուղղորդելն է՝ ընտրելու աշխարհաբարի բառապաշարի նախընտրելի տարբերակները:

Ի տարբերություն այլ բառարանների, որտեղ հիմնականում բառահոգվածը կառուցված է բառ-բառ կաղապարով՝ Գ. Այվազյանի այս աշխատության մեջ գործում է միանգամայն այլ կաղապար՝ բառ-բառազննություն: Այստեղ բառահոգվածի բացատրելիք բառի համար նախ տրվում է համապատասխան հոմանիշ հայերեն բառը կամ աշխարհիկ լեզվով բառիմաստի նկարագրությունը, այնուհետև տաճկերեն (թուրքերեն) տարբերակները (շատ հաճախ՝ նաև եվրոպական լեզուների համարժեքները)²⁴, անհրաժեշտության դեպքում արվում է նաև բառակազմական-ստուգաբանական վերլուծություն՝ հաճախ մատնանշելով նաև այդ բառը կիրառող աշխարհագրական տեղանքը: Գ. Այվազյանն արտահայտում է նաև իր կարծիքն այս կամ այն բառին նախապատվություն տալու (կամ չտալու) հետ կապված՝ որպես կանոնավոր աշխարհաբարին անհրաժեշտ բառապաշարային միավոր: Բերենք մի քանի բառահոգվածի նմուշ՝

1. «Ազգայնութիւն – Վերինին (նկատի ունի նախորդ բառահոգվածը) նման ֆոնակաբանություն, գաղղ.՝ *nationalité*, որ է Ազգային յատկություն, շատ շատ՝ Ազգություն (9բ)»:
2. «Աղա – Պարոն բառին պէս այս ևս օտարազգի բառ է. թուրքաց լեզուէն առնուած, յորում առաջին նշանակութիւնն է մեծ եղբայր, և երկրորդը՝ տէր, իշխան: Յանկայի էր ուրիշ նման բառերու հետ զսա ևս հանել արքսորել մեր աշխարհաբառէն, տեղը ազգային տէր բառը գործածելով, բայց կերևի, որ դեռ կանուխ է, մանաւանդ անոր համար, որ տէրը եկեղեցականաց սեպհական տիտղոս համարուած է (11ա)»:
3. «Ամէն – Շատ տեղ այս բառը կհնչուի ամմէն, որ սխալ է: Ոմանք կգրեն Ամեն, իբրև Ամենայն բառէն կրճատուած, բայց յայտնի է, որ գրոց ամէն բառն է սա անփոփոխ, ուստի և էով գրելի՝ քան թէ եչով (11բ)»:
4. «Գրող, գրող²⁵ – Մահ: Սովորաբար անէծքի ձևերու մէջ կբանի: Շատը կրօղ կհնչեն և կհասկընան իբր Առնող-տանող (19ա)»:

²⁴ 15-ից ավելի լեզուների իմացությունը թույլ է տալիս Գ. Այվազյանին հեշտությամբ կատարել նաև այլ լեզուների հետ համեմատական ֆննություն:

²⁵ «Նրևակայական չար ոգի կամ չար հրեշտակ». տե՛ս Ստ. Մալխասյան, Հայերէն բացատրական բառարան, հ. 1, Երևան, 1944, էջ 478:

5. «**Ասել** – Փոքր Ասիոյ աշխարհաբառին մէջ եղած է **ըսել, ըսի, ըսաւ, ըսէ, ըսէք, և** այլն, բայց ընդհանրապէս ամէն Հայաստանցիք, ինչպէս նաև Լեհաստանի և Խորիմու հայերը կ'ընչեն հին ու բնական ձևովը՝ **ասել, ասի կամ ասցի կամ ասացի, ասաւ կամ ասաց, ասա, ասէք կամ ասացէք, և** այլն: Թիֆլիզեցիք **կօսիմ, կօսիս, կօսէ** ձևը կբանեցընեն, որ նոյնպէս **կասեմ, կասես, կասէ** ձևէն առնուած է (15ա)»:
6. «**Բարև** – Գրոց **ողջոյն** բառին տեղը բռնած է շատ ժամանակէ ի վեր, տճ. **սէլամ**, և ձևացած է նոյնպէս գրոց լեզուին **բարեաւ բառէն**, որոյ մէկ կերպն ալ եղած է աշխարհաբառին մէջ **բարով** (16բ)»:
7. «**Գամ** – Գեղեցիկ աշխարհաբառ է իբրև բևեռ. տճ.՝ **էնքսէր**, Հայաստանի մէջ տեղ տեղ **Մերս կասեն**, որ Պարսից ու Թուրքաց **միխ, մըխ** բառն է (18ա)»:
8. «**Գայլ** – Եւ ոչ **գալ կամ գէլ, կամ գիլ** (18ա)»:
9. «**Ինչու, ընչու** – **Ինչու համար կամ ինչի համար** խօսքին կարճառօտն է, վաղուց աշխարհաբառին մէջ գործածուած: Հայաստանի մէջ աւելի կբանեցընեն **ինչի՛ կամ ընչի՛**. և տեղ-տեղ այս այս անճոռնի հարցականը՝ **խի՛**, որ իբր թէ գրաբառին **Ջի՛** խօսքն է (32բ)»:
10. «**Խօստում, խօստանալ** – Տգիտական սխալ գրուածք է փոխանակ գրելու **խոստում, խոստանալ**, թէպէտև արմատը **խօսք** բառը կերևի, բայց իրօք բուն արմատն է **խոստ**, որոյ նման է և Պարսից **խիւսթ և խուսթու** բառը (41ա)»:
11. «**Մթնշաղ** – նոյնպէս ընտիր բառ՝ իբրև Աղօտ, կէս մութ կէս լոյս (54բ)»:
- Հատկանշական է նաև այն, որ մինչ այբուբենի յուրաքանչյուր տառով սկսվող բառերի քննությունը՝ Գ. Այվազյանը բավականին մանրամասն ներկայացնում է նաև նույն տառը՝ առանձին: Գրեթե յուրաքանչյուր տառ ներկայացված է երկու մասով. նախ՝ նրա հնչունաբանական վերլուծությունը և գործածության հաճախականությունը հայերենում, ապա՝ նոր միայն շարադրված է այդ տառով սկսվող բառերի քննությունը: Որոշ բառահոդվածներ առանձնանում են նաև Արարատյան և Պոլսի բարբառների համեմատական քննությամբ. օրինակ, Ա տառի հնչունաբանական վերլուծությունից հետո հեղինակը մատնանշում է նրա գործածության բարձր հաճախականությունը: Նա փաստում է, որ Արարատյան բարբառում այն երբեմն կիրառվում է նույնիսկ է օժանդակ բայի փոխարեն՝ «...ոմանց աշխարհաբառը չափազանց խճողուած է այս ա տառիս սաստիկ բաց արտասանութեամբը. այնպէս որ ոչ միայն գրեթէ ամէն բառի մէջ անկորուստ կպահեն... այլև երբեմն է տառին տեղը ա կբանեցընեն, որով բոլոր նոցա արտաբերու-

թիւնը կթանձրանայ ու կտգեղանայ» (9ա)՝ որպէս օրինակ բերելով «Հյուսիսաբնակ հայոց» (այսինքն՝ Վրաստանի, Ղարաբաղի, Երևանի, Հին Ջուղայի և այլն) արտասանութիւնը, ովքեր «լաւ է, դժուար է, խելօք է» ասելու փոխարեն լայնորեն կիրառում են «լաւ ա, դժուար ա, խելօք ա, գնում ա, ասում ա» ոչ նախընտրելի ձևերը:

Հետաքրքիր է **աշխարհաբար, գրաբար** եզրերի վերաբերմամբ Գ. Այվազյանի դիրքորոշումը. նա ներկայացնում է **աշխարհաբառ/աշխարհաբար, գրաբառ/գրաբար** տարբերակները և նախապատվութիւնը տալիս ու-ով տարբերակներին՝ միանալով այն կարծիքին, որ դրանք առաջացել են **աշխարհ և բարբառ** կամ **գիրք և բարբառ** ձևերից, իսկ ու-ով ձևերը՝ իբրև մակբայ համարում «ուսմկօրէնին» ոչ հարիր և բնական (14ա):

Թուրք/Թուրքաստան բառերի առիթով Գ. Այվազյանն ընդարձակ բառահոգեւածով ներկայացնում է դրանց տարածված լինելը: Նա նշում է, որ դրանցով եվրոպացիները, ինչպէս նաև մենք, անվանում ենք օսմանցիներին կամ ընդհանրապէս բոլոր մահմեդականներին, և ցույց է տալիս, որ հաճախ այդ անվանումը տարածվում է նաև պարսիկների, արաբների, քրդերի, թաթարների և մահմեդական այլ ցեղերի վրա: «Ֆռանկաբանութիւն» և ոչ ախորժելի է համարում ֆրանսերենից փոխառված «Թիւրքիա» տարբերակը, որն, ըստ նրա, ֆրանսերենի խեղաթյուրված տարբերակն է՝ «...եթէ գաղղիարենի ճիշտ նմանցընել ուզենէր, պէտք էր ասել **Թիւրքի**, եթէ իտալերենին, **Թուրքիա՛**. եթէ գերմաներենին, **Թիրքայ**. եթէ անգղիարենին, **Թը՛րքի**. եթէ ռուսերենին, **Թո՛ւրցիա**, և այլն», և նախապատվութիւնը տալիս է հին տարբերակներին՝ **Թուրք և Թուրքաստան, Տաճիկ և Տաճկաստան** կամ **Օսմացի և Օսմանեան երկիր** կամ տէրութիւն (30բ):

Գ. Այվազյանը **ժանիք** բառը կրկին աշխարհաբարին հարիր՝ «ընտիր բառ» է բնորոշում, միայն թե «խիստ, խոժոռ նայվածքի» իմաստով, տաճկերենի՝ «չէ՛հրէ, չըրայ, սուրաթ» բառերին համարժեք, մինչդեռ այժմ **ժանիք** ասելով հասկանում ենք կա՛մ մարդու ատամ, կա՛մ կենդանիների բերանից դուրս ցցված՝ հարձակման և պաշտպանութիւն համար ծառայող խոշոր սրածայր ատամ, և միայն գավառական բառարաններում է պահպանվել այս բառի՝ խոժոռ, մռայլ դեմք իմաստը (31ա)²⁶:

Գ. Այվազյանը նշում է գույների և որոշ այլ ածականների գերադրական աստիճանն արտահայտող գրեթե բոլոր տարբերակները՝ տաճկերեն գուգահեռներով,

²⁶ Հր. Աճառյան, Հայերեն գավառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 391:

այսպէս.

կաս-կարմիր, տճ.՝ գըփ-գըրմըզը

կաս-կապուտ, տճ.՝ մօս-մօր

դեփ-դեղին, տճ.՝ սափ-սարը

նիփ-նեմակ, տճ.՝ պէմ-պէյազ

կափ-կանաչ, տճ.՝ եէմ-եէշիլ

սիփ-սև, տճ.՝ սիմ-սիյահ, և այլն (44ա):

Համար բառի փոխարեն Գ. Այվազյանը հորդորում է կիրառել **վասն** գրաբար տարբերակը, խոտելի համարելով թիֆլիզեցիների **համա**-ն և Հայաստանում կիրառվող **հմա**, **հմար** ձևերը (47բ): Ոչ նախընտրելի ձևերի շարքին է դասում նաև պոլսեցիների և Հայաստանի բնակիչների կիրառած **հայեվար** բառը՝ առաջարկելով գործածել **հայերէն** տարբերակը: Նա նշում է վերջինիս կապը վարք բառի հետ (հայոց վարքով) և բերում համաբանութեամբ առաջացած այլ տարբերակները՝ **տանկեվար**, **ռուսեվար**, **գաղղիէվար**՝ փոխարենն առաջարկելով գործածել **-արէն** և **-երէն** վերջածանցով կազմությունները՝ **հայերէն**, **գաղղիարէն**, **յունարէն**, **լատիներէն**, **եբրայեցեբէն** և այլն (48ա):

Հետաքրքիր է ժամանակակից հայերենում լայնորեն կիրառվող **հանդիսութիւն** տարբերակի՝ Գ. Այվազյանի մեկնաբանությունը. համարելով «տգեղ բառ»՝ նա ավելորդ է համարում **-ութիւն** ածանցը՝ առաջարկելով գործածել **հանդէս** բառը (48ա):

Գ. Այվազյանը **հանելուկ** բառի ուղղագրության առիթով ուշագրավ նկատառում է անում. քանի որ, ըստ նրա, դա հանելիք, նշանակությունը գտնելիք խոսքն է՝ առաջարկում է **հանելուք** ձևը (48ա): Նա լայնորեն կիրառվող **համբայ** բառի փոխարեն հորդորում է գործածել **հանապարհ**՝ մայր բառը (տալիս է բառի ծագման ուղին՝ ճանապարհ > ճանպարհ > ճանփայ > ճամբայ), իսկ **ճամբել**, **ճամբորդ**, **ճամբորդութիւն** բառերի փոխարեն՝ **ճանապարհ դնել կամ ձգել**, **ճանապարհորդ**, **ճանապարհորդութիւն**. «և ի՞նչ վնաս» բառակապակցությամբ ավարտում բառահորվածը (52ա):

Մարդավար, **ֆաղափար** բառերի առիթով հեղինակը նշում է, որ դրանք միանգամայն ճիշտ տարբերակներ են և սխալ ձևեր է համարում **մարդավարի**, **ֆաղափարի** ձևերը (53բ), մինչդեռ վերջիններս են մեր բառապաշարի լիիրավ անդամներն այսօր:

Գ. Այվազյանը տալիս է **մղտեսի**, **մահտեսի** բառերի ստուգաբանությունը. մահտեսի բառի արմատը մահը չէ, ինչպէս տարածված է, այլ «արաբացուց գուտս բառէն է, որ է՝ Երուսաղէմ. անկից ածանց է՝ մուգատտէսի, իբր Երուսաղէ-

մացի. տճ.՝ հաճի. ուստի ի զուր է ոմանց ստուգաբանությունն որ իբր թէ մահ-տեսի, Քրիստոսի գերեզմանը տեսի») (55ա):

Գ. Այվազյանը նախընտրելի բառեր է համարում նաև **հրահրել** (51ա), **մրափ** (իբրև «նիրհել, քնել», 55բ), **չարֆաշ** (իբրև «ժուժկալ, նեղություն սովոր», 64ա), **քաղհան** (76բ), իսկ ոչ նախընտրելի՝ **ճանկապուռճ** («զանգակատուն») իմաստով, տճ.՝ «չանկ պուրճու», 52ա), **նիստ** (համարելով «անշնորհք թարգմանություն») իտալերեն *seduta* և ֆրանսերեն *séance* բառերից՝ առաջարկում է «գումարումն, հաւաքումն» տարբերակները. 57բ), **նկատմամբ** (համարելով «անպիտան և օտարախորթ թարգմանություն») ֆրանսերեն *par rapport à, relativement à* բառերից՝ առաջարկում է «այս խնդրոյս նկատմամբ» ասելու փոխարեն գործածել «այս խնդրոյս համար» կամ «այս մասին» տարբերակները. 57բ): **Պաշտօնապէս** (համարելով «անպէտ թարգմանություն») ֆրանսերեն *officiellement* բառից՝ առաջարկում է գործածել «պաշտօնական կերպով, ի պաշտօնէ» տարբերակները. 64բ): **Վերջապէս՝** հեղինակը նշում է, որ այս մակբայը չկա գրաբարում և նորահնար թարգմանություն է իտալերենի *finalmente* և ֆրանսերենի *enfin* բառերից, առաջարկում գրաբար բազմաթիվ նախընտրելի տարբերակներ՝ «ի վերջէ, ի վերջոյ, ի վախճան բանիցս, յաւարտ ամենայնի, հուսկ ուրեմն», սակայն հաշվի առնելով, որ բառն արդեն մտել է գործածության մեջ, հույս է հայտնում, որ գոնե այնքան շտաբաձվի, որքան օր.՝ ֆրանսերենի *enfin* և ռուսերենի **наконец** բառերը, որոնք «որ շատ անգամ շատզրուց մարդիկ աչք խաբելու համար կբանեցընեն՝ քան թէ իրենց շատախօսությունը վերջացընելու. վասն զի **վերջապէս** բառը երբեմն երբեմն կրկնելով՝ իրենց ձանձրալի խօսակցութեան թելը որքան որ կրնան կերկընցընեն». 71ա) և այլ բառեր:

Որոշ բառերի դեպքում էլ հեղինակը նշում է գրույթյան նախընտրելի տարբերակը՝ առաջարկելով գերծ մնալ տարածված սխալ տարբերակներից. այսպես՝ «**Յիսուն** - և ոչ **Յիսսուն, Խոցուն, Իսսուն**» (56ա), **շնորք** բառի առիթով նախընտրելի է համարում **շնորհք** ձևը՝ ի հակադրություն ոմանց, ովքեր իբր գրաբար բառերի «կարծեցեալ ծանրությունները» թեթևացնելու նպատակով կրճատում են որոշ տառեր (59բ), **ցորեկ** բառի փոխարեն՝ **ցերեկ** ձևը (74բ), **ֆաղբըցի** բառի փոխարեն՝ **ֆաղաֆացի** (76բ), **ֆեզի** դերանվան փոխարեն **ֆեզ** տարբերակը (77ա) և այլն:

Վենետիկ տեղանունը ստուգաբանելիս նշում է, որ այն հոլանդերենից կամ գերմաներենից է անցել տաճկերենին, որտեղից էլ հայերենին՝ **Վենետիկ**, կամ ինչպես իրենից հիսուն տարի առաջ տարածված ուղղագրությամբ՝ **Վենէտիկ**, բե-

րում այլ լեզուներում առկա տարբերակները. իտալերեն՝ **Վէնէջիա**, ֆրանսերեն (գաղղիերեն)՝ **Վրնիզ**, որտեղից էլ հիմնականում չափածոյում երբեմն կիրառվող **Վրնէժ** ձևը, իսկ **Վենէժ** տարբերակը համարում է միանգամայն սխալ ձև (70ա):

Անհիմն փոխառություններին անդրադառնալիս Գ. Այվազյանը հաճախ գործածում է ֆռանկաբանություն հասկացությունը՝ վերջում անդրադառնալով նաև այդ բառին. «**Ֆռանկաբանութիւն** – Բառազննութեանս վերջին բառ թող համարուի այս մեր հնարածը, որով կուզեմք հասկըցընել այն անհամ և անշնորհք աշխարհաբառի ոճն, որ մտած է մեր ազգին մէջ քանի մը գաղղիարէնէ, ևս և անգղիարէնէ թարգմանուած գրոց և լրագրաց ոճէն» (78բ):

Ինչպես տեսնում ենք, Գ. Այվազյանը, հավատարիմ մնալով իր սկզբունքին, կատարում է միայն իր ժամանակի գործող աշխարհաբար շերտի բառազննություն: Ջնայած նրա նպատակը ընթերցողին աշխարհաբարի ճիշտ բառընտրության հարցում ուղղորդելն է՝ այնուամենայնիվ, նա ներառել է այդ ընթացքում եղած բառապաշարի առավել կիրառվող գրեթե բոլոր բառերը, անկախ նրանից, թե տվյալ բառը որքանով է համապատասխան գրավոր աշխարհաբարի մեջ մտնելու և հետագայում նրա անքակտելի մաս կազմելու իր նախասիրությանը, և միայն վերլուծություններով է ընթերցողներին հորդորում նախապատվությունը տալ կամ խուսափել այս կամ այն բառի գործածությունից: Ուստի ՄՄ 2878 ձեռագիրը ներկայացնում է տվյալ ժամանակաշրջանի աշխարհաբարի բառապաշարի գործող շերտի գրեթե ամբողջական պատկերը (իհարկե՝ տարածքային սահմանափակմամբ): Մյուս կողմից, Գ. Այվազյանը բառերի միայն մի մասին է նախապատվություն տալիս՝ որպես զարգացող աշխարհաբարի նախընտրելի միավորների, իսկ մյուսներից, կրկին մանրամասն վերլուծություններով, բացատրելով դրանց ծագումը, այս կամ այն լեզվից անհիմն պատճենումը, հորդորում է խուսափել՝ առաջարկելով իր տարբերակները: Սրանց մի մասը, սակայն, հետագայում չդիմանալով ժամանակի փորձությանը, դուրս մղվեցին բառապաշարից և, ընդհակառակը, Գ. Այվազյանի արհեստական և ոչ նախընտրելի համարած բազմաթիվ բառեր լայն կիրառություն ստացան ոչ միայն իր ժամանակի գործող աշխարհաբար բառապաշարում, այլև արդի արևելահայերենում և արևմտահայերենում:

Որոշ ստուգաբանական վերլուծություններով, բառերի՝ այս կամ այն լեզվում համարժեքների մատնանշումով՝ Գ. Այվազյանի աշխատանքը հավասարվում է գրեթե համակողմանի քննության: Բազմաթիվ համեմատությունները գրաբարի և

իր ժամանակակից բարբառների հետ հարստացնում են բառահոգվածները, ինչպես նաև օգնում ընթերցողին բառընտրության հարցում՝ ոչ թե ուղղակիորեն, որովհետև այդպես է ընդունված, այլ գիտակցաբար վերջինս կարող էր նախապատվությունը տալ հայերեն ընդունելի համարժեքին:

Ամփոփենք. Գ. Այվազյանի խնդրո առարկա աշխատությունը ժժ. դարի երկրորդ կեսի աշխարհաբարի, ինչպես նաև ուսյալ հայագետի լեզվական պատկերացումների և նախընտրությունների մի բացառիկ արտահայտություն է:

HASMIK IRITSYAN

**THE MANUSCRIPT “WORD-STUDY OF THE SECULAR LANGUAGE”
GABRIEL AYVAZYAN AS WORK ENHANCING THE SPREAD OF MODERN
ARMENIAN (ASHKHARHABAR)**

Keywords: Congregation of Mkhitarists, Bazmavep, manuscript, dictionary, Modern Armenian language, Old Armenian language.

G. Ayvazyan's handwritten work “Word-study of the secular Language” (Ms M 2878) gives an idea of his role in the spread of *ashkharhabar* (the New Armenian language) and is an interesting sample of dictionary. Having grounded the development of the New Armenian by theoretical provisions in his earlier articles, in the work in question the author attempts to put the New Armenian of his day into use. G. Ayvazyan offers authors with a sort of handbook for Armenian vocabulary, in order to make their works accessible for wide circles.

The manuscript contains Ayvazyan's interesting linguistic observations and characteristics, as well as his arguments in favour of giving preference to *Ashkharhabar*. Besides it provides information on a specific sample of the mid 19th century Armenian, which makes our knowledge of the Armenian vocabulary of that period more accurate.

Асмик Ирицян

**РУКОПИСЬ ГАБРИЭЛА АЙВАЗЯНА “АНАЛИЗ СЛОВ
СВЕТСКОГО ЯЗЫКА” КАК ТРУД, СПОСОБСТВУЮЩИЙ
РАСПРОСТРАНЕНИЮ АШХАРАБАРА**

Ключевые слова: Конгрегация Мхитаристов, “Базмавел”, рукопись, современный армянский, древнеармянский.

Рукописный труд Габриэла Айвазяна (Айвазовского) “Анализ слов светского языка” (рукопись № 2878 из собрания Матенадарана им. М. Маштоца) дает представление о роли Г. Айвазяна в распространении ашхарабара (новоармянского языка), являясь интересным образцом словаря. Обосновав в ранее опубликованных статьях развитие ашхарабара теоретическими положениями, в рассматриваемом труде автор пытается ввести новоармянский язык в обиход. Г. Айвазян предлагает авторам как бы руководство по лексике армянского языка, с целью сделать их тексты доступными широкой общественности.

Рукопись содержит интересные языковые наблюдения и характеристики Г. Айвазяна и аргументы в пользу предпочтения ашхарабару. Кроме того, она знакомит нас с конкретным образцом ашхарабара середины XIX века, уточняя наши представления о словарном запасе новоармянского языка этого периода.

ԵԶԻԻԱԿԱՆ ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԿԱՆԱՆՑ ԴԵՐԻ ՈՐՈՇ ԿՈՎԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐԶ

Բանալի բառեր՝ կին, իգական, եզդի, ավանդույթ, դեր, կրոն, ծիսակատարություն, բանահյուսություն:

Եզդիական կրոնական համակարգում կնոջ դերի, ներգրավվածության և գործառույթների հարցը որպես առանձին ուսումնասիրության առարկա չի դիտարկվել¹: Առանձին գիտնականներ անդրադարձել են որոշակի պատմական ժամանակահատվածում եզդիական համայնքում կանանց դերին կամ դա քննել են այլ հարցերի համատեքստում²: Եզդիական կրոնական համակարգում կանանց դերի որոշ առանձնահատկություններին նվիրված հոդվածը պատրաստելիս օգտագործել ենք տարբեր հետազոտողների, գրողների, ճանապարհորդների գործերում եզդի կանանց և նրանց գործառույթներին վերաբերող հիշատակումներն ու դրանք համադրել եզդիական հարուստ բանահյուսությունից քաղած նյութերի հետ:

¹ Եզդիների կրոնը ձևավորվել է XI–XIV դդ. Հյուսիսային Իրաֆի հյուսիսում գտնվող Լալիշ կոչվող կիրճում (Gelîyê Lalişê, բոց. «Լալիշի կիրճ»): Եզդիական համայնքը կազմավորվել է միջնադարյան հայտնի սուֆի Շեյխ Ադի բին Մուսաֆիրի (Եզդիները Շեյխ Ադիին անվանում են նաև Շեխադի կամ Շիխադի (տե՛ս Ա. Ավդալ, *Եզդի քրդերի հավատալիքները*, Երևան, 2006, էջ 20, 21, 27) գլխավորած աղավիհ սուֆիական եղբայրակցության հիմքի վրա: Կազմավորման վաղ փուլերում եզդիների կրոնը ազդվել է նաև Բրիտաննեոթյունից, իսլամից, տարածաշրջանի խորհրդապաշտական հոսանքներից, տեղական հավատալիքներից և ձևավորվել է որպես սինկրետիկ կրոնական ուսմունք (Ph. Kreyenbroek, *Yezidism: Its Background, Observances and Textual Tradition*, New York, 1995, pp. 3-6): Մանից հետո Շեյխ Ադին թաղվել է Լալիշում, և նրա գերեզմանը դարձել է եզդիների ամենակարևոր սրբավայրը և ուխտատեղին (Փ. Ամրյան, *Եզդիների կրոնական աշխարհայացքը*, Երևան, 2016, էջ 107-108):

² Տե՛ս T. Amryan, "Changing Image of Yezidi Women", *ԵՊՁ Գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոնի հոդվածների ժողովածու*, Երևան, 2017, էջ 14-27; Murat Gokhan Dalyan, Cabir Dogan, "An Overview of 19th Century Yezidi Women", *Asian Social Science*, Vol. 9, No. 7, *Published by Canadian Center of Science and Education*, 2013, pp. 114-123.

19-րդ դարի հեղինակ Ֆրեդերիկ Ֆորբսը, որն այցելել էր Հյուսիսային Իրաքի եզդիաբնակ շրջաններ, եզդի կանանց մասին գրել է. «[Եզդի] կանայք մահմեդական կանանց նման չեն, նրանք չեն ծածկում իրենց դեմքը, նրանք զբաղվում են իրենց կենցաղային հարցերով և շփվում տղամարդկանց հետ, ինչպես եվրոպական երկրներում»³:

Ամերիկացի հետազոտող Իսյա Ջոզեֆը, որը հետաքրքրվում էր եզդիների կրոնի սուրբ գրքերով⁴, եզդի կանանց մասին նշել է հետևյալը. «Նրանք աշխատում են տղամարդկանց պես, նրանք հող են մշակում, պահում անասուններ, պայքարում են թշնամու դեմ, քաջ են և շատ անկախ»⁵:

Բրիտանացի գիտնական Աուստին Հենրի Լայարդը (19-րդ դար) հիշատակել է եզդի կանանց հյուրասիրությունը. «Շեյխ Նասրն արդեն հեռացել էր Բաադրիից⁶ և պատրաստվում էր կրոնական արարողությունը Շեյխ Ադիի շիրմի մոտ: Ես այցելեցի նրա կնոջը և հիացա նրա անկեղծ հյուրասիրությամբ, ինչպես նաև նրանց տան և աղքատիկ կահույքի մաքրությունը»⁷: Հարկ է նշել, որ Մերձավոր Արևելքում բացառիկ երևույթ է եղել, որ կինն ամուսնու բացակայությամբ տղամարդ հյուր ընդունի: Շարունակելով նկարագրությունը՝ Լայարդը նշում է. «Տների մյուս ծայրում ես տեսա կանանց, ովքեր մեծ վտակում ծխական լվացում էին կատարում: Նրանք պատրաստվում էին առավոտվա արարողությանը, քանի որ ոչ ոք չի կարող մտնել Շեյխ Ադիի հովիտ առանց նախապես մարմինն ու զգեստները մաքրելու: Նրանք ոչ մի ուշադրություն

³ F. Forbes, "A Visit to the Sinjar Hills in 1838, with Some Account of the Sect of Yezidis, and of Various Places in the Mesopotamian Desert, between the Rivers Tigris and Khabar", *The Journal of the Royal Geographical Society of London*, Vol. 9, 1839, p. 427.

⁴ Եզդիներն ունեն սուրբ համարվող երկու գրվածք՝ *Քթեբա ջալվա* (բոց. «հայտնության գիրք») և *Մասհաֆե ուաշ* (բոց. «սև գիրք», «սև մատյան»): Դրանք գաղտնի են պահվել այլադավաններից, չեն ընթերցվել ու չեն մեկնաբանվել նույնիսկ համայնքի անդամների համար: Փոքր ծավալ ունեցող այս գրվածքները եզդիների դավանանքի որոշ կողմերի համառոտ շարադրանքն են: Քթեբա ջալվա գրքում ներկայացված է, թե ինչպես է եզդիական գլխավոր սրբերից մեկը՝ Տաուսի Մալակը դիմում եզդիներին և կոչ անում հավատարիմ մնալ սեփական կրոնին, չհրապուրվել այլադավանների գաղափարներով և այլն: *Մասհաֆե ուաշը հակիրճ ներկայացնում է աշխարհի արարումը* (Թ. Ամրյան, *Եզդիների կրոնական աշխարհայացքը*, էջ 18-19):

⁵ I. Joseph, *Devil Worship: The Sacred Books and Traditions of the Yezidiz*, Boston, 1919, p. 190.

⁶ Բաադրի կամ Բաադրե՝ Լալիշից ոչ հեռու գտնվող եզդիաբնակ գյուղ:

⁷ A. H. Layard, *Nineveh and its Remains*, Paris, 1850, p. 94.

չդարձրին ինձ, և չնայած այն հանգամանքին, որ մերկ էին, անտարբեր տեսքով շարունակեցին»⁸: Նույն աշխատանքի մեջ հեղինակը շեշտում է. «Ուշադրություն չդարձնելով օտարների ներկայությանը, կանայք մոռացան իրենց սովորական երկչոտությունը և վագեցին սարերն ի վեր: Երբ ես նստեցի ծառերի տակ, աղջիկները ծիծաղելով հավաքվեցին իմ շուրջը, սկսեցին ուսումնասիրել իմ հագուստը և իրենց համար նոր ու արտասովոր բաների մասին հարցեր տալ ինձ»⁹:

Նշված օրինակներից ելնելով կարելի է պատկերացում կազմել պատմական որոշակի ժամանակահատվածներում համայնքում և ընտանիքում եզդի կնոջ վայելած ազատության մասին: Հետաքրքրական են նաև հայկական աղբյուրներում եզդի կանանց մասին հանդիպող հիշատակումները և նկարագրություններ, որոնք ոչ միայն խոսում են նրանց համարձակության, սեփական համայնքում վայելած ազատության մասին, այլև վկայում են այդ տարածաշրջանում եզդի կանանց անկաշկանդ և անհոգ վարքն ու բարքը:

1904 թ. «Լումա» հանդեսում հրատարակված հոդվածում Գյուրջյանը նշում է. «Եզդի տղամարդկանց՝ դէպի կանայք ունեցած սիրալիր վերաբերմունքը, իսլամական ազգերի հետ համեմատած, շատ բարձր է կանգնած: Եզդիները՝ ինչպես նաև միև քիւրդերի մեջ, կին կամ աղջիկը տղամարդկանցից ծածկուել չգիտէ (բացառութիւն են կազմում նորահարսներ), կինը տղամարդու ստրուկը չէ»¹⁰: Մեկ այլ տեղ նա հիշատակում է. «Եզդուհիք (ինչպես նաև տաճկահայ գիւղացի աղջիկներ) քանի աղջիկ են, իրենց գլուխները միայն ֆէսով են ծածկում, իսկ հենց որ ամուսնանում են, նոր սկսում են իրենց գլուխները բարակ շղարշով (եզգմայով) կապել»¹¹: «Եզդուհին իւր ազատ կամքով սիրած քաջ տղամարդի (նոցա իգեալը քաջ տղամարդն է) հետ կարող է ամուսնանալ, հակառակ դէպքում ծնողների առարկութիւն և զանազան ասեկօսէներ առ ոչինչ համարելով, սիրած երիտասարդի հետ իւր հայրենական տանից փախուստի կտան»¹²:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին ապրած և ստեղծագործած հայ հոգևորական Սիոն վարդապետ Տեր-Մանվելյանը, խոսելով հարևան եզդի կանանց որոշ սովորությունների մասին, նշում է. «Տան տիկինը ամեն շաբաթ

⁸ Նույն տեղում, էջ 94:

⁹ Նույն տեղում, էջ 99-110:

¹⁰ Ա. Գիւրջեան, «Եզդի ֆրդեր», Լումայ, 1904, յունվար-փետրուար, № 1, էջ, 89:

¹¹ Նույն տեղում, էջ 90:

¹² Նույն տեղում, էջ 89:

անարգել լուացքի դուրս գալու սովորութիւն ունի՝ տան մեջ եղած բոլոր կին, աղջիկ անդամներով, նրանք իրենց լուացքը սիրում են կատարել գիւղից դուրս՝ բացօթեայ՝ գետի, առուակի կամ աղբյուրների եզերքներում, ուր թէ կիսամերկ մարմնով շորերն են լուանում և իրենք են լուացում առանց խոյս տալու պատահական անցորդների դիպուածական ներկայութիւնից»¹³: Մեկ այլ առիթով Տեր-Մանվելյանը նշում է հետևյալը. «Եզդի տիկիները չգիտէ և չի սիրում քաշուել մարդկանցից, որպէս և չի քաշում բացակործ ստինքներով երեսային կերակրելուց՝ բազմութեան ներկայութիւնից, ուր էլ և ինչպիսի հասարակութեան մէջ լինելու լինի, նորա համար միև նոյն է»¹⁴:

Հայկական աղբյուրներում եզդի կնոջ ազատ կերպարի առկայությունը կարող է վկայել նաև եզդիների՝ հայկական միջավայրում իրենց ապահով և անկաշկանդ զգալու մասին. ուշագրավ է, որ դա իր արտացոլումն է գտել նաև գեղարվեստական գրականութեան մեջ: Անվանի հայ գրող Բաֆֆու «Կայծեր» վեպում նկարագրված է, թե եզդի կանայք ու աղջիկները որքան անկաշկանդ և անբռնազբոսիկ կերպով են շփվում և կատակում իրենց տանը հյուրընկալած հայ երիտասարդի հետ:

«— Քո անկողինը ես էի պատրաստել, — ասաց նա, — դու հանգիստ քնեցի՞ր, լավ երազներ տեսա՞ր:

— Լավ երազներ տեսա, ես ամբողջ գիշեր խոսում էի մի աղջկա հետ, որը այնպես գեղեցիկ էր, ինչպես դու:

Այս խոսքը ես ասեցի բոլորովին կատակով, բայց նա շարժեց սիրուն օրիորդի սիրտը, և նրա արտասուքի հետ դուրս թափեց մի գաղտնիք, որ ոչ սակավ զարմացուց ինձ.

— Ես գեղեցիկ չեմ, — ասաց նա, — ես մի անպետք լաթի կտոր եմ, որ ոտքի տակ են գցում...

Ես ոչինչ չգտա նրան պատասխանելու, որովհետև չէի իմանում, թե ինչ մտքով է ասում այդ»¹⁵:

Վեպի մեկ այլ հատվածում նշվում է. «Կեսօր էր: Այս ժամին հովիվները քշում են ոչխարները վրանների մերձակա մակաղատեղիներում, ուր գնում են կնիկները և աղջիկները կաթը կթելու: Նրանք արդեն իրանց գործը վերջացրել էին և կաթնով լի սափորները գլխների վրա դրած, վերադառնում էին ոչխարների հանգրվանից: Քիչ էր պատահում, որ այդ աղջիկները կամ մանկահասակ

¹³ Ս. Տեր-Մանվելյան, *Եզդի Կուրմանժ*, Ախալցխա, 1910, էջ 21:

¹⁴ Նույն տեղում, էջ 22:

¹⁵ Բաֆֆի, *Կայծեր*, Երկերի ժողովածու, հ. 5, Երևան, 1985, էջ 598:

կանայք իմ մոտով անցնելիս որևիցե կատակ կամ սրախոսություն չարձակելին դեպի ինձ: Նրանք մի բան էին ասում և առանց պատասխանին սպասելու ծիծաղելով անց էին կենում»¹⁶:

Կանայք իրենց առանձնահատուկ դերն ունեն եզդիական կրոնական համակարգում: Եզդիները հոգևորական կաստաների ներկայացուցիչ կանանց անվանում են¹⁷ *stî* (արաբ․՝ *sayyida*, «տիրուհի» ձևի վերափոխված տարբերակը եզդիների լեզվում): Նման դիմելաձևը վկայում է այս կաստաների կանանց նկատմամբ ժողովրդի ունեցած խորը հարգանքի և պատկառանքի մասին: Եզդիական կրոնական հիմներում¹⁸ *Stî* են անվանվում իգական սեռի ներկայացուցիչ սրբերը, ինչպես նաև եզդիական գլխավոր սրբերից մեկի՝ Շեյխ Շամսի դուստրերը¹⁹:

Եզդիական կրոնական համակարգում առկա է ճգնակյացի կյանքով ապրող կուսակրոն կանանց ինստիտուտը: Այդ կանանց անվանում են *feqreya* (արաբ․՝ *faqr*, «չքավորություն»): «Ֆակր» է կոչվել սուֆիական ինքնակատարելագործման ճանապարհի կանգառներից մեկը. այն խորհրդանշում էր աշխարհիկ բարիքներից հրաժարվելն ու համեստ կենսակերպով ապրելը²⁰: Ֆակրայաները ծառայում են եզդիների կրոնական կենտրոն Լալիշում, նրանց պարտականությունն է մաքրել սրբավայրերը, կերակուր պատրաստել սրբավայրի ծառայողների և հոգևոր սպասավորների համար, օգնել կամ ուղեկցել սրբավայրեր այցելած ուխտավորներին և այցելուներին: Ֆակրայաները, որպես կանոն, հագնում են երկար սպիտակ զգեստներ²¹: Ֆակրայաների առաջնորդը կոչվում

¹⁶ Նույն տեղում, էջ 601:

¹⁷ Եզդիական հասարակությունը բաղկացած է երեք կաստայից. *շեյխերն* ու *փիրերը* հոգևորական կաստաների ներկայացուցիչներ են, *մրրիդները*՝ աշխարհիկ:

¹⁸ Եզդիական կրոնական հիմները եզդիական սրբերին, նրանց կատարած հրաշագործություններին, նրանց հետ կապված դեպքերին ու իրադարձություններին նվիրված, աշխարհի ստեղծման ու վախճանաբանության մասին պատմող չափածո տեքստեր են: Կրոնական հիմները եզդիների մայրենի լեզվով են: Գրանց բանավոր կերպով սերնդեսերունդ են փոխանցվել և պահպանվել են եզդի հոգևորականների շնորհիվ: Վերջիններս կրոնական հիմներն արտասանում են տարբեր ծեսերի ժամանակ (Թ. Ամրյան, *Եզդիների կրոնական աշխարհայացքը*, էջ 21):

¹⁹ O. Celil, C. Celil, *Zargotina Kurda*, Volume I, Moscow, 1978, pp. 369, 397; Volume II, Moscow, 1978, p. 36.

²⁰ Տե՛ս Թ. Ամրյան, «Սուֆիական ինֆնակատարելագործման հանապարհի գաղափարն արտահայտող որոշ եզդեր եզդիական կրոնական հիմներում», *ԲՄ*, № 24, Երևան, 2017, էջ 35-46:

²¹ Ph. Kreyenbroek, *Yezidism*, p. 136; J. Guest, *The Yezidis: A Study in Survival*, New York, 1987, p. 35; B. Açıkyıldız, *The Yezidis. The History of a Community, Culture and Religion*, London, 2010, p. 95.

է *kebana* կամ *kebanî* (կամ *kevanî*) (պրս.՝ *kadbānū*, «տանտիկին», «տանտիրուհի»)՝ Միայն ֆակրայաներն ու կաբանին իրավունք ունեն պատրաստել սուրբ համարվող «բարաթը»: «Բարաթ» են կոչվում Շեյխ Ադիի սրբավայրի հողի և Լալիշում գտնվող ու եզդիների համար սուրբ համարվող Կանիա Սպի անունը կրող աղբյուրի ջրի խառնուրդից պատրաստված գնդիկները, որոնք որպես սրբություն պահվում են Լալիշում և տրվում են եզդի ուխտավորներին²²:

Յուրաքանչյուր եզդի պետք է հանդերձյալ կյանքի եղբայր և քույր ունենա այն հոգևորական ընտանիքների անդամների շարքից, ում հետ ավանդաբար կապված է իր ընտանիքը: Հանդերձյալ կյանքի եղբոր պարտականությունն է հոգևոր ուսուցչի դեր կատարել իր հովանավորչալի համար, ներկա գտնվել նրա կյանքի կարևոր իրադարձություններին²⁴: Որպես կանոն, հանդերձյալ կյանքի քույր է համարվում հանդերձյալ կյանքի եղբոր կինը: Եզդի կանայք, սակայն, մի հարցում ազատ են. նրանք նաև կարող են ունենալ մեկ այլ հանդերձյալ կյանքի քույր, ում կարող են ընտրել ցանկացած ընտանիքից՝ անկախ այդ ընտանիքի հետ ունեցած ավանդական կապից²⁵: Ընդհանրապես, շեյխական և փիրական ընտանիքների իգական սեռի ներկայացուցիչները գործուն մասնակցություն են ունենում մի շարք կրոնական արարողությունների: Օրինակ՝ թաղման ծեսի ժամանակ նրանց բարդ և կարևոր պարտականություններից է կին հանգուցյալների մարմինը լվանալը, պատանքը կարելը և այլն: Եզդի կանայք անկախ իրենց կաստայական պատկանելությունից կարող են թաղման արարողությունների ժամանակ երգել սգո երգեր: Հատկանշական է, որ եզդիական և քրդական ողբերգերն ուսումնասիրած Մարգարիտա Ռուզենկոն սգո երգերի մեջ առանձնացնում է միայն կանանց հորինած երգերը, որոնք կոչվում են "*kilamê şînê yê jina*" (բոց.՝ «կանանց [կողմից կատարվող] սգո երգեր»)՝²⁶:

Հայտնի է, որ եզդիների կրոնում կարևոր տեղ ունեն կրոնական հիմները, որոնք ընթերցելու և հաջորդ սերունդներին փոխանցելու մենաշնորհն ավանդաբար պատկանում է տղամարդ հոգևորականներին: Շեյխական ու փի-

²² G. R. Driver, "The Religion of the Kurds", *Bulletin of the School of Oriental Studies*, University of London, Vol. 2, No. 2 (1922), p. 207; Ph. Kreyenbroek, *Yezidism*, p. 136.

²³ Բարաթի մասին առավել մանրամասն՝ Թ. Ամրյան, *Եզդիների կրոնական աշխարհայացքը*, էջ 139-140:

²⁴ Г. Асатрян, «О "брате и сестре загробной жизни" в религиозных верованиях езидов», *Страны и народы Ближнего и Среднего Востока*, № 13, Курдоведение, Ереван, 1985, сс. 262-272.

²⁵ Թ. Ամրյան, *Եզդիների կրոնական աշխարհայացքը*, էջ 190-191:

²⁶ М. Руденко, *Курдская обрядовая поэзия*, Москва, 1982, с. 13.

րական կաստաների կին անդամները կրոնական հիմներ չեն արտասանում, սակայն նրանք պատասխանատու են հաջորդ սերունդներին որոշ կրոնական գիտելիքներ փոխանցելու համար²⁷: Որոշակի բուժումներ կատարող մի շարք շեյխական ու փիրական ընտանիքների ներկայացուցիչ կանայք իրենց ուրույն դերն ունեն բժշկություն ծխակարգում: Եւ՛ կանայք, և՛ տղամարդիկ հավասարապես կարող են կատարել բուժումներ, բայց կան այնպիսի արարողություններ, որոնք կատարվում են առավելապես կանանց կողմից²⁸:

Մի շարք շարժումներում հիշատակվում է կրոնում և կրոնական արարողություններում եզդի կանանց ունեցած դերը: Նախկինում, օրինակ, եզդի կանայք մասնակցել են «սամա» կոչվող արարողությանը, որը, ըստ էության, սուֆիական ճգնաժեսի վերափոխված տարբերակն է եզդիականության մեջ: Այդ մասին գրում է կայարգը. «Երբ ես նայում էի այս արտառոց տեսարանին, հանկարծ մարդկային ձայն հնչեց հովտում, և լարված ու հանդիսավոր մթնոլորտ ստեղծվեց: Այն նման էր մի հրաշալի երգի, որը տարիներ առաջ ես լսել էի հեռավոր երկրի տաճարում: Երաժշտությունն այնքան հուզիչ, այնքան քաղցր էր. նման երաժշտություն ես երբեք չէի լսել Արեւելքում: Տղամարդկանց եւ կանանց ձայները ներդաշնակ կերպով միաձուլվեցին շրթհարմոնի նուրբ մեղեդուն»²⁹: «Պատկառելի ալեխառն մորուքներ ունեցող, սպիտակ գլխափաթիթոցներ դրած շեյխերը կանգնել էին մի կողմում, իսկ նրանց դիմաց սև ու սպիտակ հագուստներ հագած մոտ երեսուն կավալ³⁰ դաֆ ու շրբաֆ³¹ էին նվագում: Նրանց շուրջ կանգնել էին մուգ հագուստներ հագած ֆակիրները³², իսկ մյուս կողմում շարքով կանգնել էին հոգևորական կաստաների կանայք: Նրանց լար-

²⁷ Kh. Omarkhali, *The Yezidi Religious Textual Tradition: From Oral to Written*, Wiesbaden, 2017, pp. 158-161.

²⁸ Առավել մանրամասն՝ Թ. Ամրյան, «Հոգեկան խնդիրներ ունեցող մարդկանց բուժումը ըստ ժողովրդական հավատալիքների», օրինատալիս, պրակ 10, Երևան, 2010, էջ 8-20, V. Arakelova, "Healing Practices among the Yezidi Sheikhs of Armenia", *Asian Folklore Studies*, 60 (2), 2001, pp. 319-328:

²⁹ A. H. Layard, *Nineveh and its Remains*, p. 98.

³⁰ Կավալները (արաբ.՝ qawwāl, «արտասանող», «երգիչ») եզդիական կրոնական երգասացության կրողներն են:

³¹ Դաֆը և շրբաֆը եզդիականության մեջ սուրբ համարվող երաժշտական գործիքներ են, որ պանվում են եզդիականության կենտրոնում և կիրառվում առավելապես կրոնական արարողությունների ժամանակ (տե՛ս Թ. Ամրյան, «Կավալների երաժշտական գործիքները որպես պաշտամունքի առարկա եզդիական հավատալիքներում», *Օրինատալիս*, պրակ 15, Երևան, 2013, էջ 36-39):

³² Եզդի ֆակիրները (արաբ. faqīr, «չֆավոր», «նզնակյաց», «նամփոքող սուֆի») նզնակյացի կյանքով ապրող հոգևոր խավի ներկայացուցիչներ են, որոնք այդ աստիճանին հասնում են որոշակի կրոնական նախապահ անցնելուց և ձեռնադրվելուց հետո:

ված, խորհրդավոր լուսությունը շուտով վերածվեց երգասացության, որը տևեց մոտավորապես մի ժամ. երգի մի մասը կոչվում էր “*Makam Azerat Esau*” կամ «Հիսուս թագավորի երգ»: Այն կատարում էին շեյխերը, կավալները և կանայք: Ես չկարողացա հասկանալ այդ երգի բառերը կամ համոզել որևէ մեկին այն կրկնել ինձ համար: Աղոթքն ու փառաբանությունն աստիճանաբար վերածվեցին աշխույժ երգասացության, որը վերջում խլացավ ձայների ու տիրող խառնաշփոթի մեջ: Դաֆին հարվածում էին արտասովոր ուժով, երաժշտական գործիքներից հորդում էր մեղեդին. աղմուկը հասավ իր գագաթնակետին, դրսում հավաքված մարդիկ սկսեցին ճշալ ու ձայնակցել, գրգռված վիճակում գտնվող երաժիշտները երաժշտական գործիքներն օդ նետեցին և այնքան ազատություն տվեցին իրենց ձեռքերին ու ոտքերին, մինչև որ հոգնած ընկան գետնին»³³: Մեկ այլ աղբյուրում նշվում է, որ սամա կոչվող ծեսից հետո եզդի կանայք և տղամարդիկ ողջ գիշեր մինչև լուսաբաց միասին պարում էին սրբավայրի բակում³⁴: Ներկայումս, սակայն, եզդիական ճգնաժեսը կատարվում է առավելապես տղամարդկանց մասնակցությամբ³⁵:

20-րդ դարի սկզբին Հյուսիսային Իրաքի եզդիական ուխտավայրեր այցելած բրիտանացի արևելագետ Գեդֆրեյ Ռ. Իրայվերը նշել է ուխտագնացությունների և կրոնական այլ ծեսերի ժամանակ կանանց ու տղամարդկանց հավասար մասնակցության փաստը: Նա հիշատակում է, որ կրոնական միջոցառումների ժամանակ երկու սեռի ներկայացուցիչները հավասարապես ծոմ են պահում, հետո միասին ուտում, խմում և պարում³⁶:

Պատմության ընթացքում եղել են նաև ազդեցիկ եզդի կին առաջնորդներ, որոնք կառավարելու հմտության և հասարակական ակտիվության շնորհիվ հայտնի են եղել նաև համայնքից դուրս: Այդպիսի մի կին էր Մայան Խաթունը, որն ապրել ու գործել է 19-րդ դարի վերջին, 20-րդ դարի սկզբին: Նա միրի³⁷ ընտանիքի անդամ էր: Արաբալեզու աղբյուրներից մեկում նրա մասին նշվում է հետևյալը. «Նա իմաստուն և հեռատես է, նրանից զգուշանում են իր յուրայինները: Նրա ազդեցությունն այնքան ուժեղ է, որ ոչ ոք չի համարձակվում ընդդիմանալ նրա կամքին: Բոլորը սարսուռում են նրա ներկայությամբ և

³³ A. H. Layard, *Nineveh and its Remains*, pp. 98-99.

³⁴ Sté u I. Joseph, *Devil Worship*, p. 165.

³⁵ Թ. Ամրյան, «Ճգնաժեսը եզդիականության մեջ», *Արևելագիտության հարցեր*, № 8, Երևան, 2013, էջ 323-332:

³⁶ G. R. Driver, "The Religion of the Kurds", p. 205.

³⁷ Միրը բոլոր եզդիների հոգևոր առաջնորդն է:

անհանգիստ են նրա բացակայության ժամանակ: Այս պահին նա արդյունավետ կառավարիչ է, որը տալիս է և վերցնում, պարզևատրում է և զրկում այնպես, ինչպես ինքն է ճիշտ համարում: Դժվար է պատկերացնել՝ ինչ կլինի, երբ նա մահանա, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նրա կյանքը մոտենում է ավարտին, և նրա ամեն ինչը ծերանում է, բացի մտքից»³⁸:

Նշված սկզբնաղբյուրներում հանդիպող հիշատակումներից ակնհայտ է, որ եզդի կանայք ազատություն են վայելել համայնքում և կարևոր դեր են ունեցել կրոնական ծիսակարգում: Պատմական որոշակի դեպքերի, մասնավորապես եզդիների նկատմամբ իրագործված կոտորածների, եզդի կանանց նկատմամբ օտարների բռնությունների պատճառով³⁹ կանանց ինքնապաշտպանության պահանջը մեծացել է, և արդյունքում կանանց դերը որոշակի վերափոխումների է ենթարկվել:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում եզդիական կրոնական բանահյուսության մեջ կնոջ դերի և կերպարի քննարկումը: Եզդիների կրոնի բանավոր բնույթի պատճառով կանանց գործառույթները, պարտականությունները կայուն կերպով ամրագրված չեն, բայց կրոնական հիմներում կարելի է հանդիպել այնպիսի նմուշներ, որոնք ասես թելադրում և կարգավորում են

³⁸ Al Damlooji Sadiq, *The Yezidis (Arabic)*, Mosul, 1949: 36, մեջբերումը ըստ՝ J. Guest, *The Yezidis: A Study in Survival*, p. 185.

³⁹ Եզդիական համայնքի, եզդի կանանց նկատմամբ իրագործված բռնությունների բազմաթիվ նկարագրություններ կարելի է հանդիպել սկզբնաղբյուրներում: Նմանատիպ մի նկարագրություն կա անգլիացի միսիոներ Օավալդ Փարրի գործերից մեկում. «Նա (Օսման Փաշան) գերեվարեց գրավիչ [եզդի] կանանց և աղջիկներին՝ բռնի կերպով ամուսնացնելով նրանց իր զինվորների հետ: Ումանց էլ նա բռնեց ու բանտ նետեց ամեն օր ահաբեկելով, խոշտանգելով և ստիպելով մուսուլման դառնալ» (O. Parry, *Six Months in a Syrian Monastery*, London, 1895, p. 257): «Բայց ամեադաժան բաները կատարվեցին այն մարդկանց հետ, ովքեր հրաժարվեցին փոխել իրենց կրոնը: Տղամարդիկ դաժանորեն խոշտանգվեցին, կանայք առևանգվեցին, անարգվեցին կամ սպանվեցին: Մի շեյխի կտորկտոր արեցին ու նետեցին ժայռից, մեկ ուրիշի հզմեցին ջրաղացի ֆարերի միջև ընկած հատիկների պես: Կանայք մնացին զինվորների մահահռույժին: Ումանք փախուստի դիմեցին և անարգանքից փրկվելու համար նետվեցին բարձր ժայռից ու ինքնասպան եղան» (O. Parry, *Six Months in a Syrian Monastery*, p. 259): «Այնուհետև Օսման Բեկը լսեց, որ մի ֆանի երիտասարդ աղջիկներ քաֆնվել են ձիթենու պուրակում՝ բարձր խոտի մեջ. նա դաժանորեն հրամայեց հրդեհել ողջ շրջակայքը. սարսափելի ձայներ արձակելով՝ նրանք այրվեցին և մահացան: Մի երիտասարդ աղջիկ, ով շուտով պետք է մայրամար, հետապնդվեց ու փախավ մինչև ասորական եկեղեցի, ֆահանսան ապաստան տվեց նրան այնտեղ: Զինվորները գտան նրան և անասելի բաներ անելով՝ սպանեցին տաճարի մոտ: Քրդերն ու լեռների մյուս ավազակները, ոգևորվելով այս ամենից, իջան և կրկնապատկեցին կատարված դաժանություններն ու բռնությունները» (O. Parry, *Six Months in a Syrian Monastery*, p. 259):

կանանց և տղամարդկանց հարիր պահվածքի և վարվելակերպի որոշակի նորմեր: Նմանատիպ օրինակներ կարող են համարվել ստորև ներկայացված հատվածները կրոնական հիմներից:

Ez nebînim mêrê bi tinê,

Kalê biket zinê

Û mêrê libin hukmê jinê. (Qewlê Şeqeserî)⁴⁰

Ես չտեսնեմ միայնակ տղամարդ,

[Չտեսնեմ] շնացող ծերունի,

[Չտեսնեմ] իր կնոջ իշխանության տակ գտնվող տղամարդ:

Ez nebînim ava bi kar pirik,

Heremeta bi çinçirik,

Malxoyê malê yî kebû girik. (Qewlê Şeqeserî)⁴¹

Ես չտեսնեմ երաշտ,

[Չտեսնեմ] թափթփված կին,

[Չտեսնեմ] կամակոր տղամարդ:

Ez nebînim warê ber bi zinar,

Û sala du behar,

Kalê bi guhar, pîrejina bi yar. (Qewlê Şeqeserî)⁴²

Ես չտեսնեմ դեպի ժայռն ուղղված տուն⁴³,

[Չտեսնեմ] երկու գարուն ունեցող տարի,

[Չտեսնեմ] ականջող կրող ծերունի և [չտեսնեմ] սիրեկան ունեցող

ծեր կին:

Ինչպես արբահամական կրոնական օջախի ժառանգ մյուս կրոնների, այդպես էլ եզդիների կրոնական ավանդույթը ընդունում է, որ Եվան ստեղծվել էր Ադամի կողոսկրից: «Մասհաֆե ուաշ» կոչվող սուրբ գրքում նշվում է. «Աստված հրամայեց Չաբրայիլին, [որը եկավ] և ստեղծեց Եվային՝ Ադամի ձախ կողից»⁴⁴:

⁴⁰ Ph. Kreyenbroek, Khalil J. Rashow, *God and Sheikh Adi Are Perfect: Sacred Poems and Religious Narratives from the Yezidi Tradition*, Wiesbaden, 2005, p. 298.

⁴¹ Նույն տեղում, էջ 298.

⁴² Նույն տեղում, էջ 298.

⁴³ Անհյուրընկալ տուն:

⁴⁴ I. Joseph, *Devil Worship*, p. 39, Գ. Ասատրյան, Ա. Փոլադյան, «Եզդիների դավանանքը», ՊԲՀ, № 4, Երևան, 1989, էջ 146:

Եզդիական հավատալիքներում իգական սեռի սրբերի մասին խոսելիս արժե նշել, որ մի ավանդազրույցի համաձայն, Հիսուսի մայր Մարիամը⁴⁵ Հիսուսին կյանք է պարգևել արտառոց ձևով՝ իր ձախ կողից⁴⁶: Հայաստանաբնակ եզդիների շրջանում ընդունված մեկ այլ ավանդապատման համաձայն՝ Մարիամը հղիացել է աստվածային լույսից (*nûra Xwedê*, բոց. «Աստծո լույս») և ծնունդ տվել Հիսուսին: Եզդիական հավատալիքներում առավել հայտնի և ժողովրդականություն վայելող իգական սեռի սրբերից է Խատունա Ֆարխան (*Xatûna Ferxa*): Նա համարվում է մայրության հովանավոր սուրբ: Եզդիները հավատում են, որ Խատունա Ֆարխան պաշտպանում է ծննդկանին ու երեխային⁴⁷: Մեկ այլ իգական սեռի սուրբ՝ Պիրաֆատը (*Pîrafat*) ոչ միայն համարվում է եզդիական համայնքի և եզդի ընտանիքների պաշտպանը⁴⁸, այլև կարող է դիտարկվել որպես եզդիների նախամայր: Ըստ ավանդազրույցներից մեկի՝ եզդիներն առաջացել են այն սերմից (այլ տարբերակներում՝ հեղուկից), որը Պիրաֆատը պահպանել է իր փեշի մեջ ու փրկել ոչնչացումից:

Եզդիների ծագման մասին կա մեկ այլ ավանդազրույց, ըստ որի՝ եզդիներն առաջացել են Ադամի որդի Շահիդ բին Ջեռից (*Şehîd bin Cêr*, բոց.՝ «սափորի որդի Շահիդ»)՝ «Մասհաֆե Ռաշ» կոչվող գրքում կարդում ենք. «Ադամն ու Եվան վիճեցին այն մասին, թե արդյո՞ք մարդկային ցեղը Ադամից սկիզբ կառնի, թե Եվայից. յուրաքանչյուրն ուզում էր, որ ինքը լինի մարդկության միակ ծնողը: Այս վեճը ծագեց այն բանի հիման վրա, որ կենդանական աշխարհում և՛ արական, և՛ իգական սեռի ներկայացուցիչները մասնակցում են իրենց տեսակի վերարտադրությանը: Երկար վեճից հետո Ադամն ու Եվան որոշեցին, որ յուրաքանչյուրն առանձին իր սերմը դնի սափորի մեջ, փակի այն, կնքի սեփական կնիքով և սպասի ինն ամիս: Երբ նշված ժամանակահատվածի ավարտից հետո նրանք բացեցին սափորները, Ադամի սափորի մեջ հայտնաբերեցին երկու երեխա՝ տղա և աղջիկ: Այդ երկուսից առաջացավ մեր՝ եզդիների

⁴⁵ Եզդիական կրոնական ավանդույթում Հիսուսին անվանում են İsa bin Meryem (բոց. «Մարիամի որդի Իսա»):

⁴⁶ Sté u I. Joseph, Devil Worship, p. 61.

⁴⁷ Ա. Ավդալ, *Անդրկովկասյան քրդերի կենցաղը*, Երևան, 1957, էջ 63-64:

⁴⁸ Նույն տեղում, էջ 91:

⁴⁹ Ph. Kreyenbroek, Khalil J. Rashow, *God and Sheikh Adi are Perfect*, p. 31; E. Spät, “Shahid bin Jarr, Forefather of the Yezidis and the Gnostic Seed of Seth”, *Iran and the Caucasus*, Vol. 6 (1-2), 2002, pp. 27-56, Ա. Ավդալ, *Եզդի քրդերի հավատալիքները*, էջ 17-18:

համայնքը: Եվայի սափորում նրանք գտան տհաճ հոտ արձակող փտած ճիճուներ»⁵⁰: Ջոզեֆի աշխատանքում նաև նշվում է. «Մի ուրիշ ավանդազրույց էլ գոյություն ունի: Ըստ այդ ավանդազրույցի՝ երբ Ադամը հրաշքով կյանք տվեց իր որդուն, այս միջադեպից ցնցված Եվան խնդրեց Աստծուն, որ ինքը կարողանա մի երեխա աշխարհ բերել և շնորհ գտնել իր ամուսնու առաջ: Հետո նա աշխարհ բերեց մի գեղեցիկ աղջիկ: Հիանալով այդ աղջկա գեղեցկությունը՝ Ադամն իր որդուն ամուսնացրեց նրա հետ: Մենք՝ եզդիներս այս երկու երեխաների ժառանգներն ենք»⁵¹:

Եզդիական կրոնական բանահյուսության մեջ Մարիամի միջոցով կինը ներկայացվում է որպես հրաշքով ծնունդ տվող արարած, Խատունա Ֆարխայի կերպարի միջոցով կինը ներկայացվում է որպես պաշտպան և պահապան, Պիրաֆատի միջոցով կնոջ դերը գնահատվում է որպես նախամայր և սկզբնապատճառ: Մյուս կողմից էլ կնոջ դերը ստորադասվում է Եվայի միջոցով, քանի որ որոշ եզդիական ավանդապատումներում մարդկության նախամայր համարվող Եվան զրկված է նույնիսկ ծնելու և սերունդ տալու իր դերից:

Եզդիական կրոնական համակարգում կնոջ դերի ուսումնասիրումը թույլ է տալիս պատկերացում կազմել ժամանակի ընթացքում եզդիական համայնքում այդ դերի վերափոխումների մասին: Եզդիական կրոնական համակարգում կնոջ դերի նման բազմակերպ, երբեմն՝ փոփոխական և հակասություններով լի բնույթը ոչ միայն եզդիական ներփակ համայնքի և կրոնական սինկրետիզմի հետևանք է, այլև պատմության ընթացքում բազմաթիվ անգամներ կոտորածների ենթարկվելու պատճառով ինքնապաշտպանության պահանջի ուժեղացման արդյունք:

⁵⁰ Տե՛ս I. Joseph, *Devil Worship*, pp. 39, 90.

⁵¹ Նույն տեղում, էջ 91:

TEREZA AMRYAN

**ON SOME PECULIARITIES OF THE ROLE OF
WOMEN IN THE YEZIDI RELIGION****Key words:** female, tradition, ritual, folklore.

The role of women in the Yezidi religion has not been a subject of special study. The works of some Western authors and other sources give us some idea about the freedom of Yezidi women in the family and community during certain historical periods. In Armenian sources, references to Yezidi women testify to their courage and freedom, as well as their unconstrained behavior in the communities neighboring with Armenians. As a result of some historical events, particularly the massacres of Yezidi people and violence against their women, the demand for self-defense increased, and the role of women in the community changed.

Hermit women living in the religious center have their unique role in Yezidism. Those belonging to priest castes perform certain functions in religious, healing, funeral and other ceremonies. In the Yezidi religious lore, the importance of women is emphasized through Mary (Mother of Jesus) and female saints. On the other hand, the role of women is depreciated through Eve: in some Yezidi myths, the foremother of humanity is deprived of the reproductive function.

The study of women's role in the Yezidi religion allows us to form an idea about its transformation in the course of time. That role was diverse, variable and sometimes even contradictory, which is a result of not only the secluded character of the Yezidi ethno-religious community and their religious syncretism, but also of the demand for self-defense.

ТЕРЕЗА АМРЯН

**О НЕКОТОРЫХ ОСОБЕННОСТЯХ РОЛИ
ЖЕНЩИН В ЕЗИДСКОЙ РЕЛИГИОЗНОЙ СИСТЕМЕ****Ключевые слова:** женский пол, традиция, ритуал, фольклор.

Вопрос о роли женщин в религиозной системе езидов специально не рассматривался исследователями. По работам некоторых западных авторов и другим источникам можно судить о свободе, которой пользовались езидские женщины в обществе и в семье в определенные исторические периоды.

В армянских источниках упоминания о езидских женщинах свидетельствуют об их смелости и свободе, а также о непринужденном поведении женщин в общинах, проживающих по соседству с армянами. Вследствие некоторых исторических событий, в частности, случаев массовой резни езидов, а также насилия над их женщинами, возросла потребность в самообороне, в результате чего роль женщин в обществе претерпела некоторые изменения.

Класс езидских женщин-отшельниц в религиозном центре езидов играет уникальную роль в езидизме. Принадлежащие к кастам священнослужителей женщины выполняют определенные функции в религиозных, лечебных, похоронных и других церемониях. Значение женщин в религиозном фольклоре езидов подчеркивается через Марию (мать Иисуса), а также через святых женского пола. С другой стороны, роль женщины принижается через образ Евы: она считается прародительницей человечества, но в некоторых езидских мифах лишена репродуктивной функции.

Изучение роли женщины в езидской религии позволяет составить представление о трансформации роли женщины на протяжении времени. Эта роль была многообразной, изменчивой и иногда даже противоречивой, что является следствием не только замкнутости езидской этно-религиозной общины и религиозного синкретизма, но и требованиями самообороны.

Հրապարակումներ

ՄԱՐԻ ՄԱՄՅԱՆ

«ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ԱԻԵՏԱՐԱՆ»-Ի ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ ԱՌԱՔԵԼ ԲԱՂԻՇԵՑՈՒ «ՏԱՂ ԱԻԵՏՄԱՆ»-ՈՒՄ

Բանալի բառեր՝ Յովակիմ, Աննա, Ծնունդ, սուրբ կոյս Մարիամ, Գաբրիել հրեշ-տակապետ, մարգարե, Միածին, Սուրբ Հոգի, օրհնություն:

«Մանկութեան աւետարան»-ը¹ պատկանում է պարականոն այն գրվածքների շարքին, որոնք իրենց կնիքն են թողել հայ միջնադարյան քրիստոնեական մշակույթի գրեթե բոլոր բնագավառներում՝ վարքագրության, Հայսմավուրքի, ժողովրդական գրույցների, ինչպես նաև՝ մանրանկարչության վրա: Պարականոն այս երկը վերածվել է նաև չափածո ստեղծագործու-թյունների, որոնց թվում առանձնանում են Հովասափ Սեբաստացու «Վասն

¹ Այս ավետարանի մասին տե՛ս **A. Terian**, *The Armenian Gospel of the Infancy, with Three Early Versions of the Protevangeliium of James* (Oxford 2008), **Dorfmann-Lazarev I.**, “The Cave of the Nativity Revisited: Memory of the Primæval Beings in the Armenian Lord’s Infancy and Cognate Sources”, *Mélanges Jean-Pierre Mahé*, (eds.) **Mardirossian A., Ouzounian A. and Zuckerman C.**, (Paris, 2014), 285-333, **V. Calzolari**, “Les récits apocryphes de l’Infance dans la tradition arménienne”, in Claire Clivaz *et al* (eds.) *Infancy Gospels, Stories and Identities*, (Tubingen 2011) 560-587, **Մ. Մամյան**, «Մանկութեան աւետարան»-ի և Հակոբոսի մախավետարանի հայերեն թարգմանությունները (համեմատական վերլուծություն), *ԲՄ* 23, (Երևան 2016) 231-244:

լինելիութեան»² և Առաքել Բաղիշեցու «Տաղ աւետման»³ բանաստեղծական գործերը: Ի տարբերութիւն միջնադարյան բազմաթիւ այլ մատենագիրների, որոնք «Մանկութեան աւետարան»-ից օգտւել են հատվածաբար և այս պարականոնից առանձին դրվագներ իրենց երկերում ներկայացրել են որոշակի փոփոխութիւններով, Առաքել Բաղիշեցին «Մանկութեան աւետարան»-ն նույնութեամբ վերածել է չափածոյի: Իր կառուցվածքով այս տաղը նման է Առաքել Սյունեցու (շուրջ 1350–1425 թթ.) «Աղամգիրք» պոեմին⁴, սակայն, ինչպես իրավացիորեն նշում է Ա. Ղազինյանը, եթե Սյունեցու համար պարականոններն օժանդակ նյութ են, ապա Առաքել Բաղիշեցու համար «Մանկութեան աւետարան» պարականոնը հիմնական աղբյուրն է⁵:

Տաղն սկսւում է արարչագործութեան, մեղսագործութեան մասին հակիրճ ակնարկով և շարունակվում է մարգարեների՝ Հիսուսի մարդեղացած Բանի ծննդյան մասին արած կանխատեսումներով: Տաղի հիմնական թեման (սկսվում է «Վասն Յովակիմայ և Աննայի և աւետեացն, որ առին և ծննդեան Կուսին» ենթախորագրով), այնուամենայնիւ, Ավետումն է՝ դրան անմիջականորեն առնչվող իրադարձութիւնների՝ Մարիամի ծննդյան ու մանկութեան, ինչպես նաև՝ Հիսուսի ծննդյան պատմութիւնների որոշ նկարագրութիւններով:

Հիմք ընդունելով «Մանկութեան աւետարան»-ը՝ որպես իր չափածոյի աղբյուր, հեղինակը ներկայացնում է Մարիամի ծնողների՝ Աննայի և Հովակիմի

² Բանաստեղծությունն ամբողջությամբ հրատարակել է Կ. Կոստանյանցը (Կ. Կոստանյանց, Նոր ժողովածու միջնադարեան հայոց տաղեր եւ ոտանաւորներ, Թիֆլիս, 1892, էջ 18-22), և հատվածաբար՝ Ն. Մառը (տե՛ս Ն. Մառ, Ամառային ուղևորութիւններ դէպ ի Հայս, նկատողութիւններ եւ քաղուածներ հայկական ձեռագրերից, Վիեննա, 1892, էջ 56-57): Տե՛ս նաև՝ Գ. Յովաէփեանց, «Յովասափ Սեբաստացի», Արարատ ՄԱ (Դ-ԺԲ), ապրիլ-դեկտեմբեր (Վաղարշապատ 1918) 256:

³ Սույն վերագիրը պայմանական է: Տաղի բավական ընդարձակ խորագիրը և ենթախորագրերը՝ տարբեր ձեռագրերում առկա տարբերակներով հանդերձ, կներկայացնենք բնագրի հետ միասին:

⁴ Տե՛ս Առաքել Սյունեցի, Աղամգիրք, աշխ. Ա. Գ. Մազոյանի, Երևան, 1989: Տե՛ս նաև՝ <https://global.oup.com/academic/product/adamgirk-9780199204779?cc=us&lang=en&>

⁵ Առաքել Բաղիշեցի, XV դ., Ուսումնասիրություն, քննական բնագրեր և ծանոթագրություններ Ա. Ղազինյանի, Երևան, 1971, էջ 105: Բաղիշեցուն հաճախ շփոթել են Սյունեցու հետ՝ վերջինիս վերագրելով նրա որոշ աշխատություններ, այդ թվում նաև՝ «Տաղ աւետման»-ը: Սույն հոդվածում, սակայն, մենք չենք անդրադառնա տաղի հեղինակային պատկանելիությանը, մանավանդ որ այս հարցը մանրամասն քննել է Ա. Ղազինյանը, տե՛ս Առաքել Բաղիշեցի..., էջ 35-57:

պատմությունը, որոնք զրկված են զավակ ունենալու հնարավորությունից: Պարականոն այս ավետարանի հետևողությամբ էլ սրան հաջորդում է Մարիամի ծնունդը, հանձնումը տաճարին և ապա՝ խնամակալությունը Հովսեփին: «Մանկութեան աւետարան»-ի ուշագրավ դրվագներից շափածոյում տեղ է գտել նաև Մարիամի և Գաբրիել հրեշտակապետի երկխոսությունը, որտեղ Մարիամն ընդդիմանում է հրեշտակի խոսքերին՝ մատնանշելով նախամայր եվայի տխրահռչակ փորձությունը սատանայից: Այս դրվագին հաջորդում են Մարիամի այցը Եղիսաբեթին, Հովսեփի տեսիլը, և ի վերջո, Հիսուսի ծննդյան և մոգերի այցելության հակիրճ պատմությունները: Այս վերջին հատվածի մասին հարկ է նշել, որ այն ներկայացնելիս հեղինակը թեև հետևել է «Մանկութեան աւետարան»-ին, այնուհանդերձ, զարմանալիորեն չի հիշատակել ո՛չ եվայի հայտնվելը, ո՛չ էլ երեք մոգերի՝ Մելքոնի, Գասպարի և Բաղդասարի անունները, կերպարներ, որոնք սկզբունքային նշանակություն ունեն խնդրո առարկա պարականոնում:

Տաղն ավարտվում է հեղինակի գրած հիշատակարանով՝

Քեզ փառս վերառախեմք, արբայ՝ նորածին,
 Որ ես անժամանակ ծընունդ անբըննին,
 Ընդ Հօր քու և Հոգոյդ յաւէտ փառակցին,
 Յայժմուս և յապագայն, միշտ յախտենին:

Ես՝ Առաքել, մեղօփս լըցեալ յաշխարհի,
 Որ ի նախնին սկըսայ և յառաջ եկի,
 Լալով զձեզ աղաչեմ, որդի՛ք Սիոնի,
 Որ լի սրտիս ասացեմ՝ Աստուած ողորմի:

Բաղիշեցու այս ստեղծագործությունը, որ զարմանալիորեն երբևիցե չի հրատարակվել, ամբողջությամբ առկա է Մատենադարանի 8 ձեռագրում՝ ՄՄ 1981, 1661, 3081, 7327, 1682, 33, 2004, 1636⁶: Հնագույնը՝ ՄՄ 1981-ը համառոտ ձեռագրացուցակում ներկայացված է որպես ԺԴ. դարի ձեռագիր,

⁶ Տաղն ամբողջությամբ կամ մասնակիորեն պարունակող ձեռագրերի շարքը տե՛ս Հ. Անասեան, Հայկական մատենագիտություն, Ե-ԺԸ. դդ. 5. Ա., (Երևան 1959) 1118-1120:

իսկ ընդարձակում՝ ժԳ., այնուհանդերձ, հաշվի առնելով, որ տաղի հեղինակը ապրել և ստեղծագործել է ժԴ. դարի վերջին և ժԵ. դարի սկզբին, այն պետք է առնվազն ժԵ. դարասկզբին գրված լինի: Մյուս ձեռագրերը համեմատաբար ուշ են ընդօրինակվել՝ ժԶ-ժԸ. դարերում:

Բնագիրը կազմել ենք՝ հիմք ընդունելով ՄՄ 1981 հնագույն ձեռագիրը, որը համեմատել ենք վեց ձեռագրի հետ՝

- | | |
|--------------------------------|-------------------------------|
| Ա – 1981 (ժԵ դ. °), 92ա-98բ, | Ե – 3081 (1617 թ.) 222բ-234, |
| Բ – 1661 (1594 թ.), 136ա-151ա, | Զ – 2004 (1623 թ.), 91բ-103բ, |
| Գ – 7327 (ժԶ դ.), 88բ-104բ, | Է – 1636 (ժԷ-ժԸ դդ.) 10բ-26բ: |
| Դ – 33 (ժԶ դ.), 215ա-226ա, | |

ԱՌԱՔԵԼ ԵՐԻՑՈՒ ԲԱՆԻՔՈՒՆ ԵՒ ՇՆՈՐՀԱԼԻՑ ՔԱՀԱՆԱՅԻ ԱՍԱՅԵԱԼ
ԲԱՆ ՔԱՂՅՐԱՇԱՐ Ի ՆԱԽԱՀԱՅՐՆ ՄԵՐ ՍԿԸՍԵԱԼ Եւ ԿԱՐՃԱՌՕՏ
ՅԱՌԱՋ ԵԿԵԱԼ, ՄԻՆՁ Ի ԾՆՈՒՆԴ ՏԵԱՌՆ ՀԱՆԱՊԱՋ, ՈՐ ՓՐԿՈՒԹԵԱՆ
ՊԱՏՃԱՌ ԵՂԵԱԼ⁷

Աւրհնեալ Հայրն երկնատը, ծնօղ միածնին,
Գովեալ Որդին աննառ, ծընունդ ծոցածին,
Բարեբանեալ⁸ Հոգին՝ փառակից նոցին,
Որ տայ իմաստութիւն որդոց մարդկային⁹:

Յորժամ, որ ըստեղծ Աստուած ըզմարդն առաջին,
Նառ զկողն նորա, արար¹⁰ նմա կին,
Ասաց չուտել նմայ¹¹ ի միոյ պտղին,

7 Գ - Երգ պիտանի յԱռաքել վարդապետի Բաղիշեցոյ յաղագս մարմնանալոյ Բանին Աստուծոյ, ԲԵ Տաղ ակետեաց հրեշտակապետին՝ Մարիամայ և ծննդեան կուսին և սննդեան, փոխա ժԳ. և տունս ճԽ. ԴԶ Առաքեալ վարդապետի (Զ վարդապետէ) ասացեալ ակետատը ի սուրբ Աստուածածինն և (Զ + Ի) ծնունդն Քրիստոսի Աստուծոյ մերոյ է Առաքեալ վարդապետէ ասացեալ յաղագս մարմնանալոյ Բանին Աստուծոյ

8 է + Աստուած

9 է ազգիս հողածին *ի/իս* / որդոց մարդկային

10 է շինեաց

11 է նոցա

Որ է կենաց պատճառ և մահ մարդկային:

Յորժամ յանցեալ պատուերն Ադամ ի դրախտին¹²,

Եւ մերկացաւ զփառս հանդերձ Եւային,

Հանեալ արտաֆսեցան ճաշակման պտղին,

Նըստեալ ընդդէմ դրախտին, հանապազ լային:

Իսկ հայրն ամենախնամ, որ ըստեղծ զնոսին,

Եւ հոգով զարդարեաց իւրով պատկերին,

Նայ խոստացօ նմայ զՌդին միածին,

Կամաւ մարմին առնույ, ազատել զնոսին:

Այլ ծնունդֆ նոցա սերեալ և յառաջ եկին,

Ամենեֆեան հաւասար մահու մեռանին,

Ոմանֆ բարի գործովֆ զԱստուած սիրեցին,

Եւ այլֆ աղտեղութեամբ զաշխարհս լցին¹³:

Զմարմնանալ Բանին ազդէր առ նոսին,

Ի դարս և ի ժամանակս գուշակէր նոցին,

Առ նախնին Աբրահամ հիւր եկեալ նմին,

Հանդերձ երկու պետամ հրեղինաց դասին¹⁴:

Խոստանալով նոցա զաւետեաց Ռդին,

Զի ի ժամ ծերութեան նոքայ ծնանին

Ասէ. «Ի զաակէ քումէ ամէնայնֆ արհնին,

Որ է անեղ, անմահ և աննառ Ռդին»:

Այլև առ Յակոբաւ խորհուրդ ցուցանին,

Օձեալ վէմն օրինակ մարմնացեալ Բանին,

Սանդոփստ կանկնեալ¹⁵ յերկրէ ի երկին,

Հրեշտակֆ յերկնից¹⁶ իջին և մարդիֆ եղին:

Մովսէս տեսեալ զտիպ իջման Միածնին,

Ի լեառն¹⁷ բորբոքեալ հրով¹⁸ մորենին,

¹² է ի դրախտին *՛իս* / արարչին

¹³ է լցին *՛իս* / սիրեցին

¹⁴ է դասին *՛իս* / զընտին

¹⁵ Զ + լուսեղէն

¹⁶ է երկիր

¹⁷ է Սինեա

¹⁸ է հողմով

Անկէզ պահեալ զնայ հուրն աստուածային

Որ գուշակէր զխորհուրդ սուրբ Աստուածածնին:

Դարձեալ յետ Մովսէսի այլ տեսանողք յայտնին,
Որք խօսէին¹⁹ զխորհուրդ մարմնանալ Բանին,
Ոմանց ի յերազի շնորհօք յայտնէին,
Եւ այլք ի յարթնութեան զծածուկսն տեսին:

Դաւիթ խօսի զիջումն Աստուծոյ Բանին,

Եւ բարբառէ հոգով յայտնի ըզնորին,

Իջցէ որպէս զանձրև ի վեայ գեղմին,

Որպէս ըզցաւ ցօղեալ յերկիր ըստորին:

Այլև Ամովսաժին տեսողն Եսային,
Ասաց²⁰ զհրաշափառ ծնունդ Յիսուսին,
Թէ կոյսն առանց սերման յղանայ զՈրդին,
Մնանի ընդ մեզ Աստուած անճառ, անբննին:

Եղիայի տեսեալ զգալուստն նորին,

Ի լեառն Քորեբայ հողմով փաղցրագին,

Այլև իջևանիլ նորա առ յայրին,

Ի տիպ կենաց հացին, օծութեան²¹ շնորհին:

Եղիսէոս, որ էր աշակերտ նորին,
Նայև յառնէ զխորհուրդ շնորհաց մարդկային,
Ջրովն մաքրելով զախա²² Նեէմանին,
Որ ցուցանէ զխորհուրդ սուրբ աւագանին:

Եզեկիէլ տեսող կառացըն երկնային,

Պատկեր չորեքկերպեան²³, ի ներքոյ²⁴ նորին,

Զլինելոցն յառաջ ծանուցեալ նմին²⁵,

19 է հոգով
20 է տեսեալ
21 Դ աստուածութեան
22 է գաղտ
23 է չորեքկուսի
24 է ի վերայ
25 է Զլինել նորայ առաջ այտնի ծանուցին

Բաց յայտնէ ըզչորիցն անտարանին:

Երեմեայ խաւսի վասն միածնին,
Ընտրեալն ի յարգանդէ ըստ հոգէ՝ պատմին,
Մեզ երեւաց հոգի՝ ասէ զկուսածին,
Այլև օծեալ Քրիստոս անուանէ նմին:

Նա և²⁶ Յունանու արդեամբք ցուցանին,

Իջմամբ երեմ արեայ ի փորն կետին,
Յարինակ է արար²⁷ թաղման Միածնին,

Այլև սուրբ յարութեան յատու երրորդին:

Դանիել տեսեալ ըզծնունդ կուսածնին²⁸,
Առանց ձեռին հատեալ ի լեռնէ վիմին,
Զպատկերն խորտակեալ զչար բանսարկուին,
Լցեալ զտիեզերս փարոզ հրամանին:

Այլև երեմ մանկունքն ի մէջ հընոցին,

Տեպեամբն շորրորդին խորհուրդն յայտնին,

Զիջումն Միածնին ի մէջ մարդկային,

Զհուր մեղաց շիջոյց զվառեալն ի դրախտին:

Այլև բազում մարդիք հոգով խաւսէին,
Զտնօրէնութիւն նորա ի մեզ ազդէին,
Մինչև եկեալ ծնունդն Յովակիմ հասին,
Եւ ի յԱննայ, որ է մայր ծնաղ ի Բանին:

²⁶ է այլև
²⁷ է կենարար
²⁸ է կուսին

Վասն Յովակիմայ և Աննայի և
աւետեացն, որ առին և ծննդեան կուսին²⁹

Եղև այր մի արդար յորդոցըն Յուպայ³⁰,
Անուն իւր Յովակիմ, և կընոջն Աննա,
Անցեալ էին ատուրֆ տղայութեան³¹ նոցա,
Զաւակ ոչ ունէին ի յերկրի վերայ:
Յատուր միում ելեալ տանէին ընծայ
Տաճարին Աստուծոյ, որպէս գրեալ կայ,
Արշառս, այլև ոչխարս ի հաւտից նորա
Միթէ Տէր քաղցրանայ, նոցա զաւակ տայ:
Իսկ քանանայն Ռուփիմ³² խաւսի առ նմա³³,
Արգելեալ զՅովակիմ և զընծայս նորա,
Ասէ. «Զէ քեզ զօրէն բերել աստ ընծայ,
Զի դու ես անզաւակ և ժառանգ ոչ կայ»:
Տրամութեամբ Յովակիմ³⁴ դարձաւ առ Աննա,
Զոր ինչ եղեալ առ նա պատմելով նըմա,
Ասաց. «Անմխիթար եմք յերկրի վերայ,
Զի Տէրն ոչ ընդունի ի մեզնէ ընծայ»:
Դարձեալ ասաց³⁵ կրկին առ կինն իւր Աննա.
«Ահա երթամ ի լեառն, ուր խաշիմֆն իմ կայ,
Դու կա՛ց աստէն ի տուն և աղօթս արա,
Մինչև Տէրն երկնային ի քեզ³⁶ քաղցրանայ»:

29 ԶԳ Վասն Յովակիմայ և Աննայի Ե Վասն Յովակիմայ և Աննայի ակետմանն Բ Վասն ծննդեան Մարիամու և ակետմանն հրեշտակին զսուրբ կոյսն Գէ Վասն յղանալոյ Աննայի ամենաւարհմեալ Մարիամու (է Մարիամ սուրբ Աստուածածնին)

30 է Ուղա

31 Ե յըղութեան

32 ԲՎԴԶԵՆէ չ/բ

33 Դ Աննայ

34 էԳ Յովակիմ տըրամեալ:

35 Բ + լալով

36 ԳԶԴԵ մեզ

Յառուր միում ելեալ ի տանէն Աննա,
Նստեալ ի մէջ դրախտին³⁷, անդէն ի լաց կայ,
Տեսեալ ի նեղ ծառին ձագ մի հատու³⁸ կայ,
Եւ մայրն ուրախացեալ ի վերայ նորա:

Յայնժամ ի սիրտ խոցեալ մորմոճելով նա,
Ասէր. «Վա՛յ ինձ, որ նման թռչնոյ մի չեղայ:
Ես եմ խիստ տարակոյս, սիրտ իմ տրտում կայ,
Զի չկայ ինձ օրինակ ի յազգէն Դեայ»:³⁹

Իսկ Տէրն ամենայնի գրթացաւ ի նա,
Եւ պետըն հրեղինաց⁴⁰ էջ յայնժամ առ նա,
Ասէր. «Տամ աւետիս այսաւր քեզ, Աննա,
Զաւակ դու ծընանիս՝ պարծանք Ադամայ»:

Եւ նոյն հրեշտակապետն, որ էջ առ Աննա,
Գնացեալ յանապատին, զնոյն աւետիս տայ,
Եւ Յովակիմ իջեալ՝ անդէն ի տուն գայ
Աւետեն զմիմեանս ըստ⁴¹ գրեալ կայ:

Կամաւն Աստուածային Աննա յըղանայ,⁴²
Ծնանի զտըղայն անբիծ, որ փրկութիւն տայ,
Բոլոր Իսրայէլի ազգն ուրախանայ,
Զի զշնորհս հոգոյն տեսին ի վերայ նորա⁴³:

³⁷ Գէ ծաղկոցին

³⁸ ԲԳԳԵԶԷ ձագս հատուց չիս ձագ մի հատու

³⁹ Գ ստորին լուսանցքում այլ ձեռքով՝
Զի հայիմ ես յանասունս, ի ծնունդ յանումն է,
Զթռչունս երկնից դիտեմ՝ անբիւ երամ է,
Տեսնում և զգազանս և յաւելումն է,
Դառնամ և յիս հայիմ՝ կեանքս իմ հարամ է:

⁴⁰ Ե հրեշտակաց

⁴¹ ԲԳԳԵԶԷ որպէս

⁴² Դ + Եւքն ամիս է և է օր յարգանտի պահեալ կայ

⁴³ ԶԴ չիք տողը

Վասն ծնընդեան⁴⁴ կուսին⁴⁵ Մարիամու և ընծայելոյն ի
տանարն և յանձնելոյն զնա Յովսէփայ⁴⁶

Եթն ամսոյ սուրբ կոյսն տրղայ ծնանի,
Եւ հինգ օր ակելի անդրանիկ կոչի,
Անունն Մարիամ սիրով յորչորչի,
Որ և լուսատրեայ ի մերս թարգմանի:

Քանզի լուսատրեաց զհոգիսն ի բանտի
Աննառ, անեղ լուսովն, որ իւրմէ ծագի,
Զի նա է ազատիչ նախնոյն Եայի,
Եւ մերկութիւն նորա սովաւ ծածկեսցի:

Երից ամաց եղեալ տրղայն ցանկալի,
Ուխտեալ պատարագօք ի տանար բերին,
Զեռամբ քանանային Զաբարիայի
Սուրբ կոյսըն Մարիամ հոգով պահեսցի⁴⁷:

Շընորհն Աստուածային ի նա ծագեսցի,
Կամաւ ի ծընողացն իւր բաժանեսցի,
Զի բան մարգարէին Դաւթի կատարի,
Թողոյ զնա հայրն և մայրն, և Տէրն ընկալցի⁴⁸:

Աւրստարէ հոգով սուրբ կոյսըն բերկրի,
Ի հրեշտակաց երկնից նա սպասատրի,
Զեռամբ հոգետրացըն⁴⁹ նա կերակրի,
Ի յանմահից դասուցըն փառատրուի:

Խոնարհ և հեզութեամբ կայր ի տանարի,
Արթուն և տփնութեամբ առ Տէր պաղատի,
Աւրհներգութեամբ ընդ Տեսուն միշտ խօսակցի,

44 ԴԳ + ամէնարհնեալ է + սուրբ

45 Զ Աստուածածնին

46 ԳԴ Մարիամ եւ Մարիամու փխ Մարիամու և... Յովսէփայ ԲԶ չիք իս Մարիամու և... Յովսէփայ

47 ԲԳԶ օրհնեսցի

48 ԴԶ չիք քառատողը

49 ԲԳԴԵԶէ հողեղինացըն

Անբիծ, սուրբ և մաքուր՝ որպէս զաղանի:

Ունկըն դընէր գրոցըն նա ամենայնի,

Լսէր զբանն Եսայեայ⁵⁰, թէ կոյսն յըղասցի,

Ասէր, թէ երանի, ում այս հանդիպի,

Զգիտէր, թէ ամենայն ի նա կատարի:

Այլև բազում կուսանճ կայր ի տաճարին,

Որոց⁵¹ ամենայնի նա գլուխ կարգի,

Խրատիչ, ուսուցանող իսկ նոցա լինի:

Զի վեհագոյն էր նա հրեղինաց գընդի⁵²:

Մինչ տասնուչորս տարին⁵³ աւարտեալ լինի,

Կուսին Մարիամու ի սուրբ տաճարի,

Արդարոյն Յովսէփայ նա յանձին լինի,

Զի սրբութեամբ պանէ՛ մինչ Տէր կամեսցի:

Իսկ ի գաւազանէն սրբոյն⁵⁴ Յովսէփի,

Որ էր ի տաճարին վասըն վիճակի,

Աղանի մի սպիտակ, ի նմանէ թրոչի,

Եկեալ ի Յովսէփայ գրյուխըն հանգչի:

Վասն տանելոյն Յովսէփայ զՄարիամ ի տուն իւր
և վասն աւետեաց հրեշտակապետին Գաբրիէլի⁵⁵

Առեալ Յովսէփ տարաւ զկոյսն Մարիամ,

Ի գեղըն Նազարէթ, որ է իւր բնական⁵⁶,

Ի տանն իւրում նստոյց զտունն Աստուածութեան,

Որ էր ամենեցուն պատճառ փրկութեան:

50 ԲԳԴԵԶԷ տեսողին

51 ԲԳԴԵԶԷ կուսից

52 ԴԵԶ դասի

53 ԲԳԴԵԶԷ ամին

54 ԲԳԴԵԶԷ մեծին

55 Դ Վասն անձնելոյ զկոյս ի Յովսէփայ և օտեսաց Գաբրիէլի, Ե Վասն տալոյ զսուրբ կոյսն ի Յովսէփի, Է Վասն անձնելոյ զկոյսն առ աստուածահայրն Յովսէփի, Բ Վասն տանելոյն զսուրբ կոյսն ի Յովսէփի, Զ Վասն անձնելոյ զկոյսն Յովսէփայ և աւետեացն Գաբրիէլի, Գ Վասն անձնելոյ զսուրբ կոյսն առ աստուածահայրն Յովսէփի:

56 Զ բնակարան

Խրատէր ըզՄարիամ սիրով, սրբութեամբ,
Ուսուցանէր նրմա վարժ պարկեշտութեան,
Խոնարհ և հեզ լինել կամօք տիրական,
Եւ նա գնացեալ ի գործ իւր արեստութեան:

Հրամանն Աստուածային այն արարչական,
Անտես, անուր, աներբ և անզըննական,
Յիշեաց ըզմարդն անկեալ ի ծառայութեան,
Եւ գրթացաւ ի նա սիրով հայրական:

Կոչեաց ըզԳաբրիէլ՝ պետըն վերնական,
Եւ առաքեաց յերկիրս այս ըստորական,
Ասաց. «Երթ ի յականջ կուսին մաքրական,
Եւ պատրաստեա տեղի գնա Աստուածութեան:

Քանզի ոչ հանդուրժեմ չարին ինքնական,
Որ է գերիվարեալ զազգս որդոց մարդկան,
Իջնում և ազատեմ ի ծառայութեան,
Լընում գտել անկելոց հաւտիս տիրական:

Աղամ, որ ցանկացաւ նա աստուածութեան,
Չեղև հասու կաման իւր իշխանութեան,
Եւ մարդ լինիմ յերկրի մարմնով նիւթական,
Հանեմ ի գերագոյն փառս աստուածութեան»:

Իջեալ պետըն հրեղէն սաւառնանըման,
Եկեալ առ Մարիամ՝ կոյսն անապական,
Ասէ. «Քե՛զ երանի, հա՛րսըն վերնական,
Անեղ, անժամանակ Բանին մարմնարան:

Ուրա՛խ լեր ի յոգի, բերկրեա՛ լղ աննըման,
Զի Տէր ընդ քեզ լիցի և Բանըն հայրական:
Միայն դու ընտրեցար ի յորդոց մարդկան,
Անտանելի յոսոյն արժան օթարան:

Բարձօղ դու անիծից պըտղոյն հաշակման,
Եւ զմար քում՝ Եայի, գերկունսն նահանջման
/94բ/ Վիրացն, որ ի յոգի դեղ բժըշկութեան,
Բացօղ դրախտին, կենաց ծառ անմահութեան:

Միայն դու ի կանայս արժան գովութեան,

Սափոր մանանային, ծաղկեալ գաւազան,
 Բուրվառ հըրով լըցեալ հոռ անմահութեան,
 Տախտակ գըրոյն կենաց լեռոն աստուածութեան»:

Պատասխանի կուսին⁵⁷

Յորժամ լըւաւ սուրբ կոյսն գբանն ի հրեշտակէ,
 Այլև գհրեղէն բարբառն, որ մարմնատր չէ,
 Ի սիրա զարհուրեցաւ, մարմինըն⁵⁸ սարսէ,
 Թեպէտ ուրախութեան ձայն աւետեաց է:

Ետես ըզտիպ նորա, զի ահատր է,
 Լըւաւ ըզձայն նորա, զի սփանչելի է,
 Զգիտէր, թէ ինչ պատճառաւ առ նա եկեալ է,
 Կամ թէ յերկնատրաց, թէ յերկրատրաց է⁵⁹:

Յայնժամ պատասխանեալ նորա և ասէ,
 «Թէ յո՞ր երկրէ իցէ, կամ յի՞նչ եկեալ է,
 Կամ յո՞ր թագատրէն նա առաքեալ է,
 Կամ ո՞ր մեծ արքայի նա կարապետ է:

Ասէ, թէ տէրըն քո ի յո՞ր աշխարհէ,
 Կամ յորո՞ւմ նահանգի իշխանատր է,
 Կամ՝ որպէ՛ս զֆեզ առ իս նա յուղարկեալ է,
 Զի նա յինէն անտես և անձանօթ է⁶⁰:

Եթէ հուրդ ահատր նորա ծառայէ,
 Ապա հոր Տեանն քո զաշխարհըս կիզէ:
 Եթէ ի ձայնէ քումէ մարմինս իմ սարսէ,
 Ապա ձայն Տեանն քո գերկիր դըղըրդէ⁶¹:

⁵⁷ Բ + հրեշտակին ԳԶ Պատասխանեալ կոյսն հրեշտակին և ասէ ԳԵ առնէ հրեշտակին սուրբ կոյս է տա սուրբ կոյսն ընդ հրեշտակին

⁵⁸ ԲԴԵԶ Մարիամ

⁵⁹ Զ յերկնից իջեալ, թէ երկրատր է ե յերկնից իջաւ, կամ մարմնատր է: +երկրատր է

⁶⁰ Բ -ում այս քառատողը բացակայում է:

⁶¹ Քառատողի վերջին երկտողը ԲԵ- ում փոխարինվում է հետևյալով՝
 Բայց ի Տեաննէ քումմէ քեզ հրամայեալ է,
 Յորդոց մարդկան կարգեալ սպասատր է:

Եթէ քո կերպարանդ անեղակերպ է,
Ապա զՏէրն քո տեսնույ ո՞վ կարէ,
Եթէ քո պատմունանդ լուսապայծառ է,
Ապա երկինք և երկիր նորա ըզգեստ չէ՞⁶²:

Եթէ ի բարբառոյ քո հուր բորբոքէ,
Ապա և ըզՏէրն քո ըզվէմըս հալէ,
Թէ ի խասից քոց կայծակ հատանէ՞⁶³,
Ի հրամանէ նորա երկիր դողասցէ:

Յորժամ զժառայդ տեսի, ան զիս պատեալ է,
Ապա և Տէրն քո ո՞վ ոք հանդարտէ,
Եթէ զօրավարիդ՞⁶⁴ տեսիլդ անեղ է,
Ապա թագաւորիդ զարմանալի է:

Եթէ ձայնիդ քոյին հոգիս ոչ բաւէ՞⁶⁵,
Ապա զնա ընդունել ինձ անհրնար է,
Ծառա՞յ ես դու, թէ Տէր՝ ըզստոյցն ինձ պատմէ,
Քանզի ի խօսից՞⁶⁶ քոց հոգիս իմ սարսէ:

Եւ զի՞⁶⁷ անփորձ եմ ես յորդոց մարդկանէ,
Եւ կուսութիւնս իմ՞⁶⁸ անապական է,
Արդ, Տէրն քո երբէք զիս տեսեալ ոչ է,
Զի՞արդ ըզգեզ նա առ իս առաքեալ՞⁶⁹ է»:

Դարձեալ ասէ հրեշտակն⁷⁰

Պատասխանեալ կուսին հրեշտակն երկնաւոր,
Որ էր բերեալ նմա ձայն անտաւոր,

62 ԴԶ զգեստ է

63 ԴԶ իջանէ

64 ԳԵ զարականի

65 Ե լըռէ

66 ԳԵ բանից

67 է քանզի

68 ԳԵԶէ առ իս

69 ԳԳԵԷ ողարկեալ

70 ԲԳԵԷ Պատասխանեալ (Գ Պատասխանի առնէ) հրեշտակապետին (Գէ հրեշտակապետն) Գարբիէլի (Գէ չիք) առ կոյսն (Գ սուրբ կոյս ե + Մարիամ է սուրբ կուսին Մարիամու) ԴԶ Ասէ հրեշտակն սուրբ կուսին

Եւ է վերջին դասուն նա իշխանաւոր,

Որք են որդոց մարդկան կարգեալ սպասաւոր⁷¹:

Ասաց. «Մի՛ երկնչիր դու, հա՛րսն երկնաւոր,
Ընտրեալ յագգէ մարդկան, տանար բանաւոր,
Ի քեզ իջեալ բնակի անմահ թագաւոր,
Որ է հրանիւթ գաւրացն, անհուպ մերձաւոր:

Անպատմելի շնորհաց դու արժանաւոր,

Անշէջ լուսոյն ծագաւ յերկրի նիւթաւոր,

Աթոռ քառակերպեան, քրովքէ մարմնաւոր,

Իննեակ բարբունս⁷² սեռիցն վեհ և փառաւոր:

Արդ, Տէրն իմ և արքայն, Որդին միաւոր,
Ծընունդն Հօր՝ Աննառ, Անեղն, Ահաւոր,
Ի քեզ իջեալ՝ զգեճու մարմին կամաւոր⁷³,
Անժամանակն յերկրի ժամանակաւոր:

Հոգին սուրբ եկեսցէ ի քեզ հրաշաւոր,

Եւ գօրութիւն վերնոյն⁷⁴ քեզ հովանաւոր

Քանզի ծընեալն ի քէն Տէր և թագաւոր,

Որդի է Աստուծոյ և հաասար Հօր:

Անտես է հրեղինաց և անմերձաւոր,
Զնա ո՛չ կարէն հայել քերօքէ⁷⁵ բազմաւոր,
Քայց ի քեզ հանեցաւ, սուրբ կո՛յս մարմնաւոր,
Զի քն ազատեսցէ զկապեալն իննաւոր:

Քանզի նա, որ ըստեղծ զԱդամ փառաւոր⁷⁶,

Եւ հոգով զարդարեալ կացոյց թագաւոր,

Զոր նա արտաբնեցաւ մտօք⁷⁷ կամաւոր,

Յանմահական դրախտէն յերկիր փշաւոր⁷⁸:

71 Բ չիք ճ քառատող՝ եքէ քո կերպարանդ անեղակերպ է... կարգեալ սպասաւոր

72 Բն դասունս Գ բարբունս ԴԶ հրաբուն է հրաբոյն

73 Գէ նիւթաւոր

74 ԴԶէ ի վերնոց

75 Գէ կարէ տեսնուլ քրովքէ չիս կարէն հայել քերօքէ

76 Բ բանօր Ե բառաւոր

77 Բ կամօք

78 Բ փառաւոր Դ չիք քառատողը

Դարձեալ նոխացուսցէ լուսովն ահաւոր⁷⁹,
Առնէ⁸⁰ յարագուարն մըշտընջենաւոր,
Դու մի՛ զարհուրեսցիս, կո՛յսդ⁸¹ երանաւոր⁸²,
Զի քն պարգևեսցի բարիք բազմաւոր:

Այն, որ ստեղծ յանէից գիրեշտակս լուսաւոր,
Զտարերբս քառակի զմարդըն բանաւոր,
Ի քէն մարմին առնու նա անսերմնաւոր,
Ծնանի անախտաբար անֆակ միաւոր:

Կուսին արտաֆստեցաւ նանխնին յանցաւոր,
Եղև առիթ մեղաց մահուն պատժաւոր,
Արդ, դու նըմին փոխան, կոյսըդ⁸³ բերկրաւոր⁸⁴,
Բարձօղ մեղաց նոցին քրտանցըն երկրաւոր»:

Պատասխանի տուեալ սուրբ կոյսն ասէ ցնա⁸⁵
Յայնժամ ասաց սուրբ կոյսն հրեղէն⁸⁶ զըւարթնոյն,
Խօսի առ նա բանիւ յոյժ զարմանագոյն,
Զի զօրացեալ էր նա ի Սըրբոյ Հոգոյն,
/95բ/ Եւ հովանաւորեալ իսկ ի բարձրելոյն:

Ասէ. «Տո՛ւր ինձ տեղի խօսել մեղմագոյն,
Եւ մի՛ դու բարկանար⁸⁷ ի պետրդ խըստագոյն⁸⁸,
Քանզի ի բանից քոց աննմանագոյն,
Պատեալ է զիս դողումն և ահ սաստկագոյն:

79 Բե երկնաւոր

80 ԴԶէ առնէ զնա

81 Բ սուրբ կոյս

82 Բե ահաւոր

83 Բ սուրբ կոյսդ

84 Բ եկրօռ

85 ԲեԶէ Պատասխանեալ (է Պատասխանեաց) սուրբ կոյսըն հրեշտակապետին Գաբրիէլի (Զ հրեշտակին Բ + և ասէ այսպէս է առ հրեշտակապետն և ասէ) Գ Պատասխանի սուրբ կոյսն Գ կոյս ի հրեշտակն և ասէ Բ Պատասխանեալ սուրբ կոյսն հրեշտակապետին Գաբրիէլի և ասէ այսպէս, է Պատասխանեաց սուրբ կոյսն առ հրեշտակապետն և ասէ, Ե Պատասխանեալ սուրբ կոյսըն հրեշտակապետին Գաբրիէլի, Զ Պատասխանեալ սուրբ կոյսն հրեշտակին, Գ Պատասխանի սուրբ կոյսն:

86 ԲԳե մեծի

87 ԳԶ խտանար

88 Գ գերագոյն

Ես չեմ արագալուր բանին կակղագոյն,
 Որպէս մայրն իմ Եայ հաշակմամբ պտղոյն,
 Զի, թէ հարցեալ էր նա զբանն փաղցրագոյն⁸⁹,
 Զկարէր ըզնա խաբել փութով բանասարկուն:

Նորա աստուածանալ ասաց ի ծառոյն,
 Եւ ինձ ծնանիլ զԱստուած ատես յայտնագոյն,
 Եթէ ոչ արասցես բանիս մեկնութիւն,
 Ես ոչ լինիմ հաւան խաւսից⁹⁰ ծանրագոյն⁹¹:

Թէ չէր հաւան կացեալ մայրն իմ նախագոյն,
 Ոչ էր տուեալ նրմա զերկունս տարմագոյն,
 Այլ, տու՛ր ինձ հարցանել զբան հշմարտագոյն,
 Եթէ ոչ ես խաբող՝ նրմանեալ նախնոյն⁹²:

Զարմանալի է ինձ բանս և խըստագոյնս,
 Զունիս այլ արիւնակ յերկրի մարմնագոյն,
 Ի ծնունդս Ադամայ ստեղծեալք ի հողոյն,
 Ոչ է ստեղծեալ⁹³ ծընունդ անմերձ ի յայրոյն:

Արդ, ո՞ր արտ ետ ցորեան առանց ցանելոյն,
 Կամ ո՞ր ծառն ետ պըտուղ առանց տընկելոյն,
 Արդ, ո՞ր որթ ետ ողկոյզ⁹⁴ առանց գործելոյն,
 Այդ չէ եղեալ երբէք ի ստեղծանելոյն:

Ո՞վ է տեսեալ ըզկոյս ծընեալ ինքնագոյն,
 Անփորձ ի մարդկանէ անարատագոյն,
 Եւ մայրըն կոյս մնացեալ⁹⁵ ի ծնանելոյն,
 Ծընեալն Աստուած անհաս, հրաշափառագոյն:

⁸⁹ ԲԳԵ մեղմագոյն

⁹⁰ Գ բանից

⁹¹ Բ չիք քառատողը Գ Այլ տու՛ր ինձ հարցանել բան հշմարտագոյն, / Եթէ ոչ ես խաբող՝ նմանեալ նախնոյն փ/ս Եթէ ոչ արասցես բանիս մեկնութիւն, / Ես ոչ լինիմ հաւան խաւսից ծանրագոյն

⁹² Գ ում վերջին երկտողը փոխարինվում է հետևյալով՝

Ապա թէ ոչ արասցես բանիս մեկնութիւն,
 Ես ոչ հաւան լինիմ խաւսից ծանրագոյն:

⁹³ ԳԳԵԶ եղեալ

⁹⁴ ԲԳԵԶ պըտուղ Գ խաղող

⁹⁵ Ե կացեալ

Արդ, անհնարին է բանդ անհաստատագոյն,
Զի չկայ նման յերկրի⁹⁶ այդմ իրաւագոյն,
Ո՛վ ոք լսէ զայդ բանդ անյարմարագոյն,
Կատակ թըլի նըմա և իր ծաղրագոյն:

Բայց մեկնութիւն արա՛ բանիս վեհագոյն,
Քանզի զարհուրեալ եմ յոյժ ահագնագոյն,
Զիա՛րդ ինձ լինիցի ստեղծեալս ի հողոյն,
Լինել մայր բարձրելոյն⁹⁷ Բանին Աստծոյն»:

Ասէ հրեշտակն ասէ կուսին⁹⁸

Դարձեալ պետըն հրեղէն պատասխանի տայ,
Կուսին Մարիամու և խաւսի առ նայ,
Ասէ. «Մի՛ երկընչիր, այլ բերկրեալ ցընծայ,
Դու ես կենաց պատճառ, բացօղ աղինայ:

Զի մահն տարածեալ կողիւն Ադամայ,
Բառնի քե յաշխարհէ սուրբ կոյս Տալիթայ,
Եւ կեանքն անպատմելի⁹⁹, որ է անտես նա,
Ի քէն տեսաւորի, լոյս երկրի¹⁰⁰ տայ:

Արդ¹⁰¹, խորհուրդ երկրաւոր ի քէն վերանայ,
Եւ մի՛ դու այլ քննէ՛ որպէս լինենայ,
Զի չէ նման մարդոյ ծնունդն նորա,
Այլ վեհագոյն մտաց անքննելի կայ¹⁰²:

⁹⁶ Դ ի վերայ երկրի

⁹⁷ Բե եւ լինել բնակարան

⁹⁸ Բ Ասէ հրեշտակապետն սուրբ կուսին Ե եւ ասէ հրեշտակն այսպէս ԴԶ Պատասխանեալ հրեշտակն կուսին և ասէ Գ Պատասխանեալ հրեշտակն ասէ սուրբ կոյս

⁹⁹ Բե անապական

¹⁰⁰ ԲԳԴԵԶ աշխարհի

¹⁰¹ Բ այսաւր

¹⁰² ԳԴԵԶԷ + Յորժամ լըայ յերկինս գհրամանս նորա, / Թէ՛ էջ փութով յերկիր առ կոյսըն գնայ, / Ես ոչ քննել հարցս զիշումըն նորա, / Քանզի զձայնըն լուս, այլ տեսեալ չեմ գնա:

Այլ, որ ի տարերաց գմարդն ստեղծեաց նա,
 Եւ ի կողէն էառ շինեաց կին նրմա,
 Նոյն ինքն առանց սերման ի քէն մարմնանայ,
 Անեղ Բանն Աստուած ի քէն թանձրանա¹⁰³:

Անտանելին երկնից բովանդակի նա,
 Եւ հուրն անմատչելի ի հող միանայ,
 Արփայն արարածոց տըղայ լինենայ,
 Զծառայ եղեալ զպատկերն ազատեսցէ նա:

Յերկրի տեսաւորի կերպին Ադամայ:
 Եւ ի ծոց հայրենի նա անպակաս կայ,
 Որպէս գմարդ ծընանի զերկունսն բառնայ,
 Բայց¹⁰⁴ զկուսութիւնըդ քո ոչ խախտացէ նա:

Արդ, է անքննելի ծընունդըն նորա,
 Զոր ոչ յեղականացս ըզնայ գիտենայ¹⁰⁵,
 Այլ նա, որպէս կամի, իսկ¹⁰⁶ մարդ լինենայ,
 Զի անհնարիմքն մարդկան հնարք է նորայ:

Այլն ի ստուգութիւն բանիս¹⁰⁷ քեզ վըրկայ,
 Յուցից այլ սքանչելիս, որ յազգըն քո կայ,
 Եղիսաբէթ ամուլ, կին Զաբարիայ,
 Այս վեցերորդ ամիս, որ յըղացեալ է նա:

Եթէ ծառ գոսացեալ կրկին պըտտուլ տայ,
 Եւ չորացեալ արգանդ դարձեալ զաւակ տայ,
 Դու մի՛ լինիր անլուր, այլ ինձ հաւատա,
 Զի շատ բարեաց առիթ ի քեզ թափուն կայ»:

¹⁰³ ԴեՁէ բարձրանա

¹⁰⁴ Գէ այլ

¹⁰⁵ ԴՁ գիտել կարէ նայ

¹⁰⁶ Զ այնպէս

¹⁰⁷ է + բերեմ

Վասն հաւանութեան կուսին և յըղանալոյն և
երթալոյն առ եղիսաբեր¹⁰⁸:

Յորժամ լըւաւ սուրբ կոյսն և հաւանեցաւ,
Պետին Գաբրիէլի նա հնազանդեցաւ,
Ընդ ունկն գԲանն Աստուած փութով ընկալաւ,
Եւ թոյնմ մաւրն Եւայի յայնժամ սրբեցաւ:

Անպարագիրն յէից պարունակեցաւ,
Եւ էր լցեալ երկին և երկիրս նովաւ,
Ի կոյսըն Մարիամ կամաւ նա իջաւ,
Ի հայրական ծոցոյ ոչ բաժանեցաւ:

Սուրբ կոյսըն պանծալի հոգով բերկրեցաւ,
Հրրովն աստուածային նա բորբոքեցաւ,
Քառակերպեան աթոռ յերկրի յայտնեցաւ,
Զբազմեալն¹⁰⁹ ի քերովբէս ի յինքնն ընկալաւ:

Ի ետն արփեան շնորհօքն զարդարեցաւ,
Սափոր մանանային, կենաց կազմեցաւ,
Արևելք բանատր մեզ երևեցաւ,
Յորմէ արփին պայծառ¹¹⁰ յաշխարհ ծագեցաւ:

Յայնժամ բարձրեալ զԱստուած սիրով ընթացաւ,
Գընաց ի լեռնակողմն առ ազգն իւր հասաւ,
Ողջոյն տուեալ ամլոյն, որ էր յղացեալ,
Եւ նոյն ժամայն հըրաշքն յայտնի երևեալ:

Զի վեց ամսոյ տըղայն հոգով շարժեցաւ¹¹¹,
Ի յարգանդի ծնօղին զստեղծօղըն ծանեաւ,
Յորովայնի մօրն իւր յողջոյն մատուցաւ,
Ծառայն ըզթագօտրն յայնժամ իմացաւ:

108 Ե չիք վերնագիր Բ չիք և յըղանալոյն և երթալոյն առ եղիսաբեր ԳՁ Վասն հաւանելոյ սուրբ կուսին և յղանալոյն և գնալոյն առ եղիսաբեր Գ Վասն հաւանելոյ սուրբ կուսին բանից հրեշտակապետին: Եւ յղութեան Աստուածածնին և գնալոյն առ եղիսաբեր է Վասն հաւանելոյ հրեշտակապետին և յղութին սուրբ կուսին և գնալոյն առ ազգն իւր եղիսաբեր և ողջունել գնա

109 ԴՁ գրեկրեալն

110 ԳԴ անճառ

111 ԲԵ շրջեցաւ

Իսկ մայրն Եղիսաբեթ հոգով խօսեցաւ¹¹²,
 Երկրպագեաց կուսին յոյժ ուրախացաւ,
 Ասաց. «Ինձ այս շընորհիմ ուստի՞ պարգևեցաւ,
 Զի մայր թագաւորին իմ առ իս եկաւ:

Աւրհնեալ դու ի կանայս, նըմա ասացաւ,
 Զի Տէրն ամենայնի պտուղ քեզ ցուցաւ,
 Յորմէ հետէ ողջոյն քո յականջս անկաւ,
 Մանուկս յորովայնի իմում շարժեցաւ»:

Երեք ամիս Սուրբ Կոյսն առ նա արգելաւ¹¹³,
 Կարապետին սրբոյ¹¹⁴ ծընունդըն հասաւ,
 Որպէս անտաւոր ի դըժոխս իջաւ,
 Նոյնպէս յառաջագոյն, քան զՏէրն ծնաւ:

Յայնժամ Եղիսաբեթ եկեալ յոտս անկաւ,
 Կուսին Մարիամու առ նա խօսեցաւ¹¹⁵,
 Ասաց. Տա՛ր զարեգակնդ, որ աստ ծագեցաւ,
 Զի մի շիջցի նրագս, որ ինձ վառեցաւ¹¹⁶:

Դառնալ Սուրբ Կուսին ի տուն Յովսէփայ և
 Յովսէփայ հարցանելոյն յըղութեան¹¹⁷
 Յայնժամ դարձաւ սուրբ կոյսն ի տունն Յովսէփայ,
 Որ էր բարձեալ զԱստուած անմահիցն արքայ,
 Յերկրի պարունակեալ ի Նագարէթ գայ,
 Անանց յոյսն, որ ընդ Հաւր միշտ անպակաս կայ

Իսկոյն եկեալ Յովսէփ, տեսանէ զնայ,
 Ծանեաւ ստուգապէս զյղութիւն¹¹⁸ նորայ,
 /97ա/ Զի էր գոյնն փոխեալ կոյսըն Տալիթայ,

112 Բե ցընծացաւ

113 Զ կացեալ

114 Գէ մեծի

115 Բ շիբ տողը

116 Գէ բնագիրն այստեղ ավարտվում է

117 Բե Վասն հարցանելոյն Յովսէփայ և կամէր արձակել Մարիամ Դ Յովսէփ հարցախննեալ զնայ վասն յղութեան *փ/ս* Յովսէփայ հարցանելոյն յըղութեան

118 Զ զղանալ

Զկարէ զլուսն ծածկել, որ աստէն¹¹⁹ կայ:

Յայնժամ զարհուրեցաւ, յորժամ էտես զնա,
Յովսէփ¹²⁰ և սուրբ, յոր էր յանձնեալ զնա,
Տրտմեալ ամաւթալից տեսլեամբն նորա,
Զի զկոյսն էտես յղացեալ՝ անգիտակ նրմա:

Զկարէր յանդիմանել զանբիծ կոյսըն նա,

Գիտէր ըզսրբասնեալ մաքուր վարս նորա,

Այլև ոչ հանդուրժէր յայտնի գործոյն նա,

Եւ պատկառէր բանիւ հարցանել ըզնա:

Ապայ արտմտելով խաւսի առ նրմա¹²¹,
Ասէ. «Կո՛յս Մարիամ, զնշմարիտն ասա,
Թէ ով փորձեաց¹²² ըզբեզ յորդոց Ադամայ,
Եւ զանգին մարգարիտն քո գողացաւ նա:

Անբիծ սուրբ աղանի, զոր աշօք տեսայ,

Առաքինի վարուց քոց հաւանեցայ,

Արդ, ո՞վ հարթեաց ըզթև քո¹²³, ինձ դու յայտնեա՛¹²⁴,

Քանզի զարհուրելի գործ այսաւ տեսայ:

Զիա՛րդ զբեզ յանձն առի, յորժամ կոչեցայ,
Ընդէ՛ր քո քանանայիցն էս հաւանեցայ,
Ի ժամուս ծերութեան էս կատակ եղայ,
Զբեզ կոյս յանձին կալայ, պահել չկարացայ:

Ի մէջ Իսրայէլի նախատինք եղայ,

Ազգաց և օտարաց էս կոխան ցուցայ¹²⁵,

Քանանայից դասուն ո՞վ պատասխան տայ,

Յորժամ զբեզ տեսանեն ծանրացեալ նոքա:

Յորժամ ի տանարէն զբեզ կոյս ընկալայ,
Պահելով սրբութեամբ նոցա խոստացայ,

119 Դ անստուեր

120 ԴեՁ ընտիր

121 ԴՁ առ նմայ ասէ

122 Ե խաբեաց

123 ԴՁ հաղթեաց զբեզ

124 ԴՁ ասա՛յ, Ե պատմեա՛յ

125 ԲԴԵ եղայ

Զի՞նչ ասիցեմ յայնժամ, երբ կոչեն նո՛ւս,
Զունիմ պատասխան ի խաւել առ նոսա:

Արդ, եմ տարակուսեալ ի յերկրի վերայ,
Ընդէ՞ր¹²⁶ զքեզ մէն թողի և ի գործ ընթացայ,
Արդ, ո՞վ եմուտ առ քեզ, զնշմարիտն ասա՛,
Կամ¹²⁷ ըզքեզ խաբեաց, որ ես չիմացայ»:

Պատասխանեալ¹²⁸ Մարիամ Յովսէփայ և ասաց¹²⁹
Յորժամ խոնարհութեամբ պատասխան առնէ,
Արդարն յամենայնի առ նա խօսակցէ,
Մարիամ սրբունի¹³⁰ անարատ է¹³¹,
Բնութեանս Ադամային նա վեհագոյն է:

Հանդարտաբար խօսի առ նա և ասէ,
Արդարոյն Յովսէփայ պատասխան տացէ¹³²,
Զի շնորհօք սուրբ հոգոյն նա զարդարեալ է¹³³,
Եւ հարսն երկնաւորին նա կոչեցեալ է:

Ասէ. «Տէրն է վկայ բանիս, որ ըստուզ է,
Զի կուսութիւնս առ իս անապական է,
Որպէս ի տաճարէն զիս քեզ յանձնեալ է,
Նոյնպէս սուրբ, անարատ¹³⁴ զիս պահեալ է:

Արդ, հաւատա բանիս, զի նշմարիտ է,
Անփորձ եմ ես յառնէ յորդոց մարդկանէ,
Ոչ ոք ի մարդկանէ¹³⁵ առ իս խաւել[ա]լ է,
Ես չտեղեակ¹³⁶ այս, զոր սիրտ քո կարծէ:

Որ է գաղտնեաց գիտակ, որ զմիտան¹³⁷ քնննէ,

126 ԴՁ վա՛սն էր

127 ԴՁ + ո՞վ

128 ԴՁ + սուրբ կոյսն

129 Ե այսպէս չի/ս և ասաց Բ չի/ք և ասաց

130 Ե սրբունի կոյսն

131 ԴՁ որ անարատն է

132 ԲԵ առնէ

133 ԲԵ զարացեալ է ԴՁ հնազանդեալ է

134 ԴՁ + Նա

135 ԴՁ երկրատրաց

136 ԴՁ չեմ տեղեակ

137 Զ սիրտ քո, Դ սիրտս

Զծածուկս ամենայնինի նայ բացայայտէ,
Նոյն ինքնն սրբութեանս¹³⁸ իմոյ վրկայէ,
Զի մուտ և ել առ իս ոք արել¹³⁹ չէ:

Արդ, մի՛ իզուր դատել զիս, քեզ վընաս է¹⁴⁰,
Եւ մի՛ յանդիմաներ զանփորձս ի յառնէ,
Հոգին նշմարտութեան, որ զխորքս քննէ,
Զտարակուսանքս քո նայ իսկ լուծանէ:

Եւ թէ զարմանաս դու յայսմ խորհրդէ,
Թէ անընման յերկրի և անօրինակ է,
Յուցից քեզ օրինակ, որ նախ եղեալ է,
Եթէ սիրտ քո բանից իմ հաւատասցէ:

Արդ, որ ամուսնութեամբ զԱ.դամ ծընեալ է,
Բայց թէ ի յարարչէն նայ ըստեղծեալ է,
Եւ ինքնն՝ մայրն Եւային, ի նորին կողէ,
Որ թագաւորութեամբ¹⁴¹ նա յօրինեալ է:

Զորացեալ գաւազան, որպէս ծաղկեալ է,
Մեծին Ահարոնի, զոր գիրըն պատմէ¹⁴².

Արդ, խոյն Իսաբեկայ, որպէս¹⁴³ ծնեալ է,
Այն, որ ի մահուանէ զՍահակ փրկեալ է:

Եթէ ոչ դու հաւանիս¹⁴⁴ այսմ, որ եղեալ է,
Լսէ զբան տեսողին, զոր ասացեալ է¹⁴⁵,
Եսայիաս յայտնի բարձրաձայն գոչէ,
Ասէ, կոյսն յողացի, որ գայր տեսեալ չէ»:

Պատասխանեալ Մարիամու և հրեշտակն
ի տեսլեան գիշերոյ¹⁴⁶:

138 Բն կուտութեանս

139 ԴՁ արարեալ

140 ԴՁ մեղանք է

141 ԴՁ զուգաւորութեամբ Ե մերձաւորութեամբ

142 ԴՁ զորդիք վկայէ

143 ԴՁ զիս՝ րդ

144 Բն հաւատաս

145 Բն գիրըն պատմէ

146 Բն Դարձեալ Յովսէփ ասէ Մարիամու ԴՁ Պատասխանեալ Յովսէփ Մարիամու և տեսեալ զհրեշտակն ի տեսլեան գիշերոյ

Գարձեալ խօսի առ նա Յովսէփի հիացեալ,
Ասէ Մարիամն՝ կուսին սրբասնեալ,
Թէ՛ «Ահ և սարսափումն է զիս յոյժ պատեալ¹⁴⁷,
Վասարն գործոյ քոյին, որ աննրման լեալ:

Եթէ ի Սուրբ Հոգոյն ես դու լըղացեալ,
Ես չեմ արժան գործոյդ այդ սպասաւոր կալ,
Եւ թէ ի խաբմանէ մարդկան ես փորձեալ,
Ինձ չէ օրէն օտար ծնրնդոց ծառայ կալ:

Առդ, զայս¹⁴⁸ կամիմ առնել, գոր եմ իսկ խորհեալ,
Հանել զգեզ ի տանէս իմում ծածկաբար,
Զի մի՛ զիս նախատեն, ով ոք զայս լըւեալ,
Ընդ օրինաց վրնիս մահու ինձ հասեալ»:

Մինչդեռ զայս խօսեցաւ Յովսէփի սրբասնեալ,
Արձակել զՄարիամ՝ լըռելեայն¹⁴⁹ երթալ,
Հանգեալ նայ ի մահիբն՝ քննով ծանրացեալ,
Զի էր սիրտն տրտում և յոյժ դառնացեալ:

Իսկ ի մէջ գիշերին տեսեամբ զարհուրեալ,
Զի պէտն Գարբիէլ առ նայ փութացեալ,
Սարսափելի կերպիւ նըմա երևեալ,
Ի տեսանելն ըզնա ահիւ պակուցեալ:

Յովսէփ՝ որդի Դաթի, նըմին բարբառեալ,
Զդաւիթ հայր անւանէ, յորմէ նա սիրեալ,
Քանզի յորդոց նորին բանն խոստացեալ,
Կամաւ մարմին առեալ և յաթոռ նստեալ:

Ասէ. «Մի՛ երկընչիր, Յովսէ՛փ, հայր կոչեալ,
Մարիամնու Կուսին միայն անւանեալ,
Քանզի ի նմանէ ծընունդ իսկ յայտնեալ,
Ի շնորհաց Սուրբ Հոգոյն անայր յրդացեալ:

Ծընցի նա կուսութեամբ զԱստուած¹⁵⁰ մարմնացեալ,
Որ նախման զաւիտեանս անմայր է ծընեալ,
Յիսուս կոչի անուամբ Փրկիչ թարգմանեալ,

¹⁴⁷ ԳԶ կալեալ

¹⁴⁸ ԳԶ ես

¹⁴⁹ ԲԵ ըստ կամաց

¹⁵⁰ ԲԵ կուսէն

Զի զմեղս ի մարդկանէ նա կամի բառնայ»:

Զարթեալ Յովսէփ Արդարն և զկոյսն տեսեալ,
Իջեալ ծունր նըմա և երկրպագեալ,
Ասաց. «Թո՛ղ ինձ զյանցանս, սուրբ Կո՛յս երանեալ,
Քանզի զըրպարտեցի զֆեզ ոչ¹⁵¹ իմացեալ»:

Սկըսաւ կոյսըն յայտնել, զոր ինչ առ նա լեալ,

Զաւետիս հրեշտակին, որ առ նա եկեալ,

Լըւեալ զայն Յովսէփայ և ուրախացեալ,

Զծընօղն և ըզծնունդն փառաւորեալ:

Վասն հարցանելոյ ֆահանայիցն և վասն
ծնընդին Յիսուսի¹⁵² Քրիստոսի¹⁵³

Լեալ ֆահանայից գնոսա կոչեցին,
զՅովսէփ և զՄարիամ յոլով դատեցին,
Ըզջուրն փորձութեան նոցա արբուցին,
Անպարտ գըտեալ գնոսա և արձակեցին:

Հինգ օր և ինն ամիս աւարտեալ Կուսին,

Գընացեալ ի Բեղդանէմ ի յայրին իջին,

Զի բան մարգարէին¹⁵⁴ լըցեալ կատարին,

Որ էր հոգով խօսեալ յայտնի ըզտեղին:

Բազմի կոյսն ի յայրին, մայր թագաօորին,

Զի չկայր նոցա տեղի, որ իջանէին,

Ծնանի աղֆատարար¹⁵⁵ զարֆայն երկնային,

Զպատճառըն փըրկութեան Ադամայ զարմին:

Խանձարրաւ պատեցաւ զանձն աստուածային,

Ի յանբանից մըսուր եղաւ կամովին,

Զբնութիւն անբան եղեալ՝ ըստ մարգարէին,

Դարձեալ զարդարեցցէ պատուովն առաջին:

151 ԴԶ չար

152 ԴԶ Ծնընդեանն

153 Ե չ/ք E Վասն ծնընդեան կուսին զՅիսուս Քրիստոս

154 ԲԵ մարգարէին տառն /ի/ս բան մարգարէին

155 ԲԵ անախտարար

Երկիրս երկինք եղեն ծնընդեամբն Յիսուսին,
 Եւ այրըն գերագոյն¹⁵⁶ հրեղինաց գընդին,
 Անտես ի նոցանէ յաթոռ հայրենին,
 Տեսան ի յաշխարհի ազգի մարդկային¹⁵⁷:

Իջեալ զօրք անմարմնոցն յայնժամ ի յայրին,
 Պար առեալ՝ փաղցրածայն եղանակէին,
 Փառք ի բարձունս տային, զԱստուած արհնէին,
 Որ հաշտեցաւ Որդովն ըստ իւր պատկերին:

Լեւալ հովացն ըզձայն և զարհուրէին,
 Եւ զլոյսն շրջանակ անտ տեսանէին,
 Ահիւ ըմբընեցան և զարմանային,
 Թողեալ զհաստս իւրեանց և անդէն հասին:

Իջեալ պետըն հրեղէն՝ աւետէր նոցին,
 Ասէ. ձեզ աւետի՛ս, որդի՛ք Ադամին,
 Զի ծնաւ աւծեալ Փրկիչ ձեզ այսօր յայրին,
 Արքայն արարածոց ի փառք Դաւթին:

Իսկ բազմութիւն վերնոցն եղանակէին,
 Եւ հովիւքն նոցին ձայնակից լինին,
 Երկինք ու երկիր խառնեալ միածայնէին¹⁵⁸,
 Զստեղծօղն երկուց կողմանց փառաւորէին:

Գառն¹⁵⁹ ընծայս բերին Գառինն երկնային,
 Հովիւքն անբան հատից, որք եկեալ տեսին,
 Զհովիւն ըզփաջ հովիւքն մեծարէին,
 Որ էր եկեալ խընդիր մոլորեալ¹⁶⁰ հօտին:

Եկեալ թագաւորաց մոգուցն և հասին,
 Աստեղբըն նըշանաւոր ցուցաւ նոցին,

¹⁵⁶ ԴՁ գրկօք յայրն տարան

¹⁵⁷ Բ շիք քառասորղը

¹⁵⁸ Ե միաբանէին

¹⁵⁹ Դ գառինս

¹⁶⁰ ԲԴ մոլար

Քանզի կոյս Տալիթայ ի յաստղն¹⁶¹ տեսին,
Եւ նորածին մանուկ առեալ ի գրկին:
Մըտեալ թագաւորացն՝ ընծայ մատուցին,
Ի յայլկյայլ տեսակ երևեալ նոցին,
Զոր կրկնակի տեսեալ և ըստուգեցին,
Յուրախութեամբ յաշխարհն իւրեանց գնացին:

MARI MAMYAN

THE TRANSFORMATION OF THE ARMENIAN GOSPEL
OF THE INFANCY IN ARAKEL BAGHISHETS'I'S ODE TO
THE ANNUNCIATION

Key words: Joachim, Anna, Nativity, Holy Virgin Mary, Archangel Gabriel, Prophet, Only Begotten Son, Holy Spirit, Blessing.

The Armenian *Gospel of the Infancy*, like a number of other apocrypha, was used in many literary works such as lives of saints, hymns, and legends. This *Gospel* was also transformed into poetic compositions, among which Hovasap‘ Sebastats‘i’s *On the Creation* and Arakel Baghishets‘i’s Ode to the Annunciation are significant. While in the first poem the author retells in a free manner one of the famed stories of the *Gospel of the Infancy* (Jesus with the teacher Gamaliel), Arakel Baghishets‘i closely follows the apocryphon, describing the Annunciation of Mary in all details.

The ode begins with a brief overview of the Creation, the fall of man, and continues with the prophets’ predictions of the birth of Jesus, the Only Begotten Son of God. However, the main theme of the work is the Annunciation, accompanied with descriptions of the events directly related to it: the birth and childhood of Mary and the birth of Jesus.

¹⁶¹ Բէ ի յայրն

МАРИ МАМЯН

**АРМЯНСКОЕ ЕВАНГЕЛИЕ ДЕТСТВА
В “ОДЕ БЛАГОВЕЩЕНИЯ” АРАКЕЛА БАГИШЕЦИ**

Ключевые слова: Иоаким, Анна, Рождество, Святая Дева Мария, Архангел Гавриил, Пророк, Единородный Сын, Святой Дух, Благословение.

Армянское «Евангелие детства» как и ряд других апокрифов, было включено во многие сборники, такие, как *Четы-Минеи*, отразилось в гимнах и сказаниях. Это Евангелие было также переработано в стихотворной форме. Самыми значительными из таких произведений являются поэмы «О бытии» Овасапа Себастаци и «Ода Благовещения» Аракела Багишеци. Однако, в то время как в первой поэме автор в свободной форме пересказывает одну из историй «Евангелия детства» (Иисус у учителя Гамалиила), Аракел Багишеци целиком следует апокрифу, с точностью до малейших деталей описывая Благовещение Марии.

Ода начинается с краткого обзора Творения, Грехопадания и продолжается предсказаниями пророков о рождении Иисуса, Единородного Сына Божьего. Однако главной темой произведения является Благовещение Марии, сопровождающееся описаниями некоторых непосредственно связанных с ним событий – рождения и детства Марии и рождения Иисуса.

Գրախոսություններ

ԶԱՐՈՒՀԻ ՀԱԿՈՒՅԱՆ

Yana Tchekhanovets, *The Caucasian Archaeology of the Holy Land: Armenian, Georgian and Albanian Communities between the Fourth and Eleventh Centuries CE*, Brill, 2018, 332 p.

Հայագիտության, կովկասագիտության և արևելաքրիստոնեական ուսումնասիրությունների բնագավառները վերջերս համլրվեցին նոր գիտական հատորով՝ «Սուրբ Երկրի կովկասյան հնագիտությունը. հայկական, վրացական և աղվանական համայնքները 5-11-րդ դարերում» մենագրությամբ, որը լույս է ընծայել հեղինակավոր «Բրիլ» հրատարակչությունը՝ (“*Handbook of Oriental Studies*” մատենաշար, հ. 123): Ուսումնասիրության հեղինակն է Երուսաղեմի Եբրայական համալսարանի դոկտոր, հնագետ, Սուրբ Երկրում կովկասյան և հայկական վաղ քրիստոնեական համայնքների պատմության ուսումնասիրող, Իսրայելի հնությունների պահպանության վարչության առաջատար մասնագետ Յանա Չեխանովեցը:

Ուսումնասիրությունն արժեքավոր է շատ առումներով. Սուրբ Երկրի՝ Հայկական լեռնաշարհի ու Հարավային Կովկասի հետ առնչվող հուշարձանները դեռևս հիմնարար հնագիտական քննության չէին արժանացել, և սա առաջին համալիր գիտական ուսումնասիրությունն է: Բացի այդ, գրքում բերված են Իսրայելի տարածքում վերջին երկու տասնամյակների ընթացքում իրակա-

նացված հնագիտական պեղումների արդյունքները, որոնց մի քանիսի անմիջական մասնակիցն է ինքը հեղինակը, և որոնք վերաբերում են Հայկական լեռնաշարհից ու Հարավային Կովկասից սերող համայնքներին: Մեկտեղելով վաղուց ծանոթ ու բոլորովին նոր հնագիտական մեծածավալ նյութը՝ հեղինակն այն համակողմանի քննության է առնում արդի հնագիտության մեթոդաբանության կիրառության: Միևնույն ժամանակ նա գտածոները ներկայացնում է պատմագիտական ու աղբյուրագիտական նյութերի նորովի ընթերցմամբ, որն էլ ի հայտ է բերում պատմական միջավայրի, ինչպես նաև հուշարձանների կարգավիճակի, գործառույթի և թվագրման ճշգրտումներ: Մենագրությունն արժեքավոր է նաև այն տեսանկյունից, որ նոր հետազոտական հեռանկարներ է բացում մասնագետների առջև՝ հատկապես հայագիտության բնագավառում, քանի որ մեծապես նպաստում է Հայաստանի մի շարք վաղ քրիստոնեական հուշարձանների խնդրահարույց կողմերի պարզաբանմանը:

Գրքում առաջին անգամ անդրադարձ է արվել Իսրայելի հնությունների վարչության և ՌԴ արխիվներում պահվող փաստաթղթերին, ինչը օգնել է վերանայել մի շարք փաստեր: Աշխարհագրական առումով ուսումնասիրությունը ամփոփում է ժամանակակից Իսրայելի, Պաղեստինի ինքնիշխան պետության և Սինայ թերակղզու տարածքները, որոնք մաս են կազմել վաղ քրիստոնեական Պաղեստինի: Իսկ ժամանակագրական առումով այն ընդգրկում է վաղ քրիստոնեական (4-րդ դ. սկսած), բյուզանդական և վաղ իսլամական շրջանները: Ի մի բերելով տվյալ ժամանակաշրջանի և տարածաշրջանի համատեքստում երեք՝ հայկական, վրացական և աղվանական համայնքների ներկայության և գործունեության վկայությունները՝ հեղինակը հաստատում և խիստ կարևորում է քրիստոնեության պատմության վաղ շրջանում այդ համայնքների, ինչպես նաև դրանց առանձին ներկայացուցիչների (Եվթիմիոս Մեծ, Հովհաննես Լուսկյաց, Պետրոս Իբերացի) դերը:

Այստեղ հարկ ենք համարում ուշադրություն հրավիրել ինչպես գրքի վերնագրում, այնպես էլ բուն բնագրում կիրառված «կովկասյան համայնքներ» ձևակերպմանը, որն արդարացի է, երբ խոսքը Վիրքի և Աղվանքի մասին է, սակայն ճիշտ չէ, երբ այն վերաբերում է Հայաստանին: Ընդունելով, որ նման ձևակերպումն արմատացած էր սովետական պատմագիտության մեջ և հաճախ է հանդիպում տարբեր գրքերում, այնուամենայնիվ այն վերանայման կարիք ունի, և դա է թերևս ուսումնասիրության միակ անճշտությունը:

Ուսումնասիրությունը բաղկացած է ներածությունից, հինգ գլուխներից

ու ենթագլուխներից, ինչպես նաև համալրված է մեծաքանակ լուսանկարներով, գծագրերով և քարտեզներով (արխիվային ու ժամանակակից, այդ թվում՝ հեղինակային): Աշխատության շահեկան կողմերից է հարուստ գրականության ցանկը (գրեթե 600 միավոր): Ցանկը գնահատելի է հատկապես ամենավերջին գիտական հրապարակումների, ինչպես նաև Իսրայելի հնությունների պահպանության վարչության հաշվետվությունների և գիտական ծրագրերի տպագիր շարքերի ներկայացման առումով: Գրքի բաժինները արտացոլում են հեղինակի առանցքային հարցադրումները. այն է՝ «Գրական աղբյուրներ», «Հնագիտական վկայություններ», «Ձեռագրեր ու հիշատակարաններ», «Գտածոներ ու բնագրեր», «Կովկասյան համայնքները և Սուրբ Երկիրը»:

Առաջին գլխում հեղինակն անդրադառնում է միջնադարյան աղբյուրներին՝ որպես ժամանակաշրջանի պատմամշակութային անցուղարձի արժեքավոր վկայությունների: Դրանց մեջ են հայկական, վրացական, հունական, ասորական և լատինական աղբյուրները, որոնք բովանդակային առումով ներկայացնում են ժամանակագրություններ, եկեղեցական թղթեր, ուխտագնացների նկարագրություններ և վկայություններ, ինչպես նաև վարքագրական նյութեր:

Հաջորդ գլուխը, որն ուսումնասիրության բուն նյութն է, նվիրված է Պաղեստինում հայկական և վրացական համայնքների գործունեության հնագիտական վկայություններին: Դրանք են վանական կառույցների հիմքերը, արձանագրություններն ու գրաֆիտները՝ հայտնաբերված եկեղեցիների, տապանաքարերի և խճանկարների վրա, որոնք էլ մանրամասն քննության են առնված: Այս գլխում բացակայում է աղվանական նյութը, քանի որ այդ վանքերը/եկեղեցիները հնագիտորեն դեռևս չեն փաստված, չնայած դրանց գոյությունը վկայված է աղբյուրներում: Բացի այդ հայտնի են Սինայի աղվանական ձեռագիր պատառիկներ, որոնք արժարժված են հաջորդ՝ Ձեռագրեր և հիշատակարաններ գլխում:

Հիմնական գլխի առաջին ենթագլուխը, որն ամենածավալունն է, ներկայացնում է հայկական հուշարձանները, երկրորդը՝ վրացականները: Այստեղ քննության առնված հնագիտական նյութերի շարքում ընդգրկված են մի անհետացած գտածո՝ վերականգնված արխիվային նյութի հիման վրա, և մեկ նոր բացահայտված կեղծիք: Հայկական և վրացական վանքերի քննությունը ցույց է տալիս, որ առաջինները, որպես կանոն, կենտրոնացած էին քաղաքներում և

դրանց շուրջ՝ հանդիսանալով հիմնականում ուխտագնացների կանգառի վայր (քսենոֆոբիոններ), մինչդեռ մյուսները գյուղական միջավայրում էին և զբաղվում էին գյուղատնտեսությամբ (կինովիոններ): Հիմնական եզրակացությունները ընդհանուր են թե՛ հայկական, թե՛ վրացական համայնքների և նրանց հուշարձանների համար և հանգում են հետևյալին. Պաղեստինի տարածքում գործող հայկական և վրացական համայնքները հիմնադրվել և գործել են բացառապես վանական հաստատությունների շրջանակներում, իսկ որպես աշխարհիկ բնույթի գաղթօջախներ՝ ձևավորվել են 11-րդ դարից ոչ վաղ: Երկու համայնքներին վերաբերող արձանագրություններ կան ինչպես մայրենի լեզվով, այնպես էլ հունարեն՝ գրված հոգևորականների և ուխտագնացների կողմից: Միևնույն ժամանակ, տարբեր վանական հաստատություններում հայտնաբերված հայերեն կամ վրացերեն գրությունները դեռ բավարար չեն պեղավայրը դիտարկելու զուտ «ազգային» տեսանկյունից, քանի որ հաճախ այդ վանական հաստատությունները, հատկապես քաղաքային տիպի, եղել են բազմաէթնիկ (կողբ-կողքի թաղված են հայ և հույն, հայ և վրացի վանականներ), ինչը հաստատվում է նաև գրավոր աղբյուրներով: Սյուն վանքերը ներկայացրել են ընդարձակ և բարդ ճարտարապետական համալիրներ, որտեղ ազգային համայնքները, իրենց եկեղեցական կառույցով/մատուռով, վանական խցերով, հյուրատնով ու գերեզմանոցով, զբաղեցրել են վանքի մի հատվածը միայն: Այլ կերպ ասած՝ դրանք ինքնատիպ համալիրներ էին, և այս փաստը լիովին փոխում է մեր պատկերացումները պաղեստինյան վանական միջավայրի մասին, որտեղ մինչև անգամ դավանաբանական տարբերությունները արգելք չէին հանդիսանում համատեղ կեցության:

Նման օրինակ է Երուսաղեմի Դամասկոսյան դարպասների մոտ գտնվող վանական համալիրը, որի մի փոքր մասը բացվել էր դեռ 19-րդ դ., ի հայտ բերելով հայկական արձանագրությամբ ամենաշքեղ՝ «Թռչնային» խճանկարը, իսկ կառույցը թյուրիմացաբար անվանվել Սբ. Պողիկոսոսի մատուռ: Հետագա՝ 1990-2000 թթ. պեղումների արդյունքում բացվեցին համալիրի մյուս հատվածները, որտեղ գտնվեց ևս մեկ հայկական անկյուն՝ Եվստաթիոսի խճանկար արձանագրությունը, ինչպես նաև ի հայտ եկավ վանքի հունական հատվածը՝ համապատասխան արձանագրություններով: Նույն պատկերն ենք տեսնում Զիթենյաց լեռան համալիրում, որն այսօր ուսական եկեղեցու իրավասության

ներքո է և հայտնի է որպես «Շուշանիկի դամբարան»՝ իր հայատառ խճանկարով: Հետագայում այստեղ ևս երկու լրացուցիչ խճանկար հատվածներ են բացվել, իսկ նորագույն պեղումների արդյունքները հաստատել են ինչպես համալիրի երկարատև գործունեության (5-9-րդ դդ.), այնպես էլ նույն տարածքում հայ և հույն վանականների համատեղ կեցության, այլ ոչ թե իրար հաջորդելու փաստը: Իսկ հայտնի Իբերական վանքը ապաստան է ծառայել տարբեր ազգության վանականների համար: Կարևոր է նաև նշել, որ հեղինակը ընդհանրապես քաջ ծանոթ է և՛ հայկական միջնադարյան հնագիտությանը, և՛ հայկական աղբյուրներին, սովորել է նաև գրաբար (աշակերտել է պրոֆեսոր Մ. Սթոունին) և այս ամենը մեծապես նպաստել է նյութի բազմակողմանի և ճշգրիտ լուսաբանմանը:

Հաջորդ՝ «Ձեռագրեր և հիշատակարաններ» գլուխը զգալի լրացնում է հնագիտական նյութը, քանի որ այստեղ անդրադարձ կա Սբ. Կատարինե վանքում անակնկալ հայտնաբերված վրացական և աղվանական ձեռագիր պատանուիկներին ու կրկնագրերին: Վերջիններս արժեքավոր են աղվանական համայնքի պատմության համար և Սուրբ Երկրում նրա գոյության միակ վկայություններն են:

«Գտածոներ և բնագրեր» բաժինը պայմանավորված է այն իրողությամբ, որ հաճախ աղբյուրներում հիշատակված վանքերը չեն հաստատվում (կամ դեռևս չեն հաստատվել) հնագիտորեն և հեղինակը փորձում է բացատրել այս առեղծվածի էությունը: Այս առումով նա իր դիրքորոշումն է հայտնում մի շարք գիտական կարծրատիպերի վերաբերյալ, որոնք ժամանակին հիմնվել են սիրողական բնույթի ուսումնասիրությունների կամ էլ առասպելական դրվագներով համալրված աղբյուրների վրա: Հեղինակը կոչ է անում վերանայել և գտել պատմական տվյալները և հետո միայն համադրել դրանք հնագիտական նյութի հետ:

Ինչպես այս հատվածի, այնպես էլ ողջ ուսումնասիրության կարևոր եզրակացություններից է այն, որ մեր այսօրվա պատկերացումները Սուրբ Երկրում հայկական, ինչպես նաև վրացական և աղվանական համայնքների կարգավիճակի և մյուս համայնքների հետ հարաբերությունների մասին, շատ առումներով կանխակալ են և հաճախ առաջացնում են անլուծելի «հանգուցյներ»: Միգուցե դա է պատճառներից մեկը, որ Անաստաս վարդապետի թվարկած մի շարք հայկական ու նաև աղվանական, ինչպես նաև Մովսես Դասխու-

րանցու մոտ հիշատակված աղվանական վանքերը մինչ օրս չեն հայտնաբերված կամ տեղայնացված: Հեղինակը հույս է հայտնում, որ նոր մոտեցումները, ինչպես նաև միջոլորտային համալիր ուսումնասիրությունները, կնպաստեն խնդրի բացահայտմանը:

Եվ վերջապես՝ հինգերորդ գլուխը նվիրված է հայկական, վրացական և աղվանական կովկասյան համայնքների և Սուրբ Երկրի մշակութային փոխհարաբերություններին: Վերլուծելով հայկական և վրացական եկեղեցական կառույցներն ու դրանց հարդարանքը՝ հեղինակը նշում է դրանցում ակնհայտ տեղական՝ պաղեստինյան կամ, որ նույնն է, վաղ բյուզանդական ավանդույթների առկայությունը: Դա վերաբերում է նաև պաղեստինյան արվեստանոցներին, որոնց վարպետները, առաջնորդվելով համընդհանուր ձևանմուշներով, ստեղծում էին հարուստ խճանկար գորգեր՝ անկախ եկեղեցական կառույցի կամ մեկենասի ազգային պատկանելությունից: Որոշակի ազգային նկարագիր չունեն նաև խեցեղենն ու թաղման ծեսը, որոնք սովորաբար ամենավանդականն են: Հարցադրման շրջանակներում կարևորվում է լեզվի խնդիրը, քանի որ ուստագնացները տիրապետում էին մի քանի լեզուների, և դա հաճախ շփոթություն է առաջացնում մասնագետների միջավայրում (հայերը տիրապետում էին հայերենին ու հունարենին, Աղվանքից ժամանածները՝ մայրենի լեզվին և հայերենին):

Մի ենթագլուխ էլ հատկացված է դավանաբանական խնդիրներին: Չնայած, որ վաղ միջնադարը աչքի է ընկնում Քաղկեդոնի տիեզերաժողովից հետո եկեղեցիների տրոհմամբ, իսկ ավելի ուշ Միակամություն շուրջ եկեղեցական վեճերով, սակայն, ինչպես վկայում են գտածոները, դա մեծ հաշվով ազդեցություն չի գործել պաղեստինյան հուշարձանների վրա: Պատմագիտության մեջ վաղուց են քննության առնվել Մեծ Հայքի, Վիրքի և Աղվանքի եկեղեցիների երուսաղեմյան ակունքները և հենց այդ համատեքստում հեղինակը կարևորում է Սուրբ Երկրի այս վանական հաստատությունների կապը հայրենիքի հետ և դրանով պայմանավորված միջմշակութային կապերը (երուսաղեմյան ծիսակարգի ազդեցությունը, ճաշոցի վաղ թարգմանությունները, Սուրբ Գերեզմանի մանրակերտերը, ձեռագրերի և ծիսական առարկաների ձեռքբերումն ու տեղափոխումը հայրենիք): Այդ անմիջական փոխհարաբերությունների արդյունքում է, որ կովկասյան և հայաստանյան հողի վրա ի հայտ է գալիս սրբազան տարածքների ձևավորման ավանդույթը (պաղեստինյան սրբավայրերի ընդօ-

րինակման և անվանումների կրկնություն), ինչպես նաև վեր են հառնում «նոր երուսաղեմներ» (Զվարթնոց): Վերջին ենթագլխում ամփոփված են հայկական և վրացական հնավայրերի քարտեզագրման արդյունքները և դրանց համեմատական տախտակները, որոնք առավել ակնհայտ և հասկանալի են դարձնում Սուրբ Երկրում այդ համայնքների գործունեության ծավալներն ու աշխարհագրությունը: Սակայն, ինչպես նշում է հեղինակը, այն նախնական բնույթ է կրում, քանի որ Սուրբ Երկրի հնագիտության մեջ կովկասագիտությունը դեռևս երիտասարդ բնագավառ է, իսկ երուսաղեմի, Բեթղեհեմի և Թաբոր լեռան տարածքներում ծրագրվող պեղումները նոր բացահայտումներ են խոստանում: Ըստ ամենայնի, բոլոր հիմքերը կան հուսալու, որ առաջիկայում Իսրայելի հնագիտական ուսումնասիրությունների շրջանակում կովկասագիտությունը զգալի առաջընթաց կապրի և այս արժեքավոր գիտական հատորը կունենա իր շարունակությունը:

ԳՎՎԻԹ ԱՆՀԱՂԹԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻ ՆՈՐ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Benedetta Contin, *David l'Arménien et l'école d'Alexandrie. Recherche sur la formation du vocabulaire épistémologique des œuvres grecques et arménienne*, Pontificio Instituto Orientale (Orientalia Christiana analecta. 301), Roma, 2017

Հոռմի Պապական արևելյան ինստիտուտի *Orientalia Christiana Analecta* շարքի 301-րդ հատորը բովանդակում է իտալացի հայագետ Բենեդետտա Կոնտինի «Դավիթ Հայր և Ալեքսանդրայի դպրոցը» (*David l'Arménien et l'école d'Alexandrie*) խորագրով ուսումնասիրությունը՝ նվիրված հայ ականավոր փիլիսոփա Դավիթ Անհաղթին: Մենագրության հիմքում ընկած է Դավթի հունարեն և հայերեն փիլիսոփայական գրվածքների իմացաբանական բառամթերքի հետազոտությունը:

Գիրքը բաղկացած է 4 գլխից (263 էջ): Առաջին գլխում (էջ 33-55) հեղինակն անդրադառնում է Դավիթ Անհաղթի անձի, ապրած ժամանակի և գրական ժառանգության խնդրին՝ առաջադրելով սեփական վարկածը: Համեմատելով հայկական և հունական աղբյուրների հաղորդած վկայությունները, ինչպես նաև մերօրյա ուսումնասիրողների կարծիքները, և մասնավորապես հիմնվելով Մ. Ռուեչեի¹ տեսակետի վրա՝ Կոնտինը հավանական է համարում, որ Դավիթ Անհաղթը, ինչպես նաև կեղծ-էլիասը աշակերտել են Ստեփանոս Ալեքսանդրացուն (550/555-638): Այսպիսով, նա Դավիթ Անհաղթին համարում է 7-րդ դարի հեղինակ՝ Ալեքսանդրիայի Պլատոնական դպրոցի վերջին ներկայացուցիչներ:

¹ M. Roueché, “The Definitions of Philosophy and a New Fragment of Stephanus the Philosopher”, *Job* 40 (1990), pp. 107-128.

րից մեկը: Հեղինակը փորձում է դասակարգել Դավիթ Անհաղթ փիլիսոփայի անունով հայտնի փիլիսոփայական և աստվածաբանական երկերը՝ առանձնացնելով 5-7-րդ դդ. միջնադարյան Հայաստանում ապրած երեք «Դավիթներ»:

1. 5-րդ դարում ապրած Դավիթ Անհաղթ փիլիսոփա՝ «Բարձրացուցէք» ներբողի հեղինակը, որը կարող է նույնական լինել Մովսես Խորենացու անվան հետ կապվող Դավթի հետ:

2. Դավիթ Ներգինացի/Ներքինացի (6-րդ դարի վերջ – 7-րդ դարի երկրորդ կես) «Սահմանք իմաստասիրականք»-ի, «Պորփյուրի ներածություն», Արիստոտելի «Կատեգորիաների» և Արիստոտելի «Առաջին Անալիտիկայի» մեկնությունների, ինչպես նաև՝ «Առաջը հինգ», «Վասն բաժանման», «Ամենայն շար տանջելի»² երկերի հեղինակ: Այս Դավիթը հավանաբար աշակերտել է Ստեփանոս Ալեքսանդրացուն:

3. Դավիթ փիլիսոփա (7-րդ դ. երկրորդ կես), որի անձնավորության մեջ հեղինակը միավորում է Դավիթ Հարքացուն, Դավիթ Տարոնացուն և Դավիթ Բագրևանդցուն՝ հիմնվելով Պողոս Անանյանի ուսումնասիրության վրա³:

Քննվող մենագրության շրջանակից դուրս է Դավիթ Անհաղթի վերաբերյալ միջնադարյան բոլոր աղբյուրների (ձեռագրերի հիշատակարաններ, Դավթի երկերի մեկնություններ, պատճառներ և այլն) քննությունը: Նշենք սակայն, որ գրքում արտացոլված է այն սխալ կարծիքը, թե ըստ ներսես Շնորհալու՝ Դավիթ Անհաղթը Խաչին նվիրված իր ներբողն արտասանել է Աթենքում յոթնամյա կրթությունն ավարտելուց հետո⁴: Մինչդեռ իրանականում ներսես Շնորհալին «Բարձրացուցէք»-ի մեկնության մեջ թվարկում է ներբողի ստեղծման վերաբերյալ միջնադարում տարածված կարծիքները, այդ թվում՝ Աթեն-

² Այս երկր հայտնի է Գրիգոր Նյուացու (PG 46, p. 541), ինչպես նաև՝ Գիդիմոս Ալեքսանդրացու (PG 39, pp. 1088-1089) անվամբ, վերագրվում է նաև Հովհաննես Կեսարացուն (տե՛ս *Ioannis Caesariensis presbyteri et grammatici Opera*, ed. **M. Richard**, Brepols-Tourhout, 1977):

³ Տե՛ս Պ. Անանեան, «Դավթ Անհաղթի անախյ մկի հառք. քննութիւն եւ բնագիր», *Բազմավեպ*, 1956, մարտ (թիւ 3), էջ 63-70, թիւ 4-5, էջ 89-95:

⁴ Տե՛ս *Definitions and Divisions of Philosophy by David the Invincible Philosopher*, English Translation of the Old Armenian Version with Introduction and Notes by **B. Kendall, R.W. Thomson**, Chico, California, 1983, p. XVI: Հմտ. **Calzolari V.**, “David et la tradition Arménienne,” *L'œuvre de David l'Invincible et la transmission de la pensée grecque dans la tradition arménienne et syriaque* (Commentaria in Aristotelem Armeniaca-Davidis Opera Vol. 1), **V. Calzolari - J. Barnes** (éds), Leiden, 2009, pp. 25-26:

քում գրված լինելը, և այն «ստահօդ» է համարում: Շնորհալին վկայում է, որ Դավիթ Անհաղթին իր Ներբողը գրել է Գյուտ կաթողիկոսի խնդրանքով՝ ընդդեմ Հայաստան ներթափանցած նեստորականներին⁵:

Հեղինակն առաջին գլխի վերջում համառոտակի անդրադառնում է Դավիթ Անհաղթի անունով հայտնի չորս փիլիսոփայական երկերի հրատարակություններին և ժամանակակից թարգմանություններին:

Երկրորդ գլխում (էջ 57-78) Կոնտինը ներկայացնում է փիլիսոփայական չորս գրվածքների կառուցվածքը՝ համադրելով հայերեն և հունարեն բնագրերը, մատնանշելով դրանց միջև առկա ակնառու տարբերությունները: Իսկ միայն հայերենով պահպանված «Արիստոտելի Առաջին Անալիտիկայի մեկնություն» դեպքում տրվում է հայերեն բնագրի կառուցվածքային բաժանումը: Այս գլխում արծարծվում է նաև «Արիստոտելի Կատեգորիաների մեկնություն» հեղինակի հարցը (Դավիթ-Էլիաս)⁶: Համեմատելով մի շարք եզրույթներ և արտահայտություններ՝ Բ. Կոնտինը ակնհայտ ընդհանրություններ է նկատում «Սահմանք իմաստասիրականք»-ի և «Կատեգորիաների մեկնություն» միջև: Այսպիսով, Ս. Արևշատյանից հետո, սույն ուսումնասիրությունն էլ ավելի հիմնավորված ու համոզիչ է դարձնում այն տեսակետը, որ «Արիստոտելի Կատեգորիաների մեկնությունը» պատկանում է Դավիթ Անհաղթի, այլ ոչ թե Էլիասի գրչին:

Երրորդ գլխում (էջ 79-100) հեղինակը կատարում է «Սահմանք իմաստասիրության» երկի հայերեն և հունարեն բնագրերի համեմատական վերլուծություն՝ ներկայացնելով ուշագրավ դիտարկումներ մի շարք լեզվական և մտահայեցական տարբերությունների վերաբերյալ: Բանասիրության մեջ ընդունված է այն կարծիքը, որ Դավիթ երկերը սկզբնապես գրվել են հունարեն, այնուհետև թարգմանվել են հայերեն՝ հունաբան դպրոցի ներկայացուցիչների կողմից: Անդրադառնալով այն հատվածին, որտեղ հունարենում «Հեկտոր»-ի փոխարեն հայերենում հանդիպում է «Տիգրան» անունը, հեղինակը կարծիք է հայտնում, որ հայկական լսարա-

⁵ Տե՛ս Վնակ. ձեռ. 511, 67ա, ՄՄձեռ. 1409, 290աբ, ՄՄ 6816, 4աբ (Բ. Կոնտինը վկայակոչում է այս վերջին ձեռագիրը):

⁶ Հունարեն բնագիրը հրատարակության պատրաստած Ա. Բուսեն այս երկը վերագրել է Էլիաս իմաստասերին, տե՛ս *Eliae in Porphyrii Isagogen et Aristotelis Categorias commentaria*, ed. A. Busse, Berolini, 1900: Այս վարկածին հետևել է հայերեն բնագրի առաջին հրատարակիչ Հ. Մամանյանը (*Մեկնութիւն Ստորոգութեանցն Արիստոտելի՝ ընծայեալ Էլիասի իմաստասիրի*, Ս. Պետերբուրգ, 1911): Ս. Արևշատյանը հիմնավորել է, որ այն պատկանում է Դավիթ Անհաղթի գրչին, տե՛ս Ս. Արևշատյան, «Դավիթ Անհաղթի ժառանգությունը նոր լուսաբանությամբ», *ԲՄ*, հ. 9, Երևան 1969, էջ 7-22:

նր քաջածանոթ էր հունական մշակույթին, ուստիև կարիք չկար փոխարինելու «Հեկտոր»-ը «Տիգրան»-ով: Մյուս կողմից՝ «Տիգրան» անունը կարող էր անծանոթ լինել հունական միջավայրում: Այս առումով, Բ. Կոնտինն առաջադրում է այն վարկածը, որ հայերեն բնագիրը գրվել և մշակվել է Դավիթ կամ գոնե նրա աշակերտներից մեկի ձեռքով: Հետազոտելով պատմական, անձնական և առասպելական անունների օրինակները՝ հեղինակը մատնանշում է, որ հայերեն և հունարեն բնագրերում դրանց կիրառման միասնական սկզբունք չկա (օրինակ՝ մի դեպքում «Հեկտոր»-ը թարգմանված է «Տիգրան», «Ձևս»-ի փոխարեն հանդիպում է «Արամազդ»-ը, սակայն մեկ այլ հատվածում թե՛ հայերենում և թե՛ հունարենում առկա է «Ձևս» տարբերակը):

Հեղինակը քննում է հունարեն բնագրի *κατὰ τοὺς Στωϊκούς*-ի փոխարեն հայերենում հանդիպող «ի տոկոսին» արտահայտությունը՝ վիճարկելով Ս. Արևշատյանի և Ռ. Թոմսոնի ու Բ. Քենդալի այն կարծիքը, թե դա գրչական սխալ է (օրինակ՝ հայերենից անգլերեն թարգմանություն մեջ կարդում ենք *the Stoics*): Կոնտինը մատնանշում է «տոկոսիք» բառի «վաշխ» հոմանիշը՝ ցույց տալով, որ այս իմաստով բառը միանգամայն ընկալելի է «Սահմանք»-ի համապատասխան հատվածում: Վկայակոչվում է նաև Հովհաննես Սարկավազին (ԺԱ-ԺԲ դդ.) վերագրվող «Սահմանք»-ի Լուծմունքը, որտեղ նշյալ հատվածի մեկնության մեջ կիրառվում են և՛ «տոկոսս», և՛ «վաշխ» բառերը:

Չորրորդ՝ ամենաընդարձակ գլխում (էջ 100-254) կատարվում է Դավիթ Անհաղթի շորս հիմնական փոլիսոփայական երկերում գործածվող որոշ եզրերի և բանալի-հասկացությունների զուգադրական վերլուծություն: Իմացաբանական տեսանկյունից քննվում է հունարեն բառամթերքի հայերենում փոխադրման մեթոդը, ինչպես նաև՝ հայերեն բնագրերում դրանց կիրառման հնարավոր միօրինակությունը՝ բառային և իմաստային տեսանկյունից: Այսպես՝ քննության են ենթարկվում հայերեն «ազդումն» եւ «ներգործութիւն» եզրերը, որոնք համապատասխանում են հունարեն *ἐνέργεια*-ին: Հեղինակը ներկայացնում է բոլոր այն տեղիները (հունարեն և հայերեն բնագրերում և իր ֆրանսերեն թարգմանությունը), որտեղ գործածվում են այս տերմինները և դրանցով կազմված բառերը, ընդգծում դրանց կիրառման իմաստային նրբությունները, ընդհանրությունները և տարբերությունները: Նույն սկզբունքով են դիտարկվում «մտածութիւն», «մակամտածութիւն», «տրամախոհութիւն» և «միտք» բառերի կիրառությունները, դրանց համապատասխանությունը հունարեն

ἔννοια, ἐπίνοια, διάνοια և νοῦς եզրերին, ինչպես նաև դրանց հետ գործածվող իմացաբանական այլ հասկացություններ: Բնագրային և բառիմաստային հետազոտության արդյունքում հեղինակը ևս մեկ անգամ հաստատում է իր այն մոտեցումը, որ «Սահմանք իմաստասիրականք»-ի հայերեն բնագիրը շատ ավելի մաքուր և ինքնուրույն գործ է՝ խմբագրված հունարենի համեմատ: Ի դեպ, նույն կարծիքը նա առաջարկում է նաև «Պորփյուրի ներածության մեկնության» վերաբերյալ:

Փիլիսոփայական եզրույթների այսօրինակ քննությունը անշուշտ օգտակար է ոչ միայն բանասիրության տեսանկյունից, այլև Դավիթ Անհաղթի փիլիսոփայության իմացաբանական համակարգի առավել համակողմանի և խորը ուսումնասիրման համար: Կարևոր է, որ Դավիթ փիլիսոփայի գործունեությունը դիտարկվում է Ալեքսանդրյան Նորալատոնական դպրոցի մյուս նշանավոր ներկայացուցիչների շարքում, իսկ Դավթի երկերը հետազոտվում են նրանց գրվածքների համեմատությամբ: Առհասարակ, ամբողջ մենագրությունը կառուցված է հայկական և հունական ավանդույթների համեմատության հիման վրա, ինչը հետաքրքրական է հայկական նյութը փիլիսոփայական մտքի պատմության համատեքստում դիտարկելու տեսանկյունից: Բ. Կոնտինն անդրադառնում է անհաղթագիտության վիճարկելի և լուսաբանման կարոտ որոշ հարցերի՝ առաջադրելով ուշագրավ, երբեմն՝ համարձակ վարկածներ, որոնք իր իսկ խոսքով՝ դեռևս կարիք ունեն համակողմանի ուսումնասիրման և հիմնավորման:

Այսպիսով, Դավիթ Անհաղթին նվիրված ուսումնասիրությունների շարքը հարստացել է հետաքրքրական մի աշխատանքով, որը կարող է օգտակար լինել ուշ անտիկ շրջանի հունական, ինչպես նաև միջնադարյան հայկական փիլիսոփայության և բանասիրության հարցերով հետաքրքրվողների համար:

**ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՀԱՆԳԵՍԻ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆԸ
ՎԵՐԱԲԵՐՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐ**

1. Հոդվածին և ամփոփումներին՝ վերնագրից հետո պետք է նախորդեն բանալի բառեր՝ թվով 8-10:

2. Հոդվածին պետք է հետևի ամփոփում՝ ռուսերեն և անգլերեն (ֆրանսերեն, գերմաներեն)՝ 100-300 բառ ծավալով: Այլալեզու հոդվածների դեպքում ամփոփումները համապատասխանաբար հայերեն են և երրորդ լեզվով: Ամփոփման վերնագիրն ու հեղինակի անունը ձևավորել ինչպես հոդվածի հիմնական բնագրում՝ առանց «Ամփոփում», “Резюме”, “Summary” և նման նշումների:

3. Հայերենի համար օգտագործել **AMM MairTcutcak (unicode)** տառատեսակը: Ռուսերեն և լատինատառ մասերը շարել Times New Roman տառատեսակով: Հիմնական բնագրի տառերը՝ շեղ (*italic*), չափը՝ 12, տո- դատակիմը՝ ուղիղ, չափը՝ 10:

4. Աշխատությունների տողատակի հղումներում կիրառել միջազգայնորեն ընդունված հետևյալ ձևերը.

- ա. Գրքերի և պարբերականների վերնագրերը գրել շեղատառ (*italic*):
- բ. Հոդվածների (և գրքերի գլուխների) վերնագրերը՝ ուղիղ (ոչ շեղ), չակերտների մեջ:
- գ. Շարքերի վերնագրերը գրել փակագծերում՝ ուղիղ՝ հրատարակման վայրից առաջ:
- դ. Աշխատությանը վերաբերող տվյալներն իրարից բաժանել ստորակետով:
- ե. Նույն աշխատության կրկին վկայակոչման դեպքում նշել միայն հեղինակին և վերնագիրը կամ հանաչելի ձևով համառոտումով:
- զ. Եթե կրկին վկայակոչումն անմիջապես հաջորդում է առաջինին, գրել «Նույն տեղում» և էջահամարը (եթե փոխվել է): Եթե հաջորդաբար նույն հեղինակի տարբեր աշխատություններ են նշվում, գրել «նույնի» և աշխատության տվյալները:
- է. Մրանց գումարվում է ԲՄ-ում ավանդական դարձած՝ հեղինակի անունը թավ (**bold**), իսկ խմբագրի, կազմողի, թարգմանչի անունը թավ և շեղ (**bold + italic**) գրելու պահանջը:

Օրինակներ՝

Դավիթ Անյաղթ, *Սահմանք իմաստասիրութեան*, համահավաք ֆննական բնագիրը, թարգմանությունը գրաբարից ռուսերեն, առաջաբանը և ծանոթագրությունները **Ս. Ս. Արևշատյանի**, Երևան, 1960, պրակի ժէ., էջ 132:

Paul J. Alexander, “Medieval Apocalypses as Historical Sources”, *American Historical Review*, 73, 1968, p. 998:

Մովսէս Կաղանկատուացի, *Պատմութիւն Աղուանից աշխարհի* (ՄՀ¹, ժե հատոր, ժ. դար), Երևան, 2011, էջ 27-437:

Philonis Alexandrini Quaestiones in Genesim et in Exodum. Fragmenta Graeca, ed. **F. Petit** (Les œuvres de Philon d'Alexandrie 33), Paris, 1978:

5. Հանախակի հղվող աղբյուրների համար մշակել համառոտագրություններ՝ ցանկը կցել հոդվածի վերջում:

6. Գլխավոր հավաքածուներում պահվող հայերեն ձեռագրերը հիշատակել հետևյալ հապավումներով.

ՄՄ 1746 (Մաշտոցի անվան Մատենադարան):

Եղմ. 1903 (Երուսաղեմի Սուրբ Հակոբյանց վանք):

Վնակ. 456 (Վենետիկի Մխիթարյան միաբանություն):

Վիեն. 2159 (Վիեննայի Մխիթարյան միաբանություն):

Փրզ. 58 (Փարիզ, Ֆրանսիայի Ազգային գրադարան):

Մնացած հավաքածուների համար հապավումներ կմշակվեն ըստ անհրաժեշտության: Առաջարկում ենք ծանոթանալ հետևյալ կայքէջում զետեղված և միջազգայնորեն կիրառվող հապավումներին՝ Coulie, *Liste des sigles utilises pour designer les manuscrits*, (Coulie – 2002),


<http://sites.uclouvain.be/aiea/wpontent/uploads/2014/03/Sigles.pdf>):

¹= Մատենագիրք հայոց: Այլ հանրահայտ հապավումներ են ՊԲՀ = Պատմա-բանասիրական հանդես, ԲՄ = Բանբեր Մատենադարանի, ՀԱ = Հանդէս ամսօրեայ, ԼՀԳ = Լրաբեր հասարակական գիտությունների, ԲեՀ = Բանբեր Երևանի համալսարանի, REArm = *Revue des Etudes Arméniennes*:

ՓԻՐՈՒՉ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՅԱԶԼՈՎԵՑ ՔԱՂԱՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 1648-1669 ԹԹ.

ԱՐՁԱՆԱԿՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՅԱՆԸ. ՆՈՐԱՀԱՅՏ ՄԻ ԱՂԲՅՈՒՐ ԼԵՀԱՍՏԱՆԻՑ




Նկ. 1 Յազովեցի ֆառեզը: Աղբյուրը՝ «Հայերը Լեհական թագավորությունում և Կիավական Մեծ իշխանությունում XIV-XVIII դարերում»: Հեղինակներ՝ Անով Հայագիտական ուսումնասիրությունների գաղափար և աջակցման հիմնադրամ, Լեհահայոց մշակույթի և ժառանգության հիմնադրամ՝ Լեհաստանի Մշակույթի և ազգային ժառանգության նախարարության աջակցությամբ:




Նկ. 2 Յազովեցի ֆայկական դատական արձանագրությունների մատյանը, ԿԱՍ ՈԾԻ II 165



Նկ. 3 Լուսադրոշմ, Կևա Քոմի II 165



Նկ. 4 Հայերեն արձանագրություն, ԿԱս Քոժի II 165, էջ 93



Նկ. 5 Հայաստանի ղիշադերեն արձանագրություն, ԿԱս Քոժի II 165, էջ 229

ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՎԵՏԻՍ ԵՐԵՑ ԵՐԵՎԱՆՅԻ ԳՐԶԻ ՁԵՆԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ



Նկ. 1 ՄՄ 1772, 7ա



Նկ. 2 ՄՄ 1772, 356բ



Նկ. 3 ՄՄ 6315, 274ա



Նկ. 4 ՄՄ 10846, 7ա



Նկ. 5 ՄՄ 8785, 3ա



Նկ. 6 ՄՄ 8785, 206ա

ՄՅՈՒԶԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅ ՄԻՋՆԱԳԱՐՅԱՆ ԽՃԱՆԿԱՐԶՈՒԹՅԱՆ ԲՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹԸ
(ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԽՃԱՆԿԱՐՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)



Նկ. 1 «Աբտավանի խնամկարը» (Ջիբենյաց լեռ, Երուսաղեմ)



Նկ. 2 Ռուսական վանքի Սբ Հովնանենս Կարապետ
մատուռի խնամկարը (Երուսաղեմ)



Նկ. 3 «Քոչունների խնամկարը»
(արձանագրություն, Սբ Պաղիկտոսի մատուռ, Երուսաղեմ)



Նկ. 4 Հայատուտ խնամկար (Մուսարայի թաղամաս, Երուսաղեմ)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾՆԵՐ

- Գէորգ Տէր-Վարդանեան
Ստեփանոս Մալխասեանցը, «Պատմագիրք հայոց» մատենաշարը
և Նորայր Բիւզանդացին..... 5
- Արամ Թոփչյան
«Ալեքսանդրի Վեպի» հին հայերեն թարգմանությունը բնագիրը և
ազդեցությունը հայ միջնադարյան գրականության վրա..... 44
- Թամարա Մինասյան
Հաղարծինի վանական դպրոցը 73
- Ջուլիետտա Էյնաթյան
Հովհաննես Երզնկացին (XIII դ.) լուսնի երկու տիպի ամիսների
մասին..... 86
- Արտակ Մաղալյան
Գանձասարի 1714 թ. «Գաղտնի ժողովի» արձանագրությունների
վավերականության հարցի շուրջ 97
- Revd. Nerses (Vrej) Nersessian
*Armenian Memorial Marble Slab: Cambridge: Fitzwilliam
Museum –Department of Antiquities. inv. nr., Gr. 62. 1865, in the
Context of the History of Crimean Armenian Colony* 113
- Քնարիկ Սահակյան
Մարգար Խոջենց Երևանցու կյանքն ու գործունեությունը..... 143
- Անի ժ. Ավետիսյան 160
Մատենադարանի արաբատառ ձեռագրերի հավաքածուի
ձևավորման պատմության մի դրվագ (1880-1915 թթ.) և Քերովբե
Պատկանյանի նվիրած ձեռագրերը 160
- Սերգեյ Մանվելյան
Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք Զավեն Տեր-Եղիայանի
գործունեությունն աքսորի տարիներին (1916-1918)..... 195

**ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ 4-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ
(28-30 ՆՈՅԵՄԲԵՐԻ, 2018) ՆՅՈՒԹԵՐԻՑ**

<i>Խաչիկ Հարությունյան</i> <i>«Նոր Հայկազյան Բառարան»-ի նորայր Բյուզանդացու խմբագրությունը.....</i>	<i>205</i>
<i>Շավարշ Ազատյան</i> <i>Եղեսիայի Աբգար Թագավորի վարքաբանական զրույցը և նրա կերպագրությունները հայ մատենագրության մեջ.....</i>	<i>228</i>
<i>Սյուզաննա Գրիգորյան</i> <i>Հայ Միջնադարյան խճանկարչության քրիստոնեական ավանդույթը (Երուսաղեմի խճանկարների օրինակով).....</i>	<i>251</i>
<i>Արփինե Ավետիսյան</i> <i>Ներսես Լամբրոնացու՝ Աստվածամոր վերափոխմանը նվիրված ներբողի բնագրային և լեզվաոճական քննություն </i>	<i>262</i>
<i>Վահե Ավետիսյան</i> <i>Քաղաքական ազդեցության հիմնահարցը Անտիոքի իշխանության և Կիլիկյան Հայաստանի փոխհարաբերություններում.....</i>	<i>273</i>
<i>Անդրանիկ Եսայան</i> <i>Թյուրքական ցեղերի բնակեցումը հյուսիսարևելյան Հայաստանում Սեֆյանների օրոք (XVI-XVII դդ.).....</i>	<i>288</i>
<i>Թագուհի Ավետիսյան</i> <i>Բուսական տարրերը հայկական միջնադարյան եկեղեցիների արտաքին հարդարանքում </i>	<i>296</i>
<i>Փիրուզ Մնացականյան</i> <i>Յազլովեց քաղաքի հայկական դատարանի 1648-1669 թթ. արձանագրությունների մատյանը. նորահայտ մի աղբյուր լեհաստանից </i>	<i>309</i>
<i>Արսեն Հարությունյան</i> <i>Ավետիս Երեց Երևանցի գրչի ձեռագրական ժառանգությունը.....</i>	<i>321</i>
<i>Սարգիս Բալդարյան</i> <i>Նոր Ջուղայի ու Ամստերդամի միջև. վաղ արդի հայկական վաճառականական ձեռնարկների համեմատություն </i>	<i>343</i>

Հասմիկ Իրիցյան	
Գաբրիել Այվազյանի «Բառազննութիւն աշխարհիկ լեզուի»	
ձեռագիր երկը՝ որպէս աշխարհաբարի տարածմանը նպաստող	
աշխատութիւնն	371

Թերեզա Ամրյան	
եզդիական կրօնական համակարգում կանանց դերի որոշ	
առանձնահատկութիւնների շուրջ	388

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Մարի Մամյան	
«Մանկութեան Աւետարան»-ի փոխակերպումը Առաքել Բաղիշեցու	
«Տաղ Աւետման»-ում	402

ԳՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Զարուհի Հակոբյան	
<i>Yana Tchekhanovets, The Caucasian Archaeology of the Holy</i>	
<i>Land: Armenian, Georgian and Albanian Communities between the</i>	
<i>Fourth and Eleventh Centuries CE., Brill, 2018.....</i>	431

Արմինե Մելքոնյան	
Դավիթ Անհաղթին նվիրված մի նոր ուսումնասիրություն	438

«Բանբեր Մատենադարանի» հանդեսի հոդվածների ձևավորմանը	
վերաբերող պահանջներ.....	443

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

Հատոր 27

BULLETIN OF MATENADARAN

Volume 27

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА

Том 27

*Հրատարակչական խմբագիր՝ Հայկ Համբարձումյան
Ոճական խմբագիր և սրբագրիչ՝ Արմինե Գրիգորյան
Էջաղրուժը և ձևավորումը՝ Անահիտ Խանզադյանի*

Տպաքանակ՝ 250

*Տպագրված է «Նաիրի» հրատարակչություն ՓԲԸ-ի տպագրատանը
Երևան 9, Տերյան 91*

Մատենադարան

Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի

հրատարակչական բաժին

ք. Երևան, Մաշտոցի պող. 53

Հեռ. (010) 513033